


ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԳՅԱՆ

ՀՈՂՎԱԾՆԵՐ



ՀԱՏՈՒ Ա





**MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT
MANUSCRIPTS**

НАКОВ РАРАЗИАН

ARTICLES

VOLUME I

**YEREVAN
2020**

**МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ
МЕСРОПА МАШТОЦА**

АКОП ПАПАЗЯН

СТАТЬИ

ТОМ I

**ЕРЕВАН
2020**

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԿՈՒԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Հատոր Ա

**ԵՐԵՎԱՆ
2020**

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63.3+76.01
Փ 311

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ
Խմբագիր՝ Վ. Տեր-Ղևոնդյան
Կազմող՝ Ք. Կոստիկյան*

ՓԱՓԱԶՅԱՆ ՀԱԿՈՐ

Փ 311 Հոդվածներ/ Հ. Փափազյան.- Եր.: Մատենադարան, 2020.
Հատոր Ա.- 407 էջ:

Հակոբ Փափազյանի հոդվածների ժողովածուի առաջին հատորում ընդգրկված են անվանի գիտնականի՝ 1953-1972 թթ. հրատարակված հոդվածները, նվիրված՝ արևելագիտության ու հայագիտության տարբեր ոլորտներին: Ժողովածուն նախատեսված է հայագետների, իրանագետների, արաբագետների և թուրքագետների, ինչպես նաև հայագիտության և արևելագիտության ինդիվիդուալ հետաքրքրված ընթերցողների համար:

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63.3+76.01

ISBN 978-9939-9237-6-5
© Մատենադարան, 2020

ԱՌԱՋԱԲԱՆ

Ականավոր արևելագետ և հայագետ Հակոբ Փափազյանի հոգ-վածներին այս ժողովածուն հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի ան-վան Մատենադարանի կողմից՝ գիտնականի ծննդյան 100-ամյակի առիթով:

Քանի որ տարիներ առաջ՝ 1980 թ., Հակոբ Փափազյանի 60-ամ-յակի առթիվ հրատարակվել է ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի հոգ-վածը¹, որ մանրամասն և հանգամանալից կերպով ներկայացնում է Հ. Փափազյանի գիտական գործունեության նշանակալի արժեքը, այն ծանրակշիռ նպաստը, որ բերել է Հ. Փափազյանը հայագիտու-թյան և Մերձավոր Արևելքի միջին դարերի պատմության ուսում-նասիրության և ճանաչողության գործին, նպատակահարմար գտանք մեր Առաջաբանի մեջ տեղադրել Լևոն Խաչիկյանի հոգվածն ամբող-ջությամբ, թեև այն ընդգրկում է Հ. Փափազյանի գիտական աշխա-տանքը միայն մինչև 1980 թ.:

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԸ

Լրացավ առաջին հայրենագարձների սերնդի վաստակավոր ներ-կայացուցիչ, նշանավոր իրանագետ ու հայագետ, պատմական գի-տությունների դոկտոր, պրոֆեսոր Հակոբ Դավթի Փափազյանի ծննդյան վաթսուներորդ տարեդարձը, որով և պատշաճ առիթ է ներ-կայանում անդրադառնալու նրա գիտական վաստակին, բացահայ-տելու նրա բազմաթիվ աշխատությունների արժեքն ու արժանիքները:

Հայ ժողովրդի պատմության ընդարձակ մի ժամանակաշրջանի ուսումնասիրության համար առաջնահերթ նշանակություն ունեն պարսկալեզու սկզբնաղբյուրները մոնղոլական իլխանության քայ-քայման շրջանից սկսած՝ մինչև 19-րդ դարի առաջին տասնամ-յակներն ստեղծված գիվանական փաստաթղթերը, շահական ու սուլ-թանական հրովարտակաները, դատական ատյանների որոշումները, բազմատեսակ կալվածագրերը և պաշտոնական այլ փաստաթղթեր,

¹ Սովետական Հայաստան, № 3, 1980, էջ 10-13:

Լևոն Խաչիկյանի հողվածը, լինելով մամուլի հրապարակում, Հ. Փափազյանի՝ քննարկման առարկա աշխատություններին հղումներ չի բերում: Տողատակի հղում-ները մեր հավելումն են:

որոնք, ըստ մեծի մասի, դրված չեն եղել գիտական շրջանառություն մեջ, ուստիև գրեթե բոլորովին չեն օգտագործվել ի նպաստ հայ և հարևան ժողովուրդների քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի բազմազան երևույթների ուսումնասիրության: Այդ կարգի սկզբնաղբյուրների հարուստ մի շտեմարան է Մաշտոցի անվան Մատենադարանը, որի արխիվային բաժնում պահվում են երկու հազարից ավելի վերծանման ենթակա պարսկերեն, արաբերեն և թուրքերեն վավերագրեր:

Արևելյան մի շարք լեզուների հմուտ մասնագետ պրոֆ. Հ. Փափազյանն իր գիտական գործունեությունն սկսեց հենց բացառիկ գիտական ինֆորմացիա պարունակող այդ վավերագրերի վերծանություն, թարգմանություն և հրատարակման աշխատանքներով: 1956 թ. տպագրվեց «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» նորաստեղծ մատենաշարի «Հրովարտականեր» շարքի առաջին պրակը՝ 15-17-րդ դդ. 23 հրովարտականերով², 1959 թ. նույն շարքի երկրորդ պրակը՝ 17-րդ դարի առաջին կեսի 43 հրովարտականերով³, իսկ 1968 թ. «Կավվածագրեր» շարքի առաջին պրակը՝ 14-16-րդ դդ. 27 մեծարժեք կավվածագրերով⁴: Սրանք իրենց գերազանց մասով վերաբերում էին միջնադարյան Հայաստանի նշանավոր վանական հաստատությունների՝ Էջմիածնի, Գանձասարի, Տաթևի, Թադեոս առաքյալի վանքի և այլ կենտրոնների կավվածքներին ու իրավատնտեսական վիճակին, սակայն բովանդակում էին բազմազան նյութեր ողջ Անդրկովկասի և Իրանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանման համար: Պրակներից յուրաքանչյուրի մեջ, իրենց ծավալով ու բովանդակությամբ կարևոր տեղ գրավող ներածական ուսումնասիրություններում և ծանոթագրություններում, Հ. Փափազյանը պարզաբանել է իր ջանքերով գիտական շրջանառության մեջ դրված այդ փաստաթղթերի գրություն հանգամանքները, բացահայտել հարկային ու վարչական հարյուրավոր տերմինների բովանդակությունը, լույս սփռել օտար բռնակալների կողմից կեղեքվող Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքի բազմազան երևույթների վրա:

² Հ. Փափազյան, *Հրովարտականեր*, պրակ առաջին, (ԺԵ-ԺԶ դդ.), (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը - I), Երևան, 1956:

³ Հ. Փափազյան, *Հրովարտականեր*, պրակ երկրորդ, (1601-1650 թթ.), (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը - I), Երևան, 1959:

⁴ Հ. Փափազյան, *Կավվածագրեր*, պրակ առաջին, (ԺԴ-ԺԶ դդ.), (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը - II), Երևան, 1968:

Այս հատորների հրատարակութեամբ պրոֆ. Հ. Փափազյանը համընդհանուր ճանաչում գտավ որպես հմուտ մասնագետ. նրա աշխատանքը բարձր գնահատանքի արժանացավ նշանավոր մի շարք արևելագետների՝ Վ. Մինորսկու, Ռ. Ռոմերի, Հ. Բուսեի, Ժ. Օբենի, Ա. Զայոնչկովսկու և ուրիշների կողմից:

Վերոհիշյալ պրակների հրատարակմանը զուգընթաց, գիտական տարբեր պարբերականներում Հ. Փափազյանի աշխատասիրութեամբ տպագրվեցին նմանատիպ վավերագրական և վիճաբանական այլ նյութեր՝ իլխան Աբու-Սալիդի 1330 թ. զուլգ յաուլիդները⁵, Արգավանդ գյուղում գտնվող թուրքմեն ամիրաների դամբարանի 15-րդ դ. արաբերեն արձանագրությունը⁶, Շահ Սաֆիի 1638 թ.՝ ջրատիրութեան մասին ուշագրավ տվյալներ պարունակող հրովարտակը, Շահ Սուլթան-Հուսեյնի հողագործ ռայաթների իրավական վիճակին վերաբերող 1710-11 թթ. հրովարտակը⁷, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները վաճառահանվող ապրանքներից զանձվող հարկերի մասին⁸, 1729 թ. Թավրիզում կնքված թուրքական պայմանագիրը⁹, Ակոռու Ս. Հակոբա վանքի նորահայտ «քյոթուկը»¹⁰ և այլն:

Այսպիսով, ոչ միայն գիտական շրջանառութեան մեջ դրվեցին առաջնակարգ արժեքի պարսկերեն, արաբերեն, թուրքերեն և հայերեն նոր սկզբնաղբյուրներ, այլև առաջին անգամ բացահայտվեցին նրանց բովանդակած տեղեկությունները սոցիալ-տնտեսական կյանքի ամենաբազմազան երևույթների մասին: Եվ հետագա ուսումնասիրութիւնների համար այսպիսի ամրակուռ պատվանդան ստեղծելուց հետո, հմուտ աղբյուրագետի համբավ ձեռք բերած Հ. Փափազ-

⁵ Հ. Փափազյան, «Երկու նորահայտ իլխանական յաուլիդներ», *Բանբեր Մատենադարանի (այսուհետև՝ ԲՄ)*, № 6, 1962: Այստեղ՝ հ. Ա., էջ 217-243:

⁶ «Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд», *Ближний и Средний Восток, Сборник статей памяти В. Н. Заходера*, М., 1961: Այստեղ՝ հ. Ա., էջ 182-191:

⁷ Հ. Փափազյան, «Ռայաթների իրավական ազատութեան հարցը Արևելյան Հայաստանում 16-18 դդ. և Շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը», *Էջեր Հայ ժողովրդի պատմության և բանասիրության*, Երևան, 1971: Այստեղ՝ հ. Ա., էջ 335-345:

⁸ Հ. Փափազյան, «Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները», *ԲՄ*, № 5, 1960: Այստեղ՝ հ. Ա., էջ 147-181:

⁹ Հ. Փափազյան, «Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործութեան մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը», *ԲՄ*, № 9, 1969: Այստեղ՝ հ. Ա., էջ 319-333:

¹⁰ Հ. Փափազյան, «Ակոռու Ս. Հակոբա վանքի քյոթուկը», *ԲՄ*, № 12, 1977: Այստեղ՝ հ. Բ., էջ 73-97:

յանը խորամուտ եղավ Հայաստանի և հարևան երկրների քաղաքական ու սոցիալ-տնտեսական պատմության ամենաբարդ և խրթին հետևյալ հարցերի մեջ:

1. Հայ աշխարհիկ հողատիրության վերացման պրոցեսը Արևելյան Հայաստանում:

2. Արարատյան երկրի պատմության շրջափուլերը 15-18-րդ դդ. և էջմիածնի կաթողիկոսության դերը որպես համահայկական կենտրոն:

3. Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը և ազատագրական ձգտումները 15-18-րդ դարերում:

Համառոտակի անդրադառնանք այս հարցերի մասին Հ. Փափազյանի գրած ուսումնասիրությունների հիմնական արդյունքներին:

Հայտնի իրողությունն է, որ 14-15-րդ դդ. ընթացքում, երկարատև ու համառ դիմադրությունից հետո, հայ խոշոր կալվածատեր-ֆեոդալները զիջեցին իրենց դիրքերն օտար նվաճողների առջև: Նախկինում հայ ֆեոդալներին պատկանող կալվածքների մի փոքր մասը միայն՝ նվիրաբերվելով վանական հաստատություններին՝ փրկվեց բռնագրավումից: Պրոֆ. Հ. Փափազյանն անդրադարձավ հայ ժողովրդի միջնադարյան պատմության համար կարևոր նշանակություն ունեցող այս հարցին ուշագրավ մի շարք հոդվածներով («Սեֆյան իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջ»¹¹, «Բեյթ-ուլ-մալի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները 15-րդ դարում»¹², «Վանական կալվածքների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ»¹³ և այլն): Նա ցույց տվեց, թե ինչպես, հենվելով Իմամ-Ջահ-Ֆարի օրենքի վրա, բռնակալ տիրողները պառակտում էին հայ կալվածատերերի շարքերը: Ըստ այդ օրենքի՝ «եթե կա մուսուլման ժառանգ, անհավատները զրկվում են ժառանգությունից»: Հայ և քրիստոնյա այլ ազգությունների պատկանող հողատերերից շատերը, իրենց ազգականների ունեցվածքին տեղ դառնալու համար բռնում էին հավատափոխության և ազգադավության ճանապարհը: Հսկա-

¹¹ Հ. Փափազյան, «Սեֆյան իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջ», *ԲՄ*, № 3, 1956: Այստեղ՝ հ. Ա., էջ 69-83:

¹² Հ. Փափազյան, «Բեյթ-ուլ-մալի»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում», *Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ)*, № 6, 1958: Այստեղ՝ հ. Ա., էջ 91-101:

¹³ Հ. Փափազյան, «Վանական կալվածքների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ (XV-XVIII դդ.)», *ԲՄ*, № 10, 1971: Այստեղ՝ հ. Ա., էջ 347-360:

յական ավերածուլթյուններ էր գործում նաև «Բեյթ-ուլ-մալի» ինստիտուտը, որը պատմական զարգացում ապրելով, 15-րդ և հետագա դարերում տնօրինում էր պետական սեփականուլթյուն հայտարարվող բոլոր այն կալվածքները, որոնց տերերը հողային ֆոնդերի բաշխման ժամանակ բացակայում էին իրենց բնակուլթյան վայրերից (հաճախ՝ հետապնդվելով հենց պետական պաշտոնյաների կողմից), կամ էլ ի վիճակի չէին լինում ներկայացնել իրենց սեփականուլթյունն ապացուցող փաստաթղթեր: Հ. Փափազյանը հիմնավորապես ցույց է տալիս, որ այս ճանապարհով բռնագրավվում էին հայ ֆեոդալներին պատկանած կալվածքները, որոնք այնուհետև, շարիաթական պաշտոնական վաճառքի միջոցով դառնում էին մուսուլմանական բարձրաստիճան պաշտոնեուլթյան և քոչվոր ավազանու կողմից գանձագին արված մուլքեր:

1441 թ. հայ հեռատես եկեղեցական-քաղաքական գործիչների ջանքերով ամենայն հայոց կաթողիկոսական աթոռը վերահաստատվեց Էջմիածնում, և պատմական Հայաստանի սրտում ստեղծվեց աշխարհասփյուռ հայ զանգվածներին հազարամյա մշակութային ավանդուլթյունների ուժով միավորող ազգային այն հաստատուլթյունը, որը դրական մեծ դեր կատարեց՝ գլխավորելով օտար նվաճողների դեմ ժողովրդի մղած հերոսական պայքարը: Մեր պատմուլթյունն այս հարցին անդրադարձել է բազմիցս: Սակայն Հ. Փափազյանին էր վիճակված նոր լույս սփռել Էջմիածնի ժողովի և կաթողիկոսական աթոռի վերահաստատուլթյան հետ կապված պատմական անցուղարձերի վրա, վավերագրական գորավոր նոր փաստերով ապացուցելով, որ օրավուր իրենց տնտեսական և քաղաքական դիրքերից զրկվող հայ ֆեոդալական տների հեռատես ներկայացուցիչները, Սյունյաց Օրբելյանների (մասնավորապես Բեչքենդի որդի Ռուստամ Օրբելյանի) գլխավորուլթյամբ, 1441 թ. դեռևս տարիներ առաջ 7 խոշոր գյուղեր Էջմիածնի վանքին նվիրաբերելու միջոցով, տնտեսական հիմքեր էին ստեղծել քաղաքական մեծ նշանակուլթյուն ունեցող այդ ծրագիրը հաջողուլթյամբ իրականացնելու համար:

«Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմուլթյունից» («Տեղեկագիր», 1955 թ., № 8)¹⁴ հողվածով պրոֆ. Հ. Փափազյանը ձեռնարկեց պատմական Հայաստանի կենտրոնական նա-

¹⁴ Հ. Փափազյան, «Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմուլթյունից», Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, № 8, 1955: Այստեղ՝ Բ. Ա., էջ 45-62:

Հանգի՝ Արարատյան երկրի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմութեան ուսումնասիրութեան գծով տարվող աշխատանքներին, որոնք շարունակվեցին հետագայում, նյութ դառնալով «Օտար տիրապետութիւնը Արարատյան երկրում» ընդհանուր խորագիրը կրող եռամսնյա հոդվածաշարի (տպագրված «Լրաբերի» էջերում՝ 1960-1977 թթ.)¹⁵: Օգտագործելով բազմաթիվ այլալեզու աղբյուրներ, Հ. Փափազյանին հաջողվեց շարադրել Արարատյան երկրի և մեր ծաղկուն մայրաքաղաք Երևանի վշտաշատ ու փորձութուններով լի պատմութեան ուրվագիծը 14-րդ դարի վերջերից մինչև 1724 թ.: Ինչ տիրապետողներ են հաջորդել միմյանց այս երկրամասում, ինչ քաղաքականութիւն վարել աշխատավոր ժողովրդի նկատմամբ, ինչ պիտի արյունահեղ պատերազմներ են մղվել այստեղ, բնաշխարհի ժողովուրդը ինչպիսի բռնագաղթների է ենթարկվել, հետագայում Հայաստանի որ վայրերից են հայահոծ զանգվածներ ներգաղթել ու բնակութիւն հաստատել այստեղ. այս և հարակից բազմաթիվ հարցեր, սեղմ շարադրանքով, քննարկվել ու լուծվել են վերոհիշյալ հոդվածների մեջ: Անտարակույս, հետագայում կգրվեն ավելի հանգամանալից ուսումնասիրութիւններ Արարատյան երկրի պատմութեան մասին, բայց Հ. Փափազյանի կատարածը միշտ էլ կպահպանի իր նշանակութիւնը որպես նոր ուսումնասիրութիւնների ժամանակագրական կայուն և անխախտ հիմք:

Պատմագիտական խորագին ուսումնասիրութիւնների արդյունք են նաև Հ. Փափազյանի շուրջ մեկ տասնյակի հասնող հոդվածները, որոնց մեջ շոշափված են Սեֆյան Իրանի լծի տակ կեղեքվող Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերութիւններին առնչվող բազմազան հարցեր: «Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում 15-17-րդ դարերում»¹⁶, «Պետական և արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում 16-17-րդ դարերում»¹⁷, «Մալոջահաթ հարկային

¹⁵ Հ. Փափազյան, «Օտար տիրապետութիւնը Արարատյան երկրում (ԺԵ դար)», *Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ*, № 7-8, 1960: Այստեղ՝ հ. Ա, էջ 127-146: Հ. Փափազյան, «Օտար տիրապետութիւնը Արարատյան երկրում (ԺԶ դ.)», *Լրաբեր հաս. գիտ.*, № 6, 1973: Այստեղ՝ հ. Բ, էջ 5-16: Հ. Փափազյան, «Օտար տիրապետութիւնը Արարատյան երկրում (ԺԷ դ.)», *Լրաբեր հաս. գիտ.*, № 1, 1977: Այստեղ՝ հ. Բ, էջ 57-72:

¹⁶ Հ. Փափազյան, «Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում», *ՊԲՀ*, № 4, (35), 1966: Այստեղ՝ հ. Ա, էջ 275-282:

¹⁷ Հ. Փափազյան, «Պետական և արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում», *Բանբեր Երևանի Համալսարանի*, № 2, 1967: Այստեղ՝ հ. Ա, էջ 284-298:

տերմինի տեխնիկական նշանակությունը»¹⁸, – ահա այդ հոդվածներից մի քանիսի խորագրերը: Հարկ է նշել, որ դրանք բոլորն էլ գրված են նորահայտ նյութերի հիման վրա, որոնք գիտական շրջանառության մեջ են դրվել հոդվածագրի կողմից՝ աղբյուրագիտական-բանասիրական մանրակրկիտ վերլուծությամբ:

1968 թ. Հ. Փափազյանը՝ «Ագրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում 15-17-րդ դդ.» մենագրությունը հաջողությամբ պաշտպանեց որպես դոկտորական դիսերտացիա: 1977 թ. այն լույս տեսավ ռուսերեն լեզվով¹⁹ և ըստ արժանվույն գնահատվեց մասնագետների կողմից: Հողի սեփականատիրություն և ագրարային հարաբերությունների հարցը, որ կազմում է Հ. Փափազյանի մենագրության առանցքը, գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ հենց դրանով են ճշտորոշվում ժամանակաշրջանի արտադրական հարաբերությունների ամբողջական պատկերը, երկրի տնտեսական զարգացման իրական աստիճանը, սրանց հետ սերտորեն առնչված շահագործման ձևերը և այլն: Այդ կարևոր հարցերի ուսումնասիրության ընթացքում Հ. Փափազյանը անհրաժեշտ չափով հաշվի է առնում նաև ժամանակի իրավական նորմերը, որոնք խարսխված լինելով մոսուլմանական իրավունքի՝ շարիաթի վրա, 16-17-րդ դդ. Սեֆյան իրանի ենթակայության տակ գտնվող երկրամասերում՝ հատուկ երանգավորում էին ստացել: Հենվելով վերը հիշատակված իր հոդվածների արդյունքների վրա և հրապարակ բերելով ուշագրավ նոր նյութեր, աշխատության հեղինակը հանգամանորեն քննարկել է հայկական աշխարհիկ հողատիրության քայքայման ընթացքը և ցույց տվել, թե ինչ ճանապարհներով նախկինում հայ ֆեոդալներին պատկանող կալվածքները պետության սեփականություն են դառնում, կամ որպես թիուլ՝ տրվում պետական ու զինվորական բարձրաստիճան պաշտոնեությունը: Մենագրության մեջ հանգամանորեն քննարկված են այս հարցերը, բացահայտված են ֆեոդալական հողատիրության տարատեսակների (թիուլ, իկտա, զիամեթ, մուլք, վակֆ և այլն) բնույթն ու առանձնահատկությունները: Մասնավոր ուշադրության առարկա են դարձված հատկապես հայ-

¹⁸ А. Д. Папазян, “К вопросу о техническом значении налогового термина «ма-поджахат»”, Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի տեղեկագիր, № 2, 1961: Այստեղ՝ հ. Ա, էջ 193-215:

¹⁹ А. Д. Папазян, *Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках*, Ереван, 1972:

կական վանքերին պատկանող կալվածքներին շնորհված արտոնութ-
յուններին ու մուլքադարական հողատիրությանը առնչվող հար-
ցերը: Մուլքային հողատիրությունը իրավամբ դիտված է որպես հո-
ղային սեփականության ամենից ավելի լիակատար ձևը միջնադար-
յան Արևելքում: Չափազանց հետաքրքրական են և բովանդակալից
ուսումնասիրության այն հատվածները, որոնք նվիրված են հարկա-
հանության ձևերին և, ընդհանրապես, պետության և կալվածատե-
րերի հանդեպ գյուղացիների ունեցած պարտավորություններին:
Հ. Փափազյանի ջանքերով արևելագիտության մեջ արդեն հայտնի
հարկային տերմիններին ավելացվել են նրանցից շատերի իրական բո-
վանդակությունն ու չափի որոշման ձևերը: Ոչ պակաս հետաքրքրու-
թյուն են ներկայացնում հեղինակի ուսումնասիրության արդյունք-
ները հայկական գյուղական համայնքի առանձնահատկությունների
մասին. բացահայտված է համայնքի դերը ինչպես հողային ֆոնդը
մասնատրող, համայնքի անդամների միջև ծագած վեճերը հարթող
կազմակերպություն, այնպես էլ որպես հարկահանության գործին
նպաստող ստորին օղակ: Հետաքրքրական են այն տեղեկություն-
ները, որոնք վերաբերում են Հայաստանի տարբեր շրջաններում
պահպանված սակավաթիվ ազատ գյուղական համայնքներին, ցույց
է տրված, թե ինչպես են նրանք պայքարել պետական պաշտոնեու-
թյան ու հայ եկեղեցական հաստատությունների դեմ, որոնք միջոց-
ների խտրություն չէին դնում այդ համայնքները ևս իրենց ենթար-
կելու համար:

Բնականաբար, հնարավոր չէ այստեղ հանգամանորեն ներկա-
յացնել պրոֆ. Հ. Փափազյանի մենագրության բոլոր բաժինները,
թվարկել հետաքրքրական բոլոր այն խնդիրները, որոնք դրվել են
հեղինակի կողմից ու լուծվել հաջողությամբ, ուստի հարմար ենք
գտնում մեջբերել սովետական անվանի գիտնական Ա. Պ. Նովո-
սելցևի գրախոսականի վերջին պարբերությունը այս մենագրության
խոշոր գիտական նշանակության մասին. «Հ. Փափազյանի աշխա-
տությունը, – իրավամբ գրել է նա, – անտարակույս դառնալու է սե-
ղանի գիրք Անդրկովկասի, նաև Իրանի, Թուրքիայի և այլ արևելյան
երկրների պատմության մասնագետների համար: Թվում է, թե այն
չատ օգտակար է լինելու նաև եվրոպական երկրների պատմության
մասնագետ-միջնադարագետներին» («История СССР», 1974, № 4):

Պրոֆ. Հ. Փափազյանի գիտահետազոտական գործունեությունը հիմնական ուղղություններին համառոտակի անդրադառնալուց հետո անհրաժեշտություն է զգացվում մի քանի խոսք ասել շնորհակալ այն աշխատանքի մասին, որ կատարել է ու շարունակում է կատարել մեր հոբելյարը Մաշտոցի անվան Մատենադարանի արաբատառ ձեռագրերի և վավերագրերի գիտական նկարագրության, արժեքավոր բնագրերի հայտնաբերման բնագավառում:

1960 թ. Մոսկվայում գումարված Արևելագետների միջազգային 25-րդ կոնգրեսին Հ. Փափազյանը մասնակցեց «Մատենադարանի պարսկերեն, արաբերեն և թուրքերեն 14-19-րդ դդ. փաստաթղթերը և նրանց նշանակությունը Մերձավոր Արևելքի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար»²⁰ խորագիրը կրող հետաքրքրական զեկուցումով, որով կաթողիկոսական դիվանի բովանդակալից փաստաթղթերի ժողովածուն պատշաճ գիտական մակարդակով ներկայացվեց արևելագետների կաճառին: Հ. Փափազյանը տարբեր առիթներով հոգևածներ է գրել Մատենադարանի պարսկերեն ձեռագիր մատյանների պատմագիտական արժեքի մասին, ըստ արժանվույն գնահատել է թուրքերեն վավերագրերի հավաքածուն²¹, արաբագետների ուշադրություն է հրավիրել Աբու-Ալի իբն Սինայի (Ավիցեննայի) «Գիրք փրկության» կոչվող քիչ հայտնի աշխատության վրա²², որի ամբողջական ձեռագիրը պահվում է Մատենադարանում, հանգամանորեն նկարագրել է Ռուստամ-խան Դոմբուլիի երկու ձեռագիր աշխատությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուրներ են քուրդ ժողովրդի պատմության համար²³ և այլն:

Պրոֆ. Հ. Փափազյանը հաջողությամբ զուգակցում է գիտահետազոտական աշխատանքը մանկավարժական և գիտակազմակերպչական աշխատանքների հետ: Սկսած 1959 թ., երբ Մաշտոցի անվան

²⁰ "Историкографическая ценность персидских рукописей Государственного Математического музея", *Материалы Первой всесоюзной конференции востоковедов в г. Ташкенте*, изд. АН Узбекской ССР, Ташкент, 1958: Այստեղ՝ հ. Ա, էջ 119-125:

²¹ «Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը», *ՊԲՀ*, № 4 (67), 1974: Այստեղ՝ հ. Բ, էջ 27-37:

²² "Об одной рукописи «Книги спасения» Абу-Али Ибн-Сина", *Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի զեկուլյոններ*, XXIII, 1956, 5: Այստեղ՝ հ. Ա, էջ 85-90:

²³ «Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր», *ԲՄ*, № 8, 1967: Այստեղ՝ հ. Ա, էջ 299-318: «Երևանի Մուհամադ-խան Ղաջարի՝ Միրզա-աղա Սիպկիին և Անմադ-աղա Զիլանիին շնորհած աղայության հրամանագրերը (XVIII դ.)», *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ*, XIII, Քրդագիտություն, Երևան, 1985: Այստեղ՝ հ. Բ, էջ 212-222:

Մատենադարանը դարձավ գիտահետազոտական ինստիտուտ, նա անընդմեջ ղեկավարում է Մատենադարանի Միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժինը, որի կազմում ընդգրկված բանասերներն այս տարիների ընթացքում հրատարակել են մի քանի տասնյակ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ: Մեր հոբելյարը 1956 թվականից կապված է Երևանի պետական համալսարանի հետ, որի Արևելագիտության ֆակուլտետում կարդում է հին և միջնադարյան Իրանի պատմության դասընթացը, ինչպես նաև արաբապարսկական հնագրության ու վավերագրության մասին հատուկ դասընթաց: Նա ունեցել է մի շարք ասպիրանտներ ու դիսերտանտներ, որոնք հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական դիսերտացիաներ և արդյունավետ աշխատանք են կատարում գիտական տարբեր հաստատություններում:

Պրոֆ. Հ. Փափազյանն ընդառաջ է գնում իր կյանքի վախճուններորդ տարեդարձին ստեղծագործական թարմ ուժերով, բազմաթիվ կիսավարտ գիտական աշխատություններ ունենալով իր գրադարակում և գիտական ծրագրեր ու մտահղացումներ՝ մշտազբաղ իր մտքի մեջ: Շուտով հրատարակության է հանձնվելու «Մատենադարանի պարսկերեն վավերագրեր» մատենաշարի նոր պրակը՝ 17-րդ դ. երկրորդ հիսնամյակի արժեքավոր հրովարտակներով, ավարտված է նաև տողերիս գրողի հետ միասին ուսումնասիրված ու հրատարակության պատրաստված ուշագրավ մի բնագիր՝ Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու «Հաշվետումարը», որը պարունակում է հարուստ տեղեկություններ 17-րդ դ. վերջին տասնամյակների Իրանի, Հնդկաստանի, Նեպալի և Տիբեթի տնտեսական կյանքի տարբեր երևույթների մասին և այլն:

Մաղթենք, ուրեմն, քաջաուղջություն և արևշատություն վաստակաշատ արևելագետ պրոֆ. Հ. Փափազյանին՝ գիտնականի ու քաղաքացու իր ճանապարհով դեպի նոր բարձունքների հասնելու, սովետահայ արևելագիտությունը նոր արժեքներով հարստացնելու համար:

Լևոն Խաչիկյան

Լևոն Խաչիկյանի հոդվածն ավարտվում է իր և Հ. Փափազյանի համատեղ աշխատասիրությունը պատրաստված՝ Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու «Հաշվետուամարի»²⁴, գալիք հրատարակության մասին հակիրճ հաղորդումով: «Հաշվետուամարը» կազմվել է Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու կողմից՝ իր տասնմեկամյա երկար ու հեռավոր ուղևորության ընթացքում (1682-1693 թթ.) և պարունակում է տարաբնույթ տեղեկություններ այն երկրների մասին, ուր ինքը եղել և գործել է: Նրա գրառումները լույս են սփռում իր այցելած երկրների սոցիալ-տնտեսական կյանքի, ինչպես նաև այլևայլ խնդիրների վրա: Այդ գրառումները, լինելով հաշվապահական փաստաթղթեր, արժանահավատ են ու չափազանց ուշագրավ, հատկապես այդ երկրների արհեստագործությունն ու առևտրի պատմությունն ուսումնասիրողների համար: «Հաշվետուամարի» բառապաշարը, ինչպես հատուկ է այս կարգի աղբյուրներին, բազմալեզու է. ինչպես տարատեսակ ապրանքների անվանումները, չափ ու կշռի միավորները, դրամները, այնպես և առևտրական գործողությունները, առևտրի պայմաններն ու պարագաները՝ տնտեսական, հաշվապահական, առևտրաֆինանսական, հարկային, վարչական և բազմաթիվ այլ եզրեր բերվում են իր ժամանակին առևտրական գործունեության համար նպաստավոր երկրներում գերիշխող եղած տարբեր արևելյան լեզուներով: Այս շատ հարուստ բազմալեզու բառապաշարը (ավելի քան 1600 բառ), որ կազմում է տեքստի էական և բովանդակային մասը, գրքում ներկայացված է նաև կից բառարանով, որտեղ յուրաքանչյուր եզր մեկնաբանված է հանգամանալից կերպով և բարձրակարգ ակադեմիական ճշգրտությամբ: Այս բառարանը մեծ օգնություն է նույնանման բնագրերի ապագա ուսումնասիրողներին: Նույնը պետք է ասել նաև հրովարտակների ու կալվածագրերի հատորներին կից բառարանների մասին:

Հակոբ Փափազյանը քննության է ենթարկել և ներկայացրել Հայաստանին վերաբերող հետաքրքիր տեղեկություններ՝ պարսկալեզու պատմաաշխարհագրական առանձին երկերում, ինչպես՝ 10-րդ դարի անանուն հեղինակի «Հուգուգ ալ-ալամ» (Աշխարհի սահման-

²⁴ Լ. Ս. Խաչիկյան, Հ. Գ. Փափազյան, Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետուամարը, Երևան, 1984:

ները)²⁵ և Ռաշիդ էդ-Դինի «Ջամի աթ-Թավարիխ» (Տարեգրություններ ժողովածու)²⁶ երկերը:

Վիմագրագիտական աշխատություններից՝ վերը արդեն հիշատակված՝ Արզավանդ գյուղում գտնվող թուրքմեն ամիրաների դամբարանի 15-րդ դ. արաբերեն արձանագրությանն ու Ակոռու Ս. Հակոբա վանքի «քյոթուկ»-ին պիտի հավելենք նաև Դիզակի Մելիք Եգանին²⁷ ու Սյունիքի Օրբելյանների դավանափոխ եղած ժառանգներին²⁸ վերաբերող արձանագրությունների քննությունը:

Հայագիտության և արևելագիտության համար արժեքավոր նշանակություն ունեն Ն. Փափագյանի հետազոտությունները օսմաներեն և արաբերեն վավերագրագիտության ու վիմագրության ոլորտներում: Բացի Մատենադարանի պարսկերեն, օսմաներեն և արաբերեն ձեռագրերը լայն գիտական հանրությանը ներկայացնելուց, նա նաև հատուկ անդրադարձ ունի Մատենադարանի հայատառ ղփչաղերեն, քրդերեն ու պարսկերեն ձեռագրերին, որտեղ մանրամասն կանգ է առնում հատկապես հայկական ձեռագրերում հանդիպող պարսկերեն հատվածների քերականության ու տառադարձման սկզբունքների վրա²⁹:

Կյանքի վերջին շրջանում Ն. Փափագյանը զբաղված էր Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Արևելյան բաժնի արխիվում պահվող օսմանյան դիվանական վավերագրերի ուսումնասիրությամբ: Փաստաթղթերի այդ խոշոր հավաքածուն 1920-ական թվականներին, դեպքերի բերումով, հայտնվել էր Բուլղարիայում և պահ էր արվել Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանին: Ժամանակի ընթացքում, այդ ծավալուն հավաքածուն սխտեմատիկ արխիվային մշակման է ենթարկվել, ցուցակագրվել, դասակարգվել, կազմվել

²⁵ «Անանուն տաշիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար)», *Տեղեկագիր Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի*, № 5, 1953: Այստեղ՝ հ. Ա., էջ 29-43:

²⁶ «Ռաշիդ-էդ-դինը Կիրիլյան Հայաստանի մասին», *ՊՐՀ*, № 2, (81), 1978: Այստեղ՝ հ. Բ., էջ 99-109:

²⁷ «Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը», *Լրաբեր հաս. գիտ.*, № 5, 1985: Այստեղ՝ հ. Բ., էջ 207-210:

²⁸ “Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике”, *ՊՐՀ*, № 4 (103), 1983: Այստեղ՝ հ. Բ., էջ 160-167: “Возвращаясь к «дешифровке» уругтекой эпитафии”, *ՊՐՀ*, № 4, 1987: Այստեղ՝ հ. Բ., էջ 287-296:

²⁹ «Մեսրոպաշտոն ալյալեզու գրականության մասին», *ԲՄ*, № 7, 1964: Այստեղ՝ հ. Ա., էջ 245-260:

են համառոտ նկարագրեր, և այդպիսով, արդեն 1960-ականների վերջերից մատչելի դարձել գիտական ուսումնասիրություն համար:

Հակոբ Փափազյանն իր աշխատանքն այս փաստաթղթերի հետ սկսել է 1980-ականների սկզբից՝ 1982 թ. Բուլղարիա կատարած գործուղում-ուղևորությունից հետո, երբ հնարավորություն ստացավ տեղում դիտելու, ընտրելու և խմբավորելու հատկապես Հայաստանին վերաբերող մեծաթիվ ու բազմաբնույթ նյութերը: Բուլղարական արխիվի փաստաթղթերի պատմագիտական արժեքը հայագիտության համար, դրանց նշանակությունը թե՛ Հայաստանի, թե՛ հարեւան երկրների պատմության ուսումնասիրության համար՝ Հ. Փափազյանը ներկայացրել է մի քանի հոդվածներում³⁰: Մեծ հետաքրքրություն տպագրության էր նախապատրաստում այդ շատ կարևոր վավերագրերի մի ծավալուն ուսումնասիրություն: Ցավոք, այդ աշխատանքը մնաց անավարտ:

Հակոբ Փափազյանը 1959 թվականից մինչև իր կյանքի վերջը ղեկավարել է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի Միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժինը, որի գիտական թեմատիկան ընդգրկում էր ուսումնասիրությունների լայն սպեկտր. միջնադարյան բժշկագիտություն, տոմարագիտություն, մանրանկարչություն, գրականություն, ազգագրություն և այլն: Այդ բաժնի աշխատակիցները Հ. Փափազյանի ղեկավարման ընթացքում հրապարակել են մի քանի տասնյակ արժեքավոր բնագրեր և ուսումնասիրություններ: Նրանք մինչ այժմ շնորհակալական խոսքերով ու երախտագիտությամբ են հիշում, թե ինչպիսի պատրաստակամություն, սիրով, հոգատարությամբ էր պատասխանում Հ. Փափազյանն իրեն ուղղված՝ արևելագիտության ցանկացած բնագավառին վերաբերող ամենատարբեր հարցերին, և թե որքան մանրակրկիտ, համակողմանի և ամբողջական էին այդ պատասխանները:

Հակոբ Փափազյանը, ինչպես և իր սերնդակից մատենադարանցիներից շատերը, նվիրված էր ձեռագրահավաքության գործին. նրա ջանքերով Մատենադարանի հավաքածուն համալրվել է մի քանի հարյուր նոր ձեռագրերով:

³⁰ «Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը», ՊԲՀ, № 3, 1984: Այստեղ՝ և. Բ, էջ 169-188: «Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի Վանի էյալեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը», ԲՄ, № 15, 1986: Այստեղ՝ և. Բ, էջ 224-237: «Նոր նյութեր Արևելյան Հայաստանում բուրքական իշխանությունների հարկային քաղաքականության վերաբերյալ», ԲՄ, № 6, 1994: Այստեղ՝ և. Բ, էջ 311-327:

* * *

1956 թվականից Հակոբ Փափազյանը դասավանդել է նաև ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետում, որտեղ կարգում էր Իրանի պատմության, ինչպես նաև արաբապարսկական հնագրության ու վավերագրության մասին հատուկ դասընթացներ՝ կրթելով ու ձևավորելով արևելագետների մի քանի սերունդ: Նա ղեկավարել է Լ. Դանեղյանի, Գ. Առաքելյանի, Ք. Կոստիկյանի, Գ. Մկրտումյանի թեկնածուական ատենախոսությունները, որոնք հետագայում հրատարակվել են և գնահատվել որպես արժեքավոր ներդրում արևելագիտության ու հայագիտության բնագավառներում, իսկ դրանց հեղինակները հետագայում՝ հետևելով իրենց ուսուցչի մշակած գիտահետազոտական մեթոդներին, շարունակել են նրա գործը հայագիտության, իրանագիտության, այդ թվում նաև պարսկերեն աղբյուրագիտության, մասնավորապես, Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ու ձեռագրերի ուսումնասիրության ոլորտներում:

* * *

Հակոբ Փափազյանը 1962 թ. ընտրվել է ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի Արևելյան բնագրագիտության կենտրոնական հանձնաժողովի անդամ, ինչպես նաև՝ երկար տարիներ գործել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակվող՝ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի խմբագրական կազմում:

Հակոբ Փափազյանը նաև խմբագրել է տարբեր հեղինակների պատրաստած՝ վավերագրերի և այլ աղբյուրների գիտական հրատարակություններ, ինչպես նաև հայագիտության և արևելագիտության ամենատարբեր ոլորտներին վերաբերող բազմաթիվ մենագրություններ ու ժողովածուներ³¹:

Նա երկար տարիներ եղել է Գիտությունների Ակադեմիայի պատմության և արևելագիտության ինստիտուտների, ինչպես նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի գիտական և մասնագիտացված խորհուրդների անդամ:

³¹ Տե՛ս Մատենագիտություն, էջ 22-27:

* * *

Լինելով ազգային մշակույթի, պատմության, հայ ժողովրդի պատմական հիշողության պահպանման գործի նվիրյալ՝ Հակոբ Փափազյանը «Վասպուրական» հայրենակցական միության Հիմնադիր խորհրդի կազմում էր, և մինչև կյանքի վերջը գործել է որպես այդ խորհրդի անդամ:

Քաջ գիտակցելով Հայ Առաքելական Եկեղեցու կարևորագույն դերը հայ մշակույթի պահպանման և զարգացման, ազգի գոյատևման համար, Հ. Փափազյանը տարիներ շարունակ՝ Ամենայն հայոց Վազգեն Ա կաթողիկոսի հրավերով, գործել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր խորհրդի կազմում: Այդ գործունեության համար Ամենայն հայոց Գարեգին Ա կաթողիկոսի կողմից նրան շնորհվել է Ս. Գրիգոր Լուսավորիչ մեդալ:

* * *

Հակոբ Փափազյանը ծնվել է 1919 թ. սեպտեմբերի 1-ին Կրասնոդարում (ըստ անձնագրի՝ Թավրիզում) Դավիթ և Արշալույս Փափազյանների ընտանիքում: Հայրը՝ Դավիթ Փափազյանը (1884-1961), գործել է Վանի քաղաքային իշխանության արդարադատության համակարգում: Լինելով թուրքերենի քաջ գիտակ, 1906 թ. նախաձեռնել և ինքն էլ խմբագրել ու հրատարակել է (ՀՅԴ հովանավորությամբ) երկլեզու՝ հայերեն և օսմաներեն, «Սաբահ-ուլ-խեյր» թերթը: Թերթի նպատակն է եղել՝ նպաստել Վասպուրականի հայ և թուրք բնակիչների փոխըմբռնմանը և բարի հարաբերություններին: Թերթին թղթակցել են նաև առանձին թուրք հեղինակներ:

1915 թ. Վանի պաշարման ընթացքում Դավիթ Փափազյանը եղել է ինքնապաշտպանության ղեկավար կառույցի մեջ՝ գլխավորելով, այսպես կոչված՝ «Զինաբաշխ մարմինը», որը գեներալ՝ ոչ միայն բաշխման, այլև նորոգման և ստեղծման աշխատանքներն էր կատարում: Նա նաև հեղինակում էր թուրքերեն թռուցիկներ, որ տարածվում էին քաղաքում, բացատրելու համար թուրք բնակչությանը, որ հայերի կողմից տարվող ռազմական գործողությունները միայն ինքնապաշտպանություն են և ուղղված չեն համաքաղաքացի թուրքերի դեմ: Ինքնապաշտպանության հաղթական ավարտից հետո ստեղծված՝ Վանի երկամսյա ինքնիշխանության ընթացքում Դավիթ Փափազյանը եղել է Արամ Մանուկյանի ամենավստահելի գիտակից-

ներից մեկը: Սակայն ռուսական բանակի նահանջի հետևանքով Վասպուրականի բնակչության արտագաղթի հետ՝ Դավիթ Փափագյանն իր ընտանիքով նույնպես հեռացել է հայրենի Վանից: Մինչև Հայաստանի առաջին հանրապետության ստեղծումը, մի քանի տարի բնակվել է Թիֆլիսում, Բաքվում, Արմավիրում, Ռոստովում, Կրասնոդարում՝ ամեն տեղ կատարելով հասարակական աշխատանք, թղթակցելով տեղի հայկական մամուլին: Ահա այդ թափառումների մեջ էլ ծնվել է Դավիթ Փափագյանի երրորդ որդին՝ Հակոբը, առաջին երկու զավակների կորստից հետո: Հայաստանի Առաջին հանրապետության հռչակումից հետո Դավիթ Փափագյանն ընտանիքով տեղափոխվել է Հայաստան, որտեղ՝ զբաղեցնելով պատասխանատու պաշտոններ, գործել է մինչև 1921 թ.: Սակայն բոլշևիկյան ներխուժման պայմաններում հարկադրված է եղել անցնել Իրան և հաստատվել Թավրիզում, որտեղ և Հակոբ Փափագյանը սովորել է տեղի Հայկազյան-Թամարյան վարժարանում և Ֆիրզուսու անվ. պետական պարսկական դպրոցում: 1942-46 թթ. աշխատակցել է տեղում հրատարակվող «Արևելք» (Հակաֆաշիստ) թերթին: 1946 թ. ամռանը ներգաղթել է Հայաստան՝ կնոջ և երկամյա դստեր հետ: Անմիջապես ընդունվել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի արևելագիտության բաժինը՝ «Իրանագիտություն» մասնագիտությամբ: Արդեն իսկ գիտենալով թե՛ պարսկերեն, թե՛ թուրքերեն և ունենալով արաբերենի որոշ ճանաչողություն, ավելի շատ հաճախել է արաբերենի դասընթացներին՝ կատարելագործելով նաև արաբերենի իմացությունը: 1949 թ. ավարտել է համալսարանը և ընդունվել ասպիրանտուրա՝ ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում: 1954 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ազրարային հարաբերությունները Երևանյան խանությունում XVII դարում» թեմայով: 1954-59 թթ. եղել է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, այնուհետև, և մինչև կյանքի վերջը՝ Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի Միջնադարյան մատենագրության և դիվանական վավերագրերի ուսումնասիրության բաժնի վարիչը: 1968 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Խոշոր հողատիրությունը և ազրարային հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI-XVII դդ.» թեմայով:

* * *

Հակոբ Փափազյանը հայրենագարձվել էր հայրենիքում լինելու, հայրենիքին ծառայելու, գավազներին հայրենի հողում և հայրենի մշակույթի մեջ մեծացնելու նպատակով: Մինչև Խորհրդային Հայաստանում բնակություն հաստատելը՝ պատանեկության տարիքում, հակված էր հետևելու մարքսիստական-սոցիալիստական գաղափարախոսություն: Հայտնվելով կոմունիստական ուժերի իրողության մեջ, անմիջապես հասկացավ, որ թե՛ գաղափարախոսությունը, թե՛ դրա իրականացումը անհարիր են մարդկային կյանքին, համամարդկային և ազգային մշակույթին: Սակայն երբեք չզղջաց հայրենիքում բնակություն հաստատելու համար, համոզված լինելով, որ հայ մարդու տեղը Հայաստանն է՝ անկախ վարչակարգից, տնտեսական վիճակից, կամ այլ պարագաներից: Անգամ 1970-ականների առաջին տարիներին որոշակի քաղաքական-գաղափարախոսական բնույթի հալածանքների ենթարկվելուց հետո չփոխեց իր դիրքորոշումը. հայրենիքից կամ հայրենի ժողովրդից դառնացած հայրենագարձի դիրքն անընդունելի էր համարում: Մշտապես հետևում էր միջազգային հասարակական-քաղաքական և մշակութային իրադարձություններին, կառուցելով իր դիրքորոշումները՝ ելնելով իր արժեքներից, այն ամենից, ինչն իր՝ լայն ճանաչողության տեղ մտավորականի համար, էական էր, թանկ և նշանակալի: Երջանիկ էր Ղարաբաղյան շարժումով, Հայաստանի անկախության, կոմունիստական վարչակարգի անկմամբ:

Հակոբ Փափազյանը վախճանվեց 1997 թ. հոկտեմբերի 27-ին:

* * *

Երկհատոր լուսապատճենային այս հրատարակությունը փորձ է լստ հնարավորին ամբողջացնելու և ի մի բերելու Հակոբ Փափազյանի գիտական ժառանգությունը: Այն ընդգրկում է գիտնականի՝ 1953-1994 թթ. ընթացքում տարբեր հանդեսներում և ժողովածուներում հրատարակված աշխատությունները՝ ներկայացված ժամանակագրական կարգով: Առանձին բաժիններում ընդգրկված են նաև Հակոբ Փափազյանի հեղինակած հրատարակախոսական և այլ նյութերը, որոնք վերաբերում են Հայաստանի գիտական և հասարակական իրադարձություններին:

Կազմողների կողմից

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Մենագրություններ՝

1. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականեր, պրակ Ա, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, էջ 315:
2. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտականեր, պրակ Բ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, էջ 593:
3. Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, II, Կալվածագրերը, պրակ Ա, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 640:
4. *Аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII веках*, Ереван, изд. АН АрмССР, 1972, с. 302.
5. Լ. Խաչիկյանի հետ համահեղինակությամբ, Հովհաննես Տեր-Դավթյան Զուղայեցու հաշվետումարը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1984, էջ 426:
6. Վան-Վասպուրականի հերոսամարտը - 75 [Հոգվածների ժողովածու], կազմեց և առաջաբանը Հ. Դ. Փափազյան, խմբ.՝ Հ. Մ. Պողոսյան, Երևան, Հայաստան, 1990, էջ 128:

Սեղմագրեր՝

Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке, Ереван, 1954. (պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար):

Крупное землевладение и аграрные отношения в Восточной Армении в XVI-XVII вв., Ереван, ин-т Истории, 1968. (պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման համար):

Հոգվածներ՝

1. Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար), Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հ. 5, 1953, էջ 73-87:
2. Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հ. 8, 1955, էջ 83-100:

3. Ֆրիկի դիվանի պարսկերեն քառյակը, *Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ*, հ. 3, 1956, էջ 87-92:
4. Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, *Բանբեր Մատենադարանի (այսուհետև՝ ԲՄ)*, հ. 3, 1956, էջ 85-99:
5. *Об одной рукописи “Книги спасения” Абу-Али Ибн-Сина*, *ՀՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի զեկուլցյներ*, XXIII, 1956, 5, էջ 229-234:
6. «Բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում, *Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ)*, հ. 2, 1958, էջ 193-203:
7. *Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի պատմագրական արժեքը*, *ԲՄ*, հ. 4, 1958, էջ 221-236:
8. *Историографическая ценность персидских рукописей Государственного Матенадарана*, *Материалы первой Всесоюзной научной конференции востоковедов в г. Ташкенте*, 1958, сс. 893-899.
9. *Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դար)*, *Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ*, հ. 7-8, 1960, էջ 21-40:
10. *Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները*, *ԲՄ*, հ. 5, 1960, էջ 431-465:
11. *Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд, Ближний и Средний Восток*, *Сборник статей памяти В. Н. Заходера*, М., 1961, сс. 68-75.
12. *К вопросу о техническом значении налогового термина “малоджахат”*, *Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ*, հ. 2, 1961, էջ 61-83:
13. *Երկու նորահայտ իլիսանական յաուլիդներ*, *ԲՄ*, հ. 6, 1962, էջ 379-401:
14. *Մեսրոպատառ այլալեզու գրականության մասին*, *ԲՄ*, հ. 7, 1964, էջ 209-224:
15. *Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում*, *Լրաբեր հաս. գիտ.*, 1966, հ. 12 (283), էջ 22-34:
16. *Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում*, *ՊԲՀ*, 1966, հ. 4 (35), էջ 221-228:

17. Պետական ու արքունական հոդերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում, Բանբեր Երևանի համալսարանի, 1967, հ. 2, էջ 96-109:
18. Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր, ԲՄ, հ. 8, 1967, էջ 229-248:
19. Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը, ԲՄ, հ. 9, 1969, էջ 241-254:
20. Ռայաթների իրավական ազատության հարցը Արևելյան Հայաստանում 16-18-րդ դդ. և շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը, էջեր հայ ժողովրդի պատմության և բանասիրության, Երևան, 1971, էջ 127-136:
21. Վանական կալվածների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ (XV-XVIII դդ.), ԲՄ, հ. 10, 1971, էջ 237-250:
22. Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նադիր շահի օրոք, Բանբեր Երևանի համալսարանի, 1972, հ. 2, էջ 72-85:
23. Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI-XVIII դարերում, Հայ ժողովրդի պատմություն, հ. IV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1972, էջ 247-274:
24. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԶ դ.), Լրաբեր հաս. գիտ., 1973, հ. 6, էջ 23-34:
25. Զրատիրության մասին դիվանական վավերագրերը և շահ Սաֆիի 1638 թ. հրովարտակը, ԲՄ, հ. 11, 1973, էջ 223-232:
26. Մատենադարանի թուրքերեն վավերագրերի աղբյուրագիտական արժեքը, ՊԲՀ, 1974, հ. 4 (67), էջ 89-98:
27. Новые источники по истории курдского народа, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 7, Երևան, 1975, էջ 209-224:
28. Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար), Լրաբեր հասարակ. գիտ., 1977, հ. 1, էջ 29-44:
29. Ակոռու Ս. Հակոբա վանքի քյոթուկը, ԲՄ, հ. 12, 1977, էջ 191-215:
30. Ռաշիդ-էդ-դինը Կիլիկյան Հայաստանի մասին, ՊԲՀ, 1978, հ. 2 (81), էջ 129-139:

31. Понятия “мулк”, “малек” и “малеканэ” по кабале-вакфнаме (1431 г.) селений, принадлежавших Эчмиадзину, *Формы феодальной земельной собственности и владения на Ближнем и Среднем Востоке, Бартольдские чтения 1975 г., АН СССР, М., 1979, сс. 127-132.*
32. Ներսես Աշտարակեցու 1823 թ. բողոքագիրը, *ԲՄ, հ. 13, 1980, էջ 259-270:*
33. *Источниковедское значение турецких документов Матенадарана, Средневоковый Восток, История, культура источниковедение, М., 1980, сс. 208-219.*
34. Այգիներն ու այգետեղերը ըստ հայերեն և պարսկերեն կալվածագրերի, *Լրաբեր հաս. գիտ., 1982, հ. 1, էջ 65-82:*
35. *Новые эпиграфические данные о последних отпрысках армянской феодальной знати в Сюнике, ՊԲՀ, 1983, հ. 4 (103), էջ 118-125:*
36. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի օսմանյան դիվանական վավերագրերը, *ՊԲՀ, 1984, հ. 3, 195-214:*
37. Կուլբենկի որդիներ Գուլաբիի և Գալուստի 1847 թ. Սուլթան Աբդ-ուլ-Մեջիդից ստացած արտոնագրերը, *ԲՄ, հ. 14, 1984, էջ 212-228:*
38. Մելիք Եգանի ընդունարանի մուտքի վիմագիր արձանագրությունը, *Լրաբեր հաս. գիտ., հ. 5, 1985, էջ 75-78:*
39. Երևանի Մուհամմադ-խան Ղաջարի՝ Միրզա-Աղա Սիպկիին և Ահմադ-Աղա Զիլանիին շնորհած աղայուլթյան հրամանագրերը (XVIII դ.), *Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 13, 1985, էջ 272-283:*
40. Սոֆիայի Կիրիլ և Մեթոդի ժողովրդական գրադարանի վանի էյակեթին վերաբերող օսմանյան դիվանական վավերագրերը, *ԲՄ, հ. 15, 1986, էջ 274-287:*
41. *Armenia and Iran VI. Armeno-Iranian Relations in the Islamic Period, Encyclopedia Iranica, originally published 1986, available online <http://www.iranicaonline.org/articles/armenia-vi> last visited 16.05.2019.*
42. Մուրադ-թափայի նորահայտ թուրքերեն արձանագրությունը, *Լրաբեր հաս. գիտ., հ. 8, 1987, էջ 71-78:*

43. Դավիթ Բեկի պայքարը օսմանյան ներխուժման դեմ և հարաբերությունները իրանական հակաօսմանյան դիմադրական ուժերի հետ, ՊԲՀ, 1987, հ. 1 (116), էջ 89-102:

44. Возвращаясь к дешифровке Урутской эпитафии, ՊԲՀ, 1987, հ. 4, էջ 171-180:

45. Արևմտահայությունից վիճակը ըստ Օսմանյան սուլթանական ֆերմանների, ՊԲՀ, 2 (121), Երևան, 1988, էջ 124-136:

46. Նոր նյութեր Արևելյան Հայաստանում թուրքական իշխանությունների հարկային քաղաքականությունից վերաբերյալ, Բանբեր Մատենադարանի, հ. 16, 1994, էջ 197-213:

47. Միրզա-Յուսուֆ Ներսեսովի «Թարիխ-ե Սաֆի»-ն որպես Արցախի 18-19 դդ. պատմության սկզբնաղբյուր, Իրաննամէ, թիվ 2(9), 1994, էջ 23-25:

48. Մ. Փորթուղյանը Արմենական կուսակցության մասին, ՊԲՀ, 1996, հ. 1-2 (143-144), էջ 317:

Գրախոսություններ՝

49. «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ի Ա հատորը, Տեղեկագիր ՀՍՍՌ ԳԱ, հ. 10, 1956, էջ 115-120:

50. «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Մասն Բ, կազմեց Լ. Խաչիկյան, ՊԲՀ, 1959, հ. 4, էջ 322-327:

51. Ձեռագրերի Յուզակ. 1 հատոր, ՊԲՀ, 1965, 1, էջ 306-310:

52. Խորենացու «Պատմությունը» պարսկերեն, Գրքերի աշխարհ, № 6 (201) 16.06.1985 թ., էջ 5:

53. Բառարանագրական հուշարձաններ. Թուրքերեն-հայերեն բառարան, Գրքերի աշխարհ, № 8 (215) 17.08.1986 թ., էջ 3:

Մամուլի հրատարակումներ՝

54. Հայրենի դպրություն անխոնջ մշակը, Հայրենիքի ձայն, 9 օգոստոսի 1978 թ., № 32 (680), էջ 4-5:

55. Նահատակ ֆիդայու նամակը, Գարուն, № 1, 1989, էջ 8-9:


56. Մրցույթն ավելորդ է, Հայաստանի Հանրապետություն, թիվ 5, 13 դեկտեմբերի, 1990 թ.:

Այլ՝

57. Մաշտոցյան մրցանակի առաջին դափնեկիրը, Լրաբեր հաս. գիտ., 1969, 9 (316), էջ 100-101:
58. Արամ Տեր-Ղևոնդյան (Մահախոսական), ՊԲՀ, 1 (120), 1988, էջ 243-245:

Խմբագրութուն՝

1. Բ. Չուգասոյան, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963:
2. Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1965:
3. Ա. Տեր-Ղևոնդյան, Ագաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968:
4. Աբրահամ Կրետացի, Պատմություն, քնն. բնագիր, ռուս. թարգմ. և ծանոթագր. Ն. Կ. Ղորղանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973:
5. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ. պարսկերենի՝ Գ. Նալբանդյան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1984:
6. Բունիաթ Սեբաստացի, Գիրք բժշկության, աշխատ. Դ. Կարապետյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
7. Հակոբ Ղրիմեցի, Տոմարագիտական աշխատություններ, աշխատ. Ջ. Ա. Էյնաթյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987:
8. Շ. Լ. Խաչիկյան, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988:
9. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, թարգմ. պարսկերենի՝ Գ. Նալբանդյան, Երևան, ԵՊՀ հրատ., 1989:
10. Тбилисская коллекция персидских фирманов, т. I, подг. М. Тодуа, Кутаиси, 1995, т. II, подг. М. Тодуа, К. Шамс, Тбилиси, 1989.
11. Եսայի Ղրիմեցի, Տումար արեգական եւ լուսնի, աշխատ. Ջ. Ա. Էյնաթյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1990:
12. Ասար Սեբաստացի, Գիրք բժշկական արհեստի, աշխատ. Դ. Կարապետյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1993:
13. Շահվելու որդի Սարհադի հաշվեմատյանը, աշխատասիրությամբ՝ Շ. Խաչիկյանի, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994:



4. Փափագյան

ԱՆԱՆՈՒՆ ՏԱԶԻԿ ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ
ԱՐԵՎԷՆՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ (10-րդ ԳՐԸ)

Ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդի աշխատասիրությունում 1930 թ. ՍՍՌԿ Գիտությունների ակադեմիայի կողմից լուսատիպ հրատարակությանը լույս է տեսել ձեռագրի այն միակ օրինակը, որը արևելագիտության մեջ ծանոթ է որպես «Տուժանսկու ձեռագիրը» կամ «Հուդուդ-Ալ-Ալեմ»¹։

Ձեռագիրը գտնվել է 1892 թ. Բուխարայում ռուս գիտնական Ալեքսանդր Տուժանսկու կողմից և հանդիսանում է Միջին Ասիական եզրերի լեզվով գրված աշխարհագրության արժեքավոր հուշարձաններից մեկը։ Սակայն մինչև օրս բնագիրը լրիվ կերպով ուսներեն չի թարգմանված²։

Գծարխտարար ձեռագրի հեղինակի անունը հնարավոր չէ պարզել։ Նա հավանաբար եղել է աշխարհահռչակ բժիշկ և փրկիստիա Աբու-Ալի Իբն-Սինայի ժամանակակիցներից³։ Պարզ է միայն, որ նա գրքի վրա սկսել է աշխատել սկսած հիջրեթի 372 թ. (982)։ Աշխատությունը գրվել է Միջին Ասիական (տաջիկական) Մամանիդյան պետության Գուզգանանի մարզում (այժմ Հյուսիսային Աֆղանիստանի Մեղաբ-ե Շարիֆի նահանգ), նույն շրջանի նահանգապետ Աբուլ Հարիս Մուհամեդ Իբն-Ահմեդի պատվերով։ Ձեռագիրը բաղկացած է 39 թերթից (20, 13 ամ), բնագրի նկատմամբ ընդհանուր կատարված է հիջրեթի 656 թ. (1258) գրիչ Աբուլ Մուսայիդ Աբդալ-Կայում Իբն-ալ-Հուսայն Իբն-ալ-Ֆարսիի կողմից։ Գրություն վայրը անհայտ է։

Ինչպես ապացուցում է ակադեմիկոս Վ. Վ. Բարտոլդը, անանուն հեղինակը մեծ չափով օգտվել է իբեն նախորդող արաբական և Միջին Ասիական այլ աշխարհագիրների աշխատություններից, որոնց անունները, սակայն չի հիշել։ Ոչ մի փաստ չկա այն մասին, որ հեղինակը շրջագայած լինի իր նկարագրած երկրներից թեկուզ մի բանիսը, իսկ ընդհանրապես, բոլոր փաստերը խոսում են հօգուտ այն բանի, որ նա իր աշխատությունը շարագրել է հիմնականում հիֆ ռեննայով մինչ այդ գոյություն ունեցած գրավոր աղբյուրները, օգտվելով նաև բանավոր տեղեկություններից։ Փաստեր կան պնդելու, որ անանուն հեղինակը օգտագործել է Իսթախրու, Բայխի, Մասուդու և Իբն-Հաուկայի աշխատությունները⁴, ինչպես նաև ուրիշ հեղինակների պարսկերեն աշխատությունները, որոնք թեքես շեն հասել մեզ։ Ակնհայտ է սակայն, որ ձեռագրի մեջ հիշատակված որոշ տեղանուններ բոլորովին չկան վերը հիշված մեզ հայտնի հեղինակների մոտ, որոնք, հավանաբար, վերջված են մեզ անծանոթ պարսկերեն աղբյուրներից։ Հօգուտ այս ենթադրության են խոսում այն բոլոր տեղանունները, որոնք գրված են իրենց հարազատ արտասանությամբ, առանց ենթարկված լինելու արաբական տառադարձության։

¹ В. В. Бартольд, Худуд-Ал-Алем, рукопись Туманского, Ленинград, 1930, *Շեշտավոր անբեր փոխարինում են ռենյունին*։

² Անդրկովկասի վերաբերող հատվածները վրացերեն թարգմանել է Վ. Փոլոնով-ձենս Տես ուտանո, Յալդուդ ալ-ալեմո, Յամալալա Յանցոնո, Թրիլիսիի համալսարանի հրատ., Թրիլիսի, 1937։

³ Сесю А. Ю. Якубовский, Абу Али ибн Сина и его время, «Вопросы истории», 1952, № 9, էջ 93։

⁴ В. В. Бартольд, Худуд-Ал-Алем, рукопись Туманского, Ленинград, 1930, 13—17.

Աշխատութիւնը բաղկացած է 60 գլխից, որոնցից սկզբի յոթ գլուխները հատկացված են Հին աշխարհի ընդհանուր նկարագրութեանը, ուր գլխավորաբար խոսվում է երկրի ֆիզիկական աշխարհագրութեան մասին: Թվարկվում են բոլոր լեռները, գետերը, ծովերը, անապատները Արևելքից Արևմուտք, այնուհետև՝ Տ-րդ գլխից սկսած նկարագրվում է այդ ժամանակի աշխարհագրութեանը ծանոթ բոլոր երկրները՝ սկսած Խաղաղականի արեւելից մինչև Ատլանտյան օվկիանոսը:

Հստ ձեռագրի սկզբում ղետեղված գլուխների ցանկի 35-րդ գլուխը հատկացված է Հարավային Ազրբեջանին, իսկ 36-րդ գլուխը Հայաստանին, Հյուսիսային Ազրբեջանին և Արևելյան Վրաստանին: Սակայն տեքստի շարադրման ընթացքում այդ երկու գլուխները միացված են մի ընդհանուր վերնագրի տակ՝ «Պոսք Ազրբեջանի մարզի (Հարավային Ազրբեջան—Հ. Փ.) Արմինիայի (Հայաստան—Հ. Փ.) ու Արբանի (Հյուսիսային Ազրբեջան—Հ. Փ.) մարզերի և նրանց քաղաքների մասին»:

Հայաստանի, Ազրբեջանի և մասամբ նաև Վրաստանի ֆիզիկական աշխարհագրութեանը վերաբերվող տեղեկութիւնները, ինչպես վերը նշեցինք, տրված են սկզբի 3-րդ, 5-րդ և 6-րդ գլուխներում, որոնցից 3-րդում խոսվում է ծովերի, 5-րդում՝ լեռների, իսկ 6-րդում՝ ղետերի մասին: Այս տեղեկութիւնները թեև չափազանց կցկատու, բայց և որոշ չափով յուրահատուկ են:

Արբանիան խալիֆութում Հայաստանը, Հյուսիսային Ազրբեջանը և Արևելյան Վրաստանը կազմում էին մեկ վարչական միավոր, սկզբում Դվին, ապա որոշ ժամանակ նաև Պարտավ կենտրոնով: Արբանիան աշխարհին ամենից ավելի մոտ շրջանները եղել են Հայաստանի հարավային և հարավ-արևմտյան շրջանները, այդ պատճառով էլ մինչև Կովկասյան լեռները ձգվող ամբողջ տերիտորիան կոչվում էր «Արմինիայի նահանգ»:

«Հուզուդ-ալ-ալամը» արժեքավոր է նաև այն տեսակետից, որ այնտեղ առաջին անգամ փորձ է արվում ազատվելու արբանիան աշխարհագրութեան արաղիցիաներից: Այստեղ արդեն «Արմինիան» է անվանվում միայն Հայաստանը: Սակայն որքանով որ հեղինակը իր տեղեկութիւնները մեծ մասը քաղել է արաբ աշխարհագրիչներից, գրքի մեջ տեղ են գտել որոշ աշխարհագրական անճշտութիւններ, որոնք կրում են խալիֆութի կողմից կատարված վարչական բաժանման հետքերը և արդյունք են Արմինիայի մասին նախկին սխալ պատկերացման:

Այսուհանդերձ հեղինակը հատկապես նշում է, որ այս երկրները «խրաբ են միացած և նրանց հողերը իրար խառնված» (ընդգծումը մերն է—Հ. Փ.), որով և պայմանավորվում էր ներքին կայսքի և սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների սերտ համամանութիւնը վերոհիշյալ երկրներում: Կարելի է չկասկածել, որ արտադրամարտերութիւնները երեք երկրներում էլ համարյա նույնն են եղել, զբա համար էլ տրված բոլոր տեղեկութիւնները՝ գյուղատնտեսական արտադրութեան, մասամբ նաև քաղաքների, արհեստների և առևտրի մասին, որոնք վերագրվում են երեք երկրներից որևէ մեկին, կարող են վերաբերել նաև մյուս երկուսին:

Ինչպես տեսանք, Հուզուդ-ալ-ալամի հեղինակը իր աշխատութիւնը սկսել է գրել մեր թվականութեան 982 թ., որը համընկնում է այն շրջանին, երբ Հայաստանում Անիի Բագրատունյաց թագավորութիւնից բացի գոյութիւն ունեին նաև տեղական չորս մանր թագավորութիւններ՝ Արծրունյաց Վասպուրականի թագավորութիւնը, Բագրատունյաց Վանանդի (Կարս) թագավորութիւնը, Աշոտ 3-րդի որդի Գուրգենի Կյուրիկյան թագավորութիւնը Տաշիր-Ձորագետում և Սյունյաց գահերեց իշխան Սմբատի նորակազմ թագավորութիւնը Սյունիքում: Սակայն բացի այս վերջինից մեր հեղինակը մյուսները մասին ոչ մի տեղեկութիւն չի տալիս և ենթարկվելով արաբական աբջուրների ազդեցութեան, չի խոսում Բագրատունյաց թագավորութեան մասին, որով և լրիվ մոռացութեան են տըրված Հայաստանի այնպիսի քաղաքներ, ինչպիսիք են Անին, Կարբը, Արզնը, Երզրավորքը և այլն: Նույնը պետք է սակ նաև Վասպուրականի և Տաշիր Ձորագետի թագավորութիւնների վերաբերյալ: Սխալ չի լինի եթե ասենք, որ հեղինակի տեսադաշտից դուրս են մնացել հատկապես այն շրջանները, որոնք ունեցել են բացառապես հայկական բնակչութիւն, եղել են միանգամայն անկախ և ճանաչված չեն եղել Սամանիդյան պետութեան կողմից: Այս տեսակետից հատկանշական է, որ խոսելով Սիւսականի մասին, որպես Հա-

1 «Հայ Ժողովրդի պատմութիւն», 1 մաս, Երևան, 1951, գլուխ 15-րդ:

յաստանի քաղաքներից և շրջաններից մեկը, հեղինակը ավելացնում է, որ այստեղ «Մըմ-բատի թագավորութիւնըն էա: Այսպիսով, ուրեմն միայն Սյունիքի հայկական թագավորութիւնն է հեղինակի կողմից համարվել հիշատակութիւն արժանի, որովհետև այն պաշտոնապէս ճանաչված էր Սամանիդյան պետութիւն կողմից»:

Նույն ժամանակաշրջանի համար որպէս ֆեոդալական ինքնուրույն իշխանութիւն կենտրոններ նշված են Աղբրեջանի Արդարիւյ Պարտավ, Շամասիի և Ահաբ քաղաքները:

Հուզուդ-ալ-ալամում արժեքավոր են հատկապէս քաղաքների բնակչութիւնն ու զբլիսավոր արտադրութիւնն մասին տրված տեղեկութիւնները: Ինչպէս սկզբի ընդհանուր դիտողութիւնները բաժնում, այնպէս և յուրաքանչյուր քաղաքի մասին առանձին տրված տեղեկութիւնները մեջ, նշված է ավյալ քաղաքի կամ մարզի գլխավոր արտադրութիւնը, որը մեղ հնարավորութիւն է տալիս մոտավոր դադափար կազմելու քաղաքների բնակչութիւն սոցիալական կազմի, արհեստագործութիւնն յանձնարարականի մակարդակի և արտահանվող ապրանքների մասին՝ դարգացող ֆեոդալիզմի դարաշրջանում:

Պարզվում է, որ 10-րդ դարում Հայաստանից ու Աղբրեջանից արտահանվում էին հետևյալ գյուղատնտեսական ու արհեստագործական ապրանքները՝ հացահատիկներ, ձուկ (հիշված է միայն Արաքսի ձկների մասին, հավանաբար «Ծուրմահի») մեղր, բամբակ, մետաքս, ներկեր (որդան կարմիր և այլ բուսական ներկեր), աղեղաբեր, մոմ, դորդեր, կապերտներ, բրդի հագուստներ, խոնջաններ (շալվարբանդ) և անտառանյութ:

Հիշված ապրանքների մեծ մասը վերաբերյալ հիշատակութիւններ կան նաև արաբական այլ և այլ աղբյուրներում: Մական այստեղ այդ բոլորը ի մի են բերված, ինչ որ ապացուցում է շախատութիւն կոմպիլատիվ ընդլիթը, և կատարված են որոշ լրացումներ: Չի կարելի բացառել նաև այն հանգամանքը, որ Միջին Ասիական Սամանիդյան պետութիւնը 10-րդ դարում առևտրական կապերով կապված լինելով Անդրկովկասի հետ, ներմուծում էր վերահիշյալ ապրանքները, որոնք կյանքում ծանոթ են եղել հեղինակին և որոնց մասին նա ավելի մանրամասն կարող էր տեղեկանալ նաև դեպի Անդրկովկաս երթևեկող վաճառականներին:

Հուզուդ-ալ-ալամի հեղինակի ինքնուրույնութիւնը հատկապէս երևան է գալիս աշխարհագրական տեղանունների արտասանութիւնն ճշտման խնդրում, որոնք, ինչպէս վերը նշվեց, շատ տեղերում տրված են ոչ թե արաբական, այլ տաջիկական տառադարձութիւնով: Այսպէս, օրինակ, արաբական մատենագրութիւնն մեջ ընդունված «Դարբիլի» փոխարեն այստեղ կարող էր լինել «Դարբիլի», «Մալազլերդի» փոխարեն՝ «Մալազլերդ», «Սիսաջանի» փոխարեն՝ «Սիսական» և այլն:

Սույն հոդվածի սահմաններում մենք նպատակ չունենք բաղձալիցային վերլուծութիւն կենթադրել առաջադիվող սկզբնաղբյուրի բոլոր առավելութիւններն ու թերութիւնները, այդպիսի ընդարձակ վերլուծութիւնը պահանջում է ավելի խորը և մանրակրկիտ աշխատանք, որը այժմ հեռու է մեր նպատակից: Ստորև հրապարակելով եղբայրական տաջիկ ժողովրդի կուլտուրական հարուստ ժառանգութիւնն այս բավականին օրիգինալ և արժեքավոր հուշարձանի՝ Հայաստանին, Աղբրեջանին, մասամբ նաև Արևելյան Վրաստանին վերաբերող հատվածի թարգմանութիւնը, մենք հույս ունենք, որ այն կօգտագործվի Անդրկովկասի ժողովուրդների համապատասխան շրջանի պատմութիւնը ուսումնասիրողների կողմից և որոշ կափով կնպաստի ընդլայնելու մեր գիտելիքներն ինչպէս Հայաստանի, այնպէս նաև եղբայրական ռեսպուբլիկաներ՝ Աղբրեջանի ու Վրաստանի պատմական աշխարհագրութիւնն և անտեսական հարաբերութիւնները մասին 10-րդ դարում:

ԱՇԽԱՐՀԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԻՔԻՅ ՄԻՆՉԵՎ ԱՐԵՎՄՈՒՏԻ

Խոսք ծովերի և ծոցերի տեղադրության մասին

... Երկրորդը Քարուդան՝ ծովն է Արմինիայում, որի երկարութիւնը 50 ֆարսանգ է, իսկ լայնքը 30 ֆարսանգ: Այս ծովի մեջ կա մի գյուղ,

1 Տե՛ս Ա. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 300:
2 Ակադ. Ն. Մանանդյան, Հայաստանի քաղաքները 10—11-րդ դարերում, Երևան, 1940:

որը կոչվում է Քննչական և այս ծովը էլ այս դյուղի անունով է կոչվում: Նրա (ծովի) շուրջը շենություն է, և ջրի աղիության պատճառով նրա մեջ ոչ մի կենդանի չի սպրում, բացի սրգից:

Խոսք լեռների և նրանց մեջ եղած հանքերի մասին²

... Մյուսը մի փոքրիկ լեռ է Արբրադանի³ մա զում, որը կոչվում է Սնրալան⁴:

Մյուսը Արմինիայի կողմերում մի լեռ է, որը սկիզբ է առնում Արաղից, Թեքրիթից: Այնտեղ նրան Բարմա են կոչում: Այսպես նա անցնում է Արբրադանի և Արբանի⁵ սահմանամիջով և հասնում է Բա՛րդա՛յի⁶ սահմաններին⁷:

Եվս երկու լեռներ կան այս նույն մարզում, իրարից անջատ, մեկը ավելի մեծ, որը կոչվում է Հարեթ: Նրա գագաթը անկարելի է բարձրանալ ճամբի դժվարության պատճառով և վրան շարունակ ձյուն կա և ցուրտ է լինում: Արմինիայի քաղաքների մեծ մասի վառելափայտը և որսը այս լեռից է: Մյուսը կոչվում է Հուվա՛յրա՛թ, սա էլ նրա նման է, բայց Հարեթից ավելի փոքր է⁸:

Զա՛գիրա՛յի մարզում կան երկու լեռներ իրարից անջատ, մեկը կոչվում է Ջուդա⁹, սա այն լեռն է, որի վրա նոյի տապանն է կանգ առել: Մյուսը կոչվում է Մարդինի լեռ, Նա՛սիրինի մոտակայքում:

... Իսկ Շամի (Սիրիա) մարզում կա մի լեռ, որ անցնում է Միսրի (Եգիպտոս) և Շամի սահմանով, այն վայրից, որ կոչվում է Իսրայելացիների Անապատ. նրան մոտ և կլած մի բարձր լեռ կա, որը կոչվում է Սինայի լեռ: Այս լեռը ուղիղ անցնում է Շամով [դեպի] հյուսիս-արևելք մինչև Զա՛որի սահմանը, մինչև Դիմա՛շկ (Դամասկոս), ապա անցնում է Բա՛ալ-բա՛կի, Հիմսի և Բա՛ղրա՛սի հյուսիսով, անցնում է Ջեյհուն գետով մինչև Արմինիայի և Ռումի¹⁰ սահմանը: Այնուհետև ուղիղ իջնում է դեպի Հյուսիս Արմինիայի և Ռումի միջով մինչև Սա՛րիբի¹¹ և Ռումի սահմանի սկիզբը. Ապա թեքվում է արևելքի կողմից և անցնում Սարիբի, Արմինիայի, Արբանի և Կա՛բկի¹² միջով մինչև Խա՛ղա՛րների ծովը: Այստեղից շուտ է գալիս, թեքվում է ու վերագառնում դեպի արևմուտք ու շարունակում անցնել Սա՛րիբով ու Խա՛ղա՛րների երկրով¹³ մինչև հասնում է Ա՛լան-նեբի¹⁴ սահմանը: Այնուհետև Հյուսիսից ուղիղ իջնում է մինչև Խաղարների երկրի վերջը: Հետո կտրում անցնում է Խաղարական Բիջնակի¹⁵ մարզի և Ուռուսի միջի Բուղարի¹⁶ միջով մինչև Սա՛կլաբի¹⁷ սահմանները, ապա Սա՛կլաբի միջով իջնում է Հյուսիսի մարզը և անցնում է Սա՛կլաբի այն քաղաքով, որը կոչվում է Խորդաբ և հասնում Սա՛կլաբի վերջը, ուր և ընդհատվում է: Իսկ այն տեղից, որ Սինայի լեռն է մինչև Զա՛որ, այս լեռը կոչվում է Ժահ և նրա վրա շեն վայրեր կան, իսկ նրա մոտ ամբողջ եկվորներ են: Զա՛որի սահմանից մինչև Դիմա՛շկ կոչվում է Բա՛լկա, Դիմա՛շկից մինչև Հիմսի սահմանը կոչվում է Լիբնան, Հիմսից մինչև Բա՛ղրա՛սի սահմանը կոչվում է Դա՛հրութնուղ, Բա՛ղրա՛սի սահմանից մինչև Սա՛րիբի սկիզբը կոչվում է Լոքա՛մ¹⁸, Սա՛րիբի սկզբից մինչև այնտեղ, որ նա թեքումներ է կատարում և հասնում Ա՛լանների երկրի սկիզբը, կոչվում է Կա՛բկ: Ապա այստեղից մինչև ընդհատման վայրը ամեն տեղ իրեն կից մարզի ու քաղաքի անունով է կոչվում, ինչպես մյուս լեռները:

Բայց երբ [այս լեռը] հասնում է Շամի վերջին և Արմինիա՛յի սկզբին, մի մեծ ճյուղ է նրանից անջատվում և մտնում Ռումի մարզը¹⁹ Սա ունի շատ ճյուղեր, որոնց մեջ ոսկու շատ հանքեր կան: Սարիբի սահմանի սկզբից մի ճյուղ էլ ձգվում է մինչև Քորգերի ծովը²⁰: Երբ Սա՛րիբի կենտրոնին է հասնում, մի մեծ ճյուղ է նրանից բաժանվում և շարունակում ձգվել այդ երկու լեռների միջով դեպի արևելք, մինչև հասնում է մի բերդի: Այս բերդը մի քաղաք է լեռան վրա, որտեղ ամեն օր հերթափոխությամբ հազար մարդ բերդի դուռն են պաշտպանում²¹: Այստեղ կան ոսկու և կապարի հանքեր:

Խոսք գետերի մասին

... Արմինիա՛յի լեռից երկու գետեր են հոսում, որոնք կոչվում են Զարեր²², մեկը կոչվում է Մեծ Զար, իսկ մյուսը Փոքր Զար²³, [Սրանք] հոսում են հարավ-արևմուտքով և այսպես անցնելով, Հա՛գթիա՛ և Սան քաղաքների արանքում, թափվում են Դեջլեի²⁴ մեջ:

Այնուհետև երկու գետեր են, մեկը կոչվում է Սա²⁵, որը բխում է Արմինիա՛յի լեռից և գործածվում է ցանքերում [ոռոգման համար] և երբ հասնում է Աբբորա քաղաքին, նրանից ոչինչ չի մնում, իսկ մյուս գետը, որ բխում է այս լեռից, կոչվում է Նահրավան, գործածվում է ցանքերում և երբ հասնում է Նահրավան քաղաքին, [նրանից] ոչինչ չի մնում:

Մյուսը Փարաթ²⁶ գետն է, որը Ալիկ²⁷ լեռից է բխում և, Ռումի մարզն ու Լոքամ լեռան արանքը կտրելով, անցնում է մինչև Մալաթիա՛յի կողմերը և այսպես դեպի հարավ [հոսելով] անցնում է Շամիշատ (Սամոսատ)... Մյուսը մի գետ է, որին Սբիդ Ռուդ²⁸ են կոչում: Բխում է Հուվանյաթ լեռից Արմինիա՛յի մարզում, հոսում է դեպի արևմուտք, անցնում է Գիլանի միջով և թափվում Խաղաբունների²⁹ ծովը: Այնուհետև մի գետ է, որը Արոս³⁰ է կոչվում, հոսում է Արմինիա՛յի լեռան արևելքից, այն մասից, որ միացած է Ռումին և ուղղութունն վերցրած դեպի արևելք, շարունակում է հոսել, ապա անցնում է Վարթանով³¹ և Ադրբայդջանին, Արմինիա՛յի և Արրանի սահմանամիջով, թափվում է Խաղաբունների ծովը:

Ապա Քորր³² գետն է Արրանում: Բխում է այն լեռից, որը գտնվում է Արրանի ու Սարիբի արանքում և հոսում է դեպի Արևմուտք և հասնում մինչև Շաքիի ու Գանալյա՛յի³³ սահմանները, ապա անցնում է Բերդիջով³⁴ ու միանում է Արես գետին և երկուսը միասին հոսում են Մուկանի³⁵ ու Բաքվի սահմանամիջով և թափվում Խաղաբունների ծովը:

Խոսք Ադրբայդջանի մարզի, Արմինիա՛յի ու Արրանի մարզերի ել նրանց քաղաքների մասին

Երեք մարզեր են, իրար միացած և նրանց հողերը իրար խառնված: Այս մարզի արևելքում Գիլանի³⁶ սահմանն է, հարավում Արաղն³⁷ է ու Զազիրան³⁸, արևմուտքում Ռուսն է ու Սարիբը. իսկ հյուսիսում Սարիբի ու Ղուզրանի³⁹ սահմաններն են: Այս վայրերը իսլամական աշխարհի ամենաբարեբեր մարզերն են:

Այս մարզ[եր]ը շեն են, ջրոտտ, լի բարիքներով և հաճելի մրգերով: Այստեղ շատ են վաճառականներ և մուսուլման զինվորներ⁴⁰, [ինչպես նաև] շատ օտարականներ⁴¹ տարբեր վայրերից: Այստեղ արտադրվում է կարմիր (կիրմիդ) ներկ, բրդե անդրավարտիկ և հագուստներ⁴², աղեկաբեր⁴³,

բամբակ, ձուկ, մեղր և մոմ: Այստեղ են ներմուծվում⁴⁴ հույն, հայ, պե-
չենեգ, խնդար և սլավոն ստրուկներ:

Արդնավիլ—Ա՛ղբբազաճաճանի կենտրոնն է: Սոշոր քաղաք է, շուրջը պա-
րըսպապատ: Մի ամուր և լիսոստ քաղաք էր, այժմ նվազել է: Ա՛ղբբա-
զաճաճանի թագավորների աթոռանիստ քաղաքն է: Այստեղ արտադրվում են
գծավոր և գունավոր հագուստներ:

Ուշնուհ⁴⁵, Սնրավ⁴⁶, Միանն⁴⁷, Նունն⁴⁸, Ջարբուկան⁴⁹—փոքրիկ քաղաք-
ներ են, շեն և բարեբեր, խիստ բնակչութամբ:

Թնբրիգ—մի փոքրիկ շեն և բարեբեր քաղաք է, ունի պարիսպ, որը
Ա՛լա-Խբն-Ահմազն⁵⁰ է կառուցել:

Մնրաղն—Մի մեծ, կանաչազարդ ու բարեբեր քաղաք է, հոսող ջրե-
րով ու կանաչազարդ այգիներով: Մի ամուր պարիսպ ուներ, որը Ա՛բու-
Սաջի որդին⁵¹ կործանեց:

Բնրզնեղ⁵²—կանաչազարդ, շեն ու ջրառատ քաղաք է, առատ ցան-
քերով ու հացահատիկներով: Այստեղ արտադրվում են թավշյա հագուստ-
ներ:

Մուկան—քաղաք է, որն ունի իր մարդը տեղադրված ծովի ափին:
Մուկանի մարդու էրկու այլ փոքրիկ քաղաքներ էլ կան, որոնք նույն-
պես Մուկան են կոչվում: Այստեղ արտադրվում են աղելարեր, հացահա-
տիկներ և մեծ քանակութամբ ջվալ և քուրձ:

Վա՛րբան—մի բարեբեր քաղաք է, որտեղ արտադրվում է նամագի
փսիթ⁵³ և կապերտ:

Այս բոլոր քաղաքները, որ հիշեցինք, Ա՛ղբբազաճանից են:

Գվի⁵⁴—խոշոր քաղաք է, Ա՛րմինիա՛յի կենտրոնը: Շրջապատված է
պարսպով: Այստեղ շատ քրիստոնյաներ կան: Բարիքներով լի հարուստ
քաղաք է, ունի շատ բնակչություն և մեծ թվով վաճառականներ: Նրան
պատկանող հողերը շատ են և հասնում են մինչև Ջա՛ղիրա՛յի սահմանները,
իսկ ինքը Ռումին է միացած: Այնտեղ կա մի տեսակ սրբ, որից կարմիր
(կիրմի) ներկ են պատրաստում: Այստեղ արտադրվում են նաև ընտիր
շա՛վարբա՛նդներ (խոնջաններ):

Գախրկան⁵⁵—մի փոքրիկ, կանաչազարդ և ջրառատ քաղաք է Քա՛րու-
դան ծովի մոտ:

Ուրմիա՛⁵⁶—մեծ քաղաք է, շեն և բարեբեր:

Սա՛լմաս—մի փոքրիկ, շեն ու կանաչազարդ քաղաք է, որտեղ արտա-
դրվում են ընտիր շա՛վարբա՛նդներ:

Նոյ, Բեքլի, Ա՛րջիջ (Արեեջ), Ա՛խլար, Նա՛խշվան, Բոզլիս (Բիթլիս)—
սրանք բոլորը փոքրիկ քաղաքներ են [մեկը մյուսից] փոքր կամ մեծ—
կանաչազարդ ու բարեբեր, մարդաշատ, հարուստ և շատ վաճառականե-
րով: Այս քաղաքներում մեծ քանակութամբ գորգեր⁵⁷ և այլ կապերտներ
շա՛վարբա՛նդ և փայտ է արտադրվում:

Մա՛լագգեղ—սահմանամերձ բերդ է հույների դեմ, [այնտեղ կան]
ոազմիկ մարդիկ: Բարեբեր տեղ է:

Կալիկա՛ (Կարին)⁵⁸—քաղաք է, որի մեջ կա մի ամուր բերդ, այդ
բերդում շարունակ զանազան վայրերից մուսուլման զինվորներ են լինում
հերթափոխութամբ: Այստեղ շատ վաճառականներ կան:

Միաֆարդիէ⁵⁹—պարսպապատ քաղաք է Ա՛րմինիա՛յի, Ջա՛ղիրա՛յի և Ռու՛մի սահմանագլխում:

Մա՛րա՛նի⁶⁰—շեն ու բերքառատ փոքրիկ քաղաք է խիտ բնակչու-թյամբ: Այստեղ արտագրվում են զանազան տեսակի բրդե հագուստներ:

Մեյժա՛ն⁶¹—հռչակավոր, շեն ու լիառատ ու մարգաշատ մարզ է:

Ա՛հա՛ր⁶²—Մեյժա՛նի կենտրոնն է, Ռա՛վադի որդու (Աբլհաջի) թագա-վորությունը՝ Ջուլա՛նդների կամ Գա՛րգա՛րի սերունդներից այն, որ ուժով գրավեց ամբողջ նավը⁶³:

Սիսա՛կան⁶⁴—քաղաք է, որն ունի մեծ մարզ և Սմբատի⁶⁵ թագավո-րությունն է:

Այս բոլոր փոքրիկ քաղաքները, որ սասցինք, Ա՛րմինիա՛յից են:

Կա՛րան—կանաչազարդ քաղաք է, որտեղ մեծ քանակությամբ ընտիր բամբակ է արտագրվում:

Բա՛րդա՛—մի մեծ ու բարիքներով լի քաղաք է: Ա՛րբանի կենտրոնն է, այս մարզի թագավորների աթոռանիստ քաղաքը: Նրան պատկանող հողերը կանաչազուրդ են, խիտ ցանքերով և առատ հացահատիկներով ու մրգերով: Այստեղ ճանապարհների եզրերին կան շատ թթի ծառեր: Քաղաքում արտագրվում է մեծ քանակությամբ մետաքս, ներկարարական բույ-սեր, արքայակազին և վայրի չաման, ունի ընտիր ջորիներ:

Բա՛յլա՛կան⁶⁶—բարիքներով լի մի փոքրիկ քաղաք է, որտեղ արտա-դրվում են մեծ քանակությամբ գծավոր կտորներ, թաղիք, քող և քաղց-րավենիք:

Բաժգահ⁶⁷—մի փոքրիկ քաղաք է, տեղավորված Արաքս գետի ափին: Այստեղ ձուկ է արտագրվում:

Գա՛ճա՛, Շա՛մբոթ—երկու քաղաքներ են, առատ ցանքով և հացահա-տիկներով, շեն ու բարեբեր, որտեղ արտագրվում են ամեն տեսակի բրդե հագուստներ:

Խուճան⁶⁸—մարզ է Քուռ գետի ափին Ա՛րմինիա՛յի ու Ա՛րբանի սահ-մանի վրա:

Վա՛րդուկիա՛⁶⁹—Խուճանում գտնվող մի փոքրիկ և սակավամարդ քա-ղաք է:

Կա՛լա՛⁷⁰—մի խոշոր, դիտարանով⁷¹ բերդապարիսպ է Ա՛րմինիա՛յի ու Ա՛րբանի սահմանի վրա:

Թիֆլիս—մի մեծ կանաչազարդ քաղաք է, շեն ու կանգուն, լի բա-րիքներով: Ունի երկու պարիսպ և բերդ է անհավատների դեմ: Քուռ գետը նրա միջով է անցնում: Քաղաքում կա մի աղբյուր խիստ տաք ջրով, որի վրա բաղնիքներ են կառուցել և որը շարունակ տաք է առանց կրակի⁷²:

Շա՛քի⁷³—շեն և բարեբեր, որի երկայնքը 70 ֆարսանգ է: Այստեղ մու-սուլմաններ և անհավատներ են բնակվում:

Մուբարա՛քի—մեծ գյուղ է Բա՛րդա՛յի գոան մոտ (մատույցներում): Ռուսների բանակատեղին այստեղ էր, այն ժամանակ, երբ եկան և Բա՛ր-դա՛ն գրավեցին: Այս Մուբարա՛քին Շա՛քիի սահմանի սկիզբն է⁷⁴:

Սուկ-ա՛լ-Ջա՛րա՛⁷⁵—Շա՛քիի քաղաքներից է, Բա՛րդա՛յին մոտ:

Սնբարման⁷⁶—քաղաք է Շա՛քիի սահմանի վրա: Ունի կանգուն մի բերդ:

Այս երկու քաղաքներն էլ շեն են:

Սա՛նար⁷⁷—մի մարդ է, որի երկայնքը 20 ֆարսանգ է [գտնվում է] Շա՛քիի և Թիֆլիսի միջև: [Այստեղ] ամբողջ անհավատներ են:

Կաբա՛լա՝—քաղաք է Շա՛քիի և Շիրվանի միջև, շին ու բարեբեր: Այստեղ շատ կաղիւն⁷⁸ է արտադրվում:

Բերդիլ—փոքրիկ, շեն և բարեբեր քաղաք է:

Շիրվան⁷⁹, Խրսան⁸⁰, Լիրան⁸¹—երեք մարզեր են, որոնց թագավորը մեկ է: Այս թագավորին Շիրվանշահ, Խրսանշահ և Լիրանշահ են կոչում⁸², նա իր բանակի հետ նստում է Շա՛մախիից մեկ ֆարսանգ հեռու: Նա Գուրդա՛վանի⁸³ կողմերում ունի մի բարձր լեռ, որի գագաթը տափարակ է, հարթ ու քառակուսի, չորս ֆարսանգ, չորս ֆարսանգի վրա և ոչ մի կողմից ձամփա չունի բացի մի կողմից, որը կառուցել են և որը շատ դժվար[անցանելի] է: Այս [լեռան] վրա կա չորս գյուղ, այս թագավորի բոլոր դանձերը և հարստությունները այստեղ են գտնվում: Այստեղ բոլորը նրա (թագավորի) մեկվաներն (ազատագրված ստրուկներ) ⁸⁴ են: Տղամարդ թե կին բոլորը այստեղ ցանում են ու այստեղ ուտում: Այս բերդը կոչում են Նիալ: Սրան շատ մոտ մի այլ բերդ էլ կա, մեկ ֆարսանգ հեռավորության վրա: Նրա (թագավորի) բանտը այստեղ է: Խրսանը փակ մարզ է: Շիրվանը միացած է Կա՛բբ լեռան: Այստեղ արտադրվում են բրդե հագուստներ, և այն բոլոր զանազան տեսակի ծածկոցները⁸⁵, որ կան աշխարհի բոլոր կողմերում, այս երեք մարզերից են:

Քուրդա՛վան—փոքրիկ, շեն և բարեբեր քաղաք է:

Շավրան⁸⁶—Շիրվանի կենտրոնն է. [Սա] մի վայր է ծովի մոտ, լի բարիքներով: Ամբողջ աշխարհի փորձաքարերը այստեղից են տանում:

Խա՛ղա՛րների Դա՛րբա՛նը⁸⁷—ծովափնյա քաղաք է: Այս քաղաքի և ծովի միջև մի հսկայական շղթա է ձգված, այնպես, որ ոչ մի նավ չի կարող ներս մտնել առանց թույլտվության: Այս շղթան կապված է ամուր պատերի, որոնք կառուցված են քարով և կապարով: Այստեղ արտադրվում են կտավե հագուստներ և շաֆրան: Այստեղ ներմուծվում են ամեն ցեղի ստրուկներ սահմանամերձ անհավատների երկրներից:

Բաքու—փոքրիկ քաղաք է ծովի ափին, լեռան մոտ: Որքան նավթ որ օգտագործում են Դեյլա՛մանի⁸⁸ կողմերում, այստեղից են տանում:

Ծ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն Ն Ե Ր

- 1. کوزان—Կապուտան կամ Ուրմիո լիճը գտնվում է Հարավային Աղբյուրներում:
- 2. Հուզուդ—սլ-ալանում լեռների նկարագրությունը հար և հման է թե անտիկ հուսական և թե արաբական աշխարհագրությունը մեջ ընդունված նկարագրություն: Բոլոր լեռները համարվում են մեկ ընդհանուր լեռնաշղթայի բաղկացուցիչ մասերը և նույն լեռնաշղթան: անցնելով տարբեր երկրներից, յուրաքանչյուր երկրում կոչվում է տարբեր անունով:
- 3. Տեղանունների մեծ մասը Հուզուդ-սլ-ալանում տրված են հարազատ արտասանություններ, առանց ենթարկելու արաբական տառադարձության: Նմանապես և այստեղ արաբական Ա՛ղսրանյան (أرض آذربایجان) անվան փոխաբեր տրված է հին պարսկերեն Ա՛ղբբազանյան (آذربایجان) անունը: Հայ մատենագրերի մոտ Ատրպատական, նաև Ատրպայական:
- 4. Բնագրում Եվան է այժմ կոչվում է Սավալան 4813 մետր բարձրությամբ: Հարավային Աղբյուրներում:
- 5. Արաբ մատենագրերի մոտ Ա՛րբան (اربان) է կոչվել Աղվանքը կամ «Աղվանից

աշխարհը», որը 10-րդ դարում ընդգրկում էր Քուս և Արաքս գետերի միջև ընկած տե-
րիտարիան:

6. عايد—Աղվանքի մայրաքաղաքը: Հայ մատենագրերի մոտ Պարտավ նաև Պարթավ:
Բելազորու և Յակութի մոտ կա նաև عايد ձևը:

7. Այս լեռնաշղթայի նկարագրության առաջին մասը համապատասխանում է ներ-
կայիս Իրանի, Իրաքի և Թյուրքիայի սահմաններով ձգվող լեռներին (Ջազրոս լեռներ):
Իսկ երկրորդ մասը համապատասխան է Ղարադաղի լեռներին:

8. Արար մատենագրերի մոտ համարյա առանց բացառության Մեծ Մասիսը կոչվում
է Հարեթ (حارث), իսկ Փոքր Մասիսը Հուվսյրանթ (حوض): Հարեթ բառացի նշանակում է
«երկրագործ», իսկ Հուվսյրանթ նույն անվան փոքրացուցիչ ձևն է: Հետևաբար լեռը կոչ-
վում էր «Երկրագործի լեռ»: Մեր կարծիքով սա հայկական Արարատ անվան արաբացված
ձևն է: Եվսերեոս կեսարացու «Պրոնիկայի» մեջ կա Arath ձևը (տես Вестник древней
истории, 1941 г., т. III, էջ 220) որտեղ, ինչպես տեսնում ենք, հայալրոգիայի օրենքով
սղվել է «ար» վանկը և արաբական տառադարձությունը դարձել է حارث: Իսկ սկզբի
ح բաղաձայնը այնպիսի է համապատասխան իմաստ ստանալու համար: Հատուկ անու-
նների այսպիսի ազավազույններ չափազանց շատ են արաբների մոտ, ինչպես, օրինակ,
Խլաթը դարձրել են Ա'խաթ, որը արաբերեն նշանակում է խառնուրդ և բացատրում են
այն բանով, որ այնտեղ բնակվում են թե՛ քրիստոնյաներ և թե՛ մասձեզականներ: Կամ
Արաքսի փոխարեն գրում են Ա'րրան (ارس) և այլն:

Արարատ լեռան լանջերին գտնվող անտառների և որսավայրերի մասին եղած տե-
ղեկությունները համապատասխան են Իսթախրու տված տեղեկություններին, մանավանդ,
որ հեղինակն ընդհանրապես քուհ (خو) ասելով, նկատի ունի ոչ շատ մեծ լեռնաշղթա,
ըստ որում խոսքը այստեղ ևս վերաբերում է ոչ թե միայն Մասիս լեռնազագաթին, այլ
Ազատ Մասիսին կամ Հայկական Պարին:

9. Ինչպես Ղուբանում, այնպես նաև արաբական, սիրիական և որսչ հայկական աղ-
բյուրներում Հյուսիսային Միջագետքում գտնվող Ջուդա լեռը հիշվում է որպես Նոյան
տապանի հանգրվան:

10. Բյուզանդական կայսրությունը թե՛ հայերի, թե՛ արաբների և թե՛ ընդհանրապես
Արևելքի բոլոր ժողովուրդների մոտ անվանվում էր Հոռոմ կամ Թոռոմ, այն համարելով
հին Հռոմեական կայսրության շարունակությունը: Գեոս պիելին՝ քրդերի մոտ ևս, ինչպես
նաև պարսկական աղբյուրներում, դեռ մինչև 19-րդ դարը Թոռոմ էր կոչվում նաև օսմա-
նյան կայսրությունը:

11. Համապատասխանում է ներկայիս Դազստանին: Սմբիր (سمر) բառացի նշանա-
կում է դահ, որի մասին Յակուբին գրում է «Այս գահը, որը օսկուց էր շինված, ըստ
այժմուցության Անուշիրվանն էր ուղարկել նրան (երկրի թագավորին), որի համար եր-
կիրը կոչվեց Սմբիր»: Նույնը կրկնում է նաև Իբն-սլ-Ա'թիրը (տես Բ. Խալաթյանց,
«Արար մատենագրեր Հայաստանի մասին», էջ 107 և 138):

12. قيس արաբ մատենագրերի մոտ հիշվում է համանուն երկիր կովկասյան լեռնե-
րում, որի անունով և կոչվել է լեռնաշղթան: Պարսից գրականությունում մեջ նաև Բուհ-ե կաֆ
(بوه كوه) կովկասյան լեռնաշղթա:

13. جزان հայ մատենագրերի մոտ նմանապես «Պաղարք»:

14. الان հայ մատենագրերի մոտ «Ալանաց աշխարհ», որը գտնվում էր կովկասյան
լեռների հյուսիսում:

15. بجانجوری Հյուսիսային կովկասի և կուբանի պեղենեղանի երկիրը:

16. باغ داخل اروس Ռուսաստանի բուլղարներ: Հավանաբար Ուրալի կամ Վոլգայի բուլ-
ղարների մասին է խոսքը:

17. صلاب արաբական աղբյուրները Սակլար են անվանում սլավոններին:

18. كاك Անտիտավրոսի լեռների արևելյան փեշերը Փոքր Հայքում: Բյուզանդական
Հիկանդոն երկիրը: Յակուբը Նոբամ է կոչում Կիլիկիայի Ամանոս լեռներին:

19. Խոսքը Պոնտական և նրանից հարավ ձգվող Անտիտավրոսյան լեռնաշղթայի
մասին է:

20. Բնագրում دریا کزبان է: Բարառլը նույնացնելով دریا-ի հետ, թարգմանում
է «Վրաց ծով» (Սև ծով) (տես «Худуд-Ал-Адем», էջ 23):

21. Պետք է կարծել, որ խոսքը Ալանաց դահն մասին է: Արար մատենագրերի մոտ

Բար-Ալլան *باب الان* պարսկերեն Դար-ե-Ալլան *دوران* ինչպես նույն աշխատության Ալանաց երկրին նվիրված բաժնում: Այժմ Դարիալի կիրճ:

22. Բնագրի *جزایر*-ն պետք է կարդալ *زاین* Ջարեյն, Ջարեյ կամ երկու Ջարեյ: Նույնը նաև Մասուզու մոտ:

23. *زاب الاصغر* որոշ աղբյուրներում նաև Վերին Ջար: Այժմ կոչվում է Ջարուս, նաև Ստորին Ջար: Ըստ Յակուբի, ոմն պարսից թագավոր է փորել տվել այս գետերը (իմ ջրանցքները), որոնք իր անունով կոչվում են Ջար: Թվում է նաև երկու այլ Ջարեյ չարավային Միջագետքում՝ Վասիթի և Բազաթի արանքում, որոնք եփրատ գետից են անջատվում:

24. *دجلة* Տիգրիս գետն է, որը հիշատակված է միայն այս հատվածում:

25. *حاسبی* Յակուբի մոտ Սարոս (حاسبی) է, որը գտնվում է Վասիթի մոտ, սակայն սխալվում է, երբ այն բխած է համարում Հայաստանի լեռներից: Սրանք հավանաբար ջրանցքներ են, որովհետև հեղինակը դեսերին վերաբերող դիտի սկզբում նրանց բաժանում է երկու խմբի, արհեստական և բնական, ըստ որում «Արհեստական են կոչվում նրանք, որոնք փորված են մարդկանց կողմից և որոնց ջուրը գործածվում է քաղաքի շենության կամ ցանրերի ոռոգման համար» (տես «Худуд-Ал-Адем», էջ 8 6):

26. *قوات* Եփրատ գետն է: Այս գետը նկարագրված է սկսած իր աղունքներից մինչև Վասիթի ծանծաղուտները: Մենք մեջ ենք բերել միայն այն մասի նկարագրությունը, որը հոսում է Հայաստանի տերիտորիայով:

27. *علیق* ըստ երևույթին աշխարհագիրը ի նկատի ունի Արածանի ըխման վայրը՝ Աղիովիտ կամ «Աղվի լեռներ», այժմ Ալազազ:

28. Աշխարհագիրը շփոթում է Ատրպատականի «Սփիդոուզ» (Սպիտակ գետ) կամ Կրզըլ-Ուզան գետը Փոքր Մասիսից հարավ՝ Իրանի և Թյուրքիայի սահմանագլխի լեռներից բխող Սպիտակ գետի կամ հին հայկական Ճուաշոտո, այժմ Ազշայ գետի հետ, որը թափվում է Արաքսի աջ վտակներից կարմիր գետի մեջ: Ըստ որում՝ այս գետը ևս անցնում է Արաքսին մերձակա այն վայրերով, որոնք կոչվում էին Գիրան, հետագայում արաբացված ձևով՝ Ջիրան, իսկ 16—18-րդ դարերում Ազատ-Ջիրան:

29. *دریایخزران* մասսպից ծովը, որը արաբները և մինչև օրս նաև պարսիկները կոչում են Կովկաս լեռներից դեպի հյուսիս նույն ծովի փեղերին բնակվող խաղաղների անունով:

30. *آرس* Արաքս գետն է, որ հիշված է երեք տարբեր արտասանություններով՝ Արոս, Արես և Արաս: Յակուբի մոտ Արքան (*الرس*) է, նույնը նաև Բելազորու, Յակուբու և այլ արաբ մատենագրերի մոտ:

31. Վարդանակերտ քաղաքն է Արաքսի աջ ափին, այժմյան Ասլանդուզի մոտ, հին Պարտավ—Արդաբիլ գլխավոր ճանապարհի վրա: Ըստ Յակուբի՝ գետից մոտ մեկ ֆարսախ հեռու: Ըստ Իսթախրու՝ այստեղից մինչև Բայլահան (Փայտակարան) քաղաքը յոթ ֆարսանգ էր:

32. *فر* Քուս գետն է: Համարյա բոլոր արաբ աշխարհագիրներին մոտ նմանապես և Հուզուդ-ալ-այմում Քուս գետի աղունքները տեղագրված են Կովկասյան լեռների հարավային փեղերին: Ըստ երևույթին նկատի են ունեցել նրա որևէ վտակը:

33. *فیه* Աղվանքի հնագույն մայրաքաղաքը: Հայ մատենագրերի մոտ Կասպակ քաղաք:

34. *دریج*: Հայերեն Բերդիկ անվան արաբացված ձևն է: Գետանց Քուս գետի վրա, մոտավորապես այժմյան Մինգեչաուրի մոտ, Ադրբեջանական ՍՍԻ:

35. *موقان* հնագույն աղբյուրներում նաև Մովկան: Մուղան անունը արաբ մատենագիրների կողմից ստուգաբանվում է *موقان*-մոգ ան-եր=մոգեր: Այժմ էլ կոչվում է Մուղանի դաշտ, որը ձգվում է Ղարադաղի լեռներից մինչև Կասպից ծովի ափերը և բաժանված է երկու մասի՝ արևելյան մասը Ադրբեջանական ՍՍԻ-ում, իսկ արևմտյան մասը Հարավային Ադրբեջանում: Նշված Մուղան քաղաքի տեղը դեռևս չի ճշտված:

36. *کيلان* այժմ էլ Գիլանի նահանգ Իրանում: Կասպից ծովի հարավ-արևմտյան ափերին:

37. *عراق* ներկայիս Իրանի կենտրոնական և արևմտյան մասը, Ջանջան քաղաքից դեպի հարավ մինչև Ֆարս նահանգը, իսկ դեպի արևմուտք մինչև Միջագետք:

38. *جزیر* Միջագետք:

ոճն ՎՄամյան որդի Աբրահայի թոռն Ռովդայ ամիրայի Ատրպատականի ժամանակ, որը հայոց 447 (998 մ. թ.) գնում է Դավիթ հյուրապաղատի զեմ պատերազմելու: Մեծ հավանականությամբ Հուգուդ-ալ-ալմուճում հիշված Ռովդայի որդին այս Մամլի հայրը Աբրահայը պետք է լինի, որի որդին Ասողիկի մոտ հիշվում է որպես Ռովդի թոռ (տես Ստեփանոս Տարնոսացի Ասողիկ, «Պատմութիւն տիեզերական», երկրորդ հրատարակութիւն, Պետերբուրգ, էջ 269—270):

64. Բնագրի سنکس-ը պետք է ուղղել և կարգալ سنکس (Սիսական), արքա մատենագրերի, ինչպես նաև Յակուբի և Իսթախրու մոտ سسجان (Սիսանջան): Ըստ Իսթախրու, այստեղից մինչև Դվին 16 ֆարսանգ է: Քաղաքը գտնվել է մոտավորապես այժմյան Բաշնորաշենի մոտ, նախիջևանի ԱՍՍԻ:

65. Խոսքը Սյունյաց զահերեց իշխան Մամբատի մասին է, որը 970 թ. թագավոր էր օձվել և նրա թագավորութիւնը պաշտոնապես ճանաչվել էր Սամանիդյան թագավոր Նուհ-իբն Նասրի կողմից (տես Ստեփանոս Օրբելյան, «Պատմութիւն նահանգին Սիսական», Թիֆլիս, 1910, էջ 300):

66. Պատմական Հայաստանի Փայտակարան քաղաքը: Ըստ Իսթախրու այստեղից մինչև Վանթանի (Վարդանակերտ) 7 ֆարսանգ էր:

67. Այս քաղաքի մասին ոչ մի տեղ հիշատակութիւն չգտանք: Սակայն անվան ստուգաբանութիւնից (բաժ-գահ) կարելի է եզրակացնել, որ քաղաքը գտնվել է Ատրպատաց կանի և Աղվանքի սահմանի վրա, որտեղից անցնող ապրանքներից բաժ (մաքս) է գանձվել: Հավանաբար գտնվել է Արզարիլ—Պարտավ ճանապարհի վրա, Արաքս գետի ափին, այժմյան Ասյանգուզի մոտ:

68. Խուճանի մարզը համապատասխանում է ներկայիս Դաղախի շրջանին մինչև Բորջալու:

69. ورداوى այլ մատենագրերի մոտ համապատասխան որևէ վայր չի նշված: Կազանկառվացու մոտ կա Վարդակերուակ լեռը, որը, սակայն, շատ հեռու էր հիշյալ մարզից:

70. ااب — Յակուբի մոտ այս բերդը ևս կոչվում է Խուճան, որը կավաշեն է և գտնվում է մի մեծ բլրի վրա: Հավանաբար այժմյան Նոյեմբերյանի և Դաղախի սահմանում Լամբալու գյուղի մոտ գտնվող Աղջակալան պետք է լինի, որը չթրծված աղյուսով է կառուցված:

71. Տեքստի ینا բառը, որ նշանակում է բեմ—(эстрада) Վ. Փոսթուրիձին համարել է սխալ և դարձրել է مجرا (մանարա) ու թարգմանել անցք: Սակայն սա ճիշտ չէ, որովհետև այլ տեղերում ևս նույն տերմինն է գործածված, ինչպես, օրինակ, ااب (Ջաբալ) բերդի մասին գրում է حصار يست اادوى (տես «Худуд-Ал-Алем», էջ 346): Խոսքը այստեղ վերաբերում է պարսպի այն մասին, որտեղ կանգնում էին բերդապահ զինվորները և հետևում թշնամու շարժումներին, որը մենք թարգմանեցինք զգիտարանա:

72. Վրաստանի մայրաքաղաքի հիշատակութիւնը այստեղ նույնպես հետևանք է այն բանի, որ 10-րդ դարի վերջերին, այստեղ դեռ շարունակում էին տրեքլ արքա էմիրները, դրա համար էլ հեղինակը այն անվանում է Վարսիսպ և բերդ անհավաստների դեմ:

73. Որպես առանձին մարզեր բացի Շաքից հիշատակված են նաև Շիրվանը, Խըրասանը, Լիբանը, Մուկանը և Մեյմազը Ադրբեջանում, Սիսականը Հայաստանում և Սանարն ու Խուճանը Վրաստանում, որոնք 10-րդ դարում ինքնուրույն իշխանութիւններ են եղել:

74. Ռուսները արշավանքը դեպի Պարտավ տեղի է ունեցել 943—944 թվականներին: Այս մասին հիշատակութիւններ կան բազմաթիվ արքա մատենագրերի, ինչպես նաև Մովսես Կաղանկատվացու մոտ (տես ՎՄովսեսի Կաղանկատվացու պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912 թ., էջ 385—388): Լավագույն աղբյուրը, որտեղ ավելի ջանքնազաճակ նկարագրված է արշավանքի մասնամասնութիւնները, պետք է համարել նույն զարաշրջանի պատմիչ Իբն Մասկավայի كتاب تجارب الامم (Ժողովուրդների փորձառութիւն Ձեռագրատան (Մատենադարան) № 2561 Կաղանկատվացու պատմութիւն ձեռագիր օրինակի, արշավանքին մասնակցել են ոչ ավել, քան 3000 ռուս զինվորներ (ըստ արքա մատենագիր Մասուդու, արշավանքը կատարվել է 50,000-անոց բանակով, 500 նավերով, յուրաքանչյուր նավակում 100 զինվոր):

75. سوق الجبل բառացի նշանակում է «Լեռան շուկա» կամ «Լեռնային շուկա»: Քաղաքը, ինչպես ասված է, պետք է բավական մոտ եղած լինի Պարտավին, սակայն այն համարվել

է Շաքիի քաղաքներէց: Ինչպէս Մուբարազիի, այնպէս էլ Սուկ-ալ Զմարալի տեղագրութեանը վերաբերող տեղեկութիւններէ կարելի է ենթադրել որ Շաքի սահմանները տարածված են եղել մինչև Քուռի արեւելքը, ընդհուպ մինչև Պարսպի մատուցները:

76. سنابلان—հավանաբար Մմբատովան, որի մասին սակայն մեզ ծանոթ հայ և օտար աղբյուրներում ոչ մի հիշատակութիւն չգտանք: Եղել է սահմանամերձ բերք, որի անվան մեջ թերևս պահպանված է Շաքիի իշխան Սահլ-Իբն Մմբատի անունը:

77. صان հայ մատենագրերի մոտ Մանարք: Արաբների մոտ Սանար է կոչվել Կախեթից հյուսիս ընկած լեռնային շրջանները:

78. Բնագրի ڤندڤ գրութիւնը անվերծանելի է: Վ. Փութուրիձեն նմանեցրել է ڤندڤ-ի (որդան-կարմիր), սակայն ես մեզ հաճանական չի թվում: Ավելի հաճանական է, որ թերևս վերջի շ տառը գրել սխալի հետևանք լինի, որը փոխելով ڤ-ով կարելի է կարգաւ ڤندڤ (կաղին)

79. Այս մարզը 10-րդ դարում տարածվում էր Դերբենդից զեպի հարավ ընկած արևմտափնյա շրջանում: Սակայն հետագայում այն ավելի ընդարձակվեց և 12—13-րդ դարերում արդեն Շիրվան ասելով հասկանում էին Կասպից ծովից մինչև Քուռ դեան ընկած ամբողջ տերիտորիան, որի թագավորները կոչվում էին Շիրվանշահեր:

80. خراسان Յակութի մոտ خراس (Խերս), ամբողջ Կասպից ծովի արևելք: Այս մարզը տարածվում էր Շիրվանից հարավ մինչև Ասպերոնի թերակղզին:

81. ليزان Բելազորու մոտ ليزان (Լիբանշահ): Ըստ Մարկիարտի պետք է կարդալ ليزان (Իբան) և ليزان (Իբանշահ): Ըստ Խալաթիյանցի, սա համապատասխանում է Կաղանկատվացու մոտ Եռանշահի անվան: Այս մարզը գտնվում էր այժմյան Շամախիի շրջանում:

82. Պարզվում է, որ 10-րդ դարում արդեն երեք մարզերը գտնվում էին մեկ թագավորի իշխանութիւն տակ և այդ թագավորը իրեն կոչում էր երեք երկրների անունով: Վերջում այս երեքից պահպանվեց միայն Շիրվանշահ անունը, որը գործածվում էր մինչև ուշ ժամանակներ:

83. کردوان նաև Քուրդկան, քաղաք Շամախիից զեպի արևմուտք, որտեղից երկու ճանապարհ էր բաժանվում, մեկը հարավ՝ զեպի Վարդանակերտ, իսկ մյուսը հյուսիս՝ զեպի Պարտավ և Թիֆլիս:


84. ڤرا նշանակում է ազատագրված ստրուկ (вольнотпущенник): Այդպիսիք էին այն բոլոր թուրք ռազմագերիները և ստրուկները, որոնք ազատվում էին ստրկութիւնից և մտնում խալիֆաթի զվարդիայի մեջ: Արբասյանները զվարդիան հիմնականում սրանցից էր կազմված: Թերևս ելնելով այս նույն օրինակից, ակադ. Վ. Վ. Բարտոլդը հիշյալ վայրում բնակվողներին համարում է Շիրվանշահի զվարդիայի զինվորներ, մանավանդ, որ արքունի գանձարանը ևս այստեղ է պահվել (В. В. Бартольд, „Место прикаспийских областей в истории мусульманского мира“, Баку, 1925, էջ 37): Դժվարանում ենք ընդունել այդ կարծիքը, որովհետև նույն աղբյուրի վկայութեամբ Շիրվանշահի նստավայրը իր բանակի հետ միասին գտնվում էր Շամախիից մեկ ֆարսանգ հեռու գտնվող բանակավայրում, որտեղ և պետք է լիներ նաև արքունական զվարդիան: Բայց անգամ եթե ընդունելու լինենք, որ այստեղ խոսքը արքունական զվարդիայի մասին է, ապա միաժամանակ պետք է ընդունենք, որ նրանք ամբողջված են եղել հիշյալ վայրին և, որ կարևորն է, զբաղվել են երկրագործութեամբ: Դժվար է որոշակի կարծիք հայտնել հիշյալ վայրի բնակիչների սոցիալական դրութիւն մասին և ընդհանրապես բնագրի այս հատվածը կարող է ավելի բազմակողմանի և մանրամասն ուսումնասիրութեամբ:

85. خراسان խոսքը այստեղ վերաբերում է ճանապարհորդութեան կամ բեռները փոխադրութեան ժամանակ գործածվող ծածկոցներին, որոնք օգտագործվում էին անձրևից պաշտպանվելու համար: Վ. Փութուրիձեն փորձում է այս բառը բացատրել արաբերեն եռարձատ خراس (փորել) բայի օժանդակութեամբ, որը մեզ թվում է անհավանական մանավանդ, որ خراس փորագրութեան իմաստ չի պարունակում, փորագրութեան համար կա ڤرا բայը իսկ خراس բայը օգտագործվում է հորերի, ջրանցքների փորման իմաստով, բայց երբեք փորագրութեամբ:

86. Արաբ մատենագրերի մոտ նաև شاران (Շարուբան): Քաղաք Դերբենդից հարավ:

87. درتندڤان արաբ մատենագրերի մոտ նաև درتندڤان Բաբ-ու-ճարվաբ—զուռն դրանց: Հայ մատենագրերի մոտ «Դարբանդու զուռն» կամ «Ճորպպահակ»:

88. ديلمان ներկայիս Գիլանի և Մազանդարանի մարզերը, որոնք կոչվում էին այստեղ իշխող Դեյլամյան զինաստիայի անունով:



2. Փափագյաճ

ՄԻ ԷՁ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿՅԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XV դարը հայ ժողովրդի պատմության սակավ ուսումնասիրված շրջաններից մեկն է: Երկրում տիրող քաղաքական անապահով պայմանների, անընդհատ ասպատակությունների ու ավերածության, և այդ պատճառով ստեղծված տնտեսական ու կուլտուրական կյանքի անկման հետևանքը հանդիսացող պատմական սկզբնաղբյուրների համարյա բացակայությունը թույլ չի տալիս քիչ թե շատ ընդարձակ լուսաբանման ենթարկել այդ դարի պատմությանը վերաբերող այս կամ այն հարցը: Բավական է նշել այն փաստը, որ դեռ մինչև օրս հրատարակի վրա չկա XV դարի քաղաքական կյանքի պատմությանը նվիրված մի ամբողջական աշխատություն, մինչդեռ XV դարի պատմության հարցերի լուսաբանումը շատ կարևոր նշանակություն ունի մեր ժողովրդի հետագա դարերի պատմության ուսումնասիրության համար: XV դարը, ինչպես ընդունված է ասել, հանդիսանում է հայկական ֆեոդալիզմի եզրափակիչ դարը, երբ պատմության թատերաբեմից դուրս են գալիս հայ խոշոր ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչները: Նրանցից շատերը բռնի, թե կամավոր կերպով հավատափոխության ենթարկվելով ասիմիլյացիայի են ենթարկվում երկրի նոր՝ քոչվոր տիրակալների կողմից, շատերը ուղղակի զրկվում են իրենց կարողություններից և բոլոր իրավունքներից, ոմանք էլ ստիպված են լինում հոգևոր կարգ ընդունել և այդպիսով պահպանել իրենց իշխող դիրքը հայ աշխատավորության նկատմամբ:

Հայ աշխարհիկ ֆեոդալականության ոչնչացման այս պրոցեսը, բավական երկար է տևել և ուղեկցվել է դեռևս իրենց իշխանական դիրքերը պահպանած հայ ֆեոդալների կողմից տարբեր ձևերով արտահայտվող դիմադրության և պայքարի փաստերով:

Այս տեսակետից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում XV դարի 30-ական թվականներին Արևելյան Հայաստանի հայ ֆեոդալականության աշխարհիկ և հոգևոր ներկայացուցիչների կողմից ծավալված գործունեությունը, որը պատշաճ ուշադրության չի արժանացել մեր պատմաբանների կողմից:

Լանկ Թեմուրի մահից հետո (1405) կարճ ժամանակում Կարա-Կոչունլու Կարա-Ցուսուֆը կարողացել էր տիրանալ ոչ միայն Հայաստանին ու Ադրբեջանին, այլև իր իշխանության տակ միավորել նախկինում Հուլավյան իշխանության ենթարկվող երկրները մեծ մասը: Արևելյան այս բռնակալի ստեղծած պետությունը մեկն էր Արևելքի այն պետություններից, որոնք ոչ այլ ինչ էին, եթե ոչ ժողովուրդների «պատահական և քիչ շաղկապված կոնգլոմերատներ, որոնք տրոհվում էին ու միավորվում, նայած այս կամ այն նվաճողի հաջողություններին կամ պարտություններին»¹, որովհետև նրանք չունեին իրենց «առն-

¹ Ի. Վ. Ասալին, Երկեր, հատ. 2, էջ 342:

տեսական բազան և ներկայացնում էին ժամանակավոր ու անկայուն ռազմավարական միավորներ»¹:

Եվ հաճախ շուտով Կարա-Յուսուֆի ստեղծած ընդարձակ պետության համար վրա են հասնում անհաջողության տարիներ: Որովհետև Կարա-Յուսուֆը չէր ճանաչում հորասանում իր հոր գահը ժառանգած Լանկ Քեմուրի որդու Շահրուխի գերիշխանությունը, վերջինս 1420 թվականին մեծ բանակով շարժվեց դեպի Ադրբեջան: Սակայն Կարա-Յուսուֆը, նախքան նա ճակատամարտ կտար Շահրուխի զորքերի հետ, հանկարծամահ եղավ, և նրա բանակը բարոյալքվեց ու ցրվեց: 1421 թվականին նրա որդուն՝ Իսքանդարին հաջողվեց հապճեպ կերպով հավաքել ցրված զորքերը, սակայն, Ալաշկերտի դաշտում, որը Կարա-Կոյունլուների գլխավոր կայանն էր, տեղի ունեցած երեք օր, երեք դիշեր տևող ճակատամարտում նա պարտություն կրեց ու փախավ: Նույն թվականին, երբ Շահրուխը վերադարձավ հորասան, Իսքանդարը եկավ Թավրիզ և գրավեց իր հոր գահը²:

Իսքանդարի իշխանության շուրջ 16 տարի տևող ժամանակաշրջանում (1421—1437) հայկական աղբյուրների բնորոշմամբ հայ ժողովուրդը գտնվում էր «լամենայն շար և ի դառն և ի նեղութեան ժամանակի յորում ամի բոլոր աշխարհս Հայոց ի յառ և ի յաւարի, ի սուր և ի գերութիւն մատնեցաւ»³: Եվ իսկապես այդ տարիները լի էին անընդհատ ընդհարումներով ու կռիվներով, որոնք մղվում էին մերթ տեղական, կենտրոնախույս էմիրների, մերթ Աղ-Կոյունլու թուրքմենների ու մերթ Շահրուխի ջաղաթայան զորքերի դեմ: Անընդհատ հալածվելով իր հակառակորդների, հատկապես Շահրուխի կողմից երկար ժամանակ՝ սկսած 1427 թվականից մինչև իր մահը (1437), շուրջ տաս տարի նա աստանդական կյանք էր վարում և շարունակում էր պարտիզանական պայքար մղել Աղ-Կոյունլու Կարա-Օսմանի և Շահրուխի զորքերի դեմ:

Զգտելով ստեղծել ինքնուրույն հզոր պետություն, Իսքանդարը վարում էր յուրօրինակ ներքին քաղաքականություն, որը արժանի է ուշադրության: Աղբյուրների վկայությունից պարզվում է, որ նա իր մղած խիզախ պայքարում ընդգեմ Աղ-Կոյունլուների և Շահրուխի, փորձում էր հենվել ոչ միայն քոչվոր ռազմիկ ցեղերի, այլ նաև բնիկների՝ հայերի վրա: Հայտնի է, որ Շահրուխի դեմ մղած երկրորդ ճակատամարտում, որը տեղի ունեցավ 1429 թվականին, Սալմաստի մոտ⁴, նրա բանակի մեջ զգալի թիվ էին կազմում հայերը⁵: Հայտնի է նաև, որ նա հայերի և հատկապես հայ տիրող վերնախավի համակրությունը շահելու համար իրեն անվանում էր «Շահ-ե Արման» (Թագավոր Հայոց): Որոշ հայկական աղբյուրներում նույնիսկ «Թուրքման» անունը նույնացնում են «Թորգոմյան» անվան հետ և նրան վերադրում հայկական ծագում⁶:

Իսքանդարի բանակի շարքերում հանդես եկող հայկական զորքերի մասին դժբախտաբար մեր աղբյուրներում ոչ մի մանրամասնություն չի պահպանվել, որով և դժվար է որոշակի խոսք ասել նրանց քանակի և որակի, ինչպես նաև

¹ Ի. Վ. Ասալիև, Մարքսիզմը և լեզվաբանության հարցերը, Երևան, 1952, էջ 24:

² Թովմա Մեծոփեցի, Պատմություն, էջ 78: Հարիր-ուս-սիար, հատ. 3, էջ 12, 196—198: Ծարաֆնամե, հատ. 1, էջ 83:

³ Լալայան Ե., Ցուցակ հայ. ձեռագրաց Վասպուրականի, էջ 353:

⁴ Հարիր-ուս-սիար, հատ. 3, գլխ. 3, էջ 120: Ծարաֆնամե, հատ. 2, էջ 90:

⁵ Թովմա Մեծոփեցի, Պատմություն, էջ 87:

⁶ Մատենադարան, ձեռ. 8979, էջ 351ա:

հրամանատարության մասին: Սակայն, հենվելով որոշ օժանդակ նյութերի վրա, պետք է կարծել, որ այդ զորքերը պատկանել են Սյունյաց Օրբելյանների վերջին ներկայացուցիչներին:

Վարելով մեղմ և սիրաշահող քաղաքականություն հայերի նկատմամբ, Իսքանդարը բնականաբար պետք է առաջ քաշեր և օգտագործեր հայ ֆեոդալական տների դեռևս գոյություն ունեցող այն ներկայացուցիչներին, որոնք կխոստանային օժանդակել նրան: Որպես այդպիսին այդ ժամանակ հայտնի էր էմիր Ռուստամ Օրբելյանը, որը վրաց Ալեքսանդր I թագավորի աներ՝ Բեշքենի որդին էր:

Ռուստամի մասին ժամանակակից հայկական աղբյուրներում ոչ մի հիշատակություն չի պահպանված ի բաց առյալ Մատենադարանի № 8979 ձեռագրի հիշատակարանից, որի գրիչն է Շմավոն վարդապետ Անգեղակոթցին, որը, ինչպես պարզվում է հիշատակարանի բովանդակությունից, Ռուստամի հոգևոր հայրն է եղել: «Եև ի թվաբերութեան Հայկազեան տոմարի ՊՁՂ (1437),— գրում է նա,— ի թագաւորութեան վրաց Ալեքսանդրի բարեպաշտի և իշխանութեան տեղոյս իշխանաց իշխան Բարոն Բեշքէնին շառաւղին Օրբելեանց և որդւոյ իւրոյ պարոն Ըոքստամին որ և է ինձ հոգևոր որդի, զոր տէր աստուած պահեսցէ անսասան կենաւ զպարոն Բէշքենն ծաղկեալ զաւական իւր մինչ ի խոր ծերութիւն»¹:

Սույն հիշատակարանը գրված է Սանահինում այն ժամանակ, երբ Բեշքենը խուսափելով Շահրուբի ավերիչ արշավանքներից, իր հետ էր վերցրել Սյունիքի բնակչության զգալի մասը և բնակություն հաստատել իր փեսայի՝ վրաց Ալեքսանդր թագավորի իշխանության ներքո գտնվող Լոռիում²:

Թեև Թովմա Մեծոփեցին չի հիշում Ռուստամի մասին և ըստ նրա՝ իբր Բեշքենի մահից հետո նրանից մնացել է միայն մի տասնամյա արու զավակ, որի անունը անհայտ է, սակայն վերը մեջբերված հիշատակարանից միանգամայն պարզ երևում է, որ Բեշքենը ունեցել է բավական չափահաս որդի Ռուստամ անունով, որը մասնակցել է նաև կառավարչական գործերին: Եթե նույնիսկ ոչ մի ուրիշ փաստ էլ չլիներ սույն հիշատակարանի «յիշխանութեան տեղոյս իշխանաց իշխան Բարոն Բեշքենին շառաւղին Օրբելեանց և որդւոյ իւրոյ պարոն Ըոքստամին» խոսքերը միանգամայն բավարար են այդ բանում համոզվելու համար: Սակայն մեր ձեռքի տակ կան այլ, ավելի արժեքավոր փաստաթղթեր, որոնք ոչ մի կասկած չեն թողնում պնդելու, որ Բեշքեն Օրբելյանը ոչ միայն ունեցել է Ռուստամ անունով չափահաս որդի, այլ որ նա եղել է միաժամանակ բավական նշանավոր և կարևոր քաղաքական-զինվորական դեմք և բարձր պատվի է արժանացել Կարա-Կոյունլու Իսքանդարի կողմից:

Էջմիածնի արխիվում պահպանվել ու մեզ է հասել կաթողիկոս Գրիգոր Մակվեցու կողմից հիշրեթի 835 թվականին (1431) էմիր Ռուստամից գնված յոթ գյուղերի կալվածագրի պատճենը³, որի գրաբար թարգմանությունները լույս են

1 Մատենադարան, ձեռ. 8979, էջ 247բ:

2 Թովմա Մեծոփեցի, Պատմություն, էջ 117—118:

3 Մատենադարանի պարսկերեն վավերագրեր (ՄՊՎ), թղթապանակ 1գ, վավերագիր 934:

տեսել ինչպես 1875 թվականի «Արարատում»¹, այնպես նաև Մատենադարանի կողմից 1941 թվականին հրատարակված «Կալվածագրեր» ժողովածուի մեջ²:

Այդ թարգմանությունների մեջ սակայն, շնորհիվ այն բանի, որ նման կալվածագրերի ու այլ առևտրական գործարքների վերաբերող վավերագրերի գրությունները չափազանց անընթեռնելի են ու դժվար, և մանավանդ հատուկ անունների ընթերցումը սխալ վերծանման հետևանքով հաճախ տեղի է տալիս անունների աղավաղման, աղավաղված է Ռուստամի հոր Բեշքենի անունը: «Արարատում» և «Կալվածագրերում» այն թարգմանված է Ամիր Միշկին, իսկ «Ջամբուում» Ամիր Շիբան, որպիսի աղավաղումները արդյունք են պարսկերեն **بشکن** գրություն սխալ վերծանման: Մանավանդ որ նման վավերագրերում բացակայում է, գրության ճիշտ ընթերցման համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող հնչյունների կետագրությունը:

Բայց ինչպես «Արարատ» ամսագրում, այնպես նաև Սիմեոն կաթողիկոս Երևանցու «Ջամբու» աշխատության մեջ Ռուստամը անվանվում է «այր ոմն տաճիկ»³: Սիմեոն կաթողիկոսի այս սխալ մեկնաբանությունը առանց վերապահության ընդունվել է հետագայում, և այդ կարծիքը մեր բանասիրության մեջ տիրապետում է մինչև օրս: Որ սույն կալվածագրի մեջ հիշատակված էմիր Ռուստամը իրապես նույն ինքը Օրբելյան Բեշքենի որդի Ռուստամ Օրբելյանն է, դա պարզ երևում է նաև այն բանից, որ հիշատակված է նաև Բեշքենի հոր՝ Սմբատ Օրբելյանի անունը, որից հետո ոչ մի կասկած չի մնում նրա ինքնություն հարցում:

Բացի դրանից, Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահպանվել է նաև մի այլ, ոչ պակաս արժեքավոր կալվածագրի բնագիրը, որտեղ նորից նույն Բեշքենի որդի Ռուստամը հիշրեթի 853 թվականին (1451) իրեն պատկանող Սվարանց, Տաշու, Աղանց և Տանձատափ գյուղերը վաճառում է իր նախկին հոգևոր հայր, այժմ արդեն Տաթևի վանահայր Շմավոն վարդապետ Անգեղակոթցուն⁴: Սույն կալվածագրում, որտեղ շորս անգամ հիշատակված է նրա անունը, Ռուստամն անվանվում է «Հայ էմիրզադա (իշխանազուն) Ռուստամ, որդի էմիր Բեշքենի, որդի Սմբատի»⁵:

Առաջին, 1431 թվականի Գրիգոր Մակվիցու գնած յոթ գյուղերի կալվածագրից մեկը իմանում ենք, որ սույն վավերագրում որպես հիշատակված կալվածների օտարող կողմ հանդես եկող անձնավորությունը ոչ այլ ոք էր, եթե ոչ միայն «Վեհանձնյա էմիր և իշխան, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն վստահելի ծառա և ամենաազնիվ վեզիր, նորին կայսերական մեծություն Սուլթանի մտերիմ, ամենազոր, արքայական պետության սիրելի, մեծագույն արքունի խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելի, որի անձը վեր է ամեն տեսակ նկարագրությունից ու գովասանքներից, հավիտենականության տեր՝ աստծու ողորմածությամբ իշխանության և կրոնի քաջահաղթ էմիր Ռուստամը, որդի էմիր Բեշքենի, որդի էմիր Սմբատի»⁶:

Սույն կալվածագիրը գրված է Երևանի Զամանեղդին ղազխի ձեռքով

¹ «Արարատ», 1875, էջ 212—213:

² «Կալվածագրեր», Երևան, 1941, էջ 12:

³ «Ջամբու», էջ 102: Հմմտ. Շահխաթունյանց, Ստորագրություն կաթողիկե էջմիածնի... հատ. 1, էջ 129 և 133—134:

⁴ ՄՎՊ, թղթապանակ 2ա, վավերագիր № 3:

⁵ Նույն տեղում:

⁶ ՄՊՎ, թղթապանակ 1գ, վավ. 934:

Հիշրեթի 835 թվականի ռաբի' I ամսի կեսերին (1431 թ. դեկտեմբերի 21), այսինքն՝ այն ժամանակ, երբ Շահրուխը Սալմաստի 1429 թ. ճակատամարտից հետո, Թավրիզում գահ էր բարձրացրել Իսքանդարի եղբորը՝ Աբու-Սահիդին և վերադարձել Խորասան, որից անմիջապես հետո՝ 1431 թ. սկզբներին Իսքանդարը սպանել էր Աբու-Սահիդին և գրավել Թավրիզը¹։ Այնպես որ կասկածից դուրս է, որ վերը մեջբերված ցիտատում հիշատակված «Նորին կայսերական մեծութուն Սուլթանը» կամ «Մեծագույն արքան» ոչ այլ ոք է, եթե ոչ նույն ինքը Կարա-Կոյունլու Կարա-Յուսուֆի որդի Իսքանդար-Միրզան։ Իսկ Օրբելյան էմիր Ռուստամի հասցեին շոսյված տիտղոսները ապացուցում են, որ նա եղել է Իսքանդարի ամենամտերիմ և վստահելի անձնավորություններից մեկը։

Մտերմական այս կապերի լույսի տակ հատուկ բովանդակություն են ստանում նաև Թովմա Մեծոփեցու տված տեղեկությունները Իսքանդարի վարած անհավասար պայքարի ընթացքում, նրա ցույց տված առանձնապես մեղմ և համբերատար վերաբերմունքի մասին հայ ազգաբնակչության նկատմամբ։

Թովմա Մեծոփեցիի կղերականին հատուկ պահանջողականությամբ խիստ բացասաբար էր տրամադրված Իսքանդարի ըմբոստ ելույթների նկատմամբ։ Նրա խոսքերից պարզ երևում է, որ նա դեմ էր Իսքանդարի ինքնուրույնության և կողմնակից էր, որ նա հպատակություն հայտնեի Շահրուխին ու վերջ տար ավերիչ պատերազմներին։ «...Նւ կարծիք է մարդկան թէ քան զաստեղս աւելի մարդիկ մեռեալ եղեն վասն սորին անհնազանդութեան և հպարտ բարուց, որ ոչ հնազանդեցաւ թագաւորին արեւելից», — գրում է նա։ Ասպատակությունների ընթացքում տեղի ունեցած ավերածությունների ու բնակչության տեղահանությունների մասին հիշատակելիս, նա նրան անվանում է «անողորմ վիշապ և արենարբու գազան», բայց և բազմիցս շեշտում, որ նա «քրիստոնեասէր էր և ողորմաց ազգին մեր։ Այլ վասն հպարտութեան բարուց իւրոյ ոչ ինքեան հաջողեցաւ և ոչ հաւատացելոցն. կորեաւ ինքն և կորոյս զազգս մեր»²։

Անհրաժեշտ է նշել, որ ինչպես առհասարակ արևելյան պետությունների, այնպես նաև Կարա-Կոյունլուների, այդ թվում նաև Իսքանդարի պետության ներքին և արտաքին քաղաքականության մարքսիստական գնահատականը տալիս, պետք է առաջնորդվել էնգելսի հայտնի դրույթով, այդ տիպի պետությունների կառավարչական ֆունկցիաների մասին։ «Արևելքում կառավարությունը միշտ էլ ունեցել է միմիայն երեք վարչություն, — գրում է էնգելսը, — ֆինանսական (կեղեքում երկրի ներսում), ռազմական (ներքին և արտաքին երկրների ավարտություն) և հասարակական աշխատանքների վարչություն (հոգատարություն վերարտադրության մասին)»³։

Արդ, ելնելով այդ իսկ դրույթից մեզ բոլորովին չպիտի զարմացնեն Իսքանդարի բանակների ձեռքով կատարվող կողոպուտները, կոտորածներն ու գերեվարությունները, որոնք, ինչպես տեսանք, բխում էին իր իսկ պետության բնույթից և մանավանդ, երբ հաշվի առնենք, որ միշտ չէր, որ վերոհիշյալ երեք վարչությունները գործում էին հավասարապես, այլ սովորաբար, և այդ հատկապես պատերազմների ժամանակ, գերակշռում էր երկրորդ՝ ռազմական վարչություն-

¹ Հարիր-ուս-սիար, հատ. 3, գլ. 3, էջ 121: Շարաֆնամե, հատ. 2, էջ 915:

² Թովմա Մեծոփեցի, Պատմություն, էջ 93, 100:

³ Ֆ. էնգելս, 1853 թ. հունիսի 6-ին Մարքսին գրած նամակից, Մարքս-էնգելս, Հատընտիր նամակներ, էջ 91—92:

նր, որի հետևանքով կողոպուտի և ավարառության էր ենթարկվում ինչպես արտաքին, այնպես նաև ներքին երկրների աշխատավորությունը:

Ուշադրության արժանի է հատկապես այն փաստը, որ Իսթանդարը փորձում էր հայ ազգաբնակչությանը վերաբնակեցնել Արարատյան և Սյունյաց երկրները, և այդ այն ժամանակ, երբ Շահրուվաի 1435 թ. արշավանքների հետևանքով մեծ թվով հայ գաղթականություն Օրբելյան Բեշքենի գլխավորությամբ հեռացել էր Սյունիքից և բնակություն հաստատել Լոռիում¹: Այս փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ սկսած 1429—30 թվականներից մինչև 1436—1437 թթ., այսօրինակ՝ մինչև Իսթանդարի վերջնական պարտությունն ու մահը, էմիր Ռուստամը գտնվելիս է եղել Իսթանդարի բանակում և վարել նրա մեծ վեզիրի ու արքունի խորհրդականի պաշտոնը: Որպես այդպիսին նա ստացել է նաև ընդարձակ սուլուղալներ ինչպես Սյունիքում, որն իր հայրենի տիրույթն էր, այնպես նաև Այրարատի Արագածոտն, Նիգ, Կոտայք և այլ գավառներում: Հետևաբար հայ բնակչության բուն տեղահանումը Հայաստանի արևմտյան շրջաններից և նրանց վերաբնակեցումը Այրարատում և Սյունիքում, կարող են նրա որոշակի պլանների արտահայտությունը լինել:

Առանձնապես ուսումնասիրության արժանի է նաև հիշյալ յոթ գյուղերի կալվածագիրը, որը մեզ հնարավորություն է տալիս պարզելու ինչպես Ռուստամ Օրբելյանի անձնավորության վերաբերյալ որոշ մանրամասնություններ, այնպես նաև այն, որ նրա շնորհիվ մենք կարողանում ենք ճշտել և հասկանալ Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Սսից էջմիածին տեղափոխելու ծրագրի և կենսագործման հարցի հետ առնչվող մի շարք խնդիրներ:

Նախ անհրաժեշտ է հենց սկզբից նշել, որ սույն կալվածագրի թվականը՝ հիշբեթի 835 թ. ուրի 2-րդ ամսի կեսը (1431 թ. դեկտեմբեր 21) միանգամայն հավաստի է և ոչ մի կասկածի չի ենթարկվում: Մինչդեռ մեր պատմաբանների մոտ այդ թվականը տեղի է տվել որոշ կասկածանքների², և այդ հատկապես այն պատճառով, որ կալվածագրի մեջ որպես հիշատակված յոթ գյուղերի գնորդ հանդես եկող Գրիգոր Մակվեցին էջմիածնի կաթողիկոս է օծվել 1443 թվականին³, որից և այն հետևությունը, որ նա չէր կարող 1431 թվականին գնումներ կատարել նույն վանքի համար, և որ էջմիածինը կաթողիկոսական կենտրոն է դարձել՝ սկսած 1441 թվականից⁴, որից առաջ իբր թե չէր կարող կալվածներ նվիրվել նրան: Գուցե այս փաստարկները համոզիչ լինեին, եթե գոյություն չունենար նաև մի այլ կալվածագիր, որտեղ ոմն պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսը, որը կալվածագրում հիշատակված է որպես էջմիածնի վանահայր, հիշբեթի 833 թ. ջումադի 1-ին ամսին (1430 թ. հունվար 29—փետրվար 25) մի քանի նվազով գնում է էջմիածին գյուղի առանձին դանգերը և վակֆ անում էջմիածնի վանքին և նույն Զամանեղդին Ղազիի միջոցով այն հաստատել տալիս մի ընդհանուր կալվածագրով⁵: Ուստի, եթե կասկածի տակ է դրվում յոթ գյուղերի կալվածագրի թվականը, ապա հետևում է կասկածել նաև էջմիածնի այս հնազույն կալվածագրի թվականի վրա: Քանի որ հիշյալ գործարքը

¹ Թովմա Մեծովեցի, Պատմություն, էջ 104:

² Կալվածագրեր, էջ 7. Ս. Պողոսյան, Եկեղեցական հողատիրությունը Երևանի խառնությունում, Երևանի Պետ. համալսարանի գիտական աշխատություններ, հատ. 13, էջ 128:

³ Թովմա Մեծովեցի, Հիշատակաբան, էջ 80, հմմտ. Ա. Գավրիսիցի, էջ 436 և 628:

⁴ Նույն տեղում:

⁵ ՄՊՎ, Թղթապանակ 1գ, վավ. № 928:

կատարված է մյուսից երկու տարի առաջ: Այնինչ սույն կալվածագրում 832 թվականը հիշված է երեք տեղ և այն էլ ինչպես ընդունված է նման պաշտոնական վավերագրերի համար, գրված է բառերով: Նույն ձևով է գրված նաև մյուս կալվածագրի թվականը, արաբերեն *و ثمانين و ثمان مائة* «ութ հարյուր երեսուն և հինգ»: Մյուս կողմից սխալ կլինի կամկածել կալվածագրի մեզ հասած պատճենի հարազատության վրա, որովհետև Սիմեոն կաթողիկոսի օրոք գոյություն է ունեցել բնագիրը, որը հաստատվել է Երևանի Հասան-Ալի խանի կողմից 1768 թվականին¹ և որի շնորհիվ Սիմեոն կաթողիկոսը կարողացել է Աշտարակ, Քիրաջուր և Մուղնի գյուղերը նորից ետ վերցնել²: Հիմք ունենալով կալվածագրի բնագիրը, Սիմեոն կաթողիկոսը նրա մասին հիշատակելիս, այն դնում է հիշրեթի 835 թվականի տակ³ և վերջապես, գոյություն ունեն կալվածագրի գրաբար թարգմանությունները, որոնց մեջ նույնպես 835 թվականն է նշված⁴:

Սակայն այս բոլորը ինչպես հաշտեցնել այն փաստի հետ, որ Գրիգոր Մակվեցին կաթողիկոս է ընտրվել 1443 թվականին, այսինքն՝ կաթողիկոսական աթոռի Սսից էջմիածին տեղափոխվելուց երկու տարի հետո միայն: Բանն այն է, որ մինչ այժմ բացառված է այն փաստը, որ էջմիածինը որպես հոգևոր կենտրոն և վանք, կարող էր գոյություն ունենալ նաև նախքան Կաթողիկոսական աթոռի հաստատվելը այնտեղ, և որ կաթողիկոսական աթոռի տեղափոխման հարցը, որն իր ժամանակին շափազանց կարևոր և քաղաքական նշանակություն ունեցող ակտ էր, անշուշտ ունեցել է նաև իր նախապատմությունը, որ այդ հարցը շեր կարող ծագել, արծարծվել, հասունանալ և իր լուծումն ստանալ միայն մեկ կամ երկու տարիների ընթացքում:

Բավական է կարդալ միայն Ստեփաննոս Օրբելյանի «Ողբ ի Ս. Կաթողիկէ»-ն համոզվելու համար, որ զեռուս սկսած XIII դարի վերջերից այդ հարցը հուզել է հայ աշխարհիկ և հոգևորական գործիչներին, որ նրանք մեծ նշանակություն էին տալիս էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգմանը, այդ ակտի հետ կապելով նաև որոշ քաղաքական ծրագրեր: Ժամանակակիցները այդ դիտում էին, որպես ոչ միայն հայ եկեղեցու գլխավոր կենտրոնի, վերահաստատում իր վաղեմի «սրբավայրում», այլ որ այդ ակտով նրանք նպատակ ունեին հալոթյան ուշադրությունը կենտրոնացնել պատմական այն վայրերի շուրջը, որոնք հայ պետականության գլխավոր կենտրոններն էին եղել:

«Այրիացած հարս»՝ էջմիածնի բերանով հեղինակը ողբում է կորսված հայ պետականությունը.

«Ահա կորեալ բոլորովին
Մտեալ ի սուգ դառն և ուժգին.
Ո՛ւր է որդին իմ նախածին,
Արշակունի տունն առաջին,
Կամ ո՛ւր կրսերն զկնի նորին
Բագրատունի տունն վերջին»⁵:

¹ ՄՊՎ, թղթապանակ 1դ, վավ. № 461:

² «Ջամբու», էջ 129:

³ Նույն տեղում, էջ 102:

⁴ «Արարատ», 1875, էջ 212—213, կալվածագրեր, էջ 12:

⁵ Ստեփանոս Օրբելյան, Ողբ ի Ս. Կաթողիկէ, Թիֆլիս, 1885, էջ 35:

․․․․․
 «Ո՛ւր են փեսայք իմ առաջին
 Հայրապետաց ջոկքն, որ անցին
 Ո՛ւր թագաւորքն իմ են նախկին
 Ո՛ւր և ազատքն ընդ սեպուհին
 Ո՛ւր են իշխանք զահագլխին
 Նախարարաց կոյտքն, որ կային,
 Ո՛ւր զորութիւնք բիր բանակին,
 Խառնեալ ամբոխքն անթուելին»¹։

Ահա թե որն էր ի դեմս Ստեփաննոս Օրբելյանի ժամանակի քաղաքական իշխանութիւններից զրկված հայ ֆեոդալական վերնախավի գլխավոր մտահոգութիւնը։ Նա երազում էր վերականգնել կորցրած փառքը, իշխանութիւնն ու հզորութիւնը, որոնք

«Որպէս զստուերք այլ շերեհն
 Նման երազաց կարծեօք թուին
 Որպէս ծաղիկք ամարայնոցն
 Արեակէզ թարշամեցին»²։

Հիշելով անցյալի փառքը և այն համեմատելով իր անփառունակ ներկայի հետ, հեղինակը հոռեաեստութիւնով շի տարվում։ Նա հավատում է, որ իր «Ողբը» ոտքի կհանի Հայաստանի և այլ վայրերի հայերին, ձեռնամուխ լինելու այդ գործին։ Հիշատակում է Դվինը, Անին, Սյունիքն ու Աղվանքը, շմոռանալով հատկապես այն վայրերը, որտեղ դեռ պահպանվել էին հայկական իշխանութիւնների մանր բեկորները։

«Հաղբատ, Բջնին Ամատունին
 Որ յԱրագած ես յԱնբերդին»³։

Ստեփաննոս Օրբելյանը հավատացած է, որ էջմիածնի նորոգումով կվերականգնի նաև հայ պետականութիւնը և ամեն ոք «ըստ իւր կարգի» տեր կգառնա իր երկրին։

«Նա նորոգումն մեղ կրկին
 Որ բնաւ շիշեմք զփառք առաջին
 Կանգնէ զաթոռ թագաւորին
 Եւ զզաւազան պատրիարքին
 Ամենեցունց ըստ իւր կարգին
 Ուղղէ զգահոյս տիրականին
 Նոր զարդարէ փառօքն հին
 Եւ առաւել քան զոր էին»⁴։

Նույն ծրագիրը շարունակել է հուզել նաև XIV դարի վերջերի և XV դարի սկզբի գործիչներին։ Մատենադարանի մի ձեռագրի հավելվածային բաժնում, ուր մանրամասն խոսվում է Աղթամարի կաթողիկոսարանի շուրջ ծավալված

1 Սեփականոս Օրբելյան, Ողբ ի Ս. Կաթողիկէ, էջ 41։
 2 Նույն տեղում, էջ 38—39։
 3 Նույն տեղում, էջ 46։
 4 Նույն տեղում, էջ 48։

պաշքարի մասին, կա որոշակի վկայություն, որ Հովհան Որոտնեցին հատկապես զբաղվել է կաթողիկոսական աթոռի Սսից դեպի Արևելյան Հայաստան տեղափոխելու հարցով և նպատակ է ունեցել այն հաստատել Գանձասարի վանքում¹: Իր ժամանակի նշանավոր եկեղեցական հասարակական և կուլտուրական գործիչ Գրիգոր Տաթևացին ևս մեծ հույսեր էր կապում էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերականգնման ծրագրի հետ: Հայտնի է, որ ի վերջո այդ գործը գլուխ եկավ շնորհիվ Տաթևացու աշակերտներ Հերմոնի վանքի Հովհաննես Կոլոտրիկի և Թովմա Մեծոփեցու գործադրած անդուլ ջանքերի: Ճիշտ է նկատել Գարեգին Հովսեփյանը, որ «Այդ գաղափարը կովել ու կոփվել էր Գրիգոր Տաթևացու դպրոցից ճյուղավորված ժ՛ն դարու այդ երկու գլխավոր վարդապետարաններում»²:

Պարզ է, որ այնքան էլ հեշտ չէր կարող գլուխ գալ այդ գործը: Անհրաժեշտ էր նախ ձեռք բերել հայոց եկեղեցու տարբեր թեմերի ու վիճակների համաձայնությունը, ապահովել նրանց բոլորի մասնակցությունը այդ գործում, համոզել աչքի բնկնող հայ հոգևորական գործիչներին, ձեռք բերել նրանց համաձայնությունը, և որ ամենից կարևորն է, ստանալ պետական իշխանության թույլտվությունը: Այս բոլորից բացի, անհրաժեշտ էր նաև զբաղվել էջմիածնի վանքի բարեկարգման գործով և այն դարձնել ամեն տեսակետից ապահով և նպատակահարմար վայր Ամենայն Հայոց կաթողիկոսության համար: Այս տեսակետից, իհարկե, առաջնահերթ խնդիրներից մեկն էլ այն էր, որպեսզի վանքը ունենար կայուն նյութական բազա, այսինքն՝ ձեռք բերեր եկամտաբեր կալվածներ: Եվ ահա մենք տեսնում ենք, որ սկսած դեռ XV դարի 20-ական թվականներից այդ գործով զբաղվել է վանքի վանահայր պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսը, իսկ սկսած 1432 թվականից նրա գործը մեծ եռանդով շարունակել է մակվեցի Զալալ բեկի որդի Գրիգոր եպիսկոպոսը, որը Մակվի Թադևոս Առաքյալի վանքի վանահայրն էր:

Վերջինս, վերոհիշյալ յոթ գյուղերի կալվածագրում անվանված է «էջմիածնի վանքի բնակիչ, Գրիգոր եպիսկոպոս, որդի քրիստոնյանների պարծանք պարոն Զալալ-բեկի, որդի Ֆախրուդդինի»: Ինչպես տեսնում ենք նշված երկու կալվածագրերում հիշատակված Գրիգոր եպիսկոպոսները միանգամայն տարբեր մարդիկ են և սխալվում է Միմեոն կաթողիկոս Երևանցին, երբ «Զամբու» մեջ խոսելով առաջին կալվածագրում հանդես եկող Գրիգոր եպիսկոպոսի մասին գրում է, թե «Այս այն Գրիգոր կաթողիկոսն է, որ է որդի մակվեցի պարոն Զալալ բեկի»³:

Էջմիածնի ժողովից առաջ, 1441 թվականին Մեծոփա վանքում Թովմա Մեծոփեցու ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Նի ի թուականիս մերոյ ՊՂ (1441) ի հայրապետութեան տեսոն Գրիգորի սրբոյ էջմիածնի և ի թագաւորութեան Զհանշին»⁴: Այս փաստը ևս մի ավելորդ անգամ գալիս է ապացուցելու, որ էջմիածնի ժողովի ժամանակ և նրանից առաջ Գրիգոր Մակվեցին եղել է նաև էջմիածնի հայրապետ և որ էջմիածնի վանքը շեն է եղել և ունեցել է միաբանություն դեռ նախքան կաթողիկոսական աթոռի այնտեղ հաստատվելը: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք, որ Գրիգոր

¹ Մատենադարան, ձեռ., 4669, էջ 200ա:

² Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 22:

³ «Զամբու», էջ 101:

⁴ Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, էջ 20; հավելված, էջ 30:

Մակվեցիին, սկսած էջմիածնի վերոհիշյալ կալվածագրի թվականից (1431), թեև անվանվել է Թադեոս Առաքյալի վանքի վանահայր, սակայն հիմնականում հաստատված է եղել էջմիածնում և եռանդուն կերպով զբաղվել է վանքի տնտեսության բարեկարգման հարցով:

Մեծ հավանականությամբ Գրիգոր Մակվեցիին ևս սերում էր Այունյաց Օրբելյանների սերնդից: Նրա հայր՝ Զալալ-բեկը հավանաբար Տարսախճ Օրբելյանի որդի Զալալի թոռն էր: Հոր Զախրուդովյան անունը ևս այդ ընտանիքում խիստ տարածված անուններից մեկն էր: Հայտնի է, որ Տարսախճի որդի Զալալի սերունդները երկար ժամանակ իշխում էին Ուրծա-Ձորում (Վեզի), որոնց վերջին ժառանգների մասին որոշակի տեղեկություններ չեն պահպանվել: Ուստի Գրիգոր Մակվեցու մտերմությունը Ռուստամ Օրբելյանի հետ արյունակցական և ազգակցական հիմքեր ևս ունենր¹:

Ինչպես տեսանք՝ 1429 թ. վերջերից պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսը սկսում է գնել էջմիածին գյուղի շորս դանգերը, երեք տարբեր տերերից՝ վճարելով 10,000 դինար և 1430 թ. հունվար-փետրվար ամիսներին այդ բոլորը հաստատել է տալիս մեկ ընդհանուր կալվածագրում ու վակֆ է անում էջմիածնի վանքին: Իսկ հազիվ երկու տարի անց, 1431 թ. դեկտեմբերին, նրան հաջորդող Գրիգոր Մակվեցիին գնում է յոթ խոշոր գյուղեր (Վաղարշապատ, Բաթոնիչ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղնիս-Քիրաչլի և Մուղնի) և վակֆ անում նույն վանքին վճարելով 540,000 դինար²:

Առաջին իսկ հայացքից դժվար չէ նկատել, թե ինչպիսի խոշոր տարբերություն գոյություն ունի գյուղերի գների միջև: Նույն էջմիածին գյուղը, որ մեկ ու կես տարի առաջ արժեք 15,000 դինար, այժմ գնվում է 90,000 դինարով: Նույնը պետք է ենթադրել նաև մյուս գյուղերի դների վերաբերյալ: Կալվածների գների այսպիսի ֆանտաստիկ աճման համար ռեալ հիմքեր գոյություն չունեին: Նրկրի ընդհանուր տնտեսական վիճակի մեջ այդքան արմատական փոփոխություններ տեղի չէին ունեցել: Ընդհակառակը անընդհատ կրկնվող ավերիչ արշավանքների ենթակա մի երկրում, ուր աղբյուրների տվյալներով այդ թվականին սովն էր մոլեգնում, անշարժ կալվածների գները անպայման իջնում են, իսկ հնչուն կանխիկ դրամը ավելի քան արժեքավորվում է: Հիշենք թեկուզ 1289 թ. Ումեկի որդի Շարի թողած արձանագրությունը Գոշավանքում, որտեղ ի միջի այլոց ասված է. «...Ես Շարս գնեցի զՅոփս իւր ամէն սահմանաւքն ի դառն ժամանակի, որ հայրենիքն արժան էր ու ոսկին թանկ ի դռ (4000) կարմիր գուկատ»³:

Պետք է ենթադրել, որ սույն կալվածագրում արձանագրված յոթ գյուղերի վաճառքը ֆիկտիվ բնույթ է կրում և իրականում այդ գյուղերը Ռուստամ Օրբելյանի կողմից տրվել են էջմիածնի վանքին առ ի սեփականություն:

Սակայն ինչն էր ստիպում Ռուստամ Օրբելյանին դիմելու այդ միջոցին: Մի՞թե նա չէր կարող ինքը ուղղակի այդ գյուղերը վակֆ անել էջմիածնի վան-

¹ Г. Овсеян. Потомство тарсаича Орбеляна и Минз-Хатуны, Христианский Восток, т. II, вып. II, стр. 216—252. Մենք հավանական ենք համարում նաև նախորդ պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսի ազգակցությունը Գրիգոր Մակվեցու հետ, որովհետև 15-րդ դարում սովորաբար բոլոր խոշոր վանքերի հայրապետությունը ժառանգաբար գտնվում էր այս կամ այն իշխանական տան սերունդների ձեռքում:

² ՄՊՎ, թղթապանակ 1գ, վավերագիր № 934:

³ Վիճական տարեգիր, էջ 124:

քին: Համաձայն Շարիաթի օրենքների, նա այդպես կարող էր վարվել, եթե այդ գյուղերը նրա ժառանգական կալվածները լինեին և կամ գնված լինեին մի այլ սեփականատիրոջից: Այսինքն կամ «հայրենիք» լինեին կամ «գանձագին»: Քանի որ կալվածագրում չի հիշատակված հիշյալ գյուղերի «հայրենիք» (մուլք-ե մուլրուսի) կամ «գանձագին» (մուլք-ե զարխարիզ) լինելու մասին, ապա մնում է ենթադրել, որ դրանք մտնում էին նրա սոյուրդալական տիրույթների մեջ:

Թերևս այս հանգամանքը այնքան էլ չխանգարեր այդ նվիրատվությունը իր անունով ձեռնարկելուն, եթե դրա շարժառիթը սոսկ կրոնական շերմեռանդությունը լիներ: Նվիրատվության նպատակն այդ չէր, այլ այն, որ էջմիածնի վանքը ապահովվեր կայուն եկամուտներով: Որպեսզի դա ավելի քան ամուր լիներ, անհրաժեշտ էր այն կատարել այնպես, որպեսզի իրավական տեսակետից ոչ մի կողմից խոցելի չլիներ: Դրա համար պետք էր, որ վակֆի անողը լիներ այնպիսի մեկը, որը իր սեփական դրամով գնած լիներ այդ կալվածները: Եթե Շարիաթը այդ գնումը արձանագրել է որպես օրինական (շարի) գնում և տվյալ օբյեկտը ըստ Շարիաթի դարձել է գնողի «հալալ մուլքը», ապա նա դրանից հետո կարող էր ուզած ձևով տնօրինել այն. վաճառել, գրավ դնել, վարձու տալ, նվիրել, վակֆի անել և այլն:

Միաժամանակ այս հարցում դեր է խաղացել նաև այն մտավախությունը, որ ինչպիսի պատահականություններ Ռուստամը տեր էր դարձել այդ գյուղերին, նույնպիսի պատահականություններ կարող էր նա վաղը զրկվել իր սոյուրդալներից: Մանավանդ, երբ նկատի ունենանք նրա սյուզերենի քաղաքական անկայուն և հեղհեղուկ վիճակը: Անհավանական չէ նաև, որ այս գործարքի մեջ դեր է խաղացել հիշյալ կալվածները վակֆին ամրացնելու միջոցով ապահովագրման ենթարկելու միտքը: Պետք է ի նկատի ունենալ, որ լինելով թագավորի մերձավորագույն էմիրներից, նա հեշտությամբ կարող էր ուզած ձևով կարգադրել այդ գործը, իսկ դազին ու շարիաթը ստիպված էին այն օրինականացնել իրենց արձանագրությամբ և ստորագրություններով:

Ուշագրություն արժանի է նաև այն փաստը, որ մոտ երկու տարի առաջ օրինական կերպով իր $\frac{2}{3}$ մասով էջմիածնի վանքի սեփականությունը դարձած համանուն գյուղը ևս սուլն կալվածագրով նորից «վաճառվում է» Գրիգոր Մակվեցուն, և մյուս վեց գյուղերի հետ միասին վակֆ է արվում վանքին: Այս փաստը զալիս է ապացուցելու, որ ինչպես էջմիածին գյուղը, այնպես և մյուս վեց գյուղերը նախկինում նրան չեն պատկանել և ինչպես որ Ռուստամը չէր կարող էջմիածինը գնել նախկին տիրոջից, այսինքն՝ վանքից և վաճառել նորից վանքին, այնպես էլ մյուս գյուղերը նա ոչ թե գնել էր, այլ ստացել էր որպես սոյուրդալ: էջմիածնի ամբողջ վեց դանգի «վաճառքը» այս կալվածագրում կատարված է միմիայն այն բանի համար, որպեսզի այն ևս ամբողջությամբ ամրացվի վանքին: Այլապես պետք էր միայն հիշվեր երկու դանգը, որովհետև չորս դանգը, ինչպես տեսանք, արդեն պատկանում էր վանքին:

Այսպես ուրեմն, վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ Իսթանբուլի 1431 թվականին իր եղբոր՝ Աբու-Սաիդին սպանելուց և Թավրիզը գրավելուց հետո Ռուստամ Օրբելյանին առաջ քաշելով դարձրել է իր մերձավորագույն զինակիցն ու արքունի խորհրդականը, նրան շնորհելով ընդարձակ սոյուրդալներ ինչպես այլ վայրերում, այնպես նաև Արարատյան երկրի Արագածոտն,

նիգ, Կոտայք և այլ գավառներում: Ի նկատի ունենալով Ռուստամի բարձր դիրքը, հավանական է թվում նաև, որ նրա սոյուրդալների մեջ պետք է մտնեին որոշ շրջաններ, հատկապես Թուման-ե Նախչևանի և Ղափանաթի վիլայեթներին, որոնք դեռ նախկինում պատկանել էին Օրբելյաններին:

Փորձելով օգտագործել ձեռք բերած ազդեցիկ դիրքն ու հեղինակությունը և ստեղծված բարենպաստ պայմանները, Ռուստամը շտապել է գլուխ բերել էջմիածնի աթոռի վերանորոգման գործը: Նա անմիջապես էջմիածնի վանքի հավիտենական սեփականությունն է դարձնում մոտակա յոթ հարուստ գյուղերը, վանքի առաջնորդ և հայրապետ նշանակելով, ծագումով Օրբելյան, մակվեցի Զալալ բեկի որդի Գրիգոր եպիսկոպոսին (Գրիգոր Մակվեցուն): Դժվար է որոշակի ասել, թե այնուհետև ինչպիսի քաղաքական ծրագրեր ուներ էմիր Ռուստամը, սակայն կարելի է ենթադրել, որ նա պիտի փորձեր օգտագործել իր սյուզերենի հովանավորությունը Այրարատում և Սյունիքում վասալ հայկական իշխանություն ստեղծելու համար, որտեղ պետք է իշխեին Օրբելյանները:

Ռուստամ Օրբելյանի գրաված կարևոր դիրքը Իսքանդարի արքունիքում, նրա ստացած ընդարձակ կալվածքները, հայկական զորքերի մասնակցությունը Շահրուխի դեմ մղվող կռիվներում, այդ տարիներին տեղի ունեցող արշավանքների ժամանակ այլ վայրերից հայ բնակչության բռնի տեղահանումն ու նրանց վերաբնակեցումը Այրարատում և Սյունիքում, էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման ուղղությամբ կատարված վճարային քայլերը, Իսքանդարի պարտությունից հետո Շահրուխի ավերիչ արշավանքը հատկապես և միայն Սյունիքում, որի հետևանքով Օրբելյան Բեշթենի և տեղի բնակչության մեծ մասի փախուստը դեպի Վրաստան, սրանք փաստեր են, որոնք մեր կարծիքով արժանի են հատուկ ուշադրության:

Սակայն պատմական դեպքերի հետագա ընթացքը բուրրովին էլ նպաստավոր չեղավ սկսված գործը հաջողությամբ ավարտելու համար: Երբ Շահրուխը լուր ստացավ, որ Իսքանդարը սպանել է Աբու-Սաիդին, որն ընդունել էր Շահրուխի գերիշխանությունը և դարձել նրա վասալը, մեծ զորքով նորից շարժվեց դեպի Ազերբայջան վերջնականապես պարտության մատնելու Իսքանդարին¹: 1435 թ. Շահրուխը մտավ Թավրիզ և Ազերբայջանի իշխանությունը հանձնեց Իսքանդարի մյուս՝ կրտսեր եղբոր Ջհանշահին, իսկ Իսքանդարը փախավ դեպի Էրզրումի կողմերը²: Ըստ Մեծոփեցու, Շահրուխը պաշարել էր նաև Երնջակի բերդը, ուր ապաստանել էին Իսքանդարի եղբայրն ու մայրը, որոնք նվերներ ուղարկեցին և հնազանդվեցին Շահրուխին³:

Ըստ երևույթին այն ժամանակ, երբ Շահրուխը պաշարել էր Երնջակի բերդը, նա միաժամանակ ասպատակ է սփռել Սյունիքում և մերձակա գավառներում կատարելով մեծ ավերածություններ, կողոպուտ և գերեզմարություն: Այդ երևում է Մատենադարանի, մեզ ծանոթ № 8979 ձեռագրի Շամվոն վարդապետ Անգեղակոթցու ձեռքով գրված հիշատակարանի հետևյալ հատվածից, որը հետաքրքիր մանրամասնություններ է պարունակում և արժանի է ավելի մանրակրկիտ ուսումնասիրության:

«Վասն դառնութեան ժամանակիս և բազում վշտաց և աւերման աշխարհիս Հայոց, զի գալն անիծեալ շար բռնաւորին և կարապետ նեռինն արբանակն

¹ Հաբիբ-ու-սիւր, հատ. 3, գլ. 3, էջ 122—123: Շարաֆնամե, հատ. 2, էջ 93:

² Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն, էջ 102:

³ Նույն տեղում:

սատանայի. Շահրուխն, որդի Լանկ Թամուրին, յազգէն պարսից, ելաւ բազում զարաւաք և անթիւ հեծելաւք ի կողմանց հարաւու և եկեալ տապալեաց զաշխարհս մեր և արար կապուտ, կողոպուտ և գերի էառ զամենայն և փախստական արար զաշխարհակալս մեր զկողեցեալն Ասկանդար զորդին Յուսուֆին, յազգէն Թորգոմա (Sic) և զաղէտն և զկոծն և զազգի ազգի վիշտ և դառնութիւն ժամանակիս ընդ գրով ո՞ կարէ արկանել, զի այս երրորդ գալն էր և աւերին և եկեղեցայց մերաց խաւարածելն: Եւ վասն աւերման հրեշտակաբնակ աթոռոյն մեր Եւստաթէի սրբոյ առաքելոյն, զի բնաջինջ աւերածին և առհասարակ զտներն այրեցին և զստացուածքն զամենայն կողոպտեցին և միաբանաւք մերովք փախստական և ցանուցիր եղաք աշխարհս Վրաց աստուածապարգև իշխանաւ մեր և ամենայն աւրհնութեանց արժանաւոր պարընաւս պարոն Բէշքէն և ազատաւք և ժողովրդաւք: Եւ վասն այս պատճառին բնակեցաք ի սուրբ ուխտս ի Սանահինս առ ոտս բազմերանեան և ճնգնազգեաց և խարազանազգեաց կուսակրանի Յոհաննէս նկարողի այս մատենի զոր տէր աստուած զարդարէ զսա երկոքին քաղաքաւարութեամբ զի բազում և ազգի ազգի արաւք միխթարեաց զմեզ և զմերոյքս ի տառապանս մեր և մեք ի բազում դառնութենէ և ի տարակուսանաց ոչ հանդուրժեաք զտիւ և զգիշեր վասն աւերածուն աշխարհին մեր և խաւարելոյ եկեղեցայցն: Այլ կրկին մխիթարք եղև ազգիս տառապեալ պարընաց պարոնն և իշխանաց իշխանն տիպ գեղեցիկն և ամենայն կերպիւ զարդարածն պարոն Բէշքէնն զնաց առ բռնաւորն և առհասարակ ազատեցոյց զգերեալսն ի զարաց նորին, զոր տէր աստուած ազատէ զինքն և զնախնիքն իւր ի ձեռաց սատանայի և պատրանաց նորին: Եւ այս փոքր ի շատէ»¹:

1436 թվականին Իսքանդարը էրզրումի մոտ Ալ-Կոյունլու Կարա-Օսմանին խաչատուակ պարտութեան մատնելուց և գլխատելուց, ինչպես նաև Սեբաստիայի, Խարբերդի և Դերջանի շրջանները ավերելուց և կողոպտելուց հետո նորից վերադարձավ Արևելյան Հայաստան: Այս արշավանքից վերադառնալիս էր, որ նա իր հետ բերեց նաև մեծ թվով հայ գաղթականներ, որոնց բնակեցրեց Այրարատում և Սյունիքում:

Ուշագրավ է, որ վերոհիշյալ հիշատակարանի վերը մեջբերված հատվածում չի հիշված Ռուստամի անունը, այդ նշանակում է, որ 1435 թվականին տեղի ունեցած սյունեցոց գաղթի ժամանակ Ռուստամը իր հոր հետ չի հեռացել Լոռի, այլ նա այդ ժամանակ եղել է Իսքանդարի բանակում և հավանաբար մասնակցել և՛ Կարա-Օսմանի դեմ մղված ճակատամարտին, և՛ Արևմտյան Հայաստանում կատարված ասպատակություններին: Ռուստամը ապաստանել է Լոռի իր հոր մոտ այն բանից հետո, երբ 1437 թվականին Սոֆյանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում թուրքմեն զինվորները լքեցին Իսքանդարին և անցան Զհանշահի կողմը, իսկ ինքը՝ Իսքանդարը փախավ ու ամրացավ Արնջակի բերդում, որտեղ և դավադրաբար սպանվեց իր որդու՝ Շահկուբադի ձեռքով²:

Ըստ նույն հիշատակարանի տվյալների պարզվում է, որ Շահրուխի զորքերի ավերիչ արշավանքը ուղղված է եղել ոչ այնքան Բեշքենի, որքան նրա որդու՝ Ռուստամի դեմ, քանի որ Բեշքենը նույնիսկ գնում է Շահրուխի մոտ,

¹ Մատենադարան, ձեռ. № 8979, էջ 351ա—351բ:

² Թովմա Մեծովիցի, Պատմութիւն, էջ 107—108: Հարիր-ուս-սիար, 5. 3, դր 3, էջ 123: Շարաֆնամե, հատ. 2, էջ 94:

որն ընդունում է նրան և հարգելով նրա խնդիրքը ազատում է վերցրած գերիներին:

Այս դեպքերից հետո էր, որ Ռուստամը որպես Իսթանբուլի ղինակից, հետապնդվելով Շահրուբի և Ջհանշահի կողմնակիցների կողմից, ստիպված է լինում թողնել ղինվորականի և պետական գործչի կարիերան և ապաստան փնտրել Լոռիում, իր հոր և մյուս հարազատների մոտ: Էմիր Ռուստամը Այունիքում երևում է 1450 թվականին, երբ ըստ երևույթին նրան թուլլատրվել է հոր եղբրական մահից հետո, բնակչության որոշ մասի հետ, վերադառնալ իր հայրենի կալվածները: 1450 թ. հոկտեմբերի 30-ին նա որոշ գյուղեր է վաճառում իր նախկին հոգևոր հայր, Տաթևի վանահայր, վերահիշյալ հիշատակարանի գրիչ Ծմավուն վարդապետ Անգեղակոթցուն: Ուշագրույթյան արժանի է այն փաստը, որ այս վավերագրում նրա անվան չեն նախորդում մեզ ծանոթ յոթ գյուղերի կալվածագրում հիշված ճոխ տիտղոսները: Դեռ ավելին, նա գրված է նաև «էմիր» տիտղոսից և կոչվում է միայն «հայ էմիրզադա (իշխանագուն) Ռուստամ, որդի էմիր Բեշքենի, որդի Սմբատի»¹:

Նշանակալից է նաև այն, որ վաճառվող չորս գյուղերից մեկի՝ Տաշուի միայն երեք դանգն է վաճառվում: Այս փաստը ենթադրել է տալիս, որ այդ գյուղի կեսն է միայն պատկանել նրան, կամ այդքանն է միայն ուզել վաճառել, որը վկայում է նրա ոչ շատ մեծ կալվածատիրական կարողությունների մասին:

Ստեղծված քաղաքական աննպաստ պայմաններում, երբ էմիր Ռուստամը ստիպված էր ասպարեզից հեռանալ և երբ իշխանության գլուխ էր անցել Շահրուբի գրածո Ջհանշահ-Միրզան, որը միայն հենվում էր քոչվոր արիստոկրատիայի վրա և հաշտ աչքով չէր նայում հայ աշխարհիկ ֆեոդալականության դիրքերի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկվող փորձերին, ինքնին հասկանալի է, որ երկրի ինքնուրույնության վերականգնման համար այլևս որևէ լուրջ հեռանկար չէր կարող գոյություն ունենալ:

Սակայն էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման ծրագիրը, որի իրականացման ուղղությամբ խոշոր նախապատրաստական աշխատանք էր կատարված, դեռ շարունակում էր մնալ օրակարգում:

Պետք է ենթադրել, որ 1437 թվականից մինչև 1440 թվականը ընկած ժամանակամիջոցում, փորձեր են կատարվել այս հարցի վերաբերյալ ձեռք բերելու ինչպես Երևանի Յաղուբ բեկի, այնպես նաև Ջհանշահի թուլլատրվույթունը: Ըստ Մեծոփեցու 1441 թ. գարնանը Երևանից ստացվում են Յաղուբ բեկի հրամանագիրը և Հերմոնի վանքի վանահայր Հովհաննես Կոլտիկի գրությունը, որոնցով Մեծոփեցին և ուրիշները հրավիրվում էին էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցին նվիրված եկեղեցական ժողովին մասնակցելու²:

Աղբյուրների վկայություններից պարզ երևում է, որ Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության հարցում երևան են եկել երկու հակադիր կուսակցություններ, որոնցից մեկին զլխավորում էր Այրարատի և Այունյաց՝ Տաթևի և Հերմոնի վանքերի շուրջ խմբված հոգևորականությունը, իսկ մյուսին՝ Վասպուրականի՝ Աղթամարի, Մեծոփի և մյուս վանքերի ներկայացուցիչները: Եթե

¹ ՄՊՎ, Թղթապահակ 2ա, վավ. № 3:

² Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 65:

ի նկատի ունենանք, որ Վասպուրականում գտնվող խոշոր վանքերում (Աղթամար, Մեծփի և այլն) կղերական սքեմի տակ գործող հոգևորականության մեծ մասը իրենց ծագումով կապված էին Արծրունյաց Ֆեոդալական տան մնացորդների, իսկ Սյունյաց բարձրաստիճան հոգևորականությունը Օրբելյանների հետ, ապա Ամենայն Հայոց կաթողիկոսության գահի համար մղվող պայքարը կարելի է դիտել որպես պայքար հիշյալ երկու Ֆեոդալական տների միջև, որոնցից յուրաքանչյուրը այդ միջոցով ձգտում էր իշխանության ամբողջ հայ ժողովրդի նկատմամբ:

Կարելի է չկասկածել, որ սյունեցիների թեկնածուն պետք է լիներ հենց նույն Գրիգոր Մակվեցին, որը, ինչպես տեսանք, դեռ 1431 թվականից կապված էր եղել էջմիածնի հետ և զբաղվել վանքապատկան կալվածների ընդարձակման գործով: Սակայն որքան որ Գրիգոր Մակվեցին հանդիսանում էր էմիր Ռուստամի կողմից հովանավորված անձնավորություններից մեկը, ուստի դժվար թե Յաղուբ բեկը առաջին հերթին համաձայնվեր նրա թեկնածության հետ: Բոլոր նշաններից երևում է, որ Ջհանշահը առհասարակ ավելի մերձավոր կապեր է ունեցել և հովանավորել է Աղթամարի կաթողիկոսներին, ուստի նրան ենթարկվող Յաղուբ բեկը ևս բնականաբար պետք է հակված լիներ այդ կողմը:

Այսպես թե այնպես, թվում է, թե ժողովականները փորձում են միջին ճանապարհ ընտրել և կաթողիկոս են ընտրում Կիրակոս Վիրապեցուն, որը թեև իր ծագումով Վասպուրականի կողմերից էր, (Նառաբաստ գյուղից), սակայն, ինչպես վկայում է Մեծփեցին, նա վաղուց հեռացել էր այդ կողմերից և հաստատվել նախ՝ Մակվում, ապա՝ դարձել էր Նոր Վիրապի վանահայր և իբրև թե հեռու էր կանգնած կուսակցական խմբավորումներից ու նրանց միջև տեղի ունեցող պայքարից:

Հենց Մեծփեցու իր իսկ վկայություններից պարզվում է, որ կաթողիկոսական թեկնածության հարցի շուրջ ծավալված ընտրական պայքարում հաղթանակել են վասպուրականցիները: Դա պարզ երևում է, թեկուզ հենց այն բանից, որ Կիրակոս Վիրապեցին կաթողիկոս ընտրվելուց անմիջապես հետո, վերացնում է Աղթամարի կաթողիկոսության վրա դրված բանադրանքը և շարունակում մնալ Մեծփեցու և նրա գործակիցների ազդեցության տակ: Դրանով էլ պետք է բացատրել երկու տարի անց սուր կերպով դրսևորված օպոզիցիայի երևան գալը, որը հանգեց ի վերջո Կիրակոսի վտարման և Գրիգոր Մակվեցու կաթողիկոս օծվելուն:

Մենք պետք է վերապահության մտտենանք Թովմա Մեծփեցու հաղորդած այն տեղեկություններին, որոնք վերաբերում են Կիրակոս Վիրապեցու դեմ ծավալված պայքարին: Պետք է հաշվի առնել, որ Մեծփեցին այս հարցում բոլորովին էլ զերծ չէ կուսակցական նեղմտությունից և նրա տված գնահատականը հակառակորդ կողմի վերաբերյալ օբյեկտիվ բնույթ չի կրում: Պատահական չէ, որ Հովհաննես Կոլոտիկը Յաղուբ բեկի մոտ տեղի ունեցած հարցաքննության ժամանակ, բեկի այն հարցին՝ թե եթե նրանք համաձայն չէին Կիրակոսի թեկնածության, ապա ինչու՞ ձեռնադրեցին նրան, պատասխանում է՝ «բաւ լիցի, ես ոչ եմ ձեռնադրեալ զնա, այլ թովմէն և ընկերք նորին»¹:

¹ Թովմա Մեծփեցի, Հիշատակարան, էջ 80:

Կասկածից դուրս է ուրեմն, որ կաթողիկոսական թեկնածուության հարցում սկզբից էլ տարածախնություն է եղել ժողովականների միջև:

Քայց ամենից կարևոր մոմենտը այս խնդրում այն փաստն է, որ Գրիգոր Մակվեցին այս պայքարում օգտագործել է հատկապես այն հանգամանքը, որ ինքը գյուղեր է նվիրել վանքին և որ կարևորն է, այդ կալվածագրում կամ ավելի շուտ «վակֆնամայում» նա պայման է դրած եղել, որ մինչև իր մահը էջմիածնի վանահայրը կամ «մութավալլին» (موتولی) ինքը պետք է լինի և միայն իր մահից հետո կարող է մեկ ուրիշը փոխարինել նրան: Ավելորդ չենք համարում վակֆնամայի այդ հատվածը բերել թարգմանաբար:

«...եվ նմանապես պայման դրեց, որ քանի դեռ հիշյալ վակֆիքը (կտակողը) ողջ է, նա պետք է լինի վերոհիշյալ վանքի մութավալլին (տնօրենը) ու եպիսկոպոսը, իսկ նրա մահից հետո ավագ վանականներից, վարդապետներից և հոգևորականներից բարեխիղճ և անշահախնդիր մեկը, որի պաշտոնատեղին և բնակավայրը Ուշքիլիսայի (էջմիածնի) վանքը կլինի, կարող է դառնալ վերահսկիչ և տնօրեն»¹:

Ինչպես տեսնում ենք վակֆ անողը իրեն չի անվանում կաթողիկոս կամ եպիսկոպոս (عقاپس — խալիֆա), այլ անվանում է վանքի տնօրեն՝ «մութավալլին», այսինքն՝ վանահայր, կամ ինչպես հիշված է 1441 թ. Մեծոփեցու ձեռքով դրված հիշատակարանում «էջմիածնի հայրապետ»: Իսկ որ կարևորն է վակֆ անող Գրիգոր Մակվեցին որոշակի պայմանով է այդ գյուղերը վակֆ անում էջմիածնի վանքին:

Սակայն, ինչպես տեսանք, այդ պայմանը բուրրովին էլ հաշվի չառնվեց էջմիածնի ժողովում, այն չէր էլ կարող հաշվի առնվել, որովհետև դա չէր համապատասխանում Հայոց եկեղեցու օրենքներին: Մինչդեռ ընդհակառակը այն չափազանց կարևոր էր ըստ մահմեդական շարիաթական օրենսդրության: Նման վակֆնամաների վերջում ավելացվում էր նաև բավական ընդարձակ «լաանաթնամա» (նզովագիր), որով բարեպաշտ մուսուլմանների համար ամենածանր անեծքներն ու նզովքներն էին ուղղվում նույն վակֆնամայում նշված պայմանները խախտողների հասցեին, որը հաստատվում էր Շարիաթի անդամների կնիքներով ու ստորագրությամբ ու սրբազան օրենքի ուժ ստանում: Նույն այս վակֆնամայի վերջում կարդում ենք. «Ով որ վերոհիշյալ մուլքերի վակֆ լինելը իմանա և այդ մասին տեղյակ լինելով հանդերձ դրանք վաճառի կամ նվիրի և կամ վերոհիշյալ պայմանների մեջ փոփոխություններ մտցնի, աստծու, մարգարեի, սատանաների ու դևերի անեծքներով անիծյալ լինի»²:

Միանգամայն հասկանալի է, որ Կիրակոս Վիրապեցու հակառակորդները պիտի փորձեին օգտագործել յոթ գյուղերի կալվածագիրը իր վակֆնամայով հանդերձ, դրա հիման վրա էջմիածնի կաթողիկոսությունը Գրիգոր Մակվեցուն հանձնելու համար: Հայկական աղբյուրների ուշագիր ուսումնասիրությունը ևս գալիս է հաստատելու մեր այս կարծիքը:

Առաքել Դավրիժեցին իր «Պատմության» մեջ մեջ բերելով մի ընդարձակ ժամանակագրություն, 1443 թվականի տակ գրում է. «զուտ Կիրակոսն հանին ի կաթողիկոսությունն է և նստաւ Մակուեցի Գրիգորն զաբալով: Այս Գրիգորս

¹ ՄՊՎ, թղթապանակ 1գ, վավ. № 934:

² Նույն տեղում:

նորոգութիւն արարեալ է սուրբ Էջմիածնի մասամբ ինչ¹։ Դավրիժեցու պատմութեանն առնելով մի այլ ժամանակագրութեան մեջ, որը ըստ Վ. Հակոբյանի պատկանում է Գրիգոր Մակվեցու հակառակորդներից Կիրակոս Ռշտունցու գրչին, նմանապես կարդում ենք. «ՊՂԲ (1443) զսէր Կիրակոս կաթողիկոսն փոխեցին վասն նախանձու և Մակուեցի Գրիգոր կաթողիկոսն նստաւ կաթողիկոս զաբալով և թուրքով: Եւ զիս եւ Սարգիս վարդապետն տուգանել ետուն, և ինչ վատութիւն որ արարին՝ Կիրակոս կաթողիկոսին և Սարգիս վարդապետին և ինձ Աստուած թողու զմեզս նոցա իւրեանց»²:

Պարզվում է ուրեմն, որ Գրիգոր Մակվեցու կաթողիկոս դառնալուն նպաստող հիմնական իրավական գործոնը եղել է վերոհիշյալ կալվածագիրը կամ «ղաբալան»: Թովմա Մեծոփեցու մոտ ևս կա աղոտ հիշատակություն այդ մասին: Նա գրում է, որ Յաղուբ բեկի մոտ տեղի ունեցած հարցաքննության ժամանակ, որից հետո բեկը իրավունք է տալիս կաթողիկոս ձեռնադրել Գրիգոր Մակվեցուն, վերջինիս կողմնակիցների ձեռքում եղել է ինչ որ օտար լեզվով գրված գրություն, որը տվել են Մեծոփեցուն կարգալու և որը ըստ երևույթի նրա հակառակորդների հիմնական իրավական կռվանն է եղել: «Մին փոխգիր ետուն ինձ ընթեռնուլ օտարապէս...», — գրում է Մեծոփեցին³, եթե «փոխգիր» բառը այստեղ հասկանանք օրպես փոփոխման գիր, այսինքն՝ սեփականատիրոջ փոփոխման գիր, կամ ուղղակի օտարման, վաճառման փաստաթուղթ, ապա պետք է կարծել, որ խոսքը վերաբերում է նույն յոթ գյուղերի կալվածագրին, կամ ինչպես Դավրիժեցու մոտ է հիշված՝ «ղաբալային», որի մեջ շեշտված վակֆային նախապայմանները հիմք են ծառայել Յաղուբ բեկին, կարգադրելու, որպեսզի հեռացնեն Կիրակոսին և կաթողիկոս ձեռնադրեն Գրիգոր Մակվեցուն, որպես մի անձնավորություն, որն ըստ այդ շարիաթական վավերագրի, իրավունք ուներ մինչև իր մահը մնալ Էջմիածնի վանահայր (մութավալի):

Անշուշտ, 1441 թվականից մինչև 1443 թվականը, ընկած ժամանակամիջոցում, Գրիգոր Մակվեցու կողմնակիցներին հաջողվել է, ինչպես այդ մասին բազմիցս շեշտում է Մեծոփեցին, կաշառքների և այլ միջոցներով ձեռք բերել նաև Յաղուբ բեկի համակրությունը Գրիգոր Մակվեցու նկատմամբ, որից հետո միայն գործը կարող էր նման իրավական ձևակերպում և լուծում ստանալ:

Որ Գրիգոր Մակվեցու կողմից Էջմիածնի կաթողիկոսական աթոռը զավթելու հիմնական իրավական հենարանը եղել է նույն յոթ գյուղերի կալվածագրի կամ վակֆնամայի վերոհիշյալ կետը, այդ պարզ երևում է նաև այն բանից, որ 1443 թվականից մինչև 1466 թվականը շորս կաթողիկոսներ են փոփոխվում, սակայն Գրիգոր Մակվեցին միշտ շարունակում է մնալ աթոռակից կաթողիկոս⁴, և դա միայն այն պատճառով, որ ըստ վակֆնամայի նա իրավունք ուներ մինչև իր մահը մնալ որպես վանքի «մութավալի»:

Ասկայն չնայած այդ ներքին աթոռակալական գծություններին, Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Էջմիածնում վերահաստատվելու փաստը, այնպիսի մի ժամանակ, երբ պետականության վերականգնման ոչ մի ռեալ

¹ Դավրիժեցի, էջ 436:

² Նույն տեղում, էջ 628. հմմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հատ. 1, էջ 119:

³ Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 80:

⁴ Դավրիժեցի, էջ 436—437:

Հեռանկար գոյություն չունեն, բնականաբար հայկական ղեկավար շրջանակներում պետք է դիտվեր որպես կարևոր երևույթ: Մեր ժողովրդի պատմության մեջ, շնորհիվ այն բանի, որ պատմական բավական երկար մի ժամանակաշրջան, բացակայել է սեփական պետական-քաղաքական իշխանությունը, եկեղեցական իշխանությունները հաճախ իրենց մեջ մարմնավորում էին նաև տարբեր խավերի իղձերը սեփական ինքնուրույն իշխանության կամ նման ինքնատիպ հայկական հաստատության վերաբերյալ: Մենք արդեն տեսանք, թե իր ժամանակին ինչպիսի քաղաքական հույսեր էին կապվում այդ առերևույթ զուտ կրոնական, եկեղեցական նշանակություն ունեցող երևույթի հետ:

Միջնադարյան պայմաններում, երբ, էնդելսի խոսքերով ասած, եկեղեցին ֆեոդալական հասարակարգի սանկցիան էր հանդիսանում, Հայոց Եկեղեցու գլխավոր կենտրոնի վերահաստատումը բուն իսկ կենտրոնական Հայաստանում և նրա դիրքերի հետագա ամրապնդումը անկասկած կարևոր դեր պետք է խաղար նաև հայ իրականության քաղաքական կյանքում, ինչպես այդ տեղի ունեցավ հետագա դարերում և հատկապես XVII դարի վերջերին և XVIII դարի սկզբին ծավալված ազատագրական շարժումների ժամանակ:

ՀՍ.ՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Վ. Ս.Վրանգիլյան, Հ. Փափազյան

ՖՐԻԿԻ ԴԻՎԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՔԱՌՅԱԿ

Միջնադարյան հռչակավոր հայ տաղերգու Ֆրիկի անունով հայտնի են շուրջ 60 տաղեր, որոնք պահպանվել են 20-ից ավելի ձեռագիր մատյաններում և մեզ են հասել գրիչների արտագրությամբ: Ֆրիկի տաղերի ինքնագիր օրինակը մեզ չի հասել: Հիշյալ ձեռագրերի մի մասը պահպանվում է ՀՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատանը (Մատենադարան), իսկ մյուս մասը գտնվում է արտասահմանյան տարբեր ձեռագրատներում:

Պարբերական մամուլում և տարբեր ժողովածուներում զանազան առիթներով հրատարակված մի քանի տաղերից բացի, առանձին ուսումնասիրողների կողմից կազմվել են Ֆրիկի տաղերի հետևյալ ամբողջական ժողովածուները, որոնց մեջ ընդգրկված են բանասիրության կողմից Ֆրիկին վերագրվող բոլոր տաղերը:

1. Ֆրիկ, Բանաստեղծություններ, կազմեցին Մ. Մկրյան և Ե. Թոթոսյան, Երևան, 1941 (ընդգրկում է 41 տաղ):

2. Ֆրիկ, Դիվան, կազմեց Տիրայր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952 (ընդգրկում է 60 տաղ):

Սույն հոդվածով մենք նպատակ ունենք պարզել Ֆրիկի Դիվանում պահպանված մի հայտատու պարսկերեն քառյակի վերծանման, թարգմանության և հեղինակի կողմից նրա օգտագործման հանգամանքները:

Քննության առարկա պարսկերեն քառյակը պահպանվել է միայն Ֆրիկի տաղերի այն ձեռագիր օրինակում, որը գտնվում է Օքսֆորդի Բոդլեյան թանգարանում և գրանցված է F 16 համարի տակ:

Սույն քառյակը 1941 թվականի ժողովածուում հաջորդում է 13-րդ տաղի առաջին հատվածին և փոքրիկ գծիկներով բաժանվում է նախորդ և հաջորդ հատվածներից (էջ 86): Իսկ Տիրայր արքեպիսկոպոսի կազմած Դիվանում նույն այդ 13-րդ տաղը վերածված է երեք առանձին տաղերի և համարակալված՝ 20, 21, 22: Պարսկերեն քառյակը այս ժողովածուի մեջ գրված է 20-րդ տաղի վերջում, որպես նույն տաղի վերջին քառյակ (էջ 353):

Բոդլեյան ձեռագրի լուսանցքում սույն քառյակի վերաբերյալ կատարված «Պարսիկ է» գիտողությունը գալիս է ապացույցելու, որ արտագրող գրիչը կռահել է, որ քառյակը պարսկերեն է, սակայն գիտակի չլինելով այդ լեզվին, նա քառյակի արտագրությունը կատարել է մեծ աղավաղումներով, խախտելով նույնիսկ տաղաչափությունը:

Նշված երկու տպագիր ժողովածուներում, աննշան տարբերությամբ, այդ քառյակը տպագրված է այսպես՝

Յարմուտ պախի էշխի ջուզն է քուրա ննքուշանդ,
 Լաշար սիֆաթան ու ժիշտ խուրա, ննքուշանդ,
 Գարաշիշ իսադեղի զի քուշտան,
 Մազրէզ, մուրգ, արպուլաթ հարանչի վա իրա ննքուշանդ:

1941 թվականի ժողովածուն կազմողները փորձ չեն արել վերծանելու և թարգմանելու հիշյալ հայատառ պարսկերեն քառյակը: Անձամբ չտիրապետելով պարսկերենին, Տիրայր արքեպիսկոպոսը գիմել է իրանագետ Մ. Թիրյաքյանին, խնդրելով նրան վերծանել ու թարգմանել իր համար անհասկանալի չորս տողերը: Մ. Թիրյաքյանի կողմից, բացի առաջին տողի սկզբի երեք բառերից, ամբողջ քառյակի ընթերցումը ճիշտ է կատարված: Իսկ առաջին երեք բառերի մասին նա գրում է, որ չի կարողացել դրանցից որևէ իմաստ հանել¹:

Այդ երեք բառերը «Յարմուտ պախի էշխի» պետք է կարդալ այսպես. «Դար մուտպախի էշխ», այսինքն «սիրո զոհարանում» (բառացի՝ «սիրո խոհանոցում»): Այսպիսով, լրիվ կերպով վերականգնվում է հիշյալ հայատառ պարսկերեն քառյակը.

Դար մուտպախի էշխ ջուզ նէքուրա ննքուշանդ,
 Լազար սիֆաթան ու զիշտ խուրա ննքուշանդ,
 Գար աշիղի սադեղի զի քուշտան մազրէզ,
 Մուրդար պուլաթ հարանչի վա իրա ննքուշանդ:

Ստորև տալիս ենք քառյակի պարսկերեն տեքստը և նրա տառագար-ձուլյունը ժամանակակից պարսկերենի արտասանությամբ.

در مطبخ عشق جز نکو را نکشند
 لاغر صفتان و زشتخو را نکشند
 کر عاشق صادق ز کشتن مکریز
 مردار بود هر آنچه ویرا نکشند

Dar maṭbaxe 'ešy jōz nekū rā nakošand,
 Lāyar sefatān ō zeštḫū rā nakošand,
 Gar 'āseye sādeyī zkoštān magrīz,
 Mordār bōvad har ānče veyrā nakošand.

Այժմ անցնենք քառյակի թարգմանության հարցին: Թիրյաքյանն իր ընթերցած տողերը հետևյալ կերպ է թարգմանում.

« . . . լավեն ի զատ մեկը չեն սպաներ.
 Նկարագրե զուրկ և անզգամ մարդը չեն սպաներ.
 Թե որ անկեղծ սիրահար ես սպանուելե մի փախչիր,
 Պիղծ կը լինի այն (դիակը), որ չէ սպանուած»²:

¹ Ֆրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952, էջ 124:

² Նույն տեղում:

Մեր կարծիքով ավելի ճիշտ կլինի քառյակը թարգմանել այսպես.

Սիրո զոհարանում լավից բացի ոչ մեկին չեն զոհում.

Աննկարագիր ու վատարարո մարդկանց չեն զոհում.

Եթե անկեղծ սիրահար ես, զոհվելուց մի խուսափիր.

Պիղծ կլինի այն, որին չեն զոհում:

Քառյակը (ռուբայի) որպես բանաստեղծական ժանր, սկսած 10—12-րդ դդ. մեծ տարածում էր գտել իրանական գրականության մեջ: Որպես խոշոր քառյակագիրներ հայտնի են Շահիգ Բալխին, Ռուզաբի Սամարղանդին, Բարաթահեր Օրյանը, Օմար Պայամը, Շեյխ Աթթարը և ուրիշները: Ռուբայիի չորս սեղմ տողերում գեղարվեստական բարձր կատարելության հասած բանաստեղծական հնարանքներով, արտահայտվում էին փիլիսոփայական մտքեր և աշխարհիկ թեմաներով խորհրդածություններ:

Բանաստեղծը այս քառյակում այն միտքն է արտահայտում, որ ճշմարիտ սիրահարը պետք է այնքան տարված լինի իր սիրո առարկայով, որ հաճությամբ զոհաբերվի նրան: Գեղարվեստական ընդհանրացմամբ բանաստեղծը շեշտում է, որ սիրո զոհարանում միայն լավերը, այսինքն անկեղծ սիրահարներն են զոհաբերվում: Իսկ քառյակի վերջին տողում արտահայտված է մոռուլմանական այն հասկացողությունը, որ զոհված (մորթված) կենդանու մարմինը մաքուր է, իսկ մեռածինը՝ պիղծ: Հետևաբար, իր էությունամբ մաքուր է այն սիրահարը, որը զոհվում է իր սիրեցյալի համար:

Բանաստեղծի կողմից կատարված սուլն համեմատությունը թույլ է տալիս ենթադրելու, որ քառյակի հեղինակը Ֆրիկը չէ, այլ այն ամենայն հավանականությամբ պատկանում է 10—13-րդ դդ. պարսիկ քառյակագիրներից որևէ մեկին: Ձեռքի տակ չունենալով միջնադարյան պարսիկ բանաստեղծների ստեղծագործությունների լիակատար հրատարակությունները, չենք կարող վճռական խոսք ասել սուլն քառյակի բուն հեղինակի մասին: Մատենագարանում պահպանվող պարսկերեն բանաստեղծությունների և քառյակների ձեռագիր մատյաններում և առանձին, ոչ ամբողջական ժողովածուներում մեր կատարած պրպտումները առայժմ որևէ արդյունքի չեն հանգել:

Նախորդ ուսումնասիրողները որոշ փորձեր են կատարել պարզելու, թե ինչ նպատակով է սուլն քառյակը տեղ գտել Ֆրիկի Դիվանի մեզ հայտնի հատվածում: Սակայն մինչ այժմ այդ հարցը մնում էր չլուծված:

Այդ հարցը ավելի ճիշտ լուծելու հնարավորություն ուներ վերջին ժողովածուն կազմող Տիրայր արքեպիսկոպոսը, որը ձեռքի տակ ուներ քառյակի ոչ լրիվ թարգմանությունը: Բայց ինչպես երևում է, նա չի նկատել, որ այդ քառյակին հաջորդող քսանմեկերորդ տաղի հենց առաջին չորս տողերը ոչ այլ ինչ են, եթե ոչ նույն պարսկերեն քառյակի հայերեն թարգմանությունը, որը այնքան հարազատ և իրեն հատուկ գեղարվեստական բարձր կատարելությամբ կատարել է մեր տաղանդավոր տաղերգու:

Անա թե ինչպիսին է Ֆրիկի թարգմանությունը ըստ Բողեյան ձեռագրի.

Ի սուրբ սեղանոյն վերայ քան զաղէկն այլ իրք չի զենեն,
Չնիխարն ու զվատուն, եղբայրք Աստուծոյ, զայն երբ զըբլեն:

Թողորդ սիրելի ես դու, հանց արս, որ զքեզ չհոտեն,
Դիտեմ՝ անպիտան դառնայ այն մատաղն, որ զինքն չը գենեն:

Մյուս ձեռագրերում ևս սույն թարգմանությունը նույն ձևով է պահպանված և փոփոխակներ չունի: Սակայն Տիրայր արքեպիսկոպոսը իր կողմից որոշ ուղղումներ է մտցրել բնագրում: Երկրորդ տողի «նիխար» բառը դարձրել է «նիհար», սրան հաջորդող «վատուն»՝ «վատուժ», երրորդ տողի վերջին «չհոտեն» բառը «չի խոտեն», իսկ չորրորդ տողի վերջին բառի «չը» ժխտական մասնիկը նմանեցնելով առաջին տողի «չի գենեն»-ին, դարձրել է «չի»: Տիրայրի ուղղումների հետ հիմնականում կարելի է համաձայնվել, բացի «վատուժ» բառից, որը չի համապատասխանում պարսկերեն «գեշտ խու—վատարարո» բառին: Ֆրիկը ճիշտ կերպով այն թարգմանել է «վատ», որը հայցական հոլովում դարձել է «զվատուն»:

1941 թվականի ժողովածուի մեջ Ֆրիկի թարգմանությունը տպագրված է նույնպես ըստ Բողղեյան ձեռագրի, առանց որևէ խմբագրման: Սակայն այստեղ պաշտպանված են երկրորդ տողի վերջին «զըբլեն» (ընդունեն) բառը, և երրորդ տողի առաջին «թողորդ» (թե ողորդ) բառը, որոնց փոխարեն գրված է «զբբլեն» և «թոյ որդ»:

1941 թվականի ժողովածուի 13-րդ տաղը բաղկացած է 102 տողից, ընդ որում 1—59 տողերը վերջանում են «իք» հանգով, 60—63 տողերը հիշյալ պարսկերեն քառյակն է, 64—79 տողերը վերջանում են «են» հանգով և 80—102 տողերը՝ «թիւն» հանգով: Տիրայրը էլնելով հանգերի տարբերությունից, հիշյալ տաղը բաժանել է երեք անկախ տաղերի, որոնցից 20-երորդը ընդգրկում է «իք» հանգով վերջացած տողերը և պարսկերեն քառյակը, 21-րդը՝ «են» հանգով տողերը, 22-րդը՝ «թիւն» հանգով տողերը:

Անշուշտ, Տիրայր արքեպիսկոպոսը ճիշտ է վարվել, երբ 102 տողանոց տաղը բաժանել է երեք առանձին տաղերի, քանի որ դրանք ոչ միայն տարբեր հանգերով են վերջանում, այլև բովանդակությամբ էլ տարբերվում են իրարից: Տիրայրի սխալը կայանում է միայն պարսկերեն քառյակի սխալ տեղագրություն մեջ:

Թվում է, թե կասկած չի մնում պնդելու, որ պարսկերեն քառյակը Ֆրիկի համար ծառայել է որպես բնարան՝ «Դիվան»-ի 21-րդ տաղի հորինման համար: Ուստի և այն պետք է վերցնել 20-րդ տաղի վերջից, որի բովանդակության հետ ոչ մի ձևով չի առնչվում, և դնել 21-րդ տաղի սկզբում: 21-րդ տաղի հիմնական թեման սույն քառյակի մեջ արտահայտված գոհաբերության կամ, ինչպես Ֆրիկն է գրում, «գենման» թեման է:

Զնկատելով, որ քառյակի թարգմանությունը արդեն կատարված է Ֆրիկի կողմից, Տիրայր արքեպիսկոպոսը իր հետագա ենթագրությունների ժամանակ ընթանում է միանգամայն սխալ ուղղությամբ և հանգում ոչ ճիշտ եզրակացությունների: Այսպես, օրինակ՝ էլնելով այն սխալ փաստից, որ Ֆրիկը չի փորձել թարգմանել պարսկերեն քառյակը, նա եզրակացնում է, որ Ֆրիկի ժամանակ պարսկերեն լեզուն «բնական և դուրըմբոնելի է եղել ունկնդիրների և ընթերցողների համար»¹: Կամ այս մեկ փաստը նա բավական է համարում եզրակացնելու, որ հայ աշուղներն այդ ժամանակ

¹ Ֆրիկ, Դիվան, Նյու-Յորք, 1952, էջ 124:

պարսկերեն տաղերով հանդես էին գալիս ժողովրդի մեջ, և լսողները հայերեն տաղերի նման ընկալում էին դրանք:

Ինչպես սույն քառյակի որպես բնաբան օգտագործման փաստը, այնպես նաև առհասարակ Ֆրիկի ստեղծագործություններում բազմիցս նկատվող պարսկական ստեղծարարի համար բնորոշ բառերի, առանձին արտահայտությունների և ստեղծագործական հնարքների առկայությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ նա քաջ ծանոթ է եղել իր ժամանակի պարսկալեզու գրականությանը: Այս հետաքրքիր հարցը սերտ աղերս ունի հայ-իրանական գրական կապերի ընդհանուր հարցի հետ, որն իր հերթին արժանի է բազմակողմանի ուսումնասիրության: Սույն հոդվածի սահմաններում ավելորդ ենք համարում հանդամանորեն կանգ առնել այս հարցի վրա: Բավարարվենք միայն Ֆրիկի և Օմար Խայամի ստեղծագործություններից երկուսի մասնակի համեմատությանը: Բնորոշ է, որ այդ ստեղծագործությունների մեջ առկա են նաև բովանդակության ակնհայտ նմանություններ, որոնք նկատելի են հատկապես Ֆրիկի հիշյալ տաղերի սկզբի տողերում.

1. Օմար Խայամ—«Էյ չարիս, ամեն մի գծուծի հարստություն ևս տալիս.
...» և այլն:

Ֆրիկ—«Էյ չարիս, ըզվատի տունն կու ձեփես դու ոսկով
բոլոր...» և այլն:

2. Օմար Խայամ—«Էյ չարիս, ամբողջ չարիքը քո քրնախնդրությունից է,
Անարդարությունը քո հին սովորությունն է...»
և այլն:

Ֆրիկ—«Էյ չարիս, ամ քեզ ոնց ավտամ, երբ չունիս զոչ
ոյ մոտևոր,
Ոչ դաւ, ոչ երգումն ունիս, զի քո սիրտն է
խիստ նենգավոր...» և այլն:

Կրկնում ենք, որ մենք առանձին ուսումնասիրության առարկա չենք դարձրել հայ-իրանական գրական կապերի և ազդեցությունների հարցը և վերահիշյալ համեմատություններով ցանկանում ենք ուսումնասիրողների ուշադրությունը հրավիրել այս փաստի վրա: Մինչդեռ ուշագիտ համեմատական ուսումնասիրությունը կարող է մեծ չափով նպաստել այդ հարցի պարզաբանմանը: Բոլոր դեպքերում, սակայն, կասկածից դուրս է, որ Ֆրիկը ծանոթ է եղել իր ժամանակի պարսկական գրականությանը:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչու պարսկերեն քառյակը պահպանվել է միայն Ֆրիկի տաղերի Բողլեյան օրինակում, ապա պետք է հնթադրել, որ կամ հետագա որոշ գրիչներ ուղղակի չեն հասկացել այն, իսկ որոշ գրիչներ էլ նկատելով, որ դրան հաջորդում է արդեն հայերեն թարգմանությունը, ավելորդ են համարել արտագրել: Սակայն ավելի հավանական է առաջին ենթադրությունը, որի օգտին է խոսում այն փաստը, որ մեզ հասած հիշյալ ձեռագիր մատյանում պարսկերեն քառյակը արտագրված է մեծ ազավազումներով:

Վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ

1. Պարսկերեն քառյակը ոչ թե հետագա գրիչների պատահական հավելում է, այլ այն գրված է եղել իր իսկ Ֆրիկի կողմից և առկա է եղել հեղինակի ինքնագիր դիվանում:

2. ՓԱՓԱԶՅԱՆ

ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ԱՍԻՄԻԼՅԱՏՈՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ¹

Ծանր է եղել հայ ժողովրդի վիճակը 16—18-րդ դարերի պարսից տիրապետության շրջանում: Հայ աշխատավորությունը ոչ միայն ենթարկվում էր տնտեսական և սոցիալական անավոր ճնշման ու հարստահարման, այլև նրա նկատմամբ կիրառվում էր դաժան ազգային և կրոնական հալածանքների հետևողական քաղաքականություն:

Այդ հալածանքների գլխավոր նպատակն էր բռնի կերպով հավատափոխ անել, ձուլել և ի վերջո վերջնականապես ասիմիլյացիայի ենթարկել բոլոր ազգային փոքրամասնություններին և հատկապես քրիստոնյա ու այլադավան ժողովուրդներին:

Հայտնի է, որ հայերի, վրացիների և մյուս այլադավան ժողովուրդների ասիմիլյացիան 16—18-րդ դարերում տեղի էր ունենում հավատափոխության եղանակով, և դա միանգամայն հասկանալի էր: Ֆեոդալական հասարակարգում, ինչպես այդ մասին գրում է Էնգելսը, «եկեղեցու դոգմաները միաժամանակ և քաղաքական աքսիոմաներ էին, իսկ աստվածաշնչի խոսքերն ամեն մի դատարանում օրենքի ուժ ունեին: Նույնիսկ այն ժամանակ, երբ արգեն կազմվել էր իրավաբանների առանձին դասը, իրավագիտությունը դեռ երկար ժամանակ մնում էր աստվածաբանության խնամակալության տակ: Մտավոր գործունեության բոլոր բնագավառների վրա տարածվող աստվածաբանության գերիշխանությունը միաժամանակ այն հանգամանքի անհրաժեշտ հետևանքն էր, որ եկեղեցին գոյություն ունեցող ֆեոդալական հասարակարգի ամենից ընդհանուր սինթեզն ու սանկցիան էր հանդիսանում»²:

Հասկանալի է, որ Էնգելսի այս դրույթը հավասարապես վերաբերում է նաև իսլամական աշխարհին, որտեղ պետական-քաղաքական վարքագիծը խստորեն ենթարկվում էր Ղուրանի դոգմաներին և շարիաթի օրենքներին: Սեֆյան Իրանում կրոնական անհանդուրժողականության ձևով արտահայտվող ասիմիլյացիայի քաղաքականությունը վարվում էր շիիզմի դրոշի տակ, որի գլխավոր ոգեշնչողները շիա բարձրաստիճան հոգևորականներ էին:

Պատմիչներ Առաքել Դավրիժեցու, Ջաքարիա Սարկավագի, Գրիգոր Դարանաղցու և ուրիշների երկերում բազմաթիվ հիշատակություններ կան բռնի հավատափոխության և այդ պատճառով տեղի ունեցած նահատակության փաստերի մասին: Հանուն հավատի կատարվող նահատակության

¹ Զեկուցված է Մատենադարանի VII գիտական սեսիային, 1954 թ. դեկտեմբերի 29-ին:

² Ֆ. Էնգելս, Գյուլագիական պատերազմը Գերմանիայում, Երևան, 1940, էջ 46:

բազմաթիվ այլ փաստեր ցրված են նաև այլ և այլ ձեռագիր մատյանների հիշատակարաններում, «Յայտաւաւուրքներում» և այլուր: Սակայն շնորհիվ այն բանի, որ բռնի ասիմիլյացիայի քաղաքականութունը վերահիշյալ պատմական երկերում իր արտացոլումն է գտել սոսկ առանձին անհատների նկատմամբ դործագրվող բնութայն և դրա հետևանքով առաջացած նահատակութայն փաստերի արձանագրութայն միջոցով, այդ աղբյուրների ավյալներով հնարավոր է է լրիվ և ճշգրիտ պատկերացում կազմել մեր ժողովրդի ոչ-հեռավոր անցյալի պատմութայն կարևոր հարցերից մեկի մասին:

Բանն այն է, որ բռնի հավատափոխութայն նման հարկադրական ձևը, ինչպես ցույց են տալիս բազմաթիվ նահատակութայն փաստերը, այնքան էլ ցանկալի արդյունք չէր տալիս, այլ ընդհակառակը՝ սովորաբար վերջանալով դիմադրող անձնավորութայն սպանութայն, դառնում էր քրիստոնեութայն պրոպագանդայի մի նոր ազդակ: Թեև պետք է նշել, որ հայ պատմիչների ու ժամանակագիրների կողմից ավելի շատ արձանագրված և ընդգրկված են հատկապես այն դեպքերը, երբ հավատափոխութայն հարկադրանքը առիթ է տվել նոր վկայութայն, բայց և այնպես, հենց նույն սկզբունադրյուրներում քիչ չեն նաև հիշատակութայններ տարբեր ժամանակներում մահմեդականութայն ընդունած հայերի մասին:

Սեֆյան տիրապետութայն շրջանում, իրանական կառավարող շրջանների ասիմիլյատորական քաղաքականութայն ուսումնասիրութայն համար շատ ավելի կոնկրետ և հարուստ նյութ են պարունակում Մատենադարանի պարսկերեն բազմաթիվ վավերագրերը, հատկապես մուսուլմանական շարիաթական փաստաթղթերն ու զանազան վեճերի կապակցութայն հրապարակված «Ֆեթվաները» (فتویٰ):

«Ֆեթվա» բառացի նշանակում է «վճիռ», «որոշում»: Ֆեթվաներ տրվում էին ինչպես կենտրոնական «Դիվան-ալ-սադարաթի» (մայրաքաղաք կրոնական ատյանի), այնպես նաև տեղական (Թավրիզի, Նասիջևանի, Երեվանի) «Շարի» ատյանների կողմից այն դեպքերում, երբ քաղաքացիական կամ «Ուրֆի» դատարաններում նստող հաքիմները դժվարանում էին որևէ հարց վճել և դիմում էին մուֆթիին կամ շեյխ-ուլ-իսլամին, իսկ վերջիններս ելնելով մուսուլմանական շարիաթական սկզբունքներից, տալիս էին իրենց վճիռը, որը շահի կողմից վավերացվելուց և համապատասխան մատյաններում արձանագրվելուց ու կնքվելուց հետո՝ օրենքի ուժ էր ստանում:

Մատենադարանի Արխիվային բաժնում պահվող 50-ի չափ ֆեթվաները հիմնականում վերաբերում են «գիմմի» ոսյաթների (հայեր) քաղաքացիական իրավունքների, ջրղայի վճարման որոշ մանրամասնութայնների և հատկապես հայոց եկեղեցու իրավասութայնների ճշտման հարցերին և չափազանց կարևոր են հայ ժողովրդի ոսցիալ-իրավական վիճակի ուսումնասիրութայն տեսակետից: Առանձին հետաքրքրութայն են ներկայացնում հատկապես 17-րդ դարի այն ֆեթվաները, որոնք վերաբերում են ժառանգութայն հարցերին և որոնց մեջ չափազանց պարզորոշ կերպով իրենց իրավական ձևակերպումն են գտել իրանական կառավարող շրջանների և հատկապես տեղական դատական օրգանների ասիմիլյատորական ձգտումներն ու նպատակները:

Համաձայն շարիաթական օրենքի՝ բոլոր քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, որոնք վճարում էին հատուկ գլխահարկ, կամ ջրղյա,

իրավունք ունենին ազատորեն իրենց կրոնը դավանելու: Այդպիսի ժողովուրդներն ու համայնքները կոչվում էին «Ղիզյե գողար» — «جزیه گدار» («Ղիզյա հատուցող»), կամ «զիմմի» («պարտապան») ժողովուրդները կամ համայնքներ: 16—18-րդ դարերում հրապարակված գերագույն «Իիլան-ալ-սադարաթի» ինչպես նաև շեյխ-ուլ-խսլամների ու մուֆթիների ֆեթվաներում, որոնք մեծ մասամբ հաստատված են ժամանակի շահերի կողմից տրված ֆերմաններով, բազմիցս շեշտված է, որ «Էլաննավոր կերպով Ղիզյա հատուցող հայերին ոչ ոք իրավունք չունի ստիպելու, որ քրիստոնեական հավատքը թողնեն և մանմեդականություն ընդունեն»¹:

Հայ ուսյաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները («թաֆավութ» և «ֆար» — «تفاوت و فرع») բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետության ֆինանսների մեջ: Շատ հաճախ որոշ գյուղերից ստացվող գլխահարկը կազմում էր նույն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին:

Առաջին իսկ հայացքից թվում է, թե գլխահարկի ծանրությունը ինքնին պիտի պատճառ դառնար մեծ թվով, հատկապես չքավոր հայերի, հավատափոխության, սակայն պետք է սասել, որ հայ աշխատավոր ժողովուրդը նյութական խոշոր զոհողությունների գնով, ամենուրեք, համառորեն դիմադրում էր և հաստատակամորեն մերժում բազմիցս կատարվող հավատափոխության առաջարկները: Հայտնի է, որ 17-րդ դարում կոտորածի սպառնալիքի տակ մասսայական հավատափոխության դեպքեր տեղի ունեցան Իրանի խորքերը քշված հայ գաղթականության խիստ մեկուսացած մի քանի բեկորների հետ հատկապես Փարսի և Մազանդարանի նահանգներում, իսկ հայ ժողովրդի հիմնական մասսան, ինչպես մայր հայրենիքում, այնպես նաև Սպահանում և Նոր Ջուղայում, վճարելով Ղիզյան՝ վճռականորեն պայքարում էր ասիմիլյացիայի փորձերի դեմ:

Պարզ է ուրեմն, որ այս դեպքում, երբ համաձայն գոյություն ունեցող շարիաթական օրենքների, հայերը ծանր հարկատվության գնով շարունակում էին պահպանել իրենց հավատքը, հայ աշխատավորության բուն ասիմիլյացիայի գործը հաջողությամբ չէր կարող պսակվել: Մի կողմ թողած դեռ այն փաստը, որ հայ ազգաբնակչության ասիմիլյացիան օբյեկտիվորեն չէր բխում պետության շահերից, որովհետև այդպիսով պետությունը զրկվում էր բավական շոշափելի եկամուտի աղբյուրից: Մակայն շնորհիվ այն բանի, որ պետության օրենսդրական ֆունկցիաները գտնվում էին այդ հարցում անմիջապես շահագրգռված մուսուլման բարձրաստիճան հոգևորականության ձեռքում, վերջիններիս հաջողվում էր իրենց կողմից հրապարակվող ֆեթվաներով անցկացնել մի շարք օրենսդրական միջոցառումներ և հայ ազգաբնակչության որոշ խավի մեջ զգալի հունձ կատարել, կանգնեցնելով նրանց հավատափոխության ուղու վրա:

Շիաների մոտ վաղուց գոյություն ունեի, այսպես կոչված Իմամ-Ջահֆարի օրենքը, ըստ որի զիմմի ուսյաթների մուսուլման դարձած ազգականները իրավունք ունենին իրենց քրիստոնյա ազգականների ունեց-

¹ Մատենագարանի պարսկերեն լավերագրեր (ՄՊՎ) Թղթապանակ 1բ, վավ. №№ 132ա, 132բ, 132գ, 145 և այլն:

վածքը ամբողջապես գրավելու և նրանց իսպառ զրկելու ժառանգության իրավունքից:

16—18-րդ դդ. մեկ հասած բազմաթիվ կալվածագրերում հանդես եկող օտարող կամ գնող կողմերի անվան հիշատակմանը հաճախ նախորդում է «նոր մահմեդական» (Չաղիդ-ուլ-իսլամ» — چاغدی اولی) տերմինը, որից երեւում է, որ տվյալ անձնավորութունը նոր է մահմեդականություն ընդունել: Այդ պարզ երևում է հատկապես այն վավերագրերից, որոնց մեջ նոր մահմեդականություն ընդունած կողմը ժառանգական վեճերով հանդես է գալիս իր այն հարազատների դեմ, որոնք դեռևս պահպանում էին քրիստոնեական հավատը:

Այս առթիվ տրված բազմաթիվ բողոքագրերի և դատական պրոցեսների բավական ստվար գործեր կան պահպանված: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ, մասնակի բացառություններով, ժառանգության խնդրում միշտ էլ առաջնությունը տրվում էր մահմեդականություն ընդունած ժառանգներին: Բնորոշ է, որ կենտրոնական Դիվան-ալ-սադարաթի կողմից տրված ֆեթվաներում, որոնք առանց բացառության բոլորն էլ հաստատված են շահական ֆերմաններով, այդ առաջնության հարցը այնքան էլ սուր կերպով չի դրված: Մանավանդ, որ պահպանված վավերագրերը մեծ մասամբ վերաբերում են ոչ անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերին: Այնինչ, Երևանի, Նախիջևանի և այլ վայրերի շարիաթական ատյանների ֆեթվաներում, որոնց մեջ քննարկված են նաև անմիջական ժառանգների միջև առաջացած վեճերը, մուսուլման ժառանգներին տրվող առաջնության մոմենտը առանձնապես շեշտված է:

16—17-րդ դդ. հայկական աղբյուրներում ևս կան որոշակի վկայություններ այն մասին, որ շատ հաճախ որևէ մահմեդական գիմում էր Շար'ին և մի քանի կեղծ վկաներով «ապացուցում», որ ինքը այսինչ հայի ազգականն է և այդպիսով զավթում նրա ամբողջ ունեցվածքը, կամ նրա մի մասը: Այսպես, օրինակ, Զաքարիա սարկավազը իր «Պատմագրության» Ա. հատորի 42-րդ գլխում պատմում է, թե ինչպես քանաքեռցի ոմն Միքայել եպիսկոպոսի դեմ մի պարսիկ վեճ է սկսում և գիմելով Շար'ին պնդում է, որ ինքը ազգական է նրան, ուստի պետք է նրա հարստությունը վերցվի նրանից և տրվի իրեն:

Սկզբում Երևանի Շեյխ-ուլ-իսլամը բավարար ապացույցներ չգտնելով մերժում է նրա պահանջը և բազմաթիվ վկաների ստորագրությամբ կազմում է մի արձանագրություն, որով հերքվում է նրանց ազգակցությունը: Սահայն հետո պարսիկին հաջողվում է կաշառել Շեյխ-ուլ-իսլամին, որը երկրորդ գրությամբ իրավունք է տալիս նրան սեփականացնել Միքայել եպիսկոպոսի այգին: Իսկ երբ վերջինս նորից բողոքում է Շեյխին, նա պատասխանում է, թե թե սե սե ոչ էի ճշմարտութեամբ վերահասու եղեալ իրացն և այժմ հաւաստիաւ ծանեալ զի ազգական քո է նա, և ըստ օրինաց մերոց զամենայն ինչքն քո նմա պատկանի՞ս¹:

Թեև ի վերջո Միքայել եպիսկոպոսը Կոտայքի մելիք Դավութի միջոցով կարողանում է իր բողոքը տեղ հասցնել և Երևանի Թահմազկուլի խանը տեղեկանալով այն մասին, որ Շեյխը կաշառք է վերցրել ու փոխել իր վճիռը,

¹ Զաքարիա Սարկավազ, հ. Ա. էջ 73:

հրամայում է հեռացնել նրան այդ պաշտոնից և խայտառակել հասարակութ-
 թյան առաջ, սակայն կասկածից դուրս է, որ ազգակցությունը ապացուց-
 վելու դեպքում օրենքը իրավունք էր տալիս վերցնելու զիմմի ռայաթի ու-
 նեցվածքը և ամբողջությամբ տալու նրա մահմեդական ազգականին: Շեյխ-
 ուլ-իսլամը պատժվում է ոչ թե նրա համար, որ այդպիսի որոշում էր ըն-
 դունել, այլ նրա համար, որ կեղծել էր իրականությունը, և օտար մարդուն
 հայտարարել որպես հիշյալ եպիսկոպոսի ազգականը:

Մահմեդականութուն ընդունող հայերի ժառանգական իրավունքները
 ամրապնդելու տեսակետից չափազանց հատկանշական է 17-րդ դարի 20-ա-
 կան թվականներին, հավանաբար Երևանի Շարի կողմից հրապարակված
 ֆեթվան, որտեղ չորս առանձին հարցումներին՝ Շարի որոշակի պատասխան-
 ներ է տալիս: Մանոթխաննք այդ հարցերի և նրանց պատասխանների հետ:

Առաջին հարց. «Իմաստուն կրոնավորներն ու շիա դավանանքի գի-
 տունները, — որոնց խոսքը թող հավիտյանս ապրի աշխարհում, — քնն են
 հրամայում հետևյալ հարցի մասին. եթե Մեհդիկուլի անունով նոր մուս-
 սուլման դարձած մեկը մահանա և ունենա մեկ որդի Շահնազար անունով
 նույնպես մուսուլման, ինչպես նաև Զաքարիա անունով մուսուլման որ-
 դուց երկու թոռներ՝ Մարիամ և Փաթմա անուններով, այս դեպքում հեն-
 վելով այն սկզբունքի վրա, որ «բոլոր մերձավորները արգելում են հեռա-
 վորներին», հիշյալ Մեհդիկուլի թողած ժառանգությունը, անհրաժեշտ բո-
 որ մասհանումները կատարելուց հետո, արդյոք ամբողջությամբ պատկա-
 նում է վերոհիշյալ Շահնազարին, թե ոչ: Պարզեցե՛ք»:

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, պատկանում է Շահնազա-
 րին» և կնքում:

Երկրորդ հարց. «Իմաստուն մարդիկ, — որոնց խոսքը թող հավիտյանս
 ապրի ազնիվ մարդկանց շրջանում, — նմանապես թող հայտնեն իրենց
 խոսքը հետևյալ հարցի մասին. եթե Բարա անունով մի զիմմի վախճան-
 վի և ունենա երկու մուսուլման եղբոր որդիներ և մի անհավատ եղբայր
 և եղբոր որդիներ, այս դեպքում անհավատները զրկվում են զիմմի ժա-
 ռանգությունից, թե ոչ: Պարզեցե՛ք»:

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, երբ կա մուսուլման ժա-
 ռանգ, անհավատը ժառանգությունից զրկվում է» (կնիք):

Երրորդ հարց. «Նույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հարցի
 մասին. եթե նախ քան հիշյալ զիմմի ժառանգությունը նրա մուսուլման
 եղբոր որդիների միջև բաժանվելը, վերոհիշյալ զիմմի եղբայրը, որը նա-
 խապես զիմմի էր, մուսուլման դառնա և քանի որ որպես ժառանգորդ նա
 ավելի մերձավոր է քան մյուս եղբոր որդիները, այս դեպքում արդյոք եղ-
 բոր որդիները զրկվում են ժառանգությունից և ժառանգությունը ամբող-
 չապես պատկանում է միակ եղբորը, թե ոչ: Պարզեցե՛ք»:

Շեյխ-ուլ-իսլամը պատասխանում է՝ «Այո, այդպես է լինում և ժա-
 ռանգությունը պատկանում է ամենամերձավոր ժառանգորդին» (կնիք):

Չորրորդ հարց. «Նույնպես թող հայտնեն իրենց խոսքը հետևյալ հար-
 ցի մասին. եթե երբեք հիշյալ եղբայրը, որ իր զիմմի եղբոր միակ ժա-
 ռանգորդն է, վախճանվի և ունենա մեկ որդի, որը վերոհիշյալ Շահնազարն
 է, և հիշյալ թոռները, և այս դեպքում, երբ Շահնազարը, որ այսպիսով
 միակ ժառանգորդն էր դարձել և իրավունք ուներ ամբողջ ժառանգությունը



17-րդ դ. 20-ական թվականներին Երևանի Շեյխ-ուլ-Իսլամի կողմից հրատարակված ֆեթվան՝ Բաբայի թողած հարստությունը նրա մահ-մեղական ժառանգներին տալու և բրիտանյա ժառանգներին ժառանգությունից զրկելու մասին:

վերցնելու, վերոհիշյալ զիմմի որդին ևս մուսուլման դառնա և այդպիսով ինքը դառնա միակ ժառանգորդը, եղբայրներից ավագը լինելով հանդերձ, ավելի ուշ մուսուլման դարձածը կարճից է ավելի վաղ մուսուլման դարձած եղբորից խլել ժառանգության իրավունքը, թե ոչ: Պարզեցե՛ք¹:

Շեյխ-ուլ-Իսլամը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և կնքում: Այդպիսով ստացվում է հետևյալ պատկերը: Վախճանվել է Բարս անունով մի հայ: Սերունդներ չունենալու պատճառով նրա ունեցվածքը ժառանգում են եղբայրները: Բարսն ունեցել է երկու եղբայր, որոնցից մեկը մահմեդականություն էր ընդունել և վախճանվել էր թողնելով երկու որդիներ, իսկ մյուս եղբայրը, որը նույնպես երկու որդիներ ուներ, շարունակում էր մնալ քրիստոնյա: Բայց որովհետև այս դեպքում, համաձայն Շարի՛ի ֆեթվայի ժառագուծյունը հասնում էր մուսուլման եղբոր որդիներին և ոչ թե զիմմի եղբոր, ուստի վերջինս շտապում է մահմեդականություն ընդունել, որից հետո, որպես ավելի մերձավոր ժառանգորդ իրավունք է ստանում ժառանգելու եղբոր ունեցվածքը:

Պարզվում է ուրեմն, որ զիմմի ժառանգորդները, որքան էլ որ նրանք մերձավոր լինեին, զրկվում էին ժառանգությունից, եթե կային մուսուլման ժառանգորդներ: Իսկ այս վերջիններս որքան էլ որ նրանք ազգակցությամբ ավելի հեռու լինեին, այնուհանդերձ ժառանգության իրավունքը նրանց էր վերապահվում:

Այնուհետև մենք տեսնում ենք, որ նոր մահմեդականություն ընդունած եղբայրը, որ սկսում է անվանվել Մեհդիկուլի, նախքան մահմեդականություն ընդունելը արդեն ուներ երկու որդի՝ Շահնազար և Ջաքարիս անուններով, որոնցից Ջաքարիսն, որը եղբայրներից ավագն էր, զիմմի էր մնացել, իսկ Շահնազարը նույնպես մահմեդականություն էր ընդունել: Դրա համար էլ համաձայն ֆեթվայի, իր հոր՝ Մեհդիկուլի ունեցվածքը, որն իր հերթին ժառանգել էր իր եղբայր Բարսայից, նրա մահվանից հետո ամբողջությամբ անցնում է իր փոքր որդուն՝ Շահնազարին, իսկ մեծ որդին զիմմի լինելու պատճառով զրկվում է ժառանգության իրավունքից և հետագայում մահմեդականություն ընդունելով էլ նույնիսկ չէր կարող վերականգնել իր ժառանգական իրավունքները:

Ինչպես տեսանք, հավատափոխությունը ավելի հեռավոր ժառանգորդներին հնարավորություն էր տալիս ավելի մերձավոր ժառանգների ձեռքից խլելու բոլոր իրավունքները և նրանց լիովին զրկելու ժառանգությունից: Շարի՛ի ֆեթվաներում բավական պարզ ասված է, որ թեթե կա մուսուլման ժառանգ, անհավատները ժառանգությունից զրկվում են:

Շար՛ը միաժամանակ հնարավորություն էր տալիս զիմմի ժառանգներին անմիջապես մահմեդականություն ընդունելով վերականգնել իրենց իրավունքները: Սակայն այդ պետք է կատարվեր նախքան ամբողջ ժառանգության մուսուլման ժառանգների միջև բաժանվելը: Այլապես, ինչպես ասված է ֆեթվայում, ժառանգության իրավունքը պատկանում էր ավելի վաղ մահմեդականություն ընդունողին:

Միանգամայն հասկանալի է, որ ժառանգության պատճառով տեղի ունեցող հավատափոխության դեպքերը սոսնձնապես շատ էին քաղաքաբնակ

¹ ՄՊՎ, ԹԴԹ, 1ա, վավ. № 44:

ունևոր դասի շրջանում: Այդ պարզ երևում է կալվածագրերի մեծ մասից, որոնք բոլորն էլ հիմնականում վերաբերում են խոջաներին, արհեստավորներին, առևտրականներին և այլն: Հանգուցյալի թողած ժառանգությունը իրոք պետք է բավական շոշափելի լիներ, որպեսզի գրգեր նրա ժառանգներից մեկն ու մեկին հավատափոխության միջոցով դիմացինի ձեռքից խլելու ժառանգության իրավունքը:

Այսպես օրինակ, որոշակի վկայություն կա այն մասին, որ երևանցի մեծահարուստ խոջա-Սեթի որդի խոջա-Հակոբջանի սերունդները 17-րդ դարի վերջերին արդեն մահմեդականություն էին ընդունել¹: Որքան էլ որ տարօրինակ լինի, Շչադիդ-ուլ-խալամները մեջ կային նաև նախկին հայ հոգևորականներ:

Բռնի ասիմիլյացիայի նման երևույթների դեմ հայոց եկեղեցին մղում էր համառ և տևական պայքար: 17—18-րդ դդ. պահպանվել են բազմաթիվ խնդրագրեր, գրված ժամանակի կաթողիկոսների կողմից, որոնց մեջ բողոք է հայտնվում այն մասին, որ վերոհիշյալ օրենքների հիման վրա, շատ հայեր, որոնք հեռավոր ազգակցական կապեր ունեն տարիներ առաջ վախճանված մեկի ժառանգների հետ, մահմեդականություն են ընդունում և դիմում են Շարիին պահանջելով, որ այդ ժառանգների ձեռքից վերցվի նրանց ունեցվածքը ու տրվի իրենց: Խնդրագրերում բազմիցս շեշտված է, որ հայերը ընդունված կարգով ջիզյա են վճարում և կատարում են մյուս հարկային պարտավորությունները, սակայն տեղական շարիաթական օրդանների կողմից շարունակաբար խրախուսվում են նման միտումնավոր հավատափոխության երևույթները և հրահրվում ժառանգական վեճեր:

Այս գանգատներին սովորաբար շահը պատասխանում էր չափազանց ստանդարտ ֆերմաններով, որոնց մեջ հրահանգվում էր տեղական խաներին ու բեգլարբեգերին վերահասու լինել և հետևել, որ շարիաթական օրենքներին հակառակ անարդարացի որոշումներ չընդունվեն:

Բնորոշ է, որ հայ ոսյաթների սոցիալ-իրավական վիճակի և հայոց եկեղեցու իրավունքների հարցի շուրջը հրապարակված ֆեթվաներն ու ֆերմանները գլխավորապես վերաբերում են 17-րդ դարի 60-ական թվականներին: Հակոբ կաթողիկոս Զուղայեցուն էր վիճակված վճռական պայքար մղել օրըստօրե սաստկացող ասիմիլյացիայի բացահայտ տենդենցների և հատկապես էջմիածնի հարստահարման և նրա իրավունքների սահմանափակման քաղաքականության դեմ, որ մերկապարանոց կերպով գրք-սևորվում էր հատկապես Սաֆիկուլի խանի բեգլարբեգության շրջանում (1666—1674 թթ.):

Հակոբ Զուղայեցին այդ թվականներին հարկադրված է եղել Դիվան-ալ-սագարաթից պահանջելու նորանոր ֆեթվաներ, որոնց մեջ խոսվում էր հայկական համայնքին հնուց անտի շնորհված անյալի իրավունքների մասին, ինչպիսիք էին օրինակ՝ հայկական ծեսերով ամուսնության, թաղման և այլ արարողությունների ազատությունները:

1669 թվականին մայրաքաղաքի Դիվան-ալ-սագարաթից ստացված մի ֆեթվայում կարդում ենք, Վիլամի հարգարժան և իմաստուն գիտունները, որոնց խոսքը թող շարունակի իշխել մինչև դատաստանի օրը, Թնչ

¹ ՄՊՎ, Թղթ. 1ա, վավ. № 82:

են հրամայում հետևյալ հարցի մասին. եթե հայ ժողովրդի որոշակի համայնքներ, ինչպես նաև եպիսկոպոսներ, սևագլուխներ և ուրիշներ, որոնք բնակվում են Չուսուր-սաադի, Ուչքիլիսա (Էջմիածին) կոչվող վանքում, Շատիկ անունով հայտնի անապատում և թուման-ե Նախջևանի Եղեգիսի ձորում գտնվող Կարմիր վանքում և այլուր, ինչպես նաև Տաթևի և Վաղարիի վանքերում, Դարաբաս գյուղում, որ հայտնի է Աղվերձ անունով, և Ղափանաթի այլ վայրերում, զիմմի լինելով շարունակեն զիմմիների կարգով ապրել և համաձայն շարիաթական օրենքի կատարեն ջիզյայի պարտավորությունը ու նրան հակառակ որևէ գործ չկատարեն և ուզեն ըստ քրիստոնեական հավատքի իրենց ննջեցյալներին թաղել, ամուսնություն ակտեր կատարել, կոչնակ զարկել, աղոթել և աղոթքի ժամանակ բարձրաձայն երգել, այս դեպքում որևէ մուսուլման իրավունք ունի՝ հակառակ լուսավոր Շարի՛հ՝ հիշյալ համայնքին նեղություն պատճառել, արգելք հանդիսանալ և չթողնել, որ նրանք վերոհիշյալ ձևով իրենց կենցաղը վարեն, թե ոչ: Պարզեցեք¹:

Սադրը այս հարցին ժխտական պատասխան է տալիս և հաստատում է, որ ջիզյա վճարող հայերը այդ իրավունքները ունեն:

Թե հայաբնակ որոշ վայրերում ինչ աստիճանի են հասել կրոնական հարձանքները, այդ կարելի է եզրակացնել այն փաստից, որ եղել են դեպքեր, երբ հայերին թույլ չեն տվել իրենց «հայրենի» կալվածներում աղատորեն վարուցանքով զբաղվել: 1658 թվականին հրապարակված Ֆեթվայից հայտնի է դառնում, որ հարկ է եղել հարցում կատարելու բարձրագույն Դիվան-ալ-սադարաթին, թե՛ «երբ արդեն շարիաթական ձևակերպմամբ որևէ կալված որպես մուլք վերջնականապես պատկանում է որևէ հայի, համաձայն շարիաթի՝ այդ հային թույլատրվում է արդյոք այդ կալվածքը մշակելու, թե ոչ»:

Սադրը այս հարցին դրական պատասխան է տվել և կնքել²: Այս փաստը ինքնին ապացուցում է, որ շատ դեպքերում մուլքային սեփականություն իրավունքի հարցում հայերի նկատմամբ լուրջ դժվարություններ են հարուցվել:

Ֆեթվաներից երևում է, որ խիստ տարածված երևույթ է եղել նաև այն, որ երբ հայ ուսյաթներից որևէ մեկը առևտրական կամ այլ նպատակներով մի տեղից մի այլ տեղ էր գնում, այնտեղ նրանից պահանջում էին կրկին անգամ գլխահարկ վճարել, հակառակ դեպքում ստիպում էին հավատափոխ լինել: Այդ անշուշտ մեծ մասամբ տեղի էր ունենում հայ վաճառականների հետ, որոնցից այս եղանակով փորձում էին խոշոր գումարներ շորթել³:

17-րդ դարի 60-ական թվականներին Դիվան-ալ-սադարաթի մի շարք ֆեթվաներում Հակոբ կաթողիկոս Ջուղայեցին հարկադրված է եղել շեշտել տալ, որ «համաձայն գոյություն ունեցող օրենքների, հայ ուսյաթները ջիզյան վճարում են միայն իրենց հիմնական բնակության վայրում, մեկ անգամ, և այլ վայրերում ճամփորդելիս նրանցից ջիզյա չի պահանջվում»: Սակայն չնայած դրան, նույն ֆեթվաների բովանդակությունից պարզվում

¹ ՄՊՎ, Թղթ. 1բ., վավ. № 144, հմմտ. Թղթ. 1բ., վավ. № 145:

² ՄՊՎ, Թղթ. 1բ., վավ. № 107:

³ ՄՊՎ, Թղթ. 1բ., վավ. №№ 132ա, 132բ, 132դ, 146 և այլն:

է, որ հեռավոր վայրերում շատ հայ վաճառականներ ստիպված են եղել առերես հավատափոխ լինել և վերադառնալով իրենց բնակավայրը վերստին մկրտվել, որն իր հերթին տեղի է տվել նոր հետապնդումների տեղի մուսուլման բարձրաստիճան հոգևորականության կողմից¹:

Ինչպես դժվար չէ նկատել մեջբերված մի քանի փաստերից, կրոնական անհանդուրժողականության և բռնի ասիմիլյացիայի քաղաքականութունը անմիջականորեն անդադառնում էր հայ ուսյաթների տնտեսական կյանքին և շոշափում նրանց համար կենսական նշանակություն ունեցող տնտեսական խնդիրներ:


Վերը մենք առիթ ունեցանք շեշտելու, որ իրանական կառավարող շրջանների կողմից կիրառվող ասիմիլյացիայի քաղաքականութունը հայտնի սլաճաճաներով հայ ժողովրդի աշխատավորական խավերի մեջ իր համար նպաստավոր հող չէր գտնում, և ընդհակառակը, հավատափոխության դեպքերը հաճախակի էին հատկապես հայ շահագործող՝ ունեոր դասի շարքերում (կալվածատերեր, վաճառականներ, առևտրականներ և քաղաքաբնակ արիստոկրատիայի այլ ներկայացուցիչներ): 14—15-րդ դդ. պատմությունից ևս հայտնի է, որ այդ դարերում մասամբ բռնի մասամբ է կամավոր կերպով մասմեդականութուն ընդունեցին հայ լսոշոր ֆեոդալական տների մի շարք աչքի ընկնող ներկայացուցիչներ:

Այս հանգամանքը առավել ևս գալիս էր մտահոգելու հայոց եկեղեցու գործիչներին, որովհետև այդպիսով խարխլվում էին եկեղեցու ինչպես հասարակական, այնպես նաև տնտեսական հիմքերը: Եվ ահա մենք տեսնում ենք, որ այս տարիների կաթողիկոս Հակոբ Ջուղայեցին հանդես է գալիս ասիմիլյացիայի քաղաքականության դեմ ուղղված պայքարի գլխավոր կազմակերպչի դերում: Նա առաջին հերթին փորձում է զանազան սկզբունքային հարցերի կապակցությամբ գերագույն Դիվան-ալ-սադարաթից ձեռք բերել հաստատուն ֆեթվաներ և դրանք վավերացնել տալ շահական ֆերմաններով: Այդ ֆեթվաները շարիաթական-նոտարական պատճեններով բազմացվում էին և ուղարկվում բոլոր թեմերին: Ապա նա շրջագայում էր խոշոր հայաբնակ կենտրոնները և ամենուրեք կազմակերպում վանքերի ու եկեղեցիների վերականգնման և վերանորոգման գործը: Նրա ստացած ֆեթվաների մեծ մասը հատկապես վերաբերում է Հայաստանի տարբեր վայրերում (Էջմիածին, Մուղնի, Խոր-Վիրապ, Մեղրի, Ագուլիս, Աստապատ և այլուր) գտնվող վանքերի վերանորոգման իրավունքներին, որովհետև ամեն անգամ երբ հայերը ձեռնարկում էին վանքերի ու եկեղեցիների վերանորոգման, տեղական շարիաթական օրգանների կողմից արգելքներ էին հարուցվում և հարկ էր լինում այդ մասին առանձին ֆեթվայով թուլյություն ստանալ Սպահանից²: Ինչպես գիտենք, Հակոբ Ջուղայեցին իրեն հատուկ եռանդով առանձին ուշադրություն էր նվիրում նաև հայերեն գրքերի տպագրության կազմակերպման հարցին:

Հայոց եկեղեցու և հայ համայնքի իրավունքների այս փաստագրումը անգոր էր կանխելու ազգային հայաժանքների և կրոնական ռեպրեսիաների ալիքը, որը գնալով ավելի էր մոլեգնում: Երևանի բեգլարբեգ ընչաքաղց

¹ ՄՊՎ, Թղթ. 1ք, վավ. ՆՆՆ 132ա, 132բ, 132դ, 146:

² ՄՊՎ, Թղթ. 1ա, վավ. Ն 67, Թղթ. 1ք, վավ. ՆՆՆ 134, 136, 146 և այլն:



1669 թ. հրապարակված Շահ-Սուլեյմանի հրովարտակն ու Դիվան-ալ-Սադարաթի ֆեթվան հայերից միայն իրենց բնակության վայրում շիզյա գանձելու և ավերված եկեղեցիները միայն նախկին ձևով և նույն շինանյութերով վերանորոգելու մասին:

Սաֆիկուլի խանը ի դեմս Հակոբ Զուղայեցու տեսնում էր մի անձնավորության, որն իր հեղինակությամբ, վայելած ժողովրդականությամբ և գործիմացությամբ կարողանում էր լուրջ հակահարված տալ հայերի նկատմամբ կիրառվող ասիմիլյացիայի քաղաքականությանը և պայքարել նրա կողմից արտահայտվող հարստահարման փորձերի դեմ: Ուստի, երբ կաթողիկոսը 1672 թվականին, արդեն հուսահատված ստեղծված ծանր պայմաններից, փորձեց անձամբ գնալ Սպահան շահի հետ հանդիպելու, Սաֆիկուլի խանը արգելեց հանդիսացավ և ճամփից ետ վերադարձնելով արգելափակեց նրան Երևանի Անանիա առաքյալի վանքում:

Մեր կարծիքով, 1672—73 թվականներին է վերաբերում նաև Հակոբ Զուղայեցու նամակը ուղղված ուսուսաց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին, երբ նա խանի հրամանով բանտարկված լինելով, չկարողանալով գնալ Սպահան և չունենալով օգնության ոչ մի հույս, հավանաբար իրեն շրջապատող հայ գործիչներին խորհրդով նպատակահարմար է գտել դիմել Ռուսաստանի կայսրին, որպես քրիստոնյա պետության վեհապետի և խնդրել նրա միջամտությունը հայերի նկատմամբ Սեֆյան Իրանի վարած քաղաքականության հարցում:

«Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրա պարսից պաշտոնյաների կողմից տրվում են անա օտարոտի հարկեր,— գրում է նա իր նամակում, — և մեզ, որ չենք կարողանում մեր չքավորության և աղքատության շնորհիվ հատուցանել այդ հարկերը, քշում են դեպի բանա (ընդգծումը մերն է — Ն. Փ.), չարչարում են, տանջում և վերջապես, որ հետինն ու գլխավորն (է) մահմեդականների նպատակներին՝ իրենց դավանանքն են հարկադրում ընդունել: Եթե այդչափ հալածանքները զրկեին մեզ միայն հարստությունից և աշխարհային ասացվածքներից, չարիքը փոքր կլիներ, և ես լուրջան կտայի այդ բայց երբ տեսնում եմ, որ օր օրի վրա մեր ի Քրիստոս սընվող գավաղները հեռացած (մայրական) ստիսքից, խաբված պատանիները նավով հեռանալիս, չափահասներին ու գիտակցության եկածներին ուժով մղված դեպի հավիտենական փրկության հակառակ դավանանքը, — չկարողանալով տանել այդքան մեծ կորուստը, անա, արցունքներ թափելով առ Աստված՝ նրա պատիկերի առաջ, մոռենում եմ նաև յուր թագավորության մեջ նրա տեղապահ Կայսեր, Ձերդ Մեծությանը, որպեսզի բարեհաճե օգնել մեզ, խեղճությունից ճնշվածներին, և երբ Նորին ամենազոր Մեծությունը պարսիկների մոտ զեսպաններ ուղարկելու լինի մի քանի խոսք (ասել) ի պաշտպանություն մեր ստացվածքի... յուր թագավորական գիվանագետներին հրամայե ազդել: Ռուս իշխանությունը մեծ նշանակություն ունի պարսիկների աչքում և գուցե առաջիկայում հավակնություն չունենան այնքան տանջել նրանց, որ ի Քրիստոս-Աստվածն ունեցած ընդհանուր հավատի շնորհիվ, կարող կլինեն Ձեզ ուղղել իրենց հայացքը»¹:

Նամակի մեջ բերված հատվածից պարզորեն երևում է, որ այդ ժամանակ Հակոբ Զուղայեցին դեռևս հավատում էր, որ հալածանքներն ու հարստահարության դեպքերը «պարսից պաշտոնյաների» անձնական նախաձեռնության հետևանք են և որ եթե ուսուսաց ցարը իր գեսպան-

¹ Ա. Հովհաննիսյան, «Հակոբ Զուղայեցու մի գրությունը ուսուսարքունիքին», Արարատ, 1915 թ., էջ 780—81. հմտ. Армяно-русские отношения в XVII веке, րախներեն բնագիր՝ էջ 98, ուսու. թարգմ.՝ էջ 257:

ների միջոցով հանգես դա հայերի պաշտպանությամբ, ապա շահը կարող է սաստել նրանց և թույլ չտալ, որ պետզի ճնշեն հայերին: Նամակի բովանդակությունից միաժամանակ երևում է, որ նրա հեղինակին (ավելի ճիշտ՝ հեղինակներին) հուզող հիմնական հարցը ժողովրդին սպառնացող ասիմիլյացիայի և ձուլման վտանգն էր, կամ ինչպես ասված է նամակում, «մեծ կորստյան» վտանգը: Եվ իրոք, հայ աշխատավոր ժողովուրդը կարողանում էր նյութական ծանր դոհողությունների դնով հատուցել օրինական բոլոր հարկերն ու տուրքերը և այդպիսով պահպանել իր ազգային տրագիցիաները: Մինչդեռ, ինչպես մենք տեսանք, միայն արտակարգ օրենսդրական միջոցառումների, տնտեսական ապօրինի ճնշումների, կամ ինչպես ընդունված էր ասել, «շլթադի» (شلتاق) միջոցով էր, որ իրանական ասիմիլյացիաները փորձում էին կյանքում իրագործել հայերի բռնի ասիմիլյացիայի քաղաքականությունը:

Փաստեր կան ենթադրելու, որ այս դիմումը անհետևանք չի մնացել, որովհետև, երբ 1674 թվականին Հակոբ Զուղայեցուն հաջողվում է դադարագողի փախչել գեպի Սպահան, Սաֆիկուլի խանը մի ընդարձակ ամբաստանագիր է ուղարկում շահ Սուլեյմանին, զրպարտելով կաթողիկոսին: Խանի այս նամակը ստացվում է նախքան Հակոբ կաթողիկոսի Սպահան հասնելը: Սակայն շահը այդ գրությունը դեռ լրիվ չընթերցած, տեղն ու տեղը պատում է այն, այրում իր մոտ գրված կրակարանի վրա և դայրացած գոչում. «Սաֆի Դուլի խանն քակ է դերկիրն, և ինքն զիւր վնասն դնէ ի վերայ սևագլխոց»¹: Պետք է ենթադրել, որ շահը, նրա հետ միասին նաև էթեմագ ուղղովլեն, արգեն ենթարկվել էին որոշ հարցապնդման Մոսկովյան դեսպանների կողմից: Մասամբ դրանով պետք է բացատրել և այն, որ Հակոբ կաթողիկոսը շատ սիրալիր ընդունելություն է գտնում արքունիքում և մեկ տարի հետո, 1675 թվականին նոր խանի՝ Թավրիզի Ռուստամ խանի որդի Սաֆիկուլի խանի հետ վերադառնում է Երևան, իսկ նախկին Սաֆիկուլի խանը ձերբակալվում է և զրկվում իր ամբողջ կարողությունից:

Սակայն ֆեոդալական այնպիսի մի երկրում, ինչպիսին Սեֆյան Իրանն էր, որտեղ յուրաքանչյուր խան ինքն իրեն համարում էր սովյալ նահանգի լիիրավ տերն ու տնօրենը, որի առանձին նահանգներում կենտրոնական իշխանության ստվերն անգամ չէր երևում, նման արտաքին զիվանագիտական միջամտությունները չէին կարող որևէ ազդեցություն գործել և կանխել այն բոլոր չարիքները, որոնք բխում էին պետական-հասարակական ամբողջ սիտեմից:

Այս երկրորդ Սաֆիկուլի խանը ոչ միայն վերջ չտվեց կրոնական հալածանքներին, այլ նորահնար արգելքներով գերագանցեց իր նախորդին: Նա ձեռնարկեց մի շարք ուժեղ ռեպրեսիաների՝ ուղղված Երևանի բեգլարբեգության մեջ բնակվող հայ ազգաբնակչության դեմ: Այս խտրական և անհանդուրժողական քաղաքականությանը Երևանի տարբեջանական համայնքը պատասխանեց միահամուռ ապստամբությամբ, որը հայ-աղբբեջանական դարավոր բարեկամության և եղբայրության պայծառ էջերից մեկն է կազմում:

¹ Զաքարիա Սարկավագ, հատոր 2, էջ 80:


«...և արարին խորհուրդ, — գրում է Ջաքարիա Սարկավազը, — և եզին գլխաւոր ինքեանց զումն Յաթալի անուն, և անուանեցին զինքեանց Ղաւրափաշայ: Եւ խորհեցան զկորուստ խանին՝ ասելով սա... ասէ, յաւուրս անձրևի քրխտոնեայք մի ելցեն արտաքս. մեք ահա զրացի եմք քրխտոնէից և խառն ի խուռն կամք ընդ նոսա. առևտուր ի մխառն լինի, և շահս քաղումս ունիմք ի նոցանէ և սա կամի զրկել զմեզ ի շահից մերոց: Եւ զի, ասէ, յաղօթարանս քրխտոնէից մուսրման մի մտցէ: արգ զամենայն ցաւագարս մեր եկեղեցիքն բժշկեն. այլ և տեղի զըօսանաց մերոց եկեղեցիքն են. զմեռեալս թարց հրամանաց իմոց ասէ՝ ոչ թաղել, ապա ուրեմն հարկս կամի առնուլ ի մեռելոց: Եւ զգողս ոչ պատժէ, այլ առնու տուգանս՝ և թողու. և նոքա դարձեալ առնեն դողութիւն: Ջայս և այլ քաղում չարիս նորա գրեցին և ձեռամբ թագաւորական ծառայի առաքեցին առ շահն և ինքեանք յարեան ի վերայ խանին և մուծին ի տուն, և ոչ թողին ելանել արտաքս: Այլ և կնքեցին զամենայն դրունս ամբարացն և չափով տային զկերակուր նորա: Եւ այսպէս տառապանօք պահեցին զնա մինչև եկն այլ խան և զնա հալածեցին և ելեալ զնաց յԱսպահան և երկիրս մնաց խաղաղա՛:

Հակոբ Զուղայեցեու և իր գործակիցները հայ վաճառականության ու մեղիքները համար ավելի քան պարզ էր գառնում, որ փրկության միակ միջոցը երկրի շուտափութ լազատագրումն էր պարսկական լծից: Նույն օրերին, երբ Երևանում տեղի էին ունենում վերը նկարագրված դեպքերը, էջմիածնում գումարվում էր դադանի ժողով, ուր քննարկվում էր երկրի ազատագրման հարցը:

Ինչպես գիտենք, ազատագրական այս ձեռնարկը սկիզբն էր շուրջ 150-ամյա այն հերոսական պայքարի, որ մղեց հայ ժողովուրդը, և որը ի վերջո, շնորհիվ ռուսական պետության ու ժողովրդի օգնության, հայ ժողովրդի Արևելյան հատվածի համար պսակվեց հաջողութամբ:

Պատմական Հայաստանի մի զգալի մասը կարողացավ թոթափել իրանական ասիմիլյատորների ծանր լուծը և մտավ զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող ռուսական պետության հովանու տակ:

¹ Ջաքարիա Սարկավազ, հատոր 2, էջ 90:



А. Д. Папазян

Об одной рукописи „Книги спасения“ Абу-Али Ибн-Сина

(Представлено С. Т. Еремяном 30. VII. 1956)

Тысячелетний исторический период отделяет нас от Ибн-Сина. Но, однако, он остается для нас выдающейся светлой личностью, энциклопедические знания которого до сих пор привлекают к себе внимание современных передовых мыслителей.

Ибн-Сина оставил около ста научных трудов, посвященных вопросам философии, математики, медицины, астрономии и т. д. Кроме его научных трудов до нас дошли приписываемые ему стихотворения, в том числе имеющие светскую тематику куплеты на персидском языке „дари“ (таджикский язык). Некоторые из куплетов направлены против высших клерикально-реакционных слоев, которые на каждом шагу преследовали Абу-Али Ибн-Сина за его смелые, прогрессивные идеи, называя его „заблудившимся еретиком“.

Более известным, снискавшим всемирную славу, из медицинских произведений Ибн-Сина является его объемистое произведение „Канон медицины“ (Ал-канун фил тибб — القانون في الطب). Из его философских произведений наиболее известными являются „Ишарат — اشارات“ (Замечания), „Хикмати Алайи — حکمت علائی“, и, наконец, восьмидесятитомное „Китаб ал-Шафа — کتاب الشفاء“ (Книга исцеления), содержащая просторные статьи о логике, о естественных науках (физика, метафизика), о математике и о богословии.

Такого же содержания (только без математики) известна еще однотомная книга, названная „Китаб ал-Наджат — کتاب النجات“ (Книга спасения).

В фонде персидско-арабских рукописей Матенадарана (Государственного хранилища древних рукописей при Совете Министров Арм. ССР) под № 45 имеется очень интересный экземпляр „Китаб ал-Наджат“, имеющий достойные внимания приложения.

Место написания рукописи не было возможно установить, так как об этом в ней не упоминается. Рукопись была написана Рашидом

Ибн-Сафи-эд-дин Сипехри в 1036 г. хиджри (1626 г.). Рукопись состоит из 125 листов размером 23×17 см, написана почерком „насах“ на каждой странице по 22—23 строки.

„Китаб ал-Наджат“ давно уже известен научному миру. До сих пор известны два издания „Китаб ал-Наджат“— римское 1593 г. и константинопольское 1881 г. К сожалению, нам не удалось найти ни одно из этих изданий для сравнения с рукописным экземпляром, находящимся в Матенадаране. Но из данных, собранных нами, выясняется, что в римском и константинопольском изданиях содержатся только статьи Ибн-Сина, посвященные логике, естественным наукам и богословию¹.

В этих двух изданиях отсутствует раздел приложения, который мы находим в рукописном экземпляре, хранящемся в Матенадаране.

О том, из каких соображений и для какой цели Ибн-Сина составил это краткое пособие, мы узнаем из следующих строк предисловия рукописи.

„Шейх ул-Райис Абу-Али-Гусейн Ибн-Абдулла Ибн-Сина говорит: Достойные люди из группы братьев, которые жаждали мудрости и философии, обратились ко мне с просьбой составить им одну книгу, которая содержала бы все то возможное, к чему стремятся многие. [Они обратились ко мне с просьбой], чтобы я собрал все основные [вопросы], охватывающие основы мудрости. [Они] попросили также, чтобы я рассказал им, во-первых, о законах логики, потом перешел бы к естественным наукам и после рассказал им о геометрии и математике так, чтобы это помогло им в решении математических теорем. Далее я должен был рассказать об астрономии, о движении, о телах, о пространстве, о ширине и длине спутников, оставляя в стороне законы, необходимые для летоисчисления, вопросы восхода и захода солнца и счета времени. Математику я должен был завершить, говоря о музыке. В конце я должен был изложить науку богословие, говоря о вопросах потустороннего, о нравственности, добродетели, которыми только можно достичь описания в этом море мук. По этой причине, я, уповая на бога, составил эту книгу, по их желанию“.

Из этих слов предисловия выясняется, что Ибн-Сина поставил себе целью составить, по просьбе научных кругов, по образцу „Китаб ал-Шафа“, краткое пособие, в котором кроме глав, посвященных логике, естественным наукам и богословию, должны были быть особые главы о геометрии, математике, астрономии и музыке. Как видно, упомянутые издания „Китаб ал-Наджат“ полностью не содержат вышеуказанных дисциплин.

Из последних слов предисловия можно предположить, что в предварительных экземплярах были указанные дисциплины, которые

¹ III глава римского издания „Китаб ал-Наджат“ озаглавлена „Риторика“. Константинопольское издание состоит из двух глав — „Философия“ и „Естественные науки“.

по каким-то причинам были изъяты писцами, после чего в настоящем экземпляре остались вышеуказанные три раздела.

Приложение хранящегося в Матенадаране рукописного экземпляра, составленное Шейх ул-Хаким Могамедом Джузджани, близким учеником Ибн-Сина, проливает некоторый свет на вопрос, почему этих дисциплин нет в изданиях „Китаб ал-Наджат“.

В нашей рукописи „Китаб ал-Наджат“ завершается на странице 108-а, имеющей особое упоминание о том, что рукопись была сравнена с предыдущим экземпляром, из чего выяснилось родство переписанного экземпляра с подлинником.

Приложение начинается со страницы 108 б следующими словами: „Шейх ул-Хаким Абу Убейдулла Абдул-Вахидин Могамед говорит: Когда я находился на службе у Шейх-ул-Райис Абу-Али, я изъявил желание. изучить его труды и рукописи, на что он охотно согласился, так как по своей привычке он с любовью предоставлял их всем желающим. [В это время] среди его философских трудов после „Китаб ал-Шафа“ славился „Китаб ал-Наджат“, содержащий статьи о логике, естественных науках и богословии. По некоторым препятствующим обстоятельствам он не смог поместить свои заключения о математике, то, что он находил необходимым, вследствие чего книга осталась незавершенной. Но я имею под рукой его книги о математике, из которых наилучшая является кратким изложением книги Эвклида о геометрии, где [Ибн-Сина] по возможности изучил и уточнил Эвклида и смог найти путь ознакомления с книгой „Магести“. Кроме этих книг он имеет одно краткое пособие о музыке.

Для добавления этого труда [Ибн-Сина] я думал приложить к нему вышеуказанные рукописи, но так как не нашел в его рукописях чего-нибудь относящегося к арифметике, я решил сделать это добавление из его книги об арифметике, как указатель для изучения музыки. У него имеются и книги об общей астрономии и книги для обучения формирования планет, как например сокращение „Магести“.

Как видим, в своей книге Ибн-Сина не изложил все то, о чем он обещал в предисловии. Джузджани ясно не говорит о причинах, заставивших Ибн-Сина в свою книгу не включить главы о геометрии, об арифметике, о музыке, и почему Ибн-Сина непосредственно после главы, посвященной естественным наукам, излагает главу о богословии. Из сообщения Джузджани мы узнаем также, что у него имелись рукописи, помещенные в книге дисциплин, кроме рукописей тех дисциплин, которые не вошли в книгу. Объяснение причин, помешавших Ибн-Сина исполнить свое намерение, нужно искать в его беспокойной, полной скитаниями биографии.

Таким образом, в предисловии рукописного экземпляра, хранящегося в Матенадаране „Китаб ал-Наджат“, Ибн-Сина намеревался обсуждать вопросы многих дисциплин, но остановился лишь на вопросах логики, естественных науках и богословии.

жизни великого ученого. Из многих произведений Джузджани мы узнаем об отдельных трудах Ибн-Сина, посвященных астрономии, геометрии, арифметике, музыке и т. д.

С этой точки зрения достойно внимания предисловие Джузджани к приложению арифметики. Вот что пишется в этом предисловии:

„Шейх ул-Хаким Абу Убейдулла Абдул Вахидин Могамед ал-Джузджани говорит: Я собрал здесь истолкования законов арифметики Шейх ул-Райис Абу-Али к „Книге исчисления“ Эвклида, где он (Ибн-Сина), кроме важнейших вопросов, оставил в сторону часть из вопросов о свойствах и типах цифр, о чем учитель хотел бы написать в своей „Книге спасения“, которая, однако, не содержит таблиц и их свойств“.

بسم الله الرحمن الرحيم والشع الحمد لله الذي جعلنا من عباده عبدوا وحيداً من عباده عبدوا وحيداً
 اني جامع في هذه الرسالة اصول علم الاعداد ما يطبق على التمام الذي ذكرته وذكرنا فيها ما احاط
 الشرح والشرح على رحمة الله عليه ووضوئه على تعاليم كتابه القديم في الاعداد وتوازي اكثر
 مما قيل في الاعداد من انواع الاماها المشهور منها والذم لا نستطيع المعامضة في كتاب النجاة وغيره
 شتمل بذكر الجداول وخواصها الله ما هو ان الاعداد اعداد محمد وهو قسم اول
 الى زوج وترد والعدد الزوج هو الذي يمكن ان يقسم بشيئين متساويين صحيح ولا يكونان وجودي
 قسمه نوعاً الاعداد جميعاً لان كل واحد منهما واحداً للآخر زوج وان كان احدهما زوجاً فالآخر فرد
 والعدد الفرد هو الذي لا يمكن ان يقسم بشيئين متساويين زوجين احدهما زوجاً والآخر فرد
 نوعاً الاعداد كليهما اعني الزوج والفرد ومن اشهر خواص الاعداد مطلقاً ان كل عدد فانه نصف
 حاشيته وهما عددان وليا من جانب الفلة واكثر من واحد سواء من ذلك خمسة وانيف
 ستة واربعه ونصف سبعة وبلانة ونصف ثمانية واثنين ونصف احد وتسعة هذه الاعداد الستة
 ولما يمكن لواحد الاحاسيد واحدة كان نصفه . الاعداد المتوالية اذا كان عددها
 زوجاً امان الاوسطه يكون نصف حاشيته وان كان عددها زوجاً امان الاوسطه يكون نصف حاشيته
 يجمع حاشيتها سواء اذا كان الاعداد سواراً من الاعداد الى التسعة فان عددها تسعة وواظنها
 تسعة ونصف حاشيتها مساوية لجمع الاربعة والسبعة هذا فيما كان عددها زوجاً واما ما كان عددها
 زوجاً فهو من الاعداد العشرة وعددها زوج وطا واسطان ستة وخمسة وجمعها مساوية لجمع
 اربعة وسبعة والجمع بله ثمانية وكذلك الاعداد اعداد واذا اردنا ان نجمع الاعداد المتوالية
 من الواحد كما كانت فانا نصرف نصف المربع في عدد المرات زيادة واحد مما بلغ فهو جمع تلك الاعداد
 مثله زيد ان نجمع من الواحد الى عشرة فنصف العشرة وهو خمسة والعشرة زيادة واحد وهو احدى عشر
 فجمع خمسة وعشرون وهو جمع المراتب العشرة من الواحد الى العشرة كل اعداد متوالية يندى من الواحد الى
 حيث بلغ اذ جمع من الواحد الى ذلك العدد وترجع الى الواحد فانه يكون مساوية لجمع الاعداد الاخير
 مثله ما ذكرنا اذ جمع الواحد الى العشرة ورجع الى الواحد يكون مائة وهو مساوية لجمع الاعداد اذ جمع
 اعداد متوالية من الواحد والجمع الاول مثله ونصف العدد الاخير والجمع الثاني نصف العدد الاخير
 والجمع الثالث نصف ونصف العدد الاخير والجمع الرابع ثلثة اضعاف العدد الاخير والجمع

Первая страница отдела арифметики приложения
 „Китаб ал-Наджат“.

Матенадаран, рукопись № 45, стр. 118-а

Здесь также мы встречаем упоминание о том, что Ибн-Сина имеет особое истолкование „Книги исчисления“ Эвклида, из которого Джузджани делает краткие выписки в конце книги „Китаб ал-Наджат“.

Ценны и его сведения о любезном отношении Ибн-Сина к своим ученикам, к ученым кругам, о его готовности помогать людям, жаждущим приобрести знания, которым он с любовью предоставлял свои труды, рукописи — плоды его упорной и длительной работы.

Эти отрывистые сведения Джузджани характерны для получения представления, во-первых, о методах работы средневековых ученых и, во-вторых, свидетельствуют о всесторонних и глубоких знаниях Ибн-Сина и о его высоких моральных качествах как ученого, человека-гуманиста.

К сожалению, мы не можем говорить о недостатках и преимуществах рукописи, находящейся в Матенадаране, так как под рукой не имеем другого экземпляра для сравнения с настоящим. Наше исследование показывает, что хранящаяся в Матенадаране под номером 45 рукопись является одним из ценных экземпляров „Китаб ал-Наджат“ великого энциклопедиста средневековья — Абу-Али Ибн-Сина. Подробное изучение этого рукописного экземпляра несомненно обогатит наши знания о богатом наследии Ибн-Сина.

Институт истории
Академии наук Армянской ССР

Հ. Գ. ՓԱՓԱՅԱՆ

Արու. Ալի Իբն-Սինայի «Փրկության գրքի» մի ձեռագիր օրինակի մասին

Արու. Ալի Իբն-Սինայի գիտական հարուստ ժառանգության մեջ հայտնի է նաև «Քրիթար ալ-Նաջաթ» («Փրկության գիրք») վերնագիրը կրող մի մուղավածու, որտեղ մեծանուն գիտնականը շարագրել է տրամաբանության, բնագիտության և աստվածաբանության վերաբերյալ իր կատարած ուսումնասիրությունների արդյունքները:

Երևանի Մատենադարանի (Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Գեոտական Ձեռագրատուն) արքայապետ ձեռագրերի ֆոնդում № 45-ի տակ գրանցված է «Քրիթար ալ-Նաջաթի» 1628 թ. մի արժեքավոր ձեռագիր, որը սակայն, բացի վերոհիշյալ գիտնականներից, ունի նաև երկրաչափության և թվաբանության առարկաներին նվիրված հավելվածային բաժին, գրված Իբն-Սինայի մտերիմ աշակերտներից մեկի՝ Արու-Ուրբեյգուլլա Աբդուլ վահիդին Մուհամմադ ալ-Ջուզջանի կողմից:

Հավելվածի սկզբում Մուհամմադ ալ-Ջուզջանին գրում է, որ հիշյալ հաստիքները նա շարագրել է իր ուսուցչի ավելի ընդարձակ աշխատություններին հիման վրա, որոնք գտնվում էին իր մոտ: Այնուհետև Ջուզջանին խոսում է Իբն-Սինայի այլ աշխատությունների մասին և տալիս մի շարք հետաքրքիր մանրամասնություններ նրա գեոտական աշխատանքների և ուսուցչական գործունեության վերաբերյալ, որոնք կարևոր են մեծ գիտնականի կենսագրության ուսումնասիրության համար:

Այս հավելվածի լուրջ, մասնագիտական ուսումնասիրությունը կարող է նոր լույս սփռել Իբն-Սինայի գիտական ժառանգության վրա:

«ԲԵՅԹ-ՈՒՒՄԱԿ»-Ի ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԵՎ ՀԱՅ ՖԵՌՄԱԿՆԵՐԻ
ՀՈՂԵՐԻ ԲՌԵՍԼԱՎՈՒՄՆԵՐԸ XV ԴԱՐՈՒՄ

Ն. Գ. ՓԱՓԱԶՅԱՆ

Արևելյան Հայաստանում և հատկապես Արարատյան երկրում XIV—XV դարերի ընթացքում տեղի ունեցող հայ ֆեոդալականության պատմամատիկ ոչնչացման և նրանց տիրույթների մասսայական բռնագրավման պատմությունը դեռևս ուշադիր ուսումնասիրության չի ենթարկված:

Ընդհանրապես հայտնի է, որ հայ ֆեոդալական տների վերջին բեկորները (Դոփյաններ, Պոռչյաններ, Վաչուտյաններ, Ազիզբեկյաններ և այլն) հետզհետե իրենց իշխող դիրքերը կորցնում են սկսած XIV դարի երկրորդ կեսից: XV դարում Արևելյան Հայաստանում քիչ թե շատ իշխանական իրավունքներ էին վայելում միայն հաշնի Հասան-Ջալալյանները և Սյունյաց Օրբելյանների վերջին ներկայացուցիչներ Սմբատի որդի Բեշքենը և սրա որդին՝ Ռուստամը¹: Նկատված և ապացուցված է նաև, որ հայ ֆեոդալական տների վերջին շառավիղներից շատերը, որոնք զբղվել էին հողային խոշոր տիրույթներից, հոգևոր կարգ էին ընդունում և այդ ուղիով փորձում էին պահել իրենց իշխող դիրքը հայ աշխատավոր ժողովրդի նկատմամբ: Հատկապես XV դարում նրանք իրենց կալվածների շնչին մնացորդները նվիրաբերում էին, կամ ինչպես ընդունված էր ասել, վակֆ էին անում վանքերին և ստանձնելով վանքի վանահայրության պաշտոնը ժառանգաբար (սովորաբար հորեղբորից եղբոր որդուն փոխանցելով) շարունակում էին տիրել այդ հողերին²:

Որքանով որ ֆեոդալական ժամանակաշրջանում, — ինչպես այդ մասին գրում է Մարթոսը, — պատերազմի մեջ և դատարանում բարձրագույն հրամանատարությունը հանդիսանում էր հողային սեփականության ատրիբուտ³, ապա բացարձիկ կարևոր նշանակություն է ստանում հայ ֆեոդալների այդ սեփականատիրական իրավունքներից հետզհետե, իսկ հետագայում նաև վերջնականապես զրկվելու պատմական պրոցեսի ինչպես սոցիալ-քաղաքական, այնպես էլ իրավական նախադրյալների և պատմական որոշակի տեղաշարժերի հետևանքով անհրաժեշտաբար տեղի ունեցող փոփոխությունների ուսումնասիրությունը:

Այս տեսակետից առանձնապես կարևոր է պարզել, թե ի՞նչ ճանապարհներով և իրավական, այս դեպքում հատկապես շարիաթական, ինչպիսի՞ օրենքների հիման վրա էին կատարվում հողային բռնագրավումները, հօգուտ ո՞ւմ էին բռնագրավվում դրանք և ու՞մ կողմից էին սնօրինվում դրանց հետագա սեփականության և օգտագործման հարցերը:

¹ Հ. Մանանդյան, *Դննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, 5. Գ, Երևան, 1952, էջ 328—329, Լ. Խաչիկյան, *ԺԴ դարի հայկական ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1950, Առաջաբան, էջ IX:

² Թ. Մեծովիցի, *Պատմություն*, էջ 117—118, Լ. Խաչիկյան, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն Ա, Երևան, 1955, Առաջաբան, էջ XLVII—XLVIII, հմտ. նաև Հ. Փափաջյան, *Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից*, հայկական ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», հասարակական գիտություններ, 1955, № 8:

³ Հ. Փափաջյան, *Մատենադարանի պարսկերեն հրովարտակները*, պրակ Ա, Երևան, 1956, Առաջաբան, էջ 25, տե՛ս նաև Լ. Խաչիկյան, *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, մասն Ա, Առաջաբան, էջ XLIV.

⁴ Կ. Մարքս, *Կապիտալ*, 5. I, Երևան, 1933, էջ 298:

Մենք չենք ցանկանում առանձնապես երկար կանգ առնել այն հանրահայտ փաստի վրա, որ սկսած արաբական արշավանքների ժամանակներից, իսլամական զորքերի ձեռքով նվաճված բոլոր հողերը, ըստ մահմեդական օրենքի, հայտարարվում էին իսլամական համայնքի սեփականություն, հողերի սնօրինման գերագույն իրավունքը պատկանում էր միայն խալիֆին, և վերջինս միայն իրավունք ուներ մատուցած ծառայությունների դիմաց դրանց որոշ մասը շնորհել արաբ զորականներին կամ ցեղապետներին:

Պատերազմի օրենքով սահմանված այս իրավունքը, ի դեպ, միայն մուսուլմանական աշխարհին չէր վերաբերում, այլ ընդոշ էր ընդհանրապես ֆեոդալական հասարակությանը: Մեր պատմիչների մոտ բազմաթիվ հիշատակություններ կան Հայաստանում տեղի ունեցած միջֆեոդալական արյունահեղ ընդհարումների և միմյանցից կատարված հողալիք հափշտակումների մասին:

Սրով նվաճված հողերը ժառանգարար ձեռք բերված հողերի նման «հալալ հայրենիք» էին համարվում: 1223 թվականին Նորավանքում թողած իր մի արձանագրության մեջ Բապակ իշխանը գրում է. «Ե՛ր ժամանակի թագաւորութեանն որդւոյ Թամարին Լաշային, յամիր սպասաւորութեան հայոց և վրաց Շահնշահի և յաթաբէկութեան Իվանէի հարեղբար Նորին, ես մեղացեալ ծառայ Քրիստոսի, Բապակ իշխանաց իշխան եկի ի Նաւակատիս սուրբ եկեղեցւոյս Նորավանից առ Երջանիկ հայրապետս մեր տէր Սարգիս և ընծայեցի ի հալալ հայրենեաց իմոց, զոր իմ բազկաւս առեալ էի յայլազգեաց և իմ արեամբս թափեալ, և իմ պարտնայքն մեծ սիգելով այլ ինձ էին որոշեալ զԱղբերիս գիւղ իւր ամէն սահմանան ի սուրբ եկեղեցիս Նորավանից՝ ի սուրբ Կարապետս և ի սուրբ Նախավայս տուի ազատ յամէն հարկաց»:

Ուշագրավ է այստեղ այն փաստը, որ հողը սրով նվաճելու հետ անպայման անհրաժեշտ էր նվիրագործել թագավորական հրովարտակով, որով միայն այդ սեփականությունը իրավական տեսք էր ստանում: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս նվաճված հողի գերագույն սնօրինման իրավունքը պատկանում էր թագավորին կամ երկրի բարձրագույն իշխանությանը:

Մեր կողմից ուսումնասիրության ենթակա ժամանակաշրջանում հողային ընդարձակ տիրույթների բռնագրավումները տեղի էին ունենում ոչ այնքան ուղղական ընդհարումների ընթացքում տեղական ֆեոդալների պարտություն հետևանքով, քանի որ մոնղոլական արշավանքներից հետո նրանք բոլորն էլ հպատակվել ու հարկատու էին դարձել նվաճողներին, որքան հետզհետե սաստկացող անհանդուրժողական քաղաքականության շնորհիվ հայ ֆեոդալականությունն սխտեմատիկ ուշնացման և նրանց հողերի օրինականացված բռնագրավման միջոցով:

Հողերի բռնագրավումը կատարվում էր համաձայն Շարիաթի, ըստ որի հակառակորդներին և անժառանգ մեռնողներին պատկանող ու լքյալ հողերը բռնագրավվում էին հօգուտ մահմեդական համայնքի և մտցվում էին «բեյթ-ուլ-մալ»-ին ենթակա ստացվածքների շարքը:

«Բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը հին ծագում ունի՝ Նա սկիզբ է առնում արաբական արշավանքների շրջանից, և, ըստ ավանդության, հիմնադրվել է Օմար խալիֆի օրոք (634—644): Մի ժամանակ էր դա, երբ իսլամի հաղթական բանակները, խորտակելով Սասանյան Պարսկաստանի հզորությունը, հրով ու սրով գրավում էին նրան ենթակա ընդարձակ երկրները՝ նվաճված երկրներում ձեռք բերվող հարուստ ավարը սկզբում հենց տեղում բաշխվում էր քանակի ամբողջ անձնակազմին, իսկ մի խոշոր մասը ուղարկվում էր «մուսուլմանների համայնական գանձատունը»՝ «Բեյթ-ուլ-մալ-ե մուսլիմին»:

Այնուհետև, երբ կողոպտի քաղաքականությունից անցում կատարվեց հարձակման ենթակա երկրների վերջնական նվաճման և սխտեմատիկ հարստահարման ու հարկման քաղաքականությունը, այդ ժամանակ ավելի ընդարձակվեցին բեյթ-ուլ-մալի ֆունկցիաները: Իսկ երբ նվաճված երկրներում վերջ տրվեց բյուզանդական ու պարսկական պետական մեքենային և խալիֆաթի տիրապետության քաղաքական հիմքերը կայունացան, ստեղծվեց հարկային նոր, ավելի բարդ սխտեմ. ընդարձակվեցին գեռև Օմար խալիֆի օրով ստեղծված դիվանները, որոնք կոչվում էին «Դավալիին-ուլ-ամվալա»: Հետզհետե բեյթ-ուլ-մալի իրավասությունից դուրս էին գալիս պետական հարկերի գանձման և սնօրինման իրավունքները և այնտեղ կենտրոնանում էին միայն կրոնական տարբեր ու հավատացյալներից գանձվող այլ եկամուտները:

Ինչպես վաղ շրջանի ամեն մի մուսուլմանական հաստատություն, նույնպես նաև բեյթ-ուլ-մալի պատմական զարգացումը պետք է ուսումնասիրել անպայման մահմեդական իրավունքի պատմությանը առնթեր: Դրանք բավական բարդ տեսք են ընդունում ավելի ուշ շրջանում,

1 Կ. Կոստանյանց, Վիժական տարեգիր, Պետերբուրգ, 1913, էջ 67:

հատկապես իլխանությունից ժամանակաշրջանում ու նրան հաջորդող դարերում, երբ թեև իրավական տեսակետից որոշ չափով տարբորոշվել էին քաղաքական և հողատիր իշխանության ֆունկցիաները, սակայն, իրականում բոլոր ֆինանսական հարցերը տնօրինվում էին երկրի գերագույն քաղաքական իշխանությունից կողմից:

Այս տեսակետից էլ ահա կարևոր նշանակություն են ստանում ուսումնասիրվող ժամանակաշրջանի սկզբնաղբյուրների և հատկապես արխիվային վավերագրերի տվյալները, որոնք հնարավորություն են տալիս ավելի որոշակի եզրակացություններ գալու տվյալ ինստիտուտի գործնական նշանակության և պատմական դերի մասին:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդում պահպանվող և XV—XVI դդ. վերաբերող ոչ մեծ թվով կալվածագրերն ու հողալիս սեփականությունից ալլեայի ակտերը վկայում են այն մասին, որ ամեն անգամ դինաստիական կոնֆլիկտից հետո և երկրում ծավալվող երկարատև պատերազմական գործողություններին հաջորդող տարիներին, գրովյանը տեղ դարձած իշխանության կողմից ամբողջ երկրով մեկ անց էին կացվում հողերի նոր հաշվառումներ: Բարձրագույն դիվանից գործուղված լիազոր ներկայացուցիչները տարբեր նահանգներում կատարում էին մանրամասն քննություն, ստուգում էին կալվածատերերի ձեռքում գտնվող մուլքերի կալվածագրերն ու ակտերը և հաստատում դրանք, ցուցակագրում էին բոլոր մշակելի տարածությունները ըստ պատկանելիության և ըստ առանձին հողատիրական ինստիտուտներին: Այլ խոսքով, կազմվում էր ընդհանուր մշակելի հողային տարածությունների նոր կադաստր: Այս ընթացքում ցուցակագրվում և պետականացվում, հարցունիս էին դրավում հակառակորդի կողմն անցած կամ ալլեայ պատճառներով նոր իշխանության կողմից հետագնդվող ֆեոդալներին՝ քոչվոր արիստոկրատիային ու խոշոր կալվածատերերին պատկանող հողերը, ինչպես նաև այն հողերը, որոնց սեփականատերերը քաղաքական աննպաստ պայմանների հետևանքով հետագնդումներից խուսափելով ներկա չէին գտնվում և կամ ներկա լինելով հանդերձ՝ իրենց սեփականատիրությունն ապացուցող համապատասխան փաստաթղթեր չէին ունենում:

1504 թվականի, Եահ Իսմայիլ Ա-ի անձնական ներկայացուցչի ձեռքով գրված մի ակտում կարդում ենք. «Մկան տարվա (1504) հաշվառումների ժամանակ, երբ բարձրագույն դիվանի հրամանով ես՝ արքունի դուան նվաստագույն ծառայ Ազեբրայեանի վիլայեթի գործերի վերահսկող էի նշանակված և ստուգում էի հակառակորդներին պատկանող և բեյթ-ուլ-մալի ու սեփականատերն անհայտ ստացվածքներն ու մուլքերը, Մակվի վիլայեթի մուլքերի ու այլ ստացվածքների ստուգումից և քննությունից պարզվեց, որ այն կալվածները, որոնք գտնվում են աջնիվ բրիստոնյա Մանվելի որդի Թադեսուի և սրա որդի Նուրջանի ձեռքում, համաձայն շարիաթական փաստաթղթերից, ամբողջությամբ նրանց սեփականությունն ու մուլքն են, և նրանց սեփականությունը այդ կալվածներին ու մուլքերին նկատմամբ իրավացի սեփականությունն է, և ոչ ոք, հատկապես բեյթ-ուլ-մալի և սեփականատերն անհայտ [կալվածներին] լիազորները այդ կալվածներին նկատմամբ ոչ մի իրավունք և հավակնություն չեն կարող ունենալ:

Սույն գրությունը գրի առնվեց վերահայտարար իրավասուների խնդրանքով ինը հարյուր տասը թվականի ջումադի առաջին ամսի վերջին տասնօրյակում (1504 թ. հոկտ. 29—նոյ. 8)»:

Ստուգման և վերահաշվառման ենթակա հողերի մեջ, ինչպես տեսնում ենք, նախ եղել են «հակառակորդներին» (մուխալիֆան—مخالفاً) պատկանող հողերը: Այս տերմինի տակ պետք է հասկանալ ոչ միայն Եահ Իսմայիլի նորաստեղծ պետության հակառակորդներին, այլ նաև հատկապես քրիստոնյաներին, այսինքն հայերին: Պարսկական մատենագրության մեջ «մուխալիֆներ» ասելով հիմնականում հասկանում էին կրոնի հակառակորդներին՝ ոչ մուսուլմաններին: Այնուհետև, հաշվառումների ժամանակ վերացուցակագրվել են նաև բեյթ-ուլ-մալին վերաբերող ստացվածքները, որոնք համարվել են ինչպես այլևայլ պատճառներով նոր իշխանության կողմից հետագնդվող անձնավորություններից բռնագրավված, այնպես էլ անժառանգ մեռողներին պատկանող, լքյալ կամ «սեփականատերն անհայտ» (մաշհուլ-ուլ մալիք — مجهول المالک)

հողերով:

Սույն ժամանակաշրջանից պահպանվել են նաև մի քանի այլ ակտեր, որոնք վերաբերում են Գարաշամբի շրջանում գտնվող երեք հայկական գյուղերի (Բաշթյանդի, Օրթաքյանդի, Դիրքյանդի) ազատ համայնքների սեփականատիրական իրավունքների հաստատմանը²:

Հողերի ընդհանուր վերահաշվառման նման փաստի մասին են խոսում 1557 և 1558 թթ., այսինքն թուրք-պարսկական 1555 թ. հաշտությանը հաջորդող տարիներին վերաբերող երկու

¹ Հայկական ՍՍՌ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 1:
² Նույն տեղում, թղթ. 1, վավ. 8:

այլ վավերագրեր, որոնցից առաջինը նորից վերաբերում է Դարաշամբի հիշյալ գյուղերին՝, իսկ երկրորդը Տաթևի վանքատեղան 15 գյուղերի՝ վակֆային սեփականություն լինելը հաստատող մի արձանագրություն է: Այս երկու վավերագրերի մեջ էլ տարբեր կատեգորիայի հողերի շարքում հիշատակված է նաև բեյթ-ուլ-մալը. «...ստուգվում էին խալիսե կալվածների մուլքերը, կորսված հարստությունները, սոնքին և զոնքին (?)», սեփականատերն անհայտ, բեյթ-ուլ-մալի և մուսուլմանների օգտին ծախսվող ստացվածքները»,— ասված է այս վավերագրերում:

Հողերի այս կարգի ցուցակագրման, վերահաշվառման և բաշխման պրակտիկան անշուշտ նոր երևույթ չէր և կասկածից դուրս է, որ նույնպիսի վերահաշվառումներ ավելի շատ տեղի են ունեցել նախորդ՝ XV դարում, երբ դինաստիական և գահակալական ընդհարումները արագորեն իրար էին հաջորդում ամբողջ հարյուրամյակի ընթացքում:

Սկզբնաղբյուրներում որոշակի վկայություններ կան այն մասին, որ յուրաքանչյուր վիլայեթում և նահանգային կենտրոնում գոյություն են ունեցել բեյթ-ուլ-մալի «հաքիմներ» կամ «մութասարիֆներ», որոնք զբաղվել են հողեր տուրքերի գանձման և անժառանգ վախճանվածների գույքերի բռնագրավման ու դրանց եկամուտների անօրինման գործով: XIV դարի վերջերի հեղինակ Մուհամմադ Նախջևանին իր «Դասթուր-ուլ-քյաթիբ ֆի թալիսե-ուլ-մարաթիբ» խիստ արժեքավոր աշխատության մեջ տալով պաշտոնական գրագրությունների, ֆերմանների, հրամանագրերի և զանազան տիպի հրովարտական բազմաթիվ օրինակներ, այլ պաշտոնների շարքում հիշատակում է նաև բեյթ-ուլ-մալի հաքիմին կամ մութասարիֆին և տալիս այդ պաշտոնյայի նշանակման հրամանագրի հետևյալ օրինակը.

«Մարաղայի ամիրները, հաքիմները, ղազինները, նայիրները, մութասարիֆներն ու բիթիկիները թող իմանան, որ սուլյն թվականից սկսած նորից այդ տեղի բեյթ-ուլ-մալի հաքիմությունն ու մութասարիֆությունը շնորհեցինք, շարունակ այդպիսի բարձր գործերով զբաղվող, Իրաքի երեկիններից մեծարգո տեր (սահիբ-ե-մուազզամ) խոջա թալ-էդ-դինին, որպեսզի վերջինս բեյթ-ուլ-մալի գումարները հշտություն բանձի և պահպանի և թեթ ոմանք խարդախների հովանավորության շնորհիվ փորձեն հանդուցյալների թողած հարստությունները թաքցնել և շահանձնել, անմիջապես հայտնաբերի և լրիվ ու ամբողջությամբ վերցնի... և թող մեկ տասներորդը (ուշր) պահի իրեն, որպես աշխատավարձ»:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայությամբ, XVII դարում ևս եղել են բեյթ-ուլ-մալի վերակացուներ՝ բեյթուլմալիա-ներ, որոնք զբաղվել են անժառանգ մեկուղյների ունեցվածքի անօրինման գործով:

Համաձայն Շարիաթի, բեյթ-ուլ-մալի գանձարանում կուտակվող միջոցների գերազույն անօրինությունը վերապահվում էր ժամանակի իմամին: Այդ գումարները պետք է ծախսվեին բարեգործական նպատակներով և առհասարակ խեղճերին ու կարոտյալներին օգնելու համար: Սակայն, ստորև մենք կտեսնենք, թե ինչպես ուսումնասիրության ենթարկվող ժամանակաշրջանում այդ սկզբունքը լիովին զանց էր առնված և մուսուլմանական այս ինստիտուտը Արևելյան Հայաստանում վերածվել էր ինչպես առհասարակ հայ բնակչության տնտեսական ճնշման ու հարստահարման, այնպես էլ հասկապես հայ ֆեոդալականության հողային տիրույթների բռնագրավման և նրանց իրավազրկման ու սխտեմատիկ ոչնչացման գործիքի:

Հայ ուլայթների շարժական և անշարժ գույքի բեյթ-ուլ-մալի կողմից կատարված բռնագրավումների մասին որոշակի վկայություններ հանդիպում են մատենագրական աղբյուրներում և հատկապես ձեռագրաց հիշատակարաններում: Այսպես օրինակ, 1500 թ. գրված մի ավետարանի հիշատակարանում, որն ընդգրկված է Լ. Խաչիկյանի կողմից տպագրության պատրաստված «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի Բ, հատորում, պատմվում է, թե ինչպես այրի Հաբիբի միակ որդուն անհայտ պատճառներով սպանելուց հետո, բեյթ-ուլ-

¹ Հայկական ՍՍՌ Մատենագրասի, Կաթողիկ. դիվան, թղթ. 1, վավ. 8:

² Նույն տեղում, թղթ. 2, վավ. 18:

³ دستورالکاتب فی تعیین المراتب، Институт востоковедения АН, архив Тизенгаузена В. Г., фонд 52, кр. 15, стр. 1686.

⁴ Chardin J. Voyages de mr. Le chevalier Chardin en Perse, Paris, 1723, t. 6, p. 276.

⁵ ۱۳۳۱ بهالدين محمد عاملی — جامع عباسی، تبریز (հահա-էդ-դին Մուհամմադ Ամոլի, Ջամե-է Աբբասի, Թավրիզ, 1331 հիշր.) էջ 263—264:

մալի կողմից գրավվում են նրա տունը, այգին և ամբողջ ունեցվածքը, իսկ Հարբիի եղբայրները մեծամեծ կաշտաբեկներ վճարելուց հետո միայն կարողանում են դրանք ետ ստանալ:

«...յորժամ զսորա որդին անօրէնքն խեղդամահ արարին ի ծառէն կախեալ ի մէջ այգւոյն իրոյ, ի մէջարէի,— ասված է հիշատակարանում,— յոյժ դառն կակիծ եղաւ ծնօղացն և ազգայնոցն և բարեկամացն վասնզի միաւոր էր և յոյժ գեղեցկապատկեր և վայելուչ հասակաւ. վասնորոյ զրկեցաւ յաշխարհէ և մնաց սոցա բոյրն Խարբիքն առանց յիշատակ. եւ եկեալ անօրէնք զտուն և զայգին և զպարանքն զամէն պարնական բթըլմալ արարին, վասն որոյ եղբարքն գնացին ի պարոն և ի դատար անկան և շատ կաշառօք ազատեցին յանօրինաց»¹:

Նման մի այլ դեպքի մասին է ակնարկում նաև XVII դարի եկեղեցական և գրական գործիչ Մարտիրոս Ղրիմեցին, երբ թվկերվ իր հակառակորդ քահանաներից մեկի ստոր արարքները շեշտում է.

Գացիր Կէլիթամալճուն ասիր
Մարդ է մեռեր շուտով հասիր
զմորբերուն հացըն կտրեցիր
Քո հացին խմորըն անիծածս:

Ինքնին հասկանալի է, որ բեյթ-ուլ-մալի միջոցով գործադրվող հալածանքներն ու հետապնդումները ավելի շատ ուղղված էին հայ բնակչության ունեւոր խավի և հատկապես հայ ֆեոդալական տներին վերջին շառավիղների դեմ:

1480-ական թվականներին վերաբերող մի հիշատակագրութան մեջ, որ նվիրված է Մարի Գոփյանների ազգաբանութանը, բավական մանրամասն տվյալներ կան Տուրսունի որդի Այտինի որդե Գոփյանների պատկանող կալվածների բեյթ-ուլ-մալի միջոցով հափշտակվելու մասին²:

«Եւ որդի Հասանայ Աղբուղէն,— գրում է ազգաբանութան հեղինակը,— և որդի սորա Տուրսունն և որդի սորա Այտինն, և ի ժամանակի սորա, ի զօրանալ իսմայելացոց և ի նուազիլ տանն Հայոց, ցիր և ցան լինելն իշխանացն Հայոց, յարեան այլազգիքն և զմուրքն մեծ իշխանին Հասանայ պէթալմոլ արարին, գնաց պարոն Այտինն ի դիւան և երեք ամ աշխատեաց ի ձեռաց այլազգեացն զվանօրայքն և զշինարէնքն, զոր տէրն ամէնայնի տացէ վարձս վաստակոյ իրոյ»³:

XV դարից մեզ են հասել բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված հողերի օտարմանը վերաբերող պարսկերեն և արաբերեն երեք խոշոր կալվածագրեր, որոնցից առաջինը Գրիգոր Մակվեցու որդե գնված էջմիածնապատկան 7 գյուղերի հայտնի կալվածագիրն է՝ գրված հիշրեթի 885 թվականի ռաբի⁴, երկրորդ ամսի կեսերին (1431 թ. դեկտ. 21)⁵, երկրորդը Հավուց-թառի ս. Ամենափրկիչ վանքի 7 գյուղերի և նրանց կից երկու հանգերի կալվածագիրն է՝ գրված հիշրեթի 894 թ. ռամազան ամսի սկզբին (1489 թ. հուլ. 29)⁶, իսկ երրորդը Օշակյան գյուղի վաճառքի կալվածագիրն է՝ գրված հիշրեթի նույն թվականի ռամազան ամսի 25-ին (1489 թ. օգոստ. 22)⁷: Այս երեք կալվածագրերն էլ, որոնցից առաջին երկուսի պատճեններն են միայն պահպանվել, իսկ վերջինը մեզ հասել է միանգամայն անվթար ու ամբողջական բնագրով, գալիս են վկայելու, որ XV դարում Արևելյան Հայաստանում մեծ թվով գյուղեր գտնվել են բեյթ-ուլ-մալի տնօրինութան տակ և օտարման են ենթարկվել իշխանութան ներկայացուցիչների ձեռքով:

Ամբողջ XV դարից մենք ձեռք ենք ստանում միայն վերոհիշյալ 3 փաստաթղթերը, որոնք անշուշտ բեյթ-ուլ-մալի միջոցով կատարված բռնագրավումների, օտարումների և նման այլ գործարքների միայն մեկ մասին են վերաբերում: Բեյթ-ուլ-մալի ձեռքով կատարված այս հո-

1 Հայկական ՍՍՏՒ Մատենադարան, ձեռ. № 7979, էջ 295ա:
2 «Նավասարդ» ամսագիր, Բուխարեստ, 1923, էջ 76:
3 Ղ. Ալիշանը «Սիոսական»-ում տալիս է Գոփյանների ճյուղագրութունը, որտեղ Այտինի անվան դիմաց նշված է 1467 թվականը (էջ 37): Մա անշուշտ այն ազդյուրի կամ ավելի շուտ հիշատակարանի թվականն է, որտեղ հիշված է այդ անունը:
4 Լ. Թովմյան, Ցուցակ ձեռագրաց Դաղյան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 89:
5 Հայկական ՍՍՏՒ Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 1գ, վավ. 934:
6 Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 527:
7 Նույն տեղում, թղթ. 1ա, վավ. 4:

զային երեք գործարքների մասին մենք տեղեկանում ենք շնորհիվ այն բանի, որ վերաբերելով էջմիածնի և Հավուց-Յառի վանքերին, գրանց կալվածագրերը պահպանվել են հիշյալ կրոնական հաստատություններում: Սակայն առանձին կալվածատերերի կողմից բեյթ-ուլ-մալից կատարած մյուս բոլոր գնումներին վերաբերող իրատարբեր լիցենզիաները մեզ չեն հասել:

Բանագրաված հողերի հետագա տնօրինման մասին առավել արժեքավոր տվյալներ է պարունակում Հավուց-Յառի ս. Ամենափրկիչ վանքի վերահիշյալ կալվածագիրը: Այս փաստաթուղթը ոչ այլ ինչ է, եթե ոչ մի համաձայնագիր, կամ ինչպես վավերագրերում է ասված «հաշտության գիր» (մուսալիհե—*muhalah*) կնքված Աղ-Կոյունլու Յաղուր-փաղիշահի կողմից լիցենզիայի վրա տրված երկրի կամ Չուխուր-Ասաղի վիլայեթի բեյթ-ուլ-մալի վերակացու կամ «ամիր» Ամիր Քյամալ-էղ-դին Արդին բեգի և Հավուց-Յառի Ամենափրկիչ վանքի վանահայր Զաքարիա վարդապետի միջև: Համաձայն այս գրության, Ամիր Քյամալ-էղ-դին Արդին բեգը, հանդես գալով Աղ-Կոյունլու Յաղուր-փաղիշահի անունից, հաստատում է, որ Գառնիի նահապետում գտնվող Մանկու, Ավանիկ Կուրիս, Կզըլ-վանք (Հավուց-Յառ), Կոխդ, Քառնիս, Սուրբ-Սարգիս գյուղերը և Կուտուց-վանքի ու Ավանասարի հանդերը (մագրան) բեյթ-ուլ-մալին չեն վերաբերում և հանդիսանում են Զհանշահի որդի Շահինի որդի Զաքարիա վարդապետի սեփական մուլքերը: Վավերագրի մեջ միաժամանակ ասված է, որ Զաքարիա վարդապետը, որպես հաշտության գումար 5000 թավրիզի դինար է վճարում վերահիշյալ ամիրին, և վերջինս հայտարարում ու ստորագրում է, թե այսուհետև բեյթ-ուլ-մալի կողմից այդ գյուղերի նկատմամբ ոչ մի վեճ չպետք է լինի, քանի որ այդ գյուղերը իրոք պատկանում են հիշյալ Զաքարիա վարդապետին:

Արդ, ո՞վ էր Զաքարիա վարդապետը և ինչու՞ էին նրա կալվածքները ենթարկվել հետապնդման բեյթ-ուլ-մալի կողմից:

Միմեռն կաթողիկոս Երևանցին իր հանրահայտ «Զամբո» աշխատության մեջ խոսելով Երևանի խանության սահմաններում գտնվող վանքերի մասին, «Սրբոյ Ամենափրկիչ վանից որպիսութիւնքն» վերնագրի տակ նախապես պատմում է Աշոտ Ա. Բագրատունու ձեռքով վանքի հիմնադրման և Քրիստոսի փայտաքանդակ պատկերի հետ կապված ավանդությունը, այնուհետև, շարունակելով շարադրել վանքի հետագա զարեթի պատմությունը, գրում է.

«Ապա յետ ժամանակաց վերստին նորոգեաց զտուրք վանքս զայս Գրիգոր Մագիստրոսն Պալաուունի, որդին Վասակի Բջնեցոյ քաջին, (որ ի Սերկէվիզ գեղն յարբունկեց եղև), և զըրջակ վայրս ամենայն գնեալ արծաթով, շնորհեաց սոյնոյ վանքին և բարեպետ ինքեան. և զորդին իւր զՎահրամ (որ նոյն ինքն է Գրիգոր Վկայասէրն, որ յետոյ եղև կաթողիկոս Սրբոյ էջմիածնի) նստուցանել ետ ի սմա Առաջնորդ ի ՆշԲ (1023—1024) թուռն մերում, և ի Հայրապետութեան Տնտն Սարգսի, և ի թագաւորութեան Բագրատունեաց Գագիկայ Շահնշահի: Ապա վերոյիշեալ Գրիգոր Մագիստրոսն մինչ վերանորոգեաց զվանքս զայս, և հարստացոյց զսա հողովք և ջրովք, և զորդին իւր հո կացուցանել ի սմա Առաջնորդ՝ որպէս ասացաք, վասն որոյ և յայնմ հետը որպէս զՎայրենի մուրք արարեալ զսա որդիք և թուռնը և յետագայ ազգատոհմը սորին, մի զկնի միոյ յաջորդեցին զԱռաջնորդութիւնն սորին ոչ միայն ի յիշխանութեանն Հայոց, այլ և ի ժամանակս թագաւորացն Պարսից մինչև գրեթէ ի ժամանակս մեր՝ որքան շէն էր վանքս այս»¹:

Ձեռքի տակ ունենալով վերահիշյալ կալվածագրերը, Միմեռն Երևանցին ճիշտ չի ըմբռնել նրա բովանդակությունը և այն դիտել է որպես վաճառքի ու գնման փաստաթուղթ: Համոզված լինելով, որ Զաքարիա վարդապետը Գրիգոր Մագիստրոսի սերունդներից էր և որ այդ գյուղերը գնել է վերահիշյալ Ամիր Քյամալ-էղ-դին Արդին բեգից, նա փորձում է բացատրել, թե ինչու գնելուց հետո Զաքարիա վարդապետը այդ գյուղերը վաճառել էր Ամենափրկիչ վանքին, «Արդ՝ Զաքարիա վարդապետս զայսուսիկ,— գրում է նա,— ի յառնուին, լիւր անուն առնու, և զանուն Ամենափրկիչին ոչինչ չիէ ի զապալալոցն, և զվախմ անուն ինչ ոչ գրեցուցանէ, որոյ պատճառն է՝ զի սորա ի բնէ անտի ազատադունք էին և անուանիք, շատազգ և հարուստք, յորոց թէպէտ ոմանք վանականք լինէին, ոմանք աշխարհականք, սակայն մի էին տամբք և քնչուք, և իրեանց էր համարեցեալ գեղն և վանքն առանց խտրութեան: Վասն որոյ և ինքն մինչ առաջնորդ իսկ էր սոյն վանքիս, որպէս թէ վասն վանքիս առնոյր զայսքան մուրքս, թէպէտ յանուն վանքին վախմ ոչ գրեցուցանէր ի միամտութեանն»²:

¹ Ա. Երևանցի, *Զամբո*, էջ 275—276:
² Նույն տեղում, էջ 277:

Որ իրոք Զաքարիա վարդապետը իշխանական ծագում ուներ, այդ մասին վկայում է նաև պեղակի մի հեղինակավոր ժամանակակից, ինչպիսին է Թովմա Մեծոփեցին։ Վերջինս նրան անվանում է «Տէր Զաքարիա Հավուց-Յառայ ի յագատորդեաց»¹, և բազմիցս հիշատակում նրա պետիկ մասնակցությունը մասին ինչպես էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման, այնպես էլ Կիրակոս Վիրապետու դեմ դրսևորված օպոզիցիայի գլխավորման գործում։ Ուստի և կարելի է շկասկածել, որ նա հանդիսանում էր դեռևս Գրիգոր Մաղիսաբոս Պաճաղունու ժամանակներից ի վեր իր նախնիների ձեռքում գտնվող կալվածների իրավական ժառանգը։

XV դարի 80-ական թվականների մի քանի հիշատակարաններից և վկայաբանություններից, որոնք զետեղված են նույն ժամանակներում գրված կամ հետագայում կազմված «Յայսմավուրք»-ների մեջ, պարզ երևում է, որ այդ թվականներին և հատկապես Աղ-Կուրունու Յաղուր-փաղիշարի օրոք (1478—1490) լուրջ հայածանքներ են սկսվում Հայ աշխրհի ընկեր ունեւոր և անվանի մարդկանց նկատմամբ. բռնի հավատափոխության հողի վրա տեղի ունեցող նահատակության դեպքերը ավելի հաճախակի են դառնում։

Ահա թե ինչպես է բնորոշված այդ ժամանակաշրջանը 1485—1486 թթ. Կոտայքում գրված մի հայսմավուրքի հիշատակարանում։

«Արդ եղև զբաւ գրութեան սուրբ այս մեծահանդէս, ծաղկազարդ և հոգելից տառի ի շրջագայութեան հայկազեան տամարի Ջլե (1485—1486) ի դառն և ի շար ժամանակի, որով ներխուժ ի բռնութենէ անօրինաց և յանիրաւ պահանջողաց ի հայրապետութեան տեառն Սարգսի ի յառաքելական աթոռն ի սուրբ էջմիածինն և յաշխարհակալութեանն Յաղուր բեկին, որ ի սորա ժամանակս եղև թապալթիւն (կրոնական անհանդուրժողականություն), զի դատին (կրոնապետ) թաթար էր և հալածէին զբրիւտունէայսն ի Թավրէզ քաղաքի, զի տաճիկ ոմն անուն Մեհդի սպան զմեծ ախոյանն հայոց զեւաւճայ Միրաքն վասն ի Քրիստոս հաւատոցն...»²։

Նույն աղբյուրից պարզվում է նմանապես, որ հավատափոխության հարկադրանքը Արեւելյան Հայաստանի կենտրոնական նահանգներում հիմնականում կիրառվում էր հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչների, կամ, ինչպես անվանում են նրանց ժամանակակից աղբյուրները, «ազատորդիներ» նկատմամբ։

«Ժամանակս դառն էր,— գրում է նույն գրիչը,— որ այլազգեաց շատ նեղութիւն քաշեցաք, որ այսմ ամիս (40) ազատորդի կալան, թէ տաճկացէք, այլ ողորմածն Աստուած ձեռնտու և ազնական եղև նոցայ, յորոց մի էր եղբայր իմ պարոն Հայկազն և պարոն Աւաղն, որ է (7) ամիս կալուրական կացին և բազում տուգանք տվին և ի հաւատոցս Քրիստոսի ոչ դարձան...»³։

Կարելի է շկասկածել, որ 40 ազատորդիների մեջ եղել են նաև Զաքարիա վարդապետի՝ Միմեոն կաթողիկոսի նշած «շատազգ և հարուստ» աշխարհական ազգակից հարազատներից ոմանք։ Այս ընթացքում, անշուշտ, որպես «հակառակորդներին պատկանող» (قبات و مخالفان)

թեյթ-ու-մալի կողմից բռնագրավվել են նաև նրա սեփական կալվածները։ Մոտ մեկ տարի անց միայն Զաքարիա վարդապետը կարողացել է ապացուցել իր սեփականատիրական իրավունքները զրանց նկատմամբ և իբրև հոգևորական հաջողել է դրանք իր անունով ետ ստանալ, վճարելով բավական շոշափելի գումար (5000 դինար) որպես «հաշտության գին»։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, փորձ է արվել օգտագործել հոգևորականի առանձնաշնորհյալ դիրքը։ Սակայն, որքանով որ այդ կալվածները դեռ շարունակում էին դիտվել որպես Զաքարիա վարդապետի անձնական ժառանգական մուրքեր՝ հետևաբար շարունակ ենթակա էին նման հետապնդումների և հափշտակության. մանավանդ որ դրանք անվանապես էին միայն պատկանում Զաքարիա վարդապետին, իսկ իրականում նրանց մեջ բաժին ունեին նրա գերդաստանի մյուս բոլոր, մեծ մասամբ աշխարհական ժառանգները։

Որ իրոք այդ կալվածների նկատմամբ հետապնդումները շարունակվել են, կարելի է եզրակացնել թեևուզ և այն փաստից, որ 1526 թվականին նույն ընտանիքից Շահինի որդի Զաքարիա և Համազասպ վարդապետները հիշյալ կալվածներից Մանկուս, Հավուց-Յառ, Ավանիկ, Սուրբ Սարգիս, ինչպես նաև Քաղերթ գյուղերի կեսը վերջնականապես նվիրում են (վակֆ են անում) Ամենափրկչի վանքին։ Ինչպես իրավացի կերպով ենթադրում է Միմեոն Երևանցին, հավանաբար նույն ընտանիքի աշխարհական ժառանգները կամ զրկվել են իրենց բաժնից և կամ հափշտա-

¹ Թովմա Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 52:
² Գ. Լոկսեփյան, Սարգսկյանք կամ Պառչյանք հայոց պատմության մեջ, հ. 3, Նյու-Յորք, 1942—43, էջ 122:
³ Նույն տեղում, էջ 123:

կումները կանխելու համար վաճառել են, իսկ հոգևորականները իրենց բաժինը վակֆ են արել վանքին¹:

Յթե այս 7 գյուղերի կալվածագիրը մեզ հնարավորություն է տալիս պարզելու հայ ֆեոդալական տներից մեկի, նախկինում անշուշտ շատ ավելի ընդարձակ կալվածների այս անշունք բեկորների հետագա դրուժյան և ի վերջո դրանց վերջնականապես վանական-վակֆային սեփականություններ դառնալու պատմությունը, ապա մյուս «ազատորդիների» ունեզրկման ժամանակ նրանց պատկանող և բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված մեծ թվով այլ կալվածների հետագա բախտի մասին մենք շատ աղքատիկ տեղեկություններ ունենք:

Կասկածից դուրս է, որ մյուսները ևս, ինչպես օրինակ հենց վերոհիշյալ հիշատակարանի գրիչ Տեր Հովհաննես եպիսկոպոսը, որը Կոտայքի Պոռոշյան տոհմի պայազատներից էր, փորձած կլինեն նույն նղանաղով կամ ինչպես նշված է հիշատակարանում «բազում տուգանք» ետ ստանալ և ի վերջո վակֆի միջոցով փրկել իրենց կալվածները:

Նախորդ էջերում մենք առիթ ունեցանք նշելու, թե ինչպես Մարի Դոփյանների վերջին իշխաններից Տուրսունի որդի Այտինը երեք տարի արքունի դիվանում շարաքվելուց հետո հազիվ կարողացել է բեյթ-ուլ-մալից ետ ստանալ իր հայրենի կալվածները:

Սակայն այն փաստը, որ 1489 թվականի օգոստոսին, այսինքն Զաքարիա վարդապետի կալվածների ետ ստացվելուց մոտ մեկ ամիս հետո, վերոհիշյալ Ամիր Քյամալ-էդ-դին Աբդիլ բեգը վաճառում է բեյթ-ուլ-մալի սեփականությունը դարձած Օշական գյուղը, թույլ է տալիս եզրագցնելու, որ բռնագրավված գյուղերից շատերը վաճառքի միջոցով դառնում էին տարրեր մարդկանց գանձագին մուլքեր: Հիշյալ կալվածագրում որպես գնորդ հանդես է գալիս ոմն Սաադի-վակկաս, որը որդին էր խոջա Քյամալ-էդ-դին Հուսեյնի որդի՝ հանգուցյալ խոջա-Սեյյեդի-Ալիի: Իսկ նրա անվանը նախորդող «Սահիբ-ե ասզամ» («ամեծ տեր») տիտղոսը ցույց է տալիս նրա բարձր պաշտոնը տեղական նահանգային ֆինանսական օրգաններում:

Ի՞նչ էր կատարվում ուրեմն:

Հաճախակի ունեզրկումների ընթացքում բռնագրավվում և բեյթ-ուլ-մալի սեփականություն էին հայտարարվում վաղ ժամանակներից ի վեր հայ մանր ֆեոդալներին պատկանած «հայրենիք» կալվածները և ապա շարիաթական պաշտոնական վաճառքի միջոցով դրանք դառնում էին երկրում մշտական բնակություն հաստատած մուսուլման բարձրաստիճան պաշտոնեություն ու քուլտը արիստոկրատիայի կողմից գանձագին արված մուլքեր («մուլք-ե զարիսարիդ— ملك زرخريد»):

Թե ինչպիսի խարդախություններ ու կեղծ գործարքներ կարող էին տեղի ունենալ հողերի այս կարգի «զուլմներին» և դրանց շարիաթական-նոտարական գրասենյակներում կատարվող ձևակերպումների և արձանագրության ժամանակ, այդ մասին հնարավոր չէ դատել նկնելով մեր ձեռքում գտնվող հիշյալ կալվածագրերից, որովհետև դրանք շարագրված են ընթացիկ նոտարական օրենքներին համապատասխան: Սակայն, այն փաստը, որ որպես գնորդ հանդես էր գալիս ոչ թե մի պատահական կալվածատեր կամ ֆեոդալ, այլ պետական ֆինանսական բարձրաստիճան մի պաշտոնյա, առիթ է տալիս կասկածով մոտենալու կալվածագրում շարագրված առևտրական այդ գործարքին:

Հավուց-թառի և Օշականի վերոհիշյալ 1489 թվականի կալվածագրերը, ինչպես նաև 1431 թվականի էջմիածնի 7 գյուղերի Գրիգոր Մակվեցու կալվածագիրը, XV դարի մյուս կալվածագրերից տարբերվում են նրանով, որ կամ դրանց բուն իսկ տեքստում մանրամասն շեշտված է այդ գյուղերի բեյթ-ուլ-մալի սեփականություններ լինելը, ինչպես Հավուց-թառի և Օշականի կալվածագրերում, և կամ այդ մասին համառոտ կերպով նշված է վավերագրի սկզբի մասում, բուն տեքստից առաջ, ինչպես արված է Օշականի և էջմիածնի կալվածագրերում: Այս վերջին կալվածագրերի վրա կատարված է հետևյալ մակագրությունը. «Չուխուր-Սաադի և նրան ենթակա շրջանների բեյթ-ուլ-մալը: Թող աստված նրանց բոլորին անվտանգ պահի»²: Այս մակագրությունը հաստատված է մի կնիքով, որն ըստ երևույթին դադիի կամ շեյխ-ուլ-խալամի կնիքը պետք է լինի³:

¹ «Ջամբո», էջ 277:

² Հայկական ՍՍՌ Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 1ա, վավ. 4, և թղթ. 1գ, վավ. 934. بیت المال فی ولايت چخور سعد و التواب عفا الله عنهم اجمعين

³ Օշականի կալվածագրում կնիքի վրա անուն չի հիշված, իսկ էջմիածնի 7 գյուղերի կալվածագրերը բնագիր չէ, հետևաբար և այնտեղ միայն նշված է կնիքի տեղը:

Համանման մակագրությունների առկայությունը ինչպես Օշականի, այնպես էլ էջմիածնի կալվածագրերի վրա, վկայում է այն մասին, որ Գրիգոր Մակվեցու գնած 7 գյուղերը ևս, Օշականի նման, այդ գործարքի ժամանակ հանդիսացել են բեյթ-ուլ-մալի կողմից բռնագրավված և այդ հաստատության տնօրինության տակ գտնվող կալվածներ:

Ինչպես վերը առիթ ունեցանք նշելու, առաջին երկու կալվածագրերում հարկ է եղել մանրամասն շեշտել, որ Ամիր Քյամալ-էդ-դին Արզին բեգը հանդիսանում է Չուխուր-Սաադի վիլայեթի բեյթ-ուլ-մալի գործակալ (ամիր)¹ և կամ սովյալ գործարքում ներկայացրել է Աղ-Կոլունուրու Յաղուր-փադիշահին², իսկ Գրիգոր Մակվեցու կալվածագրում որպես օտարող կողմ հանդես է գալիս Օրբելյան Բեշեմնի որդի Ամիր Ռուստամը և բեյթ-ուլ-մալին ենթակա 7 գյուղեր պաճառում է» Գրիգոր Մակվեցուն:

Վերը շարադրվածից դժվար չէ նկատել, որ բեյթ-ուլ-մալի հողերի տնօրինման գերագույն իրավունքը պատկանում էր երկրի գլխավոր իշխանությանը:

Հնում, արարական տիրապետության վաղ շրջանում, բեյթ-ուլ-մալի գլխավոր տնօրենը համարվում էր խալիֆը և նա միայն իրավունք ուներ այնտեղ կուտակված գանձերն ու այլ հարստությունները, այդ թվում նաև անշարժ կալվածներից ստացվող եկամուտները որոշակի նպատակների համար ծախսելու: Հետագայում արդեն, երբ չուբաքանչուր քիչ թե շատ ինքնիշխան մուսուլման տիրակալ իրեն համարում էր իր իշխանության ներքո գտնվող երկրների բոլոր մուսուլմանների պետ, իրեն վերապահելով գերագույն հոգևոր իշխանության ֆունկցիաները, այլ խոսքով ասած, երբ իշխանությունը թեոկրատական բնույթ էր կրում, բեյթ-ուլ-մալի հողերի տնօրինման և հատկապես օտարման գերագույն իրավունքն արդեն պատկանում էր երկրի գլխավոր իշխանությանը, ինչպես էլ այն կոչվելու լիներ:

Բուխարայում իշխող Հաշտարխանյան դինաստիայի խաներից Աբդուլ-Ազիզ խանը (1645—1680) 1656 և 1657 թթ. Բուխարայի շրջակայքում գտնվող պետական հողեր է վաճառում որոշ կալվածատերերի: Այդ վաճառքի առթիվ գրված կալվածագրերում (պատկեր-չի-մուբադիլե—و شيقه مبادل) հանդիպում ենք հետևյալ բացատրության. «Այս հողերը (խոսքը վաճառվող հողերի մասին է — Ղ. Փ.) թագավորական մամլաքաներ (պետական հողեր) են և նորին գերազանցություն խանը, որ փաստորեն ժամանակի խալիֆն է, համաձայն շարիաթի, իրավունք ունի դրանք վաճառելու, որովհետև մամլաքայի հողերը նույնն են ինչպես որ բեյթ-ուլ-մալը: Այդպես է նշված «թաթար-խաների ֆաթվաներում». «Ալ-խազանեյում» և այլ գրքերում: Եվ ի՞նչ իմամը պաճառում է մամլաքայի հողը, ապա դա թուլլատրվում է և՛ Աբի-Յուսիֆի և՛ Մուհամմադի կողմից,— թող աստժու օրհնությունը նրանց վրա լինի»: Մյուս կալվածագրում բացատրվում է, թե ինչու է Աբդուլ-Ազիզ խանը իր ժամանակի խալիֆը համարվում. «Ռոբվհետև,— ասված է կալվածագրում,— նա տիրում է փառասպանժ քաղաք Բուխարային, Սամարղանդին, Դաշքենդին և թուրքեստանը, Նասաֆը, Քիշը, Քյուլաբը և Բալխը նրա իշխանության ներքո են գտնվում»³:

Այսպիսով ուրեմն, կասկածից դուրս է, որ բեյթ-ուլ-մալի հողերը կարող էին օտարման ենթարկվել միայն երկրի գերագույն իշխանության կողմից:

Արդ, քանի որ Ամիր Ռուստամը վերոհիշյալ կալվածագրում ինքն անձամբ է ներկայանում որպես օտարող կողմ, ապա պետք է ենթադրել, որ սովյալ ժամանակաշրջանում նա հանդիսացել է այդ կողմերի գերագույն իշխանությունը մարմնավորող մի անձնավորություն: Կալվածագրում ոչ միայն չի նշված նրա որևէ մեկի կողմից լիազորված կամ, ինչպես կարող էր ենթադրվել, բեյթ-ուլ-մալի գործակալության ֆունկցիաները իրականացնող անձնավորություն լինելու մասին, այլ ընդհակառակը, նա անվանված է «վեհանձնձյա Ամիր և իշխան, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան և բարձրագույն աստժո վստահելի ծառա և ամենաազնիվ վեզիր, նորին կայսերական մեծություն սուլթանի մտերիմ, ամենազոր արքայական պետության սիրելի, մեծագույն արքունի խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելի, որի անձը վեր

1 Հայկական ՍՍՌ Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 1ա, վավ. 4:

2 Նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 934:

3 «Документы к истории аграрных отношений в Бухарском ханстве», вып. I, «Акты феодальной собственности на землю XVII—XIX вв.», сост. О. Д. Чехович, Ташкент, 1954, докум. №№ 10 и 11, стр. 42, 45, 50, 54, հմտ. докум. №№ 21 и 40, стр. 101, 104, 185, 188 (պարսկերեն բնագրերը և ռուսերեն թարգմանությունը):

է ամեն տեսակ նկարագրութիւններէց և գովեստներէց, հավիտենականութեան տեր՝ աստուծո ռոզմածութեամբ իշխանութեան և կրօնի քաջահաղթ Ամիր Ռուստամը, որդի Ամիր Բեշրեհի, որդի Ամիր Սմբատի»¹,

Հայկական ՍՍԻ ԳԱ «Տեղեկագրի» 1955 թ. 8-րդ համարում մեր ստորագրութեամբ լույս տեսավ մի հոգւած «Մի էջ Արեւելեան Հայաստանի քաղաքական կյանքի պատմութիւնից» վերնագրով: Այդ հոգւածում մանրամասն վերլուծութեան ենք ենթարկել էջմիածնի 7 դուրերի վերահիշյալ կալվածագիրը և փորձել ենք լուսաբանել ինչպէս վավերագրի թվականին և շարագրման հանգամանքներին, նույնպէս նաև Ամիր Ռուստամի ինքնութեանը վերաբերող հարցերը: Մուչն կալվածագրի և մի շարք այլ արխիվային և մատենագրական նյութերի հիման վրա աշխատել ենք պարզել XV դարի 30—40-ական թվականների խառն ժամանակաշրջանի անցուղորձերին, էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման ուղղութեամբ կատարվող ձեռնարկումներին և այս խնդրում հատկապէս Ամիր Ռուստամ Օրբելեանի և Գրիգոր Մակվեցու ակտիվ քաղաքական գործունեութեանը վերաբերող մինչև այժմ համեմատաբար քիչ լուսաբանված կամ դեռևս չլուսաբանված որոշ հարցեր:

Այժմ, բնթ-ուլ-մալի հողերի տնօրինման իրավունքների վերաբերյալ վերը կատարած եզրակացութիւնները գալիս են ավելի քան ամրացնելու մեր առաջ քաշած տեսակետը՝ Կարա-Կոյունլու Իսթանբուլ-Միթրալի օրոք Ամիր Ռուստամի վայելած առանձնաշնորհումների և ձեռք բերած քաղաքական ազդեցիկ դիրքի մասին:

Ըստ այժմ այդպիսի դիրք և արտակարգ լիազորութիւններ նա կարող էր ձեռք բերել հավատարմութեամբ, այսինքն մահմեդականութեան ընդունելու պայմանով: Այդ մասին է վկայում նաև նրա ճոխ տիրոջ մէջ հիշված «իշխանութեան և կրօնի քաջահաղթ ամիր» հորքորչումը: Այդ քայն անշուշտ զուտ զիվանագիտական քննութիւն կրում և նպատակ ունի ամուր և հաստատուն դարձնելու նրա քաղաքական իշխանութեանը Արեւելեան Հայաստանում: Սակայն դեպքերի հետագա ընթացքը և հատկապէս նրա սուղագրի՝ Կարա-Կոյունլու Իսթանբուլ Միթրալի անսխառնակ վախճանը եկավ հիմնովին խախտելու նրա դիրքը և վերջ տալու քաղաքական կարիերային, որից հետո, արդեն 1437 թ. մենք նրան տեսնում ենք ապաստանած Լոռի, իր հոր՝ Բեշրեհի և հոգևոր հայր Շմալուն վարդապետ Անգեղակոցցու մօտ, իսկ ավելի ուշ (1150-ական թթ.) Սուլեյման՝ իր հայրենի կալվածները տնօրինելիս²:

Ընդհանրապէս վերացած, էջմիածնի հիշյալ կալվածագիրը չափազանց կարևոր փաստաթուղթ է և կարտ է ավելի խոր ու բազմակողմանի ուսումնասիրութեան: Մինչև այժմ մեզ հաջողվել է որոշ պարզութիւն մտցնել ինչպէս կալվածագրի թվականին, այնպէս էլ հանդես եկող պատմական դեմքերի ինքնութեան ու վաճառքի րոնութիւն վերաբերող հարցերում: Մինչդեռ կարևոր նշանակութեան ունի նաև պարզել, թէ ինչ հողեր են եղել դրանք, նախապէս ում են պատկանել և ինչ ճանապարհով են այդ թվականներին ընկել բնթ-ուլ-մալի ստացվածքների շարքը:

Անհավանական չէ, որ այդ հողերը, որոնք XIV դարում պատկանել են տեղում իշխող հայ իշխանների, հետագայում սեփականացվել են նույն դարի վերջերից մինչև XV դարի 30-ական թվականները Այրարատում իշխող թուրքմեն տիրակալներ Ամիր Սաադի և նրա որդիների կողմից, իսկ Կարա-Կոյունլու Թսթանգարի կարճատև տիրապետութեան շրջանում, երբ Ամիր Սաադի հաջորդները ենթարկվել են հետապնդման, նրանց պատկանող հողերը, որպէս «հակառակորդներին պատկանող կալվածներ», բռնագրավվել են ու մտցվել բնթ-ուլ-մալի ստացվածքների շարքը:

1430—1435 թթ. խառն ժամանակաշրջանում, ինչպէս այդ մասին մանրամասն խոսել ենք մեր վերահիշյալ հոգւածում, Ռուստամ Օրբելեանը օգտվելով իր ձեռք բերած արտոնյալ դիրքից, շտապել է ձևակերպել այդ «վաճառքը» և հիշյալ 7 խոշոր գյուղերը դարձնել էջմիածնի վակֆային սեփականութիւններ, այդպիսով նպաստելով էջմիածնի, որպէս համայն հայ եկեղեցու գրեթե լիակատար կենտրոնի վերականգնման գործին:

Այս և XV դարի առաջին կեսի պատմութեան մի շարք այլ հարցերի, որոնց վերաբերյալ նույնպէս որոշ նյութեր կան ցրված ինչպէս արխիվային, այնպէս էլ մատենագրական աղբյուր-

¹ Հայկական ՍՍԻ Մատենադարան, Կաթող-դիվան, թղթ. 17, վավ. 93:
² Հայկական ՍՍԻ Մատենադարան, ձև. 8979, էջ 247, Կաթող-դիվան, թղթ. 2ա, վավ. 3, հմմտ. Հ. Փափազյան, Մի էջ Արեւելեան Հայաստանի քաղաքական կյանքի պատմութիւնից, Հայկական ՍՍԻ ԳԱ Տեղեկագիր, Հասարակ. գիտ., 1955, № 8, էջ 96:

ներում, մենք առիթ կունենանք հետազայում ավելի մանրամասն անդրադառնալու նշենք միայն, որ բեյթ-ուլ-մալի ինստիտուտի գործունեության վերաբերյալ վերահիշյալ փաստերն ու նրանցից հանված եզրակացությունները կարող են բավարար հիմք ծառայել ավելի որոշակի պատկերացում կազմելու նշված զարաշրջանում հայ ֆեոդալական տների ունեզրկման, հետզհետե խոշոր հողատիրությունների ասպարեզից նրանց դուրս մղվելու և քաղաքական դիրքերից վերջնականապես զրկվելու իրավաքաղաքական նախադրյալների մասին:

ИНСТИТУТ «БЕЙТ-УЛ-МАЛ» И КОНФИСКАЦИИ ЗЕМЕЛЬ АРМЯНСКИХ ФЕОДАЛОВ В XV В.

А. Д. ПАПАЗЯН

(Р е з ю м е)


В XV в., в период господства Кара-Коюнлу и в особенности Ак-Коюнлу, проводилась последовательная политика окончательного вытеснения последних представителей армянских феодальных родов с политической арены путем экспроприации их владений.

Становившиеся во время династических войн и частых политических переворотов господами положения властители производили учет, а также перепись земельных владений и доходных поместий в целях уточнения права собственности на них. Во время таких учетов и в особенности в результате проводившейся в отношении армянских феодалов («азаторди») политики насильственного перехода в мусульманство, вотчины («айреник») последних отпрысков армянских феодальных родов, как принадлежащие «противникам» («мухалифан»), конфисковывались и объявлялись собственностью «бейт-ул-мала» — этого древнейшего мусульманского института. В последнем столетии «бейт-ул-мал» действовал в качестве такого учреждения, которому было предоставлено право конфискации выморочных имений и объявления их собственностью мусульманской общины. В Армении этот институт имел определенные политические функции и являлся орудием, при помощи которого осуществлялась политика экспроприации владений армянских феодалов.

Хранящиеся в Матенадаране официальные документы, в особенности купчие крепости XV в., дают ценные сведения по интересующему нас вопросу и свидетельствуют о том, что некоторым представителям армянских феодальных родов удавалось, приняв духовное звание, получить обратно, за большой выкуп, экспроприированные у них родовые владения.

Чтобы обеспечить эти владения от последующих преследований и реквизиций, они передавали их монастырям и, становясь их настоятелями, продолжали наследственно владеть ими на основе вакуфного права.

Однако, в целом, большая часть земель, поступавших в «бейт-ул-мал», продавалась за ничтожную сумму представителям кочевой аристократии и в особенности чиновникам военно-финансовых органов. В обоих случаях отпрыски армянских феодалов, перестав быть светскими владельцами, лишались наследственных земель — этой экономической основы своей политической власти.



ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Արաբերենը դարեր շարունակ եղել է իսլամական շրջանի պարսկական պատմագրության լեզուն: Գեղարվեստական գրականության մեջ և հատկապես չափածո ստեղծագործություններում պարսից լեզուն մուտք գործեց և լայն տարածում ստացավ սկսած թ դարից, երբ միջին Ասիայում կազմավորվեց Սամանյանների պետությունը: Նույնիսկ այդ ժամանակ, երբ Սամանյան պետության սահմաններում և նրա սահմաններից դուրս ծաղկում էր նոր՝ «դարի» պարսկերենով գրվող գրականությունը, երբ հրապարակ էին իջել խոշոր քնարերգուներ՝ Ռուզաբին, Դակիկին, Ֆարրուխին և անմահ դուրսագրերգու Ֆիրդուսին, պատմական, ինչպես նաև փիլիսոփայական, աստվածաբանական և ընդհանրապես գիտական ստեղծագործությունները գրվում էին միայն ու միայն արաբերենով:

Ինչպես այդ դարաշրջանում, այնպես նաև հետագա մի քանի դարերում արաբերենը շարունակում էր մնալ որպես ոչ միայն Իրանի, այլև ամբողջ մուսուլմանական աշխարհի գիտության լեզու: Սամանյան շրջանի նշանավոր պատմիչներ՝ Իբն-Կոթեյբայի, Դինվարիի, Համզա Իսֆահանիի, Մուհամմադ-Ջարիր Թարարիի, Մուհամմադ Նարշախիի, աշխարհագիր Իբն-Ֆակիհ Համադանիի և ուրիշների հուշակավոր երկերը գրված են արաբերեն, և հետագա դարերում միայն դրանց մի մասը թարգմանվել է պարսկերենի:

Պատմագրության բնագավառում պարսից լեզուն սկսեց կիրառվել Սելջուկյան գինաստիանների տիրապետության շրջանում: Այդ շրջանից հայտնի են մի քանի պարսկալեզու պատմիչներ, ինչպես օրինակ «Ջեյն-ուլ-ախբար»-ի հեղինակ Աբու-Մաիդ Աբդ-ուլ-Հայյ Իբն-Ջահակ Իբն-Մուհամմադ Քյարդիզին, որ ապրել և ստեղծագործել է սուլթան Աբդ-ուլ-Ռաշիդ Ղազնավիի օրոք, Ղազնավիների պալատական պատմիչ Աբուլֆազլ Բեյհակին, որ արքունի դիվանատան գլխավոր քարտուղարն էր և հանդես եկավ 30 հատորանոց ընդարձակ երկասիրության մեջ, որի սակայն չնչին հատվածներն են մեզ հասել և վերաբերում են միայն սուլթան Մասուդի թագավորության շրջանին, Աբուլ-Հասան Ալի Իբն-Ջեյդ-ե Բեյհակին, որ գրել է Բեյհակ նահանգի պատմությունը և վերջապես սելջուկյան տիրապետության ամբողջ շրջանի մանրամասն պատմությունն ընդգրկող լավագույն սկզբնաղբյուրներից «Ռահաթ-ուլ-սուլտուր»-ի հեղինակ Աբուբար Մուհամմադ Ռավանդին, որ իր աշխատությունն ավարտել է 1206 թ. և նվիրել Ռումի սելջուկյան սուլթան Քեյխոսրով Իբն-Ղիլջ-Ասլանին:

Այս շրջանին են վերաբերում նաև թեև ոչ պատմագրական, սակայն տվյալ ժամանակաշրջանի պատմության տարբեր հարցերի լուսաբանման համար կա-

րևոր սկզբնաղբյուրներ հանդիսացող այլ արժեքավոր երկեր, որոնցից հիշատակության արժանի են Մելիքշահի վեզիր Աբու-Ալի Հասան իբն-Ալի Նիզամ-ու-Մուլքի «Սիասեթնամե» աշխատությունը, որտեղ հեղինակը մեծ շահով անդրադարձել է ինչպես իր ժամանակ, այնպես նաև նախորդ դարերի ընթացքում հանդես եկած աղանդավորական-սոցիալական շարժումների պատմությանը, Զիրայան դինաստիայի թագավորներից Ամիր Քեյխոսրով իբն-Իսքանդար իբն-Կաբուս Վոշմեգիրի «Կաբուսնամե» խորագիրը կրող հանրահայտ խրատագիրքը, Աբու-Հասան Ահմադ Սամարղանդիի կամ Նիզամի Աբուզիբի «Չհարմակալե» ծավալուն երկասիրությունը, ինչպես նաև մի քանի այլ մեծ ու փոքր բարոյախոսական ու առակագրական ժանրի գրական հուշարձաններ:

Պարսկալեզու պատմագրությունը զգալի վերելք պարեց հատկապես մոնղոլական Իլխանության օրոք: Մի ժամանակ էր դա, երբ պարսից գրական լեզուն լայն տարածում ստանալով դարձավ ոչ միայն ամբողջ Իրանի, այլ նաև հարևան մի շարք երկրների՝ Հնդկաստանի, Միջին Ասիայի, Ադրբեջանի և Թուրքիայի մատենագրություն, այդ թվում նաև պատմագրության հիմնական լեզուն:

Այս շրջանի նշանավոր պատմագիրների մեծ մասը միաժամանակ հանդիսանում էին Իլխանական պետության և արքունիքի խոշոր գործիչներ, որոնք ծագումով պարսիկներ լինելով հանդերձ կարողացել էին իրենց ձեռքը վերցնել պետության դեկոր: Հուլաղու խանի և հատկապես նրա հաջորդների օրոք, թեև լայնածավալ պետությունը գտնվում էր Զինգիզխանի սերունդների ձեռքում, սակայն պետության ընդհանուր փաստական ղեկավարությունը և հատկապես ֆինանսական գործերի տնօրինությունը վերապահված էր տեղական ծագում ունեցող մեծահարուստ և ազդեցիկ անձնավորությունների, որոնցից իրենց պատմական երկերով առավել հայտնի դարձան Զուվեյնի եղբայրներ խոջա Շամս-էդ-դինն ու Ալա-էդ-դին Աթամելիքը և խոջա Ռաշիդ-էդ-դին Ֆալլուլահ Համադանին:

Ռաշիդ-էդ-դինը ոչ միայն հեղինակն է Իլխանության շրջանի խոշորագույն սկզբնաղբյուր «Զամե-ուլ-թավարիխ» երկասիրության, այլ միաժամանակ նրա հանձնարարությանը էր, որ մեծահամբավ մատենագիր Շահար-էդ-դին Աբդուլահ Շիրազին գրեց «Թարիխ-ե վասսաֆ» խորագիրը կրող և Աթամելիք Զուվեյնիի «Թարիխ-ե ջհանգուշա» աշխատության շարունակությունը հանդիսացող նշանավոր պատմագրական աշխատությունը:

Իլխանության շրջանի վերջին խոշոր պատմագիրն է բարձր ֆինանսական պաշտոններ զբաղեցնող և մի քանի պատմագրական ու աշխարհագրական աշխատությունների հեղինակ Համդուլահ Մուսթովֆի Ղազվինին: Նրա գրչին են պատկանում «Թարիխ-ե գոզիդե», «Զաֆարնամե» (չափածո) և «Նուզհաթ-ու-կուլուբ» կապիտալ աշխատությունները:

Պարսկական պատմագրության մեջ այս ընթացքում սկսեց դարգանալ նաև ընդհանուր պատմության ուսումնասիրությունը: Ռաշիդ-էդ-դինի վերոհիշյալ «Զամե-ուլ-թավարիխ» (ժամանակագրությունների ժողովածու) խորագիրը կրող աշխատությունը այդպիսի մի համահավաք պատմության լավագույն նմուշներից կարելի է համարել: Հայտնի են նաև այլ աշխատություններ, ինչպես օրինակ՝ Աբու-Օմար Օսման Մինհաջ-էդ-դին իբն-Մուհամմադ Սիրաջ-էդ-դինի «Թաբակաթ-ե նասերի» աշխատությունը, որն ընդգրկում է Հնդկաստանի,

Իրանի և հարևան մյուս երկրների պատմությունը սկսած աշխարհի արարչագործությունից մինչև հիշրեթի 658 (1260) թվականը:

Ընդհանուր պատմագրության այս ձևը այնուհետև լայն տարածում ստացավ և հետագա պատմիչներից շատերը սկսեցին հանդես գալ ավելի խոշոր և ծավալուն երկերով: Լանկ Թեմուրի և նրա հաջորդների օրով ևս գրվեցին, ինչպես նույն ժամանակաշրջանի պատմությունը նվիրված առանձին գործեր, այնպես նաև այդ կարգի համահավաք ընդհանուր պատմություններ, ինչպես օրինակ խոջա Նուր-էդ-դին Լութվուլլահ Հաֆեզի շուրս հատորանոց «Զուրգաթ-ուլ-թավարիխ» և Ֆասիհի հաֆիի «Մաշմալ-ե ֆասիհի» աշխատությունները և հատկապես Մուհամմադ իբն-հավանդշահի կամ Միրխոնդի «Ռուզգաթ-ուս-սաֆա» 7 հատորանոց ընդարձակ պատմագրությունը, որ նա գրել է Ալիշեր Նավայի հանձնարարությամբ և նվիրել է նրան:

Լանկ Թեմուրի նվաճումների պատմության երկու հիմնական սկզբնաղբյուրներ կան, որոնք երկուսն էլ կրում են «Զաֆարնամե» (հաղթությունների գիրքը) վերնագիրը: Դրանցից առաջինը երկու հատորանոց ընդարձակ ժամանակագրություն է, որի հեղինակն է Շարաֆ-էդ-դին Ալի Յազդին, իսկ երկրորդը գրել է պալատական պատմիչ Նիզամ-էդ-դին Շամին Լանկ Թեմուրի անմիջական հսկողության ներքո: Թեմուրյան ամբողջ շրջանի լավագույն աղբյուրներից է նաև Արդ-ուլ-Ռազզակ Սամարղանդիի «Մաթլա' -ուս-սադեյն»-ը որ ընդգրկում է 1304—1571 թթ. շուրջ 250-ամյա շրջանի պատմությունը, հանդիսանալով Ռաշիդ-էդ-դինի պատմության շարունակությունը:

Վ. Վ. Բարտոլդը, խոսելով թեմուրյան շրջանի պատմական սկզբնաղբյուրների մասին շեշտում է, որ այս շրջանը ուսումնասիրողը «գոթվարություններ է կրում ոչ թե նյութի սակավությունից, այլ առատությունից, նյութեր որոնք ցրված են բազմաթիվ գրադարաններում և պահանջում են քննական ուսումնասիրություն և առաջին հերթին քննական հրատարակություն»: Մեջ բերելով Բարտոլդի այս խոսքերը պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին միանգամայն իրավացի կերպով գտնում է, որ նույն գնահատականը ավելի քան վերաբերում է նաև ԺԶ—ԺԸ դդ. պարսկալեզու պատմագրությունը¹: Եվ իրոք, ինչպես ԺԶ—ԺԷ դդ. սեֆյան տիրապետության շրջանում, այնպես նաև ԺԸ դարում Իրանում, ինչպես նաև Հնդկաստանում, Միջին Ասիայում, Ադրբեջանում և Թուրքիայում հրապարակ իջան մեծ թվով պատմիչներ, որոնք թողին չափազանց հարուստ և պատկառելի քանակությամբ պատմական մեծարժեք երկասիրություններ:

Սակայն, եթե թեմուրյան կամ գուրգանիների ժամանակաշրջանի պատմագրական երկերի լեզուն համեմատաբար ավելի պարզ էր ու զգալի չափով զերծ նախորդ շրջանի որոշ հեղինակների մոտ լայնորեն օգտագործվող արաբական խրթնաբանությունից, ապա նրան հաջորդող սեֆյան շրջանի հարուստ պատմագրությունը, ընդհանրապես վերցրած, աչքի է ընկնում իր աննախընթաց խրթնաբանությամբ և պալատական պատմագրությանը հատուկ արտակարգ ներբողագրական ոճով:

Այս շրջանի մի քանի հեղինակներից բացի (Հասան-բեկ Ռումլու, Շարաֆ խան Բիթլիսի, Շահ Թահմազ Ա և ուրիշներ) մյուս բոլոր պատմիչները, սկսած

¹ И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI нач. XIX вв. Л., 1949, стр. 19.

եռահատոր «Հարիր-ուս-սիար»-ի հեղինակ Ղիաս-էղ-գին խանդամիրից և վերջացրած Ղաջարյան առաջին թագավորների պատմիչ Աբդ-ուլ-Ռազզակ բեկ իբն-Նաջաֆկուլի խանով, հանդիսանում են պատմագրության այդ ժանրի ներկայացուցիչներ, որոնց երկերը հագեցված են ամենաբարդ այլաբանություններով և հարյուրավոր էջեր զբաղեցնող արձակ ու շափածո ներբողներով:

Իրենց ծավալուն և բազմահատոր գործերով այս շրջանում հայտնի դարձան Ղիաս-էղ-գին իբն-Հումամ-էղ-գին խանդամիրը, Հասան-բեկ Ռումլուն, Մուլլա Իդրիս Բիթլիսին, Յահյա իբն-Աբդ-ուլ-Ղաթիֆ Ղազվինին, Աբուբարք Քեհրանին, Շարաֆ խան Բիթլիսին, Շահ Աբբաս Ա-ի պալատական պատմիչ, եռահատոր «Թարիխ-ե ալամարա-յե արբասի»-ի (Աբբասյան աշխարհարար պատմություն) հեղինակ Իսքանդար բեկ Թորքեմանը, Ղազի Ահմադ Ղաֆֆարին, Մուհամմադ-Թահեր Վահիդը, Մուհամմադ-Յուսուֆը, Նադիր շահի գլխավոր քարտուղար Միրզա-Մեհդի խան Աստարաբադին, «Թարիխ-ե ալամարա-յե նադերի»-ի հեղինակ մեծ վեզիր Մուհամմադ-Քյադիմը, Զենդ Քյարիմ խանի և նրա հաջորդների պատմության հեղինակ Ալի-Ռզա իբն-Աբդ-ուլ-Քյարիմ Շիրազին, Ղաջարյան շրջանի 15 հատորանոց պատմության՝ «Նասեխ-ուլ-թավարիխ»-ի հեղինակներ Միրզա-Թադի խան Սիեհերին և Աբբասկուլի խանը, որ նույնպես ճանաչված է Սիեհերի անունով, եռահատոր «Թարիխ-ե մունթազամ-ե նասերի»-ի հեղինակ Մուհամմադ Հասան խան Սանի-ուդ-դովլեն, Մուհամմադ-Միրզան, Ֆալլուպահ Մունշին, Աբդ-ուլ-Ռազզակ իբն-Նաջաֆկուլի խան Դոմբուլին և բազմաթիվ այլ մեծ ու փոքր պատմագիրներ:

Ուշագրություն արժանի է նաև այս շրջանի Հնդկաստանի Մեծ մողոլի պետության պալատական պատմագրությունը: Աբբար շահի, Շահ Զհանի և մյուս թագավորների օրոք պատմագրությունը Հնդկաստանում արտակարգ ծաղկում ապրեց: Ստեղծվեցին այնպիսի հուշակավոր երկեր, ինչպիսիք են օրինակ Ահմադ իբն-Նասրուլահի «Թարիխ-ե ալֆի»-ն, Մուհամմադ-Յուսուֆ իբն-Շեյխի «Մունթախար-ուլ-թավարիխ» ընդարձակ ընդհանուր պատմությունը, նույն վերնագիրը կրող Աբդ-ուլ-Կադիր Բադավոնիի Աբբար շահի թագավորության 50 տարիների ընդարձակ պատմությունը (1556—1605), Մուհամմադ-Ղասեմ Հնդուշահի «Փոլլան-ե իբրահիմի»-ն, Աբբար շահի հուշակավոր վեզիր Շեյխ Աբուլֆազլի «Աբբարնամե»-ն, ինչպես նաև «Ռովզաթ-ուլ-թահերին», «Միր'աթ-ուլ-ալամ», «Միր'աթ-ուլ-սաֆա», «Թարակաթ-ե արբարշահի» և այլ հայտնի ու անհայտ պատմական երկեր:

Պատմագրության այս էտապին բնորոշ են ոչ միայն ընդհանուր պատմություններ և կամ առանձին թագավորական դինաստիաների պատմությունը նվիրված գործեր, այլ նաև տեղական ֆեոդալների կամ առանձին ֆեոդալական ընտանիքների ազգաբանությանը ու նրանց իշխանության պատմությունը նվիրված ուշագրավ և որոշ իմաստով ավելի արժեքավոր աշխատություններ, որոնցից մի քանիսին ստորև առիթ կունենանք անդրադառնալու:

Այսպիսին է խիստ համառոտակի ուրվագծված շուրջ 1000-ամյա պատմություն ունեցող պարսկալեզու պատմագրության անցած ուղին:

* * *

Այժմ տեսնենք թե այս ճոխ և հարուստ պատմագրությունից ի՞նչ արժեքավոր ձեռագրեր կան Պետական Մատենադարանում:

Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի թիվը 350-ից չի անցնում: Ինք-

նին հասկանալի է, որ այս փոքրիկ հավաքածուի մեջ առկա պատմագրական բովանդակություն ունեցող ձեռագրերը ևս մեծ թիվ չեն կարող կազմել:

Իլխանական շրջանի պատմագրությունից Մատենադարանում կա միայն Շահաբ-էդ-դին Աբդուլլահ Շիրազի «Թարիխ-ե վասսաֆ—تاریخ و وصف»-ի (Պըր-վատող պատմություն) Ա. հատորի մեկ ձեռագիր, որն ընդօրինակված է հիշ-րեթի 1268 թ. (1852 թ.) Թավրիզում: Բնագիրը գրված է միասյուն, խոշոր նասիխ գրությունով, յուրաքանչյուր էջում 15 տող: Նախապես ազատ թողած լայն լուսանցքներում և տողատակի ազատ մասերում մանր շիքասթե գրությամբ տըր-ված են մանրամասն ծանոթագրություններ և խրթին բառերի ու տերմինների բացատրություններ:

«Թարիխ-ե վասսաֆ»-ը, որ ընդգրկում է Հուլաղյանների պատմությունը սկսած Բաղդադի գրավումից (1258 թ.) մինչև Աբու-Սաիդ Իլխանի թագավորու-թյան ժամանակները (1328 թ.), խրթնաբանության տեսակետից իր ժամանա-կի դասական հուշարձաններից է և դարեր շարունակ դպրոցներում օգտագործ-վել է, որպես շարագրության, ոճաբանության և դասական ճարտասանության ձեռնարկ: № 15-ի տակ գրանցված Մատենադարանի սուլյն ձեռագիրը ևս, որ ինչպես պարզվում է վերջին էջի հիշատակարանից, ընդօրինակված է Թավրիզի Մադրասեի ուսուցիչ Ալի իբն-Ջեյն-ու-Աբդինի ձեռքով, ամենայն հավանա-կանությամբ նույն դպրոցում օգտագործվել է որպես դասագիրք: Հուսանցքների ծանոթագրություններն ու բացատրությունները մեծ մասամբ ուսուցողական բնույթի են և օգնում են բնագրի ճշգրիտ ընթերցմանն ու ըմբռնմանը: «Թա-րիխ-ե վասսաֆ»-ի լրիվ բնագիրը վիմատիպ հրատարակությամբ լույս է տե-սել 1853 թ. Բոմբեյում:

Իլխանության շրջանին է վերաբերում նաև № 561 ձեռագիրը: Դա Շահ-նամեի շափով գրված մի ընդարձակ չափածո ստեղծագործության միայն առա-ջին հատորն է և կրում է «Հումայուննամե—همایون نامه» վերնագիրը: Գրքի ներածական մասից իմանում ենք, որ հեղինակը այն գրել է Աբաղա խանի օրոք, նրա մեծ վեզիր, սահրեդիվան, Բաղդադի, Իրաքի ու մերձակա նահանգների կառավարիչ Ալա-էդ-դին Աթամելիք Ջուվեյնիի պատվերով և ձոնել է նրան: Անանուն հեղինակը հավանաբար գրել է մի քանի հատորներից բաղկացած չափածո պատմություն, որ սկսում է Մուհամմեդ մարգարեի ծնունդով և հաս-նում է մինչև իր ժամանակները: Վերջին շրջանի համար որպես հիմնական սկզբնաղբյուր նա հիշատակում է նույն Աթամելիք Ջուվեյնիի «Թարիխ-ե ջհանգոշա»-ն: Սուլյն հատորը պարունակում է միայն Մուհամմեդի հանդես գալու և նրա կենդանության օրոք մղված նվաճողական պատերազմների (ղա-զավաթ) պատմությունը:

Մատենադարանի սուլյն ձեռագիրը չափազանց հին է: Թեև սկզբի էջերը պահպանված են, սակայն դրանք խիստ քայքայված են եղել և նորոգվել են միայն վերջերս: Բնագիրը գրված է շոքս սյունակում, ոչ շատ հաջող, սակայն բավական պարզ նասիխ գրությամբ: Ձեռագրի վերջին էջերը չեն պահպանվել, ուստի և գրչության վայրն ու ճշգրիտ ժամանակը մնում է անհայտ: Հնագրա-կան որոշ տվյալներ, ինչպես օրինակ առաջին երկու էջերի զարդանկարները և մանավանդ «քուֆի» գրության օգտագործումը որպես լուսանցազարդեր, ինչ-պես նաև մի քանի հնչյունային և տառադարձային օրինաչափություններ, թույլ են տալիս ասելու, որ ձեռագիրը գրված է ԺԴ դարից ոչ ուշ:

Հայտնի է, որ Համդուլլահ Մուսթովֆի Ղազվինին Ռաշիդ-էդ-դինի սահիր

դիվանության օրոք, նույնպես Շահնամեի չափով գրել է «Ձաֆարնամե— ظفر نامہ» խորագիրը կրող 150.000 տողանոց մի ընդարձակ պատմություն, սկսած իսլամի հանդես գալուց մինչև Իլխանության ժամանակները: Ղազվինին իր այդ նոր աշխատությունը, որ փաստորեն նրա «Թարիխ-ե Գոզլիդե»-ի չափածո վարիանտը կարելի է համարել, ավարտել է հիշրեթի 735 (1334—1335) թ. և վերջին շրջանի պատմության համար հիմք է ունեցել Ռաշիդ-էդ-դինի և Վասսաֆի գործերը:

«Հումայուննամե»-ի այս հետաքրքիր ձեռագիրը գալիս է վկայելու, որ Ռաշիդ-էդ-դինը այս դեպքում հետևել է Զուլեյնիի օրինակին և ցանկացել է իր ժամանակը ևս հավերժացնել Շահնամեի նման մի բազմահատոր չափածո հուշարձանով, այդ գործը հանձնարարելով գրչի մեծ վարպետ և ժամանակի նշանավոր մատենագիր Համդուլլահ Մուսթովֆի Ղազվինին:

Այս ձեռագիրը արժանի է լուրջ և բազմակողմանի ուսումնասիրության, որը հնարավորություն կտա թերևս հետագայում գտնելու աշխատության մյուս հատորները, որոնք անշուշտ պատմության համար ավելի մեծ արժեք են ներկայացնում:

Մատենադարանի պատմագրական ձեռագրերի մի զգալի մասը վերաբերում է թեմուրյան շրջանին:

№ 286-ի տակ գրանցված է Նիզամ-էդ-դին Շամիի «Ձաֆարնամե— ظفر نامہ»-ի (Հաղթության գիրք) մի բավական ընտիր ձեռագիր, որը հիշրեթի 1097 (1686) թ. ընդօրինակություն է, բաղկացած է 528 թերթից (33×15 սմ) և գրված է պարզ նասիխալիդ գրությունով:

Նիզամ-էդ-դին Շամին «Ձաֆարնամե»-ն սկսել է գրել հիշրեթի 804 (1401—1402) թվականին: Հեղինակի վկայությամբ, Թեմուրը մեծ ուշադրություն է նվիրել այս գրքի խմբագրմանը և փաստորեն անձամբ է խմբագրել այն: Նա հրաման է արձակել, որպեսզի կայսրության բոլոր կողմերից հավաքեն և Սամարղանդի իր արքունիքը բերեն այդ կողմերում իր կատարած արշավանքների ժամանակ գրված բոլոր ժամանակագրություններն ու հիշատակարանները, ապա հավաքել է տարբեր լեզուներ տիրապետող անձանց, որպեսզի մասնակցեն գրքի խմբագրման աշխատանքներին:

Թե ինչպիսին կարող էր լինել Լանկ Թեմուրի նման արյունհեղակ բռնակալի անմիջական հսկողության ներքո, նրա կատարած արշավանքների պատմության այդ «կուեկտիվ» խմբագրությունը, այդ մասին կարելի է եզրակացնել գրքի ներածության հետևյալ հատվածից.

«Այն ժամանակ աստծո ստվերը, — գրում է Նիզամ-էդ-դին Շամին, — իր արքունիքը հրավիրեց ճարտասան թուրքագետներ և պարսկագետ լեզվագետներ, որոնք այդ մատյանները կարդում էին և յուրաքանչյուր առանձին դեպքի վերաբերյալ երկրի տարբեր մասերից հրավիրվում էին տվյալ դեպքին մասնակից և ակնատես անձինք, որոնք պատմում էին այն ինչ իրենց աչքով տեսել էին, և այդ բոլոր տարեգրությունների տվյալները ու լավատեղյակ անձանց վկայությունները ի մի բերելուց և միմյանց լրացնելուց հետո, այն ինչ որ նորին սրբությունը ավելի ճշմարտացի էր թվում, և ինքն իր մարգարտաշաղ լեզվով թելադրում էր, գրագիրները անմիջապես գրի էին առնում» (ձեռ. № 286, էջ 71բ—72ա):

Այսօրինակ «խմբագրությունից» չի կարողացել խուսափել պալատական պատմագիրներից և ոչ մեկը. նրանք բոլորն էլ առավել կամ նվազ չափով են-

թարկվել են բռնակալի թելադրանքներին: Այս բոլորով հանդերձ «Ջաֆարնամե»-ն համարվում է Լանկ թեմուրի տիրապետության շրջանի լավագույն սկզբնաղբյուրներից մեկը, հետևաբար և Մատենադարանի սույն ձեռագիրը անտարակույս մեծ արժեք է ներկայացնում և կարող է օգտագործվել թեմուրյան շրջանի պատմագրության այս կարևոր հուշարձանի քննական բնագիրը հրատարակության պատրաստելու ժամանակ:

Մեվլանա Հաթեֆիի «Թեմուրնամե— تیمورنامه» չափածո պատմության երկու ձեռագրեր գրանցված են արաբատառ ֆոնդի № № 242 և 369-ի տակ: Լանկ թեմուրի արշավանքների չափածո նկարագրությունը պարունակող այս ձեռագրերը, որոնք դրված են երկսյուն նասթաալիզ գրությամբ, երկուսն էլ վերջից թերի են:

Գատելով հնագրական տվյալներով, երկու ձեռագրերն էլ ժեղարի ընդօրինակություններ պետք է լինեն:

Նշված ձեռագրերի ուշագիր համեմատությունը Նիզամ-է-դ-դին Շամիի «Ջաֆարնամե»-ի հետ թույլ է տալիս ենթադրելու, որ «Թեմուրնամե»-ի հեղինակը մեծ չափով օգտվել է «Ջաֆարնամե»-ից և փաստորին Լանկ թեմուրի արշավանքների և կատարած նվաճումների արձակ նկարագրությունները վերածել է չափածոյի: Դեպքերի ժամանակագրական կարգը, ինչպես նաև առանձին հատվածների և գլուխների վերնագրերը տառացիորեն համընկնում են: Այդ է պատճառը, որ այս հուշարձանը հայտնի է նաև «Ջաֆարնամե-յե հաթեֆի— ظفر نامه هاتفی» անունով:

«Թոգուբաթ-ե թեմուրի— تزو کات تیموری» խորագիրը կրող և Լանկ թեմուրի կենսագրությանն ու նրա կատարած բարեկարգություններին վերաբերող, և ըստ որոշ տվյալների իր իսկ թեմուրի գրչին պատկանող արժեքավոր գործից Մատենադարանում կա մի բավական ընտիր ձեռագիր (№ 579), որ ընդօրինակված է 1847 թ. Թեհրանի մոտ գտնվող Գուհակ ամառանոցում: Ընդօրինակությունը կատարված է Բրիտանական դեսպանի տեղակալ Մանի պատվերով, նրա դասատու Միրզա Յուսուֆի ձեռքով:

«Թոգուբաթ-ե թեմուրի»-ի այս վարիանտը պարունակում է միայն բարեկարգություններին վերաբերող հատվածը և բաղկացած է երկու մասից (مقالت), որոնցից առաջինը թեմուրի խորհուրդներն ու դատողություններն են (تدبیرات و کنگاشها), իսկ երկրորդը՝ նրա ձեռք առած միջոցառումներն ու սահմանած կարգերը երկրի կառավարման և բանակի վերաբերյալ (تزوک و ٔتور): Մատենադարանի ձեռագրում ևս բացակայում է այն նախաբանը, որ գոյություն ունի Բրիտանական թանգարանի որոշ ձեռագրերում և գրված է հավանաբար ընդօրինակողներից մեկի՝ Աբութալիբ ալ-Հուսեյնի ալ-Արիզիի ձեռքով: Վերջինիս սխալմամբ համարում են սույն սկզբնաղբյուրի հեղինակը և ելնելով այդ փաստից կասկած են հայտնում այս աշխատության հարազատության վերաբերյալ: Մատենադարանի հիշյալ ձեռագիրը մի անգամ ևս գալիս է հաստատելու այդ ենթադրությունների անհիմն լինելը:

Մուհամմադ իբն-Խավանդազ-ի Միրխոնդի «Ռովզաթ-ու-սաֆա—روضه الصفا» (Ուրախ պարտեզ) ընդհանուր պատմությունը համարվում է թեմուրյան շրջանի խոշորագույն պատմական երկը, որ բաղկացած է 7 հատորից: Առաջին երեք հատորները ընդգրկում են իսլամական աշխարհի պատմությունը մինչև Աբբասյան խալիֆների շրջանը ներառյալ: Չորրորդ հատորը նվիրված է Աբբասյաններին ժամանակակից մյուս մուսուլման թագավորների պատմությանը: Հինգե-

որորը Չինգիզի և նրա սերունդների պատմությունն է, վեցերորդը Լանկ Թեմուրի և նրա հաջորդների՝ իսկ յոթերորդը, որ նա չհասցրեց գրել և նրա մահվանից հետո գրեց և ավարտեց նրա թոռը (դստեր որդին) Ղիաս-էդ-դին իբն-Հումամ-էդ-դին Խանդամիրը, Հերաթի թեմուրյան սուլթան Հուսեյն Բայկրայի թագավորության շրջանի պատմությունն է մինչև նրա մահը (1506 թ.)¹:

Մատենադարանում կան «Ռովզաթ-ուս-սաֆա»-ի չորս հատորների հինգ ձեռագրեր, որոնցից № 9-ի տակ գրանցված Ա հատորը ԺԶ դարի ընդօրինակություն է, որի սկզբից 3, վերջից 12 և միջին մի քանի վնասված կամ թափված էջեր ԺԸ դարում փոխարինվել են նոր արտագրված էջերով:

Բ հատորից, որ ընդգրկում է Մուհամմեդի և առաջին խալիֆների նվաճողական պատերազմների պատմությունը, ունենք երկու ձեռագիր (№ № 1, և 555), որոնցից առաջինը շափազանց ընտիր ձեռագիր է, գրված գեղեցիկ նաս-թաալիզ գրությամբ, հիշրեթի 1004 (1556) թվականին Բասրայում, իսկ երկրորդը, որ նույնպես բավական լավ պահպանված ձեռագիր է, ընդօրինակված է հիշրեթի 1090 (1679) թվականին Կենտրոնական Իրանի Քյամարեի շրջանում:

№ 24-ի տակ գրանցված «Ռովզաթ-ուս-սաֆա»-ի Գ հատորը ԺԷ դարի ընդօրինակություն է, կատարված նուրբ նասթաալիզ գրությամբ, որը սակայն խիստ քայքայված է եղել և նորոգվել ու թափված թերթերը լրացվել է ԺԹ դարի սկզբներին:

Ուշագրության արժանի ձեռագիր է Ե հատորը (№ 337), որ ընդօրինակված է հիշրեթի 1041 (1632) թվականին Սպահանում, պարզ նասթաալիզ գրությամբ: Ձեռագրի գրիչն է Ալի խանի որդի Ալի բեկ Արդաբեյլցին, որ հավանաբար սեֆյան Շահ Սաֆիի արքունի դիվանատան քարտուղարներից է եղել: Ձեռագրի վերջին էջի վրա նա թողել է հետևյալ համառոտ հիշատակարանը.

تمت الكتاب شريف بعون الله الملك اللطيف في تاريخ يازدهم شهر شعبان المعظم سنة ١٠٤١ احد و اربعين و الف على يد اضعف عبادالله عليخان بن علي بيك ساكن اردبيل در حالتی که همراه اردوی معلى ازدار السلام بغداد متوجه دار السلطنة اصفهان شد بعد از چندگاه بجهت رفع آزرده گى بنوشتن اين تاريخ مشغول گشت و در اندك زماتى و بلطف حضرت سپهاسنى سمت تحرير يافت.

«Աստժո ողորմածությամբ ավարտվեց սրբազան հատորիս ընդօրինակությունը 1041 թվականի շաբաթն ամսի 11-ին (1632 թ. մարտ 4), աստժո նվաստագույն ծառա Արդաբեյլցի Ալի խանի որդի Ալի բեկի ձեռքով: Այն ժամանակ, երբ արքունի բանակի հետ միասին ապահով քաղաք Բաղդադից վերադարձա թագավորանիստ Սպահան քաղաքը, միառժամանակ հետո, հոգնածությունս փարատելու նպատակով ձեռնարկեցի սույն պատմության ընդօրինակմանը և կարճ ժամանակում, տիրոջ բարեխնամության շնորհիվ ավարտեցի»:

«Ռովզաթ-ուս-սաֆա»-ի քննական բնագիրը դեռևս լույս չի տեսել: Հայտնի են միայն 1854 և 1858 թթ. Թեհրանի վիմատիպ հրատարակությունները, ինչպես նաև սելջուկյան շրջանին և աթաբեկներին վերաբերող առանձին հատվածների ԺԹ դարի առաջին կեսի եվրոպական մի քանի հրատարակություններ: Այս տեսակետից էլ նրա առանձին հատորների լավագույն ձեռագրերը, այդ

¹ Ղաջարյան շրջանի պատմիչ Ռզակուլի խան Հեղաթը գրել է «Ռովզաթ-ուս-սաֆա»-ի հաջորդ երեք հատորները, հասցնելով մինչև Նասր-էդ-դին շահի թագավորության ժամանակները:

թվում նաև Մատենադարանի հիշյալ 5 ձեռագրերը, ազբյուրագիտական որոշակի արժեք են ներկայացնում և արժանի են մասնագիտական ուսումնասիրության:

Ղիաս-էդ-դին իբն-Հուամմ էդ-դին հանդամիրը հայտնի է ոչ միայն որպես «Ռոմվաթ-ուս-սաֆա»-ի է հատորի հեղինակ, այլ նրա գրչին են պատկանում նաև մի քանի այլ ծավալուն պատմագրական երկեր: Նա մեկն էր այն երջանիկ մատենագիրներից, որոնք վայելում էին սուլթան Հուսեյն Բայկրայի իմաստուն վեզիր, մեծանուն բանաստեղծ Ալիշեր Նավայի անմիջական հովանավորությունը: Վերջինիս հանձնարարությամբ էր, որ նա գրեց «Խուլասաթ-ուլ-ախբար— خلاصۃ الاخبار» (Տեղեկությունների համառոտագրություն) կոմպիլատիվ ժամանակագրական աշխատությունը: 1507 թվականին, երբ ուզբեկ Շեյքբանինը վերջ տվին Թեմուրյանների տիրապետությանը, հանդամիրը մնաց Հերաթում մինչև 1526 թվականը, որից հետո անցավ Հնդկաստան և հյուրընկալվեց Բաբուրի արքունիքում, ուր և վախճանվեց հիշերթի 941 (1535) թվականին: 1524 թ. նա Հերաթում ավարտեց իր երեք հատորանոց ընդհանուր պատմությունը, որ ի պատիվ իր մեկենաս, վեզիր խոջա Հաբիբուլլահ Սավոշի, վերնագրեց «Հաբիբ-ուս-սիր— حبيب السیر (Վարքերի սիրելին):

Ի տարբերություն իր նախորդների նանգամիրը առաջինն է, որ իր աշխատությունը սկսում է նախախաղաղական շրջանի թագավորների պատմությամբ, ընդգրկելով ոչ միայն Իրանի, այլ նաև Հոռմի, Հոնաստանի և Արաբիայի պատմությունը, որին և նվիրել է իր աշխատության Ա հատորը: Բ հատորում շարադրված է խալիֆաթի պատմությունը, իսկ Գ հատորը նվիրված է խալիֆաթի անկումից հետո ընկած ժամանակաշրջանի պատմությանը մինչև ԺՁ դարի սկիզբը:

Մատենադարանի արաբատառ ֆոնդի № 558-ի տակ գրանցված է «Հաբիբ-ուս-սիր»-ի Ա հատորի մի բավական ընտիր օրինակ: Ձեռագիրն ընդօրինակված է հիշերթի 1026 (1617) թ., պարզ նասթաալիդ գրությամբ, Մազանդարանի Նուրի կոչվող վայրում, հավանաբար նույն վայրի բնակիչ Խոջա Մուհամմադ-Թադիի պատվերով: Ձեռագրի պահպանակի վրա անհայտ անձնավորության կողմից կատարված է հետևյալ մակագրությունը.

ازمرحوم خواجه محمد تقی نوری من توابع مازندران بهشت نشان بمبلغ

يکتومان تبریزی ابتیاع شد. تحریرا بتاریخ شهر شعبان سنه ۱۰۷۰

«Դրախտագեղ Մազանդարանի վայրերից՝ Նուրիեցի հանգուցյալ Խոջա Մուհամմադ-Թադիից գնեցի Թավրիզի մեկ թումանով, գրվեց 1070 (1660) թվականի շաբաթն ամսին»¹:

Բաղեշի քրդական Ռոժակ մեծ ցեղի առաջնորդների ընտանիքը հայտնի է իր երկու խոշոր պատմիչներով, որոնցից առաջինը մեծ մատենագիր և պետական գործիչ Մուլլա Իդրիսն է, որ հանդես եկավ ԺՁ դարի սկզբներին, իսկ երկրորդը՝ Շարաֆ խան Բիթլիսին է, որ հայտնի գարձավ նույն դարի վերջերին իր հանրահայտ «Շարաֆնամե» աշխատությամբ:

Մուլլա Իդրիս Բիթլիսին հեղինակն է Օսմանյան պետության առաջին 8 սուլթանների պատմությանը նվիրված «Հաշթ բեհեշտ— هشت بهشت» (Աթը

¹ Ջաբարիա Ազուլեցու տվյալներով ԺԷ դարի վաթսուներկու թվականներին մեկ թումանով կարելի էր գնել մոտավորապես մեկ տոննա ցորեն (Շարաբիա Ազուլեցու օրագրությունը, Ծրեան, 1938, էջ 114, 133, 155):

դրախտներ) կամ «Թարիխ-ե ալ-ե օսման — تاریخ آل عثمان» (Պատմություն Օսմանյան պետության) խորագիրը կրող աշխատության, որ նա գրել է ութերորդ սուլթան՝ Բայազիդ Բ-ի (1481—1512) պատվերով:

«Հաշիբ բեհեշիթ»-ի սկզբի հինգ գլուխներն ընդգրկող Մատենադարանի № 509 ձեռագիրը նույնպես շահագանցելով պահպանված և արտակարգ գեղեցիկ, մանր նասխ գրությունը գրված լավագույն ձեռագրերից է: Զեռագրի վերջում ոչ մի հիշատակություն չկա գրչության ժամանակի և վայրի մասին, որը և հավանաբար հիմք է ծառայել արաբատառ ֆոնդի ձեռագրաց ցուցակները կազմողներին, սխալ կերպով պնդելու, թե այն հեղինակի ինքնագիրն է: Մի կողմ թողած այն փաստը, որ հնագրական տվյալները միանգամայն բացասում են այդ, բավական է կարգալ երրորդ գլխի վերջին տողերը լիովին համոզվելու համար, որ այդ պնդումը զուրկ է որևէ հիմքից: Երրորդ գլուխն ավարտվում է հետևյալ տողերով.

آخرًا لجزء الثالث من تاريخ آل عثمان الذي ألفه المولى الفاضل المرحوم مولانا آدریس المنشی البدلیسی و يتلوه دفتر الرابع فى بيان أخبار السلطان یلدرم بايزید

«Ավարտվեց Օսմանյան պատմության երրորդ մասը, որի հեղինակն է մեծ իմաստուն և անգուցյալ մուլլա Իդրիս Բիթլիսցի՝ մատենագիրը և այժմ անցնում ենք չորրորդ մասին, որտեղ պատմվում է սուլթան Իդրերմ Բայազիդի կյանքը» (էջ 188բ):

Մեր կարծիքով ձեռագիրը գրված է ԺԹ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի քաղաքներից մեկում: Երկրորդ էջի լուսանցքի հիշրեթի 1239 (1823—1824) թվականի նվիրաբերման ակտը, ըստ որի ոմն Աբդուլուհասման փաշայի որդի Հասան փաշա ձեռագիրը նվիրում է (վակֆ է անում) քաղաքի մզկիթին, գրված է նույն թանաքով, նույնպիսի նասխ գրությամբ: Պետք է կարծել, որ ձեռագիրը ևս ընդօրինակվել է նույն անձնավորության ձեռքով, նույն թվականներին:

Սեֆյան ամբողջ շրջանի հարուստ պատմագրության խոշորագույն ներկայացուցիչն է Շահ Աբբաս Ա-ի պալատական պատմիչ, արքունի դիվանատան գլխավոր քարտուղար Իսքանդար բեկ Թորքեմանը, որ հայտնի է Իսքանդար Մունշի (քարտուղար) անունով: Նա գրել է երկու խոշոր հատորներից բաղկացած Շահ Աբբաս Ա-ի պատմությունը, որ վերնագրված է «Թարիխ-ե ալամարա-յե արբասի — تاریخ عالم آرای عباسی» (Աբբասյան աշխարհարար պատմություն): Աշխատության առաջին հատորը նվիրված է Սեֆյան դինաստիայի պատմությանը, մինչև Շահ Աբբասի գահակալությունը: Իսկ երկրորդ հատորը բաժանված է երկու մասի, որոնցից առաջինում պատմվում են Շահ Աբբասի թագավորության առաջին երեսուն տարիների անցքերը (1587—1616), իսկ երկրորդում, շարունակելով դեպքերի նկարագրությունը, շարադրությունը հասցրվում է մինչև Շահ Աբբասի մահը (19 հունվարի 1629 թ.):

«Թարիխ-ե ալամարա-յե արբասի»-ն համարվում է սեֆյան շրջանի պատմության հիմնական սկզբնաղբյուրը, որը մյուս պատմագրական աղբյուրներից տարբերվում է սոցիալ-տնտեսական կյանքի և Սեֆլիների պետական-վարչական սիստեմի մասին պարունակող նյութերի անհամեմատ ավելի անմիջականությամբ և առատությամբ: Ցավոք, պետք է նշել, որ այս մեծածախ սկզբնաղբյուրը ևս դեռ մինչև օրս չունի քննական հրատարակություն: Հայտնի է միայն

հիշրեթի 1314 (1896—1897) թ. Միրզա Մահմուդ Խանսարիի վիճատիպ հրատարակությունը: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողների մեծ մասը հիշյալ հրատարակության հետ զուգահեռ օգտվում են նաև «Թարիխ-ե ալամարա»-ի մեծ թվով ձեռագրերից, որոնք ցրված են աշխարհի տարբեր ձեռագրատներում:

Ուրախություն պետք է նշել, որ «Թարիխ-ե ալամարա»-ի Մատենադարանի ձեռագրերը ևս ուշադրության արժանի և բավական հին ընդօրինակություններ են: № 11-ի տակ գրանցված Ա հատորի 345 թերթերից, սկզբի 291 թերթը ժէ դարի ընդօրինակություն է, գրված պարզ նասթաալիդ գրությունով, իսկ վերջին 54 թերթերը լրացվել են հիշրեթի 1284 (1867—1868) թվականին համեմատաբար ավելի նուրբ նասթաալիդով:

Նույնպիսի ընտիր ձեռագիր է նաև № 2-ի տակ գրանցված Բ հատորի Ա մասը, որ գեղեցիկ նասթաալիդ գրությամբ ընդօրինակված է գրիչ Հաջի Մուլա Հուսեյն Ալիաբադիի ձեռքով հիշրեթի 1094 (1683) թվականին: Նշված երկու ձեռագրերի լուսանցքներում կան բավական լրացումներ և ուղղումներ, որոնք գալիս են վկայելու, որ դրանք համեմատված են այլ ձեռագրերի հետ:

Ա հատորի մյուս երկու ձեռագրերից № 575-ը հիշրեթի 1212 (1797) թվականի ընդօրինակություն է: Այս ձեռագիրը պարունակում է նաև Բ հատորի սկզբի որոշ մասը (էջ 306բ—339բ):

Ուշադրության արժանի է № 34 ձեռագիրը, որի սկզբի և վերջի թերթերը շեն պահպանվել: Սա փաստորեն «Թարիխ-ե ալամարա»-ի Ա հատորի համառոտագրության փորձ է, կատարված ԺԸ դարում, ոչ այնքան զբաղեցնող անձնավորության ձեռքով: Այս ձեռագրի առաջին էջի լուսանցքում կատարված է հետևյալ արաբերեն մակագրությունը.

تاریخ عالم آرا ۱۱ شهر شوال المکرم سنه ۱۲۵۸ اخذ من نوری فی دار الخلافة طهران
«Մուլա Թարիխ-ե ալամարան 1258 թ. շավվալ ամսի 11-ին (1842 նոյ. 15) Նուրիից բերվեց արքայանիստ Թեհրան քաղաքը». կնքված է անընթեռնելի կնիքով:

Գոյություն ունի Դաղստանի պատմության մի բավական հանրածանոթ սկզբնաղբյուր, որ հայտնի է «Դարբանդնամե—در بندنام» անունով: Այս գրքի խմբագրման ճշգրիտ ժամանակը բանասիրության կողմից դեռևս չի պարզված: Դա ծավալով ոչ շատ մեծ գիրք է, որտեղ մեծ մասամբ վաղ շրջանի արաբական աղբյուրներից քաղելով փորձ է արված շարագրելու Դերբենդի ամրությունների կառուցման, Դաղստանի հարավային շրջաններում իրանական գաղթականության, Սասանյան Կուրադի և նրա որդու Անուշիրվանի անվան հետ կապված լեգենդախառն պատմությունը, որին հաջորդում են լեռնական ժողովուրդների արարների կողմից նվաճման և բռնի մահմեդականացման պատմության առանձին գրվածքներ, ինչպես նաև արաբների տիրապետության շրջանի Դերբենդի կամ Բար-ուլ-արվաբի մի շարք արաբ կուսակալների տիրապետության պատմությունը վերաբերող հետաքրքիր մանրամասնություններ:

Լույս են տեսել «Դարբանդնամե»-ի թուրքերեն բնագրեր, ինչպես նաև անգլերեն և այլ լեզուներով թարգմանություններ: Պարսկերեն բնագիրը սակայն դեռևս լայնորեն հայտնի չէ արևելագիտությանը և կարոտ է ուսումնասիրության: Այս տեսակետից էլ Մատենադարանի պարսկական վարիանտները որոշակի արժեք են ներկայացնում: Դրանցից հատկապես մեկը (№ 252) ամենայն հավանականությամբ այն բնագիրն է, որից կատարվել են թուրքերեն և աղբյուրներին թարգմանությունները:

Մատենադարանում կան «Դարբանդնամե»-ի նաև այլ լեզուներով ևս 5 ձե-

ուագրեր, որոնցից երկուսը ադրբեջաներեն են, երկուսը արաբերեն, իսկ մեկը մի էջը լակերեն՝ մյուսը ադրբեջաներեն:

Հիշյալ բոլոր ձեռագրերը, բացի մեկից (№ 490-ը) պատկանել են իշխան Դավիթ Լազարյանցի որդի Հակոբ Լազարյանցին, որ 1848—1856 թթ., որպես կնյազ Վարշավսկու հետևակ գնդի շտաբս-կապիտան մասնակցել է լեռնականների դեմ մղվող կռիվներին: Նրա ձեռքով կատարված բազմաթիվ հայերեն ու ռուսերեն նշումներից դժվար չէ ենթադրել, որ նա հատկապես զբաղվել է այդ սկզբնաղբյուրի ուսումնասիրությամբ և գնդի միրզայի և ուրիշների ձեռքով ընդօրինակել է Կազի-կոմուսում, Դեմիր-խան-շուրայում և Դաղստանի այլ վայրերում տարբեր անձնավորությունների ձեռքում գտնվող հին ձեռագրերից: Այսպես, № 252 ձեռագրի սկզբում, որտեղ ամփոփված են «Դարբանդնամ»-ի պարսկերեն, արաբերեն և ադրբեջաներեն երեք տարբեր վարիանտների ընդօրինակություններ, կարդում ենք. «Здесь записываются три древнейшие Дербендиаты и три вернейшие выписки». ստորագրված է՝ «Яков Лазарев». Այնուհետև առանձին վարիանտների լուսանցքներում նրա կողմից կատարված են նշումներ այն մասին, թե տվյալ վարիանտը ինչ առավելություններ ունի մյուսների նկատմամբ, և կամ դրանցից որի մեջ ավելի հետաքրքիր տվյալներ կան Դաղստանում գտնվող ամբողջությունների կամ բնակչության կողմից Շամ-խալին վճարվող հարկերի քանակի մասին:

Հատուկ ուշադրության արժանի է № 239 ձեռագիրը, որ բաղկացած է 12 թերթից և գրված է մանր շիքասթե գրությամբ: Դա փաստորեն տարբեր ձեռագրերի հիման վրա կազմված «Դարբանդնամ»-ի պարսկերեն նոր խմբագրություն է, կատարված 1856 թ. Հակոբ Լազարյանցի պատվերով ԺԹ դարի գրական-հասարակական գործիչ Միրզա Յուսուֆ Ներեսուվի կողմից: Այդ պարզ երևում է ոչ միայն ձեռագրի վերջում գրված պարսկերեն համառոտ հիշատակարանից¹, այլ նաև առաջին էջի վրայի Հ. Լազարյանցի հետևյալ մակագրությունից. «Извлечение из разных летописей Дагестана, собранных мною в течение восьми лет. Як. Лазарев. 1856 года марта 22 дня, укр. Тимирхан-шура».

Այս ձեռագիրը պարունակում է նաև որոշ մանրամասնություններ Շամ-խալների տիրապետության շրջանի և բնակչության կողմից նրանց հատուցվող հարկերի, տուրքերի և տուգանքների վերաբերյալ: Այսպես, ձեռագրի վերջին էջի վրայի մի հավելյալ հարկային ցուցակից պարզվում է, որ ռուսաց տիրապետությանը նախորդող շրջանում յուրաքանչյուր տուն պարտավոր է եղել վճարել տարեկան երեք արծաթ դրամ երգահարի, երկու քիլա հացահատիկ, հարյուր ուխարից մեկ ուխար, հարյուր տուն մեկ կով, այգի ունեցողը մեկ զամբյուղ խաղող, վաճառականները մետաքս և մեկ թանկարժեք կերպաս, ամեն գյուղից հինգ աղվես մեկը սև, շորսը կարմիր, գյուղի մեկիքը փոխվելիս պարտավոր էին տալ հինգ ուխար, անմեղ մարդ սպանողը տուգանվում էր հարյուր ուխարով², ուրիշին մարմնական վերք հասցնողը պետք է տար մեկ կով, ուրիշի ապրանքը գողացողը նույնպես մեկ կով և այլն:

¹ تمام شد در بند نامها از قرار نوشتجات متعدده فی تاریخ مارت سنه ۱۸۵۶
حرره میرزا یوسف.

² Պետք է նկատի ունենալ, որ արյան փոխ վրեժը ենթակա չէր տուգանման:

Նադիր շահի պալատական քարտուղար Միրզա-Մեհդի խան Աստարաբադիի «Թարիխ-ե նադերի» — «تاریخ نادری»-ն (Նադիրյան պատմություն) համարվում է Նադիր շահի ժամանակաշրջանի գլխավոր սկզբնաղբյուրներից մեկը, որը վաղուց ծանոթ է արևելագիտությանը, թարգմանվել է մի քանի եվրոպական ու արևելյան լեզուների, ունի ավելի քան 11 վիմատիպ հրատարակություններ (Թեհրան, Թավրիզ, Կալկաթա, Բոմբեյ, Լահոր և այլն), սակայն քննական հրատարակության դեռևս չի արժանացել:

Միրզա-Մեհդի խանի այս երկը հատկապես աչքի է ընկնում իր արտակարգ ներբողագրությամբ և իր ժամանակին հատուկ վերամբարձ ոճով: Այսուհանդերձ «Թարիխ-ե նադերի»-ն մեծ ժողովրդականություն վայելող գիրք է և կարելի է ասել, որ քիչ պատմագրական գործեր կան, որ նրա շահի լայն ժողովրդական ընթերցանություն են արժանացել: Դրանով պետք է բացատրել այդքան շատ հրատարակությունների, ինչպես նաև տարբեր ձեռագրատներում և մասնավոր անձանց մոտ մեծ թվով ձեռագրերի առկայության փաստը:

«Թարիխ-ե նադերի»-ից Մատենադարանում կա 5 ձեռագիր, որոնք ԺԸ դարի և ԺԹ-ի առաջին կեսի ընդօրինակություններ են: Դրանցից առավել ուշադրության արժանի է № 23-ի տակ գրանցված ձեռագիրը, որ 1905 թ. հունիսի 1-ին Աբգար Հովհաննիսյանցի ընտանիքի կողմից նվիրվել է էջմիածնի Մատենադարանին: Ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է խոշոր նասիթալիզ գրություններ, բավական խնամքով, ունի Նադիրի մղած խոշոր ճակատամարտերը, այդ թվում նաև 1736 թ. Սևվարդի ճակատամարտը (էջ 167 բ) պատկերող հետաքրքիր մանրանկարներ: Ձեռագրի վերջին էջի բացակայության պատճառով ընդօրինակման ճշգրիտ թվականը հնարավոր չէ պարզել:

Հավանաբար ԺԸ դարի վերջերի ընդօրինակություն է հաշիկ Դադյանի ձեռագրերի խմբին պատկանող № 293 ձեռագիրը, որը բավական թերի է և քայքայված: Ետևի մասից ձեռագիրը ծակված է հրացանի գնդակով:

Մանր շիքասթե-նասիթալիզ գրությամբ գրված № 33 ձեռագիրը ընդօրինակված է 1805 թվականին և նախապես պատկանել է Աստարաբադի ցարական հյուպատոսի քարտուղար թավրիզեցի Հաջի Դուլամ-Ալիի որդի Մուհամմադ-Թադիին:

№ 567 ձեռագիրը, որ գրված է գեղեցիկ շիքասթե գրությամբ, ընդօրինակված է 1826 թ. Աստրախանում, ուշադրի վաճառական Հաջի Մուհամմադ-Ալիի պատվերով: Ընդօրինակությունը կատարված է արտակարգ խնամքով: Ձեռագիրն այժմ գտնվում է չափազանց բարվոք վիճակում:

№ 590-ի տակ գրանցված է «Թարիխ-ե նադերի»-ի ԺԹ դարի մի անավարտ ընդօրինակություն, որ 1853 թ. թավրիզեցի Մարգար Աղաբեկյանցը նվիրել է Կազարյան ճեմարանին:

Հայտնի է նույն Միրզա-Մեհդի խանի գրչին պատկանող Նադիր շահի պատմության մի այլ միհնատորյակ, որ վերնագրված է «Դուռուե-յե նադերիյե — دروازه نادری» (Նադիրյան գոհարներ): Աստարաբադիի այս աշխատությունը իր խրթին լեզվով և հույժ ներբողագրական ոճով մրցում է Շահբե-էդ-դին Աբգուլլահ Շիրազիի «Թարիխ-ե վասսաֆ»-ի հետ, և նույնպես մինչև վերջին ժամանակներս դպրոցներում օգտագործվում էր որպես դասական ճարտասանության և ոճաբանության ձեռնարկ: Դրանով պետք է բացատրել նրա բազմաթիվ վիմատիպ հրատարակությունների և մեծաքանակ ձեռագրերի գոյությունը:

Ձեռագրերի մեծ մասը ընդօրինակված են հատուկ ձևով, բնագրի շուրջը լայն լուսանցքներ և տողերի արանքները մեծ տարածություն թողնելով, հիմնականում խոշոր նասխ գրով և մասնը շիքասթե գրովթյամբ գրված տողընդմեջ բացաարություններով:

Այդպիսի ձեռագրեր են Մատենադարանի 1816 թ. № 7 և 1856 թ. № 16 ձեռագրերը, № 268 ձեռագիրը, որ ընդօրինակված է 1842 թ. Երևանում, գրիչ մոլլա Հասան Երևանցու ձեռքով, և վերջապես № 22-ի տակ գրանցված ձեռագիրը, որ ընդօրինակված է 1819 թվականին էջմիածնում, վանքի դիվանատան քարտուղար, Յազգանբախշի որդի Միրզա-Քաթուի ձեռքով:

Ֆաթհ-Ալի շահ Ղաջարի (1797—1834) թագավորության շրջանում է գրված Մատենադարանի № 547 «Զինաթ-ուլ-թավարիխ— زینت التواریخ» (Պատմությունների զարդը) խորագիրը կրող ընդհանուր պատմության Ա հատորը, որը պարսից միջնադարյան պատմագրության տրադիցիոն ձևով շարագրված կոմպիլացիոն աշխատություն է: Գրքի ներածական մասից տեղեկանում ենք, որ ամբողջ աշխատությունը բաղկացած է երկու հատորից, որոնցից սույն Ա հատորը պարունակում է աշխարհի ստեղծագործությունից մինչև խալիֆաթի շրջանի պատմությունը, մեծ տեղ հատկացնելով նաև գիտության և գրականության գործիչների կենսագրությունը: Իսկ Բ հատորը հետագա շրջանի պատմությունն է մինչև Ֆաթհ-Ալի շահի ժամանակները:

Գրքի հեղինակի անունը սույն ձեռագրի մեջ չի հիշված, անհայտ է նաև գրչության վայրն ու ժամանակը: Հավանաբար այն պետք է գրված լինի թագածառանգ Աբբաս-Միրզայի պատվերով՝ Քավրիզում:

Ձեռագիրը գրված է միասյուն գեղեցիկ նասթալիղով, ունի մանրանկար խորաններ (ունվան): Պահպանակի վրայի հայերեն և ռուսերեն մակագրությունից իմանում ենք, որ այն 1853 թ. նոյ. 15-ին Ալեքսանդրապոլցի Կարապետ Սաֆարյանցի կողմից նվիրվել է Լազարյան ճեմարանին:

Ղաջարյան շրջանի նշանավոր պատմիչներից է, ծագումով քուրդ Աբդ-ուլ-Ռազզակ բեկ իրն-Նաջաֆկուլի խանը: Նա Խոյի խան, քրդական Դումբուլի ցեղի առաջնորդ՝ Նաջաֆկուլիի որդին էր, թագածառանգ Աբբաս-Միրզայի մտերիմը, որ երկար ժամանակ վարում էր Քավրիզի բեգլարբեկության բարձր պաշտոնը: Աբբաս-Միրզայի պատվերով նա գրեց Աղա-Մուհամմադ խանի և Ֆաթհ-Ալի շահի մինչև 1814 թ. ներառյալ պատմությունը, որ կրում է «Մուասիր-ե սուլթանիյե — مائت سلطانیه» (Արքայական հիշատակներ) վերնագիրը: Այդ գիրքը լույս տեսավ հեղինակի կենդանության օրոք, 1825 թ. Քավրիզում, հանդիսանալով պարսկերեն առաջին տպագիր գրքերից մեկը:

Աբդ-ուլ-Ռազզակ բեկը գրել է նաև Դումբուլիների ընտանիքի, այսինքն իր նախնիների պատմությանը նվիրված մի ավելի արժեքավոր աշխատություն, որ հայտնի է «Քարիխ-ե դանաբիլե — تاریخ دنابله» (Դումբուլիների պատմություն) անունով: Այս աշխատությունը սակայն դեռևս լույս չի տեսել. ձեռագիր ընդօրինակությունները նույնպես խիստ սակավ են:

Ուրախությամբ պետք է նշել, որ Աբդ-ուլ-Ռազզակ բեկի այս աշխատության Սովետական Միության միակ օրինակը գտնում ենք ընդօրինակված Պետական Մատենադարանի ձեռագրատան հայկական ֆոնդի № 7938 ձեռագրի մեջ (էջ էջ 222բ—249բ):

Հիշյալ ձեռագիրը, որ Մատենադարանին է նվիրել պրոֆ. Ա. Հովհաննիս-

յանը պարունակում է ոչ միայն Աբդու-Ռազզակի այս գործը, այլ նրա սկզբի 220 թերթերը երկու նորահայտ և ունիկալ բնագրեր են, որոնք աղբյուրագիտական բացառիկ արժեք են ներկայացնում: Դրանցից առաջինը (էջ էջ 1ա—173բ) դարձյալ Դումբուլիների մի ավելի ընդարձակ պատմություն է, որ վերնագրված է «Իշարաթ-ու-մազահիբ—اشارات المذاهب» (Ակնարկներ հավատքների մասին) և որի հեղինակն է խոյի Ահմադ խան Դումբուլիի որդի Ռուսթամ խանը: Աշխատությունը հիմնականում նվիրված է Դումբուլի քրդերի պատմությանը, որոնց ծագումը կապվում է Աբբասյան խալիֆների արքունիքում բարձր դիրքի և պաշտոնի արժանացած Բարմաքյանների հետ: Ապա բավական մանրամասն խոսվում է Դումբուլի քրդերի եզիդիական հավատալիքների մասին, անվանելով նրանց «յազզանիներ» և կապելով դրադաշտականության հետ:

Երկրորդ բնագիրը (էջ էջ 178բ—220բ) նույն հեղինակի «Իշարաթ-ու-ադյան—اشارات الاديان» (Ակնարկներ կրոնների մասին) խորագիրը կրող մի այլ դավանաբանական աշխատությունն է, որ բացառապես նվիրված է յազզանիների կրոնա-դավանաբանական սկզբունքների ուսումնասիրությանը:

Երկու բնագրերի առաջին էջի վերին մասում համարյա նույն բովանդակությունը ունեցող արձանագրություններով գրքի հեղինակ Ռուսթամ-իբն-Ահմադ խանը հիշքեթի 1266 թ. զիկադա ամսին (1850 թ. սեպտ.—հոկտ.) սուլն ձեռագիրը կտակում է (վակֆ է անում) իր ժառանգներին, շեշտելով, որ շվաճառեն և գրավ չդնեն, իսկ եթե որևէ մեկը ուզենա ընդօրինակել, ապա այդ պետք է կատարվի իրենց տանը և ձեռագիրը տնից դուրս չպետք է տարվի: Այնուհետև հորդորում է իր ժառանգներին, որ նրանցից առավել կրթվածներն ու գրագետները զբաղվեն գրքի խմբագրությամբ, սրբագրեն ու շտկեն այն և շարունակեն պատմությունը մինչև այնքան ժամանակ, քանի դեռ այդ ընտանիքի մարդիկ կշարունակեն ապրել և իշխանություն վայելել:

Անցյալի պատմության ուսումնասիրության համար առավել արժեքավոր սկզբնաղբյուրներ են հանդիսանում նաև պաշտոնական գրագրությունների հրովարտակների և հրամանագրերի դասական օրինակների ժողովածուները: Այդպիսի հայտնի ժողովածուներից է Նադիր շահի պալատական քարտուղար Միրզա-Մեհդի խանի գրչին պատկանող և բազմաթիվ վիճառի պատարակությունների արժանացած «Մունշաթ-ե նադերի—مئنشات نادری»-ն (Նադիրյան գրագրություններ), որ մինչև մեր օրերը ծառայում է որպես նման գրագրությունների ուսուցման լավագույն ձեռնարկ: Մատենադարանում կան այս գրքի հինգ տարբեր ընդօրինակություններ, որոնցից առավել ուշագրության արժանի է № 333-ի տակ գրանցված ձեռագիրը, որի բովանդակությունը օրոշ շափով տարբերվում է «Մունշաթի» հայտնի վարիանտներից:

Մատենադարանում կան նաև մի քանի այլ նամականիներ և պաշտոնական գրագրությունների ժողովածուներ, որոնցից առանձին հետաքրքրություն է ներկայացնում հիշքեթի 1033 (1624) թ. ընդօրինակված և մեծ հավանականությամբ Հնդկաստանի Մեծ Մողոլի արքունի գրագիրներից մեկի գրչին պատկանող նամակների, զեկուցագրերի և այլ պաշտոնական գրությունների ժողովածուն, որտեղ բավական արժեքավոր տվյալներ կան Ջայփուրի, Լահորի և մերձակա մյուս նահանգների նույն ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ:

Հատուկ ուշադրության արժանի է № 233-ի տակ գրանցված Երևանի Հուսեյն-Ալի խան Ղաջարի (1764—1783) և նրա որդի Մուհամմադ խանի (1784—

1805) գլխավոր քարտուղարի (մունշիբաշի) գրած շուրջ 200 պաշտոնական նամակների և խանական հրովարտականների ժողովածուն: Այս վավերագրերը հանդիսանում են շափագյանց կարևոր սկզբնաղբյուր ժԸ դարի երկրորդ կեսի նրբավանի խանություն, ինչպես ներքին կյանքի, այնպես նաև հարևան խանությունների ու փաշայությունների և հատկապես Վրաստանի հետ նրա հարաբերությունների և վարած արտաքին քաղաքականության պատմության ուսումնասիրության համար:

Նման արժեքավոր վավերագրերի ժողովածուներից հիշատակության արժանի են նաև Ֆաթհ-Ալի շահի թագաժառանգ Աբբաս-Միրզայի նամակների և այլ գրությունների պատճենները պարունակող № 103 ձեռագիրը, որտեղ կան հետաքրքիր տեղեկություններ ժԹ դարի առաջին քառորդի քաղաքական անցուղարձեերի, ինչպես նաև ռուս-իրանական հարաբերությունների վերաբերյալ և № 75 ձեռագիրը, որտեղ ամփոփված են հիշրեթի 1275 (1859) թ. Իրանի դեսպան Ամին-ուղ-դովլեի զեկուցագրերը, որոնք վերաբերում են թուրք-իրանական սահմանային վեճերի և փոխհարաբերությունների կարգավորմանը:

* * *

Այս բոլորից բացի Մատենադարանի մյուս պարսկերեն ձեռագրերում ևս անշուշտ կան մասնակի հիշատակություններ ու բազմաթիվ պատասխաններ, որոնք հետաքրքիր տվյալներ են պարունակում Իրանի, Անդրկովկասի և հարևան մյուս երկրների հասարակական-տնտեսական կյանքի վերաբերյալ:

Ի վերջո, ավելորդ չենք համարում նշել, որ Մատենադարանի արխիվում պահվում են ժԵ—ժԹ դդ. վերաբերյալ ավելի քան 1500 պարսկերեն վավերագրեր (ֆերմաններ, հոբմեր, ֆաթվաներ, թալիղաններ, դաբալներ, վակֆնամեններ, իջարենամեններ, սնուրնամեններ, հոջաթնամեններ և նոտարական այլևայլ արձանագրություններ), որոնց համառոտակի նկարագրությունը տրված է մեր կազմած «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» ժողովածուի Ա պրակի առաջաբանում:

Մատենադարանը արդեն ձեռնարկել է այդ վավերագրերի հրատարակությունը: Լույս է տեսել այդ մատենաշարի առաջին պրակը (ժԵ—ժԶ դդ. հրովարտականները), պատրաստ է հրատարակության Բ պրակը, որն ընդգրկում է ժԷ դարի առաջին կեսի հրովարտականները, տրված Շահ Աբբաս Ա-ի, Շահ Սաֆիի և Շահ Աբբաս Բ-ի կողմից:

Շարունակվում են աշխատանքները հրովարտականների հաջորդ պրակի, ինչպես նաև կալվածագրերի սերիայի Ա պրակի հրատարակության պատրաստելու ուղղությամբ:

Մեջ բերված օրինակներով, ինչպես ասվեց, չի սպառվում Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի պատմագրական ամբողջ հարստությունը: «Բանբեր»-ի սուղ էջերում հնարավոր չէ տալ բոլոր ձեռագրերի մանրամասն բնութագիրը: Մենք բավարարվեցինք միայն նրանցից ամենից կարևորների խիստ համառոտ և թուղցիկ նկարագրությամբ: Սակայն այս համառոտ բնութագրումը ևս զալիս է ապացուցելու, որ Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի այս փոքրիկ հավաքածուն արժանի է ավելի մանրամասն և բազմակողմանի ուսումնասիրության:

МАТЕРИАЛЫ ПЕРВОЙ ВСЕСОЮЗНОЙ НАУЧНОЙ КОНФЕРЕНЦИИ ВОСТОКОВЕДОВ В г. ТАШКЕНТЕ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК УЗБЕКСКОЙ ССР
ТАШКЕНТ—1958

А. Д. ПАПАЗЯН

Кандидат исторических наук

ИСТОРИОГРАФИЧЕСКАЯ ЦЕННОСТЬ ПЕРСИДСКИХ РУКОПИСЕЙ ГОСУДАРСТВЕННОГО МАТЕНАДАРАНА

В Государственном Матенадаране (Хранилище древних рукописей при Совете Министров Армянской ССР) наряду с десяти тысячным фондом армянских рукописей хранится собрание арабоязычных манускриптов, насчитывающее более шестисот памятников. Среди них — около 350 персидских рукописей, относящихся к периоду XIII—XIX вв.

Персидские рукописи по содержанию весьма разнообразны. Среди них имеются как списки памятников персидской классической литературы, так и рукописи трудов философского, богословского, медицинского, географического и исторического содержания. Наряду с произведениями известных представителей персоязычной историографии хранятся памятники, которые, не будучи собственно историческими, содержат ценные сведения о социально-экономических отношениях и политической жизни Ирана, Средней Азии, Индии, Закавказья и сопредельных стран.

Из источников, относящихся к ильханскому периоду, в Матенадаране имеется только одна рукопись (№ 15) первого тома «Тарих-и вассаф» («История панегириста») Шихаб-ад-дина Абдуллаха Ширази, которая была переписана в Тавризе в 1268/1852 г. Текст написан одним столбцом, крупным письмом — насх — по 15 строк на каждой странице. На предварительно оставленных широких полях и подстрочниках мелким почерком шикаста написаны подробные комментарии и объяснения непонятных слов и терминов.

Из памятной записи на последней странице выясняется, что рукопись была переписана учителем Тавризского мадраса Али Ибн Зайнал-Абидином и, по всей вероятности, использовалась в той же школе в качестве учебника. Комментарии и объяснения, сделанные на полях, носят большей частью учебный характер и служат правильному чтению и пониманию текста.

К ильханскому периоду относится и рукопись № 561. Это — первый том обширного стихотворного произведения, написанного размером «Шах-наме» и носящего заглавие «Хумаюн-наме». Из вводной части книги выясняется, что автор написал ее во время Абака-хана по заказу его великого вазира сахибдивана — правителя Багдада и ближайших областей — Ала ад-дина Ата малика Джувеини. Безымянный автор написал историческое сочинение в стихах, вероятно, в нескольких томах. Оно начинается рождением пророка Мухаммеда и, по всей вероятности, доходило до времени правления Хулагу-хана (1265—1282). В качестве основного первоисточника для последнего периода он упоминает «Та-

рих-и джахангуша» того же Ата малика Джувейни. Находящийся в Матенадаране первый том включает в себе лишь историю выступления Мухаммеда и ведшихся при его жизни завоевательных войн (газават).

Эта рукопись чрезвычайно стара. Первые ее страницы сохранились, однако они очень потрепаны и только в последнее время были реставрированы. Текст написан в четыре столбца не особенно удачным, но достаточно ясным почерком насх. Последние страницы рукописи не сохранились, поэтому место и точное время ее написания остаются неизвестными. Некоторые палеографические данные позволяют нам сказать, что рукопись написана не позднее XIV в.

Хамдуллах Муставфи Казвини в период, когда Рашид ад-дин был сахиб диваном, написал, таким же размером, каким написана «Шах-наме», обширную стихотворную историю в 150 тыс. строк под заглавием «Зафар-наме», охватывающую период от возникновения ислама и до времени ильханов. Эта интересная рукопись свидетельствует о том, что Рашид ад-дин последовал примеру Джувейни и пожелал увековечить свое время многотомным стихотворным памятником наподобие «Шах-наме».

Значительная часть исторических рукописей Матенадарана относится к периоду Тимуридов.

Под № 286 зарегистрирована одна весьма хорошая рукопись «Зафар-наме» («Книга побед») Низам-эд-дина Шами, которая была переписана в 1097/1686 г. Она состоит из 528 листов (32 × 15 см) и написана четким почерком наста'лик.

Низам-эд-дин Шами начал писать «Зафар-наме» в 804 г. (1401—1402). По свидетельству автора, Тимур уделил большое внимание редактированию этой книги — по существу он сам ее отредактировал. «Зафар-наме» считается одним из лучших первоисточников периода господства Тимура, поэтому эта рукопись Матенадарана, без сомнения, представляет известную ценность и может быть использована при подготовке к печати критического текста этого важного памятника.

Две рукописи стихотворной истории Маулана Хатефи «Тимур-наме» («Книга Тимура») зарегистрированы в фонде рукописей под № 242 и 369. Рукописи написаны в два столбца почерком наста'лик и обе в конце дефектны. Судя по палеографическим данным, обе рукописи должны быть копиями XVII в.

В Матенадаране имеется превосходная рукопись (№ 579) труда, озаглавленного «Тузукат-и Тимури», который представляет собой автобиографию Тимура и описание его законодательной деятельности. Судя по некоторым данным, можно предположить, что памятник принадлежит перу самого Тимура. Эта рукопись является копией, сделанной по поручению заместителя британского посла Мана его учителем Мирза Юсуфом в 1847 г. на даче Голхак около Тегерана.

Этот вариант «Тузукат-и Тимури» включает в себе лишь отрывок, касающийся деятельности Тимура по благоустройству страны, и состоит из двух частей, из которых первая представляет собой советы и рассуждения Тимура, а вторая — описание мероприятий и порядков, установленных им в управлении страной и в армии. В рукописи Матенадарана отсутствует предисловие, которое имеется в некоторых рукописях Британского музея и других рукописохранилищ и, вероятно, написано одним из переписчиков—Абу Галиб ал-Хусейни ал-Аризиде. Последнего ошибочно считают автором данного первоисточника и, исходя из этого факта, выражают сомнение в подлинности труда. Упомянутая рукопись Матенадарана еще раз подтверждает необоснованность этих предположений.

Всеобщая история Мухаммеда ибн Хаванд-шаха Мирхонда — «Раузат ас-сафа» («Сад чистоты»), состоящая из 7 томов, считается крупнейшим историческим трудом тимуровской эпохи.

В Матенадаране имеются пять рукописей четырех томов «Раузат ас-сафа», из которых первый том, зарегистрированный под № 9, представляет собой копию XVI в., в которой поврежденные или утерянные три страницы в начале, 12 — в конце и несколько — в середине были заново переписаны в XVIII в.

Второй том, содержащий историю «священных войн» Мухаммеда и первых халифов, представлен двумя рукописями (№ 1 и 555). Первая превосходная рукопись, написанная красивым почерком наста'лик в 1004/1596 г. в Басре, а вторая, также хорошо сохранившаяся рукопись была переписана в 1090/1679 г. в округе Кямаре Центрального Ирана.

Четвертый том «Раузат ас-сафа», зарегистрированный под № 24, является копией XVII в., написанной изящным почерком наста'лик. Однако рукопись была очень потрепана; в начале XIX в. ее реставрировали и дополнили утерянные листы.

Заслуживает внимания рукопись пятого тома (№ 337), представляющая собой копию, сделанную четким почерком наста'лик в 1041/1632 г. в Исфагане писцом Алибеком Ардебильским, сыном Алихана, который, вероятно, был одним из секретарей царского дивана Сефевидов шаха Сафи. На последней странице рукописи он оставил следующую краткую памятную запись, перевод которой приводится ниже:

«Милостью божией 11 числа месяца ша'бана, возвеличенного 1041 г. (4 марта 1632 г.), рукою ничтожного слуги божьего, сына Алихана Ардебильского, Алибека закончилось переписывание священного тома. Спустя некоторое время после того как вместе с царской армией вернулся из надежного города Багдада в престольный город Исфаган, с целью рассеять утомление, приступил к переписыванию этой истории и в короткий срок, благодаря пощечинам господ, закончил».

Критический текст «Раузат ас-сафа» еще не опубликован, известны лишь литографированные тегеранские издания 1854 и 1858 гг., а также несколько европейских изданий отдельных отрывков, касающихся периода Сельджукидов и Атабеков, сделанных в первой половине XIX в. С этой точки зрения лучшие рукописи отдельных томов этого труда, в том числе и пять рукописей Матенадарана, представляют известную источниковедческую ценность и заслуживают специального исследования.

Последним представителем историографии Тимуридского периода является Гийас ад-дин ибн Хумам ад-дин Хондамир — автор трехтомной истории компилятивного характера, озаглавленной, «Хабиб ас-Сиар» («Друг жизнеописаний»). В Матенадаране в фонде рукописей, написанных арабской графикой, под № 558 зарегистрирован превосходный экземпляр рукописи первого тома «Хабиб ас-Сиар». Рукопись переписана в 1026/1617 г. четким почерком наста'лик в местности, именуемой Нури в Мазандаране, вероятно, по заказу жителя того же места Ходжа Мухаммед Таги.

К крупным сочинителям начала XVI в. относится и происходящий из семьи вождей большого курдского племени Рожак в Багеше (Битлисе) государственный и политический деятель Молла Идрис Битлиси. Он является автором труда, посвященного истории первых восьми султанов османского государства и носящего заглавие «Хашт бехешт» («Восемь раев») или «Тарих-и ал-и Осман» («История османского государства»), который он написал по заказу восьмого султана Баязида II (886/1481—918/1512).

Рукопись Матенадарана № 509, заключающая первые пять глав «Хашт бехешт», очень хорошо сохранилась и написана исключительно красивым почерком насх. В конце рукописи нет никаких упоминаний ни о времени, ни о месте ее написания, на основании чего, вероятно, составители каталога рукописей арабского фонда ошибочно утверждают, будто она является автографом. Палеографические данные полностью исключают такую возможность, а также достаточно прочесть последние строки третьей главы, чтобы вполне убедиться, что такое утверждение лишено каких бы то ни было оснований. Третья глава завершается следующими строками: «Окончена третья часть османской истории, автором которой является великий мудрец, писатель, покойный мулла Идрис Битлиси, а теперь переходим к четвертой части, где повествуется о жизни султана Иддирима Баязида» (л. 188 б).

Судя по некоторым данным, рукопись написана в начале XIX в. в одном из городов Западной Армении. Дарственный (вакуфный) акт от 1239/1823–1824 гг. на полях второй страницы, согласно которому сын некоего Абдурахман-паши, Хасан-паша дарит рукопись городской мечети, написан теми же чернилами и таким же почерком. Следует полагать, что рукопись также была переписана одним и тем же лицом и в те же годы.

Заслуживают внимания и четыре рукописи первого и второго томов «Тарих-и аламара-и Аббаси» («Мироукрашающая история Аббаса»), принадлежащих перу крупнейшего историка сефевидского периода, придворного секретаря шаха Аббаса I, Искандер-бека Туркмана (мунши). Из 345 листов рукописи I тома, зарегистрированной под № 11, 291 лист представляет собой копию XVII в., написанную четким почерком насталик, последние же 54 листа были восполнены в 1284/1867–1868 гг. сравнительно более красивым наста'ликом.

Интересной рукописью является и первая часть второго тома, зарегистрированная под № 2, которая была переписана изящным почерком наста'ликом писцом Хаджи Муллы Хусейном Алибади в 1094/1683 г. На полях обеих указанных рукописей имеется довольно много дополнений и исправлений, свидетельствующих о том, что они были сличены с другими рукописями.

Из двух других рукописей первого тома рукопись № 575 является копией 1212/1797 г. Эта рукопись содержит и начало II тома (лл. 306 б–339б).

Заслуживает внимания рукопись № 34, первые и последние страницы которой не сохранились. Она представляет собой по существу попытку дать краткое изложение I тома «Тарих-и аламара», сделанную в XVIII в. не очень грамотным лицом.

Имеется в Матенадаране и довольно общеизвестный первоисточник по истории Дагестана – «Дарбанд-наме». Были опубликованы турецкие тексты «Дарбанд-наме», а также переводы на английский и другие языки. Однако его персидский текст еще мало известен в востоковедении и нуждается в исследовании. Персидские варианты Матенадарана представляют известную ценность, особенно один из них (№ 252), с которого в дальнейшем были сделаны турецкий и азербайджанский переводы.

В Матенадаране хранятся также еще пять рукописей «Дарбанд-наме» на других языках, из которых две написаны на азербайджанском языке, две – на арабском, а у последней рукописи одна страница на латинском, а другая на азербайджанском языке.

Все упомянутые рукописи, за исключением одной (№ 490), принадлежали сыну Давида Лазарева, князю Якову Лазареву, который

в качестве штабс-капитана Варшавского пехотного полка участвовал в 1848–1856 гг. в боях против горцев. Из многочисленных армянских и русских пометок, сделанных его рукой, нетрудно предположить, что он специально занимался изучением этого первоисточника и поручил полковому мирзе или кому-нибудь другому снять копию с рукописей, принадлежащих различным лицам в Кази-Кумухе, Демир-хан-шуре и других местах Дагестана.

Особого внимания заслуживает рукопись № 239, состоящая из 12 листов и написанная мелким почерком шикаста. Она представляет собой составленную на основании различных рукописей совершенно новую редакцию истории Дагестана, сделанную в 1856 г. по поручению Якова Лазарева литературным и общественным деятелем Мирза Юсуфом. Это ясно видно не только из краткой памятной записи на персидском языке:

تمام شد در بند نامها از قداد نوشتجات متعدده في تاريخ مارت سنه
۱۸۵۶ حرره ميرزا يوسف

но и из следующей надписи Я. Лазарева на первой странице: «Извлечение из разных летописей Дагестана, собранных мною в течение восьми лет. Як. Лазарев, 1856 года 22 марта, укр. Тимир-шах-шура».

Эта рукопись содержит также некоторые подробности относительно периода господства шамхалов и о налогах, податях и штрафах, которые платило им население.

Из трудов Мирза Мехти-хана Астрабади в Матенадаране хранятся пять рукописей «Тарих-и Надири», представляющих собой копии, сделанные в XVIII и первой половине XIX в. Из них наибольшего внимания заслуживает рукопись под № 23, которая сделана крупным почерком наста'лик, довольно тщательно, имеет интересные миниатюры, изображающие сражения Надира. Вследствие отсутствия последней страницы рукописи оказалось невозможным установить точную дату копии.

Перу того же автора принадлежит другая однотомная история Надир-шаха, которая озаглавлена «Дурри-йи Надирийе» («Жемчужины, драгоценности Надира»). Этот труд Астрабади своим мудреным языком и крайне панегирическим тоном соперничает с «Тарих-и Вассаф» Шихаб-аддина Абдуллаха Ширази. Он использовался до последнего времени в школах в качестве учебного пособия по ораторскому искусству и стилистике. Этим следует объяснить многочисленность его литографических изданий и рукописных экземпляров. Большинство рукописей скопировано особым образом: оставлены широкие поля вокруг текста и большие расстояния между строками, текст в основном написан крупным почерком насх, а через строку мелким почерком шикаста написаны объяснения.

Таковы рукописи № 7 от 1816 г., № 16 от 1856 г., № 268, скопированная в 1842 г., в Ереване писцом Мулла Хасаном Ереванским, и, наконец, рукопись под № 22, скопированная в 1819 г. в Эчмиадзине секретарем монастырской канцелярии Мирза Татосом.

В период царствования Фатх Али-шаха Каджара (1797–1834) написана всеобщая история, озаглавленная «Зиннат ат-таварих» («Украшение истории»). Она представляет собой компилятивный труд, изложенный в традиционной форме персидской средневековой историографии. Рукопись первого тома этой истории зарегистрирована под № 547.

Из вводной части книги мы узнаем, что весь труд состоит из двух томов, из которых первый том содержит историю событий от сотворения мира до периода халифата; большое место уделяется также биогра-

фиям деятелей науки и культуры. Второй том излагает последующую историю до времени царствования Фатх Али-шаха.

В этой рукописи имя автора книги не упоминается, неизвестны также время и место ее написания. По всей вероятности, она была написана по поручению престолонаследника Аббаса Мирзы в Тавризе.

К видным историкам периода Каджаров относится Абд ар-Раззак-бек ибн Наджаф-кули-хан, курд по происхождению. Он был сыном хойского хана, вождя курдского племени Думбули Наджаф-кули, приближенным престолонаследника Аббаса Мирзы и долгое время занимал высокий пост бегларбека Тавриза. По заказу Аббаса Мирзы он написал историю Ага Мухаммед-хана и Фатх Али-шаха до 1814 г. включительно, которая носит заглавие «Маасир-и султанийе» («Августейшие подвиги»).

Абд ар-Раззак-бек написал также труд, посвященный истории племени Думбули, т. е. истории его предков, который, однако, еще не вышел в свет, копии же этой рукописи очень немногочисленны.

Единственная в Советском Союзе копия этого труда Абд ар-Раззак-бека хранится в армянском фонде Государственного Матенадарана в рукописи № 7938 (лл. 222 б – 249 б). Она датируется месяцем зи-л-ка'да 1266/сентябрь–октябрь 1850 г. и содержит в себе не только этот труд Абд ар-Раззак-бека; ее первые 220 листов представляют собой два ранее неизвестных и уникальных текста, которые с точки зрения источниковедения представляют исключительную ценность. Первый из них (лл. 1а–173б) – это также обширная история племени Думбули, озаглавленная «Ишарат ал-мазахиб» («Признаки сект»), автором которой является сын хойского хана Ахмада Думбули, Рустам-хан.

Труд в основном посвящен истории курдов Думбули, происхождение которых связывается с удостоившимся высокого положения и должности при дворе аббасидских халифов Бармакидами. Автор довольно подробно говорит и о язидских верованиях курдов Думбули, называя их «язданийцами», и связывает их с зороастризмом.

Второй текст (лл. 178 б–220 б) представляет собой другой догматический труд того же автора, озаглавленный «Ишарат ал-ад'ян» («Признаки верований»), который посвящен исключительно исследованию религиозно-догматических принципов язданияйцев.

На первых страницах обоих текстов автор книги, Рустам Ибн Ахмед-хан, в надписях, имеющих почти одинаковое содержание, завещает эту рукопись (отдает в вакф) своим наследникам, подчеркивая при этом, чтобы ее не продавали и не отдавали в залог, в случае же, если кто-нибудь пожелает снять с нее копию, то это должно быть сделано в их доме. Далее он увещевает своих наследников, чтобы самые образованные и грамотные из них занялись редактированием книги, откорректировали и исправили ее и продолжали историю до тех пор, пока члены семьи будут жить и пользоваться властью.

Для изучения истории прошлого еще более ценным первоисточником являются сборники классических образцов официальных отношений, грамот и указов. К числу таких известных сборников относится «Муншаат-и Надири», принадлежащий перу придворного, секретаря Надир-шаха, Мирза Мехдихана, и удостоившийся многочисленных литографических изданий. И по сей день он является лучшим учебным пособием по изучению подобного рода письменоведства. В Матенадаране хранится пять различных копий этой книги, из которых наибольшего внимания заслуживает рукопись, зарегистрированная под № 333, содержание которой в определенной степени отличается от известных вариантов «Муншаат».

В Матенадаране имеется также несколько других сборников писем и официальной переписки, из которых особый интерес представляет копия сборника писем, отчетов и других официальных бумаг, относящаяся к 1033/1642 г. и, вероятно, принадлежащая перу одного из придворных писцов Великого Могола в Индии. В сборнике содержатся довольно ценные данные относительно того же периода истории Джайпура, Лахора и других ближайших областей.

Особого внимания заслуживает сборник официальных писем и ханских указов, числом около двухсот, написанных главным секретарем (муншибаши) ереванского хана Хусейн Али Каджара (1724–1783) и его сына Мухаммед-хана (1784–1805). Этот сборник является весьма важным источником для изучения истории внутренней жизни Ереванского ханства второй половины XVIII в. и его внешней политики и взаимоотношений с соседними ханствами и пашалыками и особенно с Грузией.

В числе подобных сборников ценных документов заслуживает упоминания рукопись № 103, содержащая копии писем и других бумаг сына Фатх Али-шаха, наследного принца Аббаса Мирзы, в которой имеются интересные данные относительно политических событий, а также русско-персидских отношений первой четверти XIX в., и рукопись № 75, где собраны отчеты иранского посла Амин ад-Дауле за 1275/1859 г., относящиеся к турецко-иранским пограничным спорам и урегулированию взаимоотношений этих двух стран.


Кроме того, в Матенадаране имеются многочисленные содержащиеся в разнообразных рукописях фрагментарные сведения, касающиеся общественно-экономической жизни Ирана и сопредельных стран, в частности Закавказья.

В архиве Матенадарана хранится более полутора тысяч персидских документов XV–XIX вв. (ферманов, хокомов, фетв, таалике, кабале, вакф-наме, иджаре-наме, снур-наме, худжат-наме и других нотариальных документов), краткое описание которых дано в предисловии к первому выпуску составленного нами сборника «Персидские указы Матенадарана».

Матенадаран уже приступил к периодическому опубликованию этих документов. Вышел в свет первый выпуск этой серии (указы XV–XVI вв.), находится в печати второй выпуск, заключающий в себе указы Шаха Аббаса I, Шаха Сафи и Шаха Аббаса II, относящиеся к первой половине XVII в.

Продолжаются работы по подготовке к печати следующего выпуска указов, а также первого выпуска серии купчих крепостей.

Приведенные примеры отнюдь не исчерпывают всего историографического богатства собрания персидских рукописей Матенадарана. Они достойны более пристального внимания исследователей.



Հ. Դ. Փափազյան

ՕՏԱՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ԵՐԿՐՈՒՄ

(ժե գ.)

Հայագիտությունը հուզող և մինչև օրս դիտական լուրջ հետազոտություն չարժանացած կարևոր հարցերից մեկը հայ քաղաքական իշխանություն և հատկապես Ջաքարյանների օրոք Արևելյան Հայաստանի տերիտորիալի վրա ստեղծված հայկական ֆեոդալական մանր իշխանությունների հետզհետե քաղքայման ու վերացման և իրենց տեղը օտար իշխանավորներին զիջելու հարցն է:

Դժբախտաբար սկզբնաղբյուրների տվյալների սղությունը հնարավորություն չի տալիս որոշակի կերպով պարզելու Հայաստանի առանձին նահանգներում իշխող հայ ֆեոդալական տներից շատերի պատմությունն ժամանակագրական վերջին սահմանը: Դա առավելապես վերաբերում է Հայաստանի Կենտրոնական նահանգին կամ Արարատյան երկրին, որը թեև, սկսած դեռևս հայ ժողովրդի կազմավորման շրջանից, դարեր շարունակ եղել է և այժմ էլ հանդիսանում է հայ պետականության կենտրոն, սակայն պատմական քաղաքական երկար մի ժամանակաշրջան (ժԴ—ժԹ դ.դ.) այդ երկիրը, հատկապես նրա կենտրոնական մասը, ենթակա է եղել օտար տիրապետության:

Պատմական Հայաստանի Այրարատի և Սյունյաց նահանգների այն գաղափարներում, որոնք հետագայում մտան Չուխուր—Սաադի բեգլարբեկության կամ Երևանի խանության կազմի մեջ, ժԴ դարի սկզբներին դեռ պահպանվել էին հայ ֆեոդալական տների որոշ մնացորդներ: Ինչպես պարզվում է Կարբիի 1338 թ. և Հովհաննավանքի 1358 թ. արձանագրություններից և նույն ժամանակներում գրված մի ձեռագրի հիշատակարանից, ժԴ դարի առաջին կեսում Արագածոտն գաղափարում իշխում էր Վաչուտյան Վաչեի որդին՝ Բուրդ Անբերդցին¹: Շահապունիքում, Վարաժնունիքում և Կոտայքում իշխում էր Պոռչյան տոհմից Էաչի Ա-ը²: Նույն ժամանակներում, ինչպես Փոքր Սյունիքում և Վերին Սաչենում, այնպես նաև Դեղարքունիքի մի մասում իշխում էին Դոփյան Ջալալ-Դովլա Հասանի ժառանգները³: Անիում և նրա շրջակայքում դեռ շարունակում էին իշխել Շահնշահ Ա-ի թոռներ Շահնշահ Բ-ը, Վահրամը և Ջազան⁴: Մինչ ժԴ դարի 60-ական թվականները եղվարդում և Հավուց Թառում իշխում էին Ազիրեկյանները⁵, Վալոց ձորում և

¹ Հ. Մանանդյան, Բնական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Գ Երևան, 1952, էջ 326—327:

² Նույն տեղում, էջ 328:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում, էջ 326:

⁵ Գ. Հովսեփյան, Ազիրեկենք և նրանց շինարարական գործը, «Բանբեր», էջ 194:

Սլունիքում գործող իշխանությունն էր Օրբելյանների իշխանությունը, որն իր գոյությունը շարունակեց մինչև ժե դարի կեսերը: Իսպանական դեսպանությունն անդամ Ռուլ Գոնզալես դե-Կլավիխոն մանրամասն տեղեկություններ է հաղորդում Մակվում իշխող հայ կաթոլիկ իշխանների մասին⁶, որոնք հետագայում՝ 1426 թ. ոչնչացվեցին Կարա-Կոյունլու Իսքանդարի ձեռքով⁷: Հայկական իշխանություններ չէին պահպանվել հատկապես Արարատյան դաշտում, Երասխաձորում և Սուրմալիում, որտեղ մեծ մասամբ բնակություն էին հաստատել թուրքմենական ծագում ունեցող քոչվոր ցեղեր⁸:

Պատմական սկզբնաղբյուրների ուշագիւր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սկսած ժ-Դ դարի վերջերից Սուրմալիի դաշտում կամ պատմական Հայաստանի Այրարատ նահանգի ձակասք գավառում հաստատված այս թուրքմենական վաչկատուն ցեղերի առաջնորդները հաջողել էին տեղում ըստեղծել իրենց իշխանությունը և հետզհետե ընդարձակելով, ժե դարի սկզբին արդեն այն տարածել էին ամբողջ Արարատյան երկրի վրա:

Այստեղից էլ փաստորեն սկիզբ է առնում օտար տիրապետությունը Արարատյան երկրում, որ ձեռքից ձեռք անցնելով տևում է մինչև ժԹ դարի առաջին քառորդը և վերջանում միայն Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: Այդ շուրջ 450 տարի տեղը պատմական ժամանակաշրջանը քաղաքական կյանքում տեղի ունեցած խոշոր փոփոխությունների տեսակետից պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ հինգ շրջանների և մի քանի ենթաշրջանների.

1. Թուրքմենական շրջան (ժ-Դ դ. վերջերից մինչև ժե դ. վերջը)
 - ա) Սաաղունների կիսանկախ էմիրություն (մինչև 1420-ական թթ.)
 - բ) Որպես հյուսիսային կուսակալության ենթակա նահանգ (մինչև 1501 թ.)
2. Վաղ Սեֆյան կամ պարսկա-օսմանյան արշավանքների ու փոփոխակի իշխանության շրջան (1501—1603 թթ.)
3. Նոր Սեֆյան շրջան (1603—1724 թթ.)
4. Քաղաքական նոր վարչակերտման և կիսանկախ խանության շրջան (1724—1795 թթ.)
 - ա) Թուրքական օկուպացիա (մինչև 1736 թ.)
 - բ) Նազիրյան շրջան (մինչև 1746 թ.)
 - գ) Կիսանկախ խանության շրջան (մինչև 1795 թ.)
5. Աշարյան Իրանի տիրապետության կամ սարդարության շրջան (1795—1827 թթ.)

Ստորև կփորձենք համառոտակի ծանոթանալ առաջին շրջանի պատմության հետ, հիմնականում նպատակ ունենալով պարզել օտար իշխանության սկզբնավորման ժամանակաշրջանին վերաբերող մի քանի հարցեր, և ապա, որքան այդ թույլ կտան սկզբնաղբյուրների սուղ տվյալները, ճշտել Արարատյան երկրի քաղաքական իշխանության ժամանակագրությունն ու ալնտեղ

⁶ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932, էջ 114—116:

⁷ Լ. Պաշիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 353—376:

⁸ Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա, էջ 109:

իշխող այլ տիրակալների հաջորդականութիւնը մինչև ԺՁ դարի սկիզբը շարունակվող թուրքմենական տիրապետութիւն շրջանում:

* * *

Արարատյան երկրում իշխող թուրքմեն ամիրների մասին առաջին հիշատակութիւնը մենք գտնում ենք Թովմա Մեծոփեցու «Պատմութիւն Լանկեմուրայ և յաջորդաց իւրոց» գրքում: Նկարագրելով 1387 թ. Լանկեմուրի արշավանքները, Մեծոփեցին պատմում է, թե ինչպես Սուրմալիում գտնվող Կողբ գյուղի բնակիչները տանուտեք Մարտիրոսի գլխավորութիւնամբ ամրանում են Բարդուղ լեռան վրա և ուժեղ դիմադրութիւն ցույց տալով շահաթալ զինվորներին, աղատվում են կոտորածից: Սակայն Լանկեմուրի հեռանալուց հետո տանուտեք Մարտիրոսը նետվելով Արաքսը, խեղդամահ է արվում տեղում իշխող թուրքմեն իշխան Սահաթի (Սաադ) ձեռքով⁹:

1954 թ. ամռանը Մ. Ս. Հասարթիւանը, մեր ուշադրութիւնը հրավիրեց Երևանից ոչ շատ հեռու, Էջմիածնի ճանապարհին Արգավանդ գյուղում գտնվող մուսուլմանական մի գմբեթաձև դամբարանի վրա: Դամբարանի գմբեթի ներքին մասի ժայպակենաձև փորագրված արձանագրութիւն առաջին իսկ ընթերցումից պարզվեց, որ այն կառուցված է Ամիր Սաադի որդու՝ Փիր-Հուսեյնի ձեռքով, հիշրեթի 816 թվականին (1413 թ.):

Արձանագրութիւն մեջ ասված է. «Հրամայեց կառուցել այս սրբազան գմբեթավոր դամբարանը (ղուբբա)՝ մեծագուն և վեհագուն, ազնվութիւնք և բարի բնութիւնք օժտված, արքաների և թագավորների նեցուկ, խեղճերի և թշվառների ապակեն, գիտունների և ուսում որոնողների խնամակալ, աղքատների և կարոտյալների օգնող, պետութիւն և կրօնի փառք՝ Ամիր Փիր-Հուսեյնը, — թող երկարի նրա արդար [իշխանութիւնը], — որդի հանգուցյալ և ողորմածնօգի ամիր, ղեպի ամենաողորմածի գիրկն ուղեորված՝ Ամիր Սաադի, — թող մաքուր մնա նրա հողը, — մեծ արքա, ազնվազարմ խաքան, արևելքի և արևմուտքի արքայից արքա, պետութիւն և կրօնի զորավիգ՝ Փիր-Բուղաղ խանի և Յուսուֆ նոյանի իշխանութիւն օրոք, — թող աստված հավիտյան դարձնի նրանց իշխանութիւնը, — ութ հարուր տասնվեց թվականի խաղաղ ուշաք ամսի տասն և հինգին (1413 թ. հոկտ. 11)»¹⁰:

Ամենայն հավանականութիւնք այս դամբարանում պետք է թաղված լինի Փիր-Հուսեյնի հայրը՝ Ամիր Սաադը: Թեև կարող էր պատահել որ Փիր-Հուսեյնը դամբարանը կառուցած լիներ իր համար. մուսուլման ամիրների մոտ ընդունված էր կենդանութիւն օրոք իրենց համար դամբարան կառուցելը: Համենայն ղեպս եթե դամբարանը կառուցվել է Ամիր Սաադի գերեզմանի վրա, ապա դա եղել է նրա մահվանից առնվազն 2—3 տարի հետո, որովհետև 1411 թ. մի հիշատակարանում արդեն որպես Արարատյան երկրի պարոն, հիշված է Փիր-Հուսեյնի անունը¹¹:

⁹ Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկեմուրայ և յաջորդաց իւրոց, էջ 17—18:

¹⁰ Տողերիս գրողը հրատարակութիւն է պատրաստել այս արձանագրութիւն արաբերեն լրիվ տեքստը ուսերեն թարգմանութիւնք, որ շուտով կհանձնվի տպագրութիւն:

¹¹ Լ. Նայիկյան, ԺԶ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, Երևան, 1955, էջ 124:

Արգավանդ գյուղի բնակիչներին հետ ունեցած զրույցի ժամանակ պարզվեց, որ հիշյալ դամբարանից բացի այլևեղ եղել են ևս երկու այլ անհամեմատ փոքր դամբարաններ, որոնք հետագայում ավերվել են, իսկ քարերը օգտագործված են մոտակա շինարարության մեջ: Գյուղի բնակիչները պնդում էին, որ ավերված դամբարանների վրա արձանագրություններ չկային և իրենց արտաքինով դրանք ավելի խղճուկ էին և անշուք¹²:

Փիր-Հուսեյնի կառուցած դամբարանին կից նման այլ դամբարանների առկայության փաստը թույլ է տալիս ենթադրելու, որ այդ վայրը եղել է Սաադի կամ նրա հաջորդների տոհմական գերեզմանատունը: Այդ նշանակում է, որ ժԵ դարի սկզբներին արդեն Ամիր-Սաադը հաջողել էր իր իշխանությունը տարածել Արաքսի ձախափնյա շրջանների վրա և իրեն էր ենթարկել Արարատյան երկրի կենտրոնական շրջանը՝ համարյա ամբողջությամբ: Միաժամանակ պետք է եզրակացնել, որ, եթե ոչ ավելի վաղ, ապա Սաադի որդի Փիր-Հուսեյնի օրոք արդեն Երևանը դարձել էր Արարատյան երկրի վարչական կենտրոնը և այնտեղ իշխող ամիրների նստավայրը, այլ կերպ չի կարելի բացատրել տոհմական գերեզմանատան Երևանին այդքան մոտ գտնվելու հանգամանքը:

Այս մասին մատենագրական որոշակի վկայություններ համարյա թե չկան, իսկ հիշատակարանային տվյալները բավական աղքատիկ են: Դեռևս 1336 թ. գրել Տերտեր Երևանցին իր քաղաքն անվանում է «պատուական քաղաք»¹³, 1405 թ. Մանվել հպիսկոպոսը, ըստ երևույթին հետևելով մատենագրության մեջ վաղուց հետե ընդունված տրադիցիային, իր ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում գրում է «Ի գեղաքաղաքէս Երևանոյ...»¹⁴: Գրիգոր Մերեցցի Խլաթեցին 1422 թ. գրած իր հայտնի «Յիշատակարան աղետից»-ում նկարագրելով 1387 թ. Լանկ Թեմուրի Արարատյան երկրում կատարած ավերածությունները, այլ քաղաքների շարքում հիշում է նաև, որ «յԵրևան մեծ ավանին, արս հինգ հարևր կոտորեցին»¹⁵: Սակայն ամենայն հավանականությամբ այս հորշորշումը բխում է հիշատակարանի չստիպած բնույթից:

Մանվել հպիսկոպոսի վերը նշված հիշատակարանը պարունակող Ավետարանի հետագա նորոգողներից Ներսես Մոկացին Ավետարանի նորոգմանը վերաբերող համառոտ հիշատակարանում արձանագրում է. «Արդ և ես լիտնեալ և զառածեալ Ներսէս անուն, որ եմ լերկրէն Մոկաց ի բնիկ գեղջէն Սուրալ ի տիս տղաութեան իմոյ ելեալ լերկրէ իմմէ՝ հասի ի մայրաքաղաքն Երևան...»¹⁶: Լ. Սաչիկյանը ենթադրում է, որ այս անթվական հիշատակարանը «գրված է նախորդից տասնամյակներ հետո, հավանաբար ժԵ դարի

¹² Ամենայն հավանականությամբ այս դամբարանների ներսի գերեզմանաքարերը մնացել են հողի տակ, որովհետև այդպիսիք բավական խոր են գրված լինում: Հետագա պեղումները թերևս հնարավորություն կտան պարզելու ինչպես գլխավոր դամբարանի այնպես նաև այս գերեզմանների պատկանելիությունը,

¹³ Լ. Սաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 287, 288, 329:

¹⁴ ԺԵ դ. հիշ. մասն Ա, էջ 49, 50:

¹⁵ Նույն տեղում, էջ 276:

¹⁶ ԺԵ դ. հիշ. մասն Ա. էջ 51:

վերջերին»¹⁷; Հողվածիս հետագա շարադրանքը թույլ է տալիս կարծելու, որ Երևանը «մայրաքաղաք» կարող էր կոչվել շատ ավելի վաղ. ԺԵ դարի 20-ական կամ ավելի ճիշտ 80-ական թվականներին: Համենայն դեպս 1476 թ. գրված մի հիշատակարանում Երևանը նորից անվանվում է «գեղաքաղաք»¹⁸ իսկ, ինչպես ստորև կտեսնենք, դարավերջին Երևանը որպես վարչական կենտրոն մեծ չափով կորցրել էր իր նշանակությունը և ենթարկվում էր նախնականին:

Թուրքմենական այն բոլոր ցեղերը, որոնք ԺԴ դարի վերջերին միավորվեցին Ամիր-Սաադի իշխանության ներքո, հետագայում, իրենց ցեղապետի անունով, սկսեցին կոչվել «Սաադլու»: Մոտավորապես նույն ժամանակներում էլ այդ ցեղերի հիմնական բնակավայրը հանդիսացող Երասխաձորը, Սուրմալիի դաշտը և մերձակա այլ վայրերը անվանվում են «Չուխուր-Սաադ— «چوخور سواد» (Սաադի փոս), հայկական աղբյուրներում՝ «Մահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթու»¹⁹:

«Չուխուր Սաադ» անվան մեզ ծանոթ առաջին հիշատակությունը վերաբերում է 1428 թվականին: Դա Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղի հնագույն արաբերեն կալվածագիրն է, որտեղ վաճառվող օբյեկտը (Վաղարշապատ գյուղը) ճանաչվում է որպես «Կարբիի նահալի գյուղերից մեկը, որ գտնվում է Ագերբաջանի երկրի Վրաստանի շրջաններից՝ Չուխուր-Սաադի վիլայիթում»²⁰:

Այստեղ դժվար չէ նկատել, որ դեռևս ուժի մեջ է եղել Իլխանության շրջանի վարչական բաժանումը և տրադիցիոն կերպով Արարատյան երկիրը համարվել է Վրաստանի կամ ինչպես ընդունված էր ասել «Գյուրջիստանի վիլայիթի» մեջ մտնող շրջաններից, որն արդեն ենթարկվում էր Ագերբաջանին (Ատրպատականին):

Համենայն դեպս, կարելի է չկասկածել, որ քոչվոր նվաճողների կողմից Արարատյան երկրին «Չուխուր-Սաադ» անունը տրվել է Ամիր Սաադի կենդանության օրոք, ամենայն հավանականությամբ ԺԴ դարի վերջերին: Այդ անվանումը անշուշտ նախապես վերաբերել է շատ ավելի սահմանափակ մի շրջանի (Երասխաձոր, Սուրմալիի դաշտ և մերձակա վայրերը), սակայն քանի որ երկիրն այդպես է կոչվել Ամիր-Սաադի անունով, բնականաբար երբ Սաադը, իսկ հետագայում նաև նրա որդիները, ընդարձակել են իրենց տիրապետության սահմանները, «Չուխուր-Սաադ» անունը տարածվել է նրանց ենթակա ամբողջ երկրի կամ վիլայիթի վրա:

Առաջնորդվելով ձեռագրաց հիշատակարանների տվյալներով, կարելի է հաստատապես ասել, որ Սաադի որդի՝ Փիր-Հուսեյնի ամիրության տարի-

¹⁷ ԺԵ դ. հիշ. մասն Ա էջ 51:

¹⁸ ԺԵ դ. հիշ. մասն Բ, էջ 397, 398:

¹⁹ ԺԶ—ԺԷ դդ. պարսկական մատենագրության մեջ սովորաբար «Չուխուր-Սաադ» անունը թարգմանվում է «երջանիկ փոս» կամ «երջանիկ հովիտ»: Այս, եթե կարելի է ասել, բանաստեղծական ստուգաբանությունն է հիմք ընդունել Շարդինը, երբ նշելով, որ Արարատ լեռը ևս անվանվում է «Մահաթ-թոփուզ» այն թարգմանում է «երջանիկ գաղաթ» (տե՛ս նրա Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, Paris, 1811, t. IV, էջ 190): Մեզ թվում է սակայն որ այս «Մահաթ-թոփուզ» անվանումը կապ ունի վերոհիշյալ հայերեն «Մահաթա փոս» անվան հետ:

²⁰ Մատենադարան, կաթող. դիվան, թղթ. 1դ, վավ. 1004:

ներին արդեն բավական ընդարձակվել էին Չուխուր-Սաադի սահմանները: Այսպես, 1412 թ. Կարսում ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում կարգում ենք. «Արդ թուականութեանս հայկազեան տումարի ՊԿԱ. (1412) եղև շինութիւն և նորոգութիւն հուշակաւոր քաղաքիս Կարուց, ի ձեռն արդարադատ պարոնին պարոն Փիր—Հիւսէնին»²¹: Երկու տարի անց, 1414 թ. Օշականում ընդօրինակված Ճաշոցի 432 ր էջում գրիչ Սարգիս Թմոքեցին թողել է հետևյալ հիշատակագրությունը... «Աւարտեցաւ գիրքս աստուածաշունչ ի թուաբերութեանս Հայոց ՊԿԳ (1414) ի գեղաւանս յԱւշական, ընդ հովանեաւ ամենաւրհնեալ կամակատար Աստուածածնիս, և Մեսրոբալ վարդապետիս, և ալլ համաւրէն սրբոցս, ի թագաւորութեանն Ուսուփին և Փիւր-Հուսեհին, որդոյ Սահաթին»²²:

Թեյմուրյան պալատական պատմիչներից Աբդու-Ռազզալի, իբն Իսհակ Սամարղանդին 1470 թ. ավարտած և «Մաթլա-ու-սաադեյն» խորագիրը կրող պատմության Ա մասում ունի վկայություն այն մասին, որ Նախշևանը ևս պատկանել է Սաադի որդիներին²³: Այս վկայությունը կարող է վերաբերել Փիր-Հուսեհիի ամիրություն շրջանին, որ ըստ երևույթին տևել է մինչև 1420-ական թվականները՝ ընդգրկելով բավական խաղաղ մի ժամանակաշրջան: Այս շրջանում երկրում տիրող ընդհանուր դրություն և բնակչության վիճակի մասին եղած տեղեկությունները հակասական են: Եթե վերը մեջ բերված 1412 թ. հիշատակարանում Փիր-Հուսեհյն իր կատարած վերանորոգչական աշխատանքների առնչությամբ անվանվում է «արդարադատ պարոն», ապա ընդամենը մեկ տարի առաջ Աղջաղալյում գրված ավետարանի մեզ արդեն ծանոթ հիշատակարանում շեշտված է, որ «ի պարոնութեան Փիր-Հուսեհին... եղեալ կան հարկ ի վերա քրիստոնէից և կան ի սառապանք լալլասեռից, և է ամենայն ուրեք բարեկարգութիւն նուազեալ և անիրաւութեան լամենայն կողմանց զաւրացեալ»²⁴:

Անժխտելի է սակայն, որ 1412—1413 թ թ. երկրում կատարվել են որոշ շինարարական աշխատանքներ, ինչպես վերը տեսանք, այդ թվականներին է վերաբերում Դարսի վերանորոգությունը: Նույն թվականներին է կառուցվել նաև Արգավանդ գյուղում գտնվող մեզ ծանոթ դամբարանը, որն իրենից ներկայացնում է հայկական և մուսուլմանական ճարտարապետության մի հետաքրքիր սինթեզ:

Թեև բոլոր աղբյուրներն էլ միաբերան գնդատվում են ծանր հարկապահանջությունից, սակայն նկատելի է միաժամանակ, որ նախորդ տարիներում անընդհատ կրկնվող ասպատակությունների, կոտորածների և գերեվարության դառն հիշողությունների ազդեցության տակ մարդիկ առանձին գոհունակությամբ էին նշում, որ «թէպէտ հարկապահանջութիւնն բազում էր, սակայն խաղաղութիւնն առանց խռովութեան էր»²⁵:

²¹ ԺԾ Գ. հիշ. մասն Ա, էջ 134:

²² Նույն տեղում, էջ 162:

²³ مطلع السعدین, Կրատ. Մ. Նաֆիի, գիրք Ա, էջ 337. «Նախշևանն ու Սուր-մալուն վաղեմի յուրդն են Սաադի որդիների, որ ծագումով թուրքմեններ են»:

²⁴ ԺԾ Գ. հիշ., էջ 124:

²⁵ Թովմա Մեծոփեցի էջ 73:

Փիր-Հուսեյնի ամիրությունը վերջին թվականը անորոշ է: Նա հավանաբար մեռել է Կարա-Յուսուֆի որդու՝ Իսքանդարի տիրապետության շրջանի հենց սկզբի ամենախառն տարիներին (1421—1425): Մատենադարանի № 1114 «Մեկնութիւն տումարի Յակոբայ Ղրիմեցոյ և ժողովածու այլոց գրոց» խորագիրը կրող ձեռագրի գրիչ՝ Ստեփանոսը իր թողած հիշատակարանում նշել է, որ ընդօրինակությունը կատարված է Ջագավանքում, հայոց ՊՀԳ (1425) թվականին «ի բռնակալութեան Աքանդարին, որդոյ Ուսուֆին թորգոմեան, երկորոշ Աշրափ ազգիս Հայոց և աւերող եկեղեցեաց, և ի պարտութեան երկրիս Փիր-Ղախի և Աւուլի» թոռանց Սահաթի»²⁶:

Այսքանով էլ փաստորեն ավարտվում են հիշատակարանային տվյալները Արարատյան երկրում իշխած Սաադլուների՝ Սաադի և նրա հաջորդների վերաբերյալ: Այսպիսով, ինչպես Փիր-Հուսեյնի կառուցած դամբարանի արձանագրության բովանդակությունից, այնպես նաև վերը մեջ բերված հիշատակարաններից կարելի է եզրակացնել, որ Կարա-Կոչունյու Ամիր-Յուսուֆը ճանաչել է Սաադի և նրա հաջորդների ժառանգական իշխանության իրավունքը Արարատյան երկրի նկատմամբ: Այդ իշխանությունը փաստորեն շարունակվել է նաև Ամիր-Յուսուֆի որդու՝ Իսքանդարի թագավորության սկզբնական շրջանում:

Սաադլուների իշխանությունը ընդհատվել է հավանաբար 1431 թվականին: 1432 թ. Բջնիում ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում կարդում ենք ...«ի ժամանակս չար և անբարի, ի թուականութեան հայկազեան տումարի ՊՁԱ (1432) յանիշխանութեան Արարատեան գաւառիս...»²⁷:

Պետք է ենթադրել, որ Իսքանդարի վերաբերմունքը Սաադլուների նկատմամբ փոխվել է 1429—1431 թթ. ընթացքում: Հալանական է, որ 1429 թ. Շահրուսից կրած նրա պարտությունից հետո Սաադլուները հավատարմություն են հայտնել Շահրուսի դրածո, Ամիր-Յուսուֆի մյուս որդուն՝ Աբու-Սաիդին, իսկ այն բանից հետո, երբ 1431 թ. Իսքանդարը վերստին գրավում է Թավրիզը և սպանելով եղբորը, տեր դառնում դրություն, նա չի մոռանում նաև հաշիվ տեսնել իրեն լքած ամիրների, ի շարս որոնց նաև Սաադլուների վերջին ժառանգներից՝ վերոհիշյալ Փիր-Ղախի և Ավուլի հետ:

Ինչպես առանձին հոդվածով մանրամասն անդրադարձել ենք, ուշագրավ է այն փաստը, որ նույն թվականներին Իսքանդարը հովանավորում և բարձր դիրքի է արժանացնում Սյունյաց Օրբելյանների վերջին շտապիրներից՝ Բեշքենի որդի Ամիր Ռուստամին, դարձնելով նրան իր մեծ վեզիրն ու արքունի խորհրդակալը: Սկսած 1431 թ. վերջերից՝ Ամիր Ռուստամը գործնական քայլեր է անում էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերականգնման ուղղությամբ: Դեկտեմբեր ամսին գրված մի ընդարձակ կալվածագրով (վակֆնամե) նա էջմիածնի սեփականություն է դարձնում Այրարատի Արազածոտն, Նիգ, Կոտայք և այլ գավառներում, այսինքն Սաադլուների իշխանության ենթակա Չուխուր-Սաադի կենտրոնական շրջաններում գտնվող 7 խոշոր գյուղեր:

²⁶ ԺԵ դ. հիշ. մասն Ա. էջ 335:

²⁷ Նույն տեղում, էջ 421:

Հիշյալ հոդվածում, ինչպես նաև հետագայում կատարած մեր մի այլ ուսումնասիրության մեջ, փորձել ենք ապացուցել, որ 1431—1437 թթ. ընթացքում Ամիր Ռուստամ Օրբելյանը բարձր դիրքի արժանանալով և վաղիկելով Իսքանդարի հովանավորությունը, փորձում է Ալլարատում (Չուխուր-Սաադ) և Սյունիքում ստեղծել հայկական վասալ իշխանություն²⁸:

Ուշադրության արժանի է նաև այն փաստը, որ Իսքանդարը այդ թվականներին խիստ հալածանք սկսեց այն բոլոր տեղական ամիրների նկատ-

²⁸ Տես Հ. Փափազյան, Մի էջ Արեւիյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հաս. գիտ. 1955 № 8, էջ 83—100: Տես նաև նույնի «Քեյթ-ուլ-մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բանագրավումները XV դարում, «Պատմա-բանասիրական հանդես» Երևան, 1958 № 2, էջ 200—202:

Անցյալ տարի հրատարակած իր «Ազրբայիյն հարաբերությունները Արարատյան երկրում» աշխատության մեջ, Ս. Մարկոսյանը անհրաժեշտ է գտել առարկել մեր վերոհիշյալ առաջին, իր խոսքով ասած՝ «Տեսաբերական» հոդվածի երկու դրույթները (էջ 287—288): Դրանցից առաջինը այն հիմնական դրույթն է, որի վրա էլ կառուցված է ամբողջ հոդվածը: Առարկելով Միմենոն կաթողիկոս Երևանցուն, մենք ապացուցել ենք, որ Ամիր Ռուստամը ոչ թե լայն ոմն տաճիկ էր, այլ որդին էր Սյունյաց իշխան Սմբատի որդի Բեջբենի: Մենք այդ ասել ենք ոչ թե ենթադրաբար, կամ զիմելով կողմնակի փաստերի օժանդակությունը, այլ որովհետև այդպես է գրված ոչ միայն Գրիգոր Մակիկեցու 1431 թ. հայտնի կալվածագրում, այլ նաև դրանից 19 տարի հետո գրված մի այլ կալվածագրում, ստորագրված և կնքված շարիաթական նույն նոտարական գրասենյակի պետի կողմից: Ամիր Ռուստամի ընդարձակ տիրոջսի մեջ հիշված Քիշանություն և կրոնի քաջահաղթ ամիրը խոսքերը չեն կարող ժխտել, որ նրա հայրը Օրբելյան Բեջբենն է, իսկ պապը՝ Սմբատը: «Քեյթեն» անվան «Ջամբու»-ի և «Կալվածագրերի» երկու սխալ ընթերցումները լիովին հասկանալի կլինեին ընկ. Ս. Մարկոսյանին, եթե նա թեկուզ չնչին չափով ծանոթ լիներ հիշյալ կալվածագրի ընդգրկն, կամ զո՞նե իմանար պարսկական «գլխանի» գրություն յուրահատուկությունները: Թեև տիրոջսի հիշյալ հատվածին այդ տեսանկյունով մենք անդրադարձել ենք «Հանդեսի» 1958 թ. № 2-ում տպված վերոհիշյալ հոդվածում և նշել, որ Ամիր Ռուստամը այդ պաշտոնին հասնելու համար կարող էր նույնիսկ հաստատուիս եղած լինել (էջ 202), սակայն ինչպես ներկա հոդվածի հաջորդ էջերում կտեսնենք, Իսքանդարի օրոք այդ բանը անելու կարիքը առանձնապես չէր ըզդացվում: Բացի դրանից, պարսկերեն վավերագրերի բնագավառում վերջին տարիներս մեր կատարած ուսումնասիրությունները թույլ են տալիս որոշակի կերպով ասելու, որ մուսուլմանական զիպիոմատիկայի մեջ հայտնի են դարերով մշակված տիրոջսներ: Յուրաքանչյուր պաշտոն կամ աստիճան ունեւր իր հատուկ տիրոջսը: Հասկանալի է, որ եթե Ամիր Ռուստամը հասել էր մեծ վեզիրի և արքունի խորհրդականի բարձր պաշտոնին, ապա պարզ է, որ զազին ուղեր չուզեր նրա անունը հիշելիս պետք է օգտագործեր այդ պաշտոնի համար հաստատված տիրոջսը, (չպետք է մոռանալ պաշտոնական տիրոջսների տրաֆարետային ընդլիթը):

Երկրորդ առարկությունը պարզապես թյուրբմբուման արդյունք է: Կինդրեինք ընկ. Ս. Մարկոսյանին կրկին անգամ ուշադիր կարդալ մեր առաջին հոդվածի 92—93 էջերը, համոզվելու համար, որ իր հիշատակած փաստը հիշված է նաև մեր կողմից, որը սակայն դալիս է ճիշտ հակառակը ապացուցելու քան այն, ինչ պնդում է մեր հարգելի հեղինակը: Ի դեպ ավելորդ չենք համարում նշել, որ ինչպես այս երկու, այնպես նաև զրքում տեղ դրած մի շարք այլ սխալներ, արդյունք են այն անվերապահ, համարյա ֆանատիզմի հասնող հավատքի, որ տածում է Ս. Մարկոսյանը «Ջամբու»-ի նկատմամբ, ինչպես ասում են, հալած յուզի տեղ ընդունելով այնտեղ արձանագրված ամեն խոսք, նույնիսկ եթե դա վերաբերում է նրա հեղինակից ավելի քան 300 տարի առաջ գրված այնպիսի վավերագրերի, որոնց բնագրերը բարեբախտաբար այժմ հանդիստ պահված են Մատենադարանի «Կաթողիկոսական ղեկանի» թղթապանակներում, սպասելով, որպեսզի իրենց կարիքն զգացողները զիմեն ուղղակի իրենց:

մամբ, որոնց իշխանական իրավունքները ճանաչված և հաստատված էին իր հոր կողմից:

Թեև դեռևս մասնազիտական լուրջ ուսումնասիրություն չի ենթարկված Իսքանդարի վարած ներքին քաղաքականությունը, սակայն թվում է, թե բավարար տվյալներ կան պնդելու, որ նա փորձում էր սահմանափակել տեղական խոշոր ֆեոդալ-իշխանների՝ ամիրների իրավունքները և ստեղծել ուժեղ կենտրոնացված պետություն: Դրանով պետք է բացատրել ընդարձակ նահանգների տեր հանդիսացող կիսանկախ ամիրների ըմբոստելություններն ու Իսքանդարի կողմից նրանց նկատմամբ դրսևերկող հալածանքի և անողոք ոչնչացման քաղաքականությունը:

ԺԴ—ԺԵ դարերի պատմության սկզբնաղբյուրներին քաջատեղյակ, նույն դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարանների հրատարակիչ Լ. Սաչիկյանը իրավամբ նշել է, որ «Ներքնապես ուժեղ ու կենտրոնաձիգ պետություն ստեղծելու իր պլաններն իրագործելու նպատակով, բացի կիսանկախ ամիրություններին վերջ տալու ուղղությամբ կատարած իր համառ քայլերից, Իսքանդարը ձգտում էր նաև օգտագործել Գարա-Կոյունլուների պետության մեջ էթնիկական կարևոր տեղ զբաղող հայ ժողովուրդի արող շերտերին: Նա իրեն կոչում էր «Հայաստանի թագաւոր» (Շահի-արման), պետության բարձր պաշտոնների էր առաջ քաշում իրենց տիրություններից զրկված հայ ֆեոդալական անվանի տների որոշ ներկայացուցիչների, իր գործերի մեջ հավաքում էր նաև հայ ռազմիկների և այլն»²⁹:

²⁹ ԺԵ դ. հիշ- մասն Ա, Առաջաբան, էջ XXIII: Պարսկական աղբյուրները միաբերան վկայում են, որ Իսքանդարը որևէ կրոնի չէր հավատում, նշելով այս փաստը արևելագետ Վ. Մինորսկին հավանական է գտնում, որ նրա տեղական պալատը թեմուրյանների, աղկոյունլուների և իր իսկ հարազատների դեմ, թույլ չէր տալիս նրան իր ռազմական արշավներից բացի որևէ այլ բանի մասին խորհելու (տես V. Minorsky, Jihanshah Qara-qoyunlu and his poetry, BSOAS, 1954, XVI, 2, p. 276): Մեր կարծիքով այս բացատրությունը չի կարելի բավարար համարել: Ավելի հավանական է, որ Իսքանդարը հարած լինելով տարիներին տարածում գտած աղանդներից մեկին, որից և կարող էր առաջանալ նրա պատիվ վերաբերմունքը կրոնական խտրականության հարցում, ինչպես նաև անհանդուրժողական ու վրեժխնդիր վարքագիծը մուսուլման հոգևորականության նկատմամբ (Մեծոփեցի, էջ 98, 100):

Ցավոք, շատ սակավ են տեղեկությունները Իսքանդարի կրոնական հայացքների մասին, սակայն վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ նա վերին աստիճանի թրջնամական վերաբերմունք է ունեցել մուսուլմանական պաշտոնական կրոնի սպասավորների և բարձրաստիճան հոգևորականության հանդեպ: Որոշ իհարկե միայն շիա և սուննի զավանսքների միջև եղած թշնամության մասին չէ: Թ. Մեծոփեցու նկարագրություններից էլ կարելի է եզրակացնել, որ նա ժխտական դիրք է ունեցել կրոնի նկատմամբ: 1436 թ. երբ նա բռնի կերպով տեղահանել էր Ամասիայի, Պարբերդի և Դերջանի բնակչությանը և զբոս էր դնակ Արևելք, դաղթականներից շատերը չդիմանալով սառածամտիքում մեռնում էին ճանապարհին, երբ այս մասին զեկուցում են նրան, նա փաստորեն հեզնելով «նախախնամության» և աստծու ողորմածության ու ամենակարողության» տեսությունը, հայտարարում է «Աստուած արար. զինչ փոյթ ինձ, թող չէր տուեալ զզոսա ի ձեռս իմ և ոչ ձիւն յերկնից ասարեալ» (Մեծոփեցի, էջ 105):

Աղբյուրներում կան բազմաթիվ վկայություններ այն մասին, որ աղանդավորական հայացքները մեծ չափով մուտք էին գործել կարա-Կոյունլուների արքունիքը: Տեղեկություններ կան նաև, որ Իսքանդարի որդին՝ Հուսեյն-Ալին և զերծ չէր նույնպիսի հայացքներից և նրանք իր իշխանական ժազման՝ զերվիշի կյանք էր վարում (տես Վ. Մինորսկու նշված աշխատությունը, էջ 276, 296):

Աղբյուրների համեմատաբար սուղ տվյալներով, առաջժամ, միայն կարելի է որոշ վերապահություններ նշել, որ իրոք 1430—1437 թթ., այսինքն մինչև Իսքանդարի վերջնական պարտությունն ու մահը, Սաադյունները զրկված են եղել իշխանական իրավունքներից Արարատյան երկրի նկատմամբ, և տեղական իշխանության բացակայության պայմաններում երկիրը փաստորեն գտնվել է կենտրոնական իշխանության անմիջական հսկողության տակ: Այսպես կոչված «անիշխանության» շրջանում Արարատյան երկիրը, որպես անհնազանդ և անհավատարիմ ամիրների պատկանող, ենթարկվել է ասպատակության և ավարտության, իսկ բնակչությունը, ինչպես այդ մասին նշված է 1432 թ. Բջնիում ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում, «ցիր և ցան է եղեալ տարաշխարհիկ ի մէջ ազգին Վրաց»³⁰: Անհնազանդ ամիրների նկատմամբ իրագործվող ռեպրեսիաների ընթացքում հարջունիս են գրավվել և «Բեյթ-ուլ-մալ»-ի սեփականություն են հայտարարվել նաև նրանց պատկանող կալվածները, որոնց մի մասը Ամիր Ռուստամ Օրբելյանի անմիջական նախաձեռնությամբ տրվել են Էջմիածնին՝ որպես վակֆային սեփականություններ³¹:

Այս ժամանակաշրջանին վերաբերող մյուս ուշագրավ իրադարձությունը, որ մեր կարծիքով նույնպես պետք է կապել Ամիր Ռուստամի անձնավորության հետ, դա 1436 թ. Սեբաստիայի, Սարբերդի, Դերջանի և Արևմտյան Հայաստանի մյուս շրջանների հալ ազգաբնակչության բռնի տեղահանությունն ու վերաբնակեցումն է Այրարատի և Սյունյաց գավառներում³²:

Այս բոլորն անշուշտ հատուկ բովանդակություն են ստանում, երբ նրանց դիտում ենք Ամիր Ռուստամի Իսքանդարի հետ ունեցած մտերմական կապերի և նրա գրաված բարձր ու ազդեցիկ դիրքի մասին վկայող փաստերի լույսի տակ³³: Սակայն իր բախտը կապելով Իսքանդարի բախտի հետ և նրա հետ միասին ենթարկվելով շարունակական հալածանքների ու հետապնդման Շահրուխի և Աղ-Կոյունյունների կողմից, Ամիր Ռուստամը ըստ երևույթին շարունակ եղել է զինվորական ճամբարներում, մասնակցել դեպի Շիրվան, Փոքր-Ասիայի կողմերը և այլուր կատարված արշավանքներին, շարունակ աստանդական կյանք վարել և ի վերջո, իր սլուզերենի անփառունակ վախճանից հետո, 1437 թ. թողել զինվորականի ու պետական գործչի կարիերան ու ապաստանել Լոռի՝ իր հոր մոտ:

Պրոֆ. Վ. Մինորսկին, ինչպես իր այս աշխատության մեջ, այնպես նաև 1920 թ. հրատարակած մի այլ հոդվածում խոսում է Կարա-կոյունյունների որոշ ցեղային միավորումների ինչպես նաև Զհանշահի որդիներից ոմանց որդեգրած «Ահլ-ե հալ» կոչվող աղանդի մասին, որը ԺԾ դարում տարածում էր գտել հատկապես Հյուսիսային Միջագետքի Շահբեզուրի և Զոհաբի շրջաններում և որոնց մնացորդները մինչև մեր օրերը ապրում են Մակվի շրջանում, պահպանելով նաև «Կարա-կոյունյուն» անունը (տե՛ս Վ. Մինորսկու նշված աշխատությունը, էջ 276, և նույնի՝ Notes sur la secte des Ahle—haqq, «Revue du monde Musulman, XI, 1920»):

³⁰ ԺԾ գ. հիշ., մասն Ա, էջ 421:

³¹ Տես Մատենադարան, Կաթող. դիվան, թղթ. 1գ, վավ. 934: Տես նաև մեր «Բեյթ-ուլ-մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում՝ հոդվածը «Պատմա-բանասիրական հանդես» էջ 200—202:

³² Թ. Մեծոփեցի, էջ 104:

³³ Այդ մասին մանրամասն տես մեր վերոհիշյալ հոդվածները:

Ջհանշահի թագավորության շրջանում 1441 թ. Ամենայն Հայոց կաթողիկոսական աթոռի Սսից էջմիածին տեղափոխելու առնչությամբ հիշատակվում է Արարատյան երկրի բռնավոր ումն Յաղուբ բեկի անունը: Թովմա Մեծոփեցին իր հիշատակարանում հատկապես ընդգծել է վերջինիս դերը էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերանորոգման հարցում, որ «զբազում ամաց աւերեալն կամեցաւ նորոգել»: Հիշատակարանից դժվար չէ կոահել, որ այդ գործը նախաձեռնված է եղել տարիներ առաջ և որ անհրաժեշտ է եղել մեծ նախապատրաստական աշխատանք տանել: Այս հարցին մենք մանրամասն անդրադարձել ենք մեր վերոհիշյալ հոդվածում և ապացուցել, որ էջմիածինը շին է եղել և որպես վանք ու հոգևոր կենտրոն գոյություն ունեւր դեռևս 1432 թվականից առաջ. քանի որ այդ թվականներին արդեն Ամիր Ռուստամը Գրիգոր Մակվեցու ձեռքով կալվածներ էր նվիրում այդ վանքին³⁴: Հիշատակարանից պարզվում է նմանապես, որ գործի նախաձեռնողները մեծ դժվարությամբ են կարողացել ձեռք բերել Յաղուբի համաձայնությունը և աշխատել են արագ կերպով այն գլուխ բերել Քզի մի յապաղելն սատանայ խափանումն ածէ գործոյն»³⁵:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ Յաղուբը ինքնազուխ կերպով չէր կարող վճռել այդպիսի մի կարևոր հարց և ամենայն հավանականությամբ նա դիմել է Ջհանշահին և վերջինիս համաձայնությունը ստանալուց հետո միայն թուլլատրել է ժողով հրավիրել և կաթողիկոս օծել:

Ասացինք, որ Յաղուբի մասին հիշատակված է միայն էջմիածնի կաթողիկոսական աթոռի վերականգնման պատմության մեջ և այն էլ միայն թ. Մեծոփեցու հիշատակարանում: Այդ եզակի անցողիկ հիշատակությունից հնարավոր չէ պարզել, թե ո՞վ էր Յաղուբ-բեկը և որոշակի խոսք ասել նրա ինքնություն վերաբերյալ:

Կա ենթադրություն, որ Յաղուբը եղել է Կարակոյունլուներին ցեղակից բարանի քոչվոր ցեղի պարագլուխներից: Սանդամիրի տվյալներով, բարանիները ժե՛ն դարի վերջերին հաստատված էին Գլոգչալի (Գեղարքունիք) շրջանում և նրանց տիրապետությունը այդ դավառի սահմաններից այն կողմը չէր անցնում³⁶: Աղբյուրներում չկան տեղեկություններ այն մասին, որ նրանք նախապես իշխած լինեն ամբողջ Արարատյան երկրի վրա, նստավայր ունենալով Երևան քաղաքը:

Ի դեպ պետք է ասել, որ մեզ ավելի հավանական է թվում Իսքանդար Մունշու տեղեկությունը բարանիների Ղարաբաղում հաստատված լինելու մասին³⁷, որը մասամբ հաստատվում է նաև Հակոբ Հիսուսին վերագրվող ժամանակագրության հետևյալ հատվածից. «ՌԻՃՂԹ (1499) Ջահանշահ իմիրզին տղէն Գանջալ իրեաց հեծէլ ժողովեց ՌՇ (1500) թվին նա ի Գանջոյ իրեկ, Ալւանդին Թարվիզոյ, Ղօջ դաշտուճն ճակատեցան, Ջահանշահն տղէն կթող փախեաւ»³⁸: Իրավացի է Լ. Պաշիկյանը, երբ ժամանակագրության մեջ

³⁴ Տես նշված հոդվածը, էջ 89—92:

³⁵ Թ. Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 65:

³⁶ حبيب السير Հաբիբ-ու-սիր Կ. Գ, գլ. Գ, էջ 336:

³⁷ تاريخ عالم آرای عباسی թարեխ-ե ալամարա-յե արբասի, Կ. Ա, էջ 25:

³⁸ Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, Կ. Ա, Երևան, 1951, էջ 195:

հիշված «Ջահանշահ խմբրգին տղէն» նուշնացնում է Սուլթան Հուսեյն բարանդի հետ³⁹։ Այսպիսով, ինչպես տեսնում ենք, բարանդինի տիրույթը ավելի է հեռանում Չուխուր-Սաադի սահմաններից և ավելի քան անհավանական է դառնում Յաղուբ բեկի այդ թուրքմենական ցեղին պատկանած լինելու տեսակետը։

Ելնելով այն փաստից, որ Արարատյան երկրում իշխող Սաադունները Կարա-Կոլունլու Իսքանդարի կողմից ենթարկվել են հետապնդման և զրկվել իրենց իշխանական իրավունքներից, հավանական է թվում, որ Ջահանշահի օրոք, 1437 թվականից հետո, նրանց հաջողված լինի վերականգնել կորցրած գերքը և վերահաստատվել նախկին տիրույթներում։ Թեև այդ պետք է սակ խիստ վերապահությամբ, քանի որ աղբյուրներում այդ մասին ոչ մի ուղղակի վկայություն չկա։

Շարաֆ խան Բիթլիսիի մոտ կա վկայություն այն մասին, որ ոմն Հուսեյն Սաադու իր զորքերով մասնակցում էր Ջահանշահի դեպի Խորասան կատարած արշավանքին (1458) և Աստարաբադի գրավումից հետո նշանակվել էր այդ վիլայեթի կուսակալ։ Սակայն կարճ ժամանակից հետո Խորասանի Միրզա Սուլթան-Հուսեյնը պարտության է մատնում Հուսեյն Սաադուին և վերագրավում Աստարաբադը⁴⁰։

Այս փաստը գալիս է հաստատելու, որ իրոք Ջահանշահի օրոք Սաադունները վերականգնել էին իրենց իշխանական իրավունքները և թուրքմենական ռազմաֆեոդալական հիերարխիայում, որպես քոչվորական ռազմական միավորների զորապետ-ցեղապետներ (ամիրներ), կարևոր դերք էին գրավում։

Խիստ աղքատիկ են ժՆ դարի երկրորդ կեսին վերաբերող տվյալները։ Անորոշ է հատկապես Յաղուբ բեկի վախճանը։ Նրա մասին Թ. Մեծոփեցու վերը նշված հիշատակությունից հետո Արարատյան երկրի քաղաքական իշխանութան վերաբերյալ մեզ հայտնի հիշատակարանային միակ տվյալը վերաբերում է 1461 թվականին։ Այդ հիշատակարանից, որը պահպանվել է Առաքել Դավրիժեցու պատմություն մեջ, տեղեկանում ենք, որ «երբ եղև կրկին անգամ գնալ Ջահանշահ փատշահին ի տունն Իրաղայ, ի Շիրազ և ի Քրման, և էր նորա որդի մի Հասանալի անուն, որ շրջեր թափառական զվերին կողմամբ գաւառին Արարատեան, և նա նենգությամբ չարախօսաց ոմանց կամեցաւ ըմբռնել զմեծ պատրիարքն զտէր Ջաքարիալն և պահանջել ի նմանէ գանձս և ինչս»⁴¹։

Ըստ երևույթին, երբ 1460 թ. Ջահանշահը արշավելով դեպի Շիրազ, կոիմներ էր մղում իր ապստամբ որդու Փիր-Բուղաղի դեմ, իսկ Հասան Ալին, որ հենց նոր էր բանտարկված, նորից դուրս էր եկել բանտից և գրավել արքունի գանձարանը⁴², նա միաժամանակ հաջողել էր իրեն ենթարկել նաև Չուխուր-Սաադի վիլայեթը։ Մեջ բերված հիշատակարանից պարզ երևում է, որ 1461 թ. Հասան-Ալուն հաջողվում է տեր դառնալ դրուլթյանը և օգտվելով

³⁹ Ժե դ. հիշ. մասն Բ. Առաջաբան, էջ 1։

⁴⁰ Scherefnameh ou Histoire des Kourdes, par Scheref prince de Bidlis, publiee par V. Veliaminof—Zernof, St. Petersburg 1860, պարսկ. բնագիր, 5. 11, էջ 138։

⁴¹ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 423.

⁴² حبيب السیر، ژاپریه-نلس-میسور، 5. 7, 91, էջ 230.

Ջհանշահի բացակայությունից, որը հարգում և հովանավորում էր Ջաքարիա կաթողիկոս Աղթամարցուն⁴³, փորձում է հալածանքի ենթարկել ու կողոպտել նրան:

Պրոֆ. Մինորսկու նորագույն ուսումնասիրությունները գալիս են հաստատելու, որ Հասան-Ալիի այս համարձակ ելույթը համաձայնեցված է եղել իր եղբոր՝ Փիր-Բուդաղի ապստամբական գործողությունների հետ Հարավային Իրանում, որոնք տևեցին մինչև 1466 թվականը և ավարավեցին վերջինիս պարտությունը և սպանությունը⁴⁴: Այս հաղթանակից հետո էր, որ Ջհանշահը ձերբակալեց Հասան-Ալիին և նորից բանտարկեց Մակվի բերդում⁴⁵:

Այս բոլորից երևում է, որ իրոք ինչ որ ժամանակ Հասան-Ալին նշանակված է եղել որպես հյուսիսային նահանգների կուսակալ՝ կենտրոն ունենալով Նախշևանը, ինչպես իր եղբայր Փիր-Բուդաղն էր հարավում: Այս մասին առանց ազդուրի վիսյակոչման հիշատակում է Ղ. Ալիշանը իր «Այրարատ» աշխատության մեջ⁴⁶: Սակայն Հասան-Ալին շատ հաճախ չէր հնազանդվում իր հորը՝ Ջհանշահին և հալածում ու նեղում էր տեղական խոշոր ավատատերերին, ամիրներին ու հոգևորականությունը: Հասկանալի է, որ այդ պայմաններում տեղական իշխանների, այդ թվում նաև Չուխուր-Սապի ա-միրների վիճակը խիստ անկալուն էր և շարունակ ենթակա հետապնդման:

Այսպիսով եթե մի պահ ընդունենք, որ որոշ ժամանակ Արարատյան երկիրը ենթարկվել է Հասան-Ալիին, ապա պետք է կարծել, որ դա եղել է նախ՝ այն տարիներին, երբ դեռևս նա վալելում էր իր հոր վստահությունը և նշանակված էր հյուսիսային նահանգների կուսակալ, այսինքն մինչև 1450 թվականը, և ապա վերջին ապստամբությունից հետո մինչև նրա ձերբակալումն ու բանտարկությունը, այսինքն 1460—1466 թթ. ընթացքում: Այս վերջին շրջանին էլ հենց վերաբերում է Առաքել Դավրիժեցու պատմության մեզ ծանոթ հիշատակարանը:

Ստույգ տեղեկություններ չկան, թե մինչև 1460 թ. ընկած ժամանակամիջոցում, այն տարիներին, երբ Հասան-Ալին կամ բանտարկված էր Մակվի բերդում և կամ արտաքսված երկրի սահմաններից, ուժն է հանձնված եղել հյուսիսային նահանգների կուսակալությունը: Հավանական է թվում, որ այդ տարիներին Նախշևանում իշխած լինեն Հասան-Ալու եղբայրներից Մուհամմադը կամ Աբու-Յուսուֆը, որոնք Ջհանշահի հետ էին 1467 թ. նրա դեպի Ամիդ կատարած արշավանքի ժամանակ և Ճապաղջուրի ճակատամարտում գերի ընկան Ուզուն-Հասանի ձեռքն ու սպանվեցին⁴⁷:

Սկսած 1430-ական թվականներից, ընդհուպ մինչև դարի վերջը, Արարատյան երկրի սահմաններում գրված ձեռագրաց հիշատակարաններում օրի-

⁴³ Ա. Դավրիժեցի, էջ 420—423.

⁴⁴ V. Minorsky, Jihanshah Qara—qoyunlu and his poetry, BSOAS, 1954, XVI/2՝ էջ 275—276, 296:

⁴⁵ Նույն տեղում. հմտ. նաև Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, ԺԳ—ԺԸ դ. դ., Կ. Ա. Երևան, 1951, էջ 194:

⁴⁶ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 327, հմտ. Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, ԺԳ—ԺԸ դ. դ., Կ. Բ, էջ 222:

⁴⁷ V. Minorsky, Jihanshah Qara—qoyunlu and his poetry, BSOAS, 1954, XVI/2 էջ 295, հմտ. Մանր ժամանակագրություններ, Կ. Ա, էջ 153: Պրոֆ. Մինորսկին իր այս հոդվածում քաղվածաբար թարգմանել է նաև ԺԶ դարի պատմիչ Ղադի Անադը Ղաֆթարիի

նաչափ կերպով բացակայում է տեղական իշխանների անվան հիշատակությունը: Ձի կարելի ուշադրություն չառնել այն փաստը, որ գրիչները բավարարվել են միայն «Ի խանութեան» կամ «Ի թագաւորութեան Ձհանշահի», «յաշխարհակալութեան տանս Հայոց Ձհանշահի թուրքմանի», և կամ «Ի խանութեան Ուզուն-Հասանին», «Ի դանութեան» կամ «Ի պարոնութեան Հասան-բէկին» և նման այլ արտահայտություններով⁴⁸:

«Ձհանար» խորագիրը կրող պատմության կարա-կոյունլուներին վերաբերող հատվածը (էջ 292—297): Այստեղ կան Հասան-Ալիի աղանդավորական հայացքներին վերաբերող հետաքրքիր տվյալներ: Ղաֆֆարիի վկայություններից պարզվում է, որ Հասան-Ալին բազմիցս հակադրվել է իր հորը և վրեժխնդրությունից ու մահապատժից փրկվել է միայն մոր՝ Բեգում խաթունի շնորհիվ, որին Ձհանշահը չափազանց հարգում էր և մասնակից դարձնում իշխանության գործերին:

Պոսելով 1458 թ. Ձհանշահի դեպի շերաթ կատարած արշավանքի մասին, Ղաֆֆարին գրում է. «Այն ժամանակ Սուլթան Արու-Սաիդ Գուրգանին Մավերայինսրեյի եկավ պատերազմելու նրա (Ձհանշահի—Ն. Փ.) դեմ, բայց քանի որ Աղբերայլանից լուրերը ըստատոցվեցին նրա որդու Հասան-Ալիի ապստամբության մասին, Ձհանշահը ստիպված եղավ Արու-Սաիդի հետ հաշտություն կնքել ու ետ վերադառնալ: Հասան-Ալին փախավ և փակվեց Մակվի ամրոցում: Հայրը ներեց նրան և բերեց իր արքունիքը, հետին նպատակներ ունենալով նրա կյանքի նկատմամբ: Սակայն նրա հարզանքն ու սերը Բեգումի հանդեպ կանխում էին նրան իրագործելու իր այդ նպատակները, և ի վերջո Ձհանշահը ստիպված եղավ արտաքսել Հասան-Ալիին իր տիրապետության սահմաններից» (էջ 295):

Այնուհետև նկարագրելով Փիր-Բուղաղի ապստամբության մանրամասնությունները, պատմիչը նորից է անդրադառնում Հասան-Ալուն նշելով, որ «եբը Հասան-Ալիի հայրը նրան արտաքսեց իր տիրապետության սահմաններից, նա գնաց Աղ-կոյունլու Հասան-բեկի մոտ՝ Դիարբեքի: Հասան-բեկը նրան սիրով ընդունեց իր մոտ: Մի քանի անգամ Հասան-Ալին ցանկացավ վերադառնալ իր հոր մոտ, սակայն կես ճանապարհին վախը նրան ստիպեց ետ վերադառնալ, և նորից սիրով ընդունվեց Հասան բեկի կողմից: Սակայն ի վերջո բացահայտվեց նրա անառակությունն ու հերձվածողությունը (فسق و الحاد) և Հասան-բեկը մերժեց նրան իր հյուրընկալությունը (مشرب الحاد)՝ նրա եղբայր Փիր-Բուղաղը, որն իր հերձվածողական դիրքորոշմամբ (مشرب الحاد) հարում էր Հասան-Ալուն՝ ապաստան տվեց նրան: Փիր-Բուղաղի սպանության ժամանակ Հասան-Ալին ընկավ իր հոր ձեռքը և կրկին բանտարկվեց Մակվի ամրոցում» (էջ 298):

Պաշտոնական մուսուլմանական կրոնի նկատմամբ Հասան-Ալիի ոչ հավատարիմ ու ժխտական վերաբերմունքի մասին են վկայում նաև ժեղ գրքի մատենագիր Մովսես Աթ-կեցու տարեգրության հետևյալ տողերը.

«Հասան Ալին անդօլվաթն այն,
 Եկեղեցի շինեաց զՄակուսյն,
 Որոյ անուն սուրբ Վարդան
 Եւ նա չեղև իւրն օգնական
 Կամօք վերինն հայրական»:

Հասան Ալիի կարճատև իշխանության ժամանակից (1467, նոյ. 1468, հուլ.) մեղ է հասել նրա մի հրովարտակը (ընազրով), տրված Տաթևի Շմավոն վարդապետին, որով նա հաստատում է վանքի կալվածատիրական իրավունքները և ազատում հարկային պարտավորություններից (տե՛ս Մատենադարանի պարսկ. հրովարտակները, պրտկ Ա, Երևան, 1956, էջ 47):

⁴⁸ ԺՅ Դ. հիշ., մասն Ա. էջ 534, 551, 560—561, 604, 606, մասն Բ, էջ 4, 15, 18, 33, 82, 85, 120, 131, 132, 133, 134, 156, 158, 214, 230, 232, 244, 283, 315, 316, 337, 347 և այլն:

Այս երևույթը թույլ է տալիս ենթադրելու, որ տեղում իշխող ամիրնեբը, եթե այդպիսիք եղել են, լայն իրավունքներ չեն վայելել, զուրկ են եղել հարկային իմունիտետի և այլ իրավունքներից, այլ խոսքով ասած, երկիրը նրանց սոյուրդալական տիրույթը չի եղել:

Մեր այս ենթադրության օգտին է խոսում նաև այն փաստը, որ նույն ժամանակաշրջանում Հայաստանի այլ վայրերում գրված ձեռագրերի հիշատակարաններում սովորաբար հիշվում են նաև տեղական իշխանների անունները: Այսպես օրինակ, 1459 թ. Բաղեշում գրված մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ի թագաւորութեան Ջհանշահի, ի քաղաքս Բաղէշ և ի իշխանութեան Ամիր Շարաֆի»⁴⁹: Ավելի ուշ ընդօրինակված ձեռագրերում ևս գրիչները չեն մոռանում Բաղեշի քուրդ իշխաններին և շարունակում են արձանագրել «ի դանութեան Ամիր-Շարաֆի»⁵⁰: Այս երևույթն անշուշտ դալիս է ապացուցելու, որ Բաղեշում, որտեղ իշխում էին «Ռոժակի» կոչվող ցեղի առաջնորդները, գրութունը այլ էր, քան Արարատյան երկրում: Հայտնի է, որ Բաղեշի քուրդ ամիրները սկսած ԺԴ դարի կեսերից, իրենց ենթակա երկրներին տիրում էին որպես սոյուրդալներ և ինքնավարական բավական լայն իրավունքներ էին վայելում⁵¹:

Որոշ թյուրքիմացության առիթ են տվել հատկապես Աղ-Կոյունլուների տիրապետության խառն շրջանի (1468—1501) հիշատակարանները, որոնց մեջ, ինչպես ասվեց, նախկին ձեռք հիշատակված են միայն Թավրիզում նստող փաղեշահների անունները: Այդ անուններին նախորդող «խան», «ղան» կամ հաջորդող «բեկ» տիտղոսները սխալ են ընկալվել հետագա ուսումնասիրողների կողմից (Շահխաթունյանց և ուրիշներ), որի հետևանքով էլ Երևանի խաների նրանց կազմած ցուցակներում այդ շուրջ 30 տարիների տակ հիշատակված են «Հասան-բեկ» կամ «Հասան խան» և «Յաղուբ բեկ» անունները⁵²: Պարզ է, իհարկե, որ դրանք նույն Աղ-Կոյունլու Ուզուն-Հասանն ու նրա որդին՝ Յաղուբ փաղեշահն են, որոնք ինչպես տեսանք հիշված են, «ի դանութեան» կամ «ի պարոնութեան Հասան-բեկին», «ի խանութեան Յաղուբ բեկի» և նման համառոտ կամ ավելի ընդարձակ արտահայտությամբ: Թյուրքիմացության տեղի են տվել հատկապես «խանութուն» մանավանդ «պարոնութուն» արտահայտությունները, ինչպես նաև «բեկ» հորջորջումը, որը ընդունված էր Աղ-Կոյունլուների մոտ, այդպես են անվանված նրանք նաև պարսկական աղբյուրներում:

Այիշանը նկատել է անունների այդ շփոթությունը և փորձել է որոշ պարզություն մտցնել: Մոսկովյ Ջհանշահի օրոք Երևանում իշխած Յաղուբ բեկի մասին, նա միաժամանակ նշում է, որ Ուչ է լայտ ցոր ժամանակ եկաց նա չիշխանութեանն, այլ թուի շփոթեալ և ընդ համանուան Եաղուբ բեկի որդու Ուզուն Հասանայ, որ ի սոյն Սպիտակախու տոհմէ էր, և սպան զՋհանշահ լամի 1467, և ի դէպ է թէ զորդի իւր կարգեաց զան կամ կուսակալ երկրիս մերոյ, զոր չիշատակագիրք մեր ստէպ անուանեն Աղուբ կամ Յաղուբ Դան կամ Բէկ, սպա և Փաթշահ և աշխարհակալ, զի յաջորդեաց

⁴⁹ ժն գ. հիշ., մասն Բ, էջ 126:

⁵⁰ նույն տեղում, էջ 194:

⁵¹ Scherenameh, հ. Ա, էջ 376—378:

⁵² Հ. Շահխաթունյանց, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ դաւառաց Արարատայ, հ. Բ, էջ 171-172, 1842, էջ 137-Վ. Այիշան, Այրարատ, էջ 300, հմմտ. Ե. Շահագիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 83:

զհայր իւր ի շահաստանն Դավրէժ (1478—1491): Զայլ ոմն Հասան բէկ թոռն Բայընդրոյ ասէ Շահխաթ. կուսակալ՝ յամի 1475. ալլ նոյն ինքն Ուզուն Հասան է տոհմապետ Սպիրտակախոյ թուրքաց ընդ որոյ իշխանութեամբ եկաց տեղին, և ի նոցանէ էանց առ ժառանգս տոհմին՝ Շահ Սէֆեանս»⁵³:

Ալիշանը և հատկապես Շահխաթունյանցը իրենց ձեռքի տակ չեն ունեցել մեր բոլոր ձեռագրերի հիշատակարանները, ուստի և չեն կարողացել ժամանակագրական կարգով ուսումնասիրել դրանք, և իրենց տվյալները քաղել են միանգամայն պատահական հիշատակարաններից: Այդուհանդերձ Ալիշանը շուրջ մեկ 50-ամյակ հետո, ձեռքի տակ ունենալով ավելի մեծ թվով հիշատակարաններ և ալլ սկզբնաղբյուրներ ու ուսումնասիրութիւններ, կարողացել է կռահել, որ դրանք հենց նույն Աղ-կոյունլու թագավորներն են:

Հետաքրքիր է սակայն նրա այն միտքը, որ հավանաբար Ուզուն-Հասանը թավրիզը գրավելուց հետո կարող էր իր որդուն՝ Յաղուբին նշանակած լինել ռդան կամ կուսակալ երկրիս մերոյ: Իհարկե անհավանական չէ, որ Ուզուն Հասանը շարունակելով Ջհանշահի ժամանակ հաստատված տրադիցիան, իր որդիներից մեկին նշանակած լինի հյուսիսային նահանգների կուսակալ, սակայն ի վնաս այդ ենթադրութեան է խոսում այն փաստը, որ Յաղուբ-բեկի անունը հիշատակվում է միայն 1478 թվականից հետո գրված ձեռագրերի հիշատակարաններում, այսինքն սկսած այն թվականից, երբ նա ժառանգեց իր հոր գահը թավրիզում⁵⁴: Այնպես որ այդ ենթադրութիւնը բացի նախորդ տասնամյակների տրադիցիայից, դեռևս ոչ մի ուրիշ, թեկուզ և երկրորդական փաստով չի հիմնավորվում:

Ավելի քան անորոշ է Յաղուբ փաղիշահի թագավորութեան շրջանը, որը նշանավորվեց հատկապես կրոնական անհանգուրժողականութեամբ և հայ աշխարհիկ ֆեոդալականութեան վերջին ֆուստրիզների դեմ կիրառվող հալածանքների շեշտված քաղաքականութեամբ⁵⁵:

ժե դարի վերջին տասնամյակը համարյա ամբողջութեամբ անցավ Աղ-կոյունլուների արքունիքում տիրող երկպառակութիւններով և իրար հաջորդող գահակալական կռիւներով: 1491—1493 թթ. թավրիզում իրար ետևից միմյանց հաջորդեցին Յաղուբի եղբայր Մասիհը, ապա Յաղուբի մեծ եղբոր Նալիլի որդին՝ Ալին, իսկ վերջում Յաղուբի որդին՝ Բայսոնդուրը: Համեմատաբար երկար իշխեց Ուզուն-Հասանի թոռ, Մախուդի որդին՝ Ռուստամ փաղիշահը (1493—1496): Ռուստամին պարտութեան մատնեց Ուզուն-Հասանի թոռ, Ուղուրլու Մուհամմադի որդին՝ Ահմադը, որը սակայն իշխեց հազիվ ութ ամիս և սպանվեց ներքին խռովութիւնների ժամանակ: Նրանից իշխանութիւնն անցավ Յաղուբի որդի Մուրադին, որին իր հերթին պարտութեան մատնեց Ուզուն-Հասանի մյուս որդու՝ Յուսուֆի որդի Մուհամմադը (1498—1499), իսկ սրա ձեռքից էլ իշխանութիւնը խլեց իր եղբայրը՝ Ալվանդը:

Ժամանակակից գրիչներից մեկը հետևյալ կերպ է բնորոշել այս ներքին երկպառակութիւնների ժամանակաշրջանը. «Թավրիզայ փաթշահութիւն յափանեալ էր, և Աղուրցոց ազգն լիրար անկեալ էին, և պարտութիւն սոցա ոչ

⁵³ Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 300:

⁵⁴ Տես ժե դ. հիշ., մասն Բ, նշված թվականների հիշատակարանները:

⁵⁵ Այս մասին տես Հ. Փափազյան, Բեյթ-ու-մալի կնստիտուտը և հայ ֆեոդ. հոգերի բռնազրավումները ժե դարում, «Պատմա-բանասիրական հանդես» 1958 թ. № 2:

հաստատեին, և աշխարհս կայր յերերմանի, վասն զի միմեանց ոչ հնազանդէին, յերեք չորս զիմաց բաժանեալ էին փաղշահուկներն, զմիմեանս կոտորէին, և շատ հայ և թուրք թալանեցան և գեղք ու քաղաքք աւերեցան, և ազգ քրդաց կոտորեցան և սպանեցան»⁵⁶:

Այսպիսով, ինչպես տեսանք, ԺԵ դարի երկրորդ կեսում Չուխուր-Սաադի էմիրությունը կորցրել էր իր նշանակությունը և փաստորեն ենթարկվում էր Նախշևանի կոստակալությանը: Այս շրջանում որպես վարչական և զինվորական կենտրոն կարևոր դեր է սկսում խաղալ Նախշևանը: Այն փաստորեն դարձել էր փոխարքայանիստ քաղաք, որտեղ իշխում և տեր ու տնօրեն էին հանդիսանում Կարա-Կոյունլու և Աղ-Կոյունլու թագավորների որդիները: Թուրքմենն թագավորները մեծ կարևորություն էին տալիս Նախշևանին և հատկապես Թուման-ե Նախշևանի նահանգին, այնտեղ գտնվող Երնջակի բերդի պատճառով, ուր պահվում էին արքունի գանձերը:

Նախշևանի վարչատնտեսական կարևոր նշանակության մասին են վկայում նաև ներկայումս Մատենադարանի արխիվային ֆոնդերում պահվող մի քանի կալվածագրեր, որոնք թեև վերաբերում են Չուխուր-Սաադի նահանգում գտնվող կալվածներին, սակայն գրված են Նախշևանի Շար'ի ատյանում և կնքված են նույն քաղաքի ղազիի կնիքով: Այդպիսի վավերագրերից են ինչպես 1429 թ. Էջմիածնի հնագույն կալվածագրերը, այնպես նաև 1431 թ. Ամիր Ռուստամ Օրբելյանի կողմից Էջմիածնին տրված 7 գյուղերի և նույն անձնավորության կողմից 1450 թ. Տաթևի Առաջնորդ Շամսի վարդապետին վաճառված գյուղերի կալվածագրերը⁵⁷:

Հետագա տասնամյակների վավերագրերը գալիս են հաստատելու Նախշևանի վարչատնտեսական նշանակության ավելի ուժեղացման մասին: ԺԵ դարի վերջերի և ԺԶ դարի կալվածագրերից պարզ երևում է, որ առհասարակ բոլոր վիճակի հարցերը վերջնական քննության էին ենթարկվում Նախշևանի գլխավոր զինվորական կայանի ատյանում, որը կոչվում էր «Դարու-կազա-յե մուսակար-ե զաֆար-ասար» (دار القضاء معسكر ظفر اثر)⁵⁸: Նախշևանը Աղ-Կոյունլուների բանակի հյուսիսային կենտրոնական կայանն էր, իսկ հարավային կայանը գտնվում էր Շիրագում⁵⁹: Այս երկու քաղաքներում էր, որ տարվա որոշ ամիսներին Աղ-Կոյունլու փաղիշահները, Ուզուն-Հասանի օրոք հաստատված կարգով, զորամասերի ստուգատես էին կատարում, կամ, ինչպես ընդունված էր ասել, «սան էին ընդունում» (համար էին առնում): Թուրքմենական կազրային հեծելազորը կանգնած էր Նախշևանի կրճաղում, մասամբ նաև Երնջակում, իսկ ամառը բարձրանում էր Բազարչայի լավաղը, որը նույնպես գտնվում էր Թուման-ե Նախշևանում: Ահա թե ինչու, երբ Իսմայիլ Սեֆեհին կրկնվազ մուրիդների գլուխն անցած վերջնական պարտություն մատնեց և սպանեց Շիրվանշահ Ֆառուխասարին, Ղարաբաղից

⁵⁶ Դ. Ալիշան, Այբաբատ, էջ 329:

⁵⁷ Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 1004, 934, թղթ. 2ա, վավ. 3

⁵⁸ Տես, Մատենադարան, Կաթողիկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 7, 8, թղթ. 2ա, վավ. 1, և այլն:

⁵⁹ جلال الدين محمد دواني — عرض سپاه اوزون حسن، بکوشش ایرج افشار

۱۳۳۵، شماره ۳۵، مجله دانشگده ادبیات، ۲۶—۲۷ էջ

(Գուլիստան) արագ երթով շարժվեց դեպի Նախջևան՝ նպատակ ունենալով հանկարծակի հարվածով ջախջախել և շարքից հանել Աղկոյունլունների հիմնական զինվորական ուժը:

Աղ-Կոյունլու Ալվանդը նախազգուժ էր այդ, դրա համար էլ նախօրոք արդեն եկել էր Նախջևան և պատրաստվում էր դիմագրավելու կըզըլբաշների հարվածը: Նա չսպասեց, որպեսզի Իսմայիլը գա և հասնի Նախջևան, այլ իր զորքերով դուրս եկավ Նախջևանի ճամբարից և շարժվեց Իսմայիլին ընդառաջ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Շարուրի դաշտում, որտեղ և որոշվեց Աղ-Կոյունլունների պետությունից բախտը: Այս ճակատամարտում թուրքմենական հյուսիսային զորաբանակը գլխովին ջախջախվեց և դադարեց գոյություն ունենալուց, որից հետո Իսմայիլը առանց որևէ դիմադրություն հանդիպելու մտավ Թավրիզ, վերջ տալով Աղ-Կոյունլունների տիրապետությանը (1501 թ.): Հաջորդ տարին արդեն, նա իրեն հայտարարեց Իրանի շահնշահ, հիմք դնելով կըզըլբաշների Սեֆյան դինաստիային:

Թեև կըզըլբաշների Գյուլիստան-Նախջևան մարշրուտը սկզբնադրյուններում որոշակի կերպով չի նշված, սակայն ամենայն հավանականությամբ Իսմայիլը Ղարաբաղից նախ անցել է Գեղարքունիք, ապա իջել է Երևան և ալստեղից էլ շարժվել դեպի Նախջևան և, ինչպես վերը տեսանք, կես ճանապարհին հանդիպելով ընդառաջ եկող Ալվանդին, Շարուրի դաշտում ընդունել է մարտը և պարտություն մատնել նրան: Բավական հավանական կովաններ կան ենթադրելու, որ Իսմայիլը անցել է Չուխուր-Սաադով, որպես իր հանդեպ բարեկամաբար տրամադրված մի երկրով և ալստեղ հավանաբար նրան են միացել այդ ժամանակ արդեն իրենց «շահիսեվան» հայտարարած և կըզըլբաշներին հարած Սաադլունների զինված ջոկատները:

Շուրջ երկու տարի առաջ, 1499 թ. դարնանը, երբ Իսմայիլը խուսափելով բարանինների ծուղակից, Գեղարքունիքի վրայով անցավ Չուխուր-Սաադ, համարյա ամբողջ ամառը անցկացրեց ալստեղ: Որոշ ժամանակ Երևանում մնալուց հետո նա անցավ Շորագյալ, որտեղ Ռումի վիլայեթից նրա ճամբարը եկավ Կարաջա—Իլյաս Բաբերդլուն Ռումլու էլի բավական խոշոր մի զորամասով: Այնուհետև մոտ երկու ամիս Իսմայիլը կանգ առավ Կաղզվանում, որտեղից և կապվեց Բարձր Հալքի կըզըլբաշ էլիերի հետ: Այստեղ ևս մեծ թվով կըզըլբաշ զորամասեր ներկայացան Իսմայիլին և պատրաստակամություն հայտնեցին կովելու նրա դրոշի ներքո: Կաղզվանում եղած ժամանակ արդեն նրա զորքերի թիվը հասնում էր 7000-ի, Ալստեղից շարժվելով դեպի արևմուտք, Իսմայիլը ձմեռն անց է կացնում Երզնկայում, որը կըզըլբաշ էլիերի կարևոր կենտրոններից էր:

Հստ երևութիւն այս ընթացքում է տեղի ունեցել Սամցխեի Աթաբեկ Ղվարդլարեի արշավանքը դեպի Արարատյան երկիր: Հայոց ԶԽԸ (1499) թ. գրված մի համառոտ հիշատակարանի համաձայն՝ Ղվարդլարեն ասպատակություն է ենթարկում Արարատյան երկրի մեծ մասը և հարուստ ալարով, որի մեջ կային նաև հայկական ձեռագիր մատյաններ, ետ վերադառնում⁶⁰:

Ուշագրավ է այն փաստը, որ Երզնկայից վերադառնալուց հետո, նախքան Շիրվան արշավելը, Իսմայիլը իր ամիրներից Խուլաֆա բեկին ուղարկում

⁶⁰ Մատենադարան, ձեռ. 6273, էջ 376, հմմտ. ԺԾ դ. հիշ. մասն Բ. Առաջաբան, էջ XLIX:

է Աթաբեկ Դավարդվարե երրորդի դեմ, հրահանգելով ավերել ու կողոպտել նրա երկիրը: Խուլաֆա բեկը ասպատակում է Սամցխեի գյուղերն ու ավանները և մեծ ավարով ու գերիներով վերադառնում ու միանում է դեպի Շիրվան արշավող բանակին⁸¹:

Պարսկալեզու աղբյուրներից, ինչպես նաև արխիվային վավերագրերից պարզվում է, որ ԺՁ դարի սկզբներին Սաաղլուների էլը իր բազմաթիվ օջմաղներով դեռ շարունակում էր հաստատված մնալ Արարատյան երկրի կենտրոնական՝ դաշտային շրջաններում: Հիշատակվում են Սաաղլու շատ ամիրների անուններ, որոնք մասնակցում էին կրղըլբաշների արշավանքներին: Ալլուհանդերձ, սակայն նրանք այլևս չեն կարողանում վերականգնել իրենց իշխող դիրքը Արարատյան երկրում և երբեմն հիշվում են միայն որպես Չուխուր-Սաաղի վիլայեթին ենթակա առանձին օլբաների տերեր և կամ սոսկ որպես թիուղարներ:

ԺՁ դարում Չուխուր-Սաաղի վիլայեթը կամ բեկլարբեկությունը կովախնձոր դարձավ բոլորովին այլ կրղըլբաշ էլերի և ուլուսների ամիրների միջև, այդ ընթացքում հաճախակի ենթարկվելով նաև թուրք փաշաների տիրապետությանը:

Հայ և օտար սկզբնաղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի որոշակի կերպով պարզելու և ճշգրտելու նաև ԺՁ դարի կամ վաղ Սեֆյան շրջանի Արարատյան երկրի քաղաքական պատմությանը վերաբերող մի շարք հարցեր, որոնք մտադիր ենք քննություն անել առանձին հոդվածում:

А. Д. Папазян

Иноземное господство в Араратской области (XV в.)

Резюме

Мелкие армянские княжества, которые при Захаридах господствовали в центральных районах Араратской области исторической Армении, смогли сохранить свое существование до середины XV в.

В области, занимавшей основную центральную часть нынешней Советской Армении, в конце XIV в. было создано Чухур-Са'дское амирство с центром в Ереване, где господствовали вожди туркменских племен Са'длу. Чужеземное господство переходя из рук в руки, продолжалось вплоть до присоединения Восточной Армении к России (1827 г.). С точки зрения крупных политических изменений, этот примерно 450-летний период можно условно разделить на следующие пять разделов и подразделов.

1. Туркменский период, (с конца XIV в. до конца XV в.): а) Полузависимое амирство Са'длу (до 1420 г.) б) Область подчиненная северному наместничеству (до 1501 г.).

2) Раннесефевидский период или период персидско-османских походов и переменного господства (1501—1603 гг.).

3) Ново-Севевидский период (1602—1724 гг.).

⁸¹ Հաբիր-ուս-սիար, հ. Գ, գլ. 4, էջ 337—338:

4) Период новых политических переворотов и полузависимого ханства (1724—1795 гг.), а) Турецкая оккупация (до 1736 г.); б) Надировский период (до 1746 г.); в) Период господства Каджарского Ирана или период сардарства (1795—1827 гг.),

В настоящей статье исследуются некоторые вопросы, касающиеся истории первого периода; уточнена хронологическая преемственность иностранных властителей Араратской области в период господства туркменских династий на всем протяжении XV в.

H. D. Papazian

Foreign Rule over Araratian Region (XV c.)

S u m m a r y

Armenian small principalities that ruled during the period of Zacharides over the central districts of historical Armenia in Araratian region, succeeded to preserve their existence up-to the middle of XIVc.

In the region that occupied the basic central part of the present Soviet Armenia had been set up the emirate of Chukhūr-Sa'd having Yerevan as its centre. Here ruled the leaders of Turkmen Sa'dlū tribes. The foreign rule passing from hand to hand continued up to the joining of the Eastern Armenia to Russia (1827).

From the point of view of important political changes this approximately 450 years may be conditionally divided into the following five periods.

1. The Turkmen period (from the end of XIV c. to the end of XV c.). a. Half-dependant emirate of the Sa'dlūs (until the 1420-th years). b. The region tributary to the Northern Vicegerency (till 1501).

2. The Early-sefevid period or the period of Persian-Ottoman marches and variable rule (1501—1603).

3. The New-sefevid period (1603—1724).

4. The period of new political ups and downs and half-dependant khanate (1724—1795). a. The Turkish occupation (till 1736). b. The Nadir period (till 1746) c. The period of half-dependant khanate (till 1795).

5. The period of Qajar Iran's rule or the period of sardarate (1795—1827).

In the present article some questions concerning the history of the first period are investigated. More exact has been made the chronological succession of foreign rulers of Araratian region at the period of supremacy of Turkmen dynasties during the XV century.

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 1725 և 1728 ԹԹ. ԹԻՒՐՔԱԿԱՆ
ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ

Մի քանի տարի առաջ Մատենադարանը ձեռնամուխ եղավ իր արխիվային ֆոնդերում պահվող պարսկերեն վավերագրերի գիտական հրատարակությանը: Այժմ արդեն հրապարակի վրա են «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտական» շարքի Ա և Բ պրակները: Հրատարակության է պատրաստվում «Կալվածագրեր»-ի Ա պրակը (ԺԴ—ԺԶ դդ.), որտեղ կընդգրկվեն նաև արաբերեն կալվածագրերը: Կարելի է հուսալ, որ առաջիկա 10—15 տարիների ընթացքում այդ ուղղությանը զգալի գործ կկատարվի և հաջորդաբար լույս կտեսնեն Մատենադարանի արխիվային ֆոնդերում առկա բոլոր կարևոր պարսկերեն ու արաբերեն վավերագրերը:

Արարատառ վավերագրերի մեջ համեմատաբար փոքր թիվ են կազմում թուրքերեն վավերագրերը, որոնց ամբողջական հրատարակության ուղղությամբ դեռևս գործնական քայլեր չեն արված: Դրանք թվով շուրջ 250 հատ են, որոնցից հնագույնը կրում է հիշրեթի 996 (1588) թվականը: Այս փաստաթղթերը մեծ մասամբ հրովարտական են՝ տրված ինչպես օսմանյան սուլթանների, այնպես նաև մեծ վեզիրների կամ տեղական փառանքների կողմից: Կան նաև հոգևորական կամ Շարի տոլյաններում կազմված արձանագրություններ, հարկային-ֆինանսական փաստաթղթեր, ինչպես նաև պաշտոնական ու անձնական բնույթի գրագրություններ:

Սուլթանական հրովարտականները հիմնականում տրված են հայոց կաթողիկոսներին, նրանց իրավունքների հաստատման, նվիրականների կամ ուխտավորների ազատ երթևեկության, եկեղեցական տուրքերի գանձման և հայոց եկեղեցուն վերաբերող այլ հարցերի կապակցությամբ: Կան նաև տեղական բնույթ կրող հրամանագրեր, որոնք վերաբերում են պետական պաշտոնյաների և հայ հոգևորականության միջև ծագած հարցերին:

Հայոց եկեղեցու և հատկապես հայ ժողովրդի արևմտյան հատվածի իրավա-քաղաքական ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի ուսումնասիրության համար որոշակի հետաքրքրություն ներկայացնող այս փաստաթղթերը համապատասխան մասնագետների կողմից դեռևս պատշաճ ուշադրության չեն արժանացել: Միակ հեղինակը, որ քիչ թե շատ հանգամանալից ուսումնասիրության է ենթարկել դրանք, եղել է Սիմեոն կաթողիկոս Երևանցին, որը սակայն, կարող էր խոսել միայն մինչև իր գրքի շարագրման ժամանակները (1765 թ.) էջմիածնի դիվանատանը գտնվող վավերագրերի մասին:

1956 թ. լույս տեսած «Մատենադարանի պարսկերեն հրովարտական»-ի Ա պրակի առաջաբանում անդրադառնալով Սիմեոն Երևանցու «Ջամբռ» աշ-

խատուծյանը, նշել ենք, որ այնտեղ հիշատակված համարյա բոլոր փաստաթղթերը (հրովարտականներ, հրամանագրեր, կալվածագրեր և այլն) չնչին բացառությամբ հասել են մեզ և այժմ պահվում են Մատենադարանի Արխիվային բաժնի Կաթողիկոսական դիվանի առանձին թղթապանակներում: «Հրովարտականներ»-ի Ա և Բ պրակների ծանոթագրություններում բազմիցս առիթ ենք ունեցել ասելու, որ հիշյալ վավերագրերի վրա պահպանվել են Սիմեոն Երևանցու կողմից կատարված համառոտ մակագրություններ վավերագրերի բովանդակության վերաբերյալ, որոնք նույնությամբ, իսկ երբեմն էլ մասնակի խմբագրությունից հետո մեջ են բերված «Ջամբո»-ի համապատասխան գլուխներում: Այսպես, սխալված չենք լինի, եթե ասենք, որ «Ջամբո»-ի ԺԿ, ԺԴ, ԺԵ, ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ և ԻԵ գլուխները իրենց մեծ մասով իսկ Ի, ԻԱ, ԻԲ, ԻԳ, ԻԴ գլուխները համարյա ամբողջությամբ կաղմված են հիշյալ վավերագրերի վրա պահպանված համառոտ մակագրություններից:

«Ջամբո»-ի ուշագիր ուսումնասիրությունը և նրա համեմատությունը վավերագրերի վրա պահպանված և նրանց բովանդակությանը վերաբերող մակագրությունների հետ թույլ են տալիս հաստատապես ասելու, որ նրա հեղինակը չտիրապետելով պարսկերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներին, կամ ավելի ճիշտ գրաճանաչ չլինելով այդ լեզուներում և չկարողանալով անձամբ ընթերցել վավերագրերը, դրանք ընթերցել է տվել այդ լեզուներին գիտակ մեկին և նրանց համառոտ բովանդակությունը գրել տվել (երբեմն նաև իր իսկ ձեռքով արձանագրել) վավերագրերի վրա: Գիրքը շարադրելիս նա հիմնվել է այդ մակագրությունների վրա և իր բոլոր եզրակացությունները կատարել է ելնելով այդ համառոտ անոտացիաների տվյալներից:

Ինչպես լուրաքանչյուր ուսումնասիրության հեղինակի, այնպես նաև Սիմեոն Երևանցուն այդ վավերագրերը հետաքրքրել են միայն իր ուսումնասիրության մեջ արժարժված հարցերի, այսինքն էջմիածնի և Արևելյան Հայաստանի այլ վանքերի կալվածատիրական իրավունքների և հարկային արտոնությունների կամ մուսաֆուրյան պատմության լուսաբանման առնչությամբ: Ուստի, ինչպես բուն իսկ վավերագրերի վրա կատարված համառոտ մակագրություններում, այնպես նաև «Ջամբո»-ում, հիշյալ վավերագրերը այդ տեսանկյունով են բնութագրված: Սակայն ինչպես ցույց տվեց «Մատենադարանի պարսկերեն հրովարտականներ» Ա և Բ պրակների հրատարակությունը, այդ վավերագրերը հետաքրքիր են ոչ միայն վանքերին տրված մուսաֆուրյան իրավունքի կամ նրանց կալվածատիրական կարողությունների էության ուսումնասիրության տեսակետից, այլև որպես պատմական հավաստի սկզբնաղբյուրներ, շատ ավելի լայն հետաքրքրություն են ներկայացնում և ԺԴ—ԺԹ դդ. քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության վերաբերյալ հսկայական փաստական նյութ են պարունակում:

Ներկա հոդվածի նպատակներից դուրս է խոսել «Ջամբո»-ում հիշված այն բոլոր վավերագրերի մասին, որոնց բնագրերը այժմ պահվում են Մատենադարանի արխիվային ֆոնդերում: Ինչպես նշված է «Հրովարտականներ»-ի Ա և Բ պրակների ծանոթագրություններում, նույն մատենաշարի հետագա հրատարակություններում ևս մենք հերթականորեն առիթ կունենանք մեկ առ մեկ խոսելու այդ բոլորի մասին: Հույս ունենք, որ այդ հրատարակությունները մեծ չափով կհեշտացնեն ուսումնասիրողների գործը և նրանք այլևս ստիպված չեն լինի բավարարվելու միայն «Ջամբո»-ի խիստ համառոտ, եր-

բեմն նաև աղավաղված տվյալներով¹։ Դա հավասարապես վերաբերում է ինչպես պարսկերեն ու արաբերեն, այնպես նաև թուրքերեն վավերագրերին, որոնց ամբողջական հրատարակության ուղղութիւնը, ինչպես ասվեց, դեռևս գործնական քալեր չեն արված։

Այս տեսակետից առավել հատկանշական են 1724—1736 թթ. թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի ժամանակավոր օկուպացիայի ժամանակաշրջանին վերաբերող վավերագրերը (52 հատ)։ Ստորև կիրթնենք ծանոթանալ այդ շրջանի երկու վավերագրերի հետ, որոնք պարունակում են հետաքրքիր տվյալներ ոչ միայն էջմիածնի վանքի կալվածների և նրա վալեյած հարկային արտոնութիւնների մասին, այլև հիմնականում վերաբերելով Վաղարշապատ գյուղից զանձվող հարկերին, մեծ չափով օգնում են պարզելու 1725—1736 թթ. աշխատավորութիւն հարկային պարտավորութիւնների ինչպես նաև Օսմանյան պետութիւն Արևելյան Հայաստանում և ընդհանրապես Անդրկովկասում վարած հարկային քաղաքականութիւն հետ առնչվող որոշ հարցեր։

* * *

Իր աշխատութիւն ժ'ի գլխում Սիմեոն Երևանցին շարադրելով էջմիածնի վանքին տրված հարկային արտոնութիւնների կամ մուսֆութիւն պատմութիւնը, մի առ մի թվարկում է բոլոր կարևոր պաշտոնական փաստաթղթերը՝ հրովարտակներն ու այլ կարգի արտոնագրերը, որոնք ժամանակին ձեռք է բերել վանքը օտար իշխանավորներից։ Այս գլխում հիշատակված առաջին թուրքերեն փաստաթուղթը հիշքեթի 1137 (1725) թ. Երևանի Ռաշար փաշայի կնիքը կրող «Գրքաձև դէֆթերն» է։

«Դարձեալ ի ՌձԼԷ թուին տաճկաց, — գրում է Երևանցին, — մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցուց, և նստի յԵրևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթուղիկոսն զմաղաֆութենէ

¹ Բոլորովին էլ չթերազնահատելով Սիմեոն Երևանցու այս իրօք մեծարժեք աշխատութիւն նշանակութիւնը ժԼ դարի սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների պատմութիւն ուսումնասիրութեան գործում (տե՛ս այս մասին «Հրովարտակներ» պրակ Ա, Առաջարան, էջ 12—14), միաժամանակ չենք կարող չառարկել ուսումնասիրողներին օժանց այն կարծիքին, ըստ որի «Ջամբուած բավականաչափ սպառիչ և բազմակողմանի ուսումնասիրութեան են ենթարկված հեղինակի օգտագործած բոլոր պարսկերեն և թուրքերեն վավերագրերը։ Այս հարցին մենք տարբեր առիթներով անդրադարձել ենք «Հրովարտակներ»-ի Ա և Բ պրակների առաջարաններում և ծանոթագրութիւններում։ Սխալ է և զիտական տեսակետից դատապարտելի նաև «Ջամբուած»-ը զիտել որպես ժԵ—ժԹ զգ. սոցիալ-տնտեսական և հատկապես ագրարային հարաբերութիւնների պատմութեան սկզբնաղբյուր։ «Ջամբուած»-ը կարող է որպես սկզբնաղբյուր ծառայել միայն ժԼ դարի և հատկապես նրա երկրորդ կեսի սոցիալ-տնտեսական հարաբերութիւնների պատմութեան ուսումնասիրութեամբ զբաղվողներին։ ԺԵ—ժԹ դարերի համար «Ջամբուած»-ը ոչ թե սկզբնաղբյուր է, այլ մի ուսումնասիրութեան, որտեղ Սիմեոն Երևանցին, ինչպես վերը նշեցինք, փորձում է պարսկերեն և թուրքերեն վավերագրերի վրա կատարված համառոտ անոտացիաների հիման վրա դրել վանքի կալվածատիրութեան և հարկային արտոնութիւնների պատմութիւնը։ Հողատիրութեան և հողային հարաբերութիւնների մասին խոսելիս, նա վավերագրերի տվյալները բացատրում է յուրովի, և լինելով իր ժամանակի հարաբերութիւններից, առանց խորանալու վավերագրերի էութեան մեջ։ Ուստի ժԵ—ժԹ զգ. վավերագրերում արժանաբան և արժանապատիւ տվյալներ են հիմք ծառայել միայն ժԼ դարի հողային հարաբերութիւնների ուսումնասիրութեան։

սրբոյ Աթոռոյս: Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքածեղ զէֆթէր մի, որոյ զգլուխն ինքն կնքէ՝ և զվերջն Շիս-խալամն: Յորում գրեցուցանէ զմլքատու գեօղորայն սրբոյ Աթոռոյս, որք են այսոքիկ: Այս մեր գեօղս, Մաստարայ, Օշական, Ֆոանկանոց և Գիրաշլու: Այլ և մաղաֆ եղեալ մուլքն Աթոռոյս ի սմա գրեցեալ են այսոքիկ: Ի մեր գեօղս վեց շէն ջրաղաց, երկու աւեր՝ մէկ շէն դինկ, երկու ձիթահանք, քսան և ինն արտ ցանելի, երեք եօնջալուղ, երեք այգի. ի Յօշական երկու այգի, մի ևս աւեր, ի Փարաքար երկու այգի, լերեան երկու այգի, երկու ջրաղաց, ի Գեալարայ երկու ջրաղաց, մէկ դինկ, երեք ջրաղացի ջուր ածեալ ի Զանկի գետոյն՝ որ է Նահապետ կաթուղիկոսի հանեալ մեծ առուն, որ Դալմա ասի, որոյ ակն է մերծ Սարվանյար կոչեցեալ գեղջն, որ լերեան՝ ի ներքոյ բերդին. և վեց հարիւր ոչխար, և սևազուխք և միաբանքն մաղաֆ և մի՛ տայցեն գիսարած, և այսքան վանօրայք ևս ընդ ձեռամբ խալիֆային հաշուեալ մաղաֆ լիցին, սուրբ Հոփոսիմէն, Շողակաթն, Գալիանէն, Երեանու սուրբ Անանիա առաքելոյ և Զորագեղոյ անապատքն: Բայց միայն խալիֆայն ի տարւոջն զվեց հազար ութն հարիւր ստակ տայցէ լարքունիս, և ոչ այլ ինչ: Գի՛տ զայս զիրս ցուցակաւն և () նշան համարովն: Թիւն տաճկաց ՌձձԼէ: Այսպիսի օրինակաւ գիր թ հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն»¹:

Այս վավերագրից անմիջապես հետո հիշատակված են ևս երկու «զէֆթէր»-ներ, որոնցից առաջինը կրում է հիշրեթի 1140 (1728), իսկ երկրորդը 1143 (1731) թվականները. նույնպիսի մանրամասնությամբ և արտաքին նըշանների նկարագրությամբ՝ «Որք երկուքն ևս շատ հարկաւորք են և պահելիք, և են երկար գրքածեղք, մին չորս թուղթք, և միւսն հինգ թուղթք, որք երկուքն ևս գոն ի սուրբ Աթոռս, ունելով զծաղկեալ պահարան յատուկ յատուկ, և են ի միում ջգտանածե թղթեալ պահարանում»²:

Այս վավերագրերը հիշված են նաև «Ջամբու»-ի Օսմանյան սուլթաններից, փաշաներից և շելխու-ուլ-խալամներից ստացված հրովարտականների ու այլ փաստաթղթերի թվարկմանը նվիրված ԻԲ և ԻԳ գլուխներում³: Մական ԻԳ գլխում հիշված է ևս մի «գրքածեղ» վավերագիր, տրված Ահմադ փաշայի կողմից. «Ահմէտ փաշային գրքածե թուղթ, որ նման Ռաշափ փաշային գրքածե թղթոյն (որ ի վերդ յիշեցաւ ի Ա համարն), գրէ զորպէսն գեղջս մերոյ և զամենայն մուլքսն սրբոյ Աթոռոյս մաղաֆ առնելով, ի ՌձձԼ թուին տաճկաց: Գիտ ցուցակաւն և ԺԱ համարով: Յիշեցաւ այս ի ԺԴ գլուխն ի ճառս մաղաֆութեան»⁴:

Սիմեոն Երեանցին այս վերջին վավերագիրը ախքան էլ կարևոր չի համարել, շեշտելով հատկապես, որ այն «նման է Ռաշաֆ փաշայի թղթոյն»:⁵ ԺԴ գլխում այս վավերագիրը առանձին չի հիշված: Ինչպես վերը տեսանք, Ռաշաֆ փաշայի գրքածե վավերագրի բովանդակութունը շարագրելուց հետո ասված է. «Այսպիսի օրինակաւ (իմա՛ էջմիածնի մուլքերին և մուսֆությանը վերաբերող— Հ. Փ.) գիր թ հատ ևս գոն ի յայլոց փաշայից տրեցեալք, զորս գտցես ցուցակօքն»: Այդ 9 վավերագրերը թվարկված են ԻԳ գլխի Բ, Զ, Է, ԺԱ, ԺԲ,

¹ Ջամբու, էջ 133-134:

² Նույն տեղում, էջ 135:

³ Նույն տեղում, էջ 243 § ԼԱ, էջ 244 § ԼԵ, էջ 249 § Ա:

⁴ Նույն տեղում, էջ 250, § ԺԱ:

Ի, ԻԲ և ԻԵ հողվածներում, որոնցից ԺԱ հողվածի տակ հիշվածը Ահմադ փաշայի հիշյալ գրքածև վավերագիրն է:

Այսպիսով ուրեմն «Ջամբու»-ում հիշված է 4 «գրքածև դէֆթէր», «թուղթ» կամ «ֆեհման», որոնցից առաջինը վերագրվում է Ռաջաբ փաշային, երկրորդը՝ Ահմադ փաշային, երրորդը՝ Սուլթան Ահմադ Գ-ին և չորրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ին: Նույն հերթականությամբ այս վավերագրերը գրանցված են Մատենադարանի Արխիվային բաժնի կաթողիկոսական դիվանի 1գ թղթապահակում 293, 316, 320 և 332 համարների տակ: Վավերագրերի վրա առկա են Սիմեոն կաթողիկոսի գրած համարները: Այսպես, թղթ. 1գ № 293 Ռաջաբ փաշայի կնիքը կրող վավերագրի վրա կա «Ա» համարը, դա «Ջամբու»-ի ԻԳ գլխի Ա վավերագիրն է: Թղթ. 1գ № 316 վավերագրի վրա նույն գլխի, մեզ արդեն ծանոթ, «ԺԱ» համարն է, թղթ. 1գ, № 320 վավերագրի վրա կա «ԼԱ» համարը, որը «Ջամբու» ԻԲ գլխի համապատասխան համարն է և վերջապես թղթ. 1գ, № 332 վավերագրի վրա կա նույն գլխի «ԼԷ» համարը:

Պետք է ասել սակայն, որ ինչպես երևում է Սիմեոն Երեանցու նկարագրություններից, նա այնքան էլ ճիշտ պատկերացում չունի խնդրո առարկա վավերագրերի բնույթի մասին: Նրա պատկերացմամբ այդ չորս վավերագրերը բոլորն էլ գրվել են Երեանում, տեղի փաշաների ու շեյխ-ուլ-խալիֆների կարգադրությամբ: Դրանցից երկուսը (№ 320 և 332) իրենց առաջին էջի վերա կրում են Սուլթանի մեծ թուղթան, որը և առիթ է տվել Երեանցուն դժբանց անվանելու «գրքածև ֆարման»: Իրականում սակայն, դրանք բոլորն էլ ոչ այլ ինչ են, եթե ոչ միայն Երեանի երկրի կամ «լիվայլու» հարկային մատյանից հանված քաղվածքներ:

Նման հարկային մատյաններ կային Օսմանյան կայսրության բոլոր մեծ ու փոքր վարչական կենտրոններում: Կային ինչպես վիլայեթների (داتر مفصل ولايات), այնպես նաև լիվաների ու նահիաների դաֆթարներ: Վիլայեթի դաֆթարում գրանցված էին տվյալ վիլայեթի կազմի մեջ մտնող լիվաներին ենթակա բոլոր գյուղերն ու այլ բնակավայրերը, ըստ առանձին նահիաների: Այս ընդարձակ դաֆթարից առանձին գրքերով դուրս էին գրվում լիվաների նահիաների ցուցակները և կազմվում էին առանձին դաֆթարներ: Հարկային ալպիսի դաֆթարները անպայման առաջին էջի վրա կրում էին սուլթանի թուղթան¹:

Մատենադարանի արխիվում պահվող հիշյալ չորս դաֆթարները հիմք են տալիս ասելու, որ վիլայեթների ընդարձակ մատյաններից քաղվածաբար առանձնացվում էին նաև լուրաքանչյուր գյուղի կամ առանձին լիվաների մեջ մտնող այլ հարկատու օբյեկտների հարկացուցակները, որոնք պահվում էին նույն վայրում, կամ տրվում էին տվյալ հարկատու համայնքին, որպեսզի վերջինս ըստ այնմ կատարեր իր հարկային պարտավորությունները պետության նկատմամբ: Այնպես որ ճիշտ չէ Սիմեոն Երեանցին, երբ գրում է.

¹ دفتر مفصل ولايت كورجستان، نور كجه متنى ترجمه تدقيق و تحشيه 86'5

1947. جيكيا، برنجى كتاب-متن، تبليدسى—1947. დოქტორის ვილანის გეგმა, თარგმანი, გამოკვლევა და კომენტარები დოქტორ სერბო ჯიქიამ, წიგნი 1 — ტექსტი, თბილისი, 1947, შაგუხაძის, 1 & \1; Աკიოსისა «Վրաստանի ընդարձակ դաֆթարը»:

«Ի ՌՃԼԷ թուին տաճկաց՝ մինչ երկիրս մեր անկանի ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, և նստի յերևան Ռաճապ կոչեցեալ փաշայն՝ ծանուցանէ նմա Աստուածատուր կաթողիկոսն զմաղաֆութենէ սրբոյ Աթոռոյ: Եւ նոյն փաշայն գրեցուցանէ ի դատարանի իւրում զերկար գրքածև դէֆթէր մի...» կամ «չաւուրս Կարապետ կաթողիկոսին ձեռամբ փաշային Երևանու արզ առնեն Սուլթան-Ահմէտ թագաւորին Օսմանցւոց և գրեն զդէֆտէր մի տաճկերէն...» և կամ «Սուլթան Ահմէտին ֆարման գրքածև ի չաւուրս Կարապետ կաթողիկոսին ի ՌՃԼ թուոջն տաճկաց: Զի գրքածև տէֆթէր մի շինեն՝ գիտութեամբ Երևանու փաշային և Շիս-խալամին տաճկերէն...»¹:

Թշուրիմացութիւնը այստեղ բավական բացահայտ է, որովհետեւ ինչպէս վերը տեսանք այլ դաֆթարները Էջմիածնի կաթողիկոսների նախածնունդով կամ նրանց պահանջով չեն կազմվել, այլ պարզապէս օկուպացիալից անմիջապէս հետո կատարված աշխարհագրի հիման վրա կազմվել են ընդարձակ դաֆթարներ, ապա դրանցից հանվել են այս քաղվածքները Վաղարշապատ գյուղի բնակչության հարկային պարտավորութիւնների և այդ գյուղի սահմաններում գտնվող վանական կալվածների վերաբերյալ և հանձնվել ըստ պատկանելիւնի առ ի գործադրութիւն. Երևանի փաշաների և մանապէս Շելիս-ուլ-խալամների մասնակցութիւնը այս գործում նույնպէս մտացածին է: Նրանք կարող են դեր խաղացած լինել միայն Էջմիածնի մուսֆության իրավունքների հաստատման գործում, բայց ոչ երբեք գլխավոր հարկացուցակներից հանված այս քաղվածքների ձեռք բերման հարցում: Պարզ է ուրեմն, որ ի դեմս խնդրո առարկա 4 դաֆթարների մեք գործ ունենք օսմանյան հարկացուցակների ամենափոքր միավորներից մեկի առանձին տարբերակների հետ: Կարճ ասած, դրանք Վաղարշապատ (Ուչքիլիսա) գյուղի պաշտոնական հարկացուցակներն են, որոնք իրենց ձեռով, շարադրման եղանակով, գրչութեամբ, և արտաքին բոլոր հատկանիշներով հար և նման են թուրքագիտութեամբ վաղուց արդեն ծանոթ Օսմանյան կայսրութեան տարբեր վիլայեթներին, լիվաններին և այլ վարչական ստորաբաժանումների հարկացուցակներին կամ «Գրանցման դաֆթարներին» (دفتر نجر):

Խնդրո առարկա հարկացուցակների բովանդակութեան և նրանց աղբյուրագիտական արժանիքների մասին խոսելուց առաջ մի քանի խոսքով կաշխատենք պարզել նրանց ժամանակին և իրար հետ ունեցած աղերսին վերաբերող որոշ հարցեր:

Ուշագիւր համեմատութիւնից պարզվում է, որ այս հարկացուցակներից ամենահինը «Զամբու»-ում ամենավերջը և ամենից համառոտ հիշված, թղթ. 1ա, վավ. 316 դաֆթարն է, որի թուրքերեն լրիվ բնագիրն ու հայերեն թարգմանութիւնը հրատարակում ենք սույն հոդվածի վերջում: Թղթ. 1գ վավ. 293 դաֆթարը, որի մասին Սիմեոն Երևանցին հիշում է բոլորից առաջ և բոլորից ակելի մանրամասն, այս դաֆթարի պատճենն է հաստատված Ռաջաբ փաշայի ստորագրութեամբ և կնիքով: Պատճենի հարադատութիւնը հաստատում է Երևանի դագի Աբդուլլան հետևյալ մակագրութեամբ.

«Ստորագրված և կնքված իսկականի հետ ճիշտ է: Գրեց փառավորյալ աստծու առաջ տնանկ Աբդուլլան, — ապահով Երևան քաղաքի դագին, և

¹ Զամբու, էջ 133—134 և 243:

թող աստված զթա նրան»։ Կնիքի վրա կարդացվում է. «Աստված արդարադատ է, միակը և հավիտենականը, և նրա ստրուկն է Արղուլյան: 1115 (°)»¹:

Հարկացուցակի առաջին էջի վերին աջ անկյունում Ռաշաբ փաշայի կրնիքն է, հետևյալ մակագրությամբ. «Ինչ որ աստված շնորհել է ինձ ևս վերջստին մատուցում եմ իմ արարչին, նրա ստրուկը՝ Ռաշաբ. 1135»²: Կնիքին կից կատարված է հետևյալ մակագրությունը. «Այս ստորագրված դաֆթարի համաձայն պետք է վարվի... 1137»³: Այս մասին է ահա, որ ինչպես վերը տեսանք, Սիմեոն Երևանցին գրում է. «Գլուխն ինքն կնքէ և զվերջն Շխ-խալամն»։ Ընդօրինակությունը կատարված է պարսկական ոչ գրագետ ձեռագրով, կան բազմաթիվ աղավաղումներ: Այն ինչ մյուս 3 իսկական դաֆթարները, ինչպես ընդունված էր, գրված են նման հարկացուցակներին հատուկ ստալդլամա» գրությամբ:

Որ այս պատճենը հանված է հիշքեթի 1137 թվականին, դա կասկածի ենթակա չէ, որովհետև և՛ Ռաշաբ փաշայի և՛ դազիի կողմից կատարված մակագրությունները այդ թվականն են կրում: Պարզ է ուրեմն, որ բնագիրը պետք է գրված լինի դրանից առաջ կամ լավագույն դեպքում նույն թվականին: Սակայն բնագրի վրա առկա է 1139 թվականը, որը և հիմք է ավել Երևանցուն այն համարելու ավելի ուշ ստացված վավերագիր: Երկու հարկացուցակների բովանդակության տառացի համընկնումը, պատճենի հարազատության մասին վկայող մակագրությունը և մանավանդ 1139 թվականը կրող դաֆթարի վրայի Անադ փաշայի մակագրության պատճենի առկայությունը Ռաշաբ փաշայի կողմից հաստատված դաֆթարի վրա, կասկած առաջացրեց մեր մեջ այդ վավերագրի թվականի նկատմամբ: Եվ իսկպես, ուշադիր դիտելուց հետո նկատեցինք, որ կից հրատարակվող, Անադ փաշայի կողմից հաստատված դաֆթարի թվականը եղծված է: Դաֆթարի վերջում թվականի մասին վկայող վերջագրության արաբերեն سبع (յոթ) բառը վերածված է تسع (ինը)-ի իսկ 1137-ի 7 (7)-ը ջնջված է ու դարձրած 9 (9):

Այս բոլորից հետո պարզ է դառնում արդեն, որ հարկալին ընդարձակ դաֆթարի այս անդրանիկ քաղվածքը հանված է հիշքեթի 1137 (1725) թվականին, թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի նվաճումից անմիջապես հետո: Քաղվածքի վրա մեծ վեզիր և օկուպացիոն զորքերի ընդհանուր հրամանատար Անադ փաշան մակագրել է. «Ինչպես որ խնդրված է, մինչև բարձրագույն կառավարության կողմից սրբազան և շքեղ հրամանագրի ստացվելը այս հաստատուն դաֆթարի համաձայն թող վարվեն և թող խասսի մարդիկ ոտնձգություն չանեն»։ Նույն այս հարկացուցակի վերջին մասից իմանում ենք, որ էջմիածինը Սուլթանից ստացած է եղել հատուկ մուսաֆնամե, որը ներկայացված է եղել Անադ փաշային հաստատության, որից հետո պետք է գրվեր առանձին հրովարտակ կամ «ամր-ի շերիֆ» ինչպես այդ մա-

¹ مطابق لاصله الممضى المختوم، نيقه الفقير الله عز شانه عبد الله القاضي بمدينه روان المحروسه عفى عنه - مهر - الله حسبي وحده و بقى عبده عبد الله. 1115 (?)

² بما قسم نصيب الله لى فوضبت امرى الى خالقى، عبده رجب، سنه 1135

³ اشبو دفتر ممضى موجبه عمل او لنور، فى سنه 1137

սին ասված է Ահմադ փաշայի վերոհիշյալ մակագրության մեջ: Այս մակագրության մեջ Ահմադ փաշան կարգադրում է, որպեսզի մինչև այդ հրովարտակի ստացվելը տեղի իշխանությունները, առաջին հերթին Երևանի նահանգապետ Ռաջաբ փաշան, հիմք ընդունեն այս հարկացուցակը, որի վերջին մասը ամբողջապես վերաբերում է էջմիածնի վանքին տրված արտոնություններին՝ նման հարկացուցակներում առանձին հարկատու օբյեկտների թվարկումից հետո ամենայն մանրամասնությամբ հիշատակվում էին նաև վակֆային այն կալվածքներն ու այլ ստացվածքները, որոնք ազատվում էին հարկերից¹: Պարզ է, ուրեմն, որ այս վավերացված հարկացուցակները ժամանակավոր արտոնագրի կամ մուսաֆնամեի դեր են կատարել: Այնուհետև տեղում անհրաժեշտ է եղել հանել մի պատճեն, որը հաստատել է Ռաջաբ փաշան: Երկու տարի հետո նորից նման փաստաթղթի կարիք է զգացվել և այս անգամ արդեն փորձ են արել ուղղակի թվականը փոխելով լոյս գնալ:

Հաջորդ երկու հարկացուցակները (թղթ. 1գ վավ. 320 և 332) վերաբերում են արդեն հիշրեթի 1140 (1728) և 1143 (1731) թվականներին և բովանդակությամբ իրար կրկնելով, ինչպես ստորև կտեսնենք, հիմնովին տարբերվում են 1137 (1725) թվականի հարկացուցակից: Այս հարկացուցակների վրա սակայն չկան ո՛չ մեծ վեղիրների և ո՛չ էլ տեղական փաշաների կնիքներ կամ մակագրություններ, այլ դրանք սոսկ քաղվածքներ են կատարված արքունի դիվանատան պաշտոնյաների ձեռքով և կնքված վերջիններիս կնիքներով: Հարկացուցակները, սակայն, ինչպես վերը առիթ ունեցանք նշելու, բոլոր պաշտոնական հարկացուցակների նման, իրենց առաջին էջի վրա կրում են՝ առաջինը Սուլթան Ահմադ Գ-ի, իսկ երկրորդը՝ Սուլթան Մահմուդ Ա-ի թուղրանները:

* * *

Կասկածից դուրս է, որ այս չորս հարկացուցակներն էլ էջմիածնին հետաքրքրել են միայն իրենց վերջին մասով, որտեղ մանրամասն նշված են վանքապատկան վակֆային կալվածքները, վարելահողերը, այգիները, ջրաղացները և այլ ստացվածքներ, շեշտելով որ դրանք հարկման ենթակա չեն, և որ ընդհանրապես էջմիածնի միանվագ որոշ գումար վճարելով, որպես բերաթի փեշքաշ, ամբողջապես ազատվում էր հարկերից: Սիմեոն կաթողիկոսին էլ, ինչպես տեսանք, այս հարկացուցակները միայն այս կողմից են հետաքրքրել: Կից հրատարակվող հարկացուցակի համապատասխան հատվածի համեմատությունը նույն հարկացուցակի մասին «Ջամբու»-ում արված համառոտ նկարագրության հետ, ցույց է տալիս, որ այդ նկարագրությունները հիմնականում ճիշտ են: Կան միայն երկրորդական նշանակություն ունեցող օբյեկտների մանրամասնության կամ այգիների ու վարելահողերի թվի որոշ ազատագրումներ, որոնք հարկացուցակներում հաճախ իրար համապատասխան չեն: Արքունի գանձարանին միանվագ վճարվող տարեկան գումարների մասին Սիմեոն Երևանցին բավական մանրամասն է խոսում, այդ հարցում խիստ մեղադրելով Պոլսի պատրիարքներին²:

Անշուշտ հարկացուցակները իրենց այս տվյալներով նույնպես հետաքրքիր են և կարևոր են օսմանյան Թուրքիայի կողմից հայոց կեղեղեցու և հայ

¹ Տե՛ս Վրաստանի ընդարձակ դաֆթարը, էջ 21, 43, 50, 53, 54 և այլն:

² Ջամբու, էջ 235—238:

հոգևորականության նկատմամբ վարվող քաղաքականության ուսումնասիրության համար, սակայն նրանք այս տեսակետից եզակի բնույթ չունեն։ Էջմիածնին տրված հարկային արտոնությունների և հայ հոգևորականության վալեյած որոշ առանձնաշնորհությունների մասին ավելի մանրամասն և առատ նյութ են պարունակում սուլթանական հրովարտակները, որոնք անհամեմատ ավելի շատ են և բովանդակությամբ ավելի հարուստ։

Հարկացուցակների սկզբի մասը, սակայն, միանգամայն նոր և հետաքրքիր աղբյուր է, որին, ինչպես տեսանք, բոլորովին չի անդրադարձել Միմեն Երևանցին։ 1725—1736 թթ. թուրքական օկուպացիայի ժամանակաշրջանից առաջմ մեզ հայտնի են միայն այս չորս հարկացուցակները։ Այս տեսակետից էլ անհա դրանք եզակի նշանակություն ունեն և որպես այդպիսիք մեզ հնարավորություն են տալիս որոշ պատկերացում կազմելու նշված ժամանակաշրջանի հարկային սիստեմի, բնակչությանից գանձվող հարկերի քանակի, հարկային նորմերի և չափի մասին։

Բնակչության և հարկերի գրանցման ձևը համարյա չի տարբերվում «Վրաստանի ընդարձակ դաֆթար»-ի գրանցման ձևից։ Այստեղ նույնպես նախ գրանցված են բոլոր ռալայթները, ըստ առանձին երդերի, անունով և հայրանունով, ապա թվարկված են գլխահարկն ու բոլոր դրամական և բնամթերային հարկերը. վերջիններս և՛ քաշով, և՛ դրամական համարժեքով։ Այնուհետև տրված է այդ բոլորի ընդհանուր գումարը՝ աղչեով հաշված, որից հետո արդեն թվարկված են գյուղի սահմաններում կամ այլուր գտնվող վանքապատկան կալվածները և շարադրված են վանքին տրված մուսֆուլթյան պայմանները։


Այս շրջանի «կանուննամեներից» Օ. Լ. Բարքանը իր ծավալուն աշխատության մեջ հրատարակել է միայն Գանձակի վիլայեթի «կանուննամենն», որը ունի իր առանձնահատկությունները և չի կարող հիմք ծառայել համեմատության¹, իսկ ինչպես ասվեց Անդրկովկասում այս թվականներին կազմված այլ հարկացուցակներ կամ նման քաղվածքներ մեզ հայտնի չեն։ Մենք ավելորդ ենք համարում մանրամասն համեմատել կից հրատարակվող և մյուս հարկացուցակների հարկային նորմերը «Վրաստանի ընդարձակ դաֆթարի» կամ Օ. Լ. Բարքանի նշված աշխատության կանուննամենների մեջ հիշված նորմերի հետ, որովհետև դրանք հիմնականում վերաբերում են ԺԶ—ԺԷ դարերին։ Թեև պետք է ասել, որ առանձին հարկային նորմեր որոշ վիլայեթների հետ համընկնում են։ Մեր նպատակից դուրս է նաև այստեղ մանրամասն վերլուծության ենթարկել նշված հարկերն ընդհանրապես վերջրած։ Այսպիսի ընդարձակ վերլուծության համար պակասում են զուգահեռ աղբյուրներ։ Սակայն մեր ձեռքի տակ եղած այս չորս հարկացուցակներից վերոհիշյալ երկու հարկացուցակների ուշադիր համեմատությունը թույլ է տալիս որոշ գաղափար կազմելու օսմանցիների Անդրկովկասում վարած հարկային քաղաքականության մասին ընդհանրապես։

Ասացինք արդեն, որ այս չորս հարկացուցակների հիմքում ընկած են հիշրեթի 1137 (1725) և 1140 (1728) թթ. կատարված ցուցակագրությունները։ Հետևաբար բնակչության հաշվառման և հարկերի գանձման գործում տեղի ունեցած փոփոխությունները ուսումնասիրելու համար բավական է համեմա-

¹ Օ. Լ. Barkan, XV ve XVI inci asırlarda Osmanlı İmparatorlugunda ziraat ekonomisinin hukuki ve mali esasları. I cild «Kanunlar» İstanbul, 1945, էջ 195—197:

Բամբակ — 580 ման, գինը՝	43500	٤٣٥٠٠	قیمت ٥٨٠ من
Բանջարանոցների տասանորդը՝ 1000 ¹		١٠٠٠	عشر بستان
Ալգիների	»	10000	عشر باغات
Մրգի	»	500	عشر میوه
Ոչխարների հարկը	3000	٣٠٠٠	عادات اغنام
Անասունների հարկը (ռասմ-ի աղբը)	300	٣٠٠	رسم اغیل
Հիշյալ գյուղի երկու գործող ներկատները	2400	٦٤٠٠	بویه خانہ در قریة مزبورہ. ٢ باب. رسم
Գյուղի բնակիչների 11 գործող ջրաղացները, կես տարին	660	٦٦٠	اسیاب در ید اهالی قریہ. ١١ باب. رسم. نیم سال
Եկեղեցու 2 ձիթհանքները			بزیر خانہ کلیسا ایچمیا زین. ٢ باب
Եկեղեցու մեկ ջրաղացը			اسیاب کلیسا ایچمیا زین. باب
Եկեղեցու մեկ զինքը			ذک کلیسا ایچمیا زین. ١ باب
Առվույտի տասանորդը	120	١٢٠	عشر یونجه
Խոտի գինը	174	١٧٤	بهاک گیاه
Կույս աղջիկների և ալբիների հարսնության հարկը	90	٩٠	رسم عروس بکر و ثیبه
Հողի թափուի տուրքը	100	١٠٠	رسم طابوی زمین
Ջառչիների (մունետիկների) տուրքը	120	١٢٠	رسم جارچیان
Ահքալուսանքի հասույթը (մահ-սուլ-ի մուժղեգանե)	211	٢١١	محصول مزده کانه
Հանցանքի և ոճիրի, բաղհավալի աղաթի, ընդհանուրի և խասսի բեյթ-ուլ-մալի, բացակալող և կորած ապրանքների, դաշտապահության (դաշթիբանի), փախած ծառաների և աղախիներին գնի, անասունների՝ ձիան և կովի, ծխի, վկալության(*) և ալլնի համար	12321	١٢٣٢١	و بابت جرم و جنایت و بادھوا و عادت و بیث المال عامه و خاصه و مال غایب و مال مفقود عادت دشتبانی و بهاک قاچغون قول و جاریه و بهالق اغنام و اسب و کاو و رسم دوخان و ضمانه(?) و غیره
	211322	٢١١٣٢٢	یکون
	Գումարը՝ 211322		

¹ Բնագրում սխալմամբ 2000 է գրված, այդ գեպքում հարկերի ընդհանուր գումարը հիշտ չի ստացվում: 1000-ով դումարը համապատասխանում է: Այդպես է 1731 թ. հարկացուցակում:



Վաղարշապատ գյուղի 1728 թ. հարկացուցակի թուրքերեն բնագրի բնակչությունից գանձվող հարկերին վերաբերող հատվածը:

Ինչպես տեսնում ենք, գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարը 1725—1728 թթ. ընթացքում 91515 աղչեից բարձրացել է 211322 աղչեի, այսինքն երեք տարվա ընթացքում ավելացել 2,3 անգամ: Երկու հարկացուցակների ուշադիր համեմատությունից պարզվում է, որ առաջին աշխարհագրի ժամանակ գյուղից չեն պահանջել 9 անուն հարկեր, որոնց ընդհանուր դրամական համարժեքը հավասար է 15165 աղչեի: Այդ հարկերն են.

1. Ռասմ-ի դյունում	1200 աղչե
2. Ոսպ—100 քիլա	6000 »
3. Սիսեռ—59 քիլա	6540 »
4. Մրգի տասանորդը	500 »
5. Անասունների հարկը	300 »
6. Առվույտի տասանորդը	120 »
7. Սոտի գինը	174 »
8. Ջառչիների տուրքը	120 »
9. Աչքալուսանքի հասույթը	211 »

Գումարը՝ 15165 աղչե

Իսկ առաջին աշխարհագրի ժամանակ հաշվի առնված հարկերի աճը երկրորդ աշխարհագրի ժամանակ հետևյալ պատկերն է ներկայացնում.

Հարկի անունը	1725 թ.	1728 թ.
1. Իսիանջ	9325	13086
2. Յորեն	48300	60000
3. Գարի	11500	36000
4. Կորեկ	5750	4000
5. Կտավհատ	750	10000
6. Բամբակ	2000	43500
7. Այգիների տասնորդը	7455	10000
8. Բանջարանոցների տասնորդը	1650	1000
9. Ոչխարների հարկը	1035	3000
10. Ներկատներ	600	2400
11. Ջրաղացների հարկը	330	660
12. Հարսնութլան հարկը	60	90
13. Հողի թափու, դաշթբանի, բաղհավա, հանցանք ու ոճիր, փախած ծառաների, կորած ապրանքի ու անասունների համար գանձվող և այլ տուրքեր	2760	12421
Գումարը՝	91515	196157
Տարբերությունը՝	104642	

Այսպիսով, 1725 թ. գրանցված հարկերը 3 տարի հետո ավելացել են 104642 աղչեով, սրա վրա պետք է գումարել 9 անուն նոր հարկերի ընդհանուր գումարը՝ 15165 աղչե, ստացվում է 119807 աղչե, ալն տարբերությունը, որ գոյություն ունի առաջին և երկրորդ հարկացուցակների ընդհանուր գումարի միջև:

Այստեղ պետք է ասել փաստը, որ հավելյալ նոր հարկերի գումարը անհամեմատ ավելի քիչ է, քան ինչ հարկերի ուռճացման շնորհիվ գոյացած վերադիրը:

Հարկերի ավելացումը կարող էր առաջանալ նաև որոշ օբյեկտիվ պատճառներից, ինչպես օրինակ բնակչություն աճ, ոռոգման ցանցի ընդարձակում, նոր հողերի լուրացում և այլն: Սակայն ինչ էլ որ լիներ կասկածից դուրս է, որ այդ երեք տարիների ընթացքում, երբ երկրում դեռ շարունակվում էին ներքին կռիվներն ու ամենուրեք պայմանները անապահով էին, տնտեսական կլանքը այդպիսի զարգացում չէր կարող ապրել: Բավական է թեկուզ համառոտակի քննություն առնել կանխիկ դրամով գանձվող հարկերից մեկի՝ իսփանջի ընդհանուր գումարում և գանձման սկզբունքներում տեղի ունեցած փոփոխությունները, համոզվելու համար, որ հարկերի այս աճուելի աճը հետեվանք է միայն օկուպացիոն իշխանությունների կողմից կիրառվող նոր հարկային քաղաքականության:

Իստիանջի ընդհանուր նորման սկսած դեռևս ժՁ դարից ընդհանրապես եղել է լուրաքանչյուր չափահաս տղամարդից 25 աղչել: Այլպես է կ' «Արաստանի ընդարձակ դաֆթարում» կ' Օ. Լ. Բարքանի հրատարակած «Վանունանամեներում»: Իստիանջի նույն սակն է պահպանված նաև Վաղարշապատի հարկացուցակներում: Սակայն, եթե 1725 թ. հարկացուցակում բավարարվել են նըշելով միայն ամուսնացած տղամարդկանց, ապա 1728 թվականին արդեն այս վերջիններից բացի, որոնց թիվը 373-ից բարձրացել է 390-ի, հիշատակված են նաև 126 ամուրիներ և 6 այրիներ: Ամուսնացածներից և ամուրիներից գանձվել է 25-ական, իսկ այրիներից 6-ական աղչել: Ի դեպ նշենք նաև, որ հարկատու առյաթների այս երեք կատեգորիաների գումարը լինում է $390 + 126 + 6 = 522$, իսկ առյաթների անվանական ցուցակում նրանց ընդհանուր թիվը 511 է: Հարկերի ժամանակ անշուշտ հիմք էր ընդունվում առաջինը. եթե գումարը մտել էր արդեն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ, ապա գյուղական համայնքը պարտավոր էր անթերի հատուցել այն: Այսպիսով ուրեմն հարկատուների թիվը խարդախ կերպով ավելացված է ևս 11 հոգով, իսկ հարկը 275 աղչել գումարով:

Թեև ևս կարելի է հավատալ, որ 3 տարվա ընթացքում գյուղի հարկատու առյաթների թիվը կարող էր 373-ից բարձրացած լինել 390-ի: Թուրքական արշավանքների ժամանակ կարող էին գյուղից հեռացած ու վերադարձած մարդիկ լինել: Բայց որ այդ նույն ժամանակամիջոցում հանկարծ կարող էին գյուղում հայտնվել 126 ամուրիներ, որոնք 3 տարի առաջ չկային, դա անշուշտ անհավատալի երևույթ է: Պետք է կարծել, որ նույնքան կամ մի քիչ ավելի փոքր թվով ամուրիներ, ինչպես նաև այլի տղամարդիկ գյուղում եղել են նաև 1725 թվականին, սակայն այն ժամանակ, երբ դեռ երկրի նվաճումից անցել էր ընդամենը մի քանի ամիս, և դեռ նվաճողները իրենց այնքան էլ ամուր չէին զգում, ավելի մեղմ մոտեցում են ունեցել և մանրամասնութլունների մեջ չմտնելով զբանցել են միայն ամուսնացած տղամարդկանց: Իսկ եթե ընդունենու լինենք, որ առաջին ցուցակի 373 հոգու մեջ մշտնում են նաև ամուրիներն ու այրիները, ապա դա նշանակում է, որ 3 տարվա մեջ գյուղի բնակիչների կամ ավելի ճիշտ հարկատու առյաթների թիվը ավելացել է 40 տոկոսով, որը բավական անհավանական է թվում:

Սակայն եթե իրոք մի բոլոր ընդունենք, որ ինչ-որ արտակարգ պայմանների շնորհիվ առյաթների թվի նման հավելում է տեղի ունեցել, այդ դեպքում էլ նույնիսկ չի պատճառաբանվում հարկերի ընդհանուր գումարի այլպիսի մեծացումը, որն ինչպես տեսանք հավասար է 230 տոկոսի:

Եվ իրոք, բացի իստիանջից, հարկերի ուժեղացման նույն տեղեկները նկատվում է նաև գյուղի բնակչութլունից գանձվող մյուս հարկերի ու տուրքերի հաշվառման մեջ: Այսպես, թեև ցորենի քանակը 2300 քիլայից իջել է 2000 քիլայի, սակայն քանի որ լուրաքանչյուր քիլա ցորենի գինը 21 աղչեից բարձրացել է 30 աղչեի, ցորենի հարկի ընդհանուր դրամական համարժեքը 48300 աղչեից բարձրացել է 60000 աղչեի: Գարու հարկի կ' քանակն է ավելացել, կ', գնի կրկնակի բարձրացման շնորհիվ, ընդհանուր գումարը 11500-ից բարձրացել է 36000 աղչեի: Թեև կորեկի գինը ևս կրկնապատկվելով 10 աղչեից բարձրացել է 20 աղչեի, սակայն գյուղից գանձվող կորեկի չափը 575 քիլայից իջեցվել է 200 քիլայի, որի հետևանքով էլ կորեկի հարկի դրամական համար-

ժեքը 5750 աղչեից իջել է 4000 աղչեի: Նկատվում է կտավհատի գնի շատ մեծ վերելք՝ 15 աղչեն գարձել է 100 աղչե: Այս ամենից շատ թանկացած ապրանքի գլուղից պահանջվող հարկի քանակը կրկնապատկված է. նախկին 50 քիլալի փոխարեն պահանջվում է 100 քիլա, որի հետևանքով հարկն էլ 750 աղչեից բարձրացել է 10000 աղչեի: Բամբակի գինը ևս 40-ից բարձրացել է 75 աղչեի, իսկ հարկի քանակը 50 մանից բարձրացել է 580 մանի, հետևաբար հարկի գրամական համարժեքն էլ բազմապատկվելով շուրջ 22 անգամ 2000 աղչեից հասել է 43500 աղչեի: Այնուհետև 2545 աղչեով ավելացել է ալգիների տասանորդը, փոխարենը պակասել է բանջարանոցների տասանորդը: Ոչխարի հարկը ավելացել է մոտ 3 անգամ, 1135 աղչեից բարձրանալով 3000 աղչեի: Ներկատաներից գանձվող գումարը բազմապատկվել է 4 անգամ, 600 աղչեից բարձրանալով մինչև 2400 աղչե: Զրադացների հարկը կրկնապատկվելով՝ 330 աղչեից բարձրացված է 660 աղչեի: Հարսնության հարկի վրա չնչին հավելում է եղել (60—90), ի հաշիվ հավանաբար այլրի կանանց ամուսնության, որովհետև ըստ «Կանուհնամեի» կույս աղջիկներից գանձվում էր 60, իսկ այրիներից՝ 30 աղչե, գումարը լինում է 90 աղչե: Խիստ մեծացել է նաև զանազան անուսներով հոգուտ պաշտոնյաների գանձվող հարկերի ընդհանուր գումարը, 2760 աղչեից հասնելով մինչև 12421 աղչեի: Այսպիսով, բացի կորեկից և բանջարանոցների հարկից, որոնք շատ չնչին չափով պակասել են (2400 աղչե), մյուս բոլոր հարկերը մեծ կամ փոքր չափով ավելացել են:

Հարկացուցակների տվյալներով պարզվում է, որ 3 տարվա ընթացքում տեղի է ունեցել մթերքների և գյուղատնտեսական այլ ապրանքների գների զգալի բարձրացում, որը հաշվի է առնվել նոր աշխարհագրի ժամանակ:

Գների աճը հետևյալ պատկերն է ներկայացնում.

Ապրանքի անունը	Կշռային միավորի գինը 1725 թ.	Կշռային միավորի գինը 1728 թ.
1. Ցորեն	21 աղչե	30 աղչե
2. Գարի	10 »	20 »
3. Կորեկ	10 »	20 »
4. Կտավհատ	15 »	100 »
5. Բամբակ	40 »	75 »

Պետք է նկատի ունենալ, որ նման հարկալին ցուցակագրուհների ժամանակ միշտ էլ հաշվի են առնվել ընթացիկ շուկայական գները: Այս տեսակետից էլ նշված գները նույն թվականի համար իրական կարող են համարվել, իսկ նախորդ կամ հաջորդ տարիների համար արդեն իրական չեն:

Եթե չլինեին վերոհիշյալ 9 անուն նոր հարկերը, որոնք չեն հիշված 1725 թ. հարկացուցակում, և եթե ուսյաթների հաշվառման ու մյուս, շուկայի հետ չառնչվող, հարկերի գումարները ևս մի քանի անգամ բարձրացված չլինեին, թերևս կարելի էր ենթադրել, որ այս նոր աշխարհագրի հիմնական նըպատակը եղել է հարկերի դրամական համարժեքների մերձեցումը շուկայական գներին: Սակայն 1728 թ. հարկերի հաշվառման խիստ ծավալուն և ամեն

ինչ ընդգրկող բնույթը այնքան ակնբախ է, որ գնեին այստեղ երկրորդական նշանակություն են ստանում:

Վերը շարադրվածից պետք է եզրակացնել, որ թուրքական օկուպացիոն իշխանությունները Անդրկովկասի որոշ մասին տեր դառնալուց հետո, անմիջապես այնտեղ սկսել են կիրառել թուրքիայում տիրող հարկային սխեման: Նախապես կազմել են «Ընդարձակ հարկային ցուցակներ», ապա երեք տարի անց կատարել են նոր աշխարհագիր, այս անգամ արդեն ավելի քան սաստկացնելով հարկապահանջությունը, բազմապատկելով զանձվող հարկերը և ավելացնելով նոր հարկեր: Կարելի է հաստատապես ասել, որ 1728 թ. հարկացուցակը կիրառության մեջ է եղել մինչև 1731 թ., քանի որ այդ թվականին հանված, մեզ արդեն ծանոթ, քաղվածքը նախորդ հարկացուցակից ոչնչով չի տարբերվում: Մեզ հայտնի չէ, թե այնուհետև թուրքերը հասցրել են նոր աշխարհագիր կատարել, թե ոչ: Ամենայն հավանականությամբ, նոր աշխարհագիր չի եղել: Թվում է թե այդ դեպքում էջմիածնի արխիվում պետք է լիներ նաև այդ նոր աշխարհագրի հիման վրա կազմված հարկացուցակի Վաղարշապատ գյուղին վերաբերող քաղվածքը: Այդ մասին ինչպես տեսանք «Ջամրու»-ում ևս ոչ մի հիշատակություն չկա:

Այս տեսակետից էլ ավելի է բարձրանում հատկապես վերջին հարկացուցակի արժեքը, որպես 1728—1736 թթ. թուրքական տիրապետության շրջանում բնակչությանից զանձվող հարկերի ընդհանուր նորմերի մասին արժեքավոր և համարյա եզակի տվյալներ պարունակող փաստաթղթի, որը մեծ չափով կարող է նպաստել այդ տարիներին Անդրկովկասի ներքին կյանքի և բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի պատմության ուսումնասիրությանը:

Ներկա հոդվածին հատկացված «Բանբեր»-ի սուղ էջերում հնարավոր չէ կանգ առնել հարկացուցակների բովանդակությանը վերաբերող այլ հարցերի վրա և վեր հանել նրանց աղբյուրագիտական բոլոր արժանիքները: Ստորև հրատարակելով 1725 թ. հարկացուցակի թուրքերեն բնագիրն ու նրա հայերեն թարգմանությունը, կարծում ենք որ այն, վերը մեջ բերված 1728 թ. հարկացուցակի հիմնական հատվածի հետ միասին, կարող է օգտակար հանդիսանալ և որպես նոր սկզբնաղբյուր, հիմք ծառայել ավելի ընդարձակ հետազոտությունների:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԳՅՈՒՂԻ 1725 Թ. ՀԱՐԿԱՅՈՒՑԱԿԸ

«Մատենադարան», Կարողիկոսական դիվան, թղթապանակ 1գ. վավ. 316, 4 բերք (49×18 սմ) բնագիր, գրված բուրբական «սայաղամա» գրությամբ. 1ա, 4ա և 4բ էջեր մաքուր.

Ահմադ փաշայի կնիքը հետևյալ մակագրությամբ.

Կենտրոնում. Աստված արդարադատ է, ապավինում եմ աստծուն: Չկա ուժ և զորություն բացի աստծուց և նրա ստրուկն է Ահմադը, 1131 (1718—1719),

Շուրջը. ՌՎ տեր, դու հասիր այս անտերունչիս աղբյուրին. Ողորմածությունն ու բարեհոգությունը բավական է այս անտերունչին.

Ամեն ոք ապավինում է որևէ մեկի սրբությունը, Անտերունչս միայն քո սրբությանն եմ ապավինում:

Ինչպես որ խնդրված է, մինչև քարձրագունչն կառավարութիւնն կողմից սրբազան և շքեղ հրամանագրի ստացվելը, այս հաստատուն դաֆթրաբի համաձայն թող վարվեն և թող խասսի մարդիկ ոտնձգութլուն չանեն:

Ահմադ փաշայի ստորագրութլունը:

ԵՐԵՎԱՆԻ ԼԻՎԱՅՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՐԲԵՒՆԱՆՆԱՆԻ ՆԱՀԻԱ

Ուչքիլիսա գլուղը, որ ենթակա է հիշլալ [նահիալին]

Պողոսի թաղը

- | | |
|--------------------------------|-------------------------------|
| 1. Պողոս՝ որդի Խաչատուրի | 37. Ալվազ՝ որդի Սարգսի |
| 2. Աղամալ՝ որդի Մինասի | 38. Խաչում՝ որդի Մովսեսի |
| 3. Մալխաս՝ որդի Մինասի | 39. Ուլուբեկ՝ որդի Պետրոսի |
| 4. Հովնաթան՝ որդի Խաչանի | 40. Ալազ՝ որդի Ուլուբեկի |
| 5. Մնացական՝ որդի Գյոզալի | 41. Հովհաննես՝ որդի Խաչատուրի |
| 6. Կարապետ՝ որդի Միրզաջանի | 42. Խաչատուր՝ որդի Հովհաննեսի |
| 7. Ավետիք՝ որդի Թեոդիկի | 43. Արսլան՝ որդի Թորոսի |
| 8. Ջանի՝ որդի Մնացականի | 44. Մելիք՝ որդի Թորոսի |
| 9. Ալվազ՝ որդի Հակոբի | 45. Վարդան(°)՝ որդի Կարապետի |
| 10. Մալխաս՝ որդի Հակոբի | 46. Կիրակոս Դաղլու |
| 11. Մուրազ՝ որդի Գլյումիշի | 47. Կիրակոս՝ որդի Գրիգորի |
| 12. Նահապետ՝ որդի Հովհաննեսի | 48. Ստեփան՝ որդի Գրիգորի |
| 13. Մակնոս(°)՝ որդի Սարգսի | 49. Քեան՝ որդի Գրիգորի |
| 14. Վարդգես(°)՝ որդի Սարգսի | 50. Ներսես՝ որդի Սարուխանի |
| 15. Մկրտում՝ որդի Ատիկի | 51. Սահակ որդի Սարուխանի |
| 16. Հովհաննես՝ որդի Քեշիշի | 52. Իսրայել՝ որդի Սահակի |
| 17. Հովհաննես՝ որդի Մկրտչի | 53. Դանիել՝ որդի Մովսեսի |
| 18. Մկրտում՝ որդի Խաչումի | 54. Վիրաբ՝ որդի Մարգարեի |
| 19. Գյոզալ՝ որդի Ալվազի | 55. Քեան, որդի Վիրաբի |
| 20. Եղիազար՝ որդի Ավետիսի | 56. Սողոմոն՝ որդի Խաչանի |
| 21. Գրիգոր՝ որդի Ավետիսի | 57. Գյոզալ՝ որդի Հակոբի |
| 22. Աղեբեկ՝ որդի Գրիգորի | 58. Ենգիբար՝ որդի Ալմիբեկի |
| 23. Հարութլուն՝ որդի Ստեփանի | 59. Կարապետ՝ որդի Ալմիբեկի |
| 24. Արամալխ(°) որդի Ստեփանի | 60. Թագվոր՝ որդի Հարութլունի |
| 25. Ենգիբար՝ որդի Դոստիկի(°) | 61. Խոջիկ՝ որդի Թուշիկի(°) |
| 26. Քուվիկ(°)՝ որդի Դոստիկի(°) | 62. Աղամալ՝ որդի Խոջիկի |
| 27. Հովսեփ՝ որդի Պողոսի | 63. Ներսես՝ որդի Ոսկանի |
| 28. Պողոս՝ որդի Արթիսի | 64. Եղիա՝ որդի Նախչևանցու |
| 29. Վարդգես՝ որդի Արթիսի | 65. Մարտիրոս՝ որդի Կիրակոսի |
| 30. Ենգիբար՝ որդի Վարդանի | 66. Հարութլուն՝ որդի Մկրտչի |
| 31. Մաթեոս՝ որդի Վարդանի | 67. Գալուստ՝ որդի Կիրակոսի |
| 32. Ալվազ՝ որդի Ջանաղայի | 68. Հովհաննես՝ որդի Մկրտչի |
| 33. Ջալալ՝ որդի Ալվազի | 69. Ստեփան՝ որդի Փլիպպոսի |
| 34. Դանիել՝ որդի Ալվազի | 70. Մարտիրոս՝ որդի Միրզայի |
| 35. Մաղաքիա՝ որդի Ջանաղայի | 71. Աղամալ՝ որդի Պետրոսի |
| 36. Սարգիս՝ որդի Գլուրջիի | 72. Պետրոս՝ որդի Գրիգորի |

- | | |
|-------------------------------|-----------------------------------|
| 73. Կոստանդ՝ որդի Աղաբեկի | 86. Սարուխան՝ որդի Բայինդուրի |
| 74. Թաղեոս՝ որդի Տեկլիտոսի | 87. Գրիգոր՝ որդի Սարուխանի |
| 75. Խաչում՝ որդի Սարուխանի | 88. Հակոբ՝ որդի Պարոնի |
| 76. Նանում՝ որդի Վարդանի | 89. Ավետիս՝ որդի Սարգսի |
| 77. Գրիգոր՝ որդի Սարգսի | 90. Հովհաննես՝ որդի Անանիայի |
| 78. Մարտիրոս՝ որդի Սարգսի | 91. Եղիազար՝ որդի Սարգսի |
| 79. Գրիգոր՝ որդի Մարգարեի | 92. Հարություն՝ որդի Աստվածատուրի |
| 80. Մկրտում՝ որդի Պողոսի | 93. Ալեքսան Նախչևանցի |
| 81. Թաղիկ՝ որդի Մելիք-Լավանդի | 94. Գրիգոր՝ որդի Ալեքսանի |
| 82. Սահակ՝ որդի Նանումի | 95. Թորոս՝ որդի Հակոբի |
| 83. Մկրտում՝ որդի Նանումի | 96. [Ա]բգար՝ որդի Քեանի |
| 84. Ստեփան՝ որդի Առաքելի | 97. Հովհաննես՝ որդի Ռուստամի |
| 85. Կարապետ՝ որդի Հարությունի | |

Գ ա լ ու ս տ ի թ ա ղ ը

- | | |
|------------------------------|-------------------------------|
| 1. Գալուստ՝ որդի Հակոբի | 31. Փիլիպոս՝ որդի Պետրոսի |
| 2. Մկրտիչ՝ որդի Թորոսի | 32. Եղիազար՝ որդի Կիրակոսի |
| 3. Թաղիկ՝ որդի Թորոսի | 33. Ավագ՝ որդի Գրիգորի |
| 4. Սարգիս՝ որդի Լավասափի | 34. Պողոս՝ որդի Մուրադի |
| 5. Եղիա՝ որդի Լավասափի | 35. Մնացական՝ որդի Ավետիքի |
| 6. Դավիթ՝ որդի Վարդանի | 36. Խաչում՝ որդի Ավետիքի |
| 7. Մուրադ՝ որդի Նահապետի | 37. Ասատուր՝ որդի Սարգսի |
| 8. Անտոն՝ որդի Թաղեոսի | 38. Մկրտում՝ որդի Առաքելի |
| 9. Նանում՝ որդի Կիրակոսի | 39. Հովհաննես՝ որդի Ուլուբեկի |
| 10. Հովսեփ՝ որդի Նանումի | 40. Մնացական՝ որդի Թաղեոսի |
| 11. Հովհաննես՝ որդի Կիրակոսի | 41. Հակոբ՝ որդի Մնացականի |
| 12. Մարկոս՝ որդի Գրիգորի | 42. Թաղեոս՝ որդի Մնացականի |
| 13. Կարապետ՝ որդի Մուրադի | 43. Փիլիպոս՝ որդի Մուրադի |
| 14. Իսրայել՝ որդի Մուրադի | 44. Ներսես՝ որդի Փիլիպոսի |
| 15. Սարգիս՝ որդի Մեսրոպի | 45. Մանուկ՝ որդի Մովսեսի |
| 16. Փիլիպոս՝ որդի Մեսրոպի | 46. Հարություն՝ որդի Սարգսի |
| 17. Մկրտիչ՝ որդի Սարգսի | 47. Հարութ՝ որդի Վարդանի |
| 18. Առաքել՝ որդի Սարգսի | 48. Հովակիմ՝ որդի Դանիելի |
| 19. Բուդաղ՝ որդի Բաբայի | 49. Հալրապետ՝ որդի Փիլիպոսի |
| 20. Պետրոս՝ որդի Բուդաղի | 50. Բեկնազար՝ որդի Դավթի |
| 21. Կիրակոս՝ որդի Բուդաղի | 51. Աբգար՝ որդի Դավթի |
| 22. որդի Մուրադի | 52. Աղամալ՝ որդի Հակոբի |
| 23. Գրիգոր՝ որդի | 53. Ավետիք Դաղլու |
| 24. Միրզա՝ որդի Խաչատուրի | 54. Գալուստ՝ որդի Փիլիպոսի |
| 25. Գրիգոր՝ որդի Հակոբի | 55. Իսաչան՝ որդի Նաղաբի |
| 26. Հակոբ՝ որդի Գրիգորի | 56. Հովհաննես՝ որդի Նաղաբի |
| 27. Կոստանդ՝ որդի Մուքելի | 57. Կարապետ՝ որդի Խաչիկի |
| 28. Եղիազար՝ որդի Մուքելի | 58. Վարդան՝ որդի Ավետիսի |
| 29. Հովասափ՝ որդի Քեանի | 59. Գյուզալ՝ որդի Ովանի |
| 30. Շիրվան՝ որդի Քեանի | 60. Սուլթան՝ որդի Գյուզալի |

- | | |
|-----------------------------|---------------------------------|
| 61. Գրիգոր՝ որդի Զաքարեի | 78. Պապ՝ որդի Իսքանդարի |
| 62. Սարգիս՝ որդի Թադեոսի | 79. Հակոբ՝ որդի Սարուամի |
| 63. Ասատուր՝ որդի Հակոբի | 80. Ավետուհի՝ որդի Աստվածատուրի |
| 64. Խաչում՝ որդի Ոսկանի | 81. Գալուստ՝ որդի Աստվածատուրի |
| 65. Բարխուդար՝ որդի Ոսկանի | 82. Ամիր՝ որդի Մովսեսի |
| 66. Քեթևան՝ որդի Սարգսի | 83. Առաքել՝ որդի Բուդաղի |
| 67. Ստեփան՝ որդի Գալուստի | 84. Ավետիք՝ որդի Խաչատուրի |
| 68. Սողոմոն՝ որդի Ստեփանի | 85. Պետրոս՝ որդի Գրիգորի |
| 69. Մարտիրոս՝ որդի Գալուստի | 86. Մկրտում՝ որդի Աղաբեկի |
| 70. Բաղդասար Դաղլու | 87. Սարգիս՝ որդի Գրիգորի |
| 71. Գալուստ՝ որդի Ավետիսի | 88. Դիլանչի Դաղլու |
| 72. Հովսեփ՝ որդի Մկրտչի | 89. Ամիր՝ որդի Հակոբի |
| 73. Գրիգոր՝ որդի Օհանի | 90. Մարգար՝ որդի Խաչիկի |
| 74. Եղիազար՝ որդի Բաբաջանի | 91. Սարուխան՝ որդի Ավագի |
| 75. Մարտիրոս՝ որդի Մուրադի | 92. Ղուկաս՝ որդի Աբրահամի |
| 76. Սողոմոն՝ որդի Ղուկասի | 93. Ալվազ՝ որդի Մնացականի |
| 77. Եղիազար՝ որդի Մարտիրոսի | 94. Գրիգոր՝ որդի Մակարի |

Մ ու ը ք ե լ ի թ ա ղ Ը

- | | |
|-----------------------------|------------------------------|
| 1. Մուքել՝ որդի Առաքելի | 27. Նանում՝ որդի Հարությունի |
| 2. Մուրադ՝ որդի Մուքելի | 28. Սահակ՝ որդի Դանիելի |
| 3. Սահակ՝ որդի Խաչումի | 29. Ասատուր՝ որդի Դարուքի(*) |
| 4. Գրիգոր՝ որդի Խաչումի | 30. Ալվազ՝ որդի Դիլանի |
| 5. Ալեքսան՝ որդի Խաչումի | 31. Սարգիս՝ որդի Արսլանի |
| 6. Ավետ՝ որդի Խաչումի | 32. Թագվոր՝ որդի Արսլանի |
| 7. Մնացական՝ որդի Ավետի | 33. Հակոբ՝ որդի Արսլանի |
| 8. Ղուկաս՝ որդի Աղաջանի | 34. Աղազազ՝ որդի Գալուստի |
| 9. Գալուստ՝ որդի Աղաջանի | 35. Նանում՝ որդի Գալուստի |
| 10. Հովսեփ՝ որդի Աղաջանի | 36. Ավետիս՝ որդի Մարգարի |
| 11. Քեևան՝ որդի Կարապետի | 37. Մկրտում՝ որդի Փելիպոսի |
| 12. Աղամալ՝ որդի Կարապետի | 38. Աբրահամ՝ որդի Միրզայի |
| 13. Գալուստ՝ որդի Կարապետի | 39. Վիրաբ՝ որդի Օհանի |
| 14. Ալեքսան՝ որդի Մեղքումի | 40. Դավիթ՝ որդի Մկրտումի |
| 15. Մկրտում՝ որդի Մեղքումի | 41. Վարդան՝ որդի Մկրտումի |
| 16. Սարգիս՝ որդի Հովսեփի | 42. Ավետիս՝ որդի Գրիգորի |
| 17. Մարտիրոս՝ որդի Սարգսի | 43. Հակոբ՝ որդի Գրիգորի |
| 18. Հակոբ՝ որդի Խաչատուրի | 44. Քուվիկի(*) որդի Սարգսի |
| 19. Կարապետ՝ որդի Մովսեսի | 45. . . . որդի Քուվիկի(*) |
| 20. Հովհաննես՝ որդի Մովսեսի | 46. Ատիկ՝ որդի Թեոդեիկի |
| 21. Հալրապետ՝ որդի Հակոբի | 47. Պետրոս՝ որդի Օհանի |
| 22. Մակար՝ որդի Առաքելի | 48. Թուլի(*) Դաղլու |
| 23. Հարութ՝ որդի Մակարի | 49. Հովհաննես՝ որդի Մակարի |
| 24. Հովհաննես՝ որդի Ալվազի | 50. Գալուստ՝ որդի Մուրադի |
| 25. Խաչատուր՝ որդի Ալվազի | 51. Հովհաննես՝ որդի Խեչումի |
| 26. Սահակ՝ որդի Հարությունի | 52. Խեչում Դաղլու |

- | | |
|------------------------------|-----------------------------|
| 53. Հարություն՝ որդի Մինասի | 73. Լավասափ՝ որդի Ամիրի |
| 54. Սարգիս՝ որդի Մինասի | 74. Գեան Դաղու |
| 55. Կարդաշ(°)՝ որդի Մարկոսի | 75. Հակոբ՝ որդի Զաքարեի |
| 56. Մնացական՝ որդի Առաքելի | 76. որդի Թովմայի |
| 57. Կոստանգ՝ որդի Խնչանի | 77. Վարդերես [Ար]զրումցի |
| 58. Խաչիկ՝ որդի Ատիկի | 78. Հարություն՝ [Ար]զրումցի |
| 59. որդի Ալեքսանի | 79. Ներսես՝ որդի Սարգսի |
| 60. Ստեփան՝ որդի Խաչումի | 80. Հարութ՝ որդի Մարտիրոսի |
| 61. որդի Խաչատուրի | 81. Հակոբ՝ որդի Ամիրի |
| 62. Դյոնուս(°)՝ որդի Հովսեփի | 82. Մկրտում՝ որդի Զաքարեի |
| 63. Գալուստ՝ որդի Հովսեփի | 83. Դավիթ՝ որդի Դանիելի |
| 64. Լավասափ՝ որդի Խաչատուրի | 84. Աղիզ(°)՝ որդի Սահակի |
| 65. Հարություն՝ որդի Խաչումի | 85. Սարգիս՝ որդի Պողոսի |
| 66. որդի Ավագի | 86. Գրիգոր՝ որդի Կիրակոսի |
| 67. Գրիգոր՝ որդի Մանվելի | 87. Իսրայել՝ որդի Զաքարեի |
| 68. Սահակ՝ որդի Թադեոսի | 88. Ավագ՝ որդի Մկրտումի |
| 69. Աֆթանդիլ՝ որդի Ալթունի | 89. Իսրայել՝ որդի Մարգարեի |
| 70. Թագվոր՝ որդի Կոստանդի | 90. Աղաբեկ(°)՝ որդի Գրիգորի |
| 71. Օհան Արզրումցի | 91. Մաղաքիա՝ որդի Գրիգորի |
| 72. Վարդան՝ որդի Օհանի | 92. Ավջի Նախչևանցի |

Հ ա մ գ ա լ ի թ ա դ ւ

- | | |
|------------------------------|-------------------------------|
| 1. Համգա՝ որդի Բաղդասարի | 24. Հարութ՝ որդի Բուզաղի |
| 2. Գասպար՝ որդի Ղևոնդի | 25. Դյոնուս(°)՝ որդի Վարդևանի |
| 3. Պետրոս՝ որդի Գասպարի | 26. Գալուստ՝ որդի Վարդևանի |
| 4. Մելքում՝ որդի Գասպարի | 27. Վարդևան՝ որդի Գալուստի |
| 5. Հայրապետ՝ որդի Գասպարի | 28. Մկրտիչ՝ որդի Գալուստի |
| 6. Արսլան՝ որդի Մարգարեի | 29. Դավիթ՝ որդի |
| 7. Սահակ՝ որդի Արսլանի | 30. Ներսես՝ որդի Դավթի |
| 8. Սարգիս՝ որդի Արսլանի | 31. Բարսեղ՝ որդի Թորոսի |
| 9. Ամիր՝ որդի Մկրտչի | 32. Գյուզալ՝ որդի Թորոսի |
| 10. Գրիգոր՝ որդի | 33. Ալեքսան՝ որդի Ստեփանի |
| 11. Իսրայել՝ որդի Մարկոսի | 34. Մարգարե՝ որդի Ստեփանի |
| 12. Իսաշան՝ որդի Գաբրիելի | 35. Մալխաս՝ որդի Ջհանի |
| 13. Հովհաննես՝ որդի Գաբրիելի | 36. Ասատուր՝ որդի Միրզայի |
| 14. որդի Ուլուխանի | 37. Վիրաբ՝ որդի Մարտիրոսի |
| 15. Յրանդուլ՝ որդի Ուլուխանի | 38. Եղիազար՝ որդի Ասատուրի |
| 16. Պողոս՝ որդի Ուլուխանի | 39. Հովհաննես՝ որդի Վարդանի |
| 17. Սողոմոն՝ որդի Փիլիպոսի | 40. Կիրակոս՝ որդի Վարդանի |
| 18. Մկրտում՝ որդի Եղիայի | 41. Հակոբ՝ որդի Ջհանի |
| 19. Մաթեոս՝ որդի Ներսեսի | 42. Հայրապետ [որդի] Ղևոնդի |
| 20. Սարգիս՝ որդի Մաթեոսի | 43. Մուքել՝ որդի Հայրապետի |
| 21. Հարություն՝ որդի Սարգսի | 44. Մկրտում՝ որդի Պետրոսի |
| 22. Բուզաղ՝ որդի Ներսեսի | 45. Սարգիս՝ որդի Պետրոսի |
| 23. Աբրահամ՝ որդի Բուզաղի | 46. Ասատուր՝ որդի Մկրտչի |

47. Մուրադ՝ որդի Մկրտչի	70. Մուրադ՝ որդի Փիլիպոսի
48. Հակոբ՝ որդի Ասատուրի	71. Թադեոս՝ որդի Մուրադի
49. Ալեքսան՝ որդի Ներսեսի	72. Հովհաննես՝ որդի Գրիգորի
50. Հարություն՝ որդի Դավթի	73. Մնացական՝ որդի Հակոբջանի
51. Աղամ՝ որդի Առաքելի	74. Մինաս՝ որդի Փիլիպոսի
52. Ալվազ՝ որդի Աղամի	75. Եղիազար՝ որդի Ավետիսի
53. Գրիգոր՝ որդի Առաքելի	76. Հակոբ՝ որդի Վարդանի
54. Պետրոս՝ որդի Հովհաննեսի	77. Ենգիբար՝ որդի Վարդանի
55. Գրիգոր՝ որդի Աղաջանի	78. Հովհաննես՝ որդի Ստեփանի
56. Ավագ՝ որդի Աղաջանի	79. Մկրտում՝ որդի Հովհաննեսի
57. Սաֆար՝ որդի Անանիայի	80. Աղամալ՝ որդի Հովհաննեսի
58. Մովսես՝ որդի Սամվելի	81. Նահապետ՝ որդի Հաբեթի
59. Դավիթ՝ որդի Անանիայի	82. Ավետիք՝ որդի Պետրոսի
60. Սահակ՝ որդի Մկրտչի	83. Հովհաննես՝ որդի Զաքարեի
61. Հարություն՝ որդի Սահակի	84. Ռուստամ՝ որդի Զաքարեի
62. Եղիազար՝ որդի Մուրադի	85. Աղաբեկ՝ որդի Թադեոսի
63. Մարկոս՝ որդի Հայրապետի	86. Սարգիս՝ որդի Ալեքսանի
64. Վարդան՝ որդի Գրիգորի	87. Մկրտում՝ որդի Օհանի
65. Գրիգոր՝ որդի Վարդանի	88. Հովհաննես՝ որդի Հարությունի
66. Էհթիբար՝ որդի Բարսուղարի	89. Հակոբ՝ որդի Մելքումի
67. Փիլոմ(°)՝ որդի Մարտիրոսի	90. Աղամ՝ որդի Սարգիսի
68. Ասատուր՝ որդի Հարությունի	91. Աղամալ՝ որդի Իսաջանի
69. Իսրայել՝ որդի Թագվորի	

Հ ա ս ու լ թ հ ն գ ու ղ ի ց

1. Իսփանջ—373 հոգուց ¹ ,	9325
2. Տորեն—2300 քիլա, գինը՝	48300
3. Գարի—1150 քիլա, գինը՝	11500
4. Կորեկ—575 քիլա, գինը՝	5750
5. Կտավատ—50 քիլա, գինը՝	750
6. Բամբակ—50 ման, գինը՝	2000
7. Այգիների կապալը (մուկաթիա) ²	7455
8. Բանջարանոցների տասանորդը (ուշր) ³	1650
9. Ոչխարների հարկը (աղաթ-ի աղնամ) ⁴	1035
10. Հիշյալ գյուղի ներկատունը, տարեկան՝	600
11. Հարսնության հարկը (ռասմ-ի արուս) ⁵	60
12. Դաշթբանի, հողի թափուռի հետ միասին՝	960
13. Բաղհավա, հանցանք և ոճիր, [գտնված] ստրուկների և աղա- խիներին աչքախուսանքի համար՝	1800
14. Ուշքիլիսա վանքի ձիթհանքը, տարեկան	
15. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի բնա- կիչներից հինգ հոգու ձեռքում—գործող, կես տարեկան՝	60

¹ Ռայաթների թիվը մեկ հողի պակաս է զրված: Զորս թաղերի ընդհանուր գու-
մարը լինում է 374:

- 16. Մնացակաճի որդի Ջանիի մեկ ջրաղացը — գործող, կես տարեկան՝ 30
- 17. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի չորս բնակիչներին ձեռքում — գործող, կես տարեկան՝ 60
- 18. Քեթեկանի որդի Գասպարի և Լավասաիի որդի Սարգսի՝ ընկերութիամբ [օգտագործվող], երկու ջրաղացներ — գործող, կես տարեկան՝ 60
- 19. Երկու ջրաղացներ, որոնք գտնվում են հիշյալ գյուղի բնակիչներից հինգ հոգու ձեռքում — գործող, կես տարեկան՝ 60
- 20. Մեկքումի որդի Աղեքսանդրոսի երկու ջրաղացները — գործող, կես տարի՝ 60
- 21. Ուչքիլիսա վանքի 6 ջրաղացները — գործող
- 22. Ուչքիլիսա վանքի 2 ջրաղացները — ավեր
- 23. Ուչքիլիսա վանքի 1 դինգը — ավեր

Գումարը՝ 91515¹

Որովհետև հիշյալ գյուղի առուն հին ժամանակներից ի վեր շարաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր հատկացված է եղել էջմիածնի վանքի Ուչքիլիսա անունով հայտնի եկեղեցու արտերին, այգիներին և խոտհարքներին, ուստի այսուհետև ևս նույն ձևով վարվելու մասին այստեղ նշվեց և բացատրվեց:

Էջմիածնի վանքը, որ հայտնի է Ուչքիլիսա անունով, Ուչքիլիսա գյուղում

- 1. Հիշյալ վանքի կարավանատունը, Ուչքիլիսա գյուղում,
 - 2. Հիշյալ վանքի 2 ձիթհանքները, Ուչքիլիսա գյուղում,
 - 3. Հիշյալ վանքի 29 արտերը, Ուչքիլիսա գյուղում,
 - 4. Հիշյալ վանքի 2 խոտհարքները, Ուչքիլիսա գյուղում,
 - 5. Հիշյալ վանքի 3 այգիները, Ուչքիլիսա գյուղում,
 - 6. Հիշյալ վանքի 2 այգիները, բուն Երևանում,
 - 7. Հիշյալ վանքի 3 այգիները, Կարբիին ենթակա Օշական գյուղում,
 - 8. Հիշյալ վանքի 1 ավեր այգին, Կարբիին ենթակա Օշական գյուղում,
 - 9. Հիշյալ վանքի 2 այգիները, Կրրխրուլաղին ենթակա Շիրաբադ գյուղում,
 - 10. Հիշյալ վանքի 1 արտը, Կրրխրուլաղին ենթակա Արաքիլիսա գյուղում,
 - 11. Հիշյալ վանքի 6 ջրաղացները, գործող, Ուչքիլիսա գյուղում,
 - 12. Հիշյալ վանքի 2 ավեր ջրաղացները, Ուչքիլիսա գյուղում,
 - 13. Հիշյալ վանքի 1 ավեր դինգը, Ուչքիլիսա գյուղում,
 - 14. Հիշյալ վանքի լիճը, Ուչքիլիսա գյուղում,
 - 15. Հիշյալ վանքի 2 ջրաղացները, գործող, բուն Երևանում,
 - 16. Հիշյալ վանքի 2 ջրաղացները, գործող, Կրրխրուլաղին ենթակա Քյալարա գյուղում,
 - 17. Հիշյալ վանքի 1 դինգը, Կրրխրուլաղին ենթակա Քյալարա գյուղում:
- Ջանգու գետից երեք ջրաղաց աշխատեցնող մի ջուր ևս, համաձայն իրենց ձեռքում գտնվող փաստաթղթերի, հնուց անտի հիշյալ վանքի արտերը, խոտհարքներն ու այգիները ոռոգելու համար հոսել է դեպի հիշյալ վանքը, և

¹ Բնագրում գումարը սխալմամբ 100 աղչե պակաս է հանված:

այժմ թեև ավեր է, սակայն, որպեսզի նախկինում եղածի պես վարվեն, այստեղ նշվեց և բացատրվեց:

Վերոհիշյալ գյուղում գտնվող հիշյալ վանքի [անունով] վերը նշված և արձանագրված են.

Ուչքիլիսա գյուղում.—1 կարավանատուն, 2 ձիթհանք, 29 արտ, 3 խոտհարք, 3 այգի, 6 շեն և 2 ավեր ջրաղացներ, 1 ավեր դինգ, 1 լիճ և 600 ոչխար: Կարբիի նահիայի Օշական կոչվող գյուղի առվի ջուրը շաբաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր պետք է հոսի հիշյալ լճի մեջ և Ուչքիլիսա գյուղի առվի ջուրն էլ հնուց անտի շաբաթվա մեջ մեկ օր և մեկ գիշեր հատկացված է վերոհիշյալ վանքի այգիներին, արտերին և խոտհարքներին: Զանգու գետից երեք ջրաղաց աշխատեցնող ջրի, ներկայումս ավեր վիճակում գտնվող, առուն նույնպես, նախկինում ընդունված ձևով օգտագործվի:

Բուն Երևանում.— Երկու շեն ջրաղաց և երկու այգի:

Կրբխրուլաղի նահիայում.— Քլալարա կոչվող գյուղի սահմաններում՝ 2 շեն ջրաղաց և 2 շեն դինգ: Նույն նահիայի Ղարաքիլիսա կոչվող գյուղի սահմաններում 1 արտ, նույնպես Կրբխրուլաղի նահիայում գտնվող Շիրաբաղ կոչվող գյուղի սահմաններում՝ 2 այգի:

Կարբիի նահիայում.— Օշական կոչվող գյուղի սահմաններում՝ 2 շեն և 1 ավեր այգիներ:

Ուչքիլիսա գյուղից ստացվող հացահատիկի ա՛շարի հնգորդի կեսը և այգիներից ստացվող դինու տասանորդը (ուշը), Կարբիի նահիայում գտնվող Օշական և Մաստարա կոչվող գյուղերից ստացվող հացահատիկի ա՛շարի հնգորդը և այգիների տասանորդը, Ապարանի նահիայում գտնվող Քիրաջլու գյուղից ստացվող ա՛շարի հնգորդի կեսը, Կարբիի նահիայում գտնվող Ֆրանկանոց գյուղից ստացվող ա՛շարի հնգորդի հնգորդը հին ժամանակներից ի վեր, իրենց ձեռքում գտնվող արքայական հրովարտակով և ներկայումս էլ, արդեն հրապարակված բարձրագույն հրամանագրերի համաձայն, պետք է գանձվի հիշյալ վանքի կողմից, [ինչպես նաև] պետք է վերցվի ուշըն ու ուսամը:

Հիշյալ վանքում բնակվող կաթողիկոսն ու կրոնավորները, որոնք սեագյուրի անունով են հայտնի, ազատված են (մուաֆ և մուսալլամ են) ջիզլալից, իսփանջից, բելթ-ուլ-մալից և այլ ընթացիկ (սովորութալին) պարտավորութլուններից (թեքալիֆ-ի ուրֆիլին): Բուն Երևանում և նրա շրջակայքում հիշյալ վանքին ենթակա վանքերում բնակվող կրոնավորները նույնպես, վերոհիշյալ կարգով, ազատված են հարկերից (մուաֆ են և մուսալլամ):

Ըստ վերոգրյալի, որովհետև նրանք իրենց ազատության թուղթը (մուաֆիաթնամե) ներկայացրել էին ներկայումս բարձրագույն հրամանատար և մեծարգո վեզիր Ահմադ փաշալին,— թող ամենակարողն աստված հավիտյան դարձնի նրա փառքը,— և խնդրել էին որպեսզի հիշյալ նորին վսեմութլունը [հաստատի], և որովհետև համաձայն նրանց ազատության թղթի, բացատրված և պարզաբանված ձևով, հիշյալ կաթողիկոսն ու կրոնավորները ամեն տարի Երջանկության շեմքում (Կոնստանդնուպոլիս) 6800 աղչե բերաթի փեշքաշք արքունի գանձարանին հատուցելով, բոլոր պարտավորութլուններից ազատված լինելու մասին բարձրագույն հրովարտակ է հրապարակված, այստեղ նշվեց և բացատրվեց.

1. Հոփսիսի վանքը, Ուչքիլիսա գյուղում, ենթակա հիշյալ վանքին,
2. Շողակաթի վանքը, Ուչքիլիսա գյուղում, ենթակա հիշյալ վանքին,

3. Գայանեի վանքը, Ուչքիլիսա գյուղում, ենթակա հիշյալ վանքին,
4. Անանիայի վանքը, Երևանի արվարձանում, ենթակա հիշյալ վանքին,
5. Անապատի վանքը, Երևանի արվարձանում, ենթակա հիշյալ վանքին:

Արքայական նոր ընդարձակ դաֆթարի գրանցման պատճենն այս է, որ հիշվեց:

Գրվեց հազար հարյուր երեսուն լոթ—1137 թվականի շա'բան-ուլ-մուա'դ-զամ ամսի կեսերին (1725 թ. ապրիլ 27—30):

Կնիք, որի վրա կա «Իբրահիմ» աճուճը:

ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿԻ ԹՈՒՐԿԵՐՆԵՆ ԲՆԱԳԻՐԸ

— مهر —

الله حسبي توكلت على الله

لاحول ولا قوة الا بالله

عبدہ احمد. ۱۱۳۱

يارب توفيرياد من بيكس رس لطف و كرامت زمن بيكس بس
هر كس بكسى بحضرتى مينازد جز تو حضرت ننازد اين بيكس كس

عرض اولندوغى اوزره طرف دولت عليه دن امر شريف عاليشان وارد
اولنجيه دك اشبو دفتر منطوقى اوزره عمل و خاص وجوده لرى تعرض ايلميه لرديو
[امضاء]

ناحیه کربى در لواء روان

قریه اوج کلبساک تابع مزبور

مجلسه بوغوص

اواديك ولد توديك	بوغوص ولد خاجه دور
جانى ولد ميناسقان	اغامال ولد ميناس
ايوض ولد اغوب	مالخاص ولد ميناس
مالخاص ولد اغوب	او عنه ثان ولد ايسچان
مراد ولد كلميش	ميناسقان ولد كوزل
نهابت ولد اوانس	قره بيت ولد ميرزاجان

ملك ولد توروس	ماقینوس(?) ولد سارکز
وارغان(?) ولد قره بیٹ	واردکس(?) ولد سارکز
کیر یاقوز داغلو	مکر دون ولد ادیک
کیر یاقوز ولد کیر کور	اوانس ولد کشیش
استفان ولد کیر کور	اوانس ولد مکر دیچ
کون ولد کیر کور	مکر دون ولد خاچوم
نرسس ولد صاروخان	کوزل ولد ایوض
صحاك ولد صاروخان	بقی یزار ولد اوادس
اسرایل ولد صحاك	کیر کور ولد اوادس
دانیل ولد موسس	ادی بیک ولد کیر کور
ویراب ولد مار کره	هاریتون ولد استفان
کون ولد ویراب	ارمیس(?) ولد استفان
سقومان ولد خاچان	ینکی بار ولد دوستیک(?)
کوزل ولد اغوب	کوویک(?) ولد دوستیک(?)
ینکی بار ولد المی بیک	اوسپ ولد بوغوص
قره بیٹ ولد المی بیک	بوغوص ولد ارتین
تیکفور ولد اریتون	وارتوان ولد ارتین
خوجک ولد بوسمک(?)	ینکی بار ولد ارتان
اغهمال ولد خوجک	ماتوس ولد ارتان
نرسس ولد ووسکان	ایوض ولد جان اغا
یغیا ولد نخچوانی	جلال ولد ایوض
ماردرس ولد کیر یاقوز	دئیل ولد ایوض
اریتون ولد مکر دیچ	ماغاکسی ولد جان اغا
کالوس ولد کیر یاقوز	سارکز ولد کورجی
اوانس ولد مکر دیچ	ایوض ولد سارکز
استفان ولد فلبوس	خاچوم ولد موسس
ماردرس ولد میرزا	اولوبیک ولد بدروس
اغهمال ولد بدروس	اواک ولد الوبیک
بدروس ولد کیر کور	اوانس ولد خاچه دور
فوستاند ولد اغه بیک	خاچه دور ولد اوانس
ئاتوس ولد تیکتوس	ارسلان ولد توروس

كبير كور ولد صاروخان	خاچوم ولد صاروخان
اغوب ولد بارون	نانوم ولد وارتان
اواديس ولد ساركز	كبير كور ولد ساركز
اوهانس ولد انانیا	ماردروس ولد ساركز
يقى يزار ولد ساركز	كبير كور ولد ماركره
اريتون ولد استوستور	مكردوم ولد بوغوص
الكسان نخچوانی	تاتك ولد ملك لوند
كبير كور ولد الكسان	صحاك ولد نانوم
توروس ولد اغوب	مكردوم ولد نانوم
[ا] بكار ولد كون	استفان ولد اراكيل
اوانس ولد رستم	قره بيت ولد اريتون
	صاروخان ولد بايندر

محلل كالموس

اركيل ولد ساركز	كالموس ولد ياغوب
بوداق ولد بابا	مكرديج ولد توروس
بدروس ولد بوداق	تاديك ولد توروس
كبير ياقوز ولد بوداق	ساركز ولد لواصاب
نانلا ولد مراد	يغيا ولد لواصاب
كبير كور ولد نانلا	داويد ولد وارتان
ميرزا ولد خاجه دور	مراد ولد نهايت
كبير كور ولد ياغوب	اندون ولد تاتوس
ياغوب ولد كبير كور	نانوم ولد كبير ياقوز
قوستاند ولد موكل	اوسپ ولد نانوم
يقى يزار ولد موكل	اوهانس ولد كبير ياقوز
اواصاب ولد كون	مارقوس ولد كبير كور
شبروان ولد كون	قره بيت ولد مراد
فلبوس ولد بدروس	اسرايل ولد مراد
يقى يزار ولد كبير [با] قوز	ساركز ولد مراد
اواك ولد كبير كور	فلبوس ولد مسرود
بوغوص ولد مراد	مكرديج ولد ساركز

برخودار ولد ووسكان	میناسقان ولد اواديك
کتوان ولد سار کز	خاچوم ولد اواديك
استفان ولد کالوس	اصوادور ولد سار کز
سوغومون ولد استفان	مکردوم ولد اراکيل
ماردرس ولد کالوس	اوانس ولد اولوبيك
بقدهسار داغلو	میناسقان ولد تاتوس
کالوس ولد اوادس	اغوب ولد میناسقان
اوسپ ولد مکردیچ	تاتوس ولد میناسقان
کیر کور ولد اوهان	فلبوس ولد مراد
یقی یزار ولد باباجان	نرسس ولد فلبوس
ماردرس ولد مراد	مانوک ولد موسس
سوغومون ولد قو کز	اریتون ولد سار کز
یقی یزار ولد ماردرس	هاروت ولد وارتان
باب ولد اسکندر	اواکیم ولد دائل
اغوب ولد صاروم	هره بیت ولد فلبوس
اوادوم ولد استوستور	بک نظر ولد داوید
کالوس ولد استوستور	ابکار ولد داوید
امیر ولد موسس	اغهمال ولد اغوب
اراکیل ولد بوداق	اوادیک داغلو
اوادیک ولد خاچه دور	کالوس ولد فلبوس
بدروس ولد کیر کور	ایسجان ولد نظر
مکردوم ولد اغابیک	اوانس ولد نظر
سار کز ولد کیر کور	قره بیت ولد خاچک
دیلنچی داغلو	وارتان ولد اوادیس
امیر ولد یاغوب	کوزل ولد ووسکان
مارقار ولد خوجیک	سلتان ولد کوزل
صاروخان ولد اوک	کیر کور ولد زکره
کوقز ولد ابراهام	سار کز ولد تاتوس
ایبوز ولد میناسقان	اصوادور ولد یاغوب
کیر کور ولد مقار	خاچوم ولد ووسکان

صحاك ولد مكرديچ	داويد ولد
اريتون ولد صحاك	نرسس ولد داويد
يقى يزار ولد مراد	بارسيخ ولد توروس
مارقوز ولد هرهبيت	كوزل ولد توروس
وارتان ولد كبيركور	الكسان ولد استفان
كبيركور ولد وارتان	ماركره ولد اوض
اعتبار ولد برخودار	اغوب ولد جهان
پيلوم ولد ماردرس	مالخاص ولد جهان
اصوادر ولد اريتون	اصوادر ولد ميرزا
اسرايل ولد تيكفور	ويراب ولد ماردرس
مراد ولد فلبوس	يقى يزار ولد اصوادر
تاتوس ولد مراد	اوانس ولد وارتان
اوهانس ولد كبيركور	قبر [يا] كوز ولد وارتان
ميناسكان ولد اغويجان	هرهبيت [ولد] قيواند
ميناس ولد فلبوس،	موكل ولد هرهبيت
يقى يزار ولد اوادس	مكردوم ولد بدروس
ياغوب ولد وارتان	ساركز ولد بدروس
ينكى يار ولد وارتان	اصوادر ولد مكرديچ
اوهانس ولد استفان	مراد ولد مكرديچ
مكردوم ولد اوهانس	اغوب ولد اصوادر
اغامال ولد اوهانس	الكسان ولد نرسس
نهابيت ولد ابيت	اريتون ولد داويد
اواديك ولد بدروس	اغام ولد اراكيل
اوانس ولد زكره	ايوض ولد اغام
رستم ولد زكره	كبيركور ولد اراكيل
اغايبيك ولد تاتوس	بدروس ولد اوانس
ساركز ولد الكسان	كبيركور ولد اغاجان
مكردوم ولد اوهان	اواك ولد اغاجان
اوانس ولد هاروثين	سفر ولد انانبا
اغوب ولد ملكوم	موسس ولد صانول
اغام ولد ساركز	داويد ولد انانبا
اغامال ولد ايسجان	

حاصل من الخمس

۹۳۲۵	اسپنج - ۳۷۳ نفرًا
۳۸۳۰۰	حنطه - ۲۳۰۰ کیله
۱۱۵۰۰	شعیر - ۱۱۵۰ کیله
۵۷۵۰	ارزن - ۵۷۵ کیله
۷۵۰	زکړک - ۵۰ کیله
۲۰۰۰	پنبه - ۵۰ من
۷۴۵۵	مقاطعة باغات
۱۶۵۰	عشر بوستان
۱۰۳۵	عادت اغنام
۶۰۰	بویه خانه قریه مزبوره
۶۰	رسم عروس
۹۶۰	دشتبانی مع طپوی زمین
۸۱۰۰	بادهوا و جرم جنایت و مزده کانه عبدابق و کنیزک
	بزریرخانه مناستر اوچ کلیسا - ۲ باب
	اسیاب قریه مزبوره اهالیسندن بش نفر کمسنه متصرف - ۲ باب،
۶۰	رسم، نیمساله
۳۰	اسیاب جانی ولد میناسکان - ۲ باب، رسم،
	اسیاب قریه مزبوره اهالیسندن درت نفر کمسنه متصرف - ۲ باب،
۶۰	رسم، نیمساله
	اسیاب کسبار ولد کتوان سارکنز ولد لواصاب بوجه اشتراک - ۲ باب،
۶۰	رسم، نیمساله
	اسیاب قریه مزبوره اهالیسندن بش نفر کمسنه متصرف - ۲ باب،
۶۰	رسم، نیمساله
۶۰	اسیاب اغیکساندرس ولد ملکوم - ۲ باب،
	اسیاب مناستر اوچ کلیسا - ۶ باب،
	اسیاب مناستر اوچ کلیسا - ۲ باب،
	دنک مناستر اوچ کلیسا - ۱ باب،
۹۱۴۱۵	یکون

قریه مزبورہ ارغینک هفته ہر کون و ہر کیچہ مناسٹر ایچ مبارین
اوج کلیسا دیملکہ معروف اولان کلیسانک قدیم الا [یا] مدن برو ترلا و باغ و
یونجہ لغینہ تقسیم اولنہ کلمکین ینہ قدیمیسی اوزرہ ایفا اولنوب بو محلہ قید
و شرح ویرلدی

مناسٹر ایچ مبارین اوج کلیسا دیملکہ معروف قدر

در قریہ اوج کلیسا

- کربان سرای مناسٹر مزبور، در قریہ اوج کلیسا
بزرخانہ مناسٹر مزبور - ۲ باب، در قریہ اوج کلیسا
ترلا [ی] مناسٹر مزبور - ۲۹ قطعہ، در قریہ اوج کلیسا
یونجہ لوق مناسٹر مزبور - ۳ قطعہ، در قریہ اوج کلیسا
باغ مناسٹر مزبور - ۳ قطعہ، در قریہ اوج کلیسا
باغ مناسٹر مزبور - ۲ قطعہ، در نفس روان
باغ مناسٹر مزبور - ۳ قطعہ، در قریہ اوشہ کان تابع کربی
باغ مناسٹر مزبور - ۱ قطعہ، خراب، در قریہ اوشہ کان تابع کربی
باغ مناسٹر مزبور - ۲ قطعہ، در قریہ شیر اباد تابع قرق بولاغ
ترلا [ی] مناسٹر مزبور - ۱ قطعہ، در قریہ فراکنیسه تابع قرق بولاغ
اسیاب مناسٹر مزبور - ۶ باب، رسم، در قریہ اوج کلیسا
اسیاب مناسٹر مزبور - ۲ باب، خراب، در قریہ اوج کلیسا
دنک مناسٹر مزبور - ۱ باب، خراب، در قریہ اوج کلیسا
کول مناسٹر مزبور - در قریہ اور کلیسا
اسیاب مناسٹر مزبور - ۲ باب، رسم، در نفس روان
اسیاب مناسٹر مزبور - ۲ باب، رسم، در قریہ کله رہ تابع قرق بولاغ
دنک مناسٹر مزبور - ۱ باب، در قریہ کله رہ تابع قرق بولاغ

زنکی چاپیندن اوج دکرمان دوندهر ہر صو دخی مناسٹر مزبورہ نک ترلا
و یونجہ لوق و باغک صووارمق اوزرہ اللرنده اولان سنداتلری موجبنجہ قدیمدن
برو مناسٹر مزبورہ طرفینہ جاری اولوب الیوم خراب اولدوغندن ینہ
قدیمیسی اوزرہ ایفا اولنوب بو محلہ قید و شرح ویرلدی

قرية مزبورهه واقع اولان مناستر مزبورهه بالاده قيد و تحرير اولان
 قرية اوچ كليساده بر كربان سراى و ايكى باب بزير خانه و بكرمى طقوز قطعه
 تارلا و اوچ قطعه بونجهلق و اوچ قطعه باغ و التى باب آباد اسباب و ايكى باب
 خراب اسباب و بر خراب دنك و بر كول و كرى ناحيه سنده اوشه كان نام
 قريه ارغنيك صوى دضى هفتهه بر كون بر كيجه كول مزبور ايچينه جارى اولوب
 و اوچ كليسا قريهسى ارغنيك دضى هفتهه بر كون بير كيجه مناستر مرقوم
 باغ و تارلا و يونجهلقينه قديمدين تقسيم اولنوب و التيوز مقدارى غنملىرى و
 نفس روانده ايكى باب آباد اسباب و ايكى قطعه باغ و قرق بولاغ ناحيه سنده
 كلهره نام قريه حدودنده ايكى باب آباد اسباب و ايكى باب آباد دنك و ينه ناحيه
 مزبورهه قراكنيسه نام قريه حدودنده بر قطعه تارلا و ينه قرق بولاغ ناحيه
 سنده شير اباد نام قريه حدودنده ايكى قطعه باغ و كرى ناحيه سنده اوشه كان
 نام قريه حدودنده ايكى قطعه آباد و بر قطعه خراب باغلىرى و قرية اوچ
 كليسانك حاصل اولان حبوباتن خمس اعشارنيك نصفى و باغلىرى حاصل
 اولان شيره نك عشرى و كرى ناحيه سنده اوشه كان نام قريه ايله ماستره
 نام قريه لرك حاصل اولان حبوباتن خمس اعشارى و باغلىرى عشرى و آباران
 ناحيه سنده كراشلو نام قريه نك دضى حاصل اولان خمس اعشارنيك نصفى و
 كرى ناحيه سنده فرنك انوس نام قريه نك، حاصل اولان خمس اعشارنيك دضى
 خمسى قديم الايا[يا] مدن برو يدلرنده اولان خط همايون و بودفعه دضى صاخر
 اولان اوامر عليه موجبجه مناستر مزبوره طرفندن ضبط و عشر و رسومى اخذ
 اولنوب و مناستر مزبورهه ساكن اولان خليفه و مرحصلر كه قره باشيلر
 ديمكله معروفلر در جزيه و اسپنج و وبيت المال و سائر تكاليف عرفيه دن معاف
 و مسلم اولوب و نفس روانده و نواحيسنده مناستر مزبوره تابع اولان
 مناسترلرده ساكن اولان مرحصلر دضى شروط مذكور اوزره معاف و مسلم
 اولمق اوزره ماء الذكر معافيت نامه لرنيك حالاسردار اكرم وزير مكرم احمد
 پاشا ادام الله تعالى اجلاليه عرض و التماس ايتملىله مشار اليه حضرتلىرى
 دضى معافيت نامه لرى موجبجه تفصيل اولندوغى منوال مشروح اوزره مسفور
 خليفه و مرحصلر سنه به سنه استانه سعادته براتى پشكشين التى بيك
 سكريوز افجهى خزينه عامر هيه تسليم ايتمك اوزره جميع تكاليفدن معاف و
 مسلم اولمق اوزره فرمان عاليلرى صادر اولمقين موجبجه بو محله قيد و شرح
 و يرلدى

مناستر اورومسپم در قریة اوج کلیسا تابع مناستر مزبور
 مناستر شوغغات در قریة اوج کلیسا تابع مناستر مزبور
 مناستر قایه یانه در قریة اوج کلیسا تابع مناستر مزبور
 مناستر انانیه در واروش روان تابع مناستر مزبور
 مناستر انابات در واروش روان تابع مناستر مزبور

صورت دفتر تحریر جدید مفصل سلطانی بو در که نقل اولتدی. تحریراً
 فی اواسط شهر شعبان المعظم سنه سبع و ثلثین و مایه و الف ۱۱۳۷

— مهر —

کعبه استان شاه کریم باب دیار مقام ابراهیم

А. ПАПАЗЯН

ТУРЕЦКИЕ НАЛОГОВЫЕ РЕЕСТРЫ СЕЛА ВАГАРШАПАТ
1725—1728 гг.

Резюме

От периода турецкой оккупации в 1724—1736 г. в диване католика Эчмиадзина сохранились четыре налоговых реестра села Вагаршапат (Учкилиса), которые ныне хранятся в архивных фондах Матенадарана. Эти налоговые реестры извлечены из пространной налоговой книги и содержат интересные данные относительно видов и размеров налогов, взимавшихся с населения.

Из налоговых реестров выясняется, что в период турецкой оккупации дважды была произведена всеобщая перепись: первая—1725 г., вторая—1728 г. Сравнения данных прилагаемого к статье налогового реестра 1725 г. с налоговым реестром 1728 г. показывает, что непосредственно после завоевания оккупационные власти вели сравнительно мягкую политику. Согласно этим реестрам, общая сумма взимавшихся с села налогов 1725 г. составляла 91515 акче. Однако во время последовавшей спустя три года новой переписи эта сумма поднялась до 211322 акче.

В статье показано, что такой колоссальный рост как видов налогов, так и их суммы явился не столько следствием повышения цен на продукты и другие сельскохозяйственные товары, сколько был результатом совершенно нового курса налоговой политики оккупационных властей.

Прилагая к статье турецкий текст и армянский перевод налогового реестра 1725 г., мы полагаем, что он, вместе с приводимой в статье основной частью налогового реестра 1728 г., может принести пользу и, в качестве нового первоисточника, послужить основанием для более широкого исследования.



Handwritten Arabic text in the upper right section of the page, consisting of several lines of script.

Main body of handwritten Arabic text, organized into several columns with some horizontal lines separating sections.

Handwritten Arabic text at the bottom of the page, including a prominent circular stamp or seal on the right side.

Vertical text on the right margin: *Manuscript number 1725 P. Saqbuqayn yushfi Bawr p b b b b b b b b b b b b*

БЛИЖНИЙ И СРЕДНИЙ ВОСТОК
СБОРНИК СТАТЕЙ ПАМЯТИ В. Н. ЗАХОДЕРА

Москва, 1961

А. Д. Папазян

**АРАБСКАЯ НАДПИСЬ НА ГРОБНИЦЕ
ТУРКМЕНСКИХ ЭМИРОВ В СЕЛЕ АРГАВАНД**

Одним из важных вопросов в истории средневековой Армении, в частности в истории мелких феодальных княжеств, созданных при Захаридах на территории Восточной Армении, является вопрос о постепенной замене армянской государственности чужеземным владычеством. До сих пор этот вопрос не подвергался серьезному исследованию.

К сожалению, скудные сведения источников не позволяют выяснить хронологические рамки истории большей части армянских феодальных домов, господствовавших в отдельных областях Армении. Это особенно относится к центральной части страны — к Араратской области, которая, будучи на протяжении многих столетий центром армянской государственности, все же в течение ряда веков, начиная с XIV в., находилась под иноземным владычеством.

В тех районах Араратской и Сюнийской областей, которые впоследствии вошли в состав бегларбекства Чухур-Са'да или Ереванского ханства, остатки армянских феодальных родов сохранились вплоть до начала XIV в. Как видно из надписей в селе Карби (1338 г.) и Ованнаванке (1358 г.) и памятной записи в рукописи того же периода, в первой половине XIV в. в области Арагацотн правил Курд Амбердци, сын Вачэ Вачутяна, а в Шаапунике, Варажнунике и Котайке — Эачи I из рода Прошянов. В тот же период в Малом Сюнике и Верхнем Хачене, так же как и в части Гегаркуника, правили потомки Хасана Джалал-Довла Допяна. В Ани и его округе продолжали править внуки Шахиншаха I — Шахиншах II, Ваграм и Заза¹. До 60-х годов XIV в. в Егварде и Хавуц-Таре правили Азибекяны². Сильным было княжество Орбелянов в Вайоц-Дзоре и Сюнике, просуществовавшее до середины XV в.³ Член испанского посольства Гонсалес де-Клавиho сообщает подробные сведения об армянских князьях-католиках в Маку⁴, владения которых в 1426 г. были захвачены

¹ Я. Манандян, *Критический обзор истории армянского народа*, т. 3, Ереван, 1952, стр. 326—328 (на арм. яз.).

² Г. Овсепян, *Азибеки и их строительная деятельность*, «Банбер», кн. I—II, Вагаршапат, 1921—1922, стр. 194 (на арм. яз.).

³ А. Папазян, *Страница из истории политической жизни Восточной Армении*, — «Известия АН АрмССР», общ. науки, 1955, № 8 (на арм. яз.).

⁴ О. Акопян, *Путевые заметки*, т. 1, Ереван, 1932, стр. 114—116 (на арм. яз.).

Искандером Кара-Коюнулу⁵. Армянские княжества не сохранились, в частности, в Араратской долине, Ерасхадзоре и Сурмали, где утвердились кочевые племена в основном туркменского происхождения⁶.

Процесс насильственной ассимиляции и систематического уничтожения армянских феодальных домов начался гораздо раньше, однако завершился он лишь в первой половине XV в. В нагорных районах Восточной Армении процесс этот затянулся вплоть до начала XVI в. Важную роль в ликвидации последних остатков армянских феодальных домов сыграл мусульманский институт бейт-ул-мал: под угрозой лишения владений армянских феодалов принуждали отступиться от своей веры. Многие армянские феодалы пытались принять духовного сана спасти часть своих имений от захвата⁷.

Внимательное изучение исторических источников показывает, что вождям туркменских кочевых племен, утвердившихся с начала XIV в. в долине Сурмали или в области Чакатк Араратской области, удалось создать собственное княжество и, постепенно расширяя его, к началу XV в. распространить свою власть на всю Араратскую область. Фактически этим временем и можно датировать начало иностранного владычества в Араратской области.

Первые упоминания о туркменских эмирах, правивших в Араратской области, мы находим в книге Товмы Мецопеци "История Ланк-Темура и его преемников". Описывая поход Тимур-Ленга 1387 г. Мецопеци рассказывает о том, как жители селения Кохб, находящегося в Сурмали, предводительствуемые танутером Мартиросом, укрепились на горе Бардуг и оказали упорное сопротивление чагатайским войскам. Однако после ухода Тимур-Ленга местный властитель, туркменский князь Са'д, столкнул танутера Мартироса в Аракс, и последний утонул⁸.

Продолжительное время сведения о туркменских властителях Араратской страны ограничивались неполными данными Мецопеци, пока не был издан в 1955 г. первый том "Памятных записей армянских рукописей XV в." Л. Хачикяна, где собраны все материалы, относящиеся к 1401 — 1450 гг. Благодаря данным этих памятных записей выясняется, что власть Эмир Са'да, а затем его сыновей и внуков в Араратской области длилась до 30-х годов XV в. Так, в памятной записи на Евангелии, переписанном в 1411 г. в Багаранской крепости Агджакала, написано: "Во времена сурового властвования Юсуф-хана из племени стрелков и в паронство Пйр-Хусейна, когда христиане были обложены налогами и притеснялись иноплеменниками, повсюду стал исчезать порядок и повсюду усилились несправедливости"⁹.

В памятной записи на другом Евангелии, скопированном год спустя в Карсе, отмечено, что восстановление города предпринято „правосудным пароном Пйр-Хусейном“¹⁰. Далее на листе 432_б Служебника, переписанного в 1414 г. в Ошакане, также зафиксировано,

⁵ Л. Хачикян, *Памятные записи армянских рукописей XV в.*, ч. I, Ереван, 1955, стр. 353—376 (на арм. яз.).

⁶ О. Акопян, *Путевые заметки*, стр. 109.

⁷ Об этом подробнее см.: А. Папазян, *Институт «бейт-ул-мал» и конфискация земель армянских феодалов в XV в.*, — «Историко-филологический журнал», Ереван, 1958, № 2, стр. 193—203 (на арм. яз.).

⁸ Товма Мецопеци, *История Ланк-Темура и его преемников*, Париж, 1860, стр. 17—18 (на древнеарм. яз.).

⁹ Л. Хачикян, *Памятные записи...*, ч. I, стр. 124.

¹⁰ Там же, стр. 132.

что рукопись была скопирована „в царствование Юсуфа и Пир-Хусейна, сына Са'да“¹¹.

Данные указанных памятных записей позволяют с уверенностью утверждать, что с 1411 г., если не раньше, в Араратской области правил Пир-Хусейн, сын Эмир Са'да. Одновременно выясняется, что во время правления Пир-Хусейна границы основанного его отцом Са'дом эмирата расширились, включив город Карс и его окрестности¹².

Мы считаем, что основателем эмирата был именно Эмир Са'д не только потому, что его имя в источниках упомянуто первым, но и потому, что с начала XV в. Араратскую область по его имени начали называть Чухур-Са'д — چخور سعد (в армянских источниках Сахата пос — Սախատի քաղաք), что означает „Са'дова котловина“. Еще более серьезным основанием для такого предположения служит факт, что все туркменские племена, которые на протяжении XIV в. переселились из Средней Азии и обосновались в Сурмали, Ерасхадзоре и в Араратской долине, т. е. в районах, расположенных по берегам Аракса, в XV в. уже именовались Са'длӯ (سعدلو). Известно, что многие кочевые племенные объединения, которые в XV — XVI вв. образовались на территории Азербайджана и Армении, назывались по именам объединивших их начальников племен¹³.

Первое известное упоминание названия Чухур-Са'д относится к 1428 г. Оно содержится в древнейшей арабской грамоте на владение селом Вагаршапат (Эчмиадзин); продаваемый объект (село Вагаршапат) фиксируется как „одно из сел нахиче Қарби, входящего в вилайет Чухур-Са'д“¹⁴. В этой же грамоте многие лица, выступающие в качестве свидетелей, именуют себя „са'ди“ (са'дец).

Можно не сомневаться, что кочевники-завоеватели назвали Араратскую долину „Чухур-Са'дом“ еще при жизни Эмир Са'да, по всей вероятности, в конце XIV в. Это наименование сначала несомненно относилось только к Ерасхадзору, долине Сурмали и окрестным местностям, однако, когда эмир Са'д, а в дальнейшем его сыновья расширили границы своих владений, название Чухур-Са'д распространилось и на всю подчиненную им область или вилайет¹⁵.

Последняя памятная запись, где упоминаются эмиры Са'длу, относится к 1425 г. Она была написана в центральной части Араратской области — Котайке, в местности, именуемой Дзагаванк; в качестве паронов (владельцев) страны упоминаются имена Пир-Гайба и 'Абдулы, внуков Эмир Са'да. Однако неясно, являются ли они сыновьями

¹¹ Там же, стр. 162.

¹² 'Абд ар-Раззак ибн Исхак Самарканди в первой части своей законченной в 1470 г. истории считает Нахичеван и Сурмали «древним юртом сыновей Са'да» (см. «Матла' ас-са'дейя», изд. М. Шафй, т. I, стр. 437, перс. текст). Это свидетельство дает основание предполагать, что если не сам город Нахичеван, то равнинные пространства, лежащие к северу от него, так же как и Шарурская долина и прилегающие к ней районы, какое-то время подчинялись сыновьям Са'да.

¹³ И. П. Петрушевский, *Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI — начале XIX вв.*, Л., 1949, стр. 94.

¹⁴ «Матенадаран», Архивный отдел, Диван католикоса, папка I з. док. 1004.

¹⁵ В персоязычной литературе XVI—XVII вв. название Чухур-Са'д обычно переводится как «Счастливая котловина» или «Счастливая долина». Это буквальное, если можно так выразиться, чисто книжное (литературное) объяснение было принято Шарденом, когда он, отмечая, что в XVII в. и гора Арарат именовалась местными жителями Сахат-Топуз, переводит это выражение как «Счастливая вершина» («Voyages du chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient», t. III, Paris, 1811, p. 190). Однако нам кажется, что наименование Сахат-Топуз связано с вышеупомянутым армянским названием Сахата пос.

Пир-Хусейна или кого-либо другого; их отчество не приводится в „паронство (владычество) Пир-Гайба и Авдула, внуков Сахата“¹⁶.

Как видим, сохранившиеся в памятных записях данные об эмирах Са'длу довольно скудны, и с их помощью нельзя выяснить точные даты правления Са'да, его сына Пир-Хусейна и внуков — Пир-Гайба и 'Абдулы. Заслуживает внимания памятная запись на Евангелии, переписанном в 1432 г. в городке Бджни (входил в вилайет Чухур-Са'д). В этой записи, между прочим, сказано: „... в тяжкие и недобрые времена, в 861 г. армянского летосчисления (1432 г. н. э.), при отсутствии в Араратской области власти“¹⁷.

Можно предположить, что в смутные годы правления сына Амир-Юсуфа Кара-Коюяну, Искандера, когда последний расправлялся с господствовавшими в отдельных областях феодалами, его преследованиям подверглись также эмиры Са'длу и некоторое время в Араратской области не было местных князей. Это продлилось, по видимому, до 1437 — 1438 г., когда после убийства Искандера на престол в Тавризе вступил его брат Джаханшах.

В 1441 г. в пространной памятной записи, посвященной истории перемещения патриаршего престола всех армян из Сиса (Киликия) в Эчмиадзин Товма Мецопеци упоминает „владельца Араратской страны“ некоего Якуб-бека. Представляется вероятным, что этот Якуб также был потомком эмир Са'да, так как известно, что Джаханшах восстановил все права тех феодалов, которые подверглись преследованиям при его брате Искандере.

У Шараф-хана Бидлиси есть свидетельство о том, что некий Хусейн Са'длу вместе со своим войском участвовал в походе Джаханшаха на Хорасан (1458 г.) и после завоевания Астарабада был назначен правителем этого вилайета. Однако спустя немного времени Мирза Султан Хусейн хорасанский нанес поражение Хусейну Са'длу и вновь захватил Астарабад¹⁸. Этот факт доказывает, что действительно во время правления Джаханшаха Са'длу восстановили свои княжеские права и в качестве начальников кочевых племенных объединений заняли важное место в военно-феодальной иерархии.

Относительно эмиров, правивших в Араратской области во второй половине XV в., не сохранилось почти никаких сведений. Есть лишь некоторые отрывочные данные о том, что в 1460-х годах Чухур-Са'дской областью управлял Хасан-'Али¹⁹, сын Джаханшаха, взбунтовавшийся против своего отца.

Заслуживает внимания тот факт, что после 1452 г. в памятных записях рукописей, написанных в пределах Араратской области, больше не упоминаются имена местных эмиров или паронов. Писцы лишь отмечали, что „в ханство“ или „в царствование Джаханшаха“, „в господство над страной Армянской Джаханшаха Туркменского“ или же „в ханство Узун-Хасана“, „в ханство“, или „в паронство Хасан-бека“ и т. д.²⁰

Следует, однако, отметить, что в рукописях, написанных в те же годы в других областях Армении, часто упоминаются имена мест-

¹⁶ Л. Хачикян, *Памятные записи...*, ч. I, стр. 335.

¹⁷ Там же, стр. 421.

¹⁸ Scheref, prince de Billis, *Scheref-nameh ou histoire des Kourdes*, publié... par V. Veliâminol-Zernof, texte persane, t. III, SPb., 1862, p. 138.

¹⁹ Аракел Даврижеци, *История*, Вагаршапат, 1896, стр. 423 (на древнеарм. яз.).

²⁰ Л. Хачикян, *Памятные записи...*, ч. I, стр. 534, 551, 560—561, 604, 606; ч. II, Ереван, 1958, стр. 4, 15, 18, 33, 82, 85, 120, 131, 132, 133, 134, 156, 214, 230, 232, 244, 283, 315, 316, 337, 347 и др.

ных эмиров²¹. Это дает основание предположить, что во второй половине XV в. в Араратской области либо не было правивших на месте эмиров, либо, если таковые были, они не пользовались широкими правами.

Единичные данные памятных записей больше касаются периода правления сына Эмир Са'да — Пир-Хусейна. Это, конечно, не случайно. Второе десятилетие XV в. было редким для этого периода времени, когда, как пишет Товма Мецопеци, „хотя взимали много налогов, однако мир не нарушался мятежами“²².

И вот в скупых строках памятных записей, сделанных в эти годы „безмятежного мира“, особо отмечены строительные работы Пир-Хусейна, преимущественно по восстановлению г. Карса. Можно не сомневаться, что при Пир-Хусейне подобные восстановительные работы, так же как и строительство, велись и в других областях Чухур-Са'дского вилайета. К ценным образцам таких строений относится каменная гробница села Аргаванд (бывший Джафарабад), в 8 км на запад от Еревана, по дороге, ведущей в Эчмиадзин.

В качестве архитектурного памятника гробница взята на учет Государственным комитетом по делам строительства и архитектуры при Совете Министров Армянской ССР, однако она не привлекла внимания археологов, и до сих пор не прочтена и не опубликована находящаяся на ней арабская надпись. С сообщением о наземной части гробницы выступил в свое время на студенческой научной конференции студент Ереванского политехнического института, ныне научный сотрудник Проектного института Б. Арутюнян. Подземная часть гробницы засыпана землей и ожидает археологического раскопок.


На первый взгляд эта гробница кажется второстепенным археологическим объектом по сравнению с другими находящимися на территории Армении памятниками тысячелетней давности. Однако даже частичные раскопки этой гробницы помогли выяснить ряд вопросов, связанных с семьей Са'длу и периодом их правления.

В отличие от других находящихся на территории Закавказья мусульманских гробниц, построенных из кирпича, гробница в Аргаванде построена из местного туфа. Это двенадцатигранное сооружение высотой в 12 м. Мавзолей с внутренней стороны образует в своей наземной части окружность диаметром в 500 см. Цокольная часть гробницы сложена из плотного туфа, который уложен в три ряда общей высотой в 56 см. Первый ряд представляет круглый в плане плит высотой в 20 см. Второй ряд выложен в форме двенадцатигранника с откосом в верхней части высотой 20 см, и, наконец, венчающая часть цоколя образует двенадцатигранный в плане валик радиусом 8 см, который отступает от стены на 6 см. По высоте гробница делится двойным валиком на две части.


Многогранник, включая фризовую часть и карниз, сложен из чисто отесанного красного туфа. Плоскости стен — гладкие и не имеют декоративных украшений. Выше горизонтальной тяги угловые переходы граней смягчены тоненькими полуколоннами, по сторонам которых высечен в камне волнистый узор. Это характерный элемент армянской средневековой архитектуры, который наряду с высеченными на камнях знаками мастеров, представляющими армянские буквы (U, 4, S), дает возможность предполагать, что строительство этого памятника было осуществлено армянскими архитекторами и каменщи-

²¹ Там же, ч. II, стр. 126, 194 и др.

²² Товма Мецопеци, *История...*, стр. 73.



Общий вид гробницы с юго-востока



Фотоснимки надписи по двенадцати граням

ками. На высоте 12 камней от цоколя расположены два маленьких световых проема, ориентированных на север и юг. Украшенная резьбой сводчатая дверь гробницы находится в восточной стене. Наполгину разрушенный купол первоначально был целиком покрыт синими изразцами, сохранились остатки темно- и светло-синего кирпича²³.

Широкий пояс фриза, находящегося непосредственно под карнизом купола, целиком покрыт арабской надписью. Весь фриз сложен из красноватого туфа шириной в 50 см; по всей длине пояса на расстоянии 5 см от верхнего и нижнего краев хорошим насхом сделана красивая арабская надпись²⁴. Благодаря тому что надпись находится под карнизом и на довольно значительной высоте, она сохранилась почти без повреждений. Надпись сделана так, что начало и конец ее сходятся высоко над входом в мавзолей, так что ее фотографирование связано со значительными трудностями.

При фотографировании отдельных частей надписи на каждой стене частично оказалась снятой и часть соседних стен, направо и налево от надписи. В известных положениях они получились удачнее, чем центральные части. Для того чтобы облегчить сличение надписи с расшифровкой, фотоснимок каждой грани дан вместе с определенной частью соседних граней, правой или левой, либо обеих вместе.

Получить более удачный снимок пока невозможно; расшифровка надписи производилась в основном на месте. Большую часть надписи можно было прочесть невооруженным глазом, некоторые же части — с помощью бинокля.

Арабский текст надписи

بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِیْمِ اللّٰهُ لَا اِلٰهَ اِلَّا هُوَ الْحَيُّ الْقَیُّوْمُ لَا تَاْخُذُهٗ سِنَةٌ وَّلَا نَوْمٌ لَّهٗ مَا فِی السَّمٰوٰتِ وَّ مَا فِی الْاَرْضِ مَنْ ذَا الَّذِیْ یَشْفَعُ عِنْدَهٗ اِلَّا بِاِذْنِهٖ یَعْلَمُ مَا بَیْنَ اَیْدِیْهِمْ وَّ مَا خَلْفَهُمْ وَّلَا یُحِیْطُوْنَ بِشَیْءٍ مِنْ عِلْمِهٖ اِلَّا بِمَا شَاءَ وَسِعَ کُرْسِیُّهٗ السَّمٰوٰتِ وَّ الْاَرْضَ وَّ لَا یَـُٔوْدُهٗ حِفْظُهُمَا وَّ هُوَ الْعَلِیُّ الْعَظِیْمُ. اَمْرٌ بِاَنْشَاءِ هٰذِهِ الْقَبْرِ الْمُبَارَکَةِ الْاَعْظَمِ الْاَکْرَمِ مَجْمَعِ الْمَکْرَمِ وَّ الشِّیْمِ عَضْدِ الْمُلُوْکِ وَّ السَّلٰطِیْنِ مُلْجِآءِ الضَّعْفَا وَّ الْمَسٰکِیْنِ مَرْبِیِّ الْعِلْمَا وَّ الطَّالِبِیْنِ مَعِیْنِ الْفُقَرَا وَّ السَّالِکِیْنِ جَلَالِ الدَّوْلَةِ وَّ الدِّیْنِ الْاَمِیْرِ پِیْرِ حَسَنِیْنِ دَامَتْ مَعْدَلَتُهٗ اَبْنِ الْاَمِیْرِ الْمَرْحُوْمِ الْمَغْفُوْرِ الدَّارِجِ اِلٰی جَوَارِهٖ لِمَغْفُوْرِ الْاَمِیْرِ سَعْدِ طَا [ب] ثَرَاهُ فِی اَیَّامِ دَوْلَةِ السَّلْطٰنِ الْاَعْظَمِ خَاقَانَ الْاَکْرَمِ سُلْطَانَ السَّلٰطِیْنِ شَرْقًا وَّ غَرْبًا مَعِیْنِ الدَّوْلَةِ وَّ الدِّیْنِ پِیْرِ بُوْدَاقِ خَانَ وَّ یُوْسُفِ نَوِیَانَ خَلَّدَ اللّٰهُ مَلِکَهُمَا فِی تَارِیْخِ خَامِسِ عَشْرِ رَجَبِ الْاَصْحَمِّ لِسَنَةِ سِتِّ وَّ عَشْرِ وَّثَمَانِهٖ مَایَهٗ

²³ По всей вероятности, из-за этого синего купола примыкающее к селу Аргаванд село Геханист в прошлом называлось Гёггюмбет (синий купол). Прежнее село Джах-фарабат (ныне Аргаванд) возникло позднее, отделившись от села Гёггюмбет и включив в свои пределы значительную часть земель последнего, в том числе и упомянутую гробницу с окружающей землей.

²⁴ Это краткое описание внешнего вида гробницы взято из ненапечатанного сообщения Б. Арутюяна.

„Во имя аллаха милостивого и милосердного!

Аллах... Нет [другого] божества, кроме него, бессмертного, при-
сносущего! Его не объемлет ни дремота, ни сон: в его власти все,
что на небесах, и все, что на земле. Кто может ходатайствовать пред
ним без его позволения? Он знает, что пред ними и что позади них,
они же постигают из его знания только то, что ему угодно. Престол
его обширнее неба и земли, и не бремя для него хранение их обоих;
она высокий, великий.

Сию святую куполообразную гробницу [губба] повелел постро-
ить величайший и превосходнейший, наделенный благородством и
и добрым нравом, опора царей и султанов, прибежище убогих и
отверженных, покровитель мудрецов и жаждущих знания, вспомоше-
ствователь нищих и страждущих, слава государства и религии эмир
Пир-Хусейн, — да продлится его справедливое правление, — сын по-
койного и милосердного душой Эмир Са'да, отправившегося в объ-
ятия наимилосерднейшего, — да пребудет чистой его земля, — в цар-
ствование великого царя, наищедрейшего хакана, царя царей Востока
и Запада, опоры государства и веры Пир-Будак хана и Юсуф ной-
яна, — пусть господь сделает их власть вечной, — в 816 году, 15-го
числа мирного месяца раджаба (11 октября 1413 г.)“.

Первая часть текста представляет собой 256-й стих 2-й суры
Корана — так называемый престольный стих, который встречается на
многих мусульманских гробницах²⁵, в том числе и на тех, что нахо-
дятся в пределах Армении. Во второй же основной части сказано
только, по чьему приказанию и когда была построена гробница, и
ни слова нет о лице или лицах, похороненных там. Дата надписи —
15-е число месяца раджаба 816 г. хиджры (11 октября 1413 г.), ве-
роятно, и является датой, указывающей время завершения построй-
ки, когда после похода Тимур-Ленга в большей части Азербайджана
и Армении утвердил свое господство эмир Юсуф Каракуюнлу.
В 1409 г. в Тавризе он возвел на трон своего сына Пир-Будага, оста-
ваясь в роли регента и верховного главнокомандующего²⁶. Именно
по этой причине имя Пир-Будага упоминается в надписи раньше име-
ни Юсуфа, который величается в ней лишь титулом „нойяна“. Пир-
Будак умер в месяце ша'бана 816 г. хиджры (ноябрь 1413 г.), т. е.
примерно через месяц после обозначенной в надписи даты. Лишь
после этого эмир Юсуф вновь вступил на трон и повелел упоминать
свое имя в хутбах²⁷.

Во время беседы с жителями села Аргаванд выяснилось, что,
кроме упомянутой гробницы, там были еще два других, меньших по
размеру куполообразных строения, которые обрушились, а камни их
были использованы на ближайшем строительстве. На этих камнях
также сохранились армянские инициалы имен каменщиков. Кладка
каменей и другие архитектурные особенности свидетельствуют, что
эти разрушенные гробницы были выстроены в одно время с исследу-
емой гробницей. Жители села утверждают, что на этих гробницах
не было надписей и по внешнему виду они были намного беднее и

²⁵ См., например, надпись на могиле сына Тимур-Ленга Мираншаха (А. А. Семенов, *Надписи на надгробиях Тимура и его потомков в Гур-и Эмире*, — «Эпиграфика Востока», VII, М.—Л., 1952, стр. 52).

²⁶ См.: V. Minorsky, *The Qara-qoyunlu and the Qutb-shahs*, — «Bulletin of the School of Oriental and African studies», vol. XVII, pt 1, London, 1955, p. 58.

²⁷ *Ibid.*, p. 61.

проще. На камнях, использованных на ближайшем строительстве, также не удалось обнаружить каких-либо следов надписи.


Факт существования при гробнице, построенной Пйр-Хусейном, других мусульманских гробниц позволяет предположить, что это место было родовым кладбищем Са'да и его преемников²⁸. В то же время это означает, что уже в начале XV в. Эмир Са'ду удалось распространить свою власть на левобережные районы Аракса и почти целиком подчинить центральную часть Араратской области. Следует также сделать вывод, что если не раньше, то во всяком случае при сыне Са'да — Пйр-Хусейне Ереван стал административным центром Араратской области и резиденцией господствовавших там эмиров Са'длу. Иначе нельзя объяснить факт такой близости родового кладбища к Еревану.

Частичное изучение внутреннего помещения гробницы показало, что в самом центре пола имеется круглое отверстие, книзу от которого пространство постепенно расширяется и образует подземный этаж гробницы, построенный из тесаного камня. По всей вероятности, в западной стене этой подземной части должна находиться дверь, через которую можно пройти в самый склеп, где и должны быть могилы с надгробиями и надписями, похожие приблизительно на находящийся в Самарканде родовой склеп Тимура и его наследников²⁹.

Однако все это остается лишь предположением, пока не будут произведены раскопки внутри гробницы и пока, в случае если там сохранился какой-либо надгробный камень, не будут прочтены имеющиеся на нем надписи. Можно не сомневаться в том, что подобные эпиграфические материалы в значительной степени помогут выяснить многие вопросы, касающиеся истории Армении конца XIV — начала XV вв.

²⁸ Заслуживает внимания тот факт, что очень близко от гробницы находится древнее армянское кладбище села, где сохранился фундамент церкви, относящейся, по видимому, к VII в.

²⁹ См. указанную статью А. А. Семенова.



СООБЩЕНИЯ И ПУБЛИКАЦИИ

А. Д. Палазян

К вопросу о техническом значении налогового термина
„малоджахат“

В восьмой главе своего монографического труда „Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков“ проф. И. П. Петрушевский, подробно рассматривая налоги, взимавшиеся с населения в период ильханства, в специальном подзаголовке „Поземельная подать при ильханах, ее категории и термины“ рассматривает часто встречающиеся в первоисточниках этого периода термины „харадж“, „мал“, „малоджахат“, „багра“ и „ушр“.

Выводы автора относительно упомянутых налоговых терминов и их характера являются результатом серьезного и тщательного изучения многочисленных первоисточников и представляют собой большую научную ценность. Можно утверждать, что от внимания автора не ускользнули все известные, а большей частью неизвестные данные первоисточников, что позволило ему с использованием выводов предшествовавших исследователей сделать интересные и убедительные обобщения.

Вопросы истории социально-экономических отношений периода ильханства никогда не являлись предметом нашего специального исследования. Интерес к первоисточникам этого периода возник у нас в связи с вопросом генезиса некоторых феодальных институтов сефевидского периода XVI—XVII веков, институтов, которые своим происхождением связаны с ильханством и с более ранними периодами и об историческом развитии которых нельзя составить правильного представления без близкого знакомства с первоисточниками XIII—XV веков.

Именно с этой точки зрения настоящий труд И. П. Петрушевского имеет важное значение и весьма облегчает труд исследователей истории социально-экономических отношений этого и последующих периодов. Это в особенности относится к социальным, административным, экономическим и, в частности, к налоговым терминам, значительная часть которых сохранилась и в период господства Сефевидов.

Наиболее важным из налоговых терминов является термин „малоджахат“, который упоминается в первоисточниках начиная со второй половины XIV и сохраняется до начала XIX века. Мнения исследователей о техническом значении этого термина в основном совпадают. И. П. Петрушевский, обобщая все это, утверждает, что „из термина **маль** образовался термин **мал-у-джихат** (**маль** и **джихат**, ар.).

Это сложное выражение образовалось из слов *маль*, в значении денежного сбора, и *джихат* (мн. ч. от *джахат*)—букв. „причины“, „стороны“, терм. „объекты обложения“, также „сборы (натурой)“. Далее приводится заключение В. Ф. Минорского о техническом значении „джихат“ а, согласно которому он должен означать „подати иные, нежели денежные“, т. е. налоги, уплачиваемые натурой. Отсюда он заключает, что „техническое значение этого сложного термина—поземельная подать деньгами и натурой“. И добавляет, что „в источниках мал-уджихат употребляется как синоним термина „харадж“¹.

В нашей диссертационной работе, представленной к защите в 1954 году, мы, касаясь вопроса налогов, взимаемых с населения в XVII веке, на основе совершенно новых архивных документов, пришли к тому заключению, что, хотя малоджахат упоминается в первоисточниках часто как отдельный налог, однако в действительности он заключал в себе два разных налога—„мал“ и „джахат“. Одновременно мы отмечали, что вследствие одновременного взимания этого налога они упоминаются вместе, откуда и создано представление, что это одна налоговая повинность. В изданном нами в 1956 г. первом выпуске „Указов“ серии „Персидских документов Матенадарана“ мы дали такое же объяснение этому налоговому термину, отметив при этом, что „малоджахат составлял большую часть ренты-налога, собираемого с населения, который взимался с райатов в раз и навсегда установленных размерах. Поэтому весьма часто под этим названием разумели и другие налоги, взимаемые с данного объекта; в данном случае „малоджахат“ усматривался как собирательный налоговый термин“².

И. П. Петрушевский берет под сомнение эту точку зрения³, выдвигая ряд доводов, на которых считаем необходимым остановиться ниже.

В автореферате диссертации и в первом выпуске „Указов“ мы отмечали, что термин „мал“ вообще обозначал налог или подоходный налог, который взимался с различных видов собственности. На странице 376 своего труда И. П. Петрушевский возражает этому нашему объяснению, однако нам кажется, что нет особенно большой разницы между нашим объяснением и следующим объяснением термина „мал“, которое дано И. П. Петрушевским: „В рассматриваемый период, и даже еще в XI в., *маль* как налоговый термин имел двойное техническое значение: 1) „налог вообще“, „податные суммы“, „всякий налог“ и 2) специально „поземельная подать; иначе говоря—синоним

¹ И. П. Петрушевский, *Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков*, М.—Л., 1960, стр. 374.

² См. составленные нами „Персидские документы Матенадарана“, 1, Указы (далее—ПУМ), выпуск первый, Ереван, 1956, стр. 232.

³ См. стр. 376—377 упомянутого труда И. П. Петрушевского. Автор указывает только автореферат нашей диссертационной работы. Было бы правильнее указывать более поздние работы того же автора, относящиеся к этим вопросам, тем более, что по признанию И. П. Петрушевского ему была недоступна наша диссертационная работа, написанная на армянском языке.

термина харадж. В первом общем и неопределенном значении термин „маль“ в источниках встречается постоянно. Во втором специальном значении поземельной подати термин „маль“ в источниках появляется реже⁴. Затем на следующей странице, объясняя термин „малоджахат“, автор, как мы отметили выше, считает его составленным из термина „маль“ и, как это ни странно, рассматривает его как лишь поземельную подать.

В XVI—XVII вв. малоджахат, несомненно, являлся также и земельным налогом, или скорее рентой-налогом, выплачиваемом государству, но не только таковым. Имеются факты, когда малоджахат взимался также с мельниц, дингов (толчей), маслобоен и прочей приносящей доход собственности, в качестве подоходного налога⁴. Основным доходом земледельческого крестьянства являлся урожай, следовательно в деревне малоджахат отождествлялся с земельным налогом.

Мы согласны с И. П. Петрушевским в том, что „малоджахат“ является сложным термином и образован соединением терминов „мал“ и „джахат“. Однако он ошибается, когда рассматривает его как сложное слово и сравнивает с такими сложными словами, как *دادوستد*, *سؤال جواب*, *آملورفت*. Эти сложные слова выражают противоположные действия, совершаемые одновременно двумя сторонами⁵. Если принять, что малоджахат является сложным словом, то правильнее его сравнивать с *دادو فریاد*, *بندوبست*, *سازو برك* и с многими подобными сложными словами, в которых с помощью союза соединены понятия не противоположного, а синонимного или приблизительно одинакового характера и от соединения которых не получается нового смысла, а возникает лишь некоторое его расширение.

Для доказательства того, что малоджахат является сложным словом, выдвинуто также и то обоснование, что обычно в первоисточниках и документах он пишется не раздельно *مال و جهات*, а слитно *مالوجهات*. Занимающимся древними рукописями и текстами хорошо из-

⁴ См. указ Надир шаха 1735 г. Эчмиадзинскому католикосу Абрааму и прошение последнего шаху. Матенадаран, Диван католикоса, п. Iг. док. 354. *میرزا کاظم ضابط از باغات و آسیاب و ذنکیخانه و بزرخانه و مراعی و کاو و کوسفند و دکاکین و کاروانسرا و حمام که در اوچ کلیسیاست مالوجهات مطالبه و از سایر* Мирза Казим забит требует малоджахат с находящихся в Учкилисе (Эчмиадзине) садов, мельниц, толчей, маслобоен, четвероногих, коров, овец, магазинов, каравансараев и бани и с других монастырей также требует“. Ср. Симеон Ереванци, Джамбр, М., 1958, стр. 214—216. См. также ПУМ, вып. 2, док. 2, 34, 36.

⁵ Эта форма словообразования присуща и армянскому языку. Такими сложными словами являются, например, *տակույր*, *երթկկկ*, *կլուկուկ*. В азербайджанском они создаются без помощи союза — „адышверыш“ или „алвер“, „гэлипгетмаг“ или „гэлгет“ и т. д.

вестно, что в средневековых персидских, да и не только персидских, рукописях не было определенных законов раздельного или слитного правописания, и писцы присоединяли или разделяли слова по своему усмотрению. Однако в течение долгих лет, в процессе переписывания рукописей возникли определенные формы соединений слов, которые, не будучи обязательными, традиционно применялись вплоть до XIX века.

Так в документах XV—XVII вв. часто встречаются следующие словосоединения, которые совершенно несовместимы с правилами правописания современного персидского языка, *خلاف حکم، حکم جہان مطاع، درین وقت، درینولا، بہمان دستور، بدین موجب، بدین موجبست، صرف نمایند، عمل نمایند، قبل برین، محال مذکورہ، محال مزبورہ* и т. д.⁶ Характерно, однако, что писцы допускали словосоединения большей частью в тех случаях, когда первое из двух слов оканчивалось на буквы *ن* и *ف* и особенно на *ل*⁷. Приведенные примеры, как видим, не представляют собой сложных слов, подобно тому, как соединение слов *جهات* и *مال* не образуют сложного слова. Они пишутся слитно лишь потому, что всегда упоминаются вместе и, согласно вышеизложенному, последняя буква *ل* слова *مال* соединяется с непосредственно следующим за ней союзом *و*⁸.

Нам представляется, однако, что в данном случае мы имеем дело не с морфологическим, а синтаксическим явлением персидского языка. Дело в том, что в персидских рукописях и официальных документах при перечислении различных понятий было принято располагать их в порядке очередности—от самых важных до наименее важных; при этом понятия, сходные по содержанию и смыслу, обычно упоминались вместе. С этой точки зрения характерно, например, перечисление представителей различных социальных слоев в начале указов⁹. А еще бо-

⁶ ПУМ, вып. 1, стр. 271, 275, 293, вып. 2, стр. 467, 475, 487, 497, 505, 506, 512, 517, 519, 525, 535, 538, 539, 540 и т. д.

⁷ *عمل نمایند، محال مذکورہ، محال مزبورہ، قبل برین* и т. д. См. ПУМ, Вып. 2, факсимиле документов № 4, 18, 29. Часто в конце указов слитно писались также слова *فی شهر ربیع الاول سنہ...*

⁸ В документах, написанных письмом шикасте, союз *و* соединяет—с другой стороны также с *ج* слово *جهات*, что весьма характерно для этого письма.

⁹ *امرا و حکام و داروغگان و اصول و اعیان و اشراف و اہالی و ملکدان و...* См. например ПУМ, вып. 1, док. 3, см. также документы 2, 4, 6, 8. Как отмечает также И. П. Петрушевский (стр. 373), сочетание двух слов одинакового или почти одинакового смысла является особенностью вообще персидского (и не только персидского) языка рукописей (*الوسات و احشامات، اجامر و اوباش*). Это явление характерно также для языка указов XV—XVIII вв. В указах часто встречаем *مضمون و مدلول، اسوہ و قدوہ، عرف و عادت، اغزاز و اکرام، محترزو و مجتنب*

тиулдар или хамесаледар с данного села или с другого податного объекта, а также какая часть общей суммы приходится на долю каждого налога.

В архивных фондах Матенадарана имеются многочисленные подобные указы, которые в своем большинстве относятся к XVII—XVIII вв. Некоторые из них содержат весьма ценные данные о значении термина „малоджахат“. Особенно ценны два важных указа второй половины XVII века. Их факсимиле, расшифрованный текст и русский перевод даются в конце настоящей статьи. Эти указы убедительно свидетельствуют о том, что хотя в большей части первоисточников малоджахат упоминается в качестве одного единого налога, однако он содержит в себе два разных налога— „мал“ и „джахат“, причем напротив каждого из них в налоговых журналах записаны отдельные суммы.

Так, из указа Шах Аббаса II, данного райатам трех сел Татевского монастыря в месяце джумада I 1071 г. хиджры (2—31 января 1661 г.), выясняется, что тиулдар монастырских сел Такаббур султан должен был получить с села Агакянди (Аганц) 24741 динар, из коих 19497 динаров в счет малоджахата, а 5244 динаров в счет тафавут-е джизья. Затем из 19497 динаров 16664 динара записаны в качестве мала, а 334 динара— в качестве джахата, остальные 2499 динаров— проценты, набжавшие на мал. Тот же тиулдар получал с монастырского села Свари (Сваранц) 29138 динаров, из коих 11750 динаров в счет малоджахата и 17388 динаров в счет тафавут-е джизья. Из 11750 динаров за малоджахат, 1500 динаров представляют собой проценты за мал, а 10250 динаров— основная сумма, из коей 10000 динаров записаны как мал, а 250 динаров в качестве джахат.

Более интересным является указ, данный Шахом Сулейманом настоятелю Татевского монастыря варданету Ованнесу в месяце зихаджа 1097 г. хиджры (19 октября—16 ноября 1686 г.), в котором суммы, получаемые тиулдаром с 8 монастырских сел, записаны в раздельности против мала, джахата и тафавут-е джизя. Здесь даже не дана общая сумма мала и джахата, а в некоторых случаях сумма джахата даже приплюсована к другим налогам, как например к тафавут-е джизья или бахраче.

По этому указу вышеупомянутые 8 монастырских сел выплачивали своему тиулдару в числе других налогов:

1. Агакянди	— мал	16664 дин.,	джахат—	402 дин.
2. Тандзатап	— „	4784 „	„	96 „
3. Борди	— „	14620 „	„	300 „
4. Свари	— „	10000 „	„	287 „
5. Тех	— „	16800 „	„	499 „
6. Киц	— „	15091 „	„	1228 „
7. Кешишкянди	— „	1820 „	„	51 „
8. Ехенг	— „	20000 „	„	575 „

Таким образом, становится ясным, что еще в конце XVII века в налоговых книгах против мала и джахата записывались отдельные суммы и если в указе 1661 г. дана общая сумма малоджахата, с указанием того, какую часть этой суммы составляет мал и какую джахат, то в указе 1686 г. общая сумма малоджахата не приведена вовсе и мал и джахат выступают в качестве не связанных друг с другом повинностей.

Само собой разумеется, что малоджахат не мог быть ранее единым налогом, а затем разделиться на два разных налога. Если он в конце XVII в. все еще упоминается в списках налогов в качестве двух отдельных повинностей, то не может быть сомнения в том, что в более ранний период он также был отдельным.

Что касается технического значения термина „джахат“, то надо отметить, что большая часть фактов говорит о том, что он являлся поземельным налогом. Иначе говоря, после XV в. он выступает вместо термина „харадж“. В первоисточниках XIII—XIV вв., как это справедливо отмечает И. П. Петрушевский, мал всегда упоминается вместе с хараджем, в форме „мал-у-харадж“¹³. Однако это явление им рассматривается в качестве сочетания синонимов. Нам кажется, что его надо рассматривать в качестве такого сочетания, каковым было сочетание терминов мал и джахат. Совместное упоминание этих двух терминов характерно также для тех указов XV в., которые написаны на основе указов предыдущего века и в которых все еще господствует старая терминология. Так например, в указах, данных Татевскому монастырю султаном Джаханшахом Кара-Койюнлу от 853 г. хиджры (1449 г.) и Хасаном-Али Кара-Койюнлу от 872 г. хиджры (1468 г.) читаем: „Не брать с его посевов, урожая и пахотных земель мал и харадж“; или: „... не брать мала и хараджа с посевов и пахотных земель их и связанных с ними людей“¹⁴.

Однако уже начиная с XV в. постепенно в первоисточниках и документах повсюду выражение „малохарадж“ заменяется „малоджахатом“. Достоин внимания и такой факт, что как в вышеупомянутых указах, так и в указах Шаха Исмаила от 908 (1503) г. и 912 (1506) г. хиджры „джахат“ употреблен в смысле „пахотных земель“ или посевных. Не заменил ли он в том же смысле „харадж“? Ведь из приведенных выше отрывков можно заключить, что харадж взимался с пахотных земель или с посевов, иными словами с „джахата“, а мал взимался с всякого рода имущества.

Несомненно, приведенные примеры не дают еще полного основания утверждать, что термин „джахат“ является синонимом су-

¹³ مال و خرج см. И. П. Петрушевский, ук. соч., стр. 373.

¹⁴ از مزروعات و ارتفاعات و جهات اومال و خرج نطلبند. از مزروعات و جهات ايشان و متعلقان مال و خرج نكبرند текст.

ществовавшему ранее термину „харадж“; однако, поскольку нет фактов, свидетельствующих об обратном, это предположение кажется наиболее вероятным. Но, не подлежит сомнению, что термин „джахат“ обладал самостоятельным содержанием.

Публикуемые ниже два указа Шаха Аббаса II и Шаха Сулеймана дошли до нас в шариатских копиях. Первый из них сделан в 1076 г. хиджры (1665—1666), т. е. через 5 лет после его обнародования, а второй—в 1098 (1687) г. хиджры т. е. всего через год после обнародования. Следовательно, они имеют для нас ценность оригинала. Кроме данных относительно малоджахата, представляющих определенный интерес для настоящей статьи, они содержат также много интересных данных о других налогах сефевидского периода, их исчисления и вообще о налоговой системе.

Важными являются, в частности, данные об исчислении налогов (баравард). Из этих расчетов выясняется, что предварительная сумма налога „мал“ всегда вчетверо умножалась¹⁵, а результат записывался как основная сумма (اصل). Приблизительно $\frac{1}{7}$ этой суммы записывалась в качестве вознаграждения тиулдару за разбор споров и ссор между райатами и называлась „полдинара эхдаса“¹⁶. Затем к основной сумме прибавлялось также 15% от нее, или, как сказано в документах, „один с половиной от десяти“, и сумма всего этого сразу взималась с райатов.

Почти такую же сложную картину представляет исчисление поголовного налога—тафавут-е джизья. Согласно указу Шаха Аббаса II он имел предварительную сумму, которая по всей вероятности и является самой джизья, к которой прибавлялась $\frac{1}{6}$ от этой суммы—в качестве разницы между курсом нового и старого золота (тафавут). Сумма этих двух записана в качестве „собственно суммы“ тафавут-е джизья, к которой вновь прибавляется 15% от нее. Однако в указе Шаха Сулеймана тафавут-е джизья имеет только предварительную определенную сумму (мукаррар), которая по тому же исчислению получает в разных селах различные надбавки. Это, видимо, также является следствием колебания курса золота. Таким образом, публикуемые документы позволяют сказать, что „тафавуд-е джизья“, который упоминается в первоисточниках лишь как единовременно уплачиваемый поголовный налог, также имеет в налоговых списках довольно сложный состав.

При расшифровке персидского оригинала публикуемых указов нами сохранена принятая в то время форма исчисления налога, если не считать, что из-за отсутствия соответствующего шрифта для знаков

¹⁵ С этой точки зрения примечательна приписка, сделанная на армянском языке на этой копии указа Шаха Сулеймана: „Это сават (копия) дастураламала пирадорта [сел] Борти, Аганца, Танлзатапа и Киц“. Сохранилась другая довольно неграмотная копия этого же указа (папка 26, док. 107а), на которой также написано: „Это сават хокма о пираторге Свари и других сел“. По всей вероятности, эта форма исчисления налогов называлась на месте по-азербайджански „бирадорт“, что означает „один на четыре“.

¹⁶ Об эхдасе см. ПУМ, вып. I, стр. 150 и 234—235.

„саяг“ налоговые суммы нами даны обычными цифрами, в расчете на динары. В русском переводе для большей ясности форма исчисления несколько изменена.

В пределах настоящей статьи нет возможности остановиться на всех данных публикуемых указов. Как эти, так и содержащиеся в других многочисленных документах налоговые списки подробно рассмотрены в нашей монографии, посвященной истории феодального землевладения Восточной Армении XVI—XVII вв., которая ныне подготавливается к печати.

Документ I

Он есть!

Власть принадлежит богу!

Место священной печати его святейшего величества.

Августейший указ последовал о следующем.

Ныне райаты и убогие нижеупоминаемых места Капаната:

1. Село Агакянди
2. Село Свари
3. Село Тандзатап,

сообщили, что вышеупомянутые места назначены в тиул прибежищу амирства Такаббур султану, меж тем последний совершает посягательства, и попросили священного указа.

Из утверждения великих мустовфиев выяснилось и стало известным, что малоджахат и другие [налоги] упомянутых мест назначены в тиул вышеупомянутому прибежищу амирства и согласно подсчету (баравард) получается в прилагаемой форме. Поэтому мы решили, чтобы упомянутое прибежище амирства взимало тиулные суммы согласно установленному великими мустовфиями дастур-ул-амалу и не совершал посягательств.

Бегларбеки обязан оказывать законную помощь и, принимая это как строгое предписание, считать своей обязанностью.

Написано в месяце джумада I 1071 г. (2—31 января 1661 г.).

Утвержденный мустовфиями подсчет тиулных сумм на оборотной странице документа

Общая сумма отданных в тиул налогов трех сел

1. Малоджахат	— 36755
2. Тафавут-е джизья	— 22632
	59387*

* Согласно нижеприведенному подсчету, общая сумма отданных в тиул налогов трех сел составляет 59393 динара. Ошибка идет от общей суммы малоджахата, которая согласно тому же подсчету должна быть не 36755, а 36761 динар.

СЕЛО АГАКЯНДИ И ПОЛЕ ДАРАЛУ

М а л о д ж а х а т

I. Основная сумма

1. Мал

а) Полдинара доли эхдаса,
чтобы при рассмотрении
тяжб [денег] на рассмотре-
ние не требовали 2083

б) [Остальное] 14581

$$4166 \times 4 = 16664 \quad \left. \vphantom{4166 \times 4 = 16664} \right\} 16998$$

2. Джахат 334

II. Процент, полтора из десяти в счет мала 19497

1. Одни из десяти 1666

2. Половина из десяти 833

Т а ф а в у т - е д ж и з ь я

I. Основная сумма

1. Собственно сумма 3800

2. Разница между старым
и новым золотом 760

II. Процент, полтора из десяти 684

Сумма: 24741

СЕЛО СВАРИ

М а л о д ж а х а т

I. Основная сумма

1. Мал

а) Полдинара доли эхдаса 1250

б) [Остальное] 8750

$$2500 \times 4 = 10000 \quad \left. \vphantom{2500 \times 4 = 10000} \right\} 10250$$

2. Джахат 250

II. Процент, полтора из десяти 1500

Т а ф а в у т - е д ж и з ь я

I. Основная сумма

1. Собственно сумма 12600

2. Разница между старым
и новым золотом 2520

II. Процент, [полтора из десяти] 2268

Сумма: 29138

СЕЛО ТАНДЗАТАП

[М а л]

I. Основная сумма

1. Полдинара эхдаса	598	}	5514
2. [Остальное	4186]		
	$1196 \times 4 = 4784$		
II. Процент. полтора из десяти	730		
<i>Сумма:</i>			5514

Регистрационные записи и пометки, подтверждающие верность копии подлиннику

Согласно предписанию прибежища благородства, везирства и счастья, высочайшего и прославленного этемад-уд-довле августейшей высокой державы.

Копия тугры этемад-уд-довле

Место печати этемад-уд-довле Мирзы-Махаммада-Мехди

Написан—печать

Внесен в дафтар сархата—печать

Просмотрен—печать

Печать даруга

Записан—печать

Со священнейшим, превосходнейшим и высочайшим подлинным верно, написал:

На печати можно прочесть имя „Максуд“

Сверено: *На печати читается дата 1076 г. (1665—1666)*

Матенадаран, Диван католикоса, папка 2а, док. 22.
размер 49×19 см. письмо шикастэ-настаалик.

Документ 2

Он есть!

Власть принадлежит богу!

Место священнейшей, превосходнейшей и высочайшей печати.

Августейший указ последовал о следующем.

Ныне настоятель Татевского монастыря в Капанате, христианин Ованнес доложил, что некоторые места являются вакфом упомянутого монастыря и управление ими поручено ему. Малоджахат и другие [налоги] упомянутых мест назначены в тиул хакиму упомянутой олки, меж тем последний [гребованием] эйди и саламане и другими шилтагатами и желаниями совершает беззакония. Калантар и мелик также совершают различные насилия и посягательства, и большая часть райатов разбежалась.

Он попросил, чтобы был опубликован священный указ и было решено, чтобы отныне упомянутый хаким ежегодно взимал причитающуюся ему сумму согласно дастур-ул-амалу дивана, а калантар и меллик не совершали посягательств.

Из саркарства аваредже и товджиха Азербайджана подтвердили, что в счет малоджахата и других [налогов] упомянутых мест Капаната, в тиул хакиму упомянутой олки назначено, как написано под именем каждого места, следующим образом:

СЕЛО АГАКЯНДИ И ПОЛЕ ДАРАЛУ В УРУТЕ:

I. Мал

1. Из всей суммы полдинара эхдаса, чтобы, если тиулдар будет расследовать тяжбы, за это с райатов ничего не требовал	2083
2. [Остальное]	14561
	$4166 \times 4 = 16664$

II. Джахат и другие [налоги]

1. Джахат, основная сумма и процент	402	}	5656
2. Тафавт-е джизья, определена 3800, согласно подсчету	5254		
<i>Сумма:</i>			22320

СЕЛО ТАНДЗАТАП

I. Мал

1. Из всей [суммы] полдинара эхдаса, в вышеупомянутом порядке	598
2. [Остальное]	4186
	$1196 \times 4 = 4784$
II. Джахат, основная сумма и процент	96
<i>Сумма:</i>	4880

СЕЛО БОРДИ

I. Мал

1. Из всей [суммы] полдинара эхдаса в вышеупомянутом порядке	1625*
2. [Остальное]	12995
	$3655 \times 4 = [14620]$

* В тексте ошибочно — 1627.

II. Джахат и другие налоги		
1. Джахат	300	} 4259
2. Бахраче	1250	
3. Тафавут-е джизья определена 1270, согласно подсчету	2709	
<i>Сумма:</i>		18879*

СЕЛО СВАРИ

I. Мал и другие [налоги]		
1. Мал		
а) [Из всей суммы] полдинара эхдаса в вышеупомянутом порядке	1250	} 10287
б) [Остальное	8750]	
$2500 \times 4 = 10000$		
2. Джахат, основная сумма и процент	287	
II. Тафавут-е джизья, которая, как написано в тиулнаме Свари, назначена в качестве хамесале Фазл-Али		
		[2466]
<i>Сумма:</i>		12753

СЕЛО ЗИММИ-ТЕХ В УЩЕЛЬЕ КАРХАНЕ

I. Мал		
1. Из всей [суммы] полдинара эхдаса в вышеупомянутом порядке	2100	} 14700
2. [Остальное]	12600	
	$4200^{**} \times 4 = 16800$	
II. Джахат		
		499
III. Тафавут-е джизья, записанная на имя Тех, [определена в]—5700 согласно подсчету		
		7850
<i>Сумма:</i>		25149

СЕЛО КИЦ В КЕХИ

I. Мал		
1. [Из всей суммы], полдинара эхдаса [в вышеупомянутом порядке]	5295	} 15091
2. [Остальное]	9796	
II. Джахат		
		1228
III. Тафавут-е джизья, [определена в]—13900, согласно подсчету		
		15445***
<i>Сумма:</i>		31764

* В тексте ошибочно — 18881

** В тексте ошибочно — 4300

*** В тексте ошибочно — 15245

СЕЛО КЕШИШКЯНДИ

I. Мал	
1. [Из всей суммы] полдинара [эхдаса в вышеупомянутом порядке]	527
2. [Остальное]	1293]
	$455 \times 4 = 1820$
II. Джахат	
III. Тафавут-е джизья, записанная на имя Кешикянди (?) [определена в] 1000, согласно подсчету	51
	1760
<i>Сумма:</i>	3631

СЕЛО ЕХЕНГ В УЩЕЛЬЕ ТУРКА

I. Мал	
1. [Из всей суммы] полдинара [эхдаса в вышеупомянутом порядке]	2500
2. [Остальное]	17500
	$5000 \times 4 = 20000$
II. Джахат	
	575
III. Тафавут-е джизья	140[75]
<i>Сумма:</i>	[34650]

Поэтому решили, что упомянутый тиулдар будет ежегодно взимать с райатов причитающуюся ему сумму в той форме, в какой великие мустовфии, согласно вышеописанному, сделали подсчет (баравард), и не будет причинять посягательствами незаконного беспокойства. Пусть калантар и мелик упомянутой олки также не совершают посягательств.

Достопочтенный бегларбеки и везир Азербайджана обязаны оказать в этом вопросе законное содействие и считать своей обязанностью.

Написано в священном месяце зихаджа 1097 г. (19 октября—16 ноября 1686 г.).

Согласно отношению прибежища везирства, славы и счастья, достопочтенного и прославленного, ядра августейшей власти, сановника высокой царской власти, асафоподобного, эзтемад-уд-довле.

Место печати его высочества правителя Ирана

Внесен в дафтар сархата—Печать

Просмотрен—Печать

Написано—Печать

Записано—Печать

Копия с подлинным верна. Нижайший слуга Исмаил Ансари, *На печати:* Слуга Исмаил Ансари, 1098 г. (1686).

Матенадаран, Диван католикоса, папка 26, док. 107а, размер 49×19 см, письмо шикасте-настаалик.

ПЕРСИДСКИЙ ТЕКСТ И ФАКСИМИЛЕ ДОКУМЕНТОВ*

Документ 1

هو

الملك لله

موضع مهر مبارك نواب اشرف اقدس

فرمان همایون شد آنکه چون درینوقت رعایا و عجزه محالذکوره ذیل
قیانات

قریبی افکندی
قریبی سواری
قریبی دانزه طاپ

بهرض رسانیدند که محالذکوره بتیول امارت پناه تکبرسلطان مقرر
است و مشارالیه زیادتى می نماید و استدعاء حکم اشرف نمودند و از تصدیق
مستوفیان عظام معلوم و مستفاد شد که مالوجهات و غیره محالذکوره بتیول
امارت پناه مشارالیه مقرر است و از قرار برآورد بموجب ضمن میشود بنابراین
مقرر فرمودیم که امارت پناه مزبور وجه تیول خود را موافق دستور العملی که
مستوفیان عظام تصدیق نموده اند باز یافت نموده زیادتى ننمایند بعهده
بیگلربیگی که امداد حسابی بتقدیم رسانند درین باب قدغن دانسته در عهده
شناسند

تحریراً فی شهر جمادى الاول سنه ۱۰۷۱

* Приводятся факсимиле только той страницы документа, на которой даны подсчеты взимаемых с деревень налогов.

۵۹۳۸۷	
۲۲۶۳۲	تفاوت جزیه
۳۶۷۵۵	
مالوجهات	
۲۴۷۴۱	
۱۹۳۹۷	
مالوجهات	
۱۶۹۹۸	اصول
۲۴۹۹	فدیه و نیم از بابت مال
۴۱۶۶ × ۴ =	
۱۶۶۶۴	
مال	
۱۴۵۸۱	ده بیست و یک
۲۰۸۳	ده بیست و یک
۳۳۴	
جهات	
۸۳۳	۱۶۶۶
تفاوت جزیه باسم افاکندی	
۵۲۴۴	
۴۵۶۰	اصول
۷۶۰	فدیه و نیم
۳۸۰۰	
اصول تفاوت زرنو و کهنه	
۶۸۴	
۲۹۱۳۸	
تفاوت جزیه باسم افاکندی	
۱۱۷۵۰	
مالوجهات	

اص	ل	ف	ع
		دهيك ونيم	
			۱۰۲۵۰
مال			
			$۲۵۰۰ \times ۴ =$
			۱۰۰۰۰
رسد نيم دينار			
		۸۷۵۰	۱۲۵۰
جها			
		۱۵۰۰	۲۵۰
تفاوت			
جزيه			

اص	ل	ف	ع
		[دهيك ونيم]	
			۱۷۳۸۸
اص	ل	ف	ع
		تفاوت	
		زر نو و كهنه	
		۲۵۲۰	۱۲۶۰۰
قري			
دائر هطاپ			
		۲۲۶۸	
			۵۵۱۴


اص	ل	ف	ع
		دهيك و نيم	
			۱۱۹۶ × ۴ =
			۴۷۸۴
رسد نيم دينار			
		۷۳۰	[۴۱۸۶]
			۵۹۸

[از فرار نوشته سيادت] و وزارت و اقبال پناه عظمت و اجلال دستگاہ عالیجہ
اعتماد الدوله العلیه العالیه الخاقانیه
[طغرا]

محل مهر اعتماد الدوله مدر زامحمد مهدی...

- نوشته شد - مهر
- ثبت دفتر سر خط شد - مهر
- بنظر رسید - مهر
- مهر داروغه...
- بقلم آمد - مهر

ذا مع اصله الاشرف الارفع الاعلی مطابق - حرره [مهر مقصود]
مقابله شد. [مهر بتاريخ ۱۰۷۶]



Документ 1 (стр. 2)

Документ 2

هو

الملك لله

موضع مهر مبارك اشرف اقدس ارفع اعلى

فرمان همایون شد آنکه چون درینوقت او انیس مسیحی محراسیای وانک طائفی قیانات بعرض رسانید که بعضی مجال وقف وانک مذکور و ضبط نسق آن بمشار الیه مرجوع است و مالوجهاث و غیره مجالزبوره بتیول حاکم الکاء مذکور مقرر است و مشار الیه بعثت عیدی و سلامانه و سایر شلتناقات و توقعات خلاف حساب نموده کلانتر و ملک انواع ظلم و زیادتی مینمایند و اکثر رعایا متفرق شده اند و استدعا نمود که حکم اشرف صادر و مقرر گردد که من بعد حاکم مذکور وجه طلب خود را سال بسال موافق دستورالعیل دیوان باز یافت نموده کلانتر و ملک نیز زیادتی ننمایند و از سرکار اوارجه آذربایجان و توجیه تصدیق نمودند که بدینموجب

قرری	
افاکندی و مزرعه [در] لو اروط	
۴۴۳۴۰	مال
جهاث و غیره ۵۶۵۶	$4166 \times 4 = 16664$
جهاث اصلا و فرعا ۴۰۲	رشد نیم دینار احداث جمع که اگر تیولد ارپرسش قضایا کند بدینعلت طلبی از رعایا ننماید ۲۰۸۳
تفاوت جزیه ۳۸۰۰ مقرر و برآوردی ۵۲۵۴	۱۴۵۶۱

قريي		
دانزہ طاپ	۴۸۸۰	
مال		
جہات		
اصلا و فرعا		$1196 \times 4 =$ ۴۷۸۴
		رسد نيم دينار احداث جمع [بشرح] فوق
		۵۹۸
	۹۶	۴۱۸۶

قريي		
بردي	۱۸۸۷۹	
مال		
جہات		
[وغيره]	۴۲۵۹	$3655 \times 4 =$ [۱۴۶۲۰]
جہات	۳۰۰	
		رسد نيم دينار احداث جمع بشرح فوق
		۱۶۲۵
بهرج	۱۲۵۰	۱۲۹۹۵
تفاوت		
جزيه	۱۲۷۰	
مقرر و برآوردی	۲۷۰۹	

قريي		
سوارى اروط	۱۲۷۵۳	
مال		
و غيرہ	۱۰۲۸۷	
مال		
جہات		
اصلا و فرعا		$2500 \times 4 =$ ۱۰۰۰۰
		رسد نيم دينار احداث [جمع] بشرح فوق
		۱۲۵۰
	۲۸۷	[۸۷۵۰]

تفاوت	
جزیه که در تیولنامچه سواری نوشته شده که بیسه ساله فضلعلی مقرر شده [۲۴۶۶]	
قریه	تیخ ذمی درق کارخانه
۲۵۱۴۹	
جهات	مال
۴۹۹	$۴۲۰۰ \times ۴ =$ ۱۶۸۰۰
تفاوت	
جزیه باسم تیخ نوشته شده ۵۷۰۰ برآوردی ۷۸۵۰	رسد نیم دینار احداث جمع بشرح فوق ۲۱۰۰ ۱۴۷۰۰
قریه	کپس کبقی
۳۱۷۶۴	
جهات	مال
۱۲۲۸	۱۵۰۹۱
تفاوت	
جزیه ۱۳۹۰۰ برآوردی ۱۵۴۴۵	رسد نیم دینار احداث [جمع بشرح فوق] ۵۲۹۵ ۹۷۹۶
قریه	کشیش کندی
۳۶۳۱	
جهات	مال
۵۱	$۴۵۵ \times ۴ =$ ۱۸۲۰
تفاوت	
جزیه که باسم کشیشکنندی (۴) نوشته شده ۱۰۰۰ برآوردی ۱۷۶۰	رسد نیم دینار [احداث جمع بشرح فوق] ۵۲۷ [۱۲۹۳]

قبريک يغبنيك درق ترك	
[۳۴۶۵۰]	
جهات	مال
۵۷۵	$۵۰۰۰ \times ۴ =$ ۲۰۰۰۰
تفاوت	رسدنيم دينار [احداث جمع بشرح فوق] جزيه
	۲۵۰۰
۱۴۰ [۷۵]	۱۷۵۰۰

از بابت مالوجهات و غيره محال مزبوره قيمانات بشرحی که تحت اسم هر محل نوشته شده بنیول حاکم الکاء مذکور مقرر است بنا برین مقرر فرمودیم که تیولد ار مذکور وجه طلب خود را بموجبی که مستوفیان عظام [بموجب] فوق بر آورد نموده اند سال بسال از رعایا باز یافت نموده بزوايد مزاحمت خلاف حکم و حساب نرسانند و کلانتر و ملک [الکاء مذکور نیز زیادتى] ننمایند بعهده عالیجاه بیگلربیگی و وزیر آذربایجان [که] درین باب امداد حسابی بتقدیم رسانند و در عهده شناسند

تحریراً [فی شهر ذیحجه الحرام سنه ۱۰۹۷]

از قرار نوشته وزارت و شوکت و اقبال پناه عظمت و حشمت و اجلال دستگاه عالیجاه اعتضاد السلطنه... السلطانيه آصفیاهی اعتمادالدوله العلیه العالیه الخاقانیه

محل مهر نواب ایرانمداری

ثبت دفتر مهر خط شد - مهر

[نوشته] شد - مهر

بنظر رسید - مهر


مرقوم شد - مهر

بقلم آمد - مهر

سواد مطابق اصل شد - العبد الاقل اسمعیل انصاری

- نقش مهر -

العبد اسمعیل انصاری. سنه ۱۰۹۸



ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԻԼԽԱՆԱԿԱՆ ՅԱՌԼԻՂՆԵՐ

Վերջին ժամանակներս միջին դարերի պատմության մեջ զբաղվող արևելագետների մոտ հատուկ հետաքրքրություն է նկատվում Արևմտյան իլխանության վարչատնտեսական կառուցվածքի, պետական-հարկային սիստեմի և հատկապես Մեծ դիվանում գործող հաշվապահության և գրասենյակային գրագրությունների կամ դիվանագրության (դիպլոմատիկա) պատմության նկատմամբ: Ուշագրավ է հատկապես, որ պատմական ժամալուծն երկասիրություններից բացի, որոնք առավել կամ նվազ չափով գիտական մշակման են ենթարկված և այսօր հրատարակի վրա կան դրանցից մի քանիսի քննական հրատարակությունները, մեծ ուշադրություն է ցուցաբերվում պետական ֆինանսների և իլխանությանը ենթակա ընդարձակ երկրամասերի տնտեսական պատմության համար բացառիկ նշանակություն ունեցող գործնական ձեռնարկների (ոխալեններ) և նամականիների (մունշա՛աթ) կամ առանձին պետական ֆինանսական բարձրաստիճան պաշտոնյաների թողած դիվանական նյութերի (մուքաթիբաթ) վերաբերմամբ:

Այս կարգի սկզբնաղբյուրների ուսումնասիրության մեջ առաջինը սկսել է զբաղվել ռուս արևելագետ Վ. Գ. Տիգենհաուզենը, որը անցյալ դարի վերջերին Վիեննայի արքունի ձեռագրատանը հայտնաբերեց XIV դարի մատենագիր Մուհամմադ Իբն-Հինդուլաճ նախնականի գրչին պատկանող և «Պասթուր-ալ-քյաթիբ ֆի թա՛յին-ալ-մարաթիբ» խորագրեր կրող հետաքրքիր նամականիներ: Այնուհետև նա Փարիզում ու Լեյդենում գտավ նույն գրքի երկու այլ գրագրեր և կազմեց այդ աղբյուրի գիտական բնագիրը, որը սակայն մինչև օրս էլ ձեռագիր վիճակում գտնվում է ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում պահվող նրա անձնական արխիվում¹:

Մոնղոլների տիրապետության վաղ շրջանին է վերաբերում XIII դարի անվանի գիտնական աստղագետ-մաթեմատիկոս և պետական գործիչ Նասիր-էդ-դին Թուսիի կազմած պետական ֆինանսների մասին աշխատությունը, որի գիտական բնագիրը Մ. Մինովիի և Վ. Մինորսկու աշխատասիրության մեջ լույս է տեսել 1940 թվականին²: Թեև այս աղբյուրում նկատի է առնված սելջուկյան շրջանի վարչական բաժանումն ու պետական ֆինանսների կառավարման կարգը, սակայն ձեռնարկն ինքնին նախատեսված է որպես ուղեցույց նոր կազմավորվող մոնղոլական պետության համար:

¹ Տես Ленинградское отд. ИНА, архив Тизенгаузена В. Г., ф. 52, кр. 15. «Պասթուր-ալ-քյաթիբ»-ի քննական բնագիրը մի քանի նորահայտ ձեռագրերի համեմատության մեջ հրատարակության է պատրաստում պրոֆ. Ա. Ա. Ալի-Ղադեհն:

² M. Minovi and V. Minorsky, Nasir ad-din Tusi on finance. BSOS, vol. X, part 3, 1940.

Առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում իլխանության վերջին շրջանին վերաբերող այն մի քանի ֆինանսական-հաշվապահական ձեռնարկները, որոնց բնագրերի ֆոտո-պատճենները (Ֆաքսիմիլե) հրատարակել է թուրք պատմաբան-տնտեսագետ Ա. Ջ. Վելիդի-Թոգանը: Այդ բնագրերից մեկը Աբդուլլա իբն-Մուհամմադ իբն-Քիա ալ-Մազանդարանիի թողած սևագրության հիման վրա 1362—63 թթ. կազմված «Ռիսալե-յե Ֆալաքիյե» խորագիրը կրող արժեքավոր բնագիրն է, որի վերծանված տեքստը 1952 թ. հրատարակել է գերմանացի արևելագետ Վալտեր Հինցը³:

Վ. Հինցի այս հրատարակության առաջաբանում համառոտ տեղեկություններ են տրված թուրք գիտնականի վերոհիշյալ հայտնադրածությունների և նրանց նախնական հրատարակությունների մասին: Ըստ այդ տեղեկությունների իլխանության շրջանում կազմված նման ֆինանսական-հաշվապահական ձեռնարկներից հնագույնը եղել է Ֆալաք-Ալա-յե Թաբրիզիի կազմած «Կանուն-աս-սա'ադաթ»-ը, որի բնագիրը մեզ չի հասել կամ դեռևս չի հայտնաբերված: Սակայն նույն հեղինակը վեզիր Սա'դ-էդ-դին Սավոզիի հանձնարարությամբ 1307 թ. կազմել է «Սա'ադեթ-նամե» վերնագրով մի այլ ձեռնարկ, որի մի գրչադիր օրինակը ներկայումս պահվում է Ստամբուլի ձեռագրատանը: Մյուս ավելի արժեքավոր աղբյուրը դա Կոնիայում գտնված «Ջամէ'-ուլ-հեսաբ» վերնագրով բնագիրն է, որը ոչ այլ ինչ է քան 1337—38 թթ. իլխանական պետության ընդհանուր հարկային եկամուտների «ելեմտից մայր մատյանը»⁴:

Այս վերջին աղբյուրից բացի, որ դիվանական հաշվապահության մայր մատյանի սոսկ մի ընդօրինակությունն է միայն, վերոհիշյալ մյուս, գլխավորաբար ուսուցողական նպատակներով կազմված ձեռնարկները (ոխսյաներ) գրված են հին իլխանության վերացման և նորի հիմնադրմանը զուգահեռ գծով ժամանակաշրջանում: Ինչպես վերը տեսանք, այդպիսին է նաև իր-էդ-դին Թուսիի գիրքը, որը վերաբերում է մոնղոլական տերության սկզբնավորման շրջանին «Ռիսալե-յե Ֆալաքիյե», որը գրված է իլխանության բարձման և Ջելայիրյանների իլխանության գլուխ անցնելու ժամանակաշրջանում, մոտավորապես այդպիսին է նաև «Սա'ադեթ-նամեն», որը վերաբերում է Ղազանխանի վերանորոգչական և պետական-վարչական օրգանների վերակառուցման ժամանակաշրջանին: Նույնպիսի երևույթ էր նաև Մուհամմադ իբն-Հինդուլահի, մեզ ծանոթ, «Նամականիի» երևան գալը Ջելայիրյանների իլխանության սկզբնավորման շրջանում: Հատկանշական է, որ նման ձեռնարկներ և ուսուցողական նպատակներ հետապնդող աշխատություններ գրվել են նաև հետագայում, ինչպիսիք են օրինակ Ալի Շիրազիի «Շամս-ուս-սայակ» և Շարաֆ-էդ-դին Ֆազլիի «Բահր-ուս-սայակ» Թեյմուրյանների վաղ շրջանին վերաբերող նորահայտ բնագրերը⁵ և կամ Սեֆյան հարստության բարձունքից հետո Սպահանում կազմված «Թազքիրաթ-ալ-մուլուք»-ը, որն այս կարգի սկզբնաղբյուրների դասական օրինակներից մեկը կարող է համարվել⁶:

Ինքնին հասկանալի է, որ վերոհիշյալ բոլոր ձեռնարկներն էլ պատմական

³ Walther Hinz, Die Resälä-ye Falakiyyä des 'Abdollah ibn-Mohammad ibn-Kiyä al-Mäzandaräni, Wiesbaden, 1952.

⁴ Նույն տեղում, Առաջաբան, էջ 2:

⁵ Նույն տեղում:

⁶ V. Minorsky, Tadhkirat al-mulük, a Manual of Safavid administration, London, 1943.

տարբեր ժամանակներում միևնույն նպատակն են հետապնդել. նպաստել, որպեսզի նոր իլխանության օրոք հաշվի առնվի հնուց եկող փորձը և փոխանցելով այն արքունի դիվանատանը և վարչատնտեսական օրգաններում նոր առաջ քաշված և գրասենյակային ու հաշվապահական ընթացիկ օրենքներին անտեղյակ պաշտոնյաներին, օգնել նրանց ընդունված կարգով շարունակելու և վարելու նախորդ իլխանությունից ժառանգություն ստացած պետական-ֆինանսական ապարատը:

Պետք է ասել սակայն, որ պաշտոնական գրագրությունների վերաբերյալ նյութերը համեմատաբար ավելի սակավ են: Բուն իլխանական տիրապետության շրջանի պաշտոնական վավերագրերի՝ հրովարտականների կամ յառլիզների մասին մեր տեղեկությունները հիմնականում սահմանափակվում են պատմական ծավալուն երկասիրությունների մեջ պահպանված աղքատիկ տվյալներով: Որպես հավաստի սկզբնաղբյուրներ գիտական լայն շրջանառության են արժանացել օրինակ Ղազան-խանի շուրջ մի տասնյակ յառլիզների պատճենները կամ նրանց համառոտ շարադրանքները, որոնք մեջ են բերված Ֆազլուլլահ Ռաշիդ-էդ-դինի «Ջամէ՛-ու-թավարիխ»-ի Գ հատորում⁷: Հատ ու կենտ յառլիզների ոչ լրիվ բնագրեր պահպանվել են մզկիթների կամ այլ հասարակական շինությունների վրա կատարված վիմագիր արձանագրություններում⁸: Իլխանության շրջանի վավերագրային աղբյուրների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Ռաշիդ-էդ-դինի անձնական նամակները, որոնք «Մուքաթթերաթ-ե Ռաշիդի» ընդհանուր խորագրով լույս է ընծայել Խան-Բահադուր Մուհամմադ-Շահին⁹: Հիմնականում սրանք են շուրջ 80 տարվա իլխանական տիրապետության շրջանի վիթխարի դիվանական գրագրությունից մեզ հասած մատենագրական փշրանքները:

Դժվար չէ նկատել, որ պատմական սկզբնաղբյուրների պատկառանք ներշնչող հսկայական գրականության հետ համեմատած, շափազանց աղքատիկ է իլխանական վավերագրական գրականությունը: Ահա թի ինչու աղբյուրագետները համարյա միաբերան նշում են, որ Մեծ դիվանի կողմից հրապարակվող բոլոր տեսակի հրովարտականի ու հրամանագրերի (հոքմեր, յառլիզներ, ալ-թամղաներ, աթոռնթամղաներ և այլն), ինչպես նաև այլ կարգի պաշտոնական ու կիսապաշտոնական գրությունների մասին, համեմատաբար ավելի մանրամասն և անմիջական պատկերացում է տալիս Մուհամմադ իբն-Հինգուշահի «Դասթուր-ալ-քյաթիբ»-ը, որը թեև կազմված է ավելի ուշ, Ջելայիրյան Սուլթան Ուվեյսի օրոք (1356—1374), սակայն, որքանով որ նրա հեղինակը ժա-

⁷ Фазлуллах Рашид-ад-дин. Джами-ат-таварих, том III, составитель научно-критического текста на персидском языке Абдул-Керим Алиоглы Али-Заде, Баку, 1957, էջ 426—446, 466—477, 495—500, 510—517.

⁸ В. Бартольд, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, СПб, 1911. А. А. Али-Заде, К истории феодальных отношений в Азербайджане в XIII—XIV вв., «Сборник статей по истории Азербайджана», выпуск I, Баку, 1949, էջ 126.

⁹ Letters of Rashid-ad-din Fadl Allah, Persian text, edited by Khan Bahadur Nohammad Shafi', Pandjab Universty oriental publications № 7, Lahor, 1947. ՄԱՄԳ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինտերուուտի կենտրոնի բաժանմունքի ձեռագրատանը կա Ռաշիդ-էդ-դինի նամակների մի զբաղվող օրինակ «Մուշա'աթ-ե Ռաշիդի» վերնագրով գրանցված D—938 համարի տակ: Ռաշիդ-էդ-դինի նամակների վավերականության մասին տե՛ս И. П. Петрушевский, К вопросу о подлинности переписки Рашид-ад-дина, Вестник Ленинградского университета, 1943, № 9.

Բուսսեի աշխատասիրությունամբ առանձին գրքով հրատարակվել են Բրիտանական թանգարանի 17, Թեհրանի տարբեր ձեռագրատների 5 և Ստամբուլի ձեռագրատան 1 (ընդհանուր թվով 23) հրովարտակներ, որոնցից 19-ը հրատարակված են XVI—XVIII դդ. սեֆյան շահերի կողմից¹²։ Հ. Բուսսեն իր այս արժեքավոր աշխատության մեջ մանրամասն տեղեկություններ է տալիս արտասահմանյան թանգարանների և ձեռագրատների, ինչպես նաև մասնավոր անձանց մոտ առկա վավերագրային ժողովածուների և մի քանի ուշագրավ հրատարակությունների մասին¹³։

Ավելորդ է նշել, որ սեֆեհներին հաջորդող տիրակալների, Նադիր-շահի և նրա հաջորդների, ինչպես նաև ղաջարների տիրապետության շրջանի վավերագրերը նույնպես լավական առատ են։ Վրացական ֆոնդերի առանձին նմուշներ հրատարակված են Յու. Մառի և Մ. Խուբուայի կազմած ժողովածուներում¹⁴։ Մատենադարանում պահվող նադիրյան և ղաջարյան շրջանի բազմաթիվ հրովարտակները (ֆարմաններ և հոքմեր) ժամանակագրական կարգով լույս կտեսնեն «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի հետագա պրակներում։

Հազվագյուտ են հատկապես Սեֆեհներին նախորդող Աղ-կոյունլու և Կարա-կոյունլու սուլթանների ու փաղիշահների հրովարտակների բնագրերը։ Եթե ավելի քան 200 տարվա Սեֆյան տիրապետության շրջանից մեզ հասած մեծաքանակ դիվանական նյութերից, նշված ժողովածուների և առանձին հոդվածների միջոցով արդեն իսկ գիտական լայն ճանաչում են գտել շուրջ 180 հրովարտակ, ապա ամբողջ XV դարի թուրքմենական շրջանից առ այսօր արեևլագիտությունը տարբեր հրատարակություններով հայտնի են միայն 20 հրովարտակների բնագրերը։

Մինչև 1938 թ. հրովարտակների ոչ մի բնագիր հրատարակության չէր արժանացել։ Հայտնի էին միայն միջնադարյան պատմիչների կողմից կատարված երկու ընդօրինակություններ։ Դրանցից առաջինը Կարա-կոյունլու Ամիր-Յուսուֆի կողմից 1417 թ. Բաղեշի Ամիր-Շամս-էղ-դինին տրված սուլորդակական հրովարտակի ընդօրինակությունն էր Շարաֆ-խան Բիթլիսիի «Շարաֆնամե»-ի և հատորում¹⁵, իսկ երկրորդը Աղ-կոյունլու Յաղուբ-փաղիշահի 1488 թ. Շիրազի Մանսուրիյե մզկիթին տրված մի այլ սուլորդակական հրովարտակի մեջբերումը Հասան Ֆասայիի «Ֆարսնամե-յե Նասերի» աշխատության էջերում¹⁶։ Սակայն ահա նշված թվականին պրոֆ. Վ. Մինորսկու աշխատասիրու-

¹² Heribert Busse, Untersuchungen zum Islamischen Kanzleiwesen, Kairo, 1959, վավ. 5—23։

¹³ H. Busse, *Նշված աշխատությունը*, էջ 3—4, 13—14։

¹⁴ Передняя Азия в документах (Серия памяти Ю. Н. Марра), кн. I. Нахичеванские рукописные документы XVII—XIX вв., перевод и комментарии К. И. Смирнова и Дж. Ганбова, под редакцией доктора Ю. И. Марра, Тбилиси, 1936, վավ. 1—2, 8—9, 12—14, 16, 19, 21։ Յ. Եղմյա, *Նշված աշխատությունը*, վավ. 32, 37, 39, 41—43, 46—49, XVI—XVIII դդ. պարսկական դիպլոմատիկայի ուսումնասիրություն համար արժեքավոր են նաև Քարթլի-Կասեթի վալիների երկրագրյան (վրացերեն, պարսկերեն) հրամանագրերը, որոնք առանձին ժողովածուով հրատարակել է Վ. Ս. Փուլբուրիձեն, տե՛ս Ջորտյուլ-Նաստեղլու ռեպրոդուկցիոն կենտրոն, Թոնոն, 1955։

¹⁵ Schéref-nameh ou histoire des Kourdes, par Schéref. prince de Bidlis, publiée par V. Veliaminof-Zernof, SPb, 1860, հ. Ա, պարսկ. բնագիր էջ 376—378։

¹⁶ Հասան Ֆասայի, *Նշված աշխատության Թեհրանի 1318 (1895 թ.) վիճարկ հրատ.* էջ 81—82։

թյամբ լույս է տեսնում Աղ-կոյունլու Ջհանգիրի որդի Կասրմի կողմից հիշք. 903 (1498) թ. Գիրաբեքիի էդիլի շրջանի Խաբանդար-բեկին շնորհված սոյուրդալի հրովարտակի բնագիրը, անգլերեն թարգմանությամբ և հարուստ ծանոթագրությամբ¹⁷: Այս հրատարակությունը իր հմուտ վերծանությամբ և գիտական բարձր մակարդակով կատարված բազմակողմանի ուսումնասիրությամբ, ամուր հիմք հանդիսացավ հետագա նոր ուսումնասիրությունների և հատկապես նոր բնագրերի հայտնաբերման ու հրատարակության համար:

Աղ-կոյունլու Կասրմի հրովարտակը պարսկական դիպլոմատիկայի համար բնորոշ իր բոլոր հատկանիշներով և շափազանց հետաքրքիր և հարուստ բովանդակությամբ, մեծ չափով նպաստեց XV դարի խառն ու սկզբնաղբյուրների տեսակետից ամուր ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությանը: Մյուս կողմից վ. Մինորսկու այս հետազոտությունը եկավ ավելի քան ամրապնդելու մասնագետների այն տեսակետը, որ նման դիվանական-պաշտոնական վավերագրերը, որպես պատմական սկզբնաղբյուրներ, շատ ավելի արժանահավատ նյութ կարող են մատակարարել պատմաբաններին, և հանդիսանալով իշխանության կողմից հրատարակված, օրենքի ուժ ունեցող փաստաթղթեր, ավելի հավաստի են քան այս կամ այն բռնակալին կամ ֆեոդալ-իշխանավորին ծառայագրված պալատական պատմիչների թողած և բազում ավելորդաբանություններով ու ներբողագրությամբ ծանրաբեռնված պատմագրական ու ժամանակագրական երկերը:

Պետք է ասել սակայն, որ այս հրատարակումից հետո, XV դարի պատմության ուսումնասիրությամբ զբաղվողներին վիճակվեց սպասել բավական երկար ժամանակ, մինչև որ 17 տարվա ընդմիջումից հետո, 1955—1956 թթ. ընթացքում միանգամից լույս տեսան թուրքմեն տիրակալների նորահայտ 12 հրովարտակներ: Դրանցից 5-ը հրատարակված են Ֆրանսիացի արևելագետ Ժան Օբենի «Archives persanes commentées» ընդհանուր վերնագրի տակ զետեղված երկու առանձին հոդվածներին առընթեր¹⁸, իսկ 7-ը «Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ» մատենաշարի «Հրովարտակներ» շարքի Ա պրակում¹⁹:

Ժ. Օբենի լույս ընծայած հրովարտակներից մեկը հրատարակված է Կարակոյունլու Սուլթան Ջհանշահի կողմից 1463 թ., երկուսը Աղ-կոյունլու Ռուստամ փադիշահի 1495 և 1496 թթ. հրովարտակներն են, մեկը 1497 թ. Աղ-կոյունլու Ահմադի մեզ հայտնի եզակի հրովարտակն է, իսկ վերջինը Աղ-կոյունլու Մուհամմադի 1498—1499 թթ. կարճատև իշխանության շրջանից պահպանված միակ սոյուրդալական հրովարտակը:

¹⁷ V. Minorsky, A Soyurghâl of Qâsim b. Aq-qoyunlu 903/1498, BSOS—IX (1937—39), էջ 926—960: Այս արժեքավոր հրատարակության հետ համարյա միաժամանակ Ստամբուլի թուփկափե-սարալի թանգարանի տնօրենության հրատարակությամբ լույս տեսած մի ժողովածուում տպագրվում է 1472 թ. Աղ-կոյունլու Ազուն-Հասանի կողմից Փիր-Ահմադ Կարաման-օղլուն արված հրովարտակի լուսանկարային պատճենը, առանց բնագրի վերծանության ու թարգմանության (տե՛ս Arşiv Kılavuzu, I, վավ. 6, Ստամբուլ, 1938):

¹⁸ Jean Aubin, Note sur quelques documents Aq-qoyunlu (Archives persanes commentées, 1), Melanges Louis Massignon I, Damas, 1956, էջ 6, 126, 142. Note préliminaire sur les archives du Takya du Tchima-Rud (Archives persanes commentées, 2), Teheran, 1955, էջ 5, 7:

¹⁹ ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 1—7:

Մատենադարանի վավերագրերի մեջ կան Կարա-կոյունլուների 4 հրովարտականներ (ընդամենը լույս է տեսել 6 հրովարտակ), որոնցից 2-ը տրված են սուլթան Ջհանշահի կողմից. մեկը անթվական²⁰, իսկ մյուսը հիշք. 853 (1449) թ.²¹, որը և հանդիսանում է մեզ հասած թվական կրող թուրքմենական հնագույն հրովարտակը, երրորդը Ջհանշահի կնոջ Բեգում-խաթունի հիշք. 866 (1462) թ. հրովարտակն է տրված Գանձասարի Հովհաննես կաթողիկոսին²², որ հրապարակված է նախկինում Սուլթան Ջհանշահի կողմից տրված հրովարտակի հիման վրա: Այստեղ համարյա ամբողջությամբ մեջ է բերված այդ հրովարտակը, որն իր հերթին հրապարակված լինելով Ջեյալիբյան Շեյխ-Ուվեյսի կողմից տրված մի այլ հրովարտակի հիման վրա, բովանդակում է նաև այդ հրովարտակի հիմնական մասը: Եվ վերջապես չորրորդը Ջհանշահի որդու՝ Հասան-Ալիի 7—8 ամիս տևած կարճատև տիրապետության շրջանից մեզ հասած հիշք. 872 (1468) թ. միակ հրովարտակն է, տրված Տաթևի և Վաղարշի վանքերի առաջնորդ Շամսոն և Ստեփանոս վարդապետներին²³:

Աղ-կոյունլուների 3 հրովարտակներից մեկը Ուզուն-Հասանի 1472 թ. հրովարտակն է տրված Դարաշամբի Ս. Ստեփանոս նախավկայի վանքին²⁴: Երկրորդը Յաղուբ-փաղիշահի 1487 թ. Գանձասարի Շամսոն կաթողիկոսի անունով հրապարակված հրովարտակն է²⁵, իսկ վերջինը խիստ համառոտ բովանդակությամբ 1493 թ. Ռուստամ փաղիշահի կողմից տրված մի հրովարտակ է²⁶, որով վերջինս էջմիածնի Սարգիս կաթողիկոսին զգուշացնում է ոտնձգություններ չանել Մակվի Թաղեոս Առաքյալի վանքի նկատմամբ:

Թուրքմենական մյուս նորահայտ վավերագրերը Հ. Բուսսեի 1959 թ. կահիրեում հրատարակած, մեզ ծանոթ աշխատության մեջ ղեկավարված Ջհանշահի 1453, Ուզուն-Հասանի 1471, Յաղուբ-փաղիշահի 1479 և Ալվանդի 1499 թթ. ընդարձակ և բովանդակալից հրովարտակներն են:

Ջհանշահի այս հրովարտակը վերաբերում է Հին Ջուղայից գանձվող պետական հարկերին, որոնք տրված են եղել Շեյխ-Դարախին որպես սոյուրդալ²⁷: Ուզուն-Հասանի հրովարտակով Թավրիզի Ռուզեկաթի շրջանում գտնվող Անբադ կոչվող վայրի պետական հարկերը որպես սոյուրդալ շնորհվում են բարձրաստիճան հոգևորական Սեյիդ Աբդ-ուլ-Ղաֆֆարին²⁸, իսկ Յաղուբի և Ալվանդի ընդարձակ հրովարտակները, կրկնելով միմյանց, հաստատում են Ղումի Սիթիթի-Ֆաթիմայի մուսուլմանական սրբավայրի վակֆային իրավունքները և

20 ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 2:

21 Նույն տեղում, վավ. 1:

22 Նույն տեղում, վավ. 3:

23 Նույն տեղում, վավ. 4:

24 Նույն տեղում, վավ. 5:

25 Նույն տեղում, վավ. 6:

26 Նույն տեղում, վավ. 7:

27 Այս վավերագիրը պատկանում է Ստամբուլի Թոփկափի-Սարայի թանգարանին և գրանցված է E. 11412 համարի տակ:

28 Վավերագրի քննգիրը գտնվում է Թեհրանի հան-Մալեբ գրատանը, ֆոտոպատճենը լույս է տեսել 1938 թ. «Ասար-ե Իրան» ժողովածուի 9 հատորում, էջ 203—206:

որոշում գրանցից օգտվելու կարգը, որը նախապես հաստատված է եղել Լանկ-Թեմուրի, Շահրուվսի, Ջհանշահի և այլ իշխանավորների կողմից²⁹:

Նույն թվականին մի այլ գերմանացի իրանագետ՝ Հանս Ռոբերտ-Ռոմերը Մոսուլում հայտնաբերեց Աղ-կոյունլու Ռուստամ փաղիշահի հիշքը 902 (1497) թ. Իրաքի Իրբիլի շրջանի հոգևորականներից Սեյիդ Սիրաշ-էդ-դին Ղասեմին շնորհված մուաֆության հրովարտակը: Հ. Ռոմերը հավանական է գտնում, որ այն եղել է Ռուստամ փաղիշահի կողմից հրատարակված վերջին հրովարտակը³⁰:

Այսպիսով, առ այսօր գիտական հրատարակության արժանացած թուրքմենական հրովարտակների մեջ կան՝ Կարա-կոյունլու Սուլթան Ջհանշահի 4, նրա կնոջ Բեգում-խաթունի 1, որդու Հասան-Ալիի 1, Աղ-կոյունլու Ուզուն-Հասանի 3, Յաղուբ փաղիշահի 3, Ռուստամի 4, Ահմադի 1, Ղասեմի 1, Ալվանդի 2 և Մուհամմադի 1, մեծ մասամբ սոյուրդալների կամ մուաֆության հարցերի առնչությամբ հրապարակված հրովարտակները:

Սակայն ինչպես վերը համառոտակի ասվեց, միանգամայն այլ է իխանական շրջանին և ընդհանրապես XIV դարին վերաբերող վավերագրային գրականության պատկերը:

Հ. Բուսսեն իր աշխատության մեջ ընդհանուր ակնարկ նետելով իսլամական դիպլոմատիկայի պատմության վրա, հիշատակում է իխանների կողմից հրապարակված սահմանափակ թվով մոնղոլերեն հրովարտակների կամ յառլիղների մի քանի հրատարակություններ, որոնց բնագրերը պահվում են Թեհրանի, Վատիկանի և արտասահմանյան այլ թանգարաններում³¹: Հայտնի է սակայն, որ իխանների օրոք դիվանական մատչանները, ինչպես նաև պաշտոնական բոլոր տեսակի գրությունները, մեծ մասամբ գրվել են պարսկերեն: Այդ են վկայում ինչպես Ռաշիդ-էդ-դինի կողմից վկայակոչված, այնպես նաև վիմագիր արձանագրությունների ձևով պահպանված մի քանի յառլիղների պատճենները: Աշխատության ներածական մասը գրելիս Հ. Բուսսեն ձեռքի տակ է ունեցել մինչև 1959 թ. լույս տեսած պարսկերեն վավերագրերի բոլոր հրատարակությունները³²: Ուշագրավ է, որ նրա օգտագործած վավերագրեր բնագրերի ցանկում³³ հնագույն վավերագիրը հանդիսանում է Կարա-կոյունլու Սուլթան-Ջհանշահի հիշքը. 853 (1449) թ. հրովարտակը³⁴:

²⁹ Վավերագրերը պատկանում են Բրիտանական թանգարանին և գրանցված են Օր. 4934—1 և II համաբնիկ տակ:

³⁰ Hans Robert Roemer, Le dernier firman de Rustam-Bahādur Aq-qoyun-iu?, Bulletin de l'Institut français d'Archéologie orientale, 1960, t. LIX, էջ 273—287:

³¹ Թվարկված են հետևյալ կարևոր հրատարակությունները. Le documents mongols du musée de Teheran, «Ասար-ե Իրան», մասն Ա, էջ 37—44: Այստեղ տպագրված ֆոտոպատճենները վերձանել և ուսումնասիրությանը ու թարգմանությանը հրատարակել է Ֆ. Վ. Քլիվսը. The mongolian Documents in the Musée de Teheran, HJAS, XVI, 1953, էջ 1—107. V. Minorsky, A mongol Decree of 720/1320 to the Family of Shaikh Zahid, BSOAS, XVI, 1954, էջ 515—527. A. Mostaert, F. W. Cleaves, Trois documents mongols des Archives secrètes Vaticanes, HJAS, XV, 1952, էջ 419—506. E. Haenisch, Zuden Briefen der mongolischen Il-Khane Argun und Öljeitü an den König Philipp den Schönen von Frankreich, «Oriens», II, 1949, էջ 216—235:

³² H. Busse, Նշված աշխատության գրականության ցանկը, էջ 221—228:

³³ Նույն տեղում, էջ 250—257:

³⁴ ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 1:

Թվում է թե գիտական հրատարակության արժանացած իլխանական հրովարտակի որևէ պարսկերեն բնագիր չէր կարող անտեսվել նման կարևոր ուսումնասիրության ժամանակ: Պարսկական դիպլոմատիկայի այնպիսի հիմնական և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր են քննարկված Հ. Բուսսեի ինչպես այս, այնպես նաև 1961 թ. «Der Islam» հանդեսում լույս ընծայած իր մի այլ ուսումնասիրության մեջ³⁵, որոնց լուսաբանմանը մեծ շահով կարող էին նպաստել իլխանական շրջանի հրովարտակաների տվյալները:

Հաշվի առնելով Հ. Բուսսեի աշխատությունների գիտական արժանիքները³⁶ և ի նկատի ունենալով նրա կողմից օգտագործված մասնագիտական հարուստ գրականությունը, պետք է եզրակացնել, որ առ այսօր արևելագիտությանը դեռևս հայտնի չէ իլխանական շրջանից պահպանված պարսկերեն հրովարտակի որևէ վավերական բնագիր: Այս տեսակետից էլ ահա սույն հոդվածով հրատարակության հանձնվող իլխանական երկու յառլիղները, որպես եզակի սկզբնաղբյուրներ բացառիկ նշանակություն ունեն և արժանի են հատուկ ուշադրության:

* * *

1956 թ., երբ հրատարակության էինք պատրաստում «Հրովարտակաների» Ա հատորը, Մատենադարանի արխիվային ֆոնդերում առկա և ընդհանրապես մինչ այժմ լույս տեսած պարսկերեն հրովարտակաների մեջ, հնագույն բնագիրը, ինչպես ասվեց, Ջհանշահի հիշք. 853 (1449) թ. հրովարտակն էր: Սակայն անցյալ տարի ՀՍՍՏ ԳԱ Գրական թանգարանի հետ կատարված որոշ դիվանական նյութերի փոխանակման հետևանքով Մատենադարանի պարսկերեն վավերագրերի ֆոնդը հարստացավ ևս 25 նոր վավերագրերով: Մեծ անակնկալ էր մեզ համար, երբ այդ վավերագրերի մեջ գտանք իլխան Աբու-Սաիդի հիշք. 730 թ. գրկա՛տղա 4-ի (1330 թ. օգ. 19) և պատկանելիությունն անհայտ 731 թ. սաֆար 15-ի (1330 թ. նոյ. 28) յառլիղների բնագրերը: Այս երկու նորահայտ վավերագրերի շնորհիվ, բնագրերով մեզ հասած պարսկերեն հրովարտակաների ժամանակագրական սահմանը հեռանում է ևս 123 տարով, հասնելով մինչև XIV դարի 30-ական թվականները:

Յառլիղներից առաջինը, որ այժմ գրանցված է Մատենադարանի կաթողիկոսական դիվանի 1գ թղթապահակում 1011 համարի տակ, գրված է 113×21 սմ. քիչ դեղնավուն թղթի վրա, բավական խոնաղացած է, սակայն ընդամենը 16 տողից բաղկացած գրությունը, որ պահպանել է իր մուգ սև գույնը, անվնաս է և համարյա ամբողջապես ընթեռնելի: Երկրորդը սակայն, որը նույն թղթապահակի 1012 համարն է կրում, սկզբից թերի է: Վավերագրի պահպանված մասի մեծությունն է 100×16 սմ., գրությունը թղթի քայքայման հետևանքով բավական մաշված է և գունաթափված, ուստի մեծ դժվարությամբ միայն հնարավոր եղավ կարդալ և վերծանել բնագիրը: Երկու վավերագրերն էլ իրենց զբոլոնությամբ և արտաքին հատկանիշներով բավական նման են XV դ. թուրքմենական հրովարտականերին, այն տարբերությամբ միայն, որ սրանք, բացի թագա-

³⁵ Herbert Busse, Persische Diplomatie im Überblick Ergebnisse und Probleme, „Der Islam“, t. 37, Berlin, 1961.

³⁶ Հ. Բուսսեի Untersuchungen zum Islamischen Kanzlenwesen աշխատության յառլիղն տես Վ. Մինորսկու գրախոսությունը BSOAS, XXIV/3, 1961, էջ 360—362:

վորի կնիքից, որն այստեղ ի տարբերություն թուրքմենական հրովարտակաների գրված է ոչ թե վավերագրերի ներքևի ձախ, այլ աջ անկյունում, կնքված են նաև մոնղոլական շրջանին հատուկ քառակուսի «ալ-թամդաներով» («կարմիր թամդա»):

Առաջին յառլիզը ավելի լրիվ տեսք ունի և բովանդակում է այդ շրջանի դիպլոմատիկային բնորոշ տարրեր: Առաջին տողի վրա կարդում ենք *الستحيه لله تعالى* («օրհնություն բարձրալին աստծուն») խոսքերը, իսկ երկրորդում՝ *ابوسعبيد بهادر خان سوزومين* («Աբու-Սաիդ բահադուր-խան, մեր խոսքը»), առանց *Կարա-կոյունլու, Աղ-կոյունլու* և *Սեֆյան թագավորների անվանը նախորդող ابوالمظفر ابو القتحح* կամ *ابو النصر* («հաղթական») էպիտետի: Ուշագրավ է Յ-րդ տողի թուղրան, որը կարող է հետագա վերծանման: Այս հրովարտակի վրայի Յ ալթամդաները համեմատաբար ավելի փոքր են՝ 8X8 սմ և ունեն միայն մոնղոլերեն մակագրություններ, մյուս հրովարտակի վրա՝ երկուսն են (հավանաբար Յ-րդը եղել է բնագրի սկզբի մասում, որը չի պահպանվել), 10X10 սմ մեծությամբ, որոնց եզրային մասի մակագրությունը մոնղոլերեն է, իսկ կենտրոնում մակագրված է. *لااله الاالله محمد رسول الله*: Չկա աստված բացի աստծուց, և Մուհամմադն է նրա մարգարեն. Աբուբարքը, Սմար, Սաման և Ալի): Թագավորական կնիքների մակագրությունը միայն մոնղոլերեն է, առաջինը թղթի քայքայման հետևանքով ամբողջապես վնասված է, իսկ երկրորդը չափազանց պարզ է և ընթեռնելի:

Եթե հիմք ընդունելու լինենք վավերագրի թվականի մեր վերծանությունը, այս վերջին հրովարտակը նույնպես հրապարակված է իլխան Աբու-Սաիդի կողմից, նախորդից միայն Յ ամիս հետո: Յավոթ, ինչպես ասվեց, չի պահպանվել բնագրի սկզբի մասը, որտեղ, ինչպես առաջին հրովարտակում, երկրորդ տողի վրա պետք է լինեին *ابوسعبيد بهادر خان سوزومين* խոսքերը: Վավերագրի թվականի ներկա վերծանությունը [سبعماية و ثلاثون احدى] (յոթը հարյուր երեսուն և մեկ) մեր կարծիքով ամենահավանականն է: Բանն այն է, որ բնագրի այս մասը խիստ վնասված է: Պարզ կարդացվում է *احدى* (մեկ). տասնավորը ցույց տվող բառը միայն կարելի է նմանեցնել *ثلاثون*-ի (երեսուն), համարյա լրիվ բացակայում է հարյուրավորը ցույց տվող բառը, սակայն կասկած չի կարող, որ եղել է *سبعماية* (յոթ հարյուր): Հրովարտակում կողմից հրապարակված լինելը, ինչպես նաև թվականի վերջնական ճշտումը, հնարավոր կլինի միայն մոնղոլագետների օգնությամբ, երբ կվերծանվի կնիքը, որն, ինչպես ասվեց, չափազանց պարզ է և ամբողջությամբ ընթեռնելի:

Դատելով Ռաշիդ-էդ-դինի տվյալներից, ի դեմս այս երկու հրովարտակաների մենք գործ ունենք Ղազան-խանի օրոք կազմված յառլիզների շարունակ գրված երկու բնորոշ օրինակների հետ: «Ջամե-ուլ-թավարիխի» Գ հատորի Ղազան-խանին վերաբերող բաժնի 22-րդ գլխում, «Մարդկանց յառլիզներ և փայլզաններ տալու գործում սահմանված կարգի մասին» վերնագրի տակ, կարդում ենք.

«...եվ նմանապես, երբ ամեն մի առանձին գործի վերաբերյալ սևագրություն են կազմում, բիթիկչիները չեն կարող դրանք ինչպես որ կա իրենց մրտքում պահել, և ուրիշ անգամ կարող է խոսքի մեջ տարբերություն լինել և նույն հարցի վերաբերյալ գրված հրամանագրերի (հոթներ) մեջ կարող են հակասություններ առաջանալ: Ուստի դրանից խուսափելու նպատակով, հրամա-

յեց որպեսզի հավանականորեն և ենթադրաբար, բոլոր հնարավոր դեպքերի և մարդկանց խնդիրքների մասին արձանագրեն և դրանցից յուրաքանչյուրի համար ամենայն ուշադրությամբ և բոլոր պարագաներն ու նրբությունները հաշվի առնելով մի սևագրություն կազմեն: Երբ այդ բոլորը գրեցին... հրամայեց բոլոր սևագրությունները սրբագրելուց հետո ամբողջությամբ արտագրել մի մատյանում, որն անվանեց «գործնական կանոն» («կանուն-ալ-ումուր»), և ապա հրաման արձակեց, որ այնուհետև բոլոր հրամանագրերը այդ սևագրություններից գրեն, առանց որևէ բան ավելացնելու կամ պակասեցնելու, և եթե խիստ հազվադեպ այնպիսի հարց պատահի, որ նախատեսված չլինի, այդպիսին սևագրեն և ներկայացնեն...»³⁷:

Երբ ուշադիր ընթերցում ենք այս երկու յաուլիդների բնագրերը, անհնարին է չզգալ, որ դրանք շարագրված են նախապես մշակված տրաֆարետով: Այսպես օրինակ, առաջին յաուլիդը իրենից ներկայացնում է մի այնպիսի գրություն, որը կարող էր տրվել յուրաքանչյուր նման դեպքում, երբ վանքապատկան կամ մզկիթապատկան և կամ այլ կարգի սեփականություն հանդիսացող հողեր, ապօրինի կերպով յուրացված են պետական կամ կրոնական բարձրատիճան պաշտոնյաների կողմից: Բնագրում ոչ մի մանրամասնություն չկա. հարցը որոշակիանում է միայն, երբ ասվում է թե ով է դիմողը, ում դեմ և ինչ կապակցությամբ: Մնացած մասերը չափազանց պարզ են, լակոնիկ և շաբլոն: Եթե անձնանուններն ու տեղանունները փոխարինվեն այլ անուններով, այն նույնությամբ կարելի է օգտագործել բոլոր նման դեպքերում: Կարելի է առանց վարանման ասել, որ խոսելով «բոլոր հնարավոր դեպքերի ու մարդկանց գանձատներին» մասին Ղազան-խանը չէր կարող ի նկատի չունենալ այս կարգի վեճերն ու գանձատները, որոնք սովորական երևույթներ էին իլխանական, և ոչ միայն իլխանական, տիրապետության շրջանում:

Սովորաբար հրովարտակների սկզբի մասերում է գրված լինում նրա հրապարակման շարժառիթների մասին: Այդ նշանակում է, որ բնագրերի այդ մասերն են, որ ավելի ինքնատիպ կարող են լինել, վերջին մասերը մեծ մասամբ տրաֆարետային են: Այս տեսակետից էլ ահա ավելի բնորոշ է երկրորդ հրովարտակը, որ սյահպանվել է գերազանցապես իր վերջին մասով: Եթե այնտեղից հանենք «Մղարթ» և «Շամլու» տեղանունները, այդ վավերագիրը ավելի շրջաբերական գրության տպավորություն կթողնի, քան որևէ կոնկրետ հարցի կապակցությամբ հրապարակված հրովարտակի: Ղազան-խանյան տրաֆարետը կրկնակի ընդգծվածությամբ երևան է գալիս հատկապես վավերագրի վերջին՝ յաուլիդային մասում, որով ավարտվում է հրովարտակը: Այստեղ մենք գտնում ենք գիրկընդիառն, տողընդմեջ դասավորությամբ գրված «հրամանագիր-յաուլիդների» (حکم بر لیغ) երկու ձև.

1. «[Թող] վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յաուլիդների և մեծ դիվանի որոշման, և եթե որևէ վեճ լինի դիմեն մեծ դիվանին»:

2. «[Թող] վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յաուլիդների, նրանից շեղվեն և նրան չգերազանցեն: Թող այս կարգով ընթանան և վստահություն տածեն»:

Հետագա շրջանի ոչ թուրքմենական և ոչ էլ սեֆյան հրովարտակներում

³⁷ Ф азлулла х Рашид - ад - дин, Джами-ат-таварих, т. III, составитель персид. текста А. А. Али-Заде, Баку, 1957, № 52.

նման կրկնակի տրաֆարետով արտահայտված վերջավորություն մեզ չի հանդիպել:

Ուշագրավ է նաև մի այլ երևույթ: Նկատելի է, որ բիթիկչիները կամ քյաթիբները հրովարտակը գրելիս, երբ հասել են «յաուլիդ» խոսքին, ընդհատել են տողը և հաջորդ տողի լուսանցքում գրելով «յաուլիդ», գրությունը շարունակել են նոր տողից (յու. 1, տող. 7, յու. 2, տող 6 և 7):

Հնարավոր չէ որևէ խոսք ասել յաուլիդների դիվանական մատյաններում կատարված գրանցումների մասին: Երկու վավերագրերն էլ խիստ մաշվելուց և քայքայվելուց հետո միայն, ոչ շատ հեռու անցյալում փակցվել են ավելի ստվար թղթի վրա, այնպես որ պարզ չէ մեզ համար թե նրանց հակառակ էջերի վրա գրանցման մասին վկայող նշումներ կամ կնիքներ եղ՞ել են թե ոչ: Ուժեղ լույսի ներքո վավերագրերը զննելիս այդպիսի նշումների հետքեր չեն երևում: Այս տեսակետից ուշադրության արժանի են երկու վավերագրերի 13-րդ տողից հետո նկատվող, առայժմ անվերծանելի, նշումները, որ հավանաբար դիվանական դաֆթարներում կատարված գրանցման և կամ կարմիր թամզաներով կնքվելու մասին վկայող նշումներ պետք է լինեն:

Թուրքմենական հրովարտակների նման, իլխանական այս յաուլիդների համար ևս միանգամայն բնորոշ է, որ 1330 թ. օգ. 19 թվակիր յաուլիդը գրված է Հարավային Ադրբեջանի Ուջանի արքունի ամառանոցում, իսկ նոյեմբերի 28-ինը իլխանների Դաշտային Ղարաբաղի ձմեռային կայանում:

Իլխանական շրջանի գրասենյակային տերմինոլոգիայի տեսակետից ևս հրատարակվող յաուլիդները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Այսպես, երկու վավերագրերում հանդիպում ենք հրովարտակների տարբեր անվանումների. «հրամանագիր» («հոքմ — حکم և հոգն. «ահքամ — احکام» ձևերով), «հրամանագիր յաուլիդներ» («ահքամ-ե յաուլիդ — احکام یرلیغ», «ալթամդա» («التمغا»)), «Մեծ դիվանի հրամանագիր — ալթամդա» («հոքմ-ե ալ թամդա-յե Դիվան-ե բոզորգ — حکم التمغا دیوان بزرگ»), «բարաթ» («հոգն. «բարավաթ — بروات» ձևով), ինչպես նաև պարզապես «գրություն» («մաքթուբ — مکتوب»): Անշուշտ այս անվանումները չեն կարող հրովարտակների տարբեր տեսակների անվանումներ համարվել: Հենց այս երկու վավերագրերի բովանդակությունից, շարադրման եղանակից և արտաքին նշաններից կարելի է եզրակացնել, որ այս կարգի հրովարտակները կարող էին և «հոքմ-ե յաուլիդ» և «հոքմ-ե ալթամդա» անվանվել, որովհետև նրանք ունեն յաուլիդային խիստ կարգադրություն պարունակող վերջավորություն և կնքված են կարմիր կամ «ալ» թամզաներով:

Վակֆային կալվածագրերի մասին օգտագործված է ոչ թե թուրքմենական և սեֆյան վավերագրերի համար խիստ բնորոշ «վակֆնամե — وقفنامه» կամ «վակֆնամչե — وقفنامهچه», այլ ավելի հին, արաբական «վակֆիյե — وقفیه» տերմինը:

Պետական-վարչական, գրասենյակային և հոգևորական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնյաներից հիշատակված են «հաքիմ» («հոգն. «հուքքամ — حکام» ձևով), «նայիր» («հոգն. «նավվար — نواب» ձևով), «մութասարիֆ» («متصرف») «կադի» («ակզա-ուլ-կուզզաթ — القضاة») «բիթիկ-չի» («بيتکچی»), «Մեծ մեվլանա» («մեվլանա-յե ա՛ղաթ — مولانا اعظم»), իսկ հայ հոգևորականների համար «մարհասա» («مرحسا») և «քեշիշ» («کشیش») տերմինները:

Ավելի սակավ են աշխարհագրական անունները: Եթե հաշվի շանենք հրավարտակաների գրչության վայրերի՝ Ուջանի և Դաշտային Ղարաբաղի հիշատակութունը վավերագրերի վերջում, ապա այստեղ գլխավոր վարչական կենտրոնը, որի հաքիմներին, նայիրներին, մութասառիֆներին ու բիթիկչիներին է ուղղված առաջին հրովարտակը, դա նախիջևանն է, որի անմիջական ենթակայության տակ էր գտնվում Դարաշամբի շրջանը: Առաջին անգամն ենք հանդիպում «Շամբու» տեղանվանը (յուլ. 2), որը պարզ չէ արդյոք նույն «Շամբ», «Դարաշամ» կամ «Դարալու Շամլըղ»³⁸ անվան այլ տարբերակն է թե բոլորովին ուրիշ մի բնակավայր:

Տարօրինակ է նաև «ماکی» («Մաքի») տեղանունը, որ հիշատակվում է որպես անանուն մեմլևանա՝ մուսուլմանների կազիի (դատավորի) պաշտոնավայր: XIV և հետագա դարերի աղբյուրներում մեզ չի հանդիպել Դարաշամբի մոտ գտնվող այդպիսի մի բնակավայր: Հայտնի է միայն, որ աղբյուրանական արտասանությամբ այդպես է կոչվել և այժմ էլ այդպես է կոչվում Պատմական Հայաստանի Արտազ գավառի Մակու քաղաքը³⁹, որը սակայն XVI—XV դդ. պարսկական մատենագրության մեջ և հետագայում էլ գրվել է «ماکو» («Մաբու») կամ ماکوای («Մաբուվիյե»): Այս պարագայում ամենահավանականը մնում է Մակու քաղաքը, որը ավելի մոտ է Դարաշամբին: Հավանաբար Դարաշամբի վանքը կալվածներ է ունեցել նաև հարևան Արտազ գավառում, որոնք կարող էին գրգռել Մակվի մուսուլման հոգևոր ֆեոդալների ախորժակը: Յավոթ, ջնջված է վանքապատկան կալվածներից առաջինի անունը (յուլ. 1, տող 5), որը ամենայն հավանականությամբ գյուղի անուն պետք է եղած լինի: Պահպանվել է միայն «Ախտաբուր» կոչվող հանդի անունը, իսկ հանդի ո՛ր գյուղի սահմաններում գտնվելու մասին ոչ հրովարտակում և ոչ էլ այլ աղբյուրներում լրացուցիչ տեղեկություններ չկան:

* * *

Շամբի կամ Մաղարդա (Մղարթ) Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը Պատմական Հայաստանի խոշորագույն և կեղեցական հաստատություններից մեկն է եղել: Ըստ ավանդության այն հիմնադրված է Հայաստանում քրիստոնեությունից տարածման ամենավաղ ժամանակներում⁴⁰ և որպես այդպիսին մեծ ժողովրդականություն է վայելել, միաժամանակ հանդիսանալով հայ ֆեոդալական վերնախավի հոգատարության առարկա:

Թեև բանասիրության կողմից հիմնավորապես հերքված է Բագրատունյաց թագավորական տան ներկայացուցիչների Նախավկայի վանքին նվիրած կալվածներին վերաբերող և վաղուց հետե գիտական շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերի վավերականությունը⁴¹, սակայն, միայն այն փաստը, որ բացի էջմիածնից, Հայաստանի և ոչ մի վանքի վերաբերյալ այնքան շատ թագավորական հրովարտակներ և հաստատուն ու հավաստի կալվածագրեր և այլ վավերագրեր չեն պահպանվել, որքան Նախավկայի վանքի, ինքնին խորհել է տալիս, որ միշտ էլ առավել մեծ են եղել այդ վանքի ազդեցությունն ու նյութա-

38 Տես ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 5 և 16:

39 Հմմտ. «Բաբու» աղբյուր. «Բաբի»:

40 Հ. Ո ս կ յ ա ն, Վասպուրական—Վանի վանքերը, Վիեննա, 1942, էջ 533:

41 Ղ. Ա լ ի շ ա ն, Միսական, Վենետիկ, 1893, էջ 516, հմմտ. Հ. Ո ս կ յ ա ն, Վասպուրական—Վանի վանքերը, Վիեննա, 1942, էջ 569, 577:

կան հնարավորությունները և անհամեմատ ավելի մեծ՝ նրա վայելած արտոնությունները:

Մի կողմ թողնելով Մատենադարանի արխիվային ֆոնդերում և այլուր գտնվող հարյուրավոր հալերեն վավերագրերը (կոնդակներ, կալվածագրեր, համախոսական գրություններ և այլն), որոնց մի փոքր մասը 1941 թ. լույս է ընծայել Հար. Աբրահամյանը⁴², ավելորդ չենք համարում մի քանի խոսք ասել Մատենադարանի արաբատառ վավերագրերի ֆոնդում պահվող շուրջ 70 պարսկերեն փաստաթղթերի մասին: Արանցից 30-ը շարիաթական-նոտարական արձանագրություններ, կալվածագրեր, համախոսականներ և այլ կարգի տնտեսական նշանակություն ունեցող վավերագրեր են, իսկ 40-ը թագավորական հրովարտական և տեղական բեգլարբեգերի, խաների և թագածառանգների կողմից տրված հրամանագրեր:

Ստորև տալիս ենք հրովարտականի և հրամանագրերի ժամանակագրական ցանկը, նշելով միայն շնորհողի անունը, հրապարակման թվականը և կաթողիկոսական դիվանի համապատասխան թղթապանակն ու վավերագրի համարը:

1. Աբու-Սաիդ իլխան	1330 թ.	1գ—1011
2. » » »	1330 թ.	»—1012
3. Ուզուն-Հասան Աղ-կոչունլու	1475 թ.	1ա—3
4. Շահ Աբբաս I. Սեֆևի	1604 թ.	»—32
5. Շահ Սաֆի »	1631 թ.	»—59
7. Շահ Սուլեյման Սեֆևի	1668 թ.	»—103
8. » » »	1668 թ.	»—139 ա
7. Շահ Սուլեյման Սեֆևի	1668 թ.	»—108
9. » » »	1669 թ.	»—139բ
10. Շահ-Սուլթան Հուսեյն Սեֆևի	1696 թ.	»—200
11. » » » »	1700 թ.	»—53
12. » » » »	1711 թ.	»—234
13. Շահ Աբբաս III (կեղծի՞ք) (1731—1736 թթ.)		»—210
14. Աբբաս-Միրզա Ղաջար (փոխարքա)	1822 թ.	1ե—782
15. » » » »	1824 թ.	»—712
16. » » » »	1825 թ.	»—713
17. » » » »	1827 թ.	»—751
18. » » » »	1829 թ.	»—678
19. » » » » (փորագրված է վանքի դռան ճակատին	1831 թ.	1գ—1007
20. Բահրամ-Միրզա Ղաջար (որդի Աբբաս Միրզայի)	1826 թ.	1ե—753
21. » » » » »	1827 թ.	»—750
22. » » » » »	1829 թ.	»—754
23. Ջահանգիր Միրզա » »	1831 թ.	»—776
24. » » » » »	1832 թ.	»—775

⁴² Կալվածագրեր և տնտեսական այլ գործարքների վերաբերյալ արխիվային վավերագրեր, պրակ 1, կազմից Հար. Աբրահամյան, Երևան, 1941, վավ. 1—4, 16—22, 24—28, 31, 33, 36, 39, 48—49, 53, 55—56, 86—88, 92—95, 98—101, 114, 116—118, 120, 126, 129:

25.	Մուհամմադ-Ռահիմ-Միրզա	»	1839 թ.	»—783
26.	»	»	1847 թ.	»—794բ
27.	»	»	1856 թ.	»—800
28.	»	»	1860 թ.	4—86
29.	Նասրուլլա-Միրզա	»	1863 թ.	1ե—88
30.	»	»	1863 թ.	»—809
31.	Ամիր-Նիզամ		1840 թ.	»—785
32.	»		1841 թ.	»—786
33.	Շուջա-ուդ-Դովլե		1869 թ.	»—814ա
34.	»		1869 թ.	»—814բ
35.	»		1869 թ.	4—87
36.	Մուհամմադ-Հասան խան		1828 թ.	1ե—782
37.	Իզզ-էդ-դին խան		1836 թ.	»—779
38.	Հասան խան		1838 թ.	»—781
39.	Մուհամմադ-Թահեր խան		1847 թ.	»—794ա
40.	Անանուն (կնիքի վրա «Բանի Մուհամմադ») անթվական			»—797

Բացի սկզբի իլլսանական երկու հրովարտականներից, որոնց պարսկերեն բնագրերը, հայերեն թարգմանությունն ու լուսանկարները հրատարակվում են հոդվածիս վերջում, երրորդ՝ Ուզուն-Հասանի հրովարտակը լույս է տեսել մեր կազմած «Հրովարտականների» Ա պրակում⁴³: Իսկ 4-րդ և 5-րդ՝ Սեֆյան Շահ Աբբաս Ա-ի և Շահ Սաֆիի հրովարտականները նույն մատենաշարի Բ պրակում⁴⁴: Մյուս, ինչպես հրովարտականները, այնպես նաև կալվածազորներն ու այլ դիվանական նյութերը դեռևս մասնագիտական ուսումնասիրություն չեն ենթարկված և չեն հրատարակված:

Վերը թվարկված հրովարտականների ընդգրկած ժամանակաշրջանը բավական մեծ է. 1330—1869 թթ.: Այսինքն շուրջ հինգ և կես դար: Կան բավական խոշոր ընդմիջումներ: Ավելի զգալի է հետ-իլլսանական և հատկապես վաղ-թուրքմենական հրովարտականների պակասը: Համարյա ոչ մի հրովարտակ չի պահպանվել նադիրյան և նրան հաջորդած կիսանկախ խանությունների ժամանակաշրջանից: Մինչդեռ չափազանց հարուստ և բազմաբովանդակ են դաշարյան շրջանի հրովարտականները: Դրանք բնորոշ են հատկապես նախավկայի վանքի և ընդհանրապես հայոց եկեղեցու ու հայ համայնքի նկատմամբ իրանական կառավարող շրջանների կողմից դրսևորվող հոգատարության և սիրաշահման շիշտված քաղաքականության բացահայտման տեսակետից: Մի քաղաքականություն, որ XIX դարի առաջին տասնամյակներում որդեգրել էին Իրանի քաղաքագետները, հատկապես թագաժառանգ և փոխարքա Աբբաս-Միրզան, նպատակ ունենալով քայքայել և դիմազրկել հայերի մեջ շուրջ 200 տարվա անցյալ ունեցող և XIX դարի սկզբներին ավելի քան ամբապնդված ու որոշակի հակաիրանական վտանգավոր կերպարանք ստացած բուսական կողմնորոշումը:

Հասկանալի է, իհարկե, որ հրովարտականների մեծ մասի հիմնական բովանդակությունը վերաբերում է վանքին տրվող տնտեսական առանձնաշնորհումներ-

⁴³ ՄՊՎ, Հրովարտականներ, պրակ Ա, վավ. 5:

⁴⁴ Նույն տեղում, պրակ Բ, վավ. 2, 20:

րին: Կան նաև վանահայրերի նշանակման և հայ համայնքի նկատմամբ նրանց իրավունքների հաստատման մասին հրապարակված հրովարտականքեր: Սակայն անհրաժեշտ է նշել, որ Նախավկայի վանքի կալվածատիրական տնտեսության և վայելած հարկային իմունիտետի ուսումնասիրության համար, առավել կարևոր նշանակություն ունեն վերոհիշյալ 30-ի շափ պարսկերեն և անհամեմատ ավելի մեծ թիվ կազմող հայերեն կալվածագրերը, որոնք մեծ շափով լրացնում են հրովարտականքի տվյալները և լցնում վերը մատնանշված ժամանակագրական բացը:

Առանձին ուշադրության արժանի են վանքի հոգևոր վիճակի մեջ մըտնող Բաշ-Քյանդ, Օրթա-Քյանդ և Դիր-Քյանդ գյուղերի ազատ համայնքների կողմից կալվածատեր-ֆեոդալների և պետական պաշտոնյաների ոսոճությունների դեմ մղված երկարատև պայքարի մասին վկայող վավերագրերը, որոնք XVI—XVIII դդ. ֆեոդալական խռչոը հողատիրության համատարած տիրապետության դեմ խիստ փոքրամիվ համայնքային հողատիրության ցույց տված համառ դիմադրության ուսումնասիրման համար կարևոր նշանակություն ունեցող եզակի սկզբնաղբյուրներ են⁴⁵:

Ներկա հոդվածի սահմաններում դժվար է հանգամանորեն քննության առնել և նշել հրատարակվող լաուիդների աղբյուրագիտական արժեքը, հատկապես Նախավկայի վանքի վակֆային կալվածատիրության և մանավանդ օտար տիրակալների կողմից նրան շնորհված մուսաֆուրության պատմության տեսակետից: Նույնիսկ հարևանցի ծանոթությունը թվարկված հրովարտականքի և հատկապես նշված կալվածագրերի բովանդակության հետ, իրավունք է տալիս պնդելու, որ իրոք այդ վանքի կալվածատիրական կարողությունների և վանական տնտեսության պատմությունը սկսում է շատ վաղ ժամանակներից: Գոյություն ունեցող արխիվային և մատենագրական հսկայական փաստական նյութի ժամանակագրական ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս լուսաբանելու այդ տնտեսության պատմության շատ հարցեր, որոնք սկիզբ են առնում հայ պետականության առկայության ժամանակներից, շարունակվում են ամբողջ օտար տիրապետության շրջանում և հասնում մինչև XIX դարի վերջերը:

Նախավկայի վանքի պատմության վերջին ուսումնասիրողներից է Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ դոկտոր Հ. Ոսկյանը, որը հենվելով միայն հայկական աղբյուրների վրա, աշխատել է ի մի բերել նախորդ ուսումնասիրողների (Շահխաթունյանց, Սմբատյան, Փափազյան, Բասմաջյան, Ալիշան և այլն) բոլոր տվյալները և շարադրել վանքի համառոտ պատմությունը⁴⁶: Նա փորձել է նաև տալ վանքի առաջնորդների հաջորդական ցանկը, որն, ինչպես պետք էր սպասել, համապատասխան տվյալների բացակայության պատճառով, բավական թերի է⁴⁷: Իր նախորդների նման Հ. Ոսկյանը նույնպես հնագույն տեղեկությունները քաղում է X դարին վերագրվող Աշոտ թագավորի, Հռիփսիմե արքայադստեր և Խաչիկ կաթողիկոսի նվիրագրերից և կոնդա-

45 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 8, թղթ. 1բ, վավ. 103, 130, 139, թղթ. 1գ, վավ. 271, 274, 279, 312:

46 Հ. Ոսկյան, Վասպուրական—Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 527—570: Նույն գրքի 573—672 էջերում տրված են Մաղարդա վանքին վերաբերող 27 կոնդակների նկարագրություններ և բնագրեր:

47 Նույն տեղում, էջ 533—565:

կից⁴⁸: Իրավացի է նա, երբ ընդունելով հանդերձ Ալիշանի և Բասմաջյանի առարկութունները այդ աղբյուրների անվավերականության մասին, նշում է, որ դրանք «ունին պատմական որոշ հիմքեր և անոնց վրա են բարձրացած»⁴⁹:

Հրատարակվող յաւիղները գալիս են ապացուցելու, որ Նախավկայի վանքը ամբողջ մոնղոլական տիրապետության շրջանում և ավելի առաջ վակֆային և մուաֆության լայն իրավունքներ է վայելել: Իլիսան Աբու-Սաիդի հրովարտակի «Հին փաստաթղթերի բովանդակության համաձայն» (بوجوب مضامين بروايات قديمه) խոսքերը հիմք են տալիս խոսելու ավելի վաղ ժամանակների մասին և առաջ քաշելու այն տեսակետը, որ այդ արտոնությունները հաստատված և փաստագրված են եղել նաև մոնղոլներին նախորդող էլտկուղյան աթարեկների ու Սելջուկյան սուլթանների օրոք, հավելով արդեն վերոհիշյալ անվավեր փաստաթղթերում հետին թվով արձանագրված նվիրատվությունների ժամանակաշրջանին:

Աբու-Սաիդին դիմող և նրանից հրովարտակ ստացող կրոնավորը եղել է Տեր Վարդան անունով մեկը (محرر اسرار تان), որը պետք է վանքի առաջնորդը եղած լինի: Ոսկյանի մոտ XIV դ. սկզբին (1332 թ.) վանքի առաջնորդ է հիշված ոմն տեր Սարգիս⁵⁰, որը ամենայն հավանականությամբ նոր է ստանձնած եղել վանքի առաջնորդությունը, անմիջապես հաջորդելով յաւիղ ստացող տեր Վարդանին:

Ընդհանրապես պետք է ասել, որ պարսկերեն հրովարտակների տվյալները ավելի պաշտոնական և հավաստի բնույթ ունեն և կարևոր են վանքերի վանահայրերի ու առաջնորդների հաջորդականությունը ճշտելու համար: Նրանք կարող են օգնել լրացնելու ձեռագրաց հիշատակարաններում ժամանակագրական շատ մեծ ընդմիջումներով պահպանված տեղեկությունները: Այսպես, Շ. Ոսկյանի գրքում չկա նաև 1475 թ. Աղ-կոյունլու Ուզուն-Հասանից մուաֆության հրովարտակ ստացող տեր Վարդանի անունը⁵¹: Նույնը կարելի է ասել նաև Շահ Աբբաս 1-ի 1604 թ. հրովարտակում հիշված տեր Սարգիս և Անանիա վարդապետի մասին, որոնք այդ թվականին շտապել էին ներկայանալ Երևանի պաշարման դործողությունները անձամբ գլխավորող շահին և ցույց տալով ժամանակին նրա հոր՝ Սուլթան-Մուհամմադ Խուրբանդեի կողմից տրված հրովարտակը, ձեռք բերել վանքի և վանականների մուաֆությունը հաստատող նոր հրովարտակ⁵²: Կարելի է չկասկածել, որ ցարդ անհայտ ուրիշ շատ գործիչների անուններ կարող են երևան գալ վերը թվարկված պարսկերեն հրովարտակների և տնտեսական նշանակություն ունեցող այլ վավերագրերի ավելի հանգամանալից ուսումնասիրության շնորհիվ:

* * *

Հողվածիս սկզբում մենք առիթ ունեցանք համառոտակի ծանոթանալու վերջին 20 տարիների ընթացքում կատարված պարսկերեն հրովարտակների գիտական հրատարակությունների հետ: Ինչպես տեսնում ենք, գնալով ավելի

48 Նույն տեղում, էջ 531, 567—569 և 576—583. հմմտ. Հ ա թ. Ա բ բ ա հ ա մ յ ա ն, Կալվածագրեր, Երևան, 1941, վավ. 1, 2, 3. տես նաև «Կոռնկ հայոց աշխարհի», 1861 թ., N 7, էջ 636—638:

49 Հ. Ո ս կ յ ա ն, նշված աշխատությունը, էջ 569:

50 Հ. Ո ս կ յ ա ն, նշված աշխատությունը, էջ 539:

51 ՄՊՎ, Հրովարտակներ, պրակ Ա, վավ. 5:

52 Նույն տեղում, պրակ Բ, վավ. 2, ծանոթ. 2:

մեծանում է հետաքրքրությունը հատկապես ավելի վաղ շրջանի վավերագրերի նկատմամբ և ամեն անգամ, որպես նոր անակնկալ երևան են հանվում, ինչպես իրանական դիվանագրություն համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող, այնպես նաև Հայաստանում օտար տիրապետության պատմության ու հայ եկեղեցական հաստատությունների իրավա-քաղաքական ու տնտեսական վիճակի ուսումնասիրման համար նոր և կարևոր սկզբնաղբյուրներ հանդիսացող վավերագրեր:

Ամեն մի նոր հրատարակություն մեզ մոտ կամ արտասահմանյան երկրներում, մի ավելորդ անգամ գալիս է հաստատելու, որ դեռևս շատ մեծ թվով վավերագրեր անժանոթ են գիտական շրջանակներին և որ բացի հրատարակված կամ առանձին ուսումնասիրությունների շնորհիվ մեզ հայտնի ժողովածուներից, ինչպես տարբեր արխիվների անմշակ ֆոնդերում, այնպես նաև առանձին անհատների մոտ, դեռ կան շատ վավերագրեր, որոնց հետագա հայտնաբերումն ու հրատարակությունը նոր աշխարհներ կարող է բանալ պատմագրությանը օժանդակող այս կարևոր բնագավառի ուսումնասիրությանը զբաղվող մասնագետների առաջ:

Վերջին 8 տարիների ընթացքում «Հրովարտակաների» Ա և Բ պրակների լույս տեսնելուց հետո երկու անգամ մեզ վիճակվել է վավերագրերի նոր հայտնաբերման ուրախ անակնկալը դիմավորել որոշ ավստրալիացի, երբ պարզվել է, որ դրանց մեջ կան այնպիսի վավերագրեր, որոնք ժամանակագրական առումով կարող էին ընդգրկվել արդեն լույս տեսած պրակներում: «Հրովարտակաների» Բ պրակի առաջաբանում խոսելով այդպիսի մի ժողովածուի անակնկալ ձեռք բերման մասին, նշել էինք, որ այդ կարգի հրովարտակաները մտադիր ենք լույս ընծայել XVII դարի երկրորդ կեսի վավերագրերն ընդգրկող պրակի վերջում, որպես հավելված⁵³: Բայց ահա շանցած հազիվ 2 տարի «Կաթողիկոսական դիվան» մուտք գործեցին ևս 25 պարսկերեն նոր վավերագրեր, այդ թվում իլիսանական այս երկու յառլիղները, որոնց նույնպես կարելի էր միացնել նախորդ վավերագրերին և հրատարակել նախատեսված հավելվածային բաժնում:

Հաշվի առնելով սակայն, խնդրո առարկա երկու յառլիղների հնագրագիտական և աղբյուրագիտական որոշակի արժեքը և պարսկական դիվանագրության ուսումնասիրման համար նրանց բացառիկ կարևոր նշանակությունը, ինչպես նաև ի նկատի ունենալով, որ ներկայումս զբաղված լինելով «Կալվածագրերի» (XIV—XVI դդ.) Ա պրակի հրատարակության պատրաստման գործով, երկար ժամանակ չպիտի կարողանանք ձեռնարկել «Հրովարտակաների» հաջորդ պրակների խմբագրման աշխատանքներին, նպատակահարմար գտանք «Բանրերի» ներկա համարում հրատարակել դրանք և այդպիսով նորահայտ յառլիղների բնագրերը օր առաջ գիտական շրջանառության մեջ մտցնելով՝ մատչելի դարձնել արևելագիտական ավելի լայն շրջանակներին:

⁵³ ՄՊՎ, Հրովարտականեր, պրակ Բ, էջ 76:

Յ Ա Ռ Լ Ի Ղ 1

Օրհնութիւնն բարձրյալն աստծուն.

Աբու-Սաիդ Բահադուր-խան, մեր խոսքը:

Նախչևանի [Տաքիմները, նայիրները], մութասառիֆներն ու բիթիկչինները թող իմացած լինեն, որ համաձայն Վարդան կրոնավորի ներկայացմանը, ... բաժինը և Ախտաբլուրի ագարակը (մազրա՛է) ըստ վակֆային փաստաթղթերի, հրամանագիր-յառլիղների ու ալթամղայի Մղարթի եկեղեցու վակֆերն են և հին ժամանակներից ի վեր մինչև այժմ պատկանում են նրան:

Այժմ մեծ մեկանա և ամենաարդարադատ կազի, Մակվի մուսուլմանների առաջնորդը, — թող հարատեի նրա մեծութիւնը, — ապօրինի և անհարկի... տիրում է այս վակֆին: Եթե այդպես է՝ ապօրինի է:

Դրա համար էլ սուլյն գրութիւնը գրի առնվեց, որպեսզի այսուհետև հակառակ վակֆային փաստաթղթի և հրամանագրի հիշյալ մեկվանան եկեղեցու վակֆում չմիջամտի, և եթե նշված կարգով մինչ այժմ վակֆ է եղել, հին փաստաթղթերի (բարաթներ) բովանդակութեան համաձայն, թողնի Վարդան կրոնավորի տնօրինութեան տակ, որպեսզի վերջինս վարվի համաձայն վակֆ անողի [սահմանած] պայմանների և ըստ Մեծ դիվանի կրկին անգամ հրապարակված ալթամղա-հրամանագրի: Նրանից չշեղվի և նրան չգերազանցի:

Թող այս կարգով ընթանան և վստահութիւն տածեն:

[Գրվեց] 730 թ. դիկա՛դա ամսի 4-ին (1330 թ. օգ. 15), Ուլանում:

Կ Ե Ի Բ

Թող տերը կնքի բարեհաջող:

Յ Ա Ռ Լ Ի Ղ 2

... վակֆային է, բռնութիւն և ստնձգութիւն չանեն, նրանց տներն ու այգիները չավերեն: Այն հոգևորականները, որոնք Սղարթի վանքում են նրստում, իրենց ձեռքում գտնվող հրամանագրերի պատճառով, Շամլուի և նրան մերձակա ու սահմանակից կամ այլ գլուղերի համայնքներին, որոնք այս վայրերում կան, իրենց հովանավորութեան տակ չվերցնեն և չմիջամտեն իրենց չպատկանող մուլքերի [գործերում]:

Դրա համար էլ սուլյն գրութիւնը գրի առնվեց, որ եթե այսպես է՝

I վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յառլիղի և Մեծ դիվանի որոշման, և եթե որևէ վեճ լինի դիմեն Մեծ դիվանին:

II վարվեն ըստ իրենց ձեռքում գտնվող հրամանագիր-յառլիղի, նրանից չշեղվեն և նրան չգերազանցեն: Թող այս կարգով ընթանան և վստահութիւն տածեն:

[Գրվեց] 731 թվականի սաֆարի 15-ին (°) (1330 թ. նոյ. 28), Առանի Ղարաբաղում:

Կ Ե Ի Բ

Թող տերը կնքի բարեհաջող:

بیرلیغ — ۱

- 1 التحية لله تعالى
- 2 ابو سعيد بهادر خان سو [زو] مینر
- 3
- 4 [حکام و نو] اب و متصرفان و بتیکچیان نخچوان
- 5 بدانند کی مرحاسا و ارتان نمود کی حصّه..
- 6 و مزرعه اختاب لور بموجب وقفیه و احکام
- 7 [بیر] لیغ و التمغا وقف کلیسا مغارت است. کی از قدیم العید تاغایت
- 8 بدو تعلق دارد درین وقت مولانا اعظم افضی القضاة عمار المسلمون ما کی
دام معظما
- 9 بیراه و نا واجب درین وقف تصرف... [دا] رند اگر برین موجب است بیراه
باشد بدان سبب
- 10 این مکتوب در قلم آمد تا من بعد خلاف و قفیه و احکام مولانا مذکور در وقفی
- 11 کلیسا مدخل نسازد و اگر برین موجب تاغایت وقف بوده باشد بموجب
مضامین بروات قدیم
- 12 در تصرف مرحاسا و ارتان بگذارند تا بموجب شرط و اقی و احکام و حکم التمغا
دیوان
- 13 بزرگ که بتجدید صدور یافته بتقدیم رسانند و ازان عدول نچویند و تجاوز
نمایند
- 14
- 15 برین جمله روند و اعتماد نمایند فی الرابع من ذی قعده ثلاثین و سبعمایه
- 16 باوجان
- 17 رب اختتم بالخییر — مهر —



1

2

3

4

5

6

7

Вашта 1, (м)

8
9
10
11
12
13
14
15
16
17

Յառիկ 1, (բ)




1

2

3

4

Յառիկ 2, (ա)



5

6

7

8

9

10

11

12

13

14

15

16

17

Βασιλική 2, (ρ)

Իրլից ۲

-
- 1 وقفی است زور و زیادتی نکنند و خانها و باغات ایشانرا خراب نکنند
 - 2 جماعت کشیشان که در دیر مغارت می نشینند بعَلَّت احکامی که در دست دارند
 - 3 در دیهها شملوو امیزه بران و سرحد او و دیگر جماعت
 - 4 که درین مواضع فلانکس بوده بحمایت نگیرند و بر املا کی کی بدیشان
 - 5 تعلق نداشته مد خل نسازند بدان سبب این مکتوب در قلم آمد تا اگر برین موجب باشد
 - 6 چنانکه حکم
 - 8 یرلیغ در دست دارد و دیوان بزرک
 - 9 مقرر گرد انیده بتقد یم رسانند
 - 11 واگر نزاعی باشد مرجوع با دیوان بزرک
 - 12 دانند
 - 7 چنانکه حکم
 - 10 یرلیغ نافذ شده در دست دارند بتقد یم رسانند ازان [عدول نجویند]
 - 13 وتجاوز نکنند برین جمله روند واعتماد نمایند فی
 - 14
 - 15 الخامس عشر من صفر لسنه احدى و ثلثون و [سبعمائه]
 - 16 بقرا باغ اران
 - 17 — مهر — رب اختم بالخیر

А. Д. ПАПАЗЯН

ДВА НОВООТКРЫТЫХ ИЛЬХАНСКИХ ЯРЛЫКА

(Р е з ю м е)

В 1961 году, вместе с другими архивными материалами, из Литературного музея АН АрмССР в Гос. Матенадаран поступили два старинных ильханских ярлыка—один из которых датирован 4 зикаада 730 г. хиджры (19 августа 1330 г.), а другой—15 сафара 731 г. (?) (28 ноября 1330 г.). В Матенадаране эти документы хранятся в фонде католикосов под №№ 1011 и 1012, в деле 1з.

Первый ярлык, текст которого дошел до нас полностью, принадлежит ильхану Абу-Саиду (1316—1335 гг.), а текст второго ярлыка утрачен в начальной части, вследствие чего имя издавшего его ильхана не сохранилось. Предложенная автором расшифровка даты дает некоторые основания полагать, что и второй ярлык должен принадлежать Абу-Саиду. Однако из-за дефектности и изношенности этой части текста вопрос даты и принадлежности данного ярлыка еще нуждается в дальнейшем уточнении, что станет возможным лишь после расшифровки монгольской надписи на печати ярлыка.

Оба ярлыка даны монастырю Мхарт или Степаноса Первомученика в Дарашамбе в подтверждение его муафства и вакуфно-землевладельческих прав.

Благодаря этим новонайденным ярлыкам хронологическая граница дошедших до нас подлинников персидских указов отодвигается назад еще на 123 года и доходит до 30-х годов XIV века. (До сих пор известным в востоковедении древнейшим персидским указом считался хранящийся в Гос. Матенадаране указ султана Джаханшаха Кара-Коюнлу 1449 года). Оба ярлыка помогают уяснению некоторых общих вопросов персидской дипломатики и, в особенности, делопроизводства ильханского периода. Особый интерес представляет концовка второго документа с его двумя различными трафаретными формулами.

Публикуемые ярлыки, как новые первоисточники, имеют важное значение вообще для изучения муафских прав армянской церкви и особенно для истории известного Мхартского монастыря, основанного еще в пору распространения христианства в Армении.

H. D. PAPA ZIAN

DEUX NOUVEAUX IARLYKS D'ILKHANS

Les pièces d'archives que le Musée de Littérature de l'Académie des Sciences d'Arménie confia au Maténadaran en 1961, comprenaient deux iarlyks d'ilkhans: le premier daté du 4 zikaadé 730 de l'Hégire (19 août 1330); le second, du 15 safar 731 (?) (28 novembre 1330) qui


sont actuellement inscrits au Maténadaran, dans le fonds des catholicos, sous les n^{os} 1011 et 1012 du dossier Iz.

Le premier iarlyk, entièrement préservé, est de l'ilkhan Abou-Saïd (1316—1335). Quant au second, la partie supérieure manquant, il est difficile de se prononcer sur le nom de l'ilkhan qui l'a émis. La date avancée par l'auteur laisse supposer que le second iarlyk est également d'Abou-Saïd. Cette question, comme celle de la date exacte du second iarlyk, ne pourra cependant être résolue, en raison des défauts et de l'usure du texte, que si l'on déchiffre l'inscription mongole dont le sceau du iarlyk est chargé.

Ces deux iarlyks avaient été remis au monastère de Mkhart (ou de Stéphane le Martyr) à Darachamb, en confirmation de l'immunité (muafi) acquise et de la jouissance des biens vakoufs.

La présence de ces iarlyks nous fait reporter la limite chronologique des décrets persans originaux aux années 30 du XIV^e siècle en lui imposant un nouveau recul de 123 années. (Jusqu'à présent, le décret persan le plus ancien semblait être celui du sultan Djahanchah Qara Qoyunlu datant de 1449, conservé au Maténadaran). Ces nouveaux iarlyks apportent quelque lumière sur certains points de la diplomatie et principalement des pratiques de chancellerie persanes de la période ilkhanienne. On remarque à la fin du second document deux différentes formules consacrées qui présentent un intérêt particulier.

Ces documents publiés sont une nouvelle source pour l'étude des droits „muafi“ dont jouissait l'Eglise arménienne et pour l'histoire du célèbre monastère de Mkhart, fondé dès l'apparition du christianisme en Arménie.



ՀԱԿՈՒ ՓԱՓԱԶՅԱՆ

ՄԵՍՐՈՊԱՏԱՌ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեծանուն լեզվաբան ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը 1910—20-ական թվականներին «Հանդես ամսօրեայ»-ի էջերում և այլուր լույս ընծայած «Հայոց գրերը», «Հայ գրերու ձևափոխությունները», «Հայերեն տառերի ձևափոխման շուրջը» հոդվածաշարքերում և այլ առիթներով բազմիցս անդրադարձել է մեսրոպյան այբուբենի կիրառական նշանակությանը և խոր ու բազմակողմանի ուսումնասիրության ենթարկել նրա հնչյունային-տառադարձական հարուստ հնարավորությունների հարցը¹:

Գծվար և պատասխանատու գործ է այդ բոլորից հետո խոսք վերցնել և փորձ անել նոր բան ավելացնելու բազմավաստակ գիտնականի կատարած մասնագիտական ամենալուրջ հետազոտությունների արդասիք հանդիսացող ուսումնասիրությունների վրա:

Անմահ լուսավորիչ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի կապակցությամբ հանրապետական մամուլի էջերում ղետեղած իրենց հոդվածներով, որոնց մեջ հանրագումարի են բերված հայագիտության և հատկապես հայոց լեզվի պատմության բնագավառում կատարված բազմամյա գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, մեր լեզվաբանները առավել ևս ընդգծեցին մեսրոպյան այբուբենի գիտական և գործնական արժանիքները, ավելի բան ամրապնդելով մեր համոզմունքը նրա կատարելության մասին:

«Գրական թերթում» հրապարակած հոդվածում պրոֆ. էդ. Աղայանը, թվելով մեսրոպյան այբուբենի գլխավոր առավելությունները, հատկապես նշում է, որ Մեսրոպ Մաշտոցը խորագետ գիտնականին հատուկ վարպետությամբ կարողացել է օգտագործել իր ժամանակի քաղաքակիրթ լեզուների այբուբենները, վերցնելով նրանցից ինչ-որ դրական է և համապատասխան մեր լեզվի պահանջներին և, որ կարևորն է, խուսափել է այն թերություններից ու սխալներից, որոնք կարող էին խանգարել հայոց լեզվի հարուստ հնչյունների ճշգրիտ արտահայտմանը²:

Եվ իրոք, քաջ տիրապետելով հարևան ժողովուրդների՝ հունաց, ասորոց և պարսից լեզուներին, նա շատ լավ նկատել էր թե ինչպես որոշ ձայնավորների բացակայությունը հատկապես ասորական և պահլավական գրերում մե-

1 Հ. Աճառյան, Հայոց գրերը, Հանդես ամսօրեայ, 1910, № 2, 6, 7—8, 10, 1911, № 4—5, 6—7—8, 1912, № 2—3, 1913, № 3, 1914, № 5—6, 1915, № 1—12, 1921, № 5—6; նույնը առանձին գրքուկ, Վիեննա, 1928, Հայ գրերու ձևափոխությունները, Հանդես ամսօրեայ, 1924, № 3—4, 11—12, 1926, № 9—10, 11—12; Հայերեն տառերի բարեփոխման շուրջը. «Սորհրդային Հայաստան», 1924, № 290:

Տե՛ս նաև—«Երեք հարց Մեսրոպյան այբուբենի շուրջը», «էջմիածին», 1946, № 8, 9, 10. Մեսրոպ Մաշտոց, «էջմիածին», 1954, № 11, 12, 1955, № 2, 3, 4, 5, 1956, № 1, 2:

2 է՛դ. Աղայան, Մեսրոպ Մաշտոցը գիտնական, «Գրական թերթ», 1962, № 13:

ծապես խանգարում է զրավոր խոսքի հարազատ արտահայտմանը, ստեղծում արտասանական շփոթ, տեղիք տալով հնչյունային կամայական մեկնաբանությունների և բառերի աղավաղման:

Խորը գիտական հիմքեր ունի այն փաստը, որ շնայած մեր լեզուն հարյուրամյակների ընթացքում ենթարկվել է բազում փորձանքների, ճնշման ու հալածանքների, կրել օտար և այլազան ազդեցություններ, սակայն զրահավորված հանճարեղ տարրնացու ստեղծած գրով մնացել է անխորտակելի, տատանվել է ու ընկրկել, սակայն չի տապալվել երբեք, այլ ընդհակառակը, զարգացել է ու հարստացել, վերցրել նորն ու պիտանին, վանել հինն ու իր դարն ապրածը և հասել մինչև մեր լուսավոր ժամանակները:

Մեր այբուբենի կատարելությունը ավելի քան ակնբախ է դառնում, երբ այն համեմատում ենք այն ժողովուրդների այբուբենների հետ, որոնք անմիջական հարևանության մեջ են եղել հայերի հետ, անցել են պատմական զարգացման նույն ուղին, ստեղծել ոչ պակաս հարուստ զրավոր մշակույթ և սակայն նոր ժամանակներում արդեն կանգնած են լեզվի և գրականության հետագա զարգացմանը խոչընդոտող այնպիսի դժվարությունների առաջ, որոնք հիմնականում բխում են որդեգրած այբուբենի պակասավոր բնույթից: Մենք ի նկատի ունենք հատկապես արաբական այբուբենը որդեգրած՝ արաբական, իրանական և թուրքական լեզուները:

Դարեր շարունակ շփման մեջ լինելով այդ ժողովուրդների հետ, մեր նախնիները հաղորդակից են եղել նրանց մշակույթին, ենթարկվել որոշ ազդեցությունների, սովորել են և ուսումնասիրել նրանց լեզուն ու գրականությունը³: Այդ մշակութային կապերի և հատկապես գրական առնչությունների մասին են վկայում ոչ միայն մեր միջնադարյան մատենագրության մեջ առկա բազմաթիվ հետաքրքիր տվյալներն ու հիշատակությունները հարևան ժողովուրդների պատմության, գրականության, ժողովրդական բանահյուսության և հոգեվոր մշակույթի այլ բնագավառների վերաբերյալ, այլ նաև մեսրոպյան տառերով մեր ձեռագիր մատյաններում ընդօրինակված ու պահպանված այլալեզու բնագրերը, որոնք կարող են մասնագիտական լուրջ ուսումնասիրություն:

Մեր ժողովրդի պատմական ճակատագիրը այնպիսին է եղել, որ նա ավելի շատ է կարիք ունեցել սովորելու և տիրապետելու այլ, հատկապես տիրող ժողովուրդների լեզուները և հաճախ օգտագործելու այն առօրյա խոսակցության մեջ: Դա առավել կամ նվազ չափով վերաբերում է հատկապես արաբներին, պարսկերենին, թուրքերենին, մասամբ նաև քրդերենին բուն Հայաստանում և վրացերեն, ղպիշաղբերեն, ռուսերեն, լեհերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներին հեռու կամ մոտիկ հայաշատ գաղթավայրերում:

Իրենց իսկ լեզուներով հաղորդակցվելով այդ ժողովուրդների հետ, իսկ շատ դեպքերում, քաղաքական ու տնտեսական մեզ քաջ ծանոթ պայմանների ազդեցության ներքո, ստիպված լինելով իսպառ հրաժարվելու հարազատ հայկազյան լեզվից և խոսելու այդ ժողովուրդների լեզուներով, մեր նախնիները սակայն ամուր կառչած են մնացել հայոց գրին և շարունակել են գրել ու կարդալ միայն մեսրոպյան այբուբենով:

³ Հարևան ժողովուրդներից իրանական գրականության հետ եղած կապերի ուսումնասիրությանն է նվիրված Բ. Չոպասզյանի «Հայ-իրանական գրական առնչությունները V—XVIII դդ.», Երևան, 1962 թ. աշխատությունը:

Մի երևույթ է սա, որն ունի ոչ այնքան սոցիալ-տնտեսական կամ քաղաքական և ոչ էլ գործնական, որքան ավելի իր ժամանակի առումով զազափարական պատճառներ: Միջնադարյան իրականության մեջ, կրոնական գաղափարախոսության տիրապետության պայմաններում գիրն ու գրականությունը և հատկապես այբուբենն ու տառերը դարեր շարունակ սրբագործվել են ու սրբազան բովանդակություն ստացել: Տառը ընդհանրապես սուրբ է եղել, սերտ կապված տվյալ կրոնի սուրբ գրքի՝ քրիստոնյաների մոտ Աստվածաշնչի, մահ-մեղականների մոտ Ղուրանի և մյուս ժողովուրդների մոտ իրենց սրբազան գրքերի հետ: Այդ սրբության գաղափարը հիմք է հանդիսացել հետագայում ավելի զարգացնելու այն և այբուբենի յուրաքանչյուր տառին վերագրելու հրաշագործ հատկություններ, օգտագործելու դրանք գուշակության, հմայության և նման այլ դեպքերում:

Տարբեր ժողովուրդների կողմից օգտագործվող այբուբենները սերտորեն պայմանավորված են նրանց հավատքով և դավանանքով: Դա առաջին հերթին, ինչպես ասվեց, կապված է այն բանի հետ, թե ինչ լեզվով և այբուբենով են գրված նրանց կրոնական-եկեղեցական գրքերը, կամ որ եկեղեցուն կամ դավանանքին են հետևում նրանք: Այդպես է օրինակ, որ սլավոնական ժողովուրդներից նրանք որոնք հետևում են պռավոսլավ եկեղեցուն՝ գրում են սլավոնական այբուբենով (ռուսներ, ուկրաինացիներ, բելոռուսներ, բուլղարներ, սերբեր և այլն), իսկ նրանք, որոնք կաթոլիկական եկեղեցուն են հետևում՝ գրում են լատինական այբուբենով (չեխեր, լեհեր, սլովակներ): Հետաքրքիր է այս տեսակետից իսլամական աշխարհում նկատվող արաբական գրության տարբեր տեսակների առաջացման պատմությունը: Հայտնի է, որ ընդհանրապես իսլամը արգելում է Ղուրանի թարգմանությունը: Հետևաբար բոլոր իսլամական ժողովուրդները իրենց սուրբ գիրքը կարդում են միայն արաբերեն, թեև ունեն իրենց ազգային լեզուն և արաբական, այսինքն Ղուրանի տառերով ստեղծված գիրն ու գրականությունը: Այսպիսով այն այբուբենը, որով գրված է իսլամի սրբազան գիրքը՝ Ղուրանը, հանդիսանում է իսլամական բոլոր ժողովուրդների այբուբենը⁴:

Այսպես էր ուրեմն, որ հայ ժողովրդի բավական սովոր մի հատված, XIV—XV դարերից սկսած, ինչպես Կիլիկիայում և Փոքր Ասիայի հայաշատ կենտրոններում, այնպես նաև Ուկրաինայի և Լեհաստանի գաղթավայրերում ժամանակի ընթացքում մոռանում էին հայերենը և սկսում խոսել տիրող ժողովրդի լեզվով, գրավոր խոսքում սակայն օգտագործելով հայկազյան այբուբենը: Մենք ի նկատի ունենք Օսմանյան կայսրության սահմաններում բնակվող թրքախոս հայության ավելի քան 400 տարիների ընթացքում ստեղծած

⁴ Սակայն XIV—XV դարերից սկսած, երբ Իրանում լայն տարածում է ստանում մուսուլմանական շիա աղանդը և հետզհետե տարածվելով գերիշխող դիրք գրավում, այդ դավանանքին հետևող պարսիկներն ու ադրբեջանցիները ստեղծում են արաբական գրերի միանգամայն նոր և տարբեր ձևեր, որոնք սկզբունքորեն նույնը լինելով, մեծ չափով տարբերվում էին մինչ այդ բոլոր մուսուլմանների կողմից օգտագործվող «քուֆի», «նասխ» և այլ գրերից: Դրության այդ նոր ձևերը արագորեն տարածվում, համազգային կիրառություն են գտնում Իրանում և սկսում են խստորեն սահմանազատվել սուննիների օգտագործած գրերից: Այս տարբերությունը առավել ևս շեշտվեց սեֆյան Իրանի և օսմանյան թուրքիայի միջև մղվող երկարատև պատերազմների տարիներին, պատերազմներ, որոնք տնտեսական և քաղաքական որոշակի հիմքեր ունենալով հանդերձ՝ արտաքննապես կրոնա-դավանաբանական հակամարտությունների շղարշով էին պարուրված:

մատենագրական հարուստ ժառանգությունն ու վիթխարի տպագիր գրականությունն ու մամուլը և Ղրիմի ու Արևմտյան Ուկրաինայի ղփչաղախոս հայության հայատառ ղփչաղերեն և ապա լեհերեն ձեռագրերն ու փաստաթղթերը:

Միջնադարյան իրականությունը բնորոշ կրոնա-դավանական նման հիմքեր ունենալով հանդերձ մեսրոպյան այբուբենի ազատ կիրառումը իրենց բառային կազմով ու քերականական կառուցվածքով միանգամայն այլ լեզվախմբերի պատկանող լեզուներում առաջին հերթին պայմանավորված էր նրա բացառիկ կատարելությամբ և հնչյունային հարուստ համակարգով:

Մեր նպատակից դուրս է համակողմանի գնահատման ենթարկել հայատառ թուրքերեն ձեռագիր և տպագիր հսկայական գրականությունը, որը մեսրոպատառ այլալեզու գրականության մեջ առաջինն է թե իր ծավալով և թե բովանդակությամբ: Չենք կարող սակայն չհավաստել արևմտահայ գրականության և հասարակական մտքի պատմության լավագույն գիտակ Գ. Ստեփանյանի այն միտքը, որ այդ գրականությունը լեզվով միայն թուրքերեն, իսկ բովանդակությամբ զուտ հայկական էր և խոշոր դեր է խաղացել հայ ժողովրդի արևմտյան հատվածի հասարակական մշակութային կյանքում⁵:

Պետք է ասել, որ լիակատար կատարելությամբ և գերազանց կերպով է կարողացել արտահայտել մեր այբուբենը թուրքերենի բոլոր հնչյունները, յուրաքանչյուր հնչյունին հատկացնելով մեկ տառ և հանգստյան կոչելով մեսրոպյան այբուբենի սկզբում՝ ծ, ձ, ջ, ց և ավելի ուշ նաև ք և ղ տառերը: Եվ այդ կատարելությունը այնքան էր ակներև ու անվիճելի, մանավանդ իրենց իսկ թուրքերի կիրառած արաբական այբուբենի համեմատությամբ, որ առաջադեմ հայացքների տեր թուրք մտավորականության ներկայացուցիչներից ոմանք XX դարի սկզբներին չէին երկնչում շեշտելու այն և հանդես գալու արաբական տառերը հայկականով փոխարինելու առաջարկությամբ:

Անհամեմատ ավելի մեծ է թուրքական լեզուների ընտանիքին պատկանող պոլովեցյան լեզվով, կամ որ ավելի ճիշտ է, ղփչաղերեն հայատառ գրականության նշանակությունը: Շնորհիվ այն բանի, որ հայատառ թուրքերենը գոյություն է ունեցել արաբատառ թուրքերենին զուգահեռ և պահպանվել է մինչև մեր ժամանակները, մենք կարողանում ենք համեմատական ուսումնասիրությամբ բացահայտել և ցույց տալ մեսրոպյան այբուբենի առավելությունները և հնչյունային տառադարձական ճշգրտությունը: Սակայն ղփչաղերենի բնագավառում մենք այդ անել չենք կարող, որովհետև, ինչպես արդեն հաստատված է սովետական և արտասահմանյան թուրքագետ-ղփչաղագետների կողմից, այդ մեռյալ լեզվի հոգևարքի շրջանից պահպանված համարյա միակ գրավոր հուշարձանները հայատառ ղփչաղերեն բնագրերն են⁶:

⁵ Տե՛ս Հայ գրականության պատմություն, հ. 2, Երևան, 1962, ներածություն, էջ 53:

⁶ Տե՛ս ԵՃՅ 2-րդ հրատ., հ. 24, էջ 169: Հայատառ ղփչաղերեն բնագրերի մասին տե՛ս. Jean Deny, Courte note préliminaire sur les textes comans (notamment sur les Ephémérides de Kamténec), „Journal Asiatique“ de juillet-sept. 1921, էջ 134—135:

Jean Deny, L'Arméno-Coman et les „Ephémérides“ de Kamténec (1604—1613), 1957, Wiesbaden.

M. Lewicki, R. Kohnowa, La version turque-kiptchak du „Code des lois des Arméniens polonais d'après le ms. № 1916 de la Bibliothèque Ossolineum, RO XXI, էջ 153—300:

Պահպանված մի քանի բառարաններն ու քերականական ձեռնարկները թույլ են տալիս ասելու, որ ղփչաղախոս հայերը լրջորեն զբաղվել են այդ լեզվի, այսինքն այդ ժամանակ արդեն իրենց խոսակցական լեզվի, քերականության ուսումնասիրությամբ, և XVI—XVIII դարերի ընթացքում ավելի քան մշակելով այն կատարել են կրոնական գրականության որոշ թարգմանություններ, վարել անձնական գրագրություն, կնքել տնտեսական և այլ կարգի պայմանագրեր և կազմել քաղաքային մագիստրատի նիստերի դատարանային-նոտարական արձանագրություններ:

XVI—XVIII դարերից պահպանվել ու մեզ են հասել Արևմտյան Ուկրաինայի Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի նիստերի արձանագրությունները, մեծ մասամբ գրված հայատառ ղփչաղերենով: Հազարավոր էջերից բաղկացած այդ մեծարժեք բնագրերը, որոնց մի զգալի մասի վերստին հայտնաբերման համար մենք պարտական ենք պատմ. գիտ. թեկնածու Վ. Ոսկանյանին և Վ. Գրիգորյանին⁷, բացի այն, որ պատմական կարևոր սկզբնաղբյուրներ են լեհահայ և ուկրաինահայ գաղութի, ինչպես նաև Արևմտյան Ուկրաինայի ներքին և հատկապես քաղաքային կյանքի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության համար, առավել բացառիկ նշանակություն ունեն որպես պատմության ասպարեզից վաղուցհետև անհետացած մի ժողովրդի լեզվական հարստության եզակի մի շտեմարան և անգնահատելի նյութ են մատակարարում այդ լեզվի ավելի ծավալուն ու բազմակողմանի ուսումնասիրությանը:

Նախնական ծանոթությունը այդ նյութերի հետ մեզ բերում է այն հաստատ համոզման, որ դատարանի նիստերում լսված ինչպես քաղաքացիական և տնտեսական, այնպես նաև կենցաղային այլ բազմաթիվ և բազմազան գործերի վերաբերյալ կատարված արձանագրությունների, ինչպես նաև բանասիրությունը հայտնի մի քանի այլ բնագրերի ու բառարանների⁸ և հատկապես ավագ գիտ. աշխատող Օննիկ Եզանյանի կողմից վերջերս ուսումնասիրված և

Kraeplitz-Greifenhorst, Sprachprobe eines armenisch tatarischen Dialektes in Polen, WZKM, XXVI, էջ 307—324:

T. Mankowski, Sztuka Ormian polskich. „Prace Komisji Historii Sztuki“, VI, 1, Krakow, 1934,

T. Kowalski, Wyrozy Kipczackie w języku Ormian polskich, Wilno, 1938.

E. Tryjarski, Za studiow nad rekopisami i dialektem kipczackim Ormian polskich, „Rocznik Orientalistyczny“ XXIII, 2, 1960.

E. Tryjarski, Aus der Arbeit en einen armenisch-kiptschakisch-polonisch-frarösischen Wörterbuch, Wiesbaden, 1960.

E. Schütz, On the transcription of Armeno-Kipchak, „Acta Orientalia“, t. XII, fasc. 1—3, Budapest, 1961.

Т. И. Грунин, Памятники половецкого языка XVI века, „Академику В. А. Гордлевскому к его семидесятилетию“ (сборник статей), Москва, 1953, էջ 90—97:

Т. И. Грунин, J. Deny, L'arméno-coman et les „Ephémérides“, de Kamientec (1604—1613) рецензия, „Вопросы языкознания“, 1958, № 6, էջ 113—116:

О. С. Еганян, Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVI в., „Вопросы языкознания“, 1962, № 5, էջ 151—153:

7 Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), Երևան, 1963, էջ 15:

8 Կարևոր բնագրերից է Չ. Ալիշանի աշխատասիրությամբ 1896 թ. վենետիկում լույս ընծայված Կամենեցյան տարեգիրքը. տե՛ս այս մասին Jean Deny, L'Arméno-coman et les „Ephémérides“ de Kamientec (1604—1613), 1957, Wiesbaden, և Courte note préliminaire

հրատարակության պատրաստված XVI դարի քերականական մի ձեռնարկի⁹ օգնությամբ, լիովին կարելի է վերականգնել ղփչաղերենի բառային ֆոնդը և հասնել այդ լեզվի լիակատար ուսումնասիրությանը:

Հետաքրքիր է լսել թե ինչպես էր հնչում այդ լեզուն մեր հեռավոր ազգակիցների արտասանությամբ: Ահա մի փոքրիկ մուրհակ, որ գրված է 1572 թվականին Կամենեց-Պոդոլսկ քաղաքում.

«Պիզ Բ (2) խարտաշ թողմա Փիլիպ տա Աբրահամ քամէնէցլի, պօլուպսաղ թէնիմիզտա էսիմիզտա եախշի էրբիմիզպիլա պիլինիբ պիզ պու պիզիմ զարբիսիմիզկա Բ (2) իմիզ Ա (1) աղըղտան հար դորանինկ ալնընայ խայտա եօլախսայ սարնա բիշիզմայ, խայսիբի խայտըխ պորչու Գրիգորկա տէր Պետրոս օղլունայ սբուլնիյ խօլտան ՄԲ (52) Ֆլորին, նեմիչ սանուվու հար Ֆլորին Լ (30)—ար հրոշ դողրուտա դային պորչ: խայսի սումանը պիզ Բ (2) խարտաշ եօղարը եազըլկան դուդունուր պիզ դոլամա Գրիգորկա հալիկի եուվուխ քէլկան Իլով եարմարբինայ նախդ նեմիչ սպիտակսը պիլա Բ (2)—իմիզ Ա (1) խօլտան պիրի պիրամիզտան քէրի դուշմիչին պարչա դուրու խումաշդան պաշխա: Այ էկարբի դոլամայ պիզ Գրիգորկայ եօղարը եազըլկան զամանընայ նախդ սպիտակ պիլա նա նեբի էքսիբիբ քօրսա պօլկայ պիզ դոլամակա նեբի ճանըպիլա ալդսա պարչա դուրու դորատանտա անդդան պաշխայ: Դանըխ պու զարբիսքա մէն Հօլուպքո բի եազտըմ պու զարբիսնի: Տաղըն արգրիս քօնուլուքումուզ ուշուն պիզ Բ (2) խարտաշ խոլտուխ քենսի վլասնըչ մոհարումուզնու պու պիզիմ զարբիսիմիզկայ վիլագիսվըչ: եազըլտը թվ. ԹԻԱ (1572), մարտնընկ Ժ (10)»¹⁰:

Մտտավոր թարգմանությունը հետևյալն է.

«Մենք երկու հարազատ եղբայրներ կամենեցցի Ֆիլիպն ու Աբրահամը լիակատար առողջ և զիտակից վիճակում, անձամբ ներկայանալով, միաբերան («իբիմիզ բիր ազըղտան») հաստատում ենք, որ այս մեր գրութունն է այն մասին, որ մենք իսկապես պարտք ենք մնացել Տեր Պետրոսի որդի Գրիգորին ձեռք-վեցրած 52 ֆլորին, լեհական դրամով չուրաքանչյուր ֆլորինը 30-ական հրոշ: Այս դոլմարը մենք երկու եղբայրներս վերոհիշյալ Գրիգորին պետք է հատուցանենք մինչև Լվովի առաջիկա տոնավաճառը, լեհական արծաթ դրամով առանց որևէ տեսակի գործվածքեղենի, երկուսս միաժամանակ (բառացի «երկուսս մի ձեռքով» «իբիմիզ բիր խոլդան») առանց մեկը մյուսից ուշանալու: Նշանակում է, որ եթե նշված ժամկետում հիշյալ Գրիգորին մեր պարտքը հատուցելիս կանխիկ արծաթ դրամից պակասի՝ մենք պարտավոր ենք պակասը լրացնել նրա ցանկացած տեսակի ապրանքով:

Վկա է այս մուրհակին Հոլուբքոն որ գրեց այն, և մենք երկու եղբայրներս մեր հոժար կամքով դրեցինք մեր սեփական կնիքները այս մեր մուրհակի ներքո: Գրվեց 1021 (1572) թ. մարտի 10-ին»:

Կարծում ենք կարելի է չկասկածել, որ եթե շուրջ 800 նիշից բաղկացած այս փոքրիկ բնագիրը պարունակում է այսքան շատ մտքեր և հասկա-

sur les textes comans (notamment sur les Ephémérides de Kamieniec), „Journal Asiatique de juillet-septembre 1921, էջ 134—135, որոնք գրախոսված են Տ. Ի. Գրունինի կողմից, տե՛ս „Вопросы языкознания“, 1958, № 6, էջ 113—116:

⁹ Օ. С. Еганыч, Об одном армяно-кыпчакском грамматическом пособии XVI в., „Вопросы языкознания“, 1962, № 5, էջ 152—154:

¹⁰ Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (XVI դ.), Երևան, 1963, էջ 98:

ցություններ, ապա պահպանված տասնյակ հազարավոր ընդարձակ արձանագրությունների և այլ մատենագրական նյութերի ամբողջական ուսումնասիրությունը իրոք հնարավորութուն կտա մեզ ծանոթանալու ղվիչաղերենի ամբողջ բառային ֆոնդի հետ, էլ շենք խոսում այդ լեզվի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունների մասին, որոնց թեկուզ ամենահամառոտ նկարագիրը կարող է խիստ ծանրաբեռնել մեր ներկա հոգվածը:

Մեր ժողովրդի առանձին հատվածների կողմից որպես խոսակցական լեզու օգտագործված օտար լեզուներից կարելի է ասել որ միայն քրդերենն է, որով թեև խոսել են Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններում բնակվող որոշ թվով հայեր, սակայն այն չի եղել երբեք գրավոր հաղորդակցման միջոց¹¹:

Ուշագրավ է սակայն այն փաստը, որ, իր հետաքրքիր բովանդակությամբ վաղուց արդեն գիտական շրջանառության մեջ դառնվող Մատենադարանի № 7117 ձեռագրում բազմաթիվ այլ լեզուների շարքում (հունարեն, ասորերեն, պարսկերեն, արաբերեն, թաթարերեն և վրացերեն) կա «Սուրբ աստվածի» նաև քրդերեն թարգմանությունը, որը ինչպես Հ. Աճառյանի և Վ. Մինորսկու, այնպես նաև որոշ քրդագետների կողմից դիտվել է որպես քրդերեն առաջին գրավոր խոսքը¹²:

Իր գրչությամբ XV դարի սկզբներին վերաբերող այս ձեռագիրը, որ պարունակում է մի շարք ժողովուրդների, այդ թվում նաև աղվանից այբուբենը և որը վերջին 15 տարիների ընթացքում բազմիցս վկայակոչվել է շատ արևելագետների և կովկասագետների կողմից, գիտական որոշակի արժեք է ներկայացնում հատկապես այլալեզու այն բնագրերով, որոնց ազգային այբուբենները սեմական կամ արաբական ծագում ունեն (ասորերեն, արաբերեն և պարսկերեն):

Նախքան այդ կարգի բնագրերին անցնելը անհրաժեշտ ենք համարում նշել, որ գիտական միանգամայն այլ տեսանկյունից պետք է դիտել հայատառ այլալեզու այն բնագրերը, որոնց լեզուն իր ժամանակին եղել է մեր ժողովրդի որոշ հատվածի խոսակցական լեզուն և այլ մոտեցում ցուցաբերել այն, անհամեմատ ավելի փոքր, հաճախ նույնիսկ պատահական մի քանի նախադասությունով պահպանված այլալեզու տողերին, որոնք XV դարից ըսկըսած հանդիպում են մեր ձեռագրերի էջերում: Առաջինները մեր ժողովրդի հոգեոր մշակույթի անբաժան մասն են կազմում, իսկ վերջինները՝ արդյունք են գրական-մշակութային կապերի և փոխազդեցությունների և, ինչպես ստորև կտեսնենք, կարևոր ծառայություն են մատուցում օտար այլ լեզուների պատմության ուսումնասիրությանը:

Բնագրերի այս երկու խմբերի միջև ուրույն տեղ են գրավում բավական մեծ թիվ կազմող հայատառ թուրքերեն և ադրբեջաներեն երգերն ու տաղերը, որոնք ցրված են XV—XIX դարերի տաղարաններում: Ադրբեջաներենը երբեք չի եղել մեր ժողովրդի քիչ թե շատ շոշափելի մի հատվածի խոսակցական լեզուն, սակայն ինչպես այդ լեզվով, այնպես նաև թուրքերեն երգերը տարած-

¹¹ Շատ ուշ միայն, ավետարանական ընկերությունների նախաձեռնությամբ քրդերի և քրդախոս հայերի մեջ տարվող բարոզչական նպատակներով կատարվել է հին և նոր կտակարանների քրդական կտրմանջի բարբառով թարգմանություն, որը լույս է տեսել 1911 թվականին (The Gospel in many tongues, London, 1950, էջ 80):

¹² Հ. Աճառյան, Աղվանից գիրը, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1941, № 3—4, էջ 7:

ված են եղել ոչ միայն Թուրքիայի փոքրասիական նահանգների և Ադրբեջանի, այլ նաև բուն Հայաստանի հայ բնակչության մեջ, շխտելով արդեն հայ աշուղների հորինած բազմաթիվ թուրքերեն և ադրբեջաներեն տաղերի մասին, որոնք նույնպես պահպանվել են միայն հայատառ բնագրերով:

Անդրադառնանք այժմ այն հարցին, թե ո՞րն է սեմական և հատկապես արաբական այբուբենով գրվող լեզուների հայատառ բնագրերի դիտական արժեքը:

Խոսել վերոհիշյալ բոլոր լեզուների մասին հնարավոր չէ և՛ ժամանակի և՛ մասնավանդ մասնագիտական տեսակետից: Ուստի մի կողմ թողնելով իրենց ծավալով անհամեմատ ավելի փոքր ասորերեն և արաբերեն բնագրերը, փորձենք ծանոթանալ համեմատաբար ավելի մեծ թիվ կազմող XIII—XIX դարերի հայատառ պարսկերեն բնագրերի հետ:

Պարսկերեն արձակ և ավելի շատ շափածո հատվածներ մեր ձեռագրերում հանդիպում են սկսած XIV դարից: Հնագույն ամբողջական բնագիրը Ֆրիկի դիվանի հայտնի քառյակն է, որին անդրադարձել ենք ժամանակին և որի հեղինակի հարցը դեռևս կարոտ է բանասիրական ճշտման¹³: Ժամանակագրական կարգով հաջորդ բնագրերն արդեն վերաբերում են XV դարի սկզբին: Դրանք են, մեզ արդեն ծանոթ № 7117 ձեռագրի 144ա և 144բ էջերում «Սուրբ աստված»-ի, իսկ 145ա էջում «Հայր մեր»-ի և 184 համարի տակ գրանցված Աստվածաշնչի 288ա և 296ա էջերում պահպանված Մարկոսի և Մատթեոսի ավետարաններից Քրիստոսի հարության նկարագրության վերաբերող հատվածների թարգմանությունները¹⁴:

Սրանց հաջորդում են արդեն XVI—XVIII դարերի տաղերգուների (Կ. Երզնկացի, Գ. Ախթամարցի, Քուչակ և այլն) և ավելի ուշ հայ աշուղների երգերում առկա առանձին տողերն ու երբեմն նաև ամբողջական տները, որոնք մասամբ հրատարակված են հեռու կամ մոտիկ ժամանակներում և մի զգալի մասով դեռ կարոտ են ուսումնասիրության և հրապարակման: XIX դարի տաղարաններում հանդիպում են նաև պարսիկ հեղինակների գրչին պատկանող խրատական բանաստեղծությունների ամբողջական բնագրեր՝ կից հայերեն գրաբար թարգմանությամբ: Կան նաև արձակ գործեր, ինչպես օրինակ Դավիթ-խան Մելիք-Շահնաղարյանց-Շահփուրյանցի, որպես Իրանի դեսպան դեսպի Փարիզ կատարած ճանապարհորդության ժամանակին Պետերբուրգում լույս տեսած նկարագրության հայատառ պարսկերեն մի անավարտ ընդօրինակությունը, և այլ նման բնագրեր:

Նշված բնագրերից յուրաքանչյուրը իր ժամանակի լեզվական առանձնահատկությունների տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Հնագույն բնագրերից, հոգվածիս վերջում հրատարակում ենք միայն վերո-

13 Վ. Ավթանի ղ ի լ յ ա ն, Հ. Փ ա փ ա զ յ ա ն, Ֆրիկի «Դիվանի» պարսկերեն քառյակը, Հայկ. ՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1956, № 3, Բ. Չ ու գ ա ս զ յ ա ն, Ֆրիկը պարսկերեն քառյակի թարգմանիչ, «Բանբեր Մատենադարանի», № 4: Տե՛ս նաև նույն հեղինակի «Հայ-իրանական գրական առնչություններ (5—18-րդ դդ.)» աշխատությունը, Երևան, 1963, էջ 112—127, ինչպես նաև Ա. Շ ա հ ս ո ս Վ ա Ր Յ ա ն ի «Ֆրիկը Խաբանու քառյակի թարգմանիչ» հոդվածը, ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1962, № 11, էջ 85—87:

14 Վերջին բնագրերի մասին տեղեկացնում է Լ. Խաչիկյանը, տե՛ս սԺԾ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա. Երևան, 1955, էջ 15, հմմտ. Բ. Չ ու գ ա ս զ յ ա ն, Հայ-իրանական գրական առնչություններ, Երևան, 1963, էջ 36:

հիշյալ № 7117 ձեռագրում պահպանված «Հայր մեր»-ի և № 184 ձեռագրի Մարկոսի և Մատթեոսի ավետարաններից կատարված թարգմանությունների հայատառ պարսկերեն բնագրերը, փորձելով նաև վերականգնել դրանց արաբատառ գրությունը, որը կարող է օգտակար լինել պարսից լեզվի պատմությամբ զբաղվող մասնագետներին՝ իր ժամանակի շարահյուսական և ձևաբանական առանձնահատկություններով և բառապաշարի յուրօրինակությամբ:

Երբ ուշադիր կարդում ենք «Հայր մեր»-ի և Մարկոսի ու Մատթեոսի ավետարաններից վերցված հատվածների թարգմանությունները առաջին յուրօրինակությունը որ աչքի է զարկում դա որոշ ձայնավորների անհամապատասխանությունն է ժամանակակից գրական լեզվի արտասանությանը: Վերջնենք օրինակ ավելի համառոտ «Հայր մեր»-ի բնագիրը:

Այստեղ դժվար չէ նկատել, որ որոշ բառերում «է»-ն փոխարինված է «ի»-ով, ինչ որ հատուկ է աղբբեջանական կամ թուրքական արտասանությունը. «փիղար», «բիայթ», «մօձիգատ» և այլն, սակայն չկա հետևողականություն: Այդ նույն օրինակությունները պետք է լինեն «բիհիշտ» և ոչ թե «բէհէշտ» կամ «բիհիլ» և ոչ «բեհէլ», որոնք լիովին համապատասխանում են ժամանակակից արտասանությանը: Բայի հրամայական եղանակի ներկա ժամանակի սկզբի «բէ»-ն մի տեղ «բի» է (բիայթ) մի այլ տեղ «բէ» (բէհէլ): Օրինակաբար են իզաֆեթային «է»-երի փոխարինումները «ի»-ով՝ «փիղար-ի ման», «նամ-ի թու», «բեհէշտ-ի թու», «քամ-ի թու» և այլն: Թուրքական արտասանությունը բնորոշ են նաև շեշտված «ու»-երը—«թու», «մո'ղամ»—ժամանակակից պարսկերենում «թօ», «մօղամ»: Ճիշտ հակառակ երևույթ է ռուզբե-ռուզ» (հանապազոր) բառի «ըռօզբառօզ» արտասանությունը, որ մոտենում է քրդական «ռօթ»-ին և հավանաբար հետևանք է քրդական միջավայրի ազդեցության:

Թարգմանությունը իր ժամանակի համար պետք է կատարյալ համարել, եթե հաշվի չառնենք «ու» շաղկապի երբեմն անհարկի գործածությունը—«փաքասթ ու նամ-ի թու», «հաստ ու քամ-ի թու»: Կան ձևաբանական որոշ յուրահատկություններ, ինչպես օրինակ «փիղար-ի ման» հոգնակի առաջին դեմքի պատկանելիություն ցույց տվող ձևը, կամ «բար» մասնիկի ներգոյական հոլովիչի ֆունկցիան—«բար ասմանի» և այլն:

Ինչպես այստեղ, այնպես նաև XV դարի մյուս բնագրերում, նկատվում է որոշ բաղաձայնների արաբական արտասանություն, «ղարզ»-«ղարտ», «ղազա»-«ղատա» և կամ «Մաղղալենա»-«Մաղղալենա», «Գալիլե»-«Ջալիլ» և այլն:

Երբ ուշադիր զննում ենք հայատառ պարսկերեն բնագրերի ամբողջ տառադարձական սխտեմը, անմիջապես գալիս ենք այն համոզման, որ այն համարյա ամբողջապես համապատասխանում է XIX դարից սկսած եվրոպական արևելագիտության կողմից կիրառվող տառադարձությանը, այն տարբերություններով, սակայն, որ եվրոպականը կազմված է լատինական այբուբենի շատ տառերի վերևից կամ ներքևից կետեր, շեշտեր և գծեր ավելացնելու օգնությամբ, իսկ հայկականը առանց նման օժանդակ միջոցների, յուրաքանչյուր հնչյունին հատկացնելով առանձին տառ: Հնչյունային մեկնաբանությունները սակայն, լիովին համընկնում են:

Տառադարձման սկզբունքների ուսումնասիրության տեսակետից առավել հետաքրքիր են ավետարանի հիշյալ հատվածների բնագրերը, որոնք ավելի

օրինաչափ են և վկայում են իրոք գիտական, մտածված տառադարձական սկզբունքների առկայություն մասին: Այստեղ բացի իզաֆեթային «ի»-երից, որոնք, ի դեպ, հաճախ բուժով անջատված են հատկացուցչից, մյուս բոլոր դեպքերում օրինաչափ կերպով հանդիպում ենք «է»-ի, «Մասիհ»-«Մասէհ», «Իշան»-«էշան», «սփիդ»-«սպէդ», «նիսթ»-«նէստ», «փիշ»-«փէշ», «բիրուն»-«բէրուն», «գրիսթ»-«գրէխթ», «բէքասի չիզի նագոֆթ»-«բաքասէ չիզէ նագոֆթ», «մէթարսիդանդ»-«մէնալիդանդ» և այլն. ինչ որ վկայում է ժամանակի նմանօրինակ արտասանության մասին:

«Բէ» նախդիրը ամենուրեք «բա» է, ինչպես այն ընդունված է եվրոպական տառադարձության մեջ: «Ամադ բադիդանի գոռ», «Գուլթ բա դանան», «Բըգուիդ բաշարդանի ու», «գուլթիմ բաշմայ»: Առանձին դեպքերում հնչյունափոխության ենթարկված, սակայն շեշտված են հրամայականի «բէ» նախդիրի «է-ը»-երը. «բը՛գուիդ», «բը՛բինիդ» և կամ ժխտական «մա՛թարսիդ» և այլն: Շեշտեր և բուժիք օգտագործված են ինչպես այս դեպքում և իզաֆեթային ձևերում, այնպես նաև հոլովիչների դեր կատարող որոշ շաղկապներից առաջ: Ինչպես օրինակ «ու՛րա», «սալիք շուդա՛րա» և նման այլ դեպքերում: Եվրոպական տառադարձությանը հար և նման է շեշտի օգտագործումը արաբական կոկորդային շեշտված Ե-ի տառադարձման ժամանակ: Ինչպես «բա՛դ», «բա՛զի»: Իսկ ընդհանրապես և՛ այս, և՛ նախորդ բնագրում սովորական Ե-ը տառադարձված է «յ»-ով. «ազիմ»-«յազիմ», «ալամ»-«յալամ», «էրլան»-«ուլլրլան», «ջամասթ»-«ջամայթ»:

Բնագրերում կան որոշ հին և ներկայումս անգործածական բառեր. ինչպես օրինակ «աք» (ժամանակ), «բեհեշ» (ներիր), «գանգաշ» (խորհուրդ) և այլն, որոնք հին պարսկական ծագում ունեն: Սակայն առավել կարևոր են ոչ ժամանակակից արտասանությամբ տրված այն բառերը, որոնց նման արտասանությանը մենք հանդիպում ենք պարսից գրականության միայն չափածո գործերում և որոնք ցարդ համարվել են հանգային բարեհնչյունության նրպատակով նախնական «ճիշտ» արտասանությունից կատարված շեղումներ: Հայատառ այս արձակ բնագրերում միանգամայն լրիվ տառադարձությամբ գրված բառերը թույլ են տալիս ասելու, որ Ֆիրդուսու, Սաադիի և մյուս բանաստեղծների օրոք այդ բառերը հենց այդպես էլ արտասանվել են և որ պոետներն ու տաղերգուները հանգերը կազմելիս ի նկատի են ունեցել բառերի նույնահնչյուն վերջավորությունները և ոչ նրանց արաբատառ գրելաձևը: Այդպիսի բառերից են «սախուն», «փրմուգան», «ափրիդան» և այլ բառեր¹⁵:

Առանձին բառերի արտասանության տարբերությունները հաճախ հետևվանք են նաև նախնական արաբատառ բնագրի ոչ ճիշտ ընթերցման, ինչպես օրինակ «բարխէստ-բարխասթ», «ջագա-ջայգահ», «ամուղ-իմրուղ» և այլն, իսկ շատ հաճախ նաև գրական ձևերի անտեսման և աղավաղման բարբառների

¹⁵ Այս հարցին ժամանակին անդրադարձել ենք Շահնամի ֆոլկլորային դիցաբանական ակունքների ուսումնասիրությանը նվիրված մեր մի անտիպ աշխատության մեջ: Հին և միջին պարսկերենի արտասանական հարցերի լուսաբանմանը մեծ շնորհը նպաստում են նաև ինչպես գրաբարում, այնպես նաև արդի հույերենում առկա ավելի քան 1500 իրանական բառերը, որոնք մեր լեզվում պահպանվել են իրենց նախնական փոխառչու ձևով, իսկ ներկա, կամ որ նույն է «դարի» պարսկերենում զգալի փոփոխության են ենթարկվել (Տե՛ս այս մասին Գ. Ն ա լ - բ ա ն դ յ ա ն, Պարսկերենի միանված և կորած բառերի վերականգնումը հայերենի օգնությամբ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ. սերիա), 1962, № 1):

ազդեցության ներքո. «գօռ-գուր», «բարամբար-բարաբար», «չունան-չենան» և այլն:

Հատուկ ուշադրության արժանի են որոշ քերականական ձևեր, որոնց հանդիպում ենք նաև նույն և ավելի վաղ ժամանակների արաբատառ բնագրերում, ինչպես օրինակ Ն (ռա) մասնիկի որպես տրական հոլովի հոլովիչի օգտագործումը, որ երբեք բնորոշ չէ արգի պարսկերենին. «մալամաթ քարդ բէ-բավարի էշանրա ու դլսախթիի էշանրա»:

Սպառել քննության առարկա բնագրերի լեզվական, տառադարձական առանձնահատկություններին վերաբերող բոլոր հարցերը այս համառոտ հաղորդման մեջ, ոչ հնարավոր է և ոչ էլ նպատակահարմար: Վերը մեջ բերված մի քանի օրինակներն էլ բավական են նշելու, որ բազմաթիվ և բազմազան են գիտական հետաքրքրություն ներկայացնող հարցերը, որոնք կապվում են հայատառ այլալեզու գրականության հետ և որոնք մեսրոպատեղծ այբուբենի կատարելությունը, ազգային շրջանակներից դուրս նրա ունեցած անկաշկանդ կիրառությունն ու հնչյունային-տառադարձական լայն հնարավորությունները հավաստելով, միաժամանակ մեծ չափով օգնում են լուծելու հարևան ժողովուրդների լեզվի և գրականության պատմությանն ու բանասիրությանը հուզող շատ խնդիրներ:

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

Հ Ա Յ Ր Մ Ե Ր

Ձեռ. 7117, էջ 145ա

Փի[դ]արի ման քի բար ասմանի:	پدر مان که بر آسمانی
Փաքաստ ու նամի թու:	پاک است و نام تو
Բիայաթ բեհէշտի թու:	بیاید بهشت تو
Հաստ ու քամի թու, համչին քի բար ասմանի ու դարլալամի:	هست و کام تو همهچین که بر آسمانی
Նանի մա մուղամ բրդէ բմա ըոօզ-բաոօզ:	و در عالمی نان مامدام بنده بما روز بروز
Բէհէլ դարտի մարա, քի մա բէհիլամ դարտի դարտդարանի մարա:	بهیل قرض مارا که ما بهلیم قرض قرضداران مارا
Մադէ մարա բրդադա[ու] բրբալա, բրոահան ազդադալ ու ազբալա:	مده مارا بقضا و ببلا برهان از قضا و از بلا
Անի թուսթ բէհէշդ:	آن تست بهشت
Ազ թուսթ մօճիղատ:	از تست معجزات
Աբաթըլ յաբաթ:	ابد الابد
Ամին:	آمین

Ֆասլ[ի] բիսթուհաշթում դար նամազ[ի] դիկարի շամբէ

Ձեռ. 184, էջ 288ա

Ամադ մարիամի մաշղալէնա ու մարիամ[ի] դիգար բաղիդանի գօռ: Անաք զամին լարդ շուդ յազիմ: Ֆըր-շտաի խուդա ֆրուդ ամադ ազ աս-ման ու դավթիդ սանգրա ու նշատ բարու, ու բուդ դիդար'ի ու համշուն բարդ ու ջամաի ու համշուն քի բարֆ, ու ազ թարսի ան թարսանիդ փասըբանան, ու շուդանդ շունանքի մուրդգան: Զուաբ դադ ֆըշտա ու գուվթ բա դանան,— մաթարսիդ շմայ, մէդանիմ քի մասէհ-րա մէտալապիդ, նէտա ինջայ: Զէրաքի ու բարխէսթ, շունանքի գուվթ: Բիաիդ ու բըբինիդ ջագա'րա քի անջա նիհա-դա շուդ խուդավանդ ու զուդ բրաւիդ ու բգուիդ բաշագրդանի ու քի բարխէսթ, ու անաք փէշազ շմա բրաւաթ բաշալիլ: Անջա ուրա բըբինիթ, անաք բափէշին գուվթիմ բա շմայ:

Ու զուդ բէրուն ամադանդ ազ գօռ բաթարս ու բա շադի'ի բգուրկ, դաւի-դանդ բախաբարդադան շագրդանի ու-րա: Ու անաք բարամբարի էշան ամադ մասեհ ու գուվթ,— սալամ բաշմա, էշան նազդիք շուտանդ ու գրվթանդ փայի ու'րա ու սուճուդ քարդանդ բառ: Անգահ գուվթ բա էշան մասէհ,— մա-թարսիդ, բրաւիդ ու բըգուիդ բարա-դարանի մա, թա բրաւանդ բաշալիլ ու անջա մարա բըբինանդ:

Չուն ուաթանդ, անաք բա'դի ազ փասըբանան ամադանդ դար շահր ու խաբար դադանդ բգուրգան ու քօհ-նանանրա ազան համա քի շուդա բուդ, ու էշան գրդ շուդանդ բահամ բա փի-րանի շամայաթ ու դանգաշ քարդանդ ու բսիար մալ բափասըբանան դադանդ

آمد مریم مجد النوا و مریم دیگر به دیدن گور آن آک زمین لرزشد عظیم فرشته خدا فرود آمد از آسمان و غلطید سنگر او و نشست بر او و بود دیدار او همچون برق و جامه او همچون کسی برف و از ترس آن ترساید پاسباناتان و شدند چونان کسی مردگان جواب داد فرشته و گفت به زنان مترسید شما میدانیم که مسیح را میطلبید نیست اینجا زیرا کسی برخاست چونان کسی گفت بیائید و ببینید جاگه را کسی آنجا نهاده شد خداوند و زود بروید و بگوئید به شاگردان او کسی برخاست و آن آک پیش از شما برود به جلیل آنجا او را ببینید آن آک به پیشین گفتیم به شما

و زود بیرون آمدند از گور با ترس و باشادی بزرگ دویدند به خببر دادن شاگردان او را و آن آک برابر ایشان آمد مسیح و گفت سلام به شما ایشان نزدیک شدند و گرفتند پای او را و سجود کردند به او آن گاه گفت به ایشان مسیح مترسید بروید و بگوئید به برادران ما تا بروند به جلیل و آنجا مرا ببینند

چون رفتند آن آک بعضی از پاسباناتان آمدند در شهر و خبر دادند بزرگان و کهنه یانرا از آن همه کی شده بود و ایشان گرد شدند با هم یاپیران جماعت و گنگکاش رزند و بسیار مال پاسباناتان دادند و

ու զուլթանդ բրզուիդ քի շազրդանի ու ամադանդ ու զուզդիդանդ ուրա, քի մա խուլթա բուդիմ ու ազար ինրա բշնա-
 աթ հաբումի մա ազբարաի շմա սա-
 խուն բրզուիմ, ու շմարա յէմին քու-
 նիմ: Ու էշան մալրա սթադանդ ու շու-
 նան քարդանդ քի ամուխթա բուդանդ,
 ու փայդա շուդ ին սախուն փէշի յեա-
 հուդիան թա ամուդ: Ու յեօնզդաճ շա-
 գրդան ուալթանդ բա շալիլ բազուահի
 քի փարմուդա բուդ մասէճ: Չուն դի-
 դանդ ուրա սուշուդ քարդանդ: Բազի
 ազ էշան շաք մէաուրդանդ: Ամադ
 մասէճ ու սախուն քարդ բա էշան ու
 զուլթ, — Դադա շուդ բաման համա
 թուանաի դար ասման ու դար դամին:
 Աքնուն բրաւիդ ու բիամօզանիդ համա
 խալիսրա ու յիմադա քունիդ էշանրա
 բանամի փդար ու փսար ու ջանի փաք
 ու բիամօզանիդ բա էշան նիզահզաշ-
 տան հար շի փրմուդիմ բաշմայ, ու
 անաք ման բաշմաիմ համա ոսդ թա
 ախրի գունիայ:

گفتند بگوئید کی شاکردان او آمدند
 و در دیدند او را کی ما خفته بودیم و اگر
 اینرا بشنود حاکم از برای شما سخون
 بگوئیم و شمارا امین کنیم و ایشان مال را
 ستاندند و چنان کردند کی آموخته بودند
 و پیدا شد این سخن پیش یهودیان تا
 امروز و یانزده شاکردان رفتند به جلیل
 به گواهی کی فرموده بود مسیح چون
 دیدند او را سجود کردند بعضی از ایشان
 شك میآوردند آمد مسیح و سخن کرد
 با ایشان و گفت داده شد به من همه تو
 نائی در آسمان و در زمین اکنون بروید
 و بیاموزانید همه خلق را و آماده کنید
 ایشان را بنام پدر و پسر و جان پاك و
 بیاموزانید به ایشان نگاهداشتن هر چه
 فرمودیم به شما و آنك من یاشمام همه
 روز تا آخر دنیا

Աւետարան ըստ Մարկոսի

ان جيل مار قوش الراس ول ازجق اول

Ձեռ. 184, էջ 296ա

Չուն գուդաշթ շամբէ, Մարիամ
 Մաջդալէնա ու Մար[իա]մի Յեադուր
 ու Սօլօմէ խրիդանդ բախուր, թա բիա-
 յեանդ ու բմալանդ մասէճ բա, ու զուի
 բամուդաթի յեաքշամբէ մէանանդ
 բազօռ, դար բարամադանի աֆթաբ
 ու մէզուլթանդ բա յեաքդիդար: Ազդարի
 զօռ նազար քարդանդ ու դիդանդ սանդ-
 րա դալթանիդա ազ զօռ քի յազիմ
 բզուրկ բուդ: Ու դար ուալթանդ դար
 զօռ ու դիդանդ շուանէ նշըսթա դար

چون گذشت شبه مريم مجدالنا و
 مريم يعقوب و سولومه خریدند بخورتا
 بیآیند و بمالند مسیح را و زو بمدت
 یکشنبه میآیند بگور دربر آمدن آفتاب
 میگفتند بیکدیگر از در گور نظر کردند
 و دیدند سنگ را غلطانیده از گور که
 عظیم بزرگ بود و در رفتند در گور و
 دیدند جوانی نشسته در جنب راست و

ջամբի ոստ ու փուշիդա ջամաէ սպէդ ու թարսիդանդ: Ու մէգօէդ բա էջան,— մաթարսիդ, մասէճ բա մէխօճիդ, նազարիէ սալիբ շուդա՛րա, բարխաստ, նէստ ինջայ, անաք անջայ քի նիհադանդ ո՛րա իլաբրաւիթ ու բգուիդ բազարդանի ու ու բա պետրոս քի փէշազ շմայ բրաւադ բաջալիլ, անջա ուրա բըբինիդ շունանքի գուվթ բաշմա: Ու էջան բէրուն ուսթանդ ու գրէխթանդ ազգօն ու գրվթ էջանրա թարս ու լարդ ու բաբասէ շիզէ նագուֆթանդ, զէրաքի մէթարսիդանդ: Ու բարխասթ մասէճ բամուդաթ աւալին շամբէ, փայդաշուդ աւալ բա Մարիամ Մաջդալէնա, քի ազու բէրուն քարդա բուդ հաւթ դէվ ըա, ու ուսթ ու խաբար դադ բա էջան քի բա ու բուդանդ: էջան քի մէնալիդանդ ու մէգրիխտանդ ու էջան շնիդանդ քի զնդա՛ստ ու դիդա շուդ ազու, բաւար նաքարդանդ, ու բա՛դ ազ ան, դու ազ էջան քի մէոսթանդ փայդա շուդ բաշըբի դիդար քի մէոսթանդ բաղէճ ու էջան ամադանդ ու խաբար դադանդ բադիգարան ու էջան ըա նիզ բավար նա՛քարդանդ:

Փասթար ազ համայ նշսթա բուդանդ յեանզդաճ փայդա շուդ մասէճ բաէջան ու մալամաթ քարդ բէբավարի էջանրա ու դասիսթիի էջանրա, զէրաքի էջան քի դիդանդ ու՛րա բարխէսթա բավար նա՛քարդանդ, ու գուվթ բաէջան բրաւիդ դար համաի յալամ ուլլըմն բղէճիդ ինջիլըա բահամաի ափրիդա, հար քի բավար քունաթ յիմադա շաւաթ ու խալաս շաւաթ ու հարքի բավար նաքունաթ դաւարի քարդաշաւաթ: Ու նշանի անան քի բավար մէքունանդ ին աստ, բանամի ման դէվ ըա բէրուն քունանդ ու բարդաբանի նուկ սխուն գօհանդ,

پوشیده جامهٔ سپید و ترسیدند و میگویند به ایشان مترسید مسیح را میخواهید نظری صلیب شده را برخواست نیست اینجا آن آك آنجا کی نهادند او را الی بروید و بگوئید به شاکر دان او و به بدروس کی پیش از شما برود به جلیل آنجا او را ببینید چنانکه گفت بشما و ایشان بیرون رفتند و گریختند از کور و گرفت ایشان اترس و لرزو به کسی چیزی نگفتند زیرا که مترسیدند و برخواست مسیح ب مدت اولین شنبه پیدا شد اول بمریم مجد الناکه از او بیرون کرده بود هفت دیورا و رفت و خبر داد به ایشان که با او بودند ایشان کی مینانیدند و میگریختند و ایشان شنیدند کی زنده است و دیده شد از او باور نکردند و بعد از آن دو از ایشان کی میرفتند پیدا شد بشکل دیگر کی میرفتند بده و ایشان آمدند و خبر دادند بدیگران و ایشان رانیز باور نکردند

پستر از همه نشسته بودند یا زنده پیدا شد مسیح به ایشان و ملامت کرد به باور ایشانرا و دلستختی ایشانرا زیرا کی ایشان کی دیدند او را برخاسته باور نکردند و گفت به ایشان بروید در همهٔ عالم اعلام بدهید انجیل را به همهٔ آبریده هر که باور کند آماده شود و خلاص شود و هر که باور نکند داوری کرده شود و نشان آنان کی باور میکنند این است بانام من دیورا بیرون کنند و بر زبان نوک (نیک) سخن گویند مارهارا برانند و اگر

մանհա՛րա բա՛րդարանդ ու ազար ժահր
բիաշամանդ էջանրա գիան նարասա-
նաթ ու բար ուանջուրան գաստ բնե-
հանդ խօշ շաւանդ ու սախթ յեաբանդ:
Ու խօղ խուղավանդ մասեհ, բա՛ղազան
քի սխուն գուլթ բաէջան բալա աւիթ
ու նշատ աղ ջամբի ուստի խուղա: Ու
էջան աւիթանդ ու չիլան դադանդ դար
համա ջազայ ու խուղավանդ յեարի
մէդադ ու սախունրա ասթուար մէքարդ
ու նշանհա դար փայ մեռաթանդ:

Քամամ շուդ բաշարաթի Մարդու
արուստուլի խուղա:

ژهر بیآشامند ایشانرا زیان نرساند و
بر رنجوران دست بنهند خوش شوند و
صحت یابند و خود خداوند مسیح بعداز
آن کی سخن گفت به ایشان بالارفت و
نشست ازجنب راست خدا و ایشان رفتند
و اعلان دادند در همه جاگاه و خداوند یاری
میداد و سخن را استوار میکرد و نشانه!
در پای میرفتند

تمام شد بشارت مرفوس الرسول
خدا.

A. D. ПАПАЗЯН

ОБ ИНОЯЗЫЧНОЙ ЛИТЕРАТУРЕ НА АРМЯНСКОЙ АЛФАВИТНОЙ ОСНОВЕ

(Р е з ю м е)

По воле исторических судеб отдельные группы армян вынуждены были изучать и овладевать иностранными языками, в частности языком народа той страны, в пределах которой они находили пристанище, а зачастую пользоваться им в разговорной речи. Это относится к языкам: арабскому, персидскому, турецкому, азербайджанскому, частично к курдскому в коренной Армении, грузинскому, кыпчакскому, русскому, польскому, венгерскому, румынскому и др. языкам в армянских колониях.

Общаясь с этими народами и говоря с ними на их же языке, армяне, нередко вынуждаемые политическими и экономическими обстоятельствами вовсе отказаться от своего родного языка и говорить на языке этих народов, все же оставались верными армянской письменности и продолжали писать и читать лишь месроповскими буквами.

Свободное применение месроповских букв в языках, принадлежащих к совершенно иным языковым группам, обусловлено в основном исключительным их совершенством и богатой фонетической системой.

В статье рассматривается вопрос о необходимости всестороннего научного изучения турецкой, азербайджанской, курдской и кыпчакской литературы, написанной армянскими буквами. Подчеркнуто, в частности, наличие нескольких тысяч судебных и хозяйственных документов, переводов религиозной литературы, словарей и грамматических пособий на кыпчакском языке, которые, по свидетельству специалистов, являются единственными памятниками письменности, сохранившимися со времен агонии этого мертвого теперь языка.

Совершенство месроповской азбуки проявляется особенно подчеркнуто в источниках, написанных армянскими буквами, на тех языках, которые в течение многих веков пользовались арабским алфавитом. С этой точки зрения весьма ценны для истории персидского языка, в частности, персидские источники, написанные армянскими буквами, одно лишь беглое изучение которых делает возможным освещение некоторых вопросов, связанных с фонетикой, морфологией и грамматическим строем персидского языка.

В приложении публикуются три наиболее характерных источника XV в. на персидском языке с параллельной расшифровкой их при помощи арабского алфавита.

H. D. PAPAZIAN

A PROPOS DE LA LITTERATURE ETRANGERE EN CARACTERES ARMENIENS


Les circonstances historiques ont souvent placé des fractions entières du peuple arménien dans l'obligation d'apprendre et d'assimiler les langues étrangères, notamment celles des pays de leur résidence, et qui plus est, de les utiliser dans la conversation courante. Ceci concerne plus ou moins, en Arménie même, l'arabe, le persan, le turc, l'azerbaïdjanais, quelque peu le kurde; et, dans les grandes colonies arméniennes proches ou lointaines de l'étranger, le géorgien, le kiptchak, le russe, le polonais, le hongrois, le roumain, etc.

Les conditions politiques et historiques aidant, les Arméniens en contact avec ces peuples et parlant leur langue, renonçaient à la leur, demeurant néanmoins fidèles à l'alphabet arménien dont ils s'aidaient dans leurs lectures et leurs écrits.

L'application directe des lettres de l'alphabet arménien aux langues de groupes tout à fait différents relève de leur exceptionnelle perfection et de la richesse du système phonétique.

L'article traite de la nécessité d'une profonde étude scientifique de la littérature turque, azerbaïdjanaise, kurde et kiptchake écrite au moyen des caractères arméniens. L'auteur cite, en particulier, les inscriptions kiptchakes, au nombre de plusieurs milliers, les traductions d'ouvrages religieux, les dictionnaires et les grammaires en langue kiptchake qui, de l'avis des spécialistes, figurent les seuls monuments littéraires conservés de la période de l'agonie de cette langue aujourd'hui morte. Le degré de perfection de l'alphabet arménien est encore plus sensible dans les langues ayant eu recours, pendant de longs siècles, à l'alphabet arabe. Les textes persans en caractères arméniens présentent, en ce sens, un intérêt considérable pour l'histoire de la langue persane, textes dont un examen, même superficiel, suffit à nous éclairer sur certaines questions relatives au système phonétique et à la structure grammaticale de cette langue.

On publie ici, parallèlement à la transcription arabe, trois textes persans en caractères arméniens, du XV^e siècle, des plus expressifs.



Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

ՇԱՐԻԱԹԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ԵՎ ՀՈՂԻ ՖԵՆՈԳԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ

Հողի ֆեոդալական սեփականության հարցը Արևելքում, վաղ ժամանակներից ի վեր, հանդիսացել է գիտական ուսումնասիրությունների առարկա: Իր ժամանակին այն հետաքրքրել է եվրոպացի ճանապարհորդներին (Շարդեն, Օլեարիուս, Տավերնիե և այլն): Հարցի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև նախահեղափոխական Ռուսաստանի տնտեսագետներն ու պատմաբանները (Շոպեն, Հակաստուզեն, Տորնաու, Եղիազարով և այլն), որոնք բուրձն էլ ընդգծել են Արևելքում հողի նկատմամբ սեփականատիրական իրավունքի յուրահատկությունները: Հայտնի են նաև այս մասին մարքսիզմի կլասիկների ասույթները, որոնք կարևոր ուղենիշներ են եղել և որոնցով առաջնորդվել են սովետական պատմաբանները, իրավաբաններն ու տնտեսագետները Արևելքի երկրների հողատիրության ձևերն ու հողային հարաբերությունները ուսումնասիրելիս:

Ուսումնասիրողների մեծ մասի մոտ հողի սեփականության իրավունքը իսլամական երկրներում, պայմանավորված է կրոնական-շարիաթական օրենքներով: Սակայն, ինչպես իրավացի կերպով նշել է արևելագետ Վ. Մինորսկին, հողատիրության հարցերը «չի կարելի բացատրել և լուծել հենվելով միայն իսլամական ինստիտուտների վրա, որոնք յուրաքանչյուր երկրում այլ տեսք ունեին և մեզ հետաքրքրող հարցի համար ոչ այլ ինչ էին, եթե ոչ միայն մի իրավական ծածկույթ, որ գալիս էին ծածկելու տեղում ընդունված կարգերը»¹:

Բոլոր ժամանակներում էլ մահմեդական տիրակալները, լինեին դրանք թուրքմեն էմիրներ, թե Օսմանյան կայսրության կամ Սեֆյան Իրանի ռազմապետատիրական վերնախավի ներկայացուցիչներ, հանդես են եկել, որպես հողի գերագույն, ֆեոդալական սեփականատերեր: Այս ֆեոդալական սեփականատիրական իրավունքը, տարբեր անուններով (իկթա, սոյուդալ, թիուլ, թիմար, գիամեթ և այլն) ժամանակավոր կամ ժառանգական տիրության պայմանով, գերագույն իշխանության կողմից, որը իսլամական աշխարհում հին ժամանակներում հանդիսանում էր իմամը կամ խալիֆը, իսկ ավելի ուշ շահը կամ սուլթանը (վերջինս նույնպես իրեն հայտարարում էր մահմեդականների խալիֆ), սրվում էր կա՛մ որպես ֆեոդալական պարզև, կա՛մ «ոռնիկի կերակուր»:

Իսլամական տերությունների մեծ մասում երկրի վեհապետները համարվել են աստծու ներկայացուցիչները: Սեֆյան շահերի բազմաթիվ տիրոջանների մեջ ավելի շնչումված էր «աստծո ստվեր» (ظِلُّ اللَّهِ) տիրադուր:

¹ Tadhkirat al-Mulūk. a Manuel of Safavid administration, by V. Minorsky, London, 1943, էջ 195:

Հողի «աստվածային» սեփականության համար հիմք էր հանդիսանում Ղուրանի VII սուրայի 125-րդ այսն, որտեղ ասված է. «Եվ Մովսեսն ասաց իր ժողովրդին — աստծու օգնությունը խնդրեք և համբերեք, որովհետև երկիրը աստծունն է, իր ծառաներից որին, որ ցանկանում է, նրան է տալիս ծառանգելու, իսկ վերջը երկյուղածներինն է»²: Շարիաթական վավերագրերում, կատարված գործարքի մասին հիշատակելուց հետո, օտարված կամ նվիրված (վակֆ արված) հողերի նոր սեփականատերերի տնօրինության տակ անցնելը, արձանագրվում և եզրափակվում էր հետևյալ բանաձևով. «Մինչև որ այդ հողերը իրենց վրա գտնվող մարդկանցով կանցնեն իրենց լավագույն տիրոջը՝ աստծուն»³: Այդ նշանակում էր, որ հողի ներկա տերը դիտվում էր որպես «ժամանակավոր» տեր (քանի որ իսկական տերը աստված էր) և իրավունք ուներ օգտվելու այդ հողերից ստացվող եկամուտից:

Շարիքներ խոսում է հողատիրության մի ձևի մասին, ըստ որի այդ կարգի սեփականատերերը իրենց ձեռքում գտնվող հողերին տիրում էին 99 տարով և կարող էին ցանկացած ձևով օգտագործել այն. «ժամկետը» լրանալուց հետո, նրանք պետք է մեկ տարվա եկամուտը վճարեին շահին և նորոգեին իրենց սեփականատիրական իրավունքը: Այնուհետև, Շարիքներ բացատրում է, որ «այս կարգի սեփականատիրությունը կոչվում էր «թասարրուֆ», որը նա թարգմանում է «տևական սեփականատիրություն» (propriété permanente)⁴: Սա, իհարկե, ճիշտ չէ, «թասարրուֆ»-ը ոչ թե սեփականությունն է, այլ «տիրակալությունը», «թասարրուֆ նմուղան» (تصرف نمودن) «ղար թասարրուֆ դաշթան» (در تصرف داشتن), «մութասարրեֆ շողան» (متصرف), «ղար թահֆ-ե թասարրուֆ» (در تحت تصرف), «ղար յադ-ե թասարրուֆ» (در يد تصرف) և նման արտահայտությունները, որոնք վերաբերում են այս կարգի տիրություններին, համարժեք են հայերեն «գրավել», «վերցնել», «կալել», «տիրակալել» հասկացություններին, որտեղից էլ հայկական «կալվածք» տերմինը:

Կալվածագրերում, հրովարտակներում և այլ պաշտոնական փաստաթղթերում «հայրենիք» կամ ծառանգական հողատիրությունը արտահայտվում է միայն «մուլք», «մալիք», «մալլաք» տերմիններով, որ նշանակում է «սեփականություն», «սեփականատեր»: Այդ կարգի տիրակալումն արդեն ոչ թե «թասարրուֆ» էր, այլ «թամիլք» (սեփականատիրություն) և հաճախ այն ավելի շեշտելու համար անվանում էին «թասարրուֆ-ե մալիքանե» (تصرف مالكانه), որ նշանակում է «սեփականատիրական տիրակալում»:

Ուսումնասիրողներից շատերը խորամուխ լինելով ազրարային հարաբերությունների էության մեջ և վերլուծության ենթարկելով փաստական նյութը առանձին ուշադրություն չեն նվիրել հողատիրության տերմինների իմաստային կողմին, հաճախ թերագնահատելով դրանց լեզվական նշանակությունը:

² قال موسى لقومه! ستعينو ابالله و اصبروا ان الارض لله يورثها من يشاء من عباده و العاقبه للعتقين

³ Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 3, վավ. 129, թղթ. 2ա, վավ. 3.
 مكاتبات رشیدی. بسعی و ممدت. الی ان یرث الارض و من علیها و هو خیر الوارثین اهتمام محمد شفیع. لاهور. ۱۹۴۷. ص ۵۸!

⁴ Chardin, t. V, էջ 381—382:

Մինչդեռ հայտնի է, որ տերմինները արտահայտում են ժամանակի սոցիալատնտեսական և հասարակական հարաբերությունները:

Գիտական շրջանառության մեջ դրված որոշ սկզբնաղբյուրների և գրականության, ինչպես նաև ուսումնասիրողների մեծ մասի կողմից առաջ քաշված այլազան տեսակետների հանգամանալից վերլուծությամբ վերջերս հանդես է եկել Ս. Մարկոսյանը և «Ազգարային հարաբերությունները Արարատյան երկրում» մենագրական աշխատության մեջ, այլ խնդիրների շարքին քննարկել է նաև հողի սեփականության և տիրության հարցը:

«Ջամբու»-ում համառոտակի նկարագրված պարսկական կալվածագրերի ու հրովարտականների և հատկապես դրանց մասին Միմեոն Երևանցու տված մեկնաբանությունների հիման վրա նա ցույց է տվել մուլքային սեփականություններ հանդիսացող գյուղերի նկատմամբ գյուղատիրոջ կամ ինչպես XVIII դարի վերջերին և XIX դարի սկզբներին ընդունված էր դրանց կոչել «մուլքադարներ» սեփականատիրական իրավունքի էությունը: Բանն այն է, որ ինչպես Միմեոն Երևանցու, այնպես նաև ավելի ուշ շրջանի ուսումնասիրողների կողմից օգտագործվող տերմինոլոգիան մեծ մասամբ վերաբերում է Արարատյան երկրին: Այդպես է նաև մուլք-ռենտա հասկացությունը, որը հիմք է հանդիսացել Ս. Մարկոսյանին ընդարձակ բանավեճի մեջ մտնելու պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկու հետ այն հարցի վերաբերյալ, թե առանձին գյուղերի վաճառքին վերաբերող կալվածագրերում, վաճառվող հողն էր, թե հողից ստացվող եկամուտը:

Միանգամայն ճիշտ պարզաբանելով հողատիրոջ (որին նա մուլքադար է անվանում) սեփականատիրական իրավունքները, որոնք արտահայտվում էին միայն ռենտա, տասնորդ կամ, ինչպես Արարատյան երկրում ընդունված էր ասել, «մուլք» գանձելու իրավունքով, Ս. Մարկոսյանը մեծ մասամբ հենվում է այն կովանի վրա, որ մուլքադարին վճարվող ռենտան կոչվում էր «մուլք», և քանի որ կալվածագրերում գրվում էր «վաճառվեց այսինչ գյուղի 6, 2, 1 կամ կես դանգ մուլքը», ուրեմն դա նշանակում է, որ վաճառվում էր ռենտան, և հետևաբար մուլքադարը ոչ թե հողի տերն էր, այլ հողից ստացվող ռենտայի: Բայց չէ որ մենք գիտենք, որ այդ կալվածատիրական ռենտան կամ բերքի այն մասը, որ վճարվում էր գյուղի մալիքին, սկսած դեռևս XIV—XV դարերից պաշտոնական վավերագրերում միշտ էլ անվանվել է «բահրե-յե մալիքանե» կամ «բահրաչե-յե մալիքանե», որ նշանակում է «սեփականատիրական» կամ «սեփականատիրոջ բաժին», այսինքն՝ բերքի այն մասը, որ գյուղացիները իրենց հասկացողությամբ վճարում էին գյուղի սեփականատիրոջը⁵:

Ս. Մարկոսյանը վկայակոչելով Եղիազարյանի կողմից նկատված այն փաստը, որ ժառանգական տիրության ու մասնավոր սեփականության նույնացումը եվրոպական իրավագիտության տեսակետից բավական տարօրինակ լինելով հանդերձ, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի համար անժրխտելի փաստ է, ինքը ևս հաստատում է, որ «մեր կյանքի պայմաններում չկար հողի ժառանգական տիրապետության և մասնավոր սեփականության սահմա-

⁵ Որոշ վավերագրերում մուլքային սեփականություններ հանդիսացող գյուղերից ստացվող կալվածատիրական ռենտան անվանվում է «մուլքերի բահրա» կամ «մուլքերի բահրաչե»: (بهر چة املاك) այսինքն մուլքից ստացվող բաժին, օգուտ (Մատենադարան, կթղԿ. դիվան, թղթ. 1դ, վավ. 934, թղթ. 2ա, վավ. 4 և 14):

նազատում, այդ պատճառով էլ այդ կարգի իրավաբանական նորմաները վերացական էին նրա համար: Մեզ մոտ այդ հարաբերությունները դարերի ընթացքում հանդես են եկել որպես միասնական մի երևույթ, այդ պատճառով էլ հողի ժառանգական տիրապետությունը և մասնավոր սեփականությունը մարդկանց գիտակցության մեջ արտացոլվել է որպես մի միասնական երևույթ»⁶:

Մինչև XVIII դարը ներառյալ ամբողջական գյուղերի կամ նրանց մի մասի առ ու ծախսի վերաբերող կալվածագրերն ու այլ դիվանական նյութերը համարյա առանց բացառություն խոսում են հօգուտ այն փաստի, որ թեև գյուղատերը կամ մալիքը բացի ռենտայի գանձման իրավունքից (որ ի դեպ թեև մեծ մասամբ գանձվում էր բնամթերքով, սակայն շատ դեպքերում լինում էր նաև աշխատավճար կամ դրամային) հողերի տնօրինման և օգտագործման հարցերում բացարձակ սեփականատիրական իրավունքներ չունեն, սակայն գյուղական համայնքը ճանաչում էր նրան որպես նրա ձեռքում գտնվող կալվածագրի մեջ մանրամասն սահմանագծված գյուղի հողերի սեփականատեր (մալիք), որի համար էլ պարտավորվում էր նրան ռենտա վճարել:

Որքան էլ վերոհիշյալ ուսումնասիրողների տեսակետից տարօրինակ թվա, XVII դարի վերջերից սկսում է և XVIII դարի կեսերում ավելի է խորանում համայնքների իրավունքների հետզհետե սահմանափակումը, և դա համատարած երևույթ էր ամբողջ Իրանի, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի համար: Խոշոր գյուղատերերը կամ մալիքները, որոնք տիրում էին բազմաթիվ գյուղերի կամ առանձին գյուղերում մասեր ունեին, ի հաշիվ ունեզրկված գյուղացիների, ավելի մեծ իրավունքներ էին նվաճում իրենց գյուղերի հողերի տնօրինման և օգտագործման հարցում: Այս պրոցեսի վերջին էտապը ի նկատի ունի Ֆազլուլլա Մոշավերը, երբ նկատում է, որ «սեֆևիդներից հետո սեփականատիրությունը ամրապնդվեց և սեփականատիրական իրավունքի տեսք ստացավ: Մենք նպատակ չունենք վերլուծել այդ երևույթը և շարադրել նրա դարգացման պատմությունը, — շարունակում է նա, — սակայն հաստատ է, որ Ղաջարների օրոք հողը սեփականատիրոջ անվիճելի ու անվերապահ սեփականությունն էր հանդիսանում»⁷:

Երբ ի նկատի ենք ունենում շահի, որպես «աստուև ներկայացուցչի» անսահմանափակ իրավունքը այս կամ այն ֆեոդալին ունեզրկելու կամ կալվածները բռնագրավելու⁸, իրոք տեսնում ենք, որ մալիքները լիիրավ սեփականատերեր չէին: Ինչպես նշում է Վ. Մինորսկին, «այն դեպքում, երբ իշխողների բարոյացկամությունը կամ անբարոյացկամությունը վճռական դեր է խաղում հողի սեփականության հարցում, ինչպես կարելի է սպասել, որ մարդկանց իրավունքները ձևավորվեն և կայուն տեսք ստանան»⁹:

Սակայն վեհապետի այդ անսահմանափակ իրավունքների դրսևորումը ևս տեղի էր ունենում գոնե երևութապես պատճառաբանված ձևով: Ամեն պարագային այդ բռնագրավումներն ու ունեզրկումը կատարվում էր այն դեպքում միայն, երբ ֆեոդալը կամ կալվածատերը մեղադրվում էր անհավատարմու-

⁶ Ս. Մարկոսյան, Ազրաբային հարաբերությունները Արաբատյան երկրում, Երևան, 1959, էջ 18:

⁷ F. Mochaver, L'evolution des finances iraniennes, Paris, 1938, էջ 149:

⁸ Chardin, V, 382.

⁹ Tadhkirat al-Mulūk, էջ 195:

թյան, դավաճանություն կամ այլ հանցանքների մեջ և բռնակալի զայրույթին արժանանալով ենթարկվում էր պատժի: Շահը այս դեպքում անձնավորում էր և՛ պետական գերագույն իշխանությունը և՛ արդարադատության բարձրագույն ինստանցիան: Կարևորն այն է, որ այդ բռնագրավումները կատարվում էին սեփականատիրոջ, եթե կարելի է այսպես ասել, «դատական իրավազրկումից» հետո:

Բավական է միայն ծանոթանալ թագավորական հրովարտականների մի մասի բովանդակությունը, համոզվելու համար, որ ընդհանուր վերաբերմունքը՝ նախապես շարիաթական ակտերով ու արձանագրություններով կամ նախկին թագավորների կողմից տրված հրովարտականներով հաստատված իրավունքների կամ սեփականատիրության վերստին վավերացումն էր¹⁰:

1620 թ. կազմված արձանագրությամբ և բեկլարբեկիի հրովարտակով, տարիներ առաջ Երևանի բեկլարբեկի Ամիր-Գունա խանի լիազորների կողմից յուրացված Վաղարշապատ գյուղի մուլքը վերադարձվում է նախկին տիրոջը՝ Էջմիածնի վանքին: Ճնորին Մեծության լիազորները, — ասված է արձանագրության մեջ, — միաժամանակ ծանոթացան այդ հարցի վերաբերյալ կազմված մի քանի արժանահավատ արձանագրությունների՝ ղաբալենների և վակֆնամենների առանձին բնագրերի հետ: Որից հետո արդեն Ամիր-Գունա խանը անձամբ հանդես գալով շարիի ատյանում, «պետության և նրա ղեկավարների անունից, շարիաթական ճշմարիտ խոստովանությամբ և պարզ ու լսելի հայտարարությամբ, առանց տատանվելու և առանց դժկամության, իր իսկ ցանկությամբ և հոժար կամքով հրաժարվեց հիշյալ գյուղի մուլքից և թողեց ազոթարարների տրամագրության տակ»¹¹:

Ուրեմն շարիաթական հիմք չունեցող յուրացումները կամ հարբունիս բռնագրավումները միշտ ենթակա էին բողոքարկման և շարի դատարանը «արժանահավատ արձանագրությունների՝ ղաբալենների ու վակֆնամենների», ինչպես նաև «նույն մահալի երեկելիների և մեծամեծների վկայության»¹² հիման վրա, նորից վերահաստատում էր իսկական տիրոջ իրավունքներն այդ սեփականությունների կամ «մուլքերի» նկատմամբ:

1636 թ. Երևանի վերագրավումից հետո շահ Սաֆիի հրամանով բռնագրավվեցին և Բարձրագույն դիվանի սեփականություններ հայտարարվեցին, բերդը առանց դիմադրության թուրքերին հանձնած և ի վերջո Թուրքիա ապաստանած Թահմազկուլի խանի (Ամիր-Գունա խանի որդու) բոլոր կալվածները: Այդ ընթացքում, որպես Թահմազկուլի խանի մուլքեր, բռնագրավվում են նաև, իրականում երևանցի խոջա-Սեթի որդի՝ խոջա Հակոբին պատկանող Յալչի, Նորագեղ, Գյուլթյանդի և այլ գյուղեր: Խոջա Հակոբի բողոքների հիման վրա սկսված քննություններն ու փաստաթղթերի ու դիվանական մատյանների ստուգումները տևում են տարիներ, մինչև որ Շահ-Աբաս Բ-ի 1648 թ. հրովարտակով, որտեղ վկայակոչված են այդ գյուղերի վերաբերյալ բոլոր կալվածագրերն ու հրովարտականները, վերահաստատվում են խոջա Հակոբի սեփականատիրական իրավունքներն այդ գյուղերի մուլքերի նկատմամբ:

10 Մատենադարանի պարսկ. վավերագրեր, I-հրովարտականներ, կազմեց՝ Հ. Գ. Փափազյան, Երևան—1956, 1959, պրակ Ա. վավ. 11, 12, 13, 15, 16, 17, պրակ Գ. վավ. 3, 4, 5, 6, 8, 14, 20 21, 22, 26, 29, 35, 40, 42: Այսուհետև՝ Հրովարտականեր I, II:

11 Հրովարտականեր, II, վավ. 14:

12 Նույն տեղում:

հոջա Հակոբի ներկայացրած փաստաթղթերի հիման վրա Երևանի բեկ-լարբեկին, շելխ-ուլ-խսլամը, կազին և բազմաթիվ այլ պատասխանատու անձինք կազմել են մի արձանագրություն, որով հայտնում են, որ իրենք «ստուգել են իրողությունը, և քանի որ բազմաթիվ մարդիկ վկայել են այն մասին, որ հիշյալ խոջան իրավասու է այդ մուլքերի նկատմամբ, որոնք նա ժամանակին գնել է Նադր-Գունա բեկի ժառանգներից ու այլ մարդկանցից և իր սեփականությունը դարձրել, ուստի նշված վայրերը այդ խոջայի տիրապետությանը հանձնվեց»¹³:

Ինչպես տեսնում ենք, այն փաստը, որ առանձին հողատերերի, հատկապես խոջոր ֆեոդալների պատկանող մուլքերը կարող էին ենթարկվել հարքունիս բռնագրավման, դեռևս իրավունք չի տալիս այդ սեփականությունը իրավական տեսակետից ամուր սեփականություն չհամարելու: Ընդհակառակը, վերը մեջ բերված օրինակները գալիս են հաստատելու, որ շարիաթական իրավունքը մուլքային հողատիրությունը ընդունում էր որպես իրավական (շարի) և քանի դեռ դրանց տերերը պետության գերագույն իշխանության կողմից որևէ մեղադրանքի չէին արժանացել, նրանք համարվում էին օրինական սեփականատերեր (մալիքներ) և նրանց իրավունքները իրենց մուլքերի նկատմամբ ոչնչով չէր տարբերվում սեփականատիրոջ իրավունքներից: Սեփականատիրության երեք նախադրյալները՝ տիրապետում, տնօրինում և օտարում ժամանակի պայմաններին բնորոշ արտահայտություններ, առկա էին այս դեպքում: Սակայն հողօգտագործման համայնքային ձևը, որոշակի պայմանական հարաբերություններ էր ստեղծում մալիքի և հողագործ գյուղացու միջև և գյուղական համայնքը փաստորեն հանդես էր գալիս որպես մալիքին պատկանող հողի կոլեկտիվ վարձակալ, որպիսի վիճակը պայմանավորված էր արտագրության ցածր մակարդակով և Արևելքին բնորոշ արտագրահարաբերությունների յուրահատկությամբ:

Նույն ինստիտուտը առկա էր նաև Օսմանյան կայսրության մեջ: Սեփականատիրական կամ «մալիքանե» հողերը իրենց բնույթով համապատասխանում են Իրանում տարածված մուլքային հողատիրությանը: Երկու երկրներում էլ այն չափազանց հին արմատներ ունեն և գալիս էր արաբական տիրապետության և ալեյի վաղ ժամանակներից: Ահա թե ինչ է գրում «մալիքանե» հողերի մասին, XVII դարի մատենագիր Ավնի Օմար էֆենդին, Օսմանյան կայսրության հողատիրության ձևերին նվիրված «Կանուն-ի օսմանի մեֆհում-ի դեֆթեր-ի խաբանի» գրքում.

«Մի տեսակն էլ այն է, որ մալիքանե է կոչվում: Դա որոշ տիրողների և բարձրագույն սեմին արժանի անձնավորությունների, իշխանների և բեկերի և որոշ պետական գործիչների նրանց ծառայության և արժանիքներին համապատասխան, նախկին թագավորների կողմից հաստատված է որպես սեփականություն (թամլիք): Այդ պատճառով էլ կայսերական դրոշմ և կալվածագիր (մուլքնամե) ունեն իրենց ձեռքում: Սա ժառանգական մուլքի (մուլք-ե մովրուսի) նման է: Ցանկացած ձևով, որպես սեփականություն կարող են տնօրինել, կարող են նաև ուրիշի վաճառել, նվիրել կամ կտակել (վակֆ անել), և սերունդից սերունդ, քանի դեռ այն չի ընդհատվել և կամ [սեփականության] վերաց-

¹³ Հրովարտական, II, վավ. 35. հայերեն թարգմանության մեջ մենք նախապես «թասարութը» սխալմամբ թարգմանել ենք սեփականություն, այստեղ ուղղում ենք՝ «տիրապետություն»:

ման մասին բարձր հրաման չի եղել, նրանք շարունակում են տիրել որպես մուլք, և դրա դիմաց նրանցից ծառայություն չի պահանջվում»¹⁴:

Այստեղ բնորոշն այն է, որ այդ հողերը Ավնի Օմար էֆենդու հայտարարության համաձայն, վաղ ժամանակներում իշխանության կողմից հաստատվել են, որպես նրանց սեփականություն:

Մալիքների իրավունքները հաստատող արձանագրություններում միշտ շեշտվում էր առանձին կալվածատերերի ժառանգական վաղնջական սեփականատիրական իրավունքները: Ինչպես, օրինակ, 1504 թ. կատարված ընդհանուր ստուգումների ժամանակ հաստատվում էր, որ «այն կալվածները, որոնք գտնվում են ազնիվ քրիստոնյա Մանվելի որդի Քաղեոսի և սրա որդի Միրիջանի ձեռքում, համաձայն շարիաթական փաստաթղթերի, ամբողջությամբ նրանց սեփականությունն ու մուլքն են, և նրանց տիրապետությունը այդ կալվածների ու մուլքերի նկատմամբ իրավացի տիրապետություն է»¹⁵: Կամ Խոտ, Շնհեր և Հալիձոր գյուղերի Տաթևի վանքին պատկանելի հաստատող արձանագրության մեջ շեշտվում էր, որ «հիշյալ երեք գյուղերի բոլոր վեց դանգ մուլքերը, հանդերի ոտոզման իրավունքով, բոլոր ենթակա, կից, հավելյալ և վերաբերող ամեն ինչով, սեփականատիրական բահրաչեով և այլ կարգի եկամուտներով հին ժամանակներից մինչև օրս, որպես մուլք հաստատված և դրված են եղել Ղափանաթի Տաթևի վանքի վանահոր և աղոթավայրում ու եկեղեցում բնակվող եպիսկոպոսների ու կրոնավորների սեփականության և տիրապետության տակ»¹⁶:

Շարիաթական փաստաթղթերում կամ գյուղերի առք ու վաճառքին վերաբերող կալվածագրերում (قبالة بیع و شراء), դարերից ի վեր մշակված ընդարձակ շարադրությամբ արձանագրվում և իրավական հաստատման էր ենթարկվում

¹⁴ I. H. Uzunçarşılı, Kanun-i Osmanî Mefhum-i Defter-i hakani. „Belleten“ g. XV, sayı 59, Ankara, 1951, s. 35.

¹⁵ Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 4, վավ. 1. رقبات که در تصرف زبده آل مسیح تاتوس بن مانیل و میریجان ولد مشار الیه بود بموجب اسانید شرعیہ بوضوح پیوست که تماما حق و ملک اوست و تصرف اودر رقبات و املاک مذکورہ تصرف بحق است

¹⁶ Խույն տեղում, թղթ. 2ա, վավ. 1. ...الحق الشرب و المشارب و مجموع مزارع مذکورہ باجمیع توابع و لواحق و المضافات و المنسوبات و ضمایم و ملحقات معه بهرچه مالکی جواری و زارعی و سایر اجرت المثل! ز طریق ملکیت از قدیم الایام الی المرآم در تحت تصرف و حیطة ضبط و تملیک متوالی و رهیان و سکنه متوطن اسقف و معبد و کلیسیای وانک طائفی قیانات استقرار و استمرار گرفتہ...

այն փաստը, որ «Սահմանագծված գլուղն ամբողջությամբ, իր բոլոր սահմաններով, իրավունքներով, կից և վերաբերող [վայրերով], հիշյալ գնորդի անվիճելի իրավունքը, անբաժանելի սեփականությունն ու զուտ և անխառն, անձնական հարստությունն է, և հանդիսանում է նրա (գնորդի) իրավունքներից, մուլքերից, հարստություններից, կալվածներից և գլուղներից մեկը, և կարող է իր ձեռքում ունենալ և տիրել նրան, ինչպես տիրում են սեփականատերերն (մալիքները) իրենց սեփականությունը (մուլքերին), կամ իրավատերերն իրենց իրավունքներին և վարվել նրա հետ այնպես, ինչպես կցանկանա»¹⁷:

Հողային սեփականատիրական իրավունքի նկատմամբ մահմեդական տիրակալների բացառիկ նախանձախնդրության մասին է վկայում Ղազան-խանի բարենորոգումների ժամանակ ամբողջ երկրում անցկացվող կալվածների ընդհանուր հաշվառման վերաբերյալ Ռաշիդ-էդ-դինի հաղորդած հետևյալ ուշագրավ մանրամասնությունը. «Եվ նմանապես հրամայեց, որպեսզի ստուգեն բոլոր ինչու, վակֆային և սեփականատիրական (արբաբի) կալվածները և որոնք որ 30 տարի շարունակ, առանց վեճի նրանց տիրապետության տակ են եղել, նորից նույն տիրողների անունով հարկային մատայններում արձանագրեն, որպեսզի, եթե որևէ մեկի կալվածագիրը (ղաբալի) երբևէ կորչի, կամ ուրիշ մեկը ցանկանա ձեռք գցել, դիմեն այդ մատայնին և վարվեն այնպես, ինչպես որ այնտեղ արձանագրված է, և ոչ մի արարած հնարավորություն չունենա խարդախել կամ ոտնձգություն անել»¹⁸:

Սեֆյան տիրապետության շրջանում, մալիքների սեփականատիրական իրավունքի հաստատման կամ նրանց միջև ծագած վեճերի առթիվ հրապարակված թագավորական հրովարտակների մեծ մասում, շահի հրամանը տրված է ի հաստատումն Դիվան-ալ-սադարաթի վճռի (միսալի) և կամ շեյխու-լ-իսլամի կամ մուֆթիի կողմից տրված «ֆեթվայի»: Մուլքերին կամ այլ կարգի հողային սեփականություններին վերաբերող վեճերը լսվում էին շար'ի դատարաններում և դատական մանրամասն քննությունից հետո միայն տրված եզրակացությունը ենթակա էր հաստատման «ուրֆի» քաղաքացիական դատարանի կամ պետական գերագույն իշխանության կողմից: Մենք արդեն վերը տե-

17 Մատենադարան, կթղվ. դիվան, թղթ. 1, վավ. 927, 934, 1004, թղթ. 1ա, վավ. 4:

18 فضل الله رشيد الدين. جامع التواريخ، جلد سوم، بسعی و اهتمام عبد الكريم على زاده، باکو، ۱۹۵۷. ص. ۶۳-۶۴.، و نیز فرموده که تاغصص نموده تمامت املاک اینجو و اوقاف و اربابی کی از مدت سی سال باز بی منازع در تصرف ایشان بوده باشد مشروح باسامی متصرفان بنویسند و در دفاتر قانون ثبت گردانند تا اگر کسی را نیز قبالة ضایع شود یا دیگری خواهد کی بدست فرو گیرد رجوع با آن قانون کنند و بر آن موجب کی مثبت باشد پیش گیرند و هیچ آفریده را مجال تلبیس و تعدی نماند.

սանք, թե ինչպես Վաղարշապատ գյուղի մուլքի էջմիածնին պատկանելու մասին որոշումը նախ տրվում էր Երևանի շարժի ատյանի կողմից, ապա հաստատվում բեկլարբեկի Ամիր-Գունա խանի հրամանագրով:

Այս նույն վավերագրից պարզվում է նաև, որ մալիքների իրավունքները այս կամ այն գյուղի նկատմամբ որոշելու համար, հարկ եղած դեպքում դիմում էին նաև դիվանական հարկային մատչանների օգնությունը, և այնտեղից ստացված տեղեկանքները ևս կարող էին իրավական հիմք հանդիսանալ մալիքների սեփականատիրական իրավունքների վերահաստատման համար: Այսինքն այն, ինչ որ կանխատեսվում էր Ղազան-խանի բարենորոգումների ժամանակ:

Հավուց-թառի Զաքարիա վարդապետի հետնորդների ժառանգական սեփականատիրական իրավունքները Մանկուս, Սուրբ-Սարգիս, Ավանիկ, Կոխոզ և Կրզըրվանք գյուղերի և Թառնիս, Կուտուց-վանք և Ավանասար ագարակների նկատմամբ 1577 թ. հաստատված է Շահ Իսմայիլ Բ-ի բարձրագույն դիվանի մի հրովարտակով, որի իրավական հիմքը նույն վավերագրի մյուս էջում գրված «Բանակատեղի դատարանի» (دار القضاة معسكر ظفر اثر) հոգևոր ատյանի վճիռը կամ «միսալն» է:

«Բարձրագույն և սրբազնագույն դիվանի հրամանն այն է, — ասված է այդ հրամանագրում, — որ վարվեն համաձայն կից հրապարակված հաղթական բանակի բանակատեղի դատարանի օրինակելի միսալի, նրա բովանդակությունից և իմաստից չեղվեն, ամենալուսավոր շարժի որոշումը ուղեցույց համարելով, նրա սահմաններից դուրս չգան և խուսափեն սրբազան շարժի հակառակելուց»¹⁹:

Իսկ շարժի որոշման մեջ խոսվում էր այն մասին, որ այդ գյուղերում ու ագարակներում, որոնք Զաքարիայի և նրա ազգակիցների օրինական ժառանգական մուլքերն են և գտնվում են նրանց տիրապետությունից տակ, զիմմիները (հայերը) վար ու ցանք են անում, ջրաղաց և ձիթհանք են կառուցել, այգիներ և պարտեզներ են մշակել և լաթաղներ (արտավալրեր) են գցել, բայց ապօրինի կերպով հակառակելով, հրաժարվում են տեղում ընդունված սովորության համաձայն հիշյալ մալիքներին մալիքանե և ուշրաթ-ուլ-միսլ վճարել և ցանկանում են իրական ուշրաթ-ուլ-միսլից ու մալիքանեից զեղչել ու պակասեցնել, ուստի, այդ ի նկատի ունենալով, որոշվեց, որ վերոհիշյալ համայնքները նշված կալվածների մալիքանեն, որը ուշրաթ-ուլ-միսլն է, օրինական (շարժի) «պահանջից ու անհրաժեշտությունից» հետո, տեղում ընդունված կարգով հանձնեն մալիքաներին և ոչ մի անօրինական պատրվակով ու պատճառաբանությամբ չթերանան և առանց օրինական պատճառի ոչինչ չզեղչեն կամ չպակասեցնեն: Տեղի շարիաթի վերակացուները և հաքիմի լիազորները այս հարցում պետք է օրինական օգնություն ցույց տան և որևէ մեկին թույլ չտան հակառակել լուսապայծառ շարիաթի տրամադրությունը»²⁰:

Շարիաթական իրավունքը շատ որոշակի վերաբերմունք ուներ մուլքային սեփականության անձեռնմխելիության վերաբերմամբ: Այն խախտողներին նա համարում էր՝ «սրբազան շարիաթին հակառակողներ» (مخالفين شريعت غرا), որպիսիք իսլամական աշխարհում ենթակա էին հետապնդման ու պատժի: Շահ

¹⁹ Հրովարտակներ, I, վավ. 19:

²⁰ նույն տեղում:

Աբաս Ա-ի 1604 թ. հրովարտական, որը տրված է ի վավերացումն Դիվան-ալ-սադարաթի այն վճռի, որով հաստատվում է Քեջավանի դուստր Վախախի ժառանգական սեփականատիրական իրավունքները Սադմոսավանքի մուլքի նկատմամբ, հրահանգվում է «վարվել համաձայն բարձրագույն և վեհագույն Դիվան-ալ-սադարաթի կողմից կից հրապարակվող օրինակելի միասալի: Նրա բովանդակությունից և իմաստից չհեղվել և լուսավոր Շարի որոշումը պարտադիր համարել և խուսափել աշխարհաստատ հրամանագրին ու օրինակելի միասալին հակառակելուց. այդպիսիք ենթակա են հետապնդման»²¹,

1620 թ. հրովարտակով Շահ-Աբաս Ա-ն հաստատում է Դիվան-ալ-սադարաթի վճիռը Քաշաթաղի մելիք Հայկազի մուլքերը հակառակորդների ոտնձգություններից պաշտպանելու մասին: Այդ վճռի մեջ Ռաֆի-էդ-դին սադրը հաստատում է, որ «Քուշթասիֆի (Քաշաթաղ) և Ղափանի շրջաններում գտնվող որոշակի մուլքերի առանձին մասեր մելիք Հայկազի օրինական (շարի) իրավունքն են, և նա դրանց տիրում է որպես մուլք, իսկ տեղում գտնվող որոշ մարդիկ առանց որևէ օրինական պատճառի արգելում են նրան տիրել այդ մուլքերին և ապօրինի կերպով նրան անհանգստություն են պատճառում, ուստի որոշեցինք, որ հիշյալ մարդիկ հակառակ սրբազան Շարի նրան արգելք չհանգիսանան և չխանգարեն տիրել այն բաժիններին, որոնք որպես մուլք և սեփականություն գտնվում են նրա ձեռքում: Թող սրբազան Շարի վճիռը պարտադիր համարեն, առանց օրինական (Շարի) պատճառի նրան չխանգարեն տիրել իր մուլքերին, ապօրինի կերպով նրան անհանգստություն չպատճառեն և խուսափեն սրբազան շարիաթին հակառակելուց»²²:

Վակֆային նվիրատվություններին վերաբերող վավերագրերը ևս մուլքային ժառանգական և գանձագին տիրույթների շարիաթական իրավաբանական մամբ անառարկելի, ամուր սեփականություններ լինելն են հաստատում: Այդ վավերագրերը մեծ մասամբ բաղկացած են երկու մասից՝ ա) ղաբալե, բ) վակֆ-նամե: Առաջին մասում արձանագրված է մուլքերի գնումը, իսկ երկրորդում՝ դրանց նվիրումը: Նվիրողը նախ հանդես է գալիս որպես գնող և կանխիկ դրամի վճարումով իր շարիաթական սեփականությունն է դարձնում նվիրվող մուլքը կամ մուլքերը, և ապա իր իրավական սեփականությունը դարձնելուց հետո միայն, դրանք նվիրում կամ վակֆ է անում որևէ կրոնական հաստատության²³: Իսկ այն դեպքում, երբ դրանք ժառանգական մուլքեր են, վավերագրի սկզբի մասում նշվում է այդ մասին, կամ ասվում, որ դրանց սեփականություններ լինելը հաստատված է «նախկին իրավարար կազինների ձեռքով գրված ու կնքված առանձին արժանահավատ, ճշմարիտ և վավերական փաստաթղթերով և հաստատման արձանագրություններով»²⁴:

Ուրեմն միայն անձնական ժառանգական կամ գանձագին մուլքերն էին անառարկելի սեփականություն համարվում, որոնց մալիքները, ինչպես ասվեց՝ «կարող էին տիրել ինչպես սեփականատերերը տիրում են իրենց սեփականու-

21 Հրովարտակներ, II, վավ. 3:
 22 Հրովարտակներ, II, վավ. 15:
 23 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 934, 1004, թղթ. 2ա, վավ. 3, թղթ. 4, վավ. 84:
 24 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 1, 4, 14, թղթ. 3, վավ. 17ա:

مسجلات و اسناد مصحح و معتبره عليه مخطوط و مهور قضاة معتد
 عليهم السابق...

թյանը կամ իրավատերերը իրենց իրավունքներին և վարվել նրանց հետ այնպես, ինչպես կցանկանան»: Որովհետև դա ոչ միայն տիրապետում էր, այլ նաև սեփականատիրություն, որը շարիաթի օրենքներով կարելի էր տնօրինել, վաճառել, փոխանցել մեկ ուրիշի, նվիրել կամ վակֆ անել: Եվ այս օրենքը անխըտիր էր բոլորի համար, անկախ նրանց դիրքից և իշխանական իրավունքներից:

Արդաբիլի Սեֆյան դերվիշների սերնդից շեյխ Հուսեյն Զահեդին, որը XVII դարի վերջերին իր «Սիլսիլաթ-ուլ-նասաբ-ե Սաֆալիյե» (Սեֆեվիյների ցեղագրությունը) աշխատության մեջ գրել է շեյխ Սաֆիի և նրա հաջորդների վարքը, պատմում է այն մասին, որ երբ Շահ-Աբաս Ա-ն ուզեց կնիքից մաքրելով խորասանը, գրավում է Բալխ քաղաքը, մերձակա գյուղերից խոջա Գոթուհեյում կըզըլբաշ գինվորների ձեռքն են ընկնում մի քանի վակֆնամեններ, որոնք վերաբերում էին Լանկ Թեմուրի կողմից շեյխ Սաֆիի որդուն՝ շեյխ Ալիին կատարած նվիրատվությանը: Ըստ այդ վակֆնամենների, երբ 1402 թվականին Լանկ Թեմուրը վերադառնում է դեպի Փոքր Ասիա կատարած իր վերջին արշավանքից և իր հետ բերելով մեծ թվով գերիներ նվիրում է շեյխ Ալիին, նա միաժամանակ շատ գյուղեր է գնում կենտրոնական Իրանի Բելվարիի, Կըզըլ Օվզանի և Սպահանի շրջանի Քամարեի և Համադանի շրջակայքում և վակֆ է անում շեյխ Ալիի արու ժառանգներին: Այս վակֆնամենները ներկայացնում են Շահ-Աբասին, որը կարող էր, որպես շեյխ Ալիի ժառանգը, իսկույն սեփականացնել այդ գյուղերը և մտցնել իր խասերի շարքը: Սակայն շահը հրաժարվում է դրանցից ասելով, որ «այդ գործարքը թագավորական գործարք է, կարող է պատահել, որ դաբալենները գրել են տվել, սակայն գումարը մուլքերի տերերին չի հասել: Եթե այդպես եղած չլիներ, ապա այդ մուլքերից գոնե մի քանիսը պետք է այժմ մեր ձեռքում լիներ»²⁵:

Ինչպես տեսնում ենք նույնիսկ Լանկ Թեմուրը այն ժամանակ, երբ նա նվաճել էր ամբողջ Առաջավոր Ասիայի երկրները և պատրաստվում էր արշավել դեպի Չինաստան, և որ շատ հեշտությամբ կարող էր սեփականացնել հարյուրավոր կալվածներ, ստիպված էր հարգել շարիաթի սահմանած կարգը և կազմել տալ շարիաթական գնման փաստաթղթեր (դաբալեններ) և իր գանձագին մուլքերը դարձնելուց հետո միայն դրանք նվիրել շեյխ Ալիի ժառանգներին: Հետաքրքիր է այստեղ «թագավորական գործարք» (معامله پادشاهی) խոսքը, որ փաստորեն նշանակում էր «գնման անվան տակ հափշտակում», որին քաջ ժանոթ է եղել նաև ինքը Շահ-Աբասը:

Սեփականություն օրինականությունը, ինչպես նաև տիրելու, օգտագործելու և օտարելու իրավունքները համարվում էին կրոնով արտոնվող, այսինքն՝ «շարիաթական» իրավունքներ: Որովհետև տիրող օրենքը շարիաթական օրենքն էր, ուստի «օրենք», «օրինականություն» հասկացությունները արտահայտվում էին «շար»-«شرع», «շարիաթական»-«شرعی» տերմիններով: Երբ ուզում էին ասել «օրինական տիրապետում», «օրինական վաճառք», «օրինական վակֆ», ասում էին «թասարրուֆ-ե շարի»-«تصرف شرعی», «բեյ-ե շարի»-«بيع شرعی»:

²⁵ شیخ حسین پیرزاده زاهدی، سلسله النسب صفویه، برلین، ۱۹۲۳. ص ۴۸—۴۹... معامله پادشا هیست شاید که قبلا لها نوشته باشند و مبلغ بصاحب ملک نرسیده باشد اگر همچو نمیبود میبایست که از آن املاک قلیلی در تصرف میبود

«վակֆ-ե շար'ի—وقف شرعى»: «Օրինական», «օրենքին համապատասխան», «օրենքով թույլատրելի» հասկացությունները արտահայտվում էին «բեմուկ-թազա'ե շար'-ե անվար—تور شرعى مقضى» (լուսավոր շար'ին համապատասխան), «շար'ան—شرا» «մաշրու'—مشروع» և «շար'» արմատից կազմված այլ բառերով ու բառակապակցություններով:

Որպես գերագույն գործադիր իշխանություն, յուրաքանչյուր մուսուլմանական երկրի վեհապետ, տվյալ դեպքում շահը, հանգես էր գալիս որպես շար'ի օրենքների բառացի գործադրմանը նախանձախնդիր մոլեռանդ մի իշխանավոր, միշտ դիմելով սագրին, շեյխ-ուլ-իսլամին և մուֆթիին և խորհրդակցելով նրանց հետ, նա հաստատում և գործադրության էր հանձնարարում վերջիններիս կողմից տրված վճիռները (միսալներ և ֆաթվաներ): Հասկանալի է արդեն, որ այս պարագաներում ինքը ևս պետք է իր սեփական կալվածների տնօրինման և ընդհանրապես հողային գործարքների ժամանակ պահպաներ իրավական, այս դեպքում շարիաթական նորմերը, ապահովելով բոլոր պաշտոնական ձևակերպումները: Միայն խստագույն օրինապահության անձնական օրինակով կարող էր բարձրացվել շար'ի հեղինակությունը, որը հողի ֆեոդալական սեփականության իրավական հենարանն էր հանդիսանում և որի շնորհիվ ամրապնդվում և սրբագործվում էր հողի տիրության և սեփականության իրավունքը²⁶:

Ժամանակակից հասկացողությամբ, արդարադատության բոլոր օրգանները, լինեին դրանք կրոնական թե քաղաքացիական (շար' և ուրֆ), առաջնորդվում էին շարիաթական նորմերով: «Թագքիրաթ-ալ-մուլուքի» տվյալներով քաղաքացիական դատարանի գերագույն դատավորը՝ դիվանբեկին, իրեն ներկայացված դատական գործերի համար մեծ մասամբ դիմում էր սագրի գլխավորած շար'ի հոգևոր ատյանին՝ դիվան-ալ-սադարաթին, կամ կոնկրետ հարցերի վերաբերյալ հարցում էր կատարում սագրին նրա կարծիքն իմանալու համար: Վերջինիս կողմից տրված վճիռները դիվանբեկիի հաստատումից հետո օրենքի ուժ էին ստանում և հանձնարարվում էին գործադրության²⁷: Իսկ այդ վճիռները, ինչպես տեսանք, ուղեցույց ունեին անձնական բոլոր տեսակի սեփականություններին, այդ թվում նաև հողային, ինչպես ժառանգական, այնպես նաև զանձագին տիրույթների անձեռնմխելիության դարերով սրբագործված շարիաթական սկզբունքները:

Մենք փորձեցինք ցույց տալ շարիաթական իրավունքի վերաբերմունքը հողային սեփականությունների անձեռնմխելիության հարցում ընդհանրապես, անդրադառնալով բոլոր այն դեպքերին, երբ այն հանգես էր գալիս ի պաշտպանություն, ինչպես մալիքների վաղնջական սեփականատիրական իրավունքի, այնպես նաև օրինականացնում էր սեփական միջոցներով զնված մուլքերի նկատմամբ սեփականատիրոջ կամ մալիքի տիրելու և տնօրինելու իրավունքները: Սակայն այս ընդհանուր իրավական նորմերը կոնկրետ դեպ-

²⁶ Այս կարգի «օրինապահության» հետաքրքիր օրինակներից են Շահ-Արասի կողմից 1607 թ. տարբեր սրբավայրերի նվիրված կալվածներին և այլ հարստություններին վերաբերող ընդարձակ վակֆնամաները, որոնց մասին բավական մանրամասն խոսում է Իսքանդար Մունշին (Տ. II, էջ 760—762) և որոնցից մեկի ընտիր մի ընդօրինակությունը պահպանվել է Մատենադարանի Զեռազրատան արաբատառ ֆոնդի № 235 ձեռագրում (էջ 72բ—76ա):

²⁷ Tadhkirat al-Mulūk, էջ 50—51:

քերում չուրովի կիրառութուն ունեին և հողատիրական տարրեր ինստիտուտների ոլորտում ուրույն ձևով էին դրսևորվում և ինչպես սկզբում նշեցինք, չուրաբանչուր երկրում, դարերից ի վեր ուրույն դարգացում ապրող հողային հարաբերութունների համար «մնում էին որպես իրավական ծածկույթ, որ գալիս էին ծածկելու ընդունված կարգերը»:

А. Д. ПАПАЗЯН

ПРАВОВЫЕ НОРМЫ ШАРИАТА И ВОПРОС О ФЕОДАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ НА ЗЕМЛЮ НА ВОСТОКЕ

Резюме

В течение долгих веков в странах Востока наследственное владение землей и право собственности на землю существовали параллельно друг другу и отражались в сознании людей как единое явление.

Исходя из этого факта, многие исследователи приходят к выводу, что на Востоке не было частной собственности на землю, что право шариата также не признает подобной собственности. В основу доказательства этого тезиса положен пример «мюлькадарства» и право мюльковладельцев, владеющих селами, выражавшееся лишь в праве на взыскание ренты с сельских районов.

Углубляясь в сущность аграрных взаимоотношений и анализируя фактический материал, отдельные исследователи не обращали внимания на смысловую сторону терминов, относящихся к землевладению; часто они недооценивали их значение в языке, между тем известно, что термины выражают социально-экономические и общественные отношения той или иной эпохи.

В статье показано, что в источниках XV—XVII вв. определенно дифференцируются понятия «владение» и «собственность». Например, понятие «владение» выражено термином «тасарруф», а понятие «собственность» терминами «тамлик» и «тамаллук».

Несмотря на догму шариата о «божественной» собственности на землю, ислам и мусульманские законы содержали в себе твердые принципы, защищавшие право собственности на землю, которые последовательно применялись и защищались как религиозными судебными органами, так и гражданскими властями и высшими государственными инстанциями.

ԳՅՈՒՂԵՐՆ ՈՒ ԱԳԱՐԱԿՆԵՐԸ ԱՐԵՎԵՅՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
XVI—XVII ԳԱՐԵՐՈՒՄ

Հ. Գ. ՓԱՓԱՋՅԱՆ

XVI—XVII դարերի սեֆյան տիրապետության շրջանի հողային հարաբերությունների և առհասարակ ֆեոդալական հողատիրության պատմության հիմնական հարցերից մեկը կալվածատիրոջ և նրա սեփականությունը հանդիսացող հողերի վրա աշխատող հողագործ գյուղացու արտադրական փոխհարաբերությունների խնդիրն է:

Ֆեոդալական հասարակության մեջ միշտ էլ տարբեր է եղել հողագործ աշխատավորության՝ իրենց արտադրության օրյեկտը հանդիսացող հողի սեփականատերերի նկատմամբ ունեցած կախումն ու տնտեսական ենթակայության բնույթը: Հնուց անտի որոշակի կերպով տարբերվել են նախաֆեոդալական ժամանակներից պահպանված և հետագայում նոր, ֆեոդալական հարաբերությունների առաջացման շրջանում արդեն տնտեսական ստրկացման ենթարկված առանձին գյուղերի համայնքների անբաժան օղակը հանդիսացող համայնիկ գյուղացու և համայնքից դուրս, որպես հողի ինքնուրույն վարձակալ կամ մշակ հանդես եկող հողագործ աշխատավորության շահագործման ձևերը:

Նեղրո առարկա հանդիսացող ժամանակաշրջանի նարատիվ սկզբնաղբյուրներում և պաշտոնական վավերագրերում բազմիցս հիշատակվում են կալվածատիրական խոշոր հողային սեփականություններ, որոնք հանդիսացել են առանձին ֆեոդալ-կալվածատերերի ժառանգական կամ գանձագին մուլթեր և ժառանգվելով կամ առուժախի առարկա դառնալով փոխանցվել են սերնդից սերունդ:

Անհատ կալվածատերերի կամ ֆեոդալական ընտանիքների պատկանող, վանքապատկան և նույնիսկ պետական կամ արքունի գյուղերի ու այլ կալվածների ցուցակներում, շարիաթական կալվածագրերում կամ թագավորական հրովարտականերում ու հարկային մատչաններում թվարկված են երկու կարգի մուլթային սեփականություններ:

ա) գյուղեր, որոնք շարիաթական տերմինով, արաբերեն կոչվում էին «կարիյյե-قریه» (հոգն. «կուրա-قرا») և բ) ագարակներ, որ նույնպես արաբերեն կոչվում էին «մազրաե-مزرعة» (հոգն. «մազարե,—مزارع»), և որը բառացի շանակում է «վար ու ցանքի վայր», «հանդ», «ագարակ»:

Մուլթային սեփականության այս երկու կատեգորիաների որոշակի տարբերությունը առաջին անգամ նկատված է 1954 թ. մեր կողմից պաշտպանության ներկայացված «Ագրարային հարաբերությունները Երևանի խանության մեջ XVII դարում» դիսերտացիոն աշխատության մեջ, այդ մասին ընդգծված է նաև աշխատության ավտոնոմիստում¹: 1960 թ. լույս ընծայած «Հողագործությունը և ագրարային հարաբերությունները Իրանում XIII—XIV դարերում» ծավալուն մենագրության մեջ պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին նույնպես առանձին ենթադիտում անդրադարձել է «կարիյյե» և «մազրաե» տերմիններին և իրանական ու հետագա շրջանի, մեծ մասամբ նարատիվ աղբյուրների տվյալներով, կրկին անգամ ապացուցել, որ կարիյյեների հետ հիշվող մազրաեները սովորական հանդեր կամ վարելահողեր չէին, այլ բնակեցված ֆեոդալական տիրույթներ, և որ իրոք զրանց ու կարիյյեների միջև կար արմատական տարբերություն, որը հիմնականում արտահայտվում էր այդ հողերը մշակող հողագործ ռայաթների սոցիալ-իրավական վիճակի առանձնահատկություններով²:

Ներկա հոդվածի նպատակն է համառոտակի ուրվագծել այդ երկու տիրույթների հիմնական տարբերությունները հողօգտագործման և տնօրինման ասպեկտով, վեր հանելով հատկապես այդ

¹ Папазян А. Д., Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке (автореперат диссертации), Ереван, 1954, էջ 22:

² Петрушевский И. П., Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков, Москва—Ленинград, 1960, էջ 290—298:

հողի վրա ծավալվող դասակարգային հակամարտություններն ու տևական սոցիալական պայթա-
րը, որ մղվում էր մի կողմից կալվածատեր-ֆեոդալների, իսկ մյուս կողմից՝ զենևս կենսունակ
գյուղական համայնքների միջև:

Ինչպես ասվեց, «կարիյե» և «մազրան» տերմիններին հանդիպում ենք զենևս իլխանական
և նույնիսկ ավելի վաղ շրջանի աղբյուրներում³:

XV դարի սկզբին (1403—1404 թթ.) Լանկ Քեմուրի կողմից Արզաբիլի Ենյա Սաֆի-էդ-դինի
որդի հույզ Ալիին նվիրված կալվածների ընդարձակ կալվածագրով, որի Ֆուտո-Ֆաբսիմիլին հրա-
տարակել է գերմանացի արևելագետ Հերբերտ Հոբստը, նվիրվում են երեք կարիյեներ և տասնմեկ
մազրաններ, առանձին դանգերով կամ ամբողջությամբ⁴:

Շուրջ մեկ հարյուրամյակ հետո (1504 թ.) օրդուբադցի խոջա Ֆաթհի-բեկ Քուսիի մուլքերի
մասին կազմված մի կալվածագրում ասված է, որ «Ազադ-Ջիրանին (Գողթն) ենթակա Գունիս
կոչվող վայրի մուլքերից 12 դանգ մուլք և այդ վայրի ներքո ստորև թվարկված մազրանները

Սալի մազրանեն	3	դանգ
Բերզակի մազրանեն	2	»
Վեթիլության մուլքերի մազրանեն	2	»

իրենց բոլոր ենթակա և կից վայրերով, իրավո՛ւնքներով և հավելյալ ու հարակից ամեն ինչով
պատկանում է խոջա-Ֆաթհի-բեկ Քուսիին»⁵:

Ավելի ուշ, Շահ Իսմայիլ II-ի օրոք (1577 թ.) Հավուց թառի Ս. Ամենափրկչի վանքի վա-
նահայր Զաքարիա վարդապետի անունով հրապարակված հրովարտակով հաստատվում է, որ
«Ձուխուր- Սա՛դի վիլայեթում գտնվող Մանկուս, Սուրբ-Սարգիս, Ավանիկ, Կուդիս, Կոխոլ և Կրզըլ-
վանք (Հավուց թառ) կարիյեներն ու Քաունիս, Կուտուց-վանք և Ավանասար մազրանները, Բա-
բայի որդիներ Զաքարիա վարդապետի և Միր-Քումանի, խոջայի որդի Ճիլասի և Քունիլի որդի
Մեհրաբի օրինական, ժառանգական մուլքերն են և գտնվում են նրանց ձեռքում»⁶:

Մինչ այժմ կատարված բոլոր ուսումնասիրությունները գալիս են հաստատելու, որ մուլքային
սեփականություններ հանդիսացող գյուղերում կամ «կարիյեներում» հողի օգտագործման իրա-
վունքը վերապահված էր նույն գյուղի ուայթներին, դա արտահայտվում էր գյուղական համայնքի
համայնական տիրության և տնօրինման իրավունքով:

Մարքսը, խոսելով արևելյան համայնքի մասին, շեշտում էր, որ «ասիական զոնն գերակշռող
ձևի մեջ գոյություն չունի առանձին անձի սեփականությունն այլ գոյություն ունի միայն այդ անձի
տիրակալությունը, իրական իսկական սեփականատերը համայնքն է. հետևաբար սեփականությունը
գոյություն ունի միայն որպես հողի կոլեկտիվ սեփականություն»: Խոսքն այստեղ անշուշտ ֆեո-
դալական լծից ազատ գյուղական համայնքի մասին է: Բայց տվյալ դեպքում, երբ պայմանական
կերպով բացատրում ենք հողի գերագույն ֆեոդալական սեփականությունը, ապա տեսնում ենք, որ
այստեղ ևս նույն հարաբերություններն են եղել: Գյուղացին պարտավոր է եղել իր օգտագործած
հողի համար ողնտա վճարել կալվածատիրոջն ու պետությունը և այդքանը միայն, որից հետո նա
ճանաչվել է իր մշակած հողի տերը և իրավունք է ունեցել ուզած ձևով մշակել և օգտագործել այն,
կամ փոխանցել մեկ ուրիշի:

Այլ էր սակայն մազրաններում սահմանագծված հողերի վրա աշխատող գյուղացիության սո-
ցիալ-իրավական վիճակը: Եթև գյուղերը վաղնջական ժամանակներից եկած ազատ համայնքներ
էին՝ հետագայում միայն ֆեոդալական կախման ենթարկված, ապա մազրանները, վաղ շրջանի
«դաստակերտներ» նման, հանդիսանում էին առանձին ունեւորների կամ ազդեցիկ ֆեոդալների
շանքերով, իհարկն նորից արտատնտեսական ճնշման շնորհիվ, աշխատավոր մասսաների բռնի,

³ فضل الله رشيد الدين، جامع التواريخ، جلد سوم، بسعی و اهتمام عبد
.Abdollah al-Mazandarani. Resālah-ye
Faiakiyyā von W. Hinz, Wiesbaden, 1952, S. 205, 217, 222.

⁴ Timur und Högä Ali, Ein Beitrag zur Geschichte der Safawiden, von Dr. He-
ribert Horst, Abhandlungen der Geistes und Sozialwissenschaftlichen Klasse,
Jahrgang, 1958, № 2, S. 30—31.

⁵ Մատենադարան, կթղվ. զիվան, թղթ. 1ա, վավ. 7:

⁶ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. I. Հրովարտակներ, պրակ Ա (ԺԵ—ԺԶ դար),
կազմեց Հ. Դ. Փ ա փ ա զ յ ա ն, Երևան, 1954, վավ. 19 (այսուհետև՝ Հրովարտակներ I, 11):

անվճար աշխատանքով ոռոգված ու մշակելի դարձված ընդարձակ տիրույթներ: Եթե գյուղերում հողերի տնօրենը և իրավապետը հանդիսանում էր գյուղական համայնքը և միայն բերքի որոշ սովորյալ օրպես ֆեոդալական ոնեստ հատուցվում էր մալիքին, ապա մազրահներում այդ բոլոր իրավունքները վերապահված էին կալվածատիրոջը: Մազրահների հողերը մեծ մասամբ մշակում էին վարձկան հողագործները, աշխատավարձի դիմաց ստանալով բերքի որոշ սովորյալ և կամ, փոխադարձ համաձայնությամբ, հողերը օգտագործման էին տրվում մենատնտես գյուղացիներին, նորից բերքի որոշ սովորյալ հողագործին թողնելու պայմանով:

Հայտնի է, որ ստրկատիրական հասարակարգում «ագարակներում» և «գաստակերտներում» բնակեցվում էին ուղղակի արշավանքների ընթացքում ձեռք բերված գերիներ կամ տնտեսական ճնշումների շնորհիվ ստրկական կամայն մեջ ընկած ունեզուրկ գյուղացիներ: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում սակայն այդ կարգի ֆեոդալական տիրույթներում կենտրոնացվում էին ծանր հարկապահանջության շնորհիվ ունեզրկված, արտագրության միջոցներից զուրկ գյուղացիներ կամ բռնի կերպով այլ կողմերից բռնված ուսյաթներ:

Սկզբնաղբյուրների տվյալները թույլ են տալիս ասելու, որ գոյություն են ունեցել ինչպես ինքնուրույն արտագրական միավորներ հանդիսացող, այնպես նաև առանձին մուլքային գյուղերին կից և սովալ գյուղի ուսյաթների ձեռքով մշակվող մազրահներ: Վերը վկայակոչվող կալվածագրերում թվարկված մազրահները ինքնուրույն կալվածքային միավորներ են եղել և մշակվել են նույն վայրում բնակվող հողագործների ձեռքով: Սակայն XV—XVIII դդ. բազմաթիվ վավերագրերում, ինչպես օրինակ, Մատենադարանի կաթողիկոսական դիվանում գտնվող Տաթևի վանքապատկան կալվածների ավելի քան 100 վավերագրերում, վրաց թանգարանում և Պետական արխիվում պահվող և Հյուսիսային Հայաստանի, ինչպես նաև Արցախի տարբեր գավառներին վերաբերող հրովարտակներում ու կալվածագրերում հիշատակվում են առանձին մուլքային գյուղերին կից մազրահներ: Այսպես, օրինակ, Թուման-ե Նախչևանի վիլայեթի Սիսաչևանի (Սիսիան) մահալում գտնվող Դաստակերտ գյուղին կից միշտ հիշվում է Գյուլյաղի կոչվող մազրահն⁷, Բնունիս գյուղին կից Թաթի մազրահն⁸, և կամ Լոռվա մահալի Հեքաթաթ գյուղին է կցված եղել Դրատուն կոչվող մազրահն⁹ և այլն: Ինքնուրույն կալվածքային միավորներ հանդիսացող մազրահների համար հաճախ կազմվում էին համախոսականներ կամ շարիաթական արձանագրություններ, որոնք հաստատվում էին տեղական կամ կենտրոնական իշխանությունների կողմից, 1743 թ. Երևանի Փիր-Մուհամմադ խանը հաստատում է, որ Չագավանքին պատկանող Բագարաշեն կոչվող մազրահն ընկած է Գրիբուրյաղի մահալի Նլղովան, Շահար և Արամուս գյուղերի արանքում և այդ գյուղերից ոչ մեկին չի վերաբերում և որ այդ հողի մշակման իրավունքը պատկանում է միայն Չագավանքի միաբանությանը¹⁰:

Համարյա նույն ժամանակին է վերաբերում նաև Մակիթ Թադեոս Առաքյալի վանքի շուրս խոշոր մազրահների հաստատման համար կազմված համախոսականը¹¹:

Բնորոշ է սակայն, որ պաշտոնական վավերագրերում ինչպես կարիքները, այնպես նաև մազրահները համարվում են մուլքային սեփականություններ, կոչվում են «մուլք» և, ինչպես տեսանք, ժառանգվել կամ օտարվել են ինչպես ամբողջությամբ, այնպես նաև մաս առ մաս կամ դանգերով:

XVI—XVIII դդ. բազմաթիվ կալվածագրեր խոսում են համայնքի անդամ հողագործ ուսյաթների կողմից միմյանց կամ կալվածատերերին և վանքերին առանձին վարելահողեր ու մշակելի այլ տարածություններ վաճառելու փաստերի մասին: Մազրահներում, սակայն, առանձին հողակտորների օտարման մասին վկայող և ոչ մի փաստ չի արձանագրված: Պարզ է իհարկե, որ գյուղերում օտարման էր ենթարկվում հողի օգտագործման և տնօրենման իրավունքը, իսկ մազրահներում, ինչպես ասվեց, գյուղացիները զուրկ էին այդ իրավունքներից: Նկատելի է, որ գյուղացիների հողերի գնորդների դերում հաճախ հանդես են գալիս խոշոր կամ միջակ կալվածատերեր, որոնք օգտվելով ուսյաթների ծանր վիճակից, շնչին գումարով գնում են նրանց հողերը

7 Հրովարտակներ, I, վավ. 4, 11, 15, 17, տե՛ս նաև Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 23ա:

8 Նույն տեղում:

9 Տնտեսական և քաղաքական իրավունքների ժողովուրդի կողմից, Մոսկով, 1961, վավ. 20:

10 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 340:

11 Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 189:

կամ պարտքի դիմաց գրավ վերցնելով ի վերջո սեփականում գրանք: Նկատված է սակայն, որ այդ հողերը մեծ մասամբ դնում են նույն գյուղի սեփականատեր-կալվածատերերը կամ մալիքները: Գնելով իր մուլքը հանդիսացող գյուղի համայնքի կամ նրա առանձին անդամների անօրինության տակ գտնվող հողը, կալվածատերը այդ հողի նկատմամբ կալվածատիրական սեփականության իրավունքից բացի ունենում էր նաև տիրության և օգտագործման իրավունք, իսկ համայնքը կամ ուսուցիչը կորցնում էր իր բոլոր իրավունքները:

XV դարից պահպանվել է Վաղարշապատ գյուղին վերաբերող մի բավական հետաքրքիր վակֆային փաստաթուղթ. 1672 թ. հունվար ամսին Հակոբ կաթողիկոս Ջուղայեցին Շահ Աուելյանից ստանում է մի հրովարտակ, որին կցված է Դիվան-ալ-Սադարաթի միսալը՝ Վաղարշապատ գյուղը ամբողջությամբ վանքին վակֆ լինելու մասին: Այդ միսալում մանրամասն շարադրված է գյուղի՝ էջմիածնի վանքի սեփականությունը դառնալու պատմությունը: Այստեղ համարյա ամբողջությամբ մեջ է բերված նաև 1450 թ. փետրվար-մարտ ամիսներին կազմված մի վակֆնամակ, ըստ որի նըշված թվականին գյուղի համայնքը, Շարի ներկայությամբ, ամբողջ գյուղը վակֆ է անում էջմիածնի վանքին:

Վակֆնամեում ասված է.

«854 թվականի մուհամմե ամսին (1450 թ. փետրվար 14-մարտ 16) հրապարակված վակֆնամակի բովանդակությունը հետևյալն է. Ջուխուր-Սա'դի շրջաններից Կարպիի նահիայի Ուլքիլիսա գյուղում բնակվող քաղխուղաններն ու մելիքները, հողագործներն ու բոլոր մասընկերները (իմա՝ համայնքի անդամները — Հ. Փ.) ներկայացան սրբազան Շարի դատարանը և իրենց հոծարկամբով ու ցանկությամբ Ջուխուր-Սա'դի շրջաններից Կարպիի նահիայի Ուլքիլիսա գյուղի ամբողջ 6 դանդը վերջնականապես վակֆ արեցին և հավատքի համար հավիտյան ամրացրին Քրիստոսի հետևորդներին, — ապահովություն նրան, — Հիմնադրած հուշակալոր Ուլքիլիսայի վանքին, իր բոլոր օրինական և հասարակական, ենթակա և կից վայրերով, և գյուղն ամբողջությամբ հանձնեցին այդ տաճարին առ ի սեփականություն, իսկ հիշյալ վակֆերի տնօրինության (թավախյաթ) իրավունքը բոլոր ժամանակներում հանձնեցին այն անձնավորությունը, որը կնշանակվի կաթողիկոս: Այդ կաթողիկոսը թող ամեն տարի հիշյալ գյուղի հասույթը, եկամտան ու բահրալեն գանձի ու հատկացնի տաճարի կարիքներին՝ կահավորության, լուսավորության, խունկի և այլն, ինչպես նաև իր և տաճարում բնակվող մյուս կրոնավորների ու սեպուխների ապրուստին: Եվ վերահիշյալ վակֆ անողները այսպես պայման գրեցին, որ այն ինչ որ վակֆ է արված, ոչ մի զեպքում չգնեն և չվաճառեն, չնվիրեն ու չսեփականացնեն և այլ կարգի գործարքներ չկատարեն: Միաժամանակ նրանք շար'ով պայման գրին, որ եթե նրանց ժառանգներից մեկն ու մեկը կրեմ և ակնկալություն ունենա և որևէ պահանջ ներկայացնի, այդ պահանջը պետք է օրինականությունից զուրկ ճանաչվի»¹²:

Մեջ բերված վակֆնամակից պարզ երևում է, որ ուսուցիչները իրենց գյուղի մուլքը չէ, որ վակֆ են անում վանքին: Ուստի, պետք է կարծել, որ այստեղ մենք գործ ունենք, հայտնի չէ թե ինչ հանգամանքներում, ուսուցիչների՝ իրենց հողերի օգտագործման և տնօրինման իրավունքներից հօգուտ վանքի հրամարվելու փաստի հետ:

«Ջամբուռ»-ից իմանում ենք, որ սույն վակֆնամակի հիման վրա վանքը տիրակալության իրավունքներ է ունեցել Վաղարշապատի ոչ միայն ուսուցիչների տներին, այլ նաև նրանց վարելահողերի նկատմամբ: Սիմեոն Երևանցին մեկ-մեկ թվարկելով Վաղարշապատ գյուղում գտնվող վանքապատկան բոլոր հողերը, ավելացնում է. «Արդ այսոքիկ տեղիքս որք գրեցան ի վերդ, են յատուկ սրբոյ Աթոռոյ», յորս ոչ կարեն գեօղականքն մեր սերմանել ինչ առանց հրամանի մերոյ, բայց ի յայլ արտորայս զեղջս մերոյ՝ որք են գեօղականացն, մեք կարեմք սերմանել ըստ պահանջման ժամանակին եթէ կամիցիմք: Քանզի որպէս գրեցաւ ի վերդ ըստ զաբալայի Գրիգոր կաթողիկոսին, սրբոյ Աթոռոյ է գեօղս այս բոլոր սահմանօքն իւրովք»¹³:

Մի այլ տեղ ցանկանալով ճատկապես շնչտել, որ Վաղարշապատ գյուղը իր ամբողջությամբ է պատկանում վանքին, և որ գյուղի բնակիչները իրավունք չունեն տուն կամ այգի և այլ ստացվածքներ առանց վանքի գիտության վաճառել կամ փոխանցել մեկ ուրիշի, գրում է. «Այս ևս գրելի է ի յօրինակ ապագայից, ի մեր գեօղս Կակոս անուն մարդ մի զայգին իւր ծախսել էր գեօղիս

¹² Մատենադարան, Կթղվ. դիվան, թղթ. 1բ, վավ. 156ա, 156բ, 156գ: Այս վակֆնամակից մի հատված, որոշ բացթողումներով, լույս է տեսել Ի. Պ. Պետրուշևսկու աշխատության մեջ (տե՛ս նրա Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI-начале XIX вв., Ленинград, 1949, 363—364 պարսկ. բնագիր և էջ 245 ուս. թարգմ.):

¹³ «Ջամբուռ», էջ 158:

տառուղայ և խանի նօքար Սարու Մահմատ կոչեցեալ տաճկին՝ տաճկերէն հաստատուն դարալա-
յի՝ ի մէջ ծածուկ, յետոյ ի գիտելն մեր, ճնշելով զծախողն և զառնողն ևս, յետս առաք զայգին
ի տաճկէն և դարձուցաք ի Կակոսն և տաճկին ի գեօղէս և ի տառուղայութենէ հանեալ վարեցաք»¹⁴։

Սիմեոն Երևանցիին, ինչպես այդ երևում է նաև վերը կատարված մեջբերումներից, «Ջամ-
բրոս»-ում Վաղարշապատ գյուղի մասին խոսելիս համարյա միշտ շեշտում է այդ գյուղի ամբող-
ջութիւնը վանքի սեփականություն լինելը և շատ հաճախ առանց անունը հիշելու այն անվանում
է «մեր գյուղը» («Յաղագս գեղջս մերոյ Վաղարշապատու», «ի կից գեօղս մեր», «ի գեօղս մերոյ»,
«մօտ գեօղիս մերոյ», «ի գեօղիս մերում» և այլն), իսկ մյուս գյուղերի մասին խոսելիս միայն
շեշտում է, թե այդ գյուղերի քանի դանգ մուլքն է պատկանում վանքին. («որոյ վեց դանկ մուլքն
սրբոյ Աթոռոյս է», կամ «որոյ չորս դանկ կես մուլքն սրբոյ Աթոռոյս է» և այլն)։ Այնպես որ
տարբերությունը Վաղարշապատ գյուղի և մյուս գյուղերի սեփականության իրավունքների միջև
լափազանց ակնբախ է, որն, ինչպես տեսանք, իր արտահայտությունն է գտել նաև այդ գյուղերի
ճշգրիտ օգտագործման պայմանների մեջ։

Թե ինչ հանգամանքներում կարող էր տեղի ունեցած լինել ուայթների այդ, այսպես կոչված
«հոծարակամ» հրաժարումը իրենց իրավունքներից, դա կարելի է եզրակացնել XVІІІ դ. երկրորդ
տասնամյակի ընթացքում էջմիածնապատկան մի այլ գյուղի՝ Օշականի համայնքի հետ տեղի ու-
նեցածից, երբ հետզհետե սաստկացող հարկապահանջության հետևանքով, պարտքի դիմաց գրավ
դրված այգիների և ջրաղացների սեփականումը կանխելու համար, գյուղական համայնքի ներկա-
յացուցիչները հանձն են առնում բերքի 1/10-ի փոխարեն 2/10-ը վճարել կալվածատիրոջ և գրա-
վից ազատել համայնքի անդամներին պատկանող այգիներն ու ջրաղացները։ Նրանք փաստորեն
ավելի բարվոք են համարել կալվածատիրոջը կամ մալիքին կրկնակի նորմերով ունետա վճարել,
քան թույլ տալ, որպեսզի նա հօգուտ իրեն սեփականի գյուղի մշակված տարածությունների մի
զգալի մասի տնօրինման և օգտագործման իրավունքը¹⁵։

Հետադարձ, «ի փոփոխման ժամանակի», ինչպես սիրում է սսել Սիմեոն Երևանցիին, հատ-
կապես թուրքական օկուպացիայի ժամանակաշրջանում, օշականցիք շատ են փորձում ազատվել
այդ ծանր պարտավորությունից և բազմիցս քաջահայտ հրաժարվում են հավելյալ ունետան հա-
տույցելուց, սակայն թուրքական իշխանության դատական և վարչական օրգանները ստիպում են
նրանց ճանաչելու էջմիածնի կալվածատիրական իրավունքները և «հանձն առած կարգով կատա-
րելու իրենց պարտավորությունները նրա նկատմամբ»¹⁶։ Ուշագրավ է այն փաստը, որ 1725 թ.
կալվածատիրոջ նկատմամբ ստանձնած պարտավորությունները կատարելուց հրաժարվում և ըմ-
բուստանում են նաև վանքապատկան Վաղարշապատ և Մաստար գյուղերի ուայթները, որոնք
նույնպես հնազանդեցվում են թուրքական իշխանությունների կողմից¹⁷։

Պայքարը սուր բնույթ է կրել հատկապես ավելի սակավահող լեռնային գյուղերում։ 1670—
80-ական թթ. ուժեղ սոցիալական պայքար էր ծավալված Տաթևի վանքի վանահայր Հովհաննես
վարդապետի և վանքապատկան գյուղերի ուայթների միջև։ Վանքի արխիվում պահպանված մի
քանի տասնյակ պարսկերեն վավերագրերից պարզվում է, որ հակասությունների հիմնական պատ-
ճառը եղել է այն, որ Տաթևի վանքը դանազան ճանապարհներով կարողացել էր որպես մուլք դա-
մբր առաջ վանքին վակֆ արված գյուղերում, ուայթներից յուրացնելով, տեք դառնալ ընդարձակ
մշակելի տարածությունների, որի հետևանքով խիստ սահմանափակվել էին այդ գյուղերի հա-
մայնքների տնօրինության տակ գտնվող այգիներն ու վարելահողերը։ Ստեղծվել էր այնպիսի վի-
ճակ, երբ գյուղացիները ստիպված էին նախապես գյուղի հողային ֆոնդի մեջ եղած տարածու-
թյունները վերստին վարձակալել վանքից, խոստանալով բացի ընդհանուր կալվածատիրական
ունեությունից, այգիների և ջրաղացի համար լրացուցիչ վճարել բերքի 2/10-ը, իսկ վարելահողերի
համար՝ 1/10-ը։

Հողազուրկ ուայթները թեև հարկադրված համաձայնվել են համայնքի ձեռքից դուրս եկած
ճողերը նման ծանր պայմաններով վերստին վարձակալելու, սակայն ենթարկված լինելով տնտե-
սական ճնշման և ծանրաբեռնված լինելով հսկայական շափերի հասնող պետական հարկերով,
չեն կարողացել հանձն առած շափով ունետա վճարել և, միասնաբար դուրս գալով վանքի գեմ,
հրաժարվել են ճանաչել նրա իրավունքները այդ հողերի նկատմամբ։

14 Նույն տեղում, էջ 169։

15 Մատենադարան, կթղզ. դիվան. թղթ. 1գ, վավ. 286 և 290, հմմտ. «Ջամբրոս», էջ 111—112։

16 Նույն տեղում, վավ. 298, 301, 302։

17 Նույն տեղում, վավ. 299։

1670—80-ական թթ. Հովհաննես վարդապետի կողմից Ազերապազանի վեզիրին, այդ գյուղերի պետական հարկերի թիուղարհին, ինչպես նաև անձամբ շահին ներկայացված խնդրագրերից պարզ երևում է, որ այդ կարգի հողերը վանքապատկան Տաթև, Հալիձոր, Շնհեր, Խոտ, Բորգի և մյուս գյուղերում բավական շատ են եղել, և որոնց ուսումնասիրելու մասսայաբար սկսել են տիրել և օգտագործել, ուստի Հովհաննես վարդապետը ուսումնասիրելու անունները մեկ առ մեկ չի թվում, այլ բողոքում է ամբողջ համայնքի դեմ¹⁸:

1683 թ. վերաբերող մի բավական արժեքավոր վավերագրից պարզվում է, որ Տաթևի վանքի և համանուն գյուղի համայնքի միջև հարաբերությունները ծայր աստիճան լարվել են՝ տեղի տալով բուն ելույթներին ու ընդհարումներին: Վերստին վարձակալված հողերի հավելյալ ունեցող զանազան համար Հովհաննես վարդապետը դիմել է նույնիսկ պետական վարչական օրգանների միջամտությանը, որոնք բուն կերպով գյուղացիներից հավաքելով այն, խորհրդով տեղափոխել են վանքի կալը: Սակայն պետական պաշտոնյաների գյուղից հեռանալուց հետո գյուղացիները հարձակվել են վանքի կալի վրա և հավաքված խորհրդերը ետ խլել վանքից¹⁹:

Կալվածատիրոջ և գյուղական համայնքի միջև համարյա անընդհատ շարունակվող հողային վեճերի և կալվածատերերի կողմից ժամանակի ընթացքում ուսումնասիրելու հողերը յուրացնելու և նրանց վրիճի կրկնակի ունեցող վճարելու պարտավորությունը բուն կերպով փաթաթելու փաստերի մասին մենք ավելի շատ տեղեկանում ենք վանքերի արխիվներում պահպանված փաստաթղթերից, որոնք հիմնականում վերաբերում են վանական հողատիրությունը: Կասկածից դուրս է, որ այս պրոցեսը, հատկապես XVII դարի 60-ական թթ. հետո, տեղի է ունեցել նաև այլ կալվածատերերի պատկանող, ինչպես նաև պետական կամ դիմախի գյուղերում, որոնց մասին սակայն դրավոր վիճակները շատ քիչ են պահպանվել:

Պայքարը Տաթևի վանքապատկան գյուղերի ուսումնասիրելու և վանքի միաբանության միջև հատկապես սուր բնույթ է կրել և առիթ տվել մասսայական ընդվզումների նախ այն պատճառով, որ այդ գյուղերը ընդհանրապես սակավահող գյուղեր են եղել, և գյուղի հողային ֆունդի կամ քլովշանի յուրաքանչյուր կրճատում կենսական նշանակություն է ունեցել: գյուղացիների համար, և երկրորդ, որ պետական վարչական օրգանները այնքան էլ գործնական քայլեր չէին անում վանքի շահերը պաշտպանելու հարցում, այլ ավելի շատ առիթը օգտագործում էին և վանքին, և՛ ուսումնասիրելու կեղեքելու, կաշառքներ կորզելու համար:

Ինքնին հասկանալի է, որ այն գյուղերում, որոնք պատկանում էին ազդեցիկ զինվորականների կամ պետական բարձրաստիճան պաշտոնյաների (իսկ դրանց թիվը բավական մեծ էր), ուսումնասիրելու հողերի յուրացման պրոցեսը ավելի խորն է եղել և աշխատավոր գյուղացիության վիճակը ավելի քան ծանր: Փաստերը ցույց են տալիս, որ վանքապատկան գյուղերի ուսումնասիրելու ավելի կազմակերպված կերպով են կարողացել հանդես գալ կալվածատիրոջ դեմ, իսկ դա պետք է բացատրել կալվածատիրոջ բազմապատկան դիրքերի թուլությունով: Այլ խոսքով, արտատնտեսական ճնշման գործոնը այստեղ բավական որոշիչ նշանակություն է ունեցել: Նույնիսկ էջմիածինը, որի դիրքերը անհամեմատ ավելի ուժեղ էին, 1670—80-ական թթ. սկսած անընդհատ ենթարկվում էր շահատակությունների տեղական խաների և այլոց կողմից, իսկ դրանից առաջ էլ շարունակ ստիպված էր այս կամ այն հավակնորդին գումարներ վճարել, ժամանակին կանխիկ դրամով զնված գյուղերը հափշտակումից փրկելու համար:

Սոցիալական բուն հակամարտությունների և տեղական պայքարի ու դիմադրության բազմաթիվ փաստերի արձանագրությունը հանդերձ, ինչպես ասվեց, գյուղերի մեծ մասում XVII դարի երկրորդ կեսից սկսած ավելի է խորանում կալվածատերերի կողմից համայնքապատկան հողերի սեփականման և աշխատավոր գյուղացիության հողազրկման պրոցեսը, որն օրյեկտիվորեն տանում էր դեպի գյուղական համայնքի տնօրինության տակ գտնվող մշակելի հողային տարածությունների սահմանափակում և անմիջականորեն կալվածատիրոջ տնօրինությանը ենթակա հողերի ընդարձակում:

Բայց գյուղերի քլովշաններից առանձին մեծ կամ փոքր հողակտորների՝ կալվածատիրոջ սեփականությունը դառնալը արմատական փոփոխություն էր մտցնում նույն գյուղի հողերի օգտագործման եղանակների մեջ: նման այդ հողերը գյուղական համայնքի իրավասության սահմաններից դուրս գալուց և իրենց բոլոր իրավունքներով այս կամ այն կալվածատիրոջ կամ մալիքի սեփա-

18 Նույն տեղում, թղթ. Ձա, վավ. 54, 55, 65, 87, թղթ. Ձբ, վավ. 110 և այլն:
 19 Նույն տեղում, թղթ. Ձբ, վավ. 110:

կանոնադրույց դառնալուց հետո դրանց պետական հարկերը դեռ նախկին ձևով մտնում էին նույն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ, ապա դրանք շարունակում էին համարվել նույն գյուղի քյովչանի հողերը: Իսկ եթե դրանց հարկերը զեղչվում էին գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարից, ապա այդ զեպքում դրանք արդեն համարվում էին կալվածատիրոջ մազրահները և դրանց պետական հողային հարկերը անհամար ձևով մտնում էին անձամբ կալվածատերերից: Առաջին զեպքում կալվածատերը հանգես էր գալիս սոսկ որպես համայնքի անգամանակից մեկը և պարտավոր էր իր հողերին բաժին ընկնող հարկերը տալ գյուղի մեկիքին կամ քյաղխուղային²⁰, իսկ երկրորդ զեպքում նա բոլորովին անկախ սեփականատեր էր և իր հարկերի համար պատասխանատու էր ուղղակի պետական պաշտոնյաների առաջ:

Մուլքային գյուղում հողերի այն մասը, որ դեռ շարունակում էր մնալ գյուղական համայնքի ձեռքում, օգտագործվում էր ընդհանուր կարգով, և այդ հողերն օգտագործող գյուղացիները պարտավոր էին միայն ընդունված երոմերով ունետա վճարել մալիքին: Սակայն այն հողերը, որոնք զանազան ճանապարհներով դուրս էին գալիս համայնքի ձեռքից և բոլոր իրավունքներով դառնում կալվածատիրոջ սեփականությունը՝ օգտագործվում էին միայն վերջինիս հայեցողությամբ:

Կալվածատերերից շատերին հաջողվում էր իրենց սեփական հողերը մշակել նույն գյուղի ուսյաթների պարտադիր կոռային աշխատանքով: Դա հատկապես շատ տարածված էր վանական հողատիրության մեջ, որտեղ տարբեր գյուղերում գտնվող եկեղեցապատկան հողերը պարտավոր էին մշակել նույն գյուղի ուսյաթները: Այդ գյուղերում փաստորեն ունետայի մի մասը վճարվում էր աշխատանքով, մյուս մասը՝ մթերքով: Տաթևի վանահայր Հովհաննես վարդապետի դավթարից արտագրված ցուցակում մանրամասն նշված է, թե վանքապատկան գյուղերի ուսյաթները, որոնք մեծ մասամբ ունետան վճարում էին «մակթա»՝ ձևով՝ անկախ տվյալ տարվա բերքից, վանքի հողերի վրա աշխատելու, տարվա մեջ քանի օր ինչ կարգի աշխատանքներ պետք է կատարեին: Ահա մի քանի օրինակ.

«Տաթև — ԻՊ (24) բեռ ցորեն և Գ (3) լիտր մեղր տան և զլիսովին բոլոր զեղովն մէկ օր վար անեն, Բ (2) օր հունձ անեն, և մէկ օր ալ ջառ անեն ինչ բան որ լինի, և մէկ օր եզնարածքն վանքի համար խոտ հարեն»:

«Սըրվարանց — ԺԵ (15) բեռն և Գ (3) մարզան ցորեն և Ա (1) օր վար անեն, Բ (2) օր հնձեն, և եզնարածքն Ա (1) օր խոտ հարեն, և իւրեանց զեղի առաջի մարզիքն ևս հարեն և Ա (1) օր ալ ջառ անեն»:

«Աղանց — Թ (9) բեռն, Ա (1) մարզան ցորեն և Ա (1) օր վարեն և Ա (1) օր վեցկուն եզնարածքն խոտ հարեն և օր հնձին ջառ անեն»²¹:

Ինչպես առանձին մազրահները, այնպես նաև գյուղերի սահմաններում գտնվող հողերը մեծ մասամբ մշակվում էին վարձակալման սխտեմով: Որպես հողի վարձակալներ հանդես էին գալիս հողագործի գյուղացիները, որոնք իրենց լծկաններով և սեփական երկրագործական գործիքներով մշակում էին հողը և բերքի որոշ մասը վճարում հողատիրոջը որպես վարձ: Ինչպես վերը ասեիք ունեցաք նշելու, նման զեպքերում հողը վարձակալող ուսյաթը պարտավոր էր, բացի ամբողջ գյուղից գանձվող ընդհանուր ունետա — հարկից, տվյալ հողատիրի վարձակալման համար հավելյալ ունետա վճարել հողատիրոջը²²:

Ընդունված ձևերից էր վարձու աշխատանքի կիրառումը, որը սկսեց ավելի մեծ շահեր ընդունել հատկապես XVII դարի վերջերին և ավելի տարածված ձև դարձավ XVIII դարում: 1770—80-ական թթ. Երևանի խաների մի շարք թալիզաններում հատկապես նշված է, որ նրանց կողմից քաղաքի մեծ մզկիթին, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականությանը նվիրված մազրահներին ամրացված են եղել որոշակի թվով ունեցքարներ, որոնք պարտավոր էին մշակել այդ հողերը հօգուտ մզկիթի կամ հոգևոր ֆեոդալների²³, Ռանջբարները մեծ մասամբ հողից և արտադրության մյուս միջոցներից զրկված հողագործներ էին, որոնք մշակում էին կալվածատիրական մազրահները և որպես աշխատավարձ ստանում էին բերքի որոշ մասը: Նրանց մեջ կային մասնագետ այգեգործներ, վարուցաներ, հունձ և այլ կարգի դաշտային աշխատանքներ կատարողներ, որոնք սե-

20 Կալվածագրեր, կազմեց՝ Շար. Արրահամյան, Երևան, 1941, էջ 158, 163:


21 «Ժամանակագրություն Ստեփանոսի Օրբելիանի», Երևան, 1942, հավելված, էջ 4:

22 Մատենադարան, կթղձ. դիվան, թղթ. Ձա, վավ. 54, 87, 110 և այլն:

23 Մատենադարան, Արարատաբ բաժին, ձեռ. № 233, էջ 352—353:

փական տնտեսություն շունեին: Այլ խոսքով դրանք հողագործ բանվորներ էին, որոնք սակայն իրենց աշխատավարձը մեծ մասամբ ստանում էին բնամթերքով:

Ռանչբարական աշխատանքի շահագործումը ևս ունեցել է իր տարատեսակները, որոնք տարբերվում էին աշխատավարձի վճարման ձևերով: Դրանք հետաքրքիր են XVII—XVIII դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների և աշխատավորության նյութական բարեկեցության մակարդակի ուսումնասիրության համար և կարող են նյութ հանդիսանալ առանձին հետազոտության:



ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՀՈՂԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՅ ԵՎԱՍՏՈՒՏՆԵՐԻ
ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
XVI—XVII ԴԱՐԵՐՈՒՄ

Հ. ՓԱՓԱՉՅԱՆ

Պատմական գիտ. թեկնածու

XVI—XVII դարերում պետական սեփականություն հանդիսացող բոլոր կալվածները, որոնցից ստացվող եկամուտները անմիջապես տնօրինվում էին սեֆեհների արքունիքին կից ֆինանսական գործերի կառավարչության կամ «բարձրագույն դիվանի» կողմից, կոչվում էին «գիվանի հողեր» (արալի-յե դիվանի): Այս անվանումը նոր չէր: Այն դալիս էր իլխանական և ավելի վաղ ժամանակներից և պահպանվեց մինչև Նադիր-շահի ժամանակները (XVIII դ.): Նրանց ծավալը, սակայն, ընդարձակվել կամ նվազել է քաղաքական իրադրության համապատասխան:

Դիվանի հողերն ընդարձակվեցին սկսած XVI դարի կեսերից մինչև XVII դարի 30-ական թվականները: XVII դարում արդեն Արևելյան Հայաստանում մշակելի հողերի 50 տոկոսից ավելին պետական էր: Դա հետևանք էր հատկապես այն բանի, որ հաճախակի կրկնվող արշավանքներն ու բնակչության մասսայական տեղահանությունները պատճառ էին դառնում նաև կալվածատիրական գյուղերի ավերման, որոնց տերերը, զրկվելով աշխատող ձեռքերից՝ հողագործ ուսյաթներից, նմանապես ստիպված էին լքել այդ գյուղերն ու հեռանալ: Շատ հաճախ իրենք՝ հողատերերը, որոնք պետական կամ զինվորական պաշտոններ էին զբաղեցնում, պատերազմում իրենց սյուզերենի պարտության պատճառով ստիպված էին քաղաքական էմիգրացիայի ենթարկվել: Այդ դեպքում նրանց հողերը անմիջապես գրավվում էին հօգուտ պետության և անցնում դիվանի հողերի շարքը: Նման երևույթ տեղի էր ունենում նաև այն դեպքում, երբ խաներն ու բեկլարբեկիները զեղծարարության կամ անհավատարմության մեջ ամբաստանվելով՝ հեռացվում էին պաշտոնից, և նրանց պատկանող բոլոր շարժական և անշարժ գույքը, այդ թվում նաև մուլքերը, գրավվում էին հարքունիս և դրվում դիվանի տրամադրության տակ:

Իսբանդար Մունշին նկարագրելով 1561 թ. Շահ Թահմազի կողմից Թիֆլիսի գրավումը և Քարթլիի թագավոր Լվարսափի մահը, շի մոռանում հիշել, որ Լվարսափին պատկանող Թիֆլիսը մոտակա գյուղերով հանդերձ «գտնվում էր բարձրագույն դիվանի տրամադրության տակ» և որոշ ժամանակ հետո միայն, երբ Լվարսափի որդին՝ Դավիթը գալիս է շահի մոտ, հնազանդություն է հայտնում և մահմեդականություն ընդունում, նորից այդ վայրերը տրվում են նրան¹:

XVII դարի սկզբում Շահ Աբբաս Ա-ը, կազմակերպելով նոր կադրային բանակ, ձգտում էր ընդարձակել դիվանի հողերը, որպեսզի կարողանար նոր զինվորականությանը ապահովել անհրաժեշտ քանակությամբ թիուլներով և

¹ Sht' u 89. جلد یکم، ص. ۱۳۴، طهران، تهرانی، تاریخ عالم آرای عباسی،

ռոճիկի դիմաց տրվող այլ հողային եկամուտներով: Որքան ավելանում էր զինվորականության թիվը, համապատասխան շահով պետք է ընդարձակվեին նաև պետական հողային ֆոնդերը:

Գահ բարձրանալով Սուլթան Մուհամմադ Խուզաբանդան (1578—1587) սկսեց կրճել բաշ էմիրներին համապատասխան օլթաներ բաժանել: Սակայն, երկրում գոյություն ունեցող օլթաների մեծ մասը արդեն բաժանված էր, իսկ մի մասն էլ գրավված թուրքերի կողմից. այդ պատճառով էլ շատ էմիրների օլթաներ չհասան, և իրենց ռոճիկները նրանք կանխիկ գրամով ստանում էին պետական գանձարանից: Ըստ Իսբանդար Մունշու, այս հանգամանքը առիթ է տալիս նոր խռովությունների և գժտությունների կրճել բաշ էմիրների միջև²: Զինվորականությունը նախընտրում էր կանխիկ գումարի փոխարեն ստանալ թիրույներ կամ հանձնարարություններ՝ այս կամ այն հարկատու համայնքի վրա, որպեսզի կարողանար մի քանի անգամ բաղմապատկել ստանալիք գումարը: Զինվորականության այդ ձգտումը բացատրվում էր նաև այն բանով, որ շատ հաճախ ստանալով ցմահ որևէ հարկատու օբյեկտի բոլոր հարկերը գանձելու իրավունքը, նրանք փաստորեն դառնում էին տվյալ գյուղի կամ գյուղերի տերն ու տնօրենը և կաշառքով ու զանազան խարդախ միջոցներով սեփականացնում դրանք: Ահա թե ինչու «թիրույ» կամ «համեսալե» ստացողները ամեն կերպ աշխատում էին ձեռք բերել այնպիսի օբյեկտներ, որոնք մոտ էին իրենց հիմնական բնակավայրին: Թե ինչպես էր կատարվում ռոճիկների դիմաց տարբեր հարկային օբյեկտներից, այդ թվում նաև դիվանի գյուղերից, մեծ մասամբ բնամթերքով գանձվող հարկերի բաշխումը զինվորականության միջև, կարելի է պատկերացնել Իսբանդար Մունշու հետևյալ նկարագրությունից. «Շարունակ նորին գերազանցության (Շահ Աբբաս Ա.— Շ. Փ.) մտահոգության առարկան այն էր, որ թե՛ հաղթական զինվորները, թե՛ նորին սրբության ասպանդակին ծառայողները, նույնիսկ արքունի գործատուների վարպետներն ու աշկերտները որոշյալ վայրից ստացվող ամենամյա ռոճիկներ ունենան, որ ամեն տարի այդ վայրից ստանալով շարունակեն ծառայություն մատուցել և այդպիսով ազատվեն դաֆթար կամ դիվան գնալ-գալուց և ռոճիկի գումար կամ օրապահիկ պահանջելուց: Ուստի, կարգադրեց որպեսզի զորքերի ամբողջ պահանջը վճարվի ամենականխիկ (վճարունակ) վայրերից: Այս գործը նա հանձնարարեց մեծապատիվ է՝ թեմադ-ուդ-դովլե, բարձրագույն դիվանի վեզիր Միրզա Աբութալիբին... որպեսզի արքունի դաֆթարխանեի քարտուղարների հետ միասին այդ ձեռք (1617—1618) մնան թավրիղում և յուրաքանչյուր անձի կամ խմբի բաժինը ճշտեն և այնպիսի վայրերից նշանակեն, որոնք հարմար կլինեն տվյալ անձնավորության համար, ի նկատի ունենան նրանց բնակավայրերի հեռավորությունն ու մոտիկությունը, հաշվի առնեն ռոճիկ ստացողի ցանկությունը և ապա յուրաքանչյուրի բարաթը, որի մեջ պետք է շեշտված լինի «համեսալե» (ամենամյա) բառը, առանձին-առանձին տան նրանց ձեռքը:

Մեծապատիվ է՝ թեմադ-ուդ-դովլեն և բարձրաստիճան մուսթովֆիները համաձայն սուլթան բարձր հրամանի մինչև տարվա վերջը, որ չորս ամիս է լինում (1617 դեկտեմբեր— 1618 մարտ), մնացին թավրիղում և այս գործը հանձնարարված ձևով ավարտեցին: Տողերիս գրողն էլ, արքունի դաֆթարխան-

² Տե՛ս նույն տեղը, էջ 228:

նեի մի քանի գրագիրներին հետ միասին, այդ հրամանագրերը գրելու համար մնացել էր ծառայություն մատուցանելու վերոհիշյալ բարձրաստիճան գործիչներին, և շորս ամիս շարունակ, գիշեր թե ցերեկ այս մեծ գործով էինք զբաղված»³:

Որ իսկապես որոշ դեպքերում հաշվի էին առնվում թիուղարների ցանկությունները, այդ երևում է նաև «Վրաստանի թանգարանի» ձեռագրատան արխիվային բաժնի մի քանի ֆերմաններից: 1695 թ. Ասլան բեկ և Լվարսափ բեկ Բրաթելինները դիմում են Շահ Սուլթան Հուսեյնին խնդրելով, որ իրենց ուժիկի դիմաց թիուղիներ տրվեն Ղարաբաղի օլթայի Սղնախ կոչվող վայրից. իսկ շահը պատասխան գրությունով հայտնում է, որ այդ մահալի բոլոր օբյեկտները արդեն բաշխված են և ազատ վայրեր չկան⁴: Շատ ավելի հետաքրքիր է 1703 թ. վերաբերող մի այլ վավերագիր, ըստ որի կախեթցի Ռուստամ բեկի որդի Բադադե բեկը հրաժարվում է իր համեսալեից, որը իր հոր մահվանից հետո փոխանցվել էր նրա անվան: Այդ գումարը նա պետք է ստանար Բաբբի նավթի և աղի հանքերից գանձվող հարկերի հաշվից: Պատճառաբանելով, որ հիշյալ օբյեկտը իր բնակավայրից շատ հեռու է, որի պատճառով համարյա ոչինչ չի կարողանում ստանալ, Բադադե բեկը խնդրում է այդ համեսալեն հտ վերցնել և դրա փոխարեն թուլյատրել իրեն ամեն տարի այդ գումարը ստանալու դիվանի գյուղերի կապալառու, Լենքորենի հաջիմ Աբբասկուլի խանից: Բադադե բեկի այս խնդիրը հարգվում է և կարգադրվում է մեծ մուսթովֆիներին նրա համեսալեն անմիջապես գանձել հօգուտ դիվանի⁵:

Դիվանի գյուղերը զբանցված էին հատուկ մատյաններում, որոնք գտնվում էին տվյալ խանություն կամ վիլայեթի ֆինանսական վարչության պետի «սահիր-թուվչի-ն» դիվանի» մոտ և կոչվում էին «դիվանական հարկային մատյաններ» (դաֆաթիր-ն թուվչի-ն դիվան): Այդ մատյաններից դուրս բերված առանձին քաղվածքներից, որոնք պահպանվել են շահական հրովարտակներում և շարիաթական ֆեթվաներում, պարզվում է, որ գյուղերը դասակարգված են եղել ըստ մահալների, յուրաքանչյուրի ներքևում նշելով ամեն տարի այդ վայրից ստացվող հարկերի քանակը⁶: Երևանի վիլայեթի կամ Չուխուր-Սա՝ դի բեկլարբեկությունից դիվանի գյուղերի ցուցակը պահվում էր Թավրիզում, որտեղ նստում էին Աղբրբալջանի վեզիրը և երկրի հյուսիս-արևմտյան նահանգների գլխավոր մուսթովֆին⁷:

Նարատիվ աղբյուրներն ու դիվանական վավերագրերը միաբերան վկայում են, որ տարբեր եղանակներով բռնագրավված և «դիվանի» դարձված գյուղերի եկամուտները մեծ մասամբ ուժիկի դիմաց հատկացվում էին ղեկավորականություն ու պետական պաշտոնյաներին: Այդ նշանակում է, որ դիվանի հողերից ստացվող եկամուտները XVI—XVII դարերում չէին կենտրոնացվում պետական

³ تاریخ عالی‌ترای عباسی، جلد دوم، ص. ۹۴۵-۹۴۴

⁴ Տե՛ս Ննարեստի իստորիկական և սոցիոլոգիկական հետազոտությունները, Գեղարքունիքի մարզի, 1965, գիրք 1, պրակ 3, վավ. 3:

⁵ Տե՛ս մաճար Նուրաթ, Ննարեստի մշտնջենի Ննարեստի փոփոխությունները և ձևերը, տոնոլոգի, 1949, էջ 44:

⁶ Տե՛ս Մատենադարան, կթղ. դիվան, թղթ, 2ա, վավ. 6, 14, 22, 63, թղթ. 2բ, վավ. 111, 107ա, 107բ, թղթ. 1դ, վավ. 359 և այլն:

⁷ Նույն տեղում, թղթ. 1ա, վավ. 56:

պահեստներում, այլ անմիջապես տվյալ վայրից գանձում էին թիուղարներն ու համեսալեզարները կամ նրանց գործակալները:

Հրապարակվող ֆերմաններով, որոնք ուղղված էին տվյալ գյուղի կամ մի քանի գյուղերի համայնքներին (ջամաաթ), կարգադրվում էր նույն հրովարտակում նշված հարկային ցուցակների համեմատ՝ հասանելիք հարկերը վճարել այդ հրովարտակը ստացողին կամ նրա գործակալներին: Սովորաբար թե բնամթերքով և թե՛ կանխիկ դրամով ստացվող հարկերը ամբողջ մանրամասնությամբ գրված էին լինում, իսկ հաճախ էլ հիշատակվում էին միայն դրանց դրամական համարժեքները: Այսպես, օրինակ, թուման-ե նախընտանի Սիսաչանի (Սիսիան) մահալի Դաստակերտ գյուղը, որը 1682 թ. որպես թիուլ տրված է եղել Բորչալուի հաքիմին, պարտավոր էր ամեն տարի իր թիուղարին վճարել 54.909 դինար, որից 15.009 դինարը ի հաշիվ մալուջհաթի (հացահատիկ և այլ մթերքներ), իսկ 39.900 դինարը ի հաշիվ ջիզիայի (կանխիկ դրամով)⁸: Գյուղյա-Դանգիզի մահալում որպես թիուլ և համեսալե վրաց ազնվականներից Զալ-բեկին տրված Հասանքյանդի և Կարմունջ գյուղերի համայնքներից ստացվող հարկերի ընդհանուր դրամական համարժեքը կազմում էր 88.450 դինար⁹: 1704 թ. Վաղարշապատ և Քյուլթափա գյուղերի համայնքների միջև կազմված մի արձանագրությունից պարզվում է, որ Քյուլթափա դիվանի գյուղը բավական ժամանակ որպես համեսալե տրված է եղել Քալբալի Քաթարու-Այրումլուի որդի հաքի Մուհամմադին ի դիմաց 25000 դինար տարեկան ոռճիկի¹⁰: XVII դարի սկզբում Երևանի կամ Չուխուր-Սաադի բեկաթբեկությունն սահմաններում դիվանի գյուղերից թիուլներ էր ստացել և սահմանապահ ծառայություն էր կատարում թուրքերի կողմն անցած Կաղզվանի հաքիմ Սուլթան Ալիկուլի Սաադուի որդին՝ Մեհդիկուլի բեկը, որը 1606 թ. լքել էր հորը և նորից անցել կրգըլբաշների կողմը¹¹:

Անհրաժեշտ է նշել, որ XVII դարում տրված թիուլներից ոչ բոլորը կարելի է դիտել որպես ժամանակավոր հողատիրություն հատուկ ձև: Գոյություն ունեցող թիուղարական ֆերմանների մեծ մասը մեզ բերում է այն համոզման, որ XVII դարում թիուլ տրվում էին ոչ միայն այս կամ այն դիվանի գյուղի ողջ եկամուտը, այլ նաև մուլքային որևէ գյուղից կամ մի քանի գյուղերից գանձվող ողջ պետական հարկերը կամ նրանց մի մասը: Որպես թիուլ և համեսալե տրվում էին նաև այլ եկամտաբեր օբյեկտներից ստացվող հարկերը (վանքեր, հանքեր, արհեստավորական համքարություններ, առևտրական ձեռնարկություններ և այլն): Միուլը Սեֆյան Իրանում, — գրում է Ի. Պ. Պետրուշևսկին, — նշանակում էր հողային հարկի (մալուջհաթ) մի մասի, երբեմն էլ այլ տուրքերի, բայց ոչ հողի և այդ հողի վրա բնակվող հարկատու բնակչության (ոսյաթ), պարգևումը ծառայության մեջ գտնվող մարդկանց՝ որպես ծառայության վարձ, հողային այնպիսի հարկեր և տուրքեր, որոնք մինչ այդ որոշ-

⁸ Մատենադարան, Կթղզ. դիվան, թղթ. 2 ա, վավ. 101:

⁹ Թագոն Եղծոյ, էջ 105—106:

¹⁰ Մատենադարան, Կթղզ. դիվան, թղթ. 1բ, վավ. 214:

¹¹ تاریخ‌الم‌آزای عباسی، جلد دوم، ص. ۷۴۳، فراخ‌ور حال مواجب و تیمول شغقت شد که در تابین بیگلربیگی چغورسعد بخدمات سمرحد قیام نماید

յալ գյուղերից և բնակավայրերից գանձվում էին հօգուտ դիվանի (մուսավաջջիհասթ-ե դիվանի)¹²:

Պետք է ասել, որ XVII դարում դիվանի հողերից գանձվող բոլոր հարկերի պարգևումը պետական պաշտոնեությունն ու զինվորականությունը որպես թիուլ իրականում ժամանակավոր, ոչ ժառանգական հողատիրության գլխավոր ձևն էր, չնայած մեզ հասած վավերագրերում և այլ սկզբնաղբյուրներում մենք դրա իրավական ձևակերպումը չենք տեսնում: Ըստ ֆերմանների թիուլ-դարներին շնորհվում էր միայն տվյալ օբյեկտի հարկերը գանձելու իրավունքը, ուրիշ իրավունքներ հողի, ջրի և բնակչության նկատմամբ նրանց չէր վերապահվում: Քայց երբ գյուղն իր ամբողջ հարկային պարտավորություններով պատասխանատու էր դառնում միայն այս կամ այն թիուլդարին և այդ վիճակը շարունակվում էր մի քանի տասնյակ տարիներ, իսկ երբեմն էլ թիուլդարի մահվանից հետո փոխանցվում նրա ժառանգներից որևէ մեկին, այդ դեպքում ահա թիուլդարի և նրա հարկատու ուսույթների միջև ստեղծվում էին հողատիրոջ և հողը վարձակալող գյուղացու փոխհարաբերություններ: Շատ հաճախ այդ փոխհարաբերությունները ավելի ամուր էին, քան մուլքադարի և նրա ուսույթների փոխհարաբերությունները, քանի որ այստեղ ևս գոյություն ունեին անմիջական կախվածություն, որն արտահայտվում էր գյուղական համայնքի կողեկտիվ պատասխանատվության ձևով:

Համեսալեն նույնպես, եթե այն տրված էր դիվանի գյուղերի բոլոր հարկերը գանձելու իրավունքով, կարող էր համարվել ժամանակավոր, ոչ ժառանգական հողատիրություն: Նման թիուլներն ու համեսալենները ընդհատվում էին տվյալ թիուլդարի կամ համեսալեդարի մահվան, ժառանգությունից հրաժարվելու կամ այլ պատճառներով: Այդ դեպքում արդեն գյուղերից ստացվող եկամուտները անմիջապես անցնում էին դիվանի տրամադրության տակ: Քայց դա հազվադեպ էր տեղի ունենում, երբեմն միայն պատահում էր, որ որևէ գյուղից ստացվող ռենտա-հարկը թիուլի ընդհատվելու պատճառով մեկ կամ ավելի տարիներ մնում էր չգանձված: Սակայն դրանք ի վերջո հաշվվում էին և ռոճիկի դիմաց միանվագ տրվում որևէ պաշտոնյայի, կամ իրացվում այլ տնտեսական գործարքներով ու հանձնարարություններով (հավալե): Ինչպես դիվանի, այնպես նաև ոչ դիվանի հողերից գանձվող ռենտա-հարկը եկամտի այն գլխավոր աղբյուրն էր, որով պայմանավորված էր պետության ֆինանսական հենարանի, դիվանական գանձարանի հարստությունը:

Հետզհետե ընդարձակվող դիվանի հողերի անմիջական ղեկավարությունը պահանջում էր հսկայական կազմակերպչական աշխատանք, որ վեր էր սեֆյան պետության ուժերից: Այդ իսկ պատճառով իրեն վերապահելով դիվանի հողերի սեփականության իրավունքը, պետությունը դրանց մի մասը, ինչպես ասվեց, ռոճիկի դիմաց, որպես թիուլ և համեսալե՝ տալիս էր պետական պաշտոնյաներին, իսկ մնացած մասը՝ մասնավոր մարդկանց՝ կապալով: Հիշյալ կապալառուները, որոնք կոչվում էին «մուսթաաջիրներ» կամ «զարիթներ», միանվագ որոշ գումար էին մուծում դիվանական դրամարկղը և որոշ ժամանակ մեկ կամ մի քանի հարկային օբյեկտների բոլոր հարկերը կամ

¹² И. П. Петрушевский, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., Ленинград, 1949, стр. 188.

դիվանի հետ, և դիվանի մուսթովֆիներին էր կախված, թե նրանց յուրաքանչյուր տարի որտեղ կուղարկեին իրենց ուժերը ստանալու: Այդ պարզ երևում է նաև համեսալեի և ուժերի թանխահի ֆերմանների համեմատությունից: Եթե թիուլների և համեսալեների նշանակման ֆերմաններում անպայման նշված էր լինում, թե հիշյալ թիուլդարն ու համեսալեդարը իր որոշյալ ուժերը ամեն տարի ո՞ր օբյեկտից, ո՞ր գյուղերի համայնքներից, որքա՞նը կանխիկ դրամով և որքա՞նը բնամթերքով պիտի ստանա, ապա ուժերի թանխահների նշանակման ֆերմաններում միայն նշվում էր ուժերի գումարը և կարգադրվում բարձրագույն դիվանի մուսթովֆիներին, որ այդ ֆերմանը «արձանագրեն իրենց մատյաններում և ամեն տարի այդպիսիների նման նրանց թանխահ տան»²⁰: Ուշադրություն արժանի է նաև այն փաստը, որ թիուլ և համեսալե ստացողները կոչվում են «թիուլդար» և «համեսալեդար»²¹, այնինչ ուժերի թանխահ ստացողները «թանխահդարներ» չեն կոչվել: Պետք է եզրակացնել, որ եթե թանխահ թիուլի և համեսալեի նման իր մեջ պարունակեր նաև որևէ օբյեկտից ստացվող հողային և այլ հարկերի որոշյալ ժամանակով գանձման իրավունք ստանալու իմաստը, ապա կարող էր թանխահ տերմինին զուգահեռ գոյություն ունենալ նաև «թանխահդար» տերմինը. մինչդեռ այդպիսի տերմին ոչ պատմական սկզբնաղբյուրներում և ոչ էլ արխիվային փաստաթղթերում մեզ չի հանդիպել և այլ ուսումնասիրողների կողմից ևս չի հիշատակվել:

Դիվանի գյուղերի ցուցակը, ինչպես ասվեց, գրանցված էր հատուկ մատյաններում և գտնվում էր յուրաքանչյուր երկրամասի մեծ վեզիրի և մուսթովֆիների տրամադրության տակ: Որքանով որ այդ գյուղերը անհատների կամ կրոնական հաստատությունների սեփականությունը չեն եղել, ուստի դրանց վերաբերյալ իրավական (շար'ի) փաստաթղթեր չեն պահպանվել: Միայն այդ գյուղերից գանձվող հարկերի ավելի մանրամասն աղյուսակներ և այլ փաստաթղթեր անշուշտ գտնվել են վերոհիշյալ դիվանական գրասենյակներում (գավթարխանն-յե դիվան-ե ա'լա) կամ այլ տերմինով ասած «ավարեջեի սարքարությունում» (սարքար-ե ավարեջե=հարկային տեսչություն), որոնք սակայն մեզ չեն հասել²²:

Այս հանգամանքը հնարավորություն չի տալիս պարզելու նաև, թե ինչպես էին որոշվում առանձին դիվանի գյուղերի ցանքատարածության սահմանները (քոֆշան): Մուլքային գյուղերի կալվածագրերում սովորաբար հիշատակված են տվյալ գյուղի սահմանները, իսկ դիվանի գյուղերի սահմանների ճշտման վերաբերյալ այդ կարգի վկայություններ չկան, որովհետև նրանք չունեն կալվածագրեր: Պետք է կարծել, որ միմյանց հարևան դիվանի գյուղերի սահմանները որոշվել և ճշտվել են նրանց համայնքների ներկայացուցիչներից կազմված հատուկ հանձնախմբի կողմից, հենվելով հիմնականում ծերունիների վկայության վրա: Մեր ձեռքի տակ կան երկու արժեքա-

²⁰ مذكر ثبت نموذج و سال بسال بدستور امثال در دفتر ثبت نموذج و سال بسال بدستور امثال، 24, 28, 46, 74: تنخواه دهند

²¹ Նույն տեղում, էջ 32, 34, 56, նմա. تاریخ شاه عباسی ثانی، Լենինգրադի համր. գր. Դորնի ցուցակ, № 303, էջ 270 բ, Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 286, թղթ. 1գ, վավ. 251, թղթ. 2ա, վավ. 27 և այլն:

²² Տե՛ս Մատենադարանի պարսկ. վավերագրեր, I, Հրովարտակներ, պր. Բ, կազմեց Հ. Դ. Փափազյան, Երևան, 1959, էջ 212, 217, 218:

վոր վավերագրեր, որոնք վերաբերում են դիվանի և ոչ դիվանի գյուղերի սահմանների ճշտմանը: Դրանցից առաջինը, գրված 1671 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, վերաբերում է Ապարանի մահալի Ափնագեղ և Կարբիի մահալի Սաղմոսավանք գյուղերի սահմանների ճշտմանը, յոթ քյադիսուղաների, ինչպես նաև Կարբիի մահալի մելիք Հակոբի և Ապարանի մահալի մելիք Սիմեոնի մասնակցությամբ և ստորագրություններով²³: Իսկ երկրորդը մի մանրամասն արձանագրություն է, կազմված 1704 թ. էջմիածին և Քյուլթափա գյուղերի միջև ծագած սահմանային վեճի կապակցությամբ, ըստ որի ի վերջո երկու գյուղերի համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ և էջիգ-Աղասի Նաջաֆ-Ալի բեկի ղեկավարությամբ նորից վերանայվում և ճշտվում են Քյուլթափա գյուղի շրջա սահմանները և նրա տերիտորիայի վրայով 20 զար' (մոտ 22 մետր) լայնությամբ մի ճանապարհ հատկացնում էջմիածնեցիներին, որպեսզի նրանք կարողանան իրենց անասունները այդ ճանապարհով տանել մինչև Այդր լիճը ջրելու²⁴:

Այսպիսով պետական կամ դիվանի հողատիրությունը Արևելյան Հայաստանում կարելի է բնորոշել հետևյալ կերպ. պետությունն էր իրավական սեփականատերը այն բոլոր մշակելի հողերի, որոնք մտնում էին առանձին գյուղերի ցանքատարածությունների (քյոֆշան) մեջ և իրավական (շար' ի) ձևակերպմամբ, հաստատուն կալվածագրերով և այլ փաստաթղթերով որևէ անձնավորության կամ կրոնական հաստատության և կամ տվյալ գյուղի համայնքի սեփականությունը չէին կազմում և չէին մտցված արքունի շահական խասսեների շարքը: Այդ հողերը պետական պաշտոնական վավերագրերում և նարատիվ աղբյուրներում անվանվում են «դիվանի հողեր» (արագի-յե դիվանի)²⁵: Դիվանի հողերից ստացվող ամբողջ ռենտա-հարկը գանձվում էր հօգուտ պետական գանձարանի: Այդ հարկերը, որոնք տրվում էին և՛ բնամթերքով, և՛ կանխիկ դրամով, մեծ մասամբ ոչ թե ուղղակի մտնում էին պետական պահեստներն ու դիվանի դրամարկղը, այլ թիուլի և համեսալեի ձևով տրվում էին զինվորականությանն ու պետական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնեությունը ի դիմաց նրանց ռոճիկի, և կամ վարձակալվում էին առանձին արենդատորների՝ մուսթա՛ջիրների կամ զաբիթների կողմից:

XVI—XVII դարերի վավերագրերում «դիվանի» հողերից բացի հիշատակվում են նաև «խալիսե» հողեր: Հայտնի է որ XVIII դարից սկսած և մինչև մեր ժամանակները Իրանում պետական հողերը կոչվում են «խալիսե»: Մեր ձեռքի տակ կան XVII դարի մի քանի վավերագրեր, որոնք թույլ են տալիս ասելու, որ այդ ժամանակ «խալիսե» հողերը նույնպես համարվում էին պետական սեփականություն, սակայն դրանք վերաբերում էին անմիջապես տվյալ վիլայեթին, և նրանց եկամուտները ամբողջապես պատկանում էին խաներին ու բեկլաբեկիներին և տնօրինվում նրանց կողմից: «խալիսե» (خالص) բառացի նշանակում է անխառն, զուտ ամբողջը: Մեր կարծիքով այս կարգի պետական հողերը այդպես էին կոչվում այն պատճառով, որ դրանցից ստացվող ամբողջ ռենտա-հարկը պատկանում էր տեղական իշխանությունը:

Պետրոլուսկին «խալիսե» տերմինը շփոթում է մուլքերի վաճառքի ժամանակ կալվածագրերի վերջում վաճառվող օբյեկտի մասին գործածվող

23 Տե՛ս Մատենադարան, կթղԿ. դիվան, թղթ. 1ր, վավ. 167:

24 Նույն տեղում, վավ. 214:

«մուլք-ե խասս վա խալիս» — ملك خاص و خالص (հատուկ զուտ սեփականություն) արտահայտություն հետ և ապա եզրակացնում, որ դրանք այն հոդերն էին, որոնք ազատվում էին պետական հարկերից և որոնցից ստացվող ամբողջ ունեւոր-հարկը պատկանում էր կալվածատիրոջը²⁵: Առանձին գյուղերի, զանազան մուլքերի, այգիների և այլ կալվածների, այդ թվում հենց իր իսկ Պետրուշևսկու կողմից վկայակոչված Նախիջևանի խանության Շահբուզի մահալում գտնվող Հոռոմշին գյուղի երկու դանգի վաճառքին վերաբերող կալվածագրերում, առուծախի ամբողջ մանրամասնությունը արձանագրելուց հետո առհասարակ վերջում ավելացվում էր. «... և այս շարիաթական վաճառքով սույն մուլքը հիշյալ գնորդի սեփական անբաժանելի մուլքն է ու ապրանքը, և տերը կարող է տիրել նրան որպես իր մուլքերից մեկը»²⁶:

Շարիաթական նոտարական այս ձևակերպումը, որն, ինչպես ասվեց, հիշվում է համարյա բոլոր մուլքային կալվածքներին վերաբերող կալվածագրերում, չի կարող հիմք ծառայել ենթադրելու, որ այդ մուլքերը ինչ-որ հատուկ մուլքեր էին, որոնք օգտվում էին մուսաֆուրիայի իրավունքից և որոնց եկամուտներից պետությունը ոչ մի մաս չունեի: Ավելի քան անհիմն է կալվածագրերում կրկնվող այս արտահայտությունը նույնացնել «խալիս» տերմինի հետ: Մեզ հանդիպած մի քանի վավերագրերում «խալիս» տերմինը մուսաֆուրիայի իրավունքից օգտվող մուլքերի իմաստ չի պարունակում: Ընդհակառակը, Սիմեոն Երևանցու «Ջամբու» աշխատության մեջ Երևանի խանության Գրբիբուլաղի մահալի Եղվարդ գյուղի մասին մի վկայությունից, ըստ որի XVII դարի վերջերում Երևանի խաները այդ գյուղը բռնագրավել էին որպես խալիս (Ջամբու, էջ 123), ինչպես նաև Թուման-ե Նախիջևանի Սիսաջանի մահալի Անգեղակոթ գյուղի վերաբերյալ մի վավերագրում եղած այն հիշատակությունից, ըստ որի այդ գյուղը նույն վիլայեթի խալիսներից էր և ամեն տարի իր «մալուջաթն» ու «վջուհաթը» պարտավոր էր տանել և Գորիսում հանձնել «նորին մեծության սարքարության պաշտոնյաներին», երևում է, որ այդ գյուղերի իրավական վիճակը ոչնչով չէր տարբերվում դիվանի գյուղերից²⁷: Այս վավերագրի «Թուման-ե Նախիջևանի խալիս» արտահայտությունը, ինչպես նաև մի շարք այլ վավերագրերում հանդիպող նման այլ արտահայտություններ իրավունք են տալիս ենթադրելու, որ խալիս գյուղերի եկամուտները անմիջապես տնօրինվում էին տվյալ վիլայեթի ֆինանսական վարչության և խանի կողմից և այդքանով էին միայն տարբերվում դիվանի գյուղերից:

Սակայն, խալիս գյուղերի թիվը XVI—XVII դարերում չափազանց սահմանափակ է եղել, ուստի և դրանց մասին վավերագրերում և սկզբնաղբյուրներում շատ քիչ է հիշված:

Պետք է ենթադրել, որ Սեֆևիդների հետո և հատկապես հետնադիրյան շրջանում, երբ պետական կամ «դիվանի» հողերը մնացին տեղական խաների տնօրինության տակ և փաստորեն նույնացան «խալիսի» հետ, իսկ ավելի ուշ,

²⁵ Տե՛ս Н. П. Петрушевский նշվ. աշխ., էջ 236—237.

²⁶ Передняя Азия в документах, кн. I, Тифлис, 1937, док. 32, 33.

²⁷ Մատենադարան, 4թղ՝ դիվան, թղթ. 2ա, վավ. 69: رعایای انکلوت خالصه تومان
تخچوان مالوجهات و وجوهات خود را بوصول رسانیده برده بودند که درقریه
گوربیس تسلیم گما شته سرکار عالیجاه معظم ایله نمایند

ղաջարների օրոք, երբ նրանք նորից անցան կենտրոնական կառավարությունը, դավթարներում արձանագրվեցին որպես «խալիսեներ». այդպիսով, գործածությունից դուրս եկավ «դիվանի» տերմինը և պետական հողերը այնուհետև սկսեցին կոչվել «խալիսեն»:

* * *

Արևելագետ Վ. Մինորսկին վկայակոչելով Բարտոլոմեյին, հաստատում է նրա այն միտքը, որ իսլամական Արևելքի քաղաքական ողջ սիստեմում, սկզբից մինչև վերջ մի կարմիր թել կարծես թե ամբողջ վարչական գործերը բաժանում է երկու մասի՝ ա) արքունի դուռը (արքունիքն ու պալատը), բ) «դիվանը» (կամ դաֆթարը): Ֆինանսական տերմինով արտահայտվող «եկամուտները» («վջուհ») ըստ պատկանելույն երկու անվանում ունենին «մալ-եխասսեն» և «մալ-ե մասալեհ»: Մոնղոլական տիրապետության շրջանում ևս պետական վարչա-տնտեսական ապարատը երկու մասի էր բաժանվում «ինջու», որ նշանակում էր «արքունի» և «բեդուն» կամ «դելեյ», որ նշանակում էր «պետական գանձարան»: Խոջա Նասիր-էդ-դին թուրքահայ հարկերի մասին կատարած իր նշումներում ընդգծում է «մալ-եխասսեյի» և «մալ-ե մասալեհ-ե փաղեշահի»-ի միջև եղած տարբերությունը: Սեֆյան շրջանի «խասսեն» կամ «խասսե-յե շարիֆեն» փաստորեն մոնղոլական շրջանի «ինջուն» էր, որը սակայն ավելի բարդ և կատարելագործված տեսք ուներ²⁸: Շարդենը նույնպես ամբողջ երկրի հողերը բաժանում է երկու խմբի. պետական, որը նա անվանում է «մոկուֆաթ» (mokoufat) կամ «մեմալեք» (memalec) և արքունի՝ «խասսեն» (kasseh), որ թարգմանում է «սեփականություն» (propriété)²⁹:

Սեֆյան Իրանում թագավորական խասսին պատկանող հողերը բավական ընդարձակ էին և ընդգրկում էին հարուստ և բարձր բերքատվություն ունեցող շրջաններ (Մազանդարան, Գիլան, Լենքորան, Շիրվան, Արաղ և այլն): Շահը երկրի ամենախոշոր կալվածատերն էր: Նա ուներ թե՛ գյուղատնտեսական և թե՛ արհեստագործական խոշոր տնտեսություններ, որոնց արտադրանքը արտահանվում էր կամ վաճառվում ներքին շուկայում: Արքունիքին կից կար մի բավական խոշոր վարչատնտեսական հաստատություն, որ կոչվում էր «սրբազան խասսի կառավարչություն» (սարքար-ե խասսե-յե շարիֆե)³⁰: Վարչական այս ապարատի մեջ ընդգրկված էին բազմաթիվ մեծ և փոքր պաշտոնյաներ «դուլամներ» և «մուլազիմներ», որոնք սակայն իրենց ռոճիկները ստանում էին պետական դրամարկղից³¹: Շահը ուներ նաև իր առևտրական գործակալները, որոնք կոչվում էին «խասսե-յե շարիֆեի վաճառականներ» (թաջեր-ե խասսե-յե շարիֆե)³²: Այս հսկայական հաստատությունը՝ կենտրոնում և երկրի բոլոր ծայրերում գտնվող խասսի կալվածներում և այլ արտադրա-

²⁸ Տե՛ս V. Minorsky, Tadhkirat al-Muluk, a manual of Safavid administration London, 1943, էջ 24—25:

²⁹ Տե՛ս Chardin, Voyages du Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient, Paris, 1811, t. VI, էջ 33:

³⁰ Տե՛ս Scherefnameh ou Histoire des Kourdes, par Scheref prince de Bidlis 1860, t. II էջ 220 (պարսկ. բնագիր): تاریخ عالم‌آرای عباسی، I, էջ 223, مازان بگردان، էջ 24, 26:

³¹ Տե՛ս مازان بگردان، էջ 8, 18, 24, 34, 46:

³² Տե՛ս تاریخ عالم‌آرای عباسی، جلد دوم، ص. 7-7:

կան ձեռնարկություններում աշխատող պաշտոնյաներով՝ ծանր պալարի նման նստած էր պետական ֆինանսների վրա, կլանելով պետութայն եկամուտների ամենամեծ տոկոսը: Ջրիակերների այդ բանակը ստանում էր լավագույն ոռճիկներ ու թիուլներ և աշխատում միայն հարստացնելու շահի անձնական գանձարանը: Խասսի արհեստանոցներում և գործատներում (քարխանն և բյութաթ)³³ աշխատում էին հազարավոր մասնագետ արհեստավորներ, որոնք նույնպես թիուլներ և համեսալեններ էին ստանում դիվանի հարկերից³⁴:

Մինչև XVII դարը ընդունված էր թիուլներ տալ նաև խասսի հողերից, սակայն XVII դարի սկզբին շահ Աբբաս Ա-ն անցկացրեց նոր օրենք, ըստ որի թիուլներ տրվում էին միայն դիվանի հողերից և մուլքային հողերից ստացվող պետական հարկերից³⁵: Այսպիսով խասսի հողերից և այլ ձեռնարկություններից ստացվող ամբողջ եկամուտները գանձվում էին հօգուտ արքունիքի: Արքայական ընտանիքին պատկանող հողերը գլխավորաբար գտնվում էին մայրաքաղաքի շրջակայքում և կամ երկրի կենտրոնական նահանգներում³⁶. սակայն ավելի վաղ ժամանակներից և հատկապես իլխանական շրջանում Հայաստանի որոշ վայրերում, մասնավորապես Արևելյան Հայաստանի առավել բարեբեր հողերում նույնպես կային թագավորական խասսին պատկանող հարուստ և եկամտաբեր գյուղեր ու ավաններ:

Արևելյան Հայաստանում գտնվող արքունի կալվածների վերաբերյալ աղբյուրներում հատ ու կենտ տեղեկություններ կան միայն: Բացի Զաքարիա Ագուլեցու վկայությունից Ագուլիս, Մեղրի, Շոռութ, Լեհրամ և Աստապատ գյուղերի մասին³⁷, այլ աղբյուրներում կամ արխիվային վավերագրերում ոչ մի ուրիշ անուն մեզ չի հանդիպել: Խասս գյուղերի սահմանափակ քանակը Սեֆյան Իրանի այս նահանգներում պետք է բացատրել ոչ թե այն բանով, որ այդ վիլայեթների հողերը պակաս եկամտաբեր էին, այլ նրանով, որ լինելով սահմանազխային նահանգներ՝ նրանք ենթակա էին հաճախակի հարձակումների և այդ տեսակետից էլ արքունիքի համար նպատակահարմար չէր այնտեղ կալվածներ ունենալ: Մանավանդ որ խասս գյուղերը համեմատաբար ավելի արտոնություններ էին վայելում, ավելի հարուստ էին, այնտեղ կենտրոնացած էին նաև զգալի թվով արհեստավորներ և վաճառականներ, ուստի ավելի շատ կարող էին հարձակման և կողոպուտների ենթարկվել: Թուման-ե Նախչևանի Ազադ-Ջիրանի մահալում (Գողթն) գտնվող վերոհիշյալ հինգ գյուղերն էլ, ինչպես տեսնում ենք, բավական հեռու էին գտնվում պետական սահմանից և ավելի ապահով էին նման անակնկալներից:

Կարելի է չկասկածել, որ բացի վերոհիշյալ գյուղերից նույն շրջանի ուրիշ շատ գյուղեր, որոնք նույնքան հարուստ և արգավանդ վայրեր էին, նմանապես թագավորական խասսին են պատկանել: 1606 թ. Շահ Աբբաս Ա-ն շքախմբով շրջում է այս կողմերում, լինում Օրդուբազում, Վանանդում, Ագու-

³³ Տե՛ս Scherefnameh, t. II, էջ 282, 1978 'تصانعی عباسی، تهران، էջ 177, 287: Tadhkirat al-Muluk, էջ 14, 23—24, 175—176.

³⁴ Տե՛ս Առաքել Դավրիժեցի, Պատմություն, Վաղարշապատ, 1896, էջ 412:

³⁵ Տե՛ս И. П. Петрушевский, Очерки..., էջ 211.

³⁶ Իսթանդար Մուշուկ վկայությամբ դեռևս XVI դարում Իսֆահանի վիլայեթի մուլքերի մեծ մասը Շահ-Թահմազի խասսերի մեջ էին մտնում և նրա անձնական մուլքերն էին համարվում (Tadhkirat al-Muluk, p. 147):

³⁷ Զաքարիա Ագուլեցի, Օրագրություն, Երևան, 1939, էջ 134:

լիսում և այլուր³⁸: Ամենայն հավանականությամբ այս ճամբորդությունը նա կատարել է իր սեփական կալվածները անձամբ տեսնելու և ստուգելու համար: Զաքարիա Ագուլեցու վկայությունից պարզվում է, որ բացի վերոհիշյալ հինգ խասս գյուղերից, նույն շրջանում կային նաև երկու այլ խասսեր, որոնց անունը նա չի հիշատակում³⁹:

Խասս գյուղերի համայնքները, թեև վարչական հարցերում ենթարկվում էին ինչպես նախիջևանի հաքիմին, այնպես էլ Երևանի բեկլարբեկին, սակայն հարկային պարտավորություններով կապված լինելով անմիջապես խասս-սե-յե շարիֆեի սարքարության հետ, շատ հարցերում որոշ արտոնություններ էին վայելում, ավելի քիչ էին ենթարկվում տեղական պաշտոնյաների կամայականություններին և շատ հաճախ կարողանում էին իրենց բողոքները տեղ հասցնել⁴⁰:

Թագավորական խասսին պատկանող գյուղերի և այլ ստացվածքների մանրամասն ցուցակները ըստ առանձին վիլայեթների պահվել են խասս-սե-յե շարիֆեի սարքարությունում՝ Սպահանում: Բայց, ամենայն հավանականությամբ, առանձին նահանգների հարկային տեսչություններում ևս գրքանք գրանցված են եղել, որպեսզի տարբերվեն դիվանի գյուղերից:

Խասս գյուղերի հարկերը, ինչպես ասվեց, գանձվում էին շահի կալվածների կառավարչության՝ սարքարության կողմից, առանձին «թահսիլդարների» և «մուբաշիրների» միջոցով: Այդ հարկերը իրենց բնույթով և շահերով չէին տարբերվում դիվանի կամ մուլքային գյուղերի ուսլաթներից գանձվող հարկերից, գյուղացիների սոցիալական վիճակը հիմնականում նույնն էր, ինչ որ մյուս ուսլաթներինը, այն տարբերությամբ միայն, որ եթե դիվանի գյուղերի ունետա-հարկը գանձվում էր դիվանի հարկահավաքների միջոցով, ապա այստեղ գյուղական համայնքը պատասխանատու էր անձամբ շահի կողմից նշանակված «խասսեդարներին»: Շահ Սուլեյմանի 1689 թ. մի հրովարտակից տեղեկանում ենք, որ այն բանից հետո, երբ Կայրլու մահալի խասսեդար և դարուղա (ոստիկանապետ) Քեյխոսրով Սագինաշվիլին սպանում է էթեմ-մահ-ուդ-գովլեի վաճառականներին և փախչում Թուրքիա, այդ մահալի խասսեդարությունն ու կըզըլքիլիսա և Օրթուլի գյուղերի դարուղալությունը տըրվում է Օթար բեկ Բրաթեկին. ուսլաթներին ու հողագործներին (زراعی و زراعی) կարգադրվում է բոլոր հարկերը վճարել նրան. Օթար բեկ Բրաթեկին պետք է խասսեդարության և դարուղալության կարգով հանցավորներից հանցանքի շահով տուգանք վերցնի և այնպես վարվի ուսլաթների հետ, որ բոլորն էլ խաղաղ ու հանգիստ լինեն⁴¹: Սույն հրովարտակից պարզ երևում է, որ խասս գյուղերի կամ առանձին շրջանների գլխավոր վերակացուները, որոնք կոչվել են «խասսեդարներ», միաժամանակ վարել են նաև նույն վայրերի դարուղալության պաշտոնը:

Շահ Իսմայիլ Բ-ի օրոք, 1576 թ. օգոստոսի 22-ին գրված մի ընդարձակ կալվածագրից⁴², ըստ որի նոր մահմեդական Մուրադ բեկ անունով մեկը Մեղրի գյուղը վաճառում է նույն գյուղի համայնքին, պարզվում է, որ խասսին

³⁸ Տե՛ս تارخ عالای عباسی، 4. 11, էջ 228:

³⁹ Տե՛ս Զաքարիա Ագուլեցի, էջ 66 և 69:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, էջ 149—150:

⁴¹ Տե՛ս Մ. Խուբուա, նշվ. աշխ., էջ 26:

⁴² Տե՛ս Մատենադարան, կթղկ. դիվան, թղթ. 1 գ., վավ. 1013:

պատկանող գյուղերը անձամբ շահի կողմից կարող էին վաճառվել մասնավոր անձանց: Այդպիսի անձնավորություն է եղել, օրինակ, հիշյալ Մուրադ բեկը, որ, ինչպես նշված է կալվածագրում, Մեղրի գյուղը ժամանակին գնած է եղել Շահ-Թահմազից: Սակայն, ինչպես տեսնում ենք, XVII դարում նորից Մեղրին հիշվում է խասս գյուղերի շարքում: Այդ փաստը գալիս է ապացուցելու հողատիրության և հատկապես համայնքային հողատիրության խիստ անկայուն և անապահով վիճակը: Տեղին է այստեղ հիշել Վ. Մինորսկու խոսքերը. «Այն դեպքում, երբ հողի սեփականության հարցում վճռական դեր կարող է խաղալ իշխանավորների բարի կամ չար տրամադրությունը, ինչպես կարելի է սպասել, որ մարդկանց իրավունքները (այս դեպքում առավելապես համայնիկ, հողագործ գյուղացու իրավունքները— Հ. Փ.) ձեւավորվեն և կայուն տեսք ստանան»⁴³:

Ինչպես վերը նշեցինք, Երևանի բեկլարբեկիության ենթակա Թուման-Ենիսիջևանի Ազադ-Ջիրանի մահալում գտնվող խասս գյուղերի մասին արժեքավոր տեղեկություններ են տրված Զաքարիա Ազուլեցու «Օրագրության» մեջ: Այստեղ գտնում ենք նույնքան արժեքավոր վկայություններ նաև այդ գյուղերից գանձվող հարկերի «զաբթ»-ով վարձակալվելու մասին: Այսպես, պարզվում է, որ Ազուլիսը և Ազադ-Ջիրանում գտնվող ու թագավորական խասսին պատկանող մյուս շորս ավանները (Մեղրի, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ) երկար ժամանակ գտնվել են Ազերբայջանի վեզիր Միրզա Իբրահիմի զաբթում: 1667 թ. մեկ տարով դրանք տրվել են Երևանի բեկլարբեկի Սաֆիկուլի խանին: Մյուս տարի 1000 թումանով նորից տրվում են Միրզա Իբրահիմին և յոթ տարի հաջորդաբար մնում նրա ձեռքում: 1675 թ. հինգ խասսերը զաբթով վերցնում է ազուլեցի Մուսաբեկի որդի Իսախան բեկը: 1680 թ. Իսախան բեկը մեռնում է և խասսերը տրվում են ոմն Խոսրով աղալի⁴⁴: «Յետո՞ւմ Ըսպահանա խաբար եկավ,— գրում է Ազուլեցին,— թե Մուսաբեկի հերն որ էր Իսախան-բեկն, մեռավ: Զերայ խասերն այս Իսախան բեկս էր Իջարայ արել, այս ջանիբես խասսերն սոցանն կտրեցին»⁴⁵:

Մեջ բերված հատվածից միանգամայն պարզ երևում է, որ «զաբթը» ոչ այլ ինչ էր, քան ոչ միայն տարբեր օբյեկտներից ստացվող հարկերի վարձակալումը (իջարե) մասնավոր մարդկանց կողմից: Նույն Իսախան բեկի մասին այլ առիթով Ազուլեցին գրում է. «1126 (1677)-ումն Աքուլիս էր աքուլեցի Մուսաբեկի տղայ Իսախան-բեկի զաֆտումն: Ոչ թե միայն Աքուլիս, այլև Ե (5) խասս գեղն, որ Մեղրի, Աքուլիս, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ, այս Ե (5) գեղս շահն տվելայ Իսախան-բեկի զաֆտն»⁴⁶: Կասկած չի կարող լինել, որ «զաֆտն» ու «իջարան» Ազուլեցու մոտ օգտագործված են որպես համանիշ տերմիններ: «Օրագրության» մեջ գործածված է նաև մեղ ծանոթ «զաբիթ» տերմինը: Այսպես, 1666 թվականի տակ կարդում ենք. «Թվին ՌՃԺԵ (1665) Ազուլաց զաբուլն էր Ադիլբեջանայ վեզիր Միրզա Իբրահիմն»⁴⁷:

Ինչպես տեսնում ենք, շուրջ 16 տարվա ընթացքում (1664—1680) խասս գյուղերի վարձակալները փոփոխվել են հինգ անգամ: Ըստ որում, որպես վար-

⁴³ Tadhkirat al-Muluk, p. 195.

⁴⁴ Տե՛ս Զաֆարիա Ազուլեցի, 63, 68, 69, 70, 80, 94, 112, 119, 134, 150 էջերը:

⁴⁵ Նույն տեղում, էջ 150:

⁴⁶ Նույն տեղում, էջ 134:

⁴⁷ Նույն տեղում, էջ 68:

ձակալներ (զաբիթներ) հանդես են եկել և՛ բարձրաստիճան պաշտոնյաներ (Ազերբայջանի վեզիրն ու Երևանի բեկլարբեկին), և՛ մանր ու խոշոր հողատիրություն և քաղաքային արխատկրատիայի ներկայացուցիչներ (Իսախան բեկն ու Խոսրով աղան):

Ջաբարիա Ազուլեցու տվյալներով պարզվում է նաև, որ զաբիթները միաժամանակ օգտվում էին դատական ֆունկցիաներից: Այսպես, նույն Իսախան բեկի մասին գրում է. «Իսախան-բեկն ինքն Շսպահանայ, ամայ գեղրանքի դիվան թե մալիջհաթն կիտելն իւր տղայ Մուսաբեկն ա անում»⁴⁸: Իսկ մի այլ տեղ կարդում ենք. «1128-ումն (1679) Աքուլաց հաֆիմն էր Մուսաբեկի թոռ Մուսաբեկն»:

Վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է ասել, որ Արևելյան Հայաստանում որոշ թվով գյուղեր պատկանել են արքունիքին և կոչվել են «խասս» կամ «խասսե-յե շարիֆե»: Խասս գյուղերից ստացվող ամբողջ ունեւտա-հարկը գանձվել է «խասսե-յե շարիֆեի սարքարության» պաշտոնյաների՝ «խասսե-դարներին» միջոցով, որոնք միաժամանակ օգտվում էին կարգապահական և դատական ֆունկցիաներից և զբաղեցնում «գարուղայի» (ոստիկան) պաշտոնը: Խասս գյուղերը նմանապես վարձակալվել են առանձին վարձակալների կողմից, որոնք կոչվում էին «զաբիթներ» կամ «մուսթա՛ջիրներ» և վարձակալության շրջանում օգտվում էին համարյա այն բոլոր իրավունքներից, որոնք վերապահված էին «խասսեդարներին»:

ГОСУДАРСТВЕННЫЕ И ДВОРЦОВЫЕ ЗЕМЛИ И ПОРЯДОК РАСПРЕДЕЛЕНИЯ ИХ ДОХОДОВ В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В XVI—XVII ВВ.

(Р е з ю м е)

А. Д. ПАПАЗЯН

Канд. ист. наук

Государственные земли или «дивани» в Восточной Армении значительно расширились в XVI—XVII вв. Поскольку они находились в распоряжении финансового управления при Сефевидском дворе, поступающие от них доходы выдавались в виде «тиула» и «хамесале» воинству, государственным чиновникам и высшему духовенству в качестве вознаграждения за государственную и военную службу.

На основании изучения исторических источников и новых архивных материалов в статье рассмотрены формы реализации ренты—налога, взимаемой с сел «дивани», опубликованы новые данные, относящиеся

⁴⁸ Ջաբարիա Ազուլեցի, օրագրութիւն, էջ 134—135:

к характеру тиулов, дававшихся за счет доходов от сел дивани, и к правам тиулдаров, а также рассмотрены формы арендирования государственных имений и иных доходных объектов, которые обозначаются в источниках терминами «иджаре» и «забт».

Доходами от сел—«хасс», принадлежавших шахскому двору, а также лично шаху, распоряжалось «управление священного хасса» («сарк'ар-е хассе-йе шарифе»). Однако, начиная с XVII в., эти земли уже не жаловали в качестве тиула. Они находились в руках особых должностных лиц, назначавшихся вышеупомянутым ведомством. Они назывались «хасседарами», и, как это указано в ферманах данного периода и в других источниках, часто занимали должность даруги этой местности. Рента и государственные налоги, взимавшиеся с сел «хасс», также давались в аренду отдельным арендаторам в форме «забта» или «иджаре».

ՀԱԿՈՐ ՓԱՓԱՋՅԱՆ

ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԻ ՆՈՐ
ՍԱԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո արևելագետների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացել քուրդ ժողովրդի մոտակա և հեռու անցյալի պատմության նկատմամբ: Պատմաբաններին առավելապես հուզում են քրդերի էթնոգենեզի հետ կապված հարցերը: Թեև այս ուղղությամբ վերջին տարիներս զգալի աշխատանք է տարված, սակայն եղած ուսումնասիրությունները դեռևս շատ հեռու են գոհացուցիչ լինելուց: Պատճառն այն է, որ դեռևս լրիվ կերպով չեն ուսումնասիրված և հրապարակ հանված քուրդ ժողովրդի պատմության համար առավել կարևոր նշանակություն ունեցող սկզբնաղբյուրները, որոնք հիմնականում գրված են արաբերեն, թուրքերեն, իսկ ավելի շատ պարսկերեն լեզվով¹:

Քրդագետները առանձնապես ընդգծում են, որ սելջուկյան ու իլխանական և հատկապես նրանց հաջորդող շրջանների պարսկալեզու պատմագրությունը հանդիսանում է այն հիմնական ատաղձը, առանց որի հնարավոր չէ տալ քուրդ ժողովրդի միջնադարյան շրջանի պատմության սխտեմատիկ շարադրանքը: Քրդերի մասին մեծ չափով կարևոր տվյալներ և հատկապես պատմական որոշ հիմքի վրա ստեղծված լեզենդներ կամ դասթաններ կան ցրված նաև պարսկական գեղարվեստական գրականության էջերում: Բավական է նշել միայն, որ քրդերի միդիական ծագման մասին հնագույն լեզենդը մեղ է հասել Ֆերդովսու «Շահնամեի» միջոցով:

Քրդական ռազմիկ ցեղերի պատմության վերաբերյալ հարուստ տվյալներ պարունակող ընդարձակ պատմական երկասիրություններից բացի, XV—XVI դարերից սկսած հանդես են գալիս մի քանի պարսկալեզու քուրդ հեղինակներ, որոնք իրենց երկերով բացառապես փորձում են տալ ինչպես ամբողջ քրդերի, այնպես նաև առանձին ցեղախմբերի ծագման և Քուրդիստանի ու Պատմական Հայաստանի տերիտորիայի վրա տեղի ունեցած ցեղային տեղաշարժերի պատմությունը:

Քուրդ պատմիչները մեծ մասամբ սերում էին ֆեոդալական հայտնի ընտանիքներից: Դրանցից առավել նշանավորները, որոնք թողել են ուշադրու-

¹ Մենք ի նկատի ունենք, իհարկե, առաջին հերթին, ամբողջական, պատմական երկասիրությունները: Այլապես, պակաս կարևոր նշանակություն չունեն նաև XIV—XVIII դդ. հայ պատմիչների երկերում, տարբեր հեղինակների գրչին պատկանող ժամանակագրություններում, ձեռագրաց հիշատակարաններում և այլ մատենագրական աղբյուրներում ցրված բազմաթիվ, երբեմն նույնիսկ խիստ մանրամասն տվյալները: Հայկական աղբյուրները չափազանց մեծ և հարուստ նյութ կարող են մատակարարել քրդերի, ինչպես վաղ շրջանի, այնպես նաև վերջին հարյուրամյակների պատմության ուսումնասիրման համար:

թյան արժանի պատմական երկասիրություններ, Մուլլա Իզրիս և Շարաֆ խան Բիթլիսիներն են՝ Բաղեշի Ռուզակի ցեղից, և Մահմուդ խան ու Աբդ-ալ-Ռազզակ բեկ Դունբուլիները՝ խոյի Դունբուլի ցեղից: Մուլլա Իզրիսը գրել է Օսմանյան պետության պատմությունը, սկզբից մինչև Սուլթան Աբդուլ Ա-ի ժամանակները, որ վերնագրված է «Հաշիթ-բեհեշթ» կամ «Թարիխ-ե ալ-ե Օսման»: Շարաֆ խանի «Շարաֆնամե» խորագիրը կրող երկհատոր պատմական երկասիրությունը, որի առաջին հատորն ամբողջությամբ նվիրված է քրդական ցեղերի պատմությանը, իսկ երկրորդը 1290—1596 թթ. Իրանի, Թուրքիայի և Միջին Ասիայի քաղաքական անցուղարձեերի ժամանակագրությունն է, լայնորեն ծանոթ է արեւելահայտությանը, ունի մի քանի հրատարակություններ և ֆրանսերեն, թուրքերեն և այլ լեզուներով կատարված թարգմանություններ:

Դունբուլի պատմիչները սակայն այդքան մեծ ճանաչում չունեն, դրանցից ավելի հայտնի է Աբդ-ալ-Ռազզակ բեկը (1762—1827), որը որդին էր Նադիրի հայտնի զորավարներից, խոյի Դունբուլի ցեղի առաջնորդ Նաջաֆ-կուլի խանի, որ հետո նշանակվել էր Թավրիզի բեկլարբեկիության բարձր պաշտոնում: Աբդ-ալ-Ռազզակի անունով հայտնի են մի քանի ծավալուն աշխատություններ, որոնցից առավել ճանաչված է Ղաջարների վաղ շրջանի պատմությունն ընդգրկող և «Մուասիր-ե սուլթանիյե» խորագիրը կրող երկհատոր երկասիրությունը, որ լույս է տեսել 1826 թ. Թավրիզում և հանդիսանում է պարսկական տպագրության առաջնեկը: Անտիպ երկերից հայտնի են Ֆաթհ-Ալի շահի պալատական բանաստեղծներին նվիրված «Նիգարիսթան-ե Դարա» և իր անձնական հուշերը պարունակող «Թաշրիբաթ ալ-ահրար վա թասիխաթ ալ-արբար» խորագրերով ձեռագրերը²:

1937 թ. հրատարակած մի հոդվածում արևելագետ Վ. Մինորսկին տեղեկացնում էր, որ Աբդ-ալ-Ռազզակի գրչին է պատկանում նաև մի այլ աշխատություն, որը պետք է նվիրված լինի քրդական Դունբուլի ցեղի առաջնորդներին, այսինքն հեղինակի նախնիների պատմությանը³: Ավելի ուշ Իրանի մեջլիսի գրադարանի ցուցակից պարզվում էր արդեն, որ իրոք կա այդպիսի աշխատություն, որ վերնագրված է «Թարիխ-ե դանաբիլե»⁴, Ազգարիի հաղորդմամբ այդ աշխատությունը կոչվում է նաև «Ռիազ-ալ-Ջաննա»⁵: 1949 թ. լույս տեսած մենագրական աշխատության ներածական գլխում պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին, խոսելով Աբդ-ալ-Ռազզակի հիմնական աշխատության՝ «Մուասիր-ե սուլթանիյե»-ի աղբյուրագիտական նշանակության մասին, հիմք ունենալով Մինորսկու հոդվածը, հիշում է նաև «Թարիխ-ե դանաբիլե», տողատակում տեղեկացնելով, որ Օ. Լ. Վիլլեսկու վկայությամբ, այդ աշխատության մի ընդօրինակությունը պահպանվում է Երևանի Մատենադարանում⁶:

² C. A. Storey, Persian Literature. A bio-bibliographical survey, London, 1953, v. I, part 2, p. 334.

³ BSOS, IX/1, 1937, էջ 254, հմմտ. C. A. Storey, Persian Literature... v. I, part II, p. 1299.

⁴ فهرست کتابخانه مجلس شورای ملی تألیف یوسف اعتصامی، تهران، ۱۳۱۱، ص ۳۱۵

⁵ C. A. Storey..., էջ 1299:

⁶ И. П. Петрушевский, Очерки по истории феод. отнош. в Азербайджане и Армении в XVI—начало XIX вв. Л., 1949, стр. 43.

1957 թ. Մատենադարանի ձեռագրատան ամբողջ Արաբատառ Ֆոնդի ձեռագրերը մեկ առ մեկ ստուգելուց հետո, պարզվեց, որ հիշյալ ձեռագիրը բուլղոլիին այլ վերատառուկյամբ և սխալ նկարագրուկյամբ գրանցված է հայկական Ֆոնդի 7938 համարի տակ:

Ձեռագրի ուշագիր ուսումնասիրությունից հայտնի դարձավ, որ իրոք 251 թերթերից բազկացած այս ստվար մատյանի վերջին 222բ—249բ էջերում կա Աբդ-ալ-Ռազզակի Գունբուլի ցեղապետների տոհմական պատմությանը նվիրված մի աշխատության գեղեցիկ նասիս գրուկյամբ կատարված ընդօրինակությունը:

Սույն բնագրի, ինչպես նաև ամբողջ ձեռագրի, որ այժմ գրանցված է արաբատառ Ֆոնդի 622 համարի տակ, համառոտ նկարագրությունը առաջին անգամ տվել ենք 1957 թ. Տաշքենդում գումարված Սովետական Արևելագետների առաջին կոնֆերանսին ներկայացված գեղուցման մեջ⁷:

Թեև առայժմ մեր տեղեկությունները «Թարիխ-ե դանաբիլիե» մասին սահմանափակվում են միայն մատենագրական տվյալներով, առանց մատնանշելու որևէ ձեռագիր, և մեր բնագիրն էլ որևէ վերնագիր կամ անվանում չունի, սակայն այն հանգամանքը, որ այնտեղ շարագրված է Գունբուլիների տոհմական պատմությունը, թույլ է տալիս ասելու, որ տվյալ ղեպքում մենք գործ ունենք «Թարիխ-ե դանաբիլիե» մի ուշագրավ ընդօրինակության հետ:

Բովանդակության որոշ նմանություն է նկատվում նույն հեղինակի անձնական հուշերը պարունակող «Թաջրիբաթ-ալ-ահրար վա թասիխաթ-ալ-աբ-րարի»-ն սույն բնագրի միջև: Սակայն ուշագիր համեմատությունը Քրիտանական թանգարանում պահվող ձեռագրի Չաուս Ռիոյի կողմից տրված նկարագրության հետ, ցույց տվեց, որ դրանք բոլորովին այլ կառուցվածք ունեն և ղեպքերի ու ղեմքերի մասին տեղեկությունները մատուցված են նյութերի այլ դասավորությամբ ու միանգամայն տարբեր շարագրուկյամբ:

Մեր բնագիրը սկսվում է հետևյալ խոսքերով.

بِسْمِ اللّٰهِ الرَّحْمٰنِ الرَّحِیْمِ. بَازْ نَمُوْدُنْ احوال قبیله واجداد جامع نسخه بدیع
بنیاد یقول حاوی الاوراق المتمسک بجبل النبی و الوصی ابن نجفقلی الدنبلی
عبد الرزاق عفی الله تعالی عنه...

«Հանուն զթառատ և ողորմած աստծո: [Սա է] սկիզբը այս նորաստեղծ մատյանը կազմողի և ինչպես ասված է գրքի էջերում, մարգարեի սերնդի հետ կապված, Նաջաֆկուլի Գունբուլիի որդի Աբդ-ալ-Ռազզակի տոհմի և պապերի պատմության, — թող ամենակարողն աստված ների նրան» (էջ 224բ):

Այդ պատմությունը Աբդ-ալ-Ռազզակն սկսում է Սեֆյան հարստության սկզբնավորման շրջանում Կուրմանջի բրգերի խոշոր ցեղերից մեկի՝ Գունբուլիների մուսուլմանական շիա աղանդին հարելու մասին տրվող համառոտ նկարագրուկյամբ: Այս անմիջապես անցնում է իր մեծ պապի՝ երկրորդ Սալման-խալիֆի պատմությանը, ընդգծելով նրա խաղացած մեծ դերն ու կատարած

7 Sб'у Папазян А. Д., «Историографическая ценность персидских рукописей Гос. Матенадарана, «Материалы I Всесоюзной конференции востоковедов», Ташкент, 1958, 2. Փ ա փ ա զ յ ա ն, Մատենադարանի պարսկ. ձեռագրերի պատմագրական արժեքը, «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 234:

քաջագործությունները XVII դարի սկզբներին, թուրքերի դեմ մղվող կռիվների ընթացքում (էջ 226ա—226բ):

Այնուհետև խոսում է իր պապի՝ Շահբազ խանի մասին, որ խոյում իշխում էր մինչև 1724 թվականը և սպանվեց թուրքերի ձեռքով քաղաքի պաշարման և ավերման ժամանակ (էջ 226բ—227ա): Աբդ-ալ-Ռազզակը մեծ վարպետությամբ շարադրված տասնյակ էջեր է նվիրում հատկապես իր հորը՝ Նաջաֆկուլի-խանին, որը Նադիր շահի անվանի ղորավարներից էր: Նա մասնակցել էր Նադիրի բոլոր արշավանքներին և ապա նշանակվել Քավրիզի բեկլարբեկի (էջ 228ա—237բ):

Առանձնապես կարևոր են պատմության այն էջերը, որոնք վերաբերում են Նադիրից հետո մինչև Ղաջարների իշխանության գլուխ անցնելն ընկած ժամանակաշրջանի քաղաքական անցքերի նկարագրմանը: Մանրամասն նկարագրված են Մուրթուզակուլի-խանի Նադիրի ձեռքով սպանության հանգամանքները: Ապա խոյի խանության նրա որդի՝ Շահբազ-խանին հանձնելը, Շահբազ-խանի հավատարմություն հայտնելը Աղա-Մուհամմադ խանին, նրա մահը և այլն: Մեծ տեղ է հատկացված նաև Աբդ-ալ-Ռազզակի եղբոր՝ Ֆադլ-Ալի բեկի Շիրազից վերադարձի նկարագրությանը և այդ կապակցությամբ Ջանջանի Ջուֆեղարխանի հետ Նաջաֆկուլի-խանի մղած կռիվների պատմությանը, որն ավարտվում է Քավրիզի 1780 թ. մեծ երկրաշարժի և եղբոր զոհվելու նկարագրությամբ:

Ահա այս դեպքերից հետո է, որ Աբդ-ալ-Ռազզակը նորից մեկնում է Շիրազ, ըստ երևույթին, եղբոր ընտանիքի գործերը տնօրինելու, որին նա ցան-

կացել է հատուկ գլուխ նվիրել, վերնագրելով այն այսպես. ورود مؤلفی

بشیرازو بیان الم مهاجرت همدان و اظهار سوز و گداز در جدائی یاران

«Տողերիս գրողի մուտքը Շիրազ, բարեկամների տեղափոխման, նրանց սգո և դառն վշտի և հարազատներից անջատվելու պատմությունը» (էջ 249ա): Սակայն հենց այստեղ էլ, 249բ էջի սկզբում ավարտվում է մեր բնագիրը:

Պարզ է, որ աշխատությունը այսպես շէր կարող ավարտված լինել: Այս վերնագրից հետո ըստ պարսկական միջնադարյան պատմագրության ավանդների, որոշ ալլաբանական ներածական խոսք է ասված, որին պետք է հաջորդեր բուն պատմությունը: Այնինչ բնագիրը ավարտվում է հետևյալ բեյթով՝

ببال مرغ بستم نامه سردارم سوی یارش
گر انبار است میترسم بگشاید بمنقارش

և կնքված է Ահմադ-խանի որդի Ռուստամ-խանի կնիքով: Դժվար է ասել հեղինակն է կիսատ թողել գործը, թե՞ ընդօրինակությունն է թերի: Պարզ է, սակայն, որ մենք գործ ունենք անավարտ բնագրի հետ:

Աբդ-ալ-Ռազզակի այս գործը ևս, իր մյուս աշխատության նման, շարադրված է պարսիկ դասական պատմագրությանը հատուկ շափաղանց խրթին և վերամբարձ ոճով և խիստ ծանրաբեռնված է բազում էջեր զբաղեցնող ներբողագրությամբ և արաբական խրթնաբանությամբ: Բնագիրը բազմիցս ընդմիջարկվում է ընդարձակ շափածո հատվածներով:

عن الله الرحمن الرحيم

بازن تودن احوال فيسله واجداد جامع ابن نبحه بدبع بنباي
 يقول حاو اذ اذ الفان مجبل النبي والوصي ابن نجف على الدين علي عبد الرزاق
 عني الله نفا الى عنده اصاحب المفاوي في لغة هذه التسمية ونبيل كفتا فيسله
 من الاكرا د بنواحي الموصل منه محمد بن نصر الصفي الشافعي وعلي بن ابي بكر بن
 الحديث التتيلان ابن طاب فيسله نريكنداز في ابل موصل وحيند بن از فدا ما ابن
 قوم بمقاد اميدك كذا يا واصبح عرييا بريده صداف وديان موصل واسما
 هريك در روايات اثني عشر مفصل ومنه محمد بن وهبان الذي راب من روايات
 حديثا لعين بكيل بن زياد النخعي وهو را عن امير المؤمنين وقابدا العريي علي
 من اسطاب صلوات الله عليه وآله واولاده اجمعين الى يوم الدين او مر الحديث
 ابو جعفر محمد بن ابي القاسم الطبري قدس الله سره في خبر الاول من كتاب ديانة
 المصطفى لشيعته المرئضي الماراب مضمون الحديث الكثير في الاداب وحسن العاشرة
 ومنها هذ الكتاب انهم مجبر عن هذ من اخلاق العاصرين وبعض القاهرين من الصالحين
 الرغز الاداب من المصنف

من او الرزاق بن العزق
 موصل من الرزاق بن

ما من في قوام العزق يكون في
 ما يكون في العزق خاصه
 والعزق قول في ١٢

والطالعيان

* *
*

«Քարիխ-ե դանարիլի» բնագրի որոնումը առիթ հանդիսացավ մի նոր հեղինակի՝ Ահմադ-խան Դունբուլիի որդի Ռուստամ խանի երկու ստվար աշխատությունների բնագրերի հայտնաբերման, որոնք նշված ձեռագրի հիմնական մասն են կազմում և զբաղեցնում են 1բ—220բ էջերը:

Այդ երկու աշխատություններն էլ ընդօրինակված են հեղինակի պատվերով Քեհրանի Միրզա Սալեհի մադրասեում, նույն մադրասեի աշակերտ Ալի-Աքբար Քաֆրեշիի ձեռքով, հիշրեթի 1266 (1850) թվականին, բավական անվարժ նասիա՝ լիզ գրությունը և ուղղագրական կոպիտ սխալներով:

Ձեռագրի սկզբի 173 թերթերը ընդգրկում են Ռուստամ-խանի «Իշարաթ-ուլ-մազահիթ» اشارات المذاهب («Ակնարկներ հավատքների մասին») պատմա-դավանաբանական աշխատությունը: 174ա—178ա էջերում պատկերված են աստղագուշակության զանազան տախտակներ և աղյուսակներ: 178բ էջում տրված է գրքի հեղինակի բախտի գուշակությունը, կատարված վերոհիշյալ թվականի զիհաջա. ամսի սկզբին (1850. X. 8):

صورت زايجه طالع واقف ومؤلف هذا الكتاب رستم خان ابن احمد خان
الدنبلى انشا الله پدر و پسر و مادر بعمر طويل برسند پدر و مادر از اولاد
برخوردار باشند.

«Այս է պատճենը գրքիս հեղինակ և նվիրող (վակֆ անող) Ահմադ-խան Դունբուլիի որդի Ռուստամ խանի ծննդյան գուշակություն: Աստծո կամեցողությամբ թող հայրը, որդին և մայրը երկար տարիներ ապրեն և ծնողները իրենց որդիներից գոհ և երջանիկ լինեն»:

178ա-220բ էջերում Ռուստամ-խանի երկրորդ՝ զուտ դավանաբանական աշխատությունն է, որ վերնագրված է «اشارات الاديان» («Ակնարկներ կրոնների մասին»): 221ա էջը մաքուր է, 221բ, 222ա էջերում կա հեղինակի բախտի մի ավելի ընդարձակ գուշակություն, որի սկզբում ասված է.

صورت زايجه طالع واقف هذا الكتاب رستم خان ابن احمد خان الدنبلى
يعى كرد كرماني عيسى بکلو شمسگی و یرمکی روز دوشنبه غرة رجب المرجب
موافق (!) بلدة طيبة دارالصفای خوی مطابق ایت ایل ترکی سنه هزار و
دویست و شصت [ازین] قرار است اوضاع کواکب که در ذیل مرقوم گشته
انشا الله بعمر طويل برخوردار باشد و قدمش بروالدین مبارک و میمون گردد
بحق نبی و الوصى آمین یارب العالمین...

«Այս է գրքիս նվիրողի՝ Ահմադ-խան Դունբուլի-Յահյայի որդի, Կուրմանջի քուրդ, Իսաբեկլու, Շամսեգի և Բարմաթի Ռուստամ-խանի բախտի գուշակության պատճենը: Գրված ուղաբ ամսի սկզբին, եկուշաբթի օրը, ազնվաբար և զեղածիծաղ խոյ քաղաքում, թուրքաց շան տարում, որ համապատասխանում է հիշրեթի 1266 և հազկերտյան 1219 թվականին (1850.IV.12): Իսկ աստղերի դասավորությունը այնպես է, ինչպես ստորև նկարագրված է: Աստուծո

կամեցողությամբ թող երկար տարիների արժանանա և ծնունդը ծնողներին շնորհավոր լինի»:

Ձեռագրի 222բ—249բ էջերն ընդգրկում են Աբդ-ալ-Ռազզակ իբն-Նաջաֆ-կուլի-խան Գունբուլիի մեզ արդեն ծանոթ աշխատությունը: 249բ էջի ազատ մասում կան Գունբուլիների նախնիներին վերաբերող շափածո տողեր, իսկ 250ա—253բ էջերում, որոնցով ավարտվում է ձեռագիրը, հավանաբար Ռուստամ-խանի ձեռքով, գրանցված են մի քանի ճանապարհորդական նոթեր:

Ձեռագիրը մի քանի տեղ կնքված է Ռուստամ-խանի կնիքով. հատկապես առանձին բնագրերի սկզբից և վերջից: Երկու աշխատությունների սկզբում, գրքի նվիրման կամ ժառանգման մասին կատարված է վակֆային արձանագրություն, համարյա նույն բովանդակությամբ: Ահա այդ արձանագրություններից մեկը, որ դրված է «Իշարաթ-ուլ-մազահիրի» սկզբում.

این کتاب مسمی باشارات المذاهب راوقی اولاد نموده و صیفة صحیحة شرعی جاری شده رستم خان ابن احمد خان باین شرط که دائم در خانه اولاد خود باشد باحدی امانت ندهند هرکس خواسته باشد نسخه از روی این بردارد باید باز از خانه بیرون نبرند در خانه اعلم اولاد باشد انشالله تعالی عالم همیشه در خانواده بوده اند و باشند بقدر قوه علاوه نمایند و عبارات را آرایش دهند و علاوه نمایند و هرکس که خیانت نماید بلعنت خدا گرفتار شود و این نوشته و وقفیت را بردارند بلعنت خدا گرفتار شوند امید وارم که [در] صحت این کتاب کوشند در کمال عزت نگاه دارند و وقفیت اجرا (!) دارند از قرار نوشته عمل نمایند .

تحریر آفی پنجم شهر ذیقعدة الحرام روز پنجشنبه مطابق ایت ایل سنة ۱۲۶۶

مهر—عبیده الراجی رستم ابن احمد

«Իշարաթ-ուլ-մազահիր» («Ակնարկներ հավատքների մասին») վերնագրով այս գիրքը Ահմադ-խանի որդի Ռուստամ-խանը, ճշմարիտ շարիաթական սիզայով անցկացնելով, կտակեց (վակֆ արեց) իր ժառանգներին, պայմանով, որ միշտ իր որդիների տանը մնա, որևէ մեկի մոտ պահ չտրվի, և ով որ ցանկանա ընդօրինակել, պետք է տնից դուրս շտանի: Գիրքը պետք է մնա բոլորից ավելի ուսյալ ժառանգի տանը: Ծնորհիվ աստուծո ուսյալ մարդիկ միշտ էլ մեր գերդաստանում եղել են և կլինեն: Թող իրենց ուժերի ներածի շափով [գործը] շարունակեն և լեզուն գեղեցկացնեն: Ուլքեր որ հակառակեն և այս վակֆը անտես առնեն կամ արձանագրութունը ջնջեն, այդպիսիք թող աստծո անեծքներից արժանանան: Հուսով եմ, որ կաշխատեն սրբագրել գիրքը, սրբությամբ կպահպանեն իմ այս կտակը և կվարվեն համաձայն այս գրություն: Գրվեց 1260 թ. զիկա՛ղա ամսի 5-ին, հինգշաբթի օրը (1850.XI.12): Կնիք՝ «հուսացող ծառա Ահմադի որդի Ռուստամ» (էջ 1բ):

Գրքի հեղինակի մասին մեր տեղեկությունները սահմանափակվում են միայն «Իշարաթ-ուլ մազահիրի» 60ա-62ա էջերում, իր իսկ հեղինակի հաղորդած տվյալներով: Այդ էջերից տեղեկանում ենք, որ հեղինակը երկու տարեկան հասակում կորցնում է հորը և մնում է մոր խնամքի տակ: Վերջինս էլ

իր հերթին նրան հանձնում է խորասանցի Հասան անունով մեկի խնամակալությանը: Հինգ տարեկան հասակում, քառասուն օրվա ընթացքում նա սովորում է կարգալ պարսկերեն: Պատանեկան տարիքում մեծ հետաքրքրությամբ ընթերցում է կրոնական գրականություն և խորանում կրոնա-բարոյագիտական հարցերում:

Ուշագրավ են կրոնական հարցերի վերաբերյալ Ռուստամ խանի մտորումները: որոնք ի վերջո հանգում են կրոնի, որպես պետությունների ձեռքում գաղափարական զենքի, սոցիալական էության բացահայտմանը:

Ահա թե ինչ է գրում նա այդ մասին.

در طلب مردحق بودم اوصافشان را در کتابها دیده بودم راه مرد خدارا بی پایان دیدم سراسر تنک و خطرناک در ظاهر رهبری ندیدم در کتب ادیان برهانی نبود که عقل قبول نماید بیا و ببین حرف [ایشان] بی اعتبار بنظر آمد و رفتم ندیدم باز رفتم صلاح در آن دیدم که علمای ملل مختلف را به بینم اختلاف بی پایان احوال اخلاق بی معنی زیاد دیدم بعضی بطریق میراث دست بشاخ ضعیف زده طایفه بجهت پیروی خاطر و بیم جان پای بر کن لرزان نهاده جماعتی که علمای عربان باشند برای مال دنیا و بلندی مرتبه تکیه باستخوان پوسیده کرده و مرده چندرا پیشوای خود ساخته و نام دین داری بر خود بسته و اختلاف در شناختن خالق و ابتدای خلقت و انتهای کار بی نهایت بعضی... بهیچ اکتفا نموده منبع الوجود را نقی کرده بت بزرگ از نیستی ساخته بعضی نیستی را اهریمن گفته هستی را یزدان بعضی که دارند و بر آرند (?) که حضرت نوربخش عالم را که از هر آن هزاران جلوه دارد ملک طاوس گفته اند قومی بعداوت او را شیطان میخوانند دیدم که اول تکلیف که بر جمیع مخلوقات که شده است شناخت خداست اول بنای عداوت را بعداوت یکدیگر بخدای یکدیگر گذاشته اند... بعداوت و ضدیت یکدیگر راهی گرفته که من راه حق را گرفته ام و دیگر باطل در آرایش خود و نکوهش دیگران حرف میزنند از دین داری اثری ندیدم در مدت قلیل یکصد و هشتاد شهر از ولایت روم و روس و ایران و هبش و زنک و عرب گردیدم قرار دادم که علمای هر مذهب به بینم دیدم که حرف بگوش ایشان نمی رود دایم در مشاطگی خود و برهم زدن کیش دیگران می باشند که تخریب کار بی قاعده آسان است در همین بلا مبتلا مانده اند ثواب یکی و گناه دیگری و حلال آن و حرام این هر دو لغو باطل بنظر آمد اول جمیع مذاهب نظر کردم حیلۀ پادشاهان دیدم...

«Փնտրում էի իսկական մարդկանց, որոնց գուլքը զրբերում էի միայն հանդիպել: Աստծո մարդու ճանապարհը անվերջ և ծայրից ծայր նեղ ու վտանգավոր տեսա և առանց ուղեցույցի: Կրոնական զրբերում ես մարդկային միտքը

համոզող խոսքեր չգտա, և արի տես որ նրանց խոսքը ևս իմ աչքին անարժեք թվաց: Ուստի ես որոշեցի տարբեր կրոնների գիտունների հետ հանդիպել, մեծ հակասություններ և շատ անիմաստ բարքեր տեսա: Ոմանք ժառանգաբար ձեռք են նետում անզորության ճյուղին, ուրիշները մտքին ենթարկվելու համար և վախենալով հոգուց, երբուն հիմքի վրա են կանգնած, իսկ մի այլ խումբ, որ «մերկ գիտուններն» են, աշխարհիկ հարստության և բարձր դիրքի համար հենվում են փտած ոսկորների վրա և մի քանի մեռյալների իրենց առաջնորդն են դարձրել ու հավատացյալներ են անվանում իրենց: Եվ առհասարակ մեծ է նրանց տարածալնությունը արարչի և արարչագործության և աշխարհի վախճանի հարցում: Ոմանք էլ ունայնությամբ են բավարարվել, գոյության պահպանում են սրբացրել և ունայնությունից իրենց համար մեծ կուռք են սարքել, իսկ ոմանք անգոն անվանում են Ահրիման, գոն՝ Յազդան: Ոմանք որ... ունեն երկիրը լուսավորողին, որ ամեն վայրկյան տարբեր գույներով է փայլում, Մալաք-Քավուս են անվանում, իսկ ուրիշները նրանց թշնամաբար սատանա են կոչում: Տեսա նաև, որ բոլոր արարածներից պահանջվում է միայն ճանաչել աստծուն, սակայն մարդիկ իրար նկատմամբ ունեցած թշնամանքը միմյանց աստծու նկատմամբ են դրսևորում... մեկը մյուսին թշնամի և հակառակ ճանապարհով են ընթանում և լուրաբանչյուրը պնդում է, որ իր ուղին ճիշտ է, իսկ մյուսինը սխալ: Իրենց գովում են և հակառակորդին պարսավում, և այսպես ճշմարիտ հավատացյալ ես չտեսա:

Կարճ ժամանակի ընթացքում ես եղա Ռումի (Քուրքիա), Ռուսաստանի, Իրանի, Հաբեշտանի, Զանգիբարի և արաբական երկրների 180 քաղաքներում: Որոշել էի, որ բոլոր կրոնների առաջնորդների հետ հանդիպեմ: Սակայն տեսա, որ նրանցից ոչ մեկը խոսք լսել չի ուզում: Նրանք միայն իրենց գեղեցկացնելով և հակառակորդին սեպնելով են զբաղված: Եվ քանի որ անկարգ գործը խանգարելը հեշտ է, նրանք բոլորն էլ ենթարկված են այդ պատուհասին: Մեկի արգարացումը և մյուսի դատապարտումը, մեկի ընդունումն ու մյուսի դրժումը, երկուսն էլ ինձ մերժելի թվացին, և երբ լավ ուսումնասիրեցի բոլոր կրոնների արմատները, դրանց բոլորի հիմքում թագավորների բռնությունն ու նենգությունը տեսա:

Այս եզրակացությունից հետո Ռուստամ խանը պաշտպանում է կյանքում միշտ բարուն հետևելու սկզբունքը, լավ իմանալով, որ «կյանքի քաղցրությունները միշտ դառնությամբ շաղախված պետք է լինեն»: Ինքն իրեն խրատում է ցանկությունների գերի չլինել. նշելով միաժամանակ, որ «այսպիսի մտորումները նման են աղի ջրի, որքան խմես, այնքան ծարավդ կսաստկանա»: Այնուհետև երկար խոսում է աշխարհի ունայնության, կյանքի անցողիկության մասին, մերթնդմերթ այս հետաքրքիր խորհրդածությունների արանքում տալով նաև որոշ կենսագրական տեղեկություններ:

... آنچه بر اقام رسیده است احدی را اشريك خود نمی داند که نوکری چهل ساله نان يك روزه را نداد دايم سفری در جنگهای روم و روس و افغان و از يك و عرب و خدمت چهار پشت سلاطین عظام نمودن باعث آسایش یکروزه نشد و در یکروز املاک موروثی عوض خدمات چهل ساله ضبط دیوان کشته قوت لا یموت که از بابت اجاره املاک باسم مواجب میدادند قطع نموده اند و ازدو کروردولت موروثی هبه خرج ننموده شکر منت باری که آنچه اهل عالم

از تکاپوی آن می باشند نصیب شد مدت عمر بایار وفادار بی مانند پاک بسر شد
 و اولاد خوب خداوند عالم داد و عروسبهای خوب از برای اناث و ذکور
 اولاد نمودم و عمارت های عالی ساختم و باغات مینو نشان نشاندم و رساندم و
 ثمرش را ندیدم و نخوردم و تمامی زیارتگاههای عالم را زیارت نمودم و
 بخدمت بزرگان ظاهری و باطنی مشرف شدم...



Ռուստամ խան իրն-Ահմադ խան Գունբուլի (ձեռ. № 622, էջ 61ա)

«Այն ինչ որ կյանքում բաժին է ընկել տողերիս գրողին, թող ոչ ոք այդ բանում նրան չընկերակցի: Որովհետև քառասուն տարվա ծառայությունը ինձ մեկ օրվա հաց անգամ չտվեց: Միշտ մասնակցել եմ արշավանքների, մերթ թուրքաց, մերթ ռուսների, աֆղանների, ուզբեկների կամ արաբների դեմ մղվող պատերազմների ժամանակ: Իրար հաջորդող շորս թագավորների եմ ծառայել և փոխարենը մեկ օրվա հանգիստ ձեռք չեմ բերել: Եվ ահա մի օր էլ իմ հայրենիք մուլքերս իտրիտուր իմ քառասուն տարվա ծառայության հարբունիս գրավվեցին և օրապահիկս, որ որպես ռոճիկ ստացվում էր մուլքերի վարձակալական գումարներից, կտրվեց: Եվ այսպես 200.000 հայրական ժառանգությունից ես մի հատիկ անգամ չեմ ծախսել:

Փառք աստծո, սակայն, որ այս բոլորով հանդերձ, այն ինչի որ մարդիկ ձգտում են ունենալ աշխարհում, աստված շնորհել է ինձ: Ամբողջ կյանքս անց եմ կացրել ազնիվ և հավատարիմ կնոջ հետ: Աստված լավ դավակներ է պարգևել ինձ և բոլորին էլ, թե՛ տղաներիս, և թե՛ աղջիկներիս հաջող ամուսնություն եմ արժանացրել: Շքեղ ապարանքներ եմ կառուցել և զբախտակերտ այգիներ

տնկել, որոնց պտուղները սակայն չեմ տեսել և չեմ ճաշակել: Շրջել եմ աշխարհի բոլոր սրբավայրերը և տեսել բազմաթիվ անվանի մարդկանց»:

Վերը մեջբերված կենսագրական տեղեկությունները, և ձեռագրում ցրված այլ տվյալներ հիմք են տալիս ենթադրելու, որ Ռուստամ-խանի հայրը եղել է խոյի Ահմադ-խան Դունբուլին, որը Նադիրից հետո մինչև 1886 թվականը իշխում էր խոյում և շրջակայքում, հանդիսանալով Ատրպատականի ամենաազդեցիկ խաներից մեկը և քրդական Դունբուլի ցեղի առաջնորդը: Նշված թվականին նա եղբոր՝ Սալման-խանի և մեծ որդու հետ դավադրաբար սպանվեց հարևան ազրբեջանական խաների ձեռքով:

Սակայն աշխատության այն մասում, որտեղ Ռուստամ խանը խոսում է իր անմիջական նախնիների մասին և թվարկում է Ահմադ-խանի որդիներին, նա իր անունը այնտեղ չի հիշատակում, ըստ մեր աղբյուրի Ահմադ-խանի սպանությունից հետո «աշխարհում նրանից 8 որդի մնաց» (էջ 88բ), իսկ երբ նա թվարկում է, հիշում է միայն 7 անուն. Հուսեյն-կուլի խան, Ջահվար-կուլի խան, Ալի-Մուրադ խան, Քյայր-Ալի խան, Քյադիմ բեկ, Հաջի Շեյխ-Ալի խան և Ամիր-Ասլան խան: Պարզ չէ, ճ-րդը նա հաշվում է սպանված ավագ որդուն՝ Հուսեյն փաշային, որի անունը նա մի անգամ է հիշում Թավրիզի պաշարմանը մասնակցելու կապակցությամբ (էջ 87բ), թե՛ այստեղ պետք է ավելացնել հենց իր՝ Ռուստամ խանի անունը: Եթե ի նկատի ունենանք, որ խոսքը Ահմադ-խանի սպանությունից հետո մնացած որդիների մասին է, ապա կարելի է մտածել, որ ճ-րդը ինքը հեղինակն է, քանի որ ավագ որդին այդ ժամանակ արդեն չկար:

Եթե պայմանական կերպով ընդունենք, որ Ռուստամ-խանի հայրը վերոհիշյալ Ահմադ-խանն էր, իսկ նրա մահվան ժամանակ Ռուստամը 2 տարեկան է եղել, ուրեմն նա պետք է ծնված լինի 1784 թվականին: Այն փաստը, որ հիջրեթի 1216 (1801—1802) թ. տեղի ունեցած կռիվների մասին Ռուստամ խանը խոսում է որպես ականատեսի (էջ 92ա), իրոք գալիս է վկայելու, որ նա պետք է ծնված լինի 1784—1785 թվականներին: Մի այլ տեղ նա վկայում է, որ 17 տարեկանից նա եղել է զինվորական ծառայության մեջ: 40 տարի ծառայել է իրար հաջորդող 4 թագավորների (էջ 62ա): Եվ իրոք, եթե դարասկզբին նա մասնակցում էր կռիվների, ուրեմն շարադրման ժամանակ նա արդեն քառասուն տարվա ծառայության անցյալ ուներ, որը վերաբերում էր Աղա-Մուհամմադ խանի, Ֆաթհ-Ալի շահի, Մուհամմադ շահի և Նասր-էդ-դին շահի ժամանակներին:

Ձեռագրի 51բ էջում Ռուստամ խանը տվել է վերջին Դունբուլիների հաջորդական անվանացանկը, սկսած իր ժամանակներից մինչև XVI դարի սկզբներին Շահ իսմայիլի օրոք հայտնի դարձած Սալման խալիֆեն: Հետագա մի ընթերցողի կողմից ջնջված է այս ցուցակի առաջին անունը և տեղը գրված «Ահմադ խանի որդի Ռուստամ խան», որից հետո կա մի անընթեռնելի անուն, իսկ շարունակությունը այնպես է, ինչպես ձեռագրում նախապես գրված է եղել: Ուղղումը հավանաբար կատարվել է Ռուստամ խանի որդիներից մեկի ձեռքով, որը քիչ հետո լուսանցքում այլ հավելումներ է կատարել: Սրբագրողը նույնպատակ է ունեցել այդ ցուցակի վերջում դնել Ռուստամ խանի անունը, ինչ որ հեղինակը համեստորեն հիշատակության արժանի չի համարել և Դունբուլիների առաջնորդների ցուցակն ավարտել է Հուսեյն կուլի խանի որդու՝ Սալման խանի անունով, որը 1842 թ. վերադարձավ Ռուսաստանից և նշանակվեց խոյի հաքիմ

(էջ 91ա): Այնպես որ կատարված ուղղումը ճիշտ չէ և ոչնչով չի օգնում ճշգրտելու Ռուստամ խանի հոր ինքնությունը:

Կարգալուվ Ռուստամ խանի այս զույգ աշխատությունները, մենք տեսնում ենք, որ զինվորականի պաշտոնը չի խանգարել նրան զբաղվելու նաև հին կրոնների ուսումնասիրությամբ և, ինչպես ստորև կտեսնենք, խորանալու հատկապես հին իրանցիների՝ յազդանիների կամ յազդանփարասթների հավատալիքների ուսումնասիրության մեջ:

Մեր ձեռքի տակ գտնվող երկու բնագրերի վերնագրերից կարելի է կռահել, որ դրանք երկուսն էլ դավանաբանական-կրոնական բովանդակություն ունեն: Իրականում սակայն, դրանցից երկրորդն է միայն, որ բովանդակում է հին իրանական հավատալիքների մասին բավական ընդարձակ քաղվածքներ զանազան աղբյուրներից և հատկապես զբաղաշտական գրականությունից: Անշուշտ այս աշխատությունը որպես XIX դարի առաջին կեսում Իրանում կատարված ուսումնասիրություն, ուշագրության արժանի երևույթ է, սակայն որպես պատմական սկզբնաղբյուր՝ առանձին հետաքրքրություն չի ներկայացնում:

Այլ բնույթ ունի, սակայն, առաջին աշխատությունը, որ անհամեմատ ավելի ընդարձակ է ու բազմաբովանդակ: Այս աշխատության սկզբի և վերջի մասերը նույնպես նվիրված են հին իրանական կրոնի պատմությանը: Նախապես Իրանի առասպելական թագավորների շարքը, ըստ Շահնամեի թվարկելուց հետո, հատուկ գլխում, որ վերնագրված է «Պարսիկ թագավորների կրոնի մեկնությունը, որոնց Ատրհուշանգ, Ահուշանգ, Հուշանգ կամ Ահուշ-Մեհաբադ էլ են ասում»⁸, մեկնաբանում է հին Իրանի նախազրադաշտական հավատքը: Հաջորդ գլուխը վերնագրված է «Դունբուվիների և պարսիկների կրոնի մեկնության սկիզբը, որոնց կոչում են նաև իրանցիներ»⁹: Հեղինակը նախապես հավաստիացնում է, որ ինքը մեկ առ մեկ ուսումնասիրել է բոլոր աղբյուրները. «Այսպես է ասում գրքիս աշխատասիրողը, — գրում է նա, — ոչ ոք չի կարող զիտողություն անել, թե այսինչ նյութը այնինչ տեղից է վերցված, որովհետև հեղինակը մեկ առ մեկ հիշատակում է բոլոր գրքերի անունները»¹⁰: Այս գլխում է ահա, որ Ռուստամ-խանը փորձում է ապացուցել, որ Դունբուվի քրդերը շատ երկար ժամանակ պահպանել են հին իրանական կրոնը:

Ռուստամ-խանի աշխատության այս մասը կարևոր է նաև այն տեսակետից, որ գրավոր աղբյուրների օգտագործմանը զուգահեռ նա անձամբ շրջել է Քուրդիստանի կենտրոնական շրջաններում և ծանոթացել քրդերի մոտ պահպանված բազմաթիվ աղանդների հետ: Այսպես, խոսելով Սփասյան (سپاسیان) կոչվող աղանդի մասին, նա գրում է. «Տողերիս գրողը երկար ժամանակ նրանց

⁸ էջ 21ա. در بیان مذهب سلاطین فارس که ایشانرا اذر هوشنک و اهوشنک و هوشنک و اهوش مهاباد گویند

⁹ էջ 21բ. آغاز ذکر مذهب دنبلیان و پارسبیان که ایشانرا ایرانیان نیز گویند

¹⁰ էջ 29ա. گرداور نامه میگوید اکثر کسی بحث نماید و ایراد آور دکه فلان مطلب در فلان جاست خود را قم فقره بفقره نام کتابهارا بیان نموده

հետ է եղել հարցուփորձ է արել, ուշադրությամբ ուսումնասիրել է նրանց առաջնորդների գրքերը, կարդացել և վերահասու եղել նրանց գաղտնիքներին և ներքին էությանը: Նրանց հավատքը ամբողջապես համապատասխանում է յազգանփարասթների հավատքին»¹¹:

Քրդական ցեղերի մեջ տարածված աղանդներից դժվար թե որևէ մեկը վրիպած լինի նրա ուշադրությունից: Բոլորին էլ նա անդրադարձել է առավել կամ նվազ շահով: Հիշված են Ահլ-ե հակկ, Բեկթաշի, Յազիդի, Սեփասի և մի շարք այլ աղանդներ:

Ուսումնասիրելով քրդական աղանդների ակունքները և կանգնելով այն հաստատ տեսակետի վրա, որ քրդերը դեռ Իսլամից հետո էլ երկար ժամանակ պահպանած են եղել հին իրանական կրոնը, Ռուստամ-խանը պատմական բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա փորձում է ապացուցել, որ երբ Աբբասյանների օրոք Խալիֆաթի արքունիքում մեծ կշիռ ունեցող, ծագումով պարսիկ Յահյա Բարմաքիի որդի Մուսա Բարմաքին Մամունի կողմից նշանակվում է Սիրիայի և Հյուսիսային Միջագետքի կառավարիչ, նա իր հովանավորության տակ է առնում այն ժամանակ դեռևս իրենց հին հավատքը պահպանած Յազգանի քրդերին և հոծ քրդական բնակչություն ունեցող Սանջարի լեռներում հիմնում է Դունբուլ բերդը, այն դարձնելով իր ամրոցը: Այս բերդի անունով էլ ահա նրա և հետագայում նրա որդիների ու նրանց հաջորդների իշխանության ներքո միավորվող քրդական ցեղերը սկսում են կոչվել «Դունբուլի»:

Այնուհետև զուլա առ զուլա շարադրում է այս ընտանիքից ճյուղավորված քրդական բազմաթիվ նոր ցեղերի և դինաստիաների պատմությունը, այդ ընթացքում կարևոր տեղեկություններ տալով նաև քրդական ցեղերի բուն տեղահանումների և միգրացիաների վերաբերյալ: Ահա այստեղ է, որ շունենալով հանդերձ Արդ-ալ-Ռազզակի լեզվական հմտությունն ու պարսից դասական պատմագրությանը հատուկ բարձր ոճը, Ռուստամ-խանը կարողացել է տալ իր նախնիների շատ ավելի ընդարձակ պատմությունը վաղ միջնադարից սկսած մինչև իր օրերը, ընդգրկելով դունբուլիների ոչ միայն մեկ ճյուղի, այլ ավելի վաղ ժամանակների մի խոշոր ցեղից ճյուղավորված բոլոր ցեղերի իշխանության պատմությունը սերնդից սերունդ:

Ըստ մեր աղբյուրի, դունբուլիներից են սերում քրդական Բարմաքուլու, Դունբուլի-Յահյա, Շամսեզի, Իսաբեկուլու, Ալամշահբեկուլու Զաաֆարանլու, Այյուբխանի, Շահնավազբեկուլու, Խրտըրլու, Խալիբեկուլու, Շըկակի և այլ ցեղեր, որոնք մինչև XVI—XVII դարերը, իսկ ոմանք նույնիսկ մինչև գրքի շարադրման ժամանակները, դեռ յազգանիներ էին¹²:

Հավանական է, իհարկե, որ այստեղ դրսևորված լինեն հեղինակի, եթե կարելի է այսպես ասել, մեծապետական հայացքները: Նա փաստորեն Կուրմանջի քրդերի մեծ մասին ցեղակից է համարում Դունբուլիներին:

Մանրամասն բնութայն առնելով Դունբուլիների ընտանիքից ճյուղավորված բոլոր ցեղերի անցած պատմական ուղին, Ռուստամ-խանը վերին աստիճանի կարևոր տեղեկություններ է տալիս ինչպես Քուրդիստանի տարբեր շըր-

¹¹ էջ 32ա. نامه نگار مدتها با اینطایفه خجسته قدسی منش باهم بودند تحقیقات نموده بادقت تمام رسیده کتب مشایخ عظام را بالتمام قور نموده و بر موزات و مکتون ضمیر ایشان رسیده بالتمام آئین یزدان پرستی دارند.

¹² էջ 95բ—96ա. Այս դեպքում կարծում ենք, որ նա ի նկատի ունի եզիդիներին:

ջանների, այնպես էլ Պատմական Հայաստանի հարավային նահանգների վերաբերյալ: Ուշագրություն արժանի են հատկապես այն տողերը, որոնք նվիրված են Կուրմանջի քրդերի բնակության վայրերի նկարագրությանը, Տերզնի լեռներից մինչև Ատրպատականի արևմտյան շրջանները ներառյալ, որի մեջ մըտնում է հին Կորդուկը կամ Կորդվաց աշխարհը: Մեծ տեղ է հատկացված Խոյի և շրջակայքի նկարագրությանը, որպես իր հայրենի քաղաքի, նշելով որ իբր այն եղել է Հայաստանի մայրաքաղաքներից մեկը¹³:

Ավելի ուշ շրջանում քրդական ցեղերի յայլաղների շարքում նա առանձնապես շեշտում է Նղեգիսի ձորը, Կապանն ու Բարգուշատը, Ալաղաղն ու Բերկիլին, Աղբակն ու Հաքքարին և Հայաստանի այլ լեռնային շրջաններ¹⁴:

Առանձին հիացմունքով է նկարագրված Գունբուլի քրդերի բնօրրանը համարվող Սանջարի և Տերզնի բնությունն ու հարստությունները: Այսպես օրինակ, Տերզնի մասին գրում է.

خد اوند عالم آنکوه را بنظر دیوان دهر پنهان نگاهداشته است
 اکثر آنکوه را گردیده است نعمت عالم در آن کوه تمام است چندان
 شهرهای عظیم در آن کوه هست احدی نفهمیده است قلّه جبال برف در پائین
 کوه خرما و نارنج همه آن کوه تا کستان و درخت توت ابریشم است کوهها
 عفل بندی شده دره ها پر آب و بکشتی تردد دارند...

«Արարիչն աստված Տերզնի լեռները հեռու է պահել դեերի աչքից: Տողերիս գրողը շրջել է այդ լեռների մեծ մասում: Այդ երկիրը լի է աշխարհի բոլոր բարիքներով: Քիչ մարդիկ գիտեն, որ այդ լեռներում մեծ քաղաքներ կան: Լեռների գագաթները ծածկված են հավերժական ձյունով, իսկ ստորոտում արմավ ու նարինջ է հասնում: Ամբողջ լեռները ծածկված են այգիներով և թթենիներով: Բարձրունքներում ամրություններ են կառուցված: Գետերը ջրառատ են: Նրանցով նավեր են երթեկեկում» (էջ 56ա):

Ամենատարբեր աղբյուրներից Ռուստամ-խանը կարողացել է գտնել դուրբուլիներից ճյուղավորված մի շարք քրդական դինաստիաների ժառանգական հաջորդականությունը պարզող տվյալներ և ճշտել նրանց խանության, բեկության կամ բեկլարբեկության թվականները:

Գրքի գլուխները մեծ մասամբ բաժանված են ըստ առանձին իշխողների անունների: Այսպես մի քանի գլուխ հաջորդաբար վերնագրված են. «Շահբազ խան Գունբուլիի որդի Նաջաֆկուլի խանի մասին», «Նաջաֆկուլի-խան բեկլարբեկի որդի Ամիր Խուզադադ-խանի մասին», «Ամիր Խուզադադ-խան Գունբուլիի որդի Ամիր Ֆաթհ-Ալի բեկի մասին», «Ամիր Խուզադադ-խանի որդի Ամիր-Ֆաթհ-Ալի բեկի որդի Նաջաֆկուլի խանի մասին» և այլն: Պատմությունը հիմնականում հյուսված է առանձին պատմական դեմքերի, առավելապես քրդական տարբեր ցեղերի առաջնորդների կենսագրության հենքի վրա, որի ընթաց-

¹³ էջ 56բ, 68ա شهر خوی که پایتخت سلاطین ارمن بوده

¹⁴ էջ 72բ, 77բ. دره الگبس نخچوان از کنار ارس الی مغان و قاپان و
 «پرکشاد قرا باغ کوهستانات حکاری و الاداغ بیلاق آنها بوده...»

քում, սակայն, հեղինակը հաճախ ծավալվելով խորանում է պատմաբանին հուզող բազմազան հարցերի մեջ:

Մինչև XVIII դարը ներառյալ, պատմության շարադրման համար Ռուստամ-խանը օգտագործել է շուրջ 800 տարվա պատմություն ընդգրկող պարսկերեն, թուրքերեն և արաբերեն մի քանի տասնյակ պատմագրական երկասիրություններ: Այս առումով, իհարկե, նրա աշխատության այս հատվածը մասամբ կոմպիլատիվ բնույթ է կրում: Սակայն օգտագործված աղբյուրների մեծ մասը անտիպ է, ձեռագիր օրինակները խիստ հազվագյուտ, հետևաբար Ռուստամ-խանի վկայակոչումները շատ գեպքերում մեզ համար սկզբնաղբյուրի արժեք ունեն:

«Իշարաթ-ուլ-մազահիրի» առանձին գլուխները շարադրելիս Ռուստամ-խանը ձեռքի տակ է ունեցել պարսկալեզու պատմագրության հարուստ գանձարանը: Բազմաթիվ են բառացի, կամ ինչպես հեղինակն է ասում «առանց տառից շեղվելու» (بی تحریر حروف) մեջբերումները Միրխոնդի «Ռուվզաթ-ուս-սաֆայից», Խանդամիրի «Հաբիբ-ուս-սիարից», Կազի Ահմադ Ղաֆֆարիի «Թարիխ-ե Զհանարայից», Իսքանդար Մունշու «Թարիխ-ե Ալամարայ-ե Աբբասից», Աբու-Աբդուլլա Բեյզավիի «Նիզամ-ալ-թավարիխից», Աբու-Սաիդ Բեյզավիի «Ջամե-ուլ-թավարիխից» և Աբու-Հանիֆե Դինվարիի «Թարիխ-ե Անսաբ-ե Աբբադ վա Աշամ», Ամին Ահմադ Ռազիի «Թարիխ-ե Հաֆթ իկլիմ», Շարաֆ խան Բիթլիսիի «Շարաֆնամե», Մուհամմադ իբն-Նասրուլլայի «Թարիխ-ե Ալֆի», ինչպես նաև «Թարիխ-ե Սայակ», և թուրք պատմիչ Քյաթիբ Չելեբիի «Թարիխ-ե Զհաննումա» և այլ պատմագրական ու ժամանակագրական գործերից:

Ռուստամ-խանը ավելի մեծ տեղ է տալիս և XVII—XVIII դարերի պատմության վերաբերյալ արժեքավոր տվյալներ է մեջ բերում Մահմուդ-խան իբն-Մուհամմադ-խան Դունբուլիի «Թարիխ-ե անսաբ-ե սալաթին-ե աբբադ» և Աբդ-ալ-Ռազզակի «Մուսաիր-ե Սուլթանիյե» աշխատություններից:

Բազմաթիվ պատմագրական երկերից բացի, Ռուստամ խանը իր աշխատության համար նյութեր է որոնել նաև գեղարվեստական գրականության էջերում: Նրա գրքում հաճախ են վկայակոչված Ֆերդուսու, Սաադիի, Ջալալ-էդդին Ռումիի, Կաթրան Թաբրիզի, Շեյխ Աթթարի, Բաբա Թահերի, Խաքանիի և պարսից դասական գրականության այլ ներկայացուցիչների արձակ և չափածո ստեղծագործությունները:

Իր աշխատության այն հատվածում, որ վերաբերում է XVIII դարի վերջերին և XIX դարի առաջին կեսին, Ռուստամ խանը արդեն հանդես է գալիս որպես ժամանակակից և ականատես պատմիչ: Պատմության այս մասում մեծ տեղ է հատկացված Ահմադ-խան Դունբուլիին և նրա օրոք տեղի ունեցած քաղաքական անցուղարձեերի նկարագրությանը: Արձանագրված են այնպիսի մանրամասնություններ, որոնք նոր լույս կարող են սփռել նախադաշարյան Իրանի և հատկապես Ջենդ Քյարիմ խանի ժամանակ Ատրպատականում ու Անդրկովկասում ստեղծված խառը վիճակի պատմության վրա: Բավական մութ և անորոշ բացատրություն է տրված Ահմադ-խանի կյանքի նկատմամբ կազմակերպված դավադրությանը:

Հիշատակված են նաև Ատրպատականի ու Անդրկովկասի ավելի քան 17 խաների անուններ, որոնք ենթարկվում էին Ահմադ-խանին և արշավանքների ժամանակ զինված ջոկատներ էին տրամադրում նրան:

Ուշադրության արժանի է, որ Ահմադ-խանը շարունակ կապ է պահպանել Հյուսիսային Միջագետքի, հատկապես Սանջարի և Տերզնի շրջաններում բնակվող Կուրմանջի քրդերի հետ: Մեծ ազդեցության տեղ այս անվանի իշխանի սերտ կապերը բուն Քուրդիստանում բնակվող իր ցեղակիցների հետ չի կարելի դիտել որպես քաղաքական բովանդակությունից բխող զուրկ մի երևույթ:

Ռուստամ-խանը ընդարձակ էջեր է նվիրում հատկապես Ահմադ-խանի այն որդիներին, որոնք 1805 թվականից հետո անցան Անդրկովկաս և ծառայության մեջ մտան ռուսական բանակում: Դրանցից առաջինը Ջալալարկուլի-խան Դունբուլին էր, որ ռուսական իշխանությունից ստացավ Շաքիի խանությունը: 1814 թվականին նրան հաջորդեց եղբայրը՝ Քյալբ-Ալի խանը, որը 1828 թվականին ռուսական զորքերի կողմից խոյի գրավումից հետո կարճ ժամանակով նշանակվեց իր հայրենի երկրի կառավարիչ: Իսկ երբ ռուսական բանակը մտավ էրզրում, նա մասնակցում էր թուրքերի դեմ մղվող կռիվներին և նշանակվել էր էրզրումի նահանգապետ:

Ջալալարկուլի խանի և Քյալբ-Ալի խանի մասին խոսելիս, Ռուստամ խանը հիշատակում է նաև այլ դունբուլիների անուններ, որոնք եղել են ղինվորական ծառայության մեջ Ռուսաստանում և մասնակցել եվրոպական մայր ցամաքում ծավալված պատերազմական գործողություններին, արժանանալով կառավարական բարձր պարգևների: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ՝ Մուհամմադ-թաղի խանը ռուսական բանակում հասել է մինչև գեներալության աստիճանի: Իսկ նրա որդին՝ Շիր-Ալին 1850 թվականին որպես սպա ծառայելիս է եղել Պետրոգրադի կայսազորում և պարգևատրվել է Վարչավայի համար մղվող մարտերում ցուցաբերած խիզախության համար:

Ռուս-քրդական հարաբերությունների պատմության ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետը այս և նման շատ ուրիշ ուշադրության արժանի տվյալներ կարող է գտնել «Իշարաթ-ուլ-մազահիրի» էջերում:

* * *

Մենք փորձեցինք համառոտ կերպով բնութագրել և մասնագետների ուշադրությանը ներկայացնել Մատենադարանի արաբատառ ֆունդի № 622 ձեռագիրը, կանգ առնելով հատկապես ձեռագրի աղբյուրագիտական արժանիքների վրա և ցույց տալով նրա նշանակությունը քուրդ ժողովրդի պատմության ուսումնասիրման համար: Ներկա հոդվածի նպատակներից դուրս է սպառել զրչագրի ուսումնասիրության ընթացքում բարձրացող բազմաթիվ տեքստաբանական և պատմա-բանասիրական բնույթի հարցերը:

Վերը կատարված մեր նախնական ուսումնասիրությունների արդյունքները սակայն բավարար են արձանագրելու, որ խնդրո առարկա ձեռագիր մատյանը պարունակում է երեք բնագիր, որոնցից մեկը մասնագետներին իր վերնագրով միայն ծանոթ է չափազանց հազվադեպ Աբդ-ալ-Ռազզակ Գունբուլիի «Թարիխ-ե Դանաբիլեի» 1850 թ. մի անավարտ ընդօրինակությունն է, իսկ մյուս երկուսը՝ բոլորովին նոր հեղինակի՝ Ահմադ խան Դունբուլիի որդի Ռուստամ-խանի գրչին պատկանող պատմա-գավանաբանական աշխատություններն են, որոնք ցարդ հայտնի չեն եղել իրանագետ-քրդագետներին:

Քուրդ ժողովրդի պատմության այս կարևոր սկզբնաղբյուրները քրդագիտական լայն շրջաններին մատչելի դարձնելու համար որոշվել է 1968 թ. Մոսկվայում հրատարակության հանձնել այս ունիկալ ձեռագրի լուսանկարա-

լին պատճենը (Ֆոտո-ֆաքսիմիլե), օժտելով այն պատմա-բանասիրական առաջաբանով, ծանոթագրություններով և անհրաժեշտ անվանացանկերով:

А. Д. ПАПАЗЯН

НОВЫЙ ИСТОЧНИК ПО ИСТОРИИ КУРДСКОГО НАРОДА

Резюме

Рукопись № 622 арабского фонда Матенадарана содержит три уникальных текста. Два из них: «Ишарат-ул-мазахиб» (стр. 16—1736) и «Ишарат-ул-адян» (стр. 178а—220б), принадлежащие перу автора первой половины XIX века Рустам-хана, сына Ахмед-хана Дунбули, до сих пор были неизвестны востоковедам.

Оба эти сочинения Рустам-хан Дунбули посвятил изучению исторического прошлого курдов дунбули и их верований. Первый из них представляет собой обширный труд, где автор, рассказав вкратце историю царей Ирана доисламского периода, переходит к более подробному изложению истории Бармакидов, удостоившихся высокого положения при халифах Аббасидах, и высказывает мнение, что курды Дунбули-курманджи происходят от Бармакидов. Он ссылается на многих персоязычных авторов, некоторые из которых неизвестны нам. Особую ценность представляют страницы, посвященные истории конца XVIII и начала XIX веков, которые автор описал как очевидец и участник важных политических событий.

Второй текст ценен обстоятельным исследованием древнеиранских верований и их пережитков у курдов «яздани».

Последние страницы рукописи содержат неоконченную копию сочинения одного из последних представителей средневековой персоязычной историографии Абд-ал-Раззак Ибн-Наджуфкули-хана Дунбули «Тарихе-Данабиле»—сочинения, известного востоковедению лишь по заглавию. Копия сделана в 1850 году и скреплена печатью Рустам-хана Дунбули.

В нашем тексте история Дунбули начинается с XVII века с краткого описания того периода, когда в начале XVII века курды дунбули, один из крупных племенных союзов курдов Курманджи, примкнули к мусульманской секте шиа, и доводится до времен Надир-Шаха.

Рукопись датирована 1266 годом хиджры (1850 г.), переписана в Тегеране, в медресе Мирза-Салеха, учеником того же медресе Али Акбаром Тафреши. Текст многократно скреплен печатью автора и отдан в вакф его наследникам мужского пола. В тексте имеются поправки, добавления и комментарии, сделанные рукой автора, что придает рукописи ценность автографа.

Ввиду уникальности рукописи, готовится к печати фото-факсимиле текстов Абд-ал-Раззак и Рустам-хана Дунбули, оснащенное филолого-источниковедческим предисловием, индексами и вспомогательным научным аппаратом.

H. D. PAPAZIAN

UNE NOUVELLE SOURCE DE L'HISTOIRE DU PEUPLE KURDE

Le manuscrit no. 622 du fonds arabe du Maténadaran d'Erévan renferme trois textes uniques encore inconnus des orientalistes.

Deux de ces textes sur lesquels s'ouvre le manuscrit appartiennent à la plume d'un seul et même auteur de la première du XIX^e siècle Roustan-khan fils de Ahmad-khan Dounbouli et concernent l'histoire et les croyances des kurdes de Dounboul. Le premier est une longue étude historique intitulée „Icharat-oul-mazahib“ (ff. I v — 173 v) qui, introduite par une histoire abrégée des rois de la période préislamique d'Iran, reporte toute l'attention sur les hauts dignitaires barmakides de la période des califes abbassides, desquels seraient issus les Kurdes kourmandjis de Dounboul. L'ouvrage puise dans de nombreuses sources perses du moyen âge, dont quelques-unes ne nous sont pas parvenues. Les pages retraçant l'histoire de la fin du XVIII^e siècle et de la première moitié du XIX^e siècle sont d'authentiques témoignages de l'auteur qui prit part à d'importants événements politiques. Le second texte „Icharat-oul-adian“ (ff. 178 r — 220 v) présente un intérêt incontestable quant à l'étude des anciennes croyances iraniennes et des vestiges conservés chez les Kurdes „yazdanis“.

Les dernières pages du manuscrit reproduisent l'ouvrage d'un des ultimes représentants de l'historiographie médiévale perse Abd-al-Razzaq ibn-Nadjakouli-khan Dounbouli, intitulé „Tarikh-e-Danbile“ et qui ne figure dans les Etudes Orientales que par le titre. Cette copie, en belle écriture naskh et revêtue du sceau de Roustanm Dounbouli, date de 1850.

C'est par une brève relation de la conversion au début du XVII^e siècle de l'une des grandes tribus des Kurdes kourmandjis à la foi shiite des Dounboulis musulmans que le manuscrit du Maténadaran commence l'histoire des Dounboulis qui s'y arrête sous le règne de Nadir-Chah.

Ce manuscrit qui date de l'an 1266 de l'Hégire (1850) a été exécuté au Madrasé de mirza Saleh à Téhéran par Ali-Akbar Tafrechi, élève de cet établissement. L'auteur y a apposé son sceau en plusieurs endroits et l'a consacré vakouf à ses héritiers mâles. Des corrections, notes et additions, personnelles de l'auteur complètent le texte, qui prend ainsi valeur d'autographe.

La publication prochaine, avec introduction historico-philologique, index et notes, des fac-similés des trois textes de ce rare manuscrit viendra enrichir les études relatives à l'histoire et aux croyances du peuple kurde.

ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԹՈՒՐԲԻԱՅԻ ՄԵՏԱՔԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ
1729 Թ. ԹԱՎՐԻԶՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Ստամբուլի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը 1960 թ. հրատարակել է Ֆահրի Դալսարի աշխատությունը նվիրված Բուրսա քաղաքի մետաքսագործության պատմությանը: Դա մի ընդարձակ մենագրություն է, որտեղ հեղինակը աշխատել է բազմակողմանի քննության ենթարկել Թուրքիայում մետաքսագործության զարգացման պատմությունը հարյուրամյակների ընթացքում, սկսած 14—15-րդ դարերից մինչև մեր օրերը: Ուսումնասիրության մեծ մասի համար որպես աղբյուր են ծառայել Բուրսայի Ուլու-Ջամի կոզվող մզկիթում պահպանված և 815 սովար հատորներից բաղկացած նույն քաղաքի մահքեմեի (քաղաքացիական դատարանի) նիստերի արձանագրությունները, որոնք սկսվում են Սուլթան Մուհամմադ Բ-ի ժամանակներից (1451—1481 թթ.) և հասնում մինչև 18-րդ դարի կեսերը:

Այդ հետաքրքիր նյութերի մասին հեղինակը տեղեկացել է 1940 թ. բոլորովին պատահական կերպով, իսկ ճետո բանակցության մեջ մտնելով մզկիթի վակֆայի վարչության հետ, ամբողջ արձանագրությունները տեղափոխել է քաղաքային թանգարան, կարգի է բերել, դասավորել և ապա տարիներ շարունակ զբաղվել դրանց ընթերցման և վերծանության բարդ ու դժվարին գործով:

Արձանագրությունների հարուստ փաստական նյութը Ֆ. Դալսարին հնարավորություն է տվել քննության առնել Թուրքիայի 15—18-րդ դդ. տնտեսական պատմության հետ առնչվող շատ հարցեր և միանգամայն հավաստի տվյալների հիման վրա հանգել նոր և ուշագրավ եզրակացությունների: 10 ընդարձակ գլուխներում մանրամասն հետազոտված է մետաքսի հումքի և գործվածքների արհեստագործական տեխնոլոգիան, գործվածքների արտադրության պետական ղեկավարությունը, մետաքսագործական համաքարությունների ներքին կառուցվածքն ու նրանց դերը արտադրության կազմակերպման գործում, հումքի ներմուծման և արտադրվող բաղմաղան և բազմանուն գործվածքների արտահանման պատմությունը, շերամապահության բնագավառում ձեռնարկվող աշխատանքները և ընդհանուր գիտական հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Յուրաքանչյուր գլխին կցված են նաև նույն գլխում լուսաբանվող հարցերին վերաբերող փաստաթղթերի (վասիքաներ) խիստ արժեքավոր բնագրեր:

Ֆ. Դալսարի հրապարակած վավերագրերը գալիս են հաստատելու, որ Բուրսայի մետաքսագործության հումքը հիմնականում ներմուծվում էր այն

¹ Türk sanayi ve Ticaret Tarihinde Bursa'da Ipekçilik, Fabri Dalsar, Çalışma Ve-kâleti Araştırma Kurulunda, İstanbul, 1960.

ժամանակ Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Գիլանից, Ադրբեջանից և Հայաստանից: Նյութերի առարկայական հետազոտությունը Ֆ. Դալսարին բերել է այն համոզման, որ հատկապես «Տրապիզոնի ճանապարհը Հայաստանից, Ատրպատականից և Կասպիականի ափերից եկող մետաքսի ճանապարհն էր: Գանձակի, Կաֆայի և այլ հեռու երկրների մետաքսը այս ճանապարհով էր դալիս և այս ճանապարհից բացառապես հայերն էին օգտվում... Պարզվում է նաև, որ Արևելքի երկրներում արտադրվող մետաքսը վաճառվում էր Թավրիզում և Հայաստանի մի քանի մեծ քաղաքներում գտնվող գնորդների և այս վաճառականների միջոցով ուղարկվում Անադոլու: Այսպիսով Անադոլու ներմուծվող մետաքսի վաճառքը վաղ ժամանակներից ի վեր մեծ մասամբ թավրիզիների և հայերի միջոցով էր կատարվում»²:

Ըստ վասիթաների տվյալների հայերի դերը մետաքսի ներմուծման գործում ավելի է մեծանում հատկապես 16-րդ դարում, երբ Սուլթան Սելիմի օրոք ծայր են առնում բուռն հալածանքները շիաների, այդ թվում ադրբեջանցի (թավրիզցի) վաճառականության նկատմամբ: Այս շրջանում է ահա, որ Սուլթան Սելիմի հրամանով Բուրսայից և շրջակայքից քստորում են բոլոր իրանցիներին և նրանց ունեցվածքը ամբողջովին բռնագրավում: Քաղաքում գնալով աճում է հայ ազգաբնակչության թիվը և, ինչպես ընդգծում է Ֆ. Դալսարը, «հայերը Բուրսայի մետաքսագործության մեջ մեծ գործունեություն են ծավալում»³:

Մի այլ տեղ փորձելով մեկնաբանել այս գործունեության համար ստեղծված նպաստավոր իրադրության քաղաքական նախադրյալները, նա գրում է. «Որ մետաքսի առևտրով դեպի Անադոլու երթևեկող հայերի նկատմամբ ավելի նպաստավոր վերաբերմունք է եղել, այդ երևում է նաև Յավուզ Սելիմի հրամանագրից: Տրված խիստ հրահանգում (որտեղ արգելվում էր իրանցիներին մետաքսի առևտրով զբաղվել—Ղ. Փ.) նշված է հատկապես, որ հայերը ազատորեն կարող են զբաղվել մետաքսի առևտրով: Պարզվում է նաև, որ շատ հայեր, քոչվոր թուրքերի նման, Թավրիզից և Հայաստանից դուրս գալով՝ շարունակ եկել են ու տեղավորվել Անադոլիում: Այս նորեկներից ինչ կարգով հարկեր գանձելու մասին առանձին հրամաններ կան տրված»⁴:

Սակայն այս բոլորից հետո Ֆ. Դալսարը իր այս արժեքավոր աշխատության մեջ հարկ է համարել տուրք տալ ազգային անհանդուրժողականությանը, գրելով նեղմիտ ազգայնականությանը բնորոշ այս տողերը.

«Արևելյան երկրներից Անադոլու մետաքս ներմուծողների մեջ ամենից շատ տեսնում ենք հայերի: Սակայն մետաքսի վաճառական այս հայերի կյանքի ուսումնասիրությունը ևս խիստ օգտակար է, որովհետև մեր ձեռքն անցած շատ վասիթաներից երևում է, որ նրանք միանգամայն թուրքական անուններ են կրել: Հնարավոր է նաև, որ թուրքական անուններ կրող այդ անձնավորությունները թուրքերեն են խոսել: Թուրքական անունով և հավանաբար թրքախոս, սակայն հայ անվանվող այս մարդկանց թուրքության հետ ունեցած առնչությունները պարզելը մեզ չի վերաբերում: Այդուհանդերձ, չի՞ կարող արդյոք, որ Հայաստան մուտք գործած թուրք ցեղերի մի մասը, այնտեղ քրիստոնյա դառնալով, իրենք իրենց հայ են համարել: Եթե մեր ձեռքի տակ վասիթաներ

² Նույն տեղում, էջ 132:

³ Նույն տեղում, էջ 140:

⁴ Նույն տեղում:

չլինեին, այսպիսի բան չէինք մտածի: Ահա օրինակ ինչպիսին են հինգ հոգուց բաղկացած մի հայ ընտանիքի անդամների անունները. Մուրադ որդի Կոչայի, Գոհար գուտար Բուրադի (Մուրադի կինը) և Շահ-Քուլա, Սուլթան և Մարիամ (սրանց դուստրերը)»⁵:

Կարելի է չկասկածել, որ մեր հեղինակը աշխատել է ընտրել ամենահաջող օրինակը, որտեղ իր կարծիքով բոլոր 5 անուններն էլ թուրքական են: Բայց արդո՞ք դա այդպես է: Նախ պետք է ասել, որ արաբատառ վավերագրերում հիշված հատուկ անունների վերծանության ժամանակ վրիպումները անխուսափելի են, մանավանդ, երբ ուսումնասիրողը նախապես ծանոթ չէ դարաշրջանի անուններին, և երբ չկա բնագրի լուսանկարը՝ հնարավոր չէ ստուգել վերծանության ճշտությունը: Սակայն մի պահ ընդունենք, որ վերծանությունը ճիշտ է: Այդ դեպքում հիշված անուններից միայն Կոչա (որ, ի դեպ, կարող է նաև Խոչա լինել) և Բուրադ անուններն են, որ կարելի է թուրքական համարել: Մուրադ անունը արաբական է, որ օգտագործում էին և՛ հայերը և՛ թուրքերը և՛ պարսիկները: Սուլթանը որպես իզական, ինչպես նաև արական անուն նույնպես արաբական է, որ միջնադարում շատ տարածված էր հայերի մեջ, Շահ-Քուլա (հավանաբար պետք է լինի Շահ-Քանու) իզական անունը պարսկական է, իսկ Գոհար և մանավանդ Մարիամ անունները հայկական են, թեև դրանցից առաջինը, որ պարսկերենում ևս նույն իմաստն ունի, օգտագործում են նաև պարսիկները, որոնցից փոխ են առել նաև թուրքերը, իսկ երկրորդը նույնպես ընդհանուր է և՛ քրիստոնյաների, և՛ մահմեդականների համար: Հիշված են նաև մի քանի այլ անուններ, ինչպես օրինակ Չալաբ-վերմիշ, Խուդա-վերդի և այլն: Սակայն ինչպես այս, այնպես նաև տասնյակ այլ անունների թվարկումը չի կարող հիմք ծառայել կասկածի տակ առնելու այդ անձնավորությունների ազգային պատկանելիությունը, որի մասին այդ դարերում հարկ է համարվել հատկապես շեշտել:

Ի գիտություն Ֆ. Դալսարի պետք է ասենք, որ 13—18-րդ դարերում արաբական, պարսկական և թուրքական անձնանունները շատ տարածված են եղել հայերի մեջ: Մեր ձեռագրաց հիշատակարաններում, վիմական արձանագրություններում, ինչպես նաև հայ վաճառականների թողած օրագրություններում և այլ բնագրերում հայկական և քրիստոնեական անունների շարքին հաճախ ենք հանդիպում Ամիր, Ամիրբեկ, Խուլիուբեկ, Խազարբեկ, Բեկթամուր, Ամիրխան, Ամիրշահ, Սուլթանշահ, Շահինշահ, Զհանշահ, Աբդլ Մսեհ, Դուլլաթ, Գուման, Հասան, Քաճաղին, Խերաղին, Շամսաղին, Ֆախրաղին, Քամամ, Խաթուն, Խասխաթուն, Սուլթանխաթուն, Նազխաթուն, Շահնիզար, Շահնազար, Շահզադե, Շահբուրադ, Միրզա, Միրաթ, Միրաբ, Սարհազ, Նազար, Ֆարուխ, Ֆարխունդե և բազմաթիվ այլ անունների, որոնց մի զգալի մասը հանրահայտ հայ իշխանների և անվանի հոգևորականների անուններ են⁶: Անձնանունների փոխառությունը շատ տարածված երևույթ է եղել միջնադարում և շարունակվում է նաև մեր օրերում:

⁵ Նույն տեղում, էջ 139—140:

⁶ Տե՛ս և՛ Ս. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, ԺԵ դարի հայ. ձեռ. հիշատակարաններ, մասն Ա, Բ, Գ, Երևան, 1955—1967: Ս. Բարխուդարյան, Դիվան հայ վիմագրության, պրակ, 2, Երևան, 1960: Հմմտ. 2. Աճառյան, Հայերեն անձնանունների բառարան, հ. 1—5, Երևան, 1942—1962:

Կարիք կա՝ արդյոք հիշեցնելու նաև, որ թուրքական անձնանունների մեծ մասը ևս արաբական և պարսկական ծագում ունեն, որ մղումը դեպի զուտ ազգային անունների կիրառությունը նոր երևույթ է՝ կապված կապիտալիստական հարաբերությունների զարգացման և ազգային ինքնագիտակցության վերելքի հետ, որպիսի երևույթ հայ իրականության մեջ սկսում է երևան գալ 19-րդ դարի սկզբներին, իսկ թուրքերի, ինչպես նաև պարսիկների մոտ 20-րդ դարի 20-ական թվականներից հետո:

Իսկ ինչ վերաբերում է Ֆ. Դալսարի այն «հիպոթեզին», որ 15—17-րդ դարի վասիլքաներում հիշվող և այսպես կոչված «թուրքական» անուններ կրող հայ վաճառականները կարող են քրիստոնեություն ընդունած թուրքեր լինել, ապա ստիպված ենք նշելու, որ հավաստի աղբյուրների այսպիսի հազվագյուտ մի շտեմարանի հետ գործ ունեցող հեղինակը կարիք չունի ոչ մի տվյալով չհիմնավորված հակապատմական ենթադրություններ անելու:

15-րդ դարում բուռն կերպով զարգացող մետաքսագործությունը 16-րդ դարում սկսում է անկում ապրել: Դա մեծ մտահոգություն էր սլատճառում օսմանյան պետությանը, որը մետաքսի առևտրից ամեն տարի 6—7 միլիոն ակչե եկամուտ էր ստանում⁷: Փորձելով մեկնաբանել մետաքսագործության զարգացմանը խանգարող ներքին և արտաքին գործոնները, ինչպես վասիլքանների, այնպես նաև թուրքական և եվրոպական աղբյուրների տվյալներով Ֆ. Դալսարը ընդգծում է նախ՝ ամեն քայլափոխին մետաքսագործներից գանձվող ահռելի հարկերը, ապա Արևմուտքում զարգացող մանուֆակտուրային արտադրության մրցակցությունը և հատկապես անվերջ բորբոքվող պատերազմները Արևելքում: Պատերազմներ, որոնց հետևանքով վտանգվում էին կարավանային ճանապարհները և խանգարում հումքի մատակարարմանը, որն, ինչպես վերը տեսանք, գալիս էր հենց ռազմական գործողությունների թատերաբեմ հանդիսացող շրջաններից:

Սակայն մյուս կողմից, ինչպես ճիշտ կերպով նկատված է, տասնամյակներ շարունակվող ավերիչ պատերազմների գլխավոր նպատակը՝ այդ մետաքսով հարուստ շրջանների նվաճումն էր և կցումը Օսմանյան կայսրության:

Պարսկա-օսմանյան հարաբերությունների մեջ մետաքսը շատ կարևոր տեղ էր գրավում: Շուրջ երկու հարյուրամյակ տևող թշնամության և արյունահեղ ընդհարումների շրջանում, մի քանի անգամ կնքված հաշտության պայմանագրերում, հատուկ հոգվածով խոսվում էր Իրանից դեպի Թուրքիա մետաքսի առաքումների մասին: Շահ Թահմազի օրոք 1555 թ. կնքված պայմանագրում նշվում էր, որ Իրանի շահինշահը ամեն տարի 200 բեռ մետաքս էր «նվիրում» սուլթանին: Նվերի անվան տակ ամեն տարի որոշակի քանակով ուղարկվող մետաքսի մի մասը, տրվում էր գործված, իսկ մյուս մասը անմշակ վիճակում: Մոտավոր հաշվումներով այդ 200 բեռի քաշը 30000 կիլոգրամ էր լինում, որ հատուկ արարողություններ և օսմանցիների կողմից մեծ շուքով կատարվող ընդունելության պայմաններում, հանձնվում էր Դիարբեքիում: Թե որքան մեծ էր այդ մետաքսի նշանակությունը թուրքերի համար, այդ երևում է Ֆ. Դալսարի կողմից վկայակոչված այն փաստից, որ երբ մի տարի մետաքսի հանձնումը ուշանում է, և թուրքերն այդ մասին հիշեցնում են Շահ Աբբասին.

⁷ Նույն տեղում, էջ 305:

նա զայրացած գոչում է. «Հարկատու՛ւ ենք, ի՛նչ է»⁸: Նկատված է նաև, որ պատերազմական գործողությունների վերսկսմանը միշտ էլ նախորդել է մետաքսի առաքման ընդհատումը պարսիկների կողմից:

Ամեն պարագայում Արևելքում թուրքերի նվաճումները չէին ընդգրկում թթի մշակության և շերամապահական տնտեսության մեջ հայտնի այնպիսի շրջաններ, որոնք կարող էին մետաքսի հումքի մատակարարման տեղական աղբյուրներ լինել: Ամբողջ 16-րդ դարում շարունակվող պատերազմները դադարեցին միայն 1590 թ. Կոստանդնուպոլսի հաշտության մեջ, որից հետո շուրջ 15 տարի ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը մնացին թուրքական տիրապետության տակ: Թուրքերը շարունակեցին նվաճել Կասպից ծովի առափնյա շրջանները՝ Լենքորանը, Արդաբիլն ու Գիլանը, որոնք մետաքսի արտադրության գլխավոր կենտրոններն էին: 1605 թ. վերսկսված պատերազմի հենց առաջին տարում պարսիկները կարողացան ետ գրավել Ատրպատականն ու Անդրկովկասը: Շուրջ 30-ամյա կռիվներից հետո 1639 թ. կնքված հաշտության պայմանագրով թուրքերը ստիպված եղան ետ քաշվել նախկին սահմանները: Այս խաղաղությունը տևեց շուրջ 80 տարի: 1724 թվականին, երբ աֆղանների արշավանքների հետևանքով երկիրը ենթարկվեց անիշխանության, թուրքական զորքերը նորից մուտք գործեցին Իրանի հյուսիս-արևմտյան սահմանները: Այս անգամ ևս թուրքերին չհաջողվեց տեղադնել մետաքսագործության հարուստ շրջանների: Ռուսական զորքերը արագ կերպով գրավեցին Կասպիականի ափերը՝ Գիլանը, Մազանդարանն ու Աստարաբադը և հաստատվեցին Անդրկովկասի մետաքսագործության ամենախոշոր կենտրոնում՝ Շամախիում: Տեղական բնակչության կողմից թուրքական իշխանություններին ցույց տրվող համադիմադրությունը թույլ չտվեց նաև թեկուզ կարճ ժամանակով հաստատվելու Սյունյաց և Արցախի շերամապահական շրջաններում (Զանգեզուր և Ղարաբաղ):

Սխալվում է Ֆ. Գալսարը իրանական մետաքսի դեպի Անադոլու առաքումների նվազումը բացատրելով սոսկ Արևելքում շարունակվող պատերազմական վիճակով: Նա շրջանցում է այն փաստը, որ 17-րդ դարի 80-ամյա խաղաղության շրջանում ևս մետաքսի առևտուրը Իրանի և Թուրքիայի միջև շարունակվեց: Թեև դեռ կարավանների երթևեկությունը շարունակվում էր, սակայն առևտուրը տրանզիտային էր: Իրանական մետաքսը Իզմիրի վրայով գնում էր դեպի Վենետիկ, Ճենովա, Ամստերդամ և Արևմտյան Եվրոպայի այլ արդյունաբերական կենտրոններ: Պետք է ասել, սակայն, որ այս ճանապարհն արդեն երկրորդական դեր էր խաղում: Գիլանի և Մազանդարանի մետաքսը դեռ Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից սկսած, մեծ մասամբ նոր Զուղայի հայ վաճառականների միջոցով արտահանվում էր Պարսից ծոցի նավահանգիստներից: Այս վաճառականներից շատերը շահի առևտրական գործակալներն էին (کاسبان خاصه شریانی - թաշեր-ե խասսե-յե շարիֆե) և արտահանում էին անձամբ շահի կամ խասսեյե շարիֆեի մետաքսը: 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած Թուրքիան, հատկապես Բուրսան այլևս այն շահավետ շուկան չէր և չէր հրապուրում մետաքսի մեծաքանակ առևտրով զբաղվող վաճառականներին: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ կարավանային ճանապարհները անապահով էին և ենթակա ավազակային հարձակումների: Թուրքիայում չկար

⁸ Նույն տեղում, էջ 304:

բուրժուական շահույթի հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա սեփականության ապահովությունը⁹:

Այդուհանդերձ իրանահայ վաճառականությունը շարունակում էր օգտվել մետաքսի առևտրի ավանդական ճանապարհներից, միաժամանակ որոնելով տրանզիտային առևտրի ավելի ապահով ճամփաներ: 17-րդ դարի 60-ական թվականներից սկսած ջուղայեցի խոջաները բանակցություններ էին վարում Ռուսաստանի հետ Աստրախանի և Վոլգայի վրայով իրանական մետաքսը դեպի Եվրոպա փոխադրելու ավելի նպաստավոր պայմանների համար: 1666 թ. Ալեքսեյ Միխայլիովիչ ցարին ուղղված դիմումի մեջ նրանք գանգատվում էին թուրքիայում տիրող անիշխանությունից, կարավանների վրա կատարվող հարձակումներից և կողոպուտից, ինչպես նաև ամեն քայլափոխին գանձվող ահռելի տուրքերից¹⁰:

Հաջորդ տարին Ալեքսեյ ցարը հատուկ պայմանագիր կնքեց ջուղայեցի խոջաների ընկերության հետ, որով նա որոշ արտոնություններ էր տալիս հայ վաճառականներին, սահմանելով համեմատաբար ավելի ցածր մաքսային նորմեր¹¹: Սակայն, ինչպես ցույց է տալիս ակադ. Աշ. Հովհաննիսյանը, Ռուսաստանի վրայով կատարվող տրանզիտային առևտուրը մեծ շահեր չընդունեց և չկարողացավ լրիվ կերպով փոխարինել թուրքիայի վրայով կատարվող առևտրին¹²: Ավելի խրախուսելու համար հայ վաճառականությունը, 1689 թ. Մոսկվայի պետությունը արևելյան բոլոր ազգերի առևտրականներին զրկեց Ռուսաստանի վրայով առևտուր անելու իրավունքից, այն դարձնելով միայն հայերի մենաշնորհը: 1711 թ. նոր պայմանագրով վերանորոգվեցին 1667 թ. հայ վաճառականությանը տրված արտոնությունները: Սակայն միջազգային քաղաքական և տնտեսական իրադրությունը այնպիսին էր, որ Ռուսաստանի վրայով կատարվելիք առևտուրը ամեն կերպ պիտի խոչընդոտվեր «ոչ միայն թուրք առևտրական ուղիների վրա գերիշխող ֆրանսիական կապիտալի, այլև օվկիանոսային ճանապարհների վրա գերիշխող անգլիական կապիտալի կողմից»¹³:

Հակամարտությունը այս հողի վրա շարունակվեց մինչև 1725 թվականը, երբ արդեն Պետրոս Ա-ին հաջողվեց ռազմակալման ենթարկել Իրանի մետաքսագործության ամենահարուստ նահանգները: 1725—1735 թթ. սկզբնաղբյուրներն ու դիվանական նյութերը վկայում են, սակայն, որ պայքարը մետաքսի համար շարունակվել է նաև այս շրջանում: Որոշ վիճակագրական տվյալների համաձայն, ռազմակալման միայն առաջին հինգ տարիների ընթացքում ռուսական իշխանությունները Գիլանից արտահանվող մետաքսից և այլ ապրանքներից 734661 ռուբլի մաքս էին գանձել¹⁴: Այդ նշանակում է, որ միջին հաշվով

⁹ Փ. Энгельс, Внешняя политика русского царизма, «К. Маркс и Ф. Энгельс, Сочинения» том XVI, часть II, первое издание, Москва, 1936, стр. 22.

¹⁰ Армяно-русские отношения в XVII веке, сборник документов, Ереван, 1953, стр. 37.

¹¹ Նույն տեղում, էջ 62—65:

¹² Աշոտ Հովհաննիսյան, Գրվազներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 448:

¹³ Նույն տեղում, էջ 451:

¹⁴ П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, том I, СПб, 1869, էջ 150.

տարին 146932 ռուբլի եկամուտ էր ստացվում միայն այդ մի կետից, որ իհարկե ամենահարուստ շրջանն էր:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է մի համաձայնագիր կնքված՝ մի կողմից՝ Թավրիզի փառայի և մյուս կողմից՝ մի խումբ թուրք վաճառականների միջև, որտեղից իմանում ենք, որ այդ տարիներին էլ դեռ շարունակվում էր Գիլանի մետաքսի առաքումը դեպի Միջերկրականի թուրքական նավահանգիստները: Վավերագրում համաձայնություն էր կայացվում մետաքսի բեռներից գանձվող մաքսի չափերի մասին, նշվում էր նաև, որ այն գանձվելու էր միայն Արդարիլում և Թավրիզում և կարգադրվում՝ Ատլըրպատականի մյուս քաղաքների ոահարներին, Թավրիզից անցած մետաքսի բեռներից ոչ մի ալիք մաքս չպահանջել:

Փաստաթղթի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ թուրքական իշխանությունները այդ տարիներին ամեն կերպ աշխատել են նպաստավոր պայմաններ ստեղծել և արտոնություններ տալ թուրք վաճառականներին ներգրավելու համար նրանց, Օսմանյան պետությանը մեծ եկամուտներ բերող մետաքսի առևտրի մեջ: Եկամուտներ, որոնք գոյանում էին տարանցիկ առևտրից գանձվող և հատկապես նավահանգստային մաքսերից: Ինչպես հաստատում է նաև Ֆ. Դալսարը, իրանական մետաքսը 18-րդ դարում Թուրքիա էր ներմուծվում արդեն ավելի շատ ոչ թե որպես հումք տեղական արհեստագործության համար, որն այլևս ի վիճակի չէր մրցելու արևմտյան մանուֆակտուրային արտադրության հետ, այլ հիմնականում՝ որպես տարանցիկ ապրանք, որ գնում էր սպառվելու Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական կենտրոններում:

Թուրք վաճառականների հետ կնքված այս համաձայնագրի բնագրի պահպանումը էջմիածնի կաթողիկոսական դիվանում հուշում է նաև, որ թուրքական իշխանությունները ցանկացել են մաքսային նոր կարգի մասին տեղեկացնել նաև հայ վաճառականությանը, որոնք, ինչպես վերը տեսանք, դարձրել շարունակ առաջատար դեր ունեին իրանական մետաքսի արտահանման գործում:

Այս միջոցառումներն անշուշտ անզոր ճիգեր էին միայն բանուկ պահելու հաղարամյակների անցյալ ունեցող կարավանային ճանապարհները, որոնցից ստացվող եկամուտները կարևոր տեղ էին գրավում Օսմանյան կայսրության ֆինանսներում: Ինչպես ցույց է տալիս Ֆ. Դալսարը, պաշտոնական տվյալների համաձայն 19-րդ դարի երկրորդ կեսում արդեն, երբ կայսրության տարբեր հատվածներում ևս շերամապահությունը բավական զարգացել էր, Միջերկրականի թուրքական նավահանգիստների վրայով Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա արտահանվող մետաքսի 26 տոկոսը գալիս էր Սիրիայից և Պաղեստինից, 24 տոկոսը՝ Թուրքիայից (Անադոլու), 20 տոկոսը՝ Կովկասից, 11 տոկոսը՝ Իրանից, 7 տոկոսը՝ Հայաստանից և 12 տոկոսը՝ Թուրքեստանից (Միջին Ասիա)¹⁵: Եթե ի նկատի ունենանք, որ Կովկասն ու Հայաստանը (ի նկատի ունի Արևելյան Հայաստանը.—Շ. Փ.) նախկինում իրանական տիրապետությունների մեջ էին մտնում, ապա կտեսնենք, որ 15—16-րդ դարերում համարյա 100 տոկոսով իրանական մետաքս արտահանող նավահանգիստներից, 19-րդ դարում արտահանվող մետաքսի միայն 31 տոկոսն էր գալիս Իրանից և նախկինում Իրանին ենթակա Անդրկովկասից:

¹⁵ F. Dalsar, նշված աշխատությունը, էջ 452:

Ստորև հրատարակում ենք 1729 թ. հիշյալ համաձայնագրի թուրքերեն բնագրի մեր վերծանությունն ու վավերագրի լուսանկարային պատճենը, տալով նաև բովանդակության հայերեն թարգմանությունը.

ԹԱՎՐԻՋԻ ՓԱՇԱՅԻ ԵՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԹՈՒՐՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ
1729 թ. ԹԱՎՐԻՋՈՒՄ ԿՆՔՎԱՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

(Մասեևդարան, կրդկ. դիվան, բղթապանակ, 1 գ, վավ. 325, մեծ. 29×22 սմ. բնագիր).

Հստ այսմ թող գործագրվի. (ստորագրություն)

Գրությանս պատճառն այն է, որ սույն հազար հարյուր քառասուն մեկ թվականի (1729) մարտի սկզբից մինչև շուբաթի (փետրվար) վերջը, Թավրիզում վաճառականների հետ համաձայնություն է կայացել, որ Գիլանի կողմից փոխադրվող մետաքսի բեռներից՝ յուրաքանչյուր գրաստի բեռան համար Արդաբիլում շորսական ղուրուշ, իսկ Թավրիզում 16-ական ղուրուշ և շորս հակից բաղկացած մեկ ուղտաբեռից դարձյալ Արդաբիլում 4-ական՝ իսկ Թավրիզում 36-ական ղուրուշ մաքս գանձվի:

[Այս մասին] մենք մեր հոժար կամքով վերոհիշյալների (վաճառականների) հետ պայմանավորվել ենք, որպեսզի նրանք էլ իրենց մետաքսի բեռները այլ տեղով չտանեն, այլ բերեն Թավրիզ և նշված հոժարակամ պայմանավորվածության համաձայն մաքսը վճարելուց հետո, բացի Թավրիզից և նրան ենթակա վայրերից, ոչ Սարաբում, ոչ էլ Մարանդում, Չորսում, Մարաղայում, Սոյուղ-Բուլաղում և կամ այլ վայրերում, որտեղ ուսհարություններ կան, նրանցից ուսհարության անունով ոչ մեկ ակշե և ոչ մի հատիկ չպիտի գանձվի, վերոհիշյալ կերպով [մաքսը] վճարելուց հետո, ավել կամ պակաս պահանջներով ոչ մեր և ոչ նրանց կողմից որևէ վեճ չպետք է լինի, որի համար էլ այս գրությունը տրվեց նրանց:

1. Նվաստ Ալի-աղա Գյումուշխանեցի
կնիք. Հավիտենականության տիրոջ ծառան է՝ Ալին*
2. Նվաստ Սուլեյման-աղա
կնիք. Ամենակալ աստծու աղոթարար ծառան է Սեյիդ-Սուլեյմանը.
3. Նվաստ Իմամ-զադե Ահմադ-աղա
կնիք. Թող Ահմադը արժանանա ով տեր քո գթություն.
4. Նվաստ Աբդուլլա-աղա
կնիք. Աստծու ծառա՝ Աբդուլլա
5. Նվաստ Քյոդակ Ալի-աղա
կնիք. Հավիտենականության տիրոջ ծառան է Ալին.
6. Նվաստ Կարա Իբրահիմ-աղա
կնիք. Իբրահիմ—1140 (1728)

* Կնիքները դրված են յուրաքանչյուրի անվան ճիշտ հակառակ կողմը, թղթի մյուս երեսի վրա: Փորձել ենք վերծանել նաև կնիքների մակագրությունները, որոնք իսլամական կնքագրություն համար որոշ հետաքրքրություն են ներկայացնում.

7. Նվաստ Ալի(°)-աղա, հաջի Ահմադ-աղա մաքսատան լիազոր Թավ-րիզում
կնիք. Արժանի արա քո գթությանը ո՛վ տեր Ահմադին.
8. Նվաստ Բեքիր-աղա Արաբկիրցի
կնիք. Աստծու սեմին կապավինեմ,
Աբուբաքրն եմ, չորս սիրելու սիրեցյալն եմ:
9. Նվաստ Մուստաֆա-աղա
կնիք. Տիեզերքի փառքի ոտքի հողը՝ Մուստաֆա, 1138 (1726)
10. Նվաստ Աբուբաքր-աղա
կնիք. Աբուբաքրն եմ՝ չորս սիրեցյալի սիրելին եմ, 1139 (1721)
11. Նվաստ հեծյալ(°) Մուհամմադ-աղա
կնիքի կենտրոնում. նրա ծառան՝ Մուհամմադ.
չուրչը՝ մի անընթեռնելի քառյակ
12. Նվաստ Իսմայիլ-աղա
կնիք. Ապավինում եմ իմ արարչին, նրա ծառան՝ Իսմայիլ
13. Նվաստ Սինան-աղա և Հասան-աղա
կնիք. Քո զինվորն եմ ես ո՛վ Իմամ Հասան
14. Նվաստ Սալեհ-աղա
կնիք. Ապավինում եմ իմ արարչին, նրա ծառան՝ Սալեհ
15. Նվաստ Մուհամմադ-աղա շորումցի
կնիք. Թող Ահմադը արժանանա ո՛վ տեր քո գթությանը
16. Նվաստ Սեյիդ Հասան-աղա
կնիք. Քո զինվորն եմ ես ո՛վ Իմամ Հասան
17. Նվաստ Իբրահիմ-աղա անգարացի
կնիք. Ամեն մի բռնություն կանցնի այս պատվավոր անունով,
Իբրահիմ անունը քեզ ամեն վտանգից կպահպանի:

Լուսանցքում.

Ստորագրված և կնքված իսկականի հետ նույնն է.
Գրեց՝ ամենակարող աստծու փառքի առաջ տնանկ՝ մեվլա Սեյիդ-Սուլեյմանը, որ փոխարինում է Թավրիզ քաղաքում: Թող աստված ների նրան:
կնիք. Հավատացյալների համար գթություն խնդրող՝ մարգարեի ծառա՝ Սեյիդ-Սուլեյման*

* Իսկականի հետ ճիշտ լինելու մասին սույն մակագրությունից պետք է եզրակացնել, որ համաձայնագիրը կազմված է եղել մի քանի օրինակից, տարբեր մարդկանց և տարբեր տեղեր ներկայացնելու համար: Վավերագիրը նոտարական պատճեն չէ. այն վավերացված և կնքված է համաձայնվող կողմերի ստորագրությամբ և կնիքներով:

ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲՆԱԳԻՐԸ

صح

موجبته عمل اولنمق

باعث تمسك دركه

اشبو بيك يوز قرق بر سنهسى مارت ابتدا سندن شباطن غايتنه
 كلنجه تبريزده بازاركانلرايله قول قرار اولنان كيلان طرفندن مرور عبور
 ايده جك حرير يوكلرينك هر بار كير يوكى لر يندن اردبيلده دُردر غروش
 و تبريزده اون التى شر غروش و دوه يوكى چارطاي اولور ايسه ينه اردبيلده
 دُردر غروش و تبريزده اوتوز التى شر غروش رسم كمرک النمسى حسن
 رضامزاييله مسفورلرايله قول و مسفورلر دخى حرير يوكلرينى بر آخر
 محلدن كوتور ميبوب تبريزه كتوروب منوال مشروح اوزره حسن رضامزاييله
 قول قرار ايلدوكمز كى رسم كمرکلرينك ادا ايلدكدن صكره غيرى
 تبريز و توابعلرينده كرك سراب و مرند و جورس و مراغه و سوق
 بولاق و ساير راهدارلغ اولان يرلرده راهدارلغ ناميله بر افجه و بر
 حبه النيبوب منوال مشروح اوزره ادا ايلدكدن صكره زياده و نقصان
 طلبيله كرك طرفلريمز و كرك ظرفلريندن نزع* اولنمق اوزره بدلرينه
 اشبو تمسك ويرلدى

الفقير كوش خانه لى على اغا**

مهر- بنده ازلى عبده على

الفقير سليمان اغا

مهر- الله حسبي بنده داعى سيد سليمان

الفقير امام زاده احمد اغا

مهر- لطفك [مظهري] اوله يارب احمد

الفقير عبد الله اغا

مهر- بنده خدا عبد الله

الفقير ارض روملى كودك على اغا

مهر- بنده ازلى عبده على

* نظر

** بنه اگريون

۱۱۶۰
۱۱۶۰
۱۱۶۰


۱۱۶۰

مجلس علمیه عالی

بسم الله الرحمن الرحيم
الحمد لله رب العالمين
والصلاة والسلام على سيدنا محمد
الذي بعث في طينتنا نورا
مضيئا
وهدانا الى صراط مستقيما
الذي جعل في قلبه
الهدى والبرهان
والذي جعل في صدره
الرحمة والشفقة
والذي جعل في لسانه
الحق والعدل
والذي جعل في يده
القسط والعدل
والذي جعل في راسه
العلم والحكمة
والذي جعل في عينه
البصيرة والهدى
والذي جعل في اذنيه
السمع والبصيرة
والذي جعل في بطنه
الرحمة والشفقة
والذي جعل في رجليه
الهدى والبرهان
والذي جعل في يده
القسط والعدل
والذي جعل في راسه
العلم والحكمة
والذي جعل في عينه
البصيرة والهدى
والذي جعل في اذنيه
السمع والبصيرة
والذي جعل في بطنه
الرحمة والشفقة
والذي جعل في رجليه
الهدى والبرهان

بسم الله الرحمن الرحيم
الحمد لله رب العالمين
والصلاة والسلام على سيدنا محمد
الذي بعث في طينتنا نورا
مضيئا
وهدانا الى صراط مستقيما
الذي جعل في قلبه
الهدى والبرهان
والذي جعل في صدره
الرحمة والشفقة
والذي جعل في لسانه
الحق والعدل
والذي جعل في يده
القسط والعدل
والذي جعل في راسه
العلم والحكمة
والذي جعل في عينه
البصيرة والهدى
والذي جعل في اذنيه
السمع والبصيرة
والذي جعل في بطنه
الرحمة والشفقة
والذي جعل في رجليه
الهدى والبرهان

1729 P. Qur'anic Manuscript Photographed by the Library of the Islamic Consultative Assembly



الفقير قرا ابراهيم اغا

مهر- ابراهيم- ۱۱۴۰

الفقير على (?) اغا الحاجى احمد اغا امين كهرک تبريزده

مهر- لطفك مظهرى اوله يارب احمد

الفقير عربكرلو بكر اغا

مهر- اميد زدرگاه خدا دارم ابوبكرم محب چار يارم

الفقير مصطفى اغا

مهر- خاك پاي فخر عالم مصطفى- ۱۱۳۸

الفقير ابوبكر اغا

مهر- ابوبكرم محب چهار يارم- ۱۱۳۹

الفقير فطنه (?) محمد اغا

مهر- اورته ده «عبدہ محمد» در د طرفده بر رباعى

الفقير اسماعيل اغا

مهر- توكلى على خالقى عبدہ اسمعيل

الفقير سنان اغا و حسن اغا

مهر- عسكرى يا امام حسن

الفقير صالح اغا

مهر- توكلى على خالقى عبدہ صالح

الفقير جورملى محمد اغا

مهر- لطفك مظهرى اوله يارب محمد

الفقير سيد حسن اغا

مهر- عسكرى يا امام حسن

الفقير انكورلى ابراهيم اغا

مهر- هر بر ظلم كچه اشبو اسمى معتبر

اسمى ابراهيم نميرود سندن حفظ ايدر

طبق اصله الممضى المختوم. نمقه الفقير الله عزجل السيد سليمان

المولى خلافه بمدينه تبريز غفرله

مهر- رضا جوينده الطاف مبین رسولك بندسى سيد سليمان

А. Д. ПАПАЗЯН

РОЛЬ АРМЯН В ПРОИЗВОДСТВЕ ШЕЛКА В ТУРЦИИ И ДОГОВОР, ЗАКЛЮЧЕННЫЙ В 1729 г. В ТАВРИЗЕ

Р е з ю м е

В монографии Ф. Далсара¹, вышедшей в свет в 1960 г. в Стамбуле, особо подчеркивается, что начиная с XIV в. армяне играли важную роль в производстве шелка в Анатолии. Именно при их посредстве иранское шелковое сырье ввозилось в Анатолию из Гиляна, Азербайджана и Армении.

Однако, начиная с XVIII в., иранский шелк экспортировался в Турцию не в качестве сырья для местного промысла, который уже не был в состоянии соперничать с западным мануфактурным производством, а главным образом как транзитный товар, приносящий ежегодно Османской державе по 6—7 миллионов акче дохода. Но начиная с XVII в. значительная часть иранского шелка экспортируется через порты Персидского залива; армянские же купцы получают по договору, заключенному ими с русским царем, право экспортировать шелк в Западную Европу через Россию на более льготных условиях.

В 1725—1735 гг., когда русские войска временно оккупировали важнейшие шелководческие районы Ирана, турецкие власти пытались задобрить купечество путем введения более доступных таможенных норм.

В данной статье публикуется договор, заключенный между Тавризским пашой и группой купцов. Подлинник договора хранится в настоящее время в архивном отделе Матенадарана имени Маштоца.

H. D. PAPA ZIAN

LE ROLE DES ARMÉNIENS DANS LA PRODUCTION DE LA SOIE EN TURQUIE ET LE TRAITÉ CONCLU À TABRIZ EN 1729

La monographie de F. Dalsar „Türk sanayi ve Ticaret Tarihinde Bursa'da İpekçilik“ (Çalışma Vekâleti Araştırma Kurulunda, İstanbul, 1960) attire l'attention sur le rôle particulièrement important que jouèrent les Arméniens dans la production de la soie en Anatolie à partir du XIV^e siècle.


Au XVIII^e siècle, la soie iranienne est exportée en Turquie non plus pour les besoins de l'industrie locale, désormais inapte à rivaliser avec les manufactures d'Occident, mais principalement comme marchandise de transit fournissant au trésor ottoman un revenu annuel de 6 à 7 millions d'aktché.

¹ Türk sanayi ve Ticaret Tarihinde Bursa'da İpekçilik, Fahri Dalsar, Çalışma Vekâleti Araştırma Kurulunda, İstanbul, 1960.

Au XVII^e siècle déjà, la majeure partie de la soie iranienne est acheminée depuis les ports du Golfe Persique. Un traité conclu entre le Tzar de Russie et les négociants arméniens autorisait ces derniers à faire transiter la soie destinée à l'Europe occidentale en Russie à des conditions plus favorables.

En 1725—1735, les Russes ayant occupé provisoirement les principales régions séricicoles d'Iran, la Turquie s'efforça de se gagner la confiance des marchands en introduisant des tarifs douaniers accessibles, ce qui donna lieu à la conclusion d'un traité (Tabriz, 1729) entre le Pacha du lieu et un groupe de marchands.

L'original de ce document se trouve conservé à la Section des Archives du Maténadaran d'Érévan.



ՌԱՅԱԹՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ԱՐԵՎԵԼ-
ՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 16-18-ՐԴ ԴԴ. ԵՎ ՇԱՀ ՍՈՒԼԹԱՆ
ՀՈՒՍԵՅՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

Հ. Դ. ՓԱՓԱԶՅԱՆ

16-18-րդ դդ. պատմողական սկզբնաղբյուրներում, ինչպես նաև դիվանական-պաշտոնական վավերագրերում, Արևելյան Հայաստանի աշխատավոր գյուղացիության՝ ռայաթների իրավական ազատության կամ ընդհակառակը՝ հողին ամրացված լինելու մասին որոշակի հիշատակություններ չկան: Ուստի, ուսումնասիրողների մոտ, մինչև օրս, այդ հարցի վերաբերյալ վերջնական տեսակետ գոյություն չուներ:

Հայտնի է, որ սեֆյան Իրանում չկային ճորտատիրական այնպիսի հարաբերություններ, ինչպիսիք նույն ժամանակներում և հետագայում գոյություն են ունեցել Վրաստանում և նախառեֆորմյան Ռուսաստանում: Նշված է հատկապես, որ Արևելյան Հայաստանի այն շրջաններում, որոնք 16-18-րդ դդ. մտնում էին վրացական վալիությունների կազմի մեջ, գյուղացիների սոցիալ-իրավական վիճակը արմատապես տարբերվում էր հարևան Չուխուր-Սա'դի (Արարատյան երկիր) և Ղարաբաղի (Սյունիք-Արցախ) բեկլարբեկություններում ապրող ռայաթների վիճակից: Այդ վայրերին վերաբերող վավերագրերից բավական պարզ երևում է, որ գյուղացիներն այնտեղ գտնվում էին ճորտային վիճակում և առուծախի էին ենթարկվում կամ նվիրվում էին վանքերին: Հողի վաճառքին կամ նվիրատվությանը վերաբերող արձանագրություններում առաջին հերթին խոսվում էր ճորտ շինականների և ապա միայն նրանց տների, հողերի, ջրի, արոտավայրերի և մյուս ստացվածքների վաճառքի մասին:

Սանահնի վանքի «Քյոթուզի» մեջ պահպանվել են այդ կարգի բազմաթիվ փաստաթղթեր: Այսպես օրինակ 1660-1670 թթ.

վերաբերող մի արձանագրութեան մեջ կարգում ենք. «Կամաւն ամենազաւրին յաստուծոյ եւ Չալբեկի որդի Գասպարս, իմ որդի Գօգիս, Բերաւս, Բեժիս, Խաւսիս մեր կամաւ եւ յօժարութեամբ մեր ընդովս մեր Ոռնակա ծիլ շինական Շիխու Մխիթարին, Ակոբն, Խէչիկն ծախեցինք վերայ Սարգիս պարոնտէրին, իրենց տեղովն, իրենց հողովն, իրենց ջրովն թէ պահէզատեղ, թե այգու տեղ, թե հորսագահ իր արօտգահ-հովն, թէ սար թե ձոր ամեն ծախեցինք ի վերայ Սարգիս պարոնտէրին: Պարոն տէրն գնեց, վախմ արավ Սանահնա սուրբ Աստուածածնին»¹:

Ինչպես տեսնում ենք այստեղ ճորտ գյուղացիները իրենց մշակած հողերի եւ ամբողջ ունեցվածքի հետ վաճառվում են վանքի վանահայր Սարգիս եպիսկոպոսին եւ ի վերջո վակֆ են տրվում վանքին:

Նման երևույթ սակայն չի նկատվում այս վայրերի անմիջական հարեաններ հանդիսացող Արարատյան երկրում եւ Սյունյաց ու Արցախի մերձակա շրջաններում: Մուլքերի առուծախին եւ նվիրատվութեանը վերաբերող արձանագրություններում եւ կալվածագրերում հիշատակվում են սեփականութեան ենթակա ամեն ինչ, բացի հողագործ ռայաթներէրց: Գյուղերը վաճառվում էին իրենց «բոլոր սահմաններով եւ իրավունքներով, ենթակա եւ կից, հավելյալ եւ հարակից վայրերով, օգտագործվող եւ չօգտագործվող, մշակված եւ անմշակ հողերով, հանդերով, արոտավայրերով եւ խոտհարքներով, ոչխարների արոտատեղերով եւ կովերի ու ձիերի կայաններով լեռներով ու բլուրներով, այրերով ու ապաստարաններով, դաշտերով եւ մարգագետիններով, ջրհորներով, շրջակա հողերով եւ ստորերկրյա անցքերով, ջաղացատեղերով եւ այգետեղերով, քարերով եւ ծառերով, առուներով, ակունքներով եւ ջրանցքներով, երեխաների խաղատեղերով եւ ծերունիների ու պատանիների հավաքատեղիներով, կից եւ անջատ, ներքին եւ արտաքին ամեն ինչով եւ այն ամեն բանով, որ գտնվում է հիշյալ սահմանների մեջ եւ ենթակա է վաճառման դրամով»: Նշվում էր նաև, որ սեփականացման ենթակա չեն միայն «չարիաթական բացառությունները՝ մզկիթներ, գերեզմանոցներ, ճանապարհներ եւ անցուղիներ ինչպես նաև եկեղեցապատկան հողերը»²: Կալվածագրերում

¹ Մատենադարան, ձեռ. 3031, էջ 208ա–208բ, տե՛ս նաև էջ 186բ, 187ա–187բ, 188բ, 201բ, 203բ, 204բ, 206ա:

² «Մատենադարանի պարսկ. վավերագրերը», II, կալվածագրեր, պրակ Ա, կազմեց՝ Հ. Դ. Փափաղյան, Երևան, 1968, վավ. 4, նաև վավ. 5, 7, 9, 13 եւ այլն:

ոչ մի խոսք չկար սակայն այդ հողերը մշակող հողագործ ուսյաթների մասին: Պատճառն այն էր, որ համայնքի անդամ հողագործ գյուղացին մոռուլմանական շարիաթական իրավունքով ազատ էր համարվում: Նրա կախումը կալվածատիրոջից իրավականորեն արտահայտվում էր օգտագործվող հողերից ստացվող արդյունքի որոշ մասի հատուցումով գյուղի սեփականատիրոջը:

Նշված է սակայն, որ կալվածատիրոջից անձնական կախման մեջ չլինելով հանդերձ ուսյաթները ազատորեն չէին կարող մի տեղից մի այլ տեղ տեղափոխվել: Աղբյուրներում կան տվյալներ, որոնք վկայում են թե ինչպես շատ դեպքերում գյուղատերերը, մալիքներն ու թիրուղարները կարողացել են պետական իշխանությունների օգնությամբ ետ բերել գյուղից փախած կամ իրենց համայնքը լքած ուսյաթներին³:

Այդ հարկադրական վերադարձը որոշ ուսումնասիրողների կողմից գիտվել է որպես ճորտատիրական հարաբերությունների արտահայտություն: Պ. Հարությունյանը նույնիսկ մուլքատիրական գյուղերում բնակվող ուսյաթներին անվանում է «ճորտ գյուղացիներ»⁴: Նման եզրակացություն համար, ինչպես ստորև կտեսնենք, բավարար հիմքեր չկան:

Առանձին գյուղերից հեռացած կամ ինչպես պարսկալեզու աղբյուրներում հաճախ հանդիպում է, «ցրված ուսյաթների» («ուսլայյե մութաֆարիկե») հարկադիր վերադարձը իրենց նախկին բնակավայրը, անշուշտ որևէ իրավական հիմք է ունեցել: Այդ հարցի վերաբերյալ ավելի որոշակի օրենսդրական տվյալներ կան իլխանական շրջանի պատմիչների, հատկապես՝ Ռաշիդ-էդ-գինի մոտ: Հարկային պարտավորություններով ուսյաթների տվյալ վայրին ամրացված լինելու օրենքը պարզորոշ կերպով ձևակերպված է Ղազան-խանի յաուլիդներում⁵:

Հենվելով այդ նյութերի վրա Ի. Պ. Պետրուշևսկին, Ա. Ա. Ալի-Ջադեն և իլխանական շրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվող այլ մասնագետներ, նշում են, որ Ղազան-խանի օրոք գինվորականությանը որպես իկթա տրված մարզերի գյուղերում բնակվող ուսյաթները, եթե

³ П. Т. Арутюнян, Освободительное движение армянского народа в первой четверти XVIII века, М., 1954, стр. 36-38.

⁴ Նույն տեղում:

⁵ Фазлуллах Рашид-ад-дин, Джами-ат-таварих, т. III, Баку, 1957, պարսկերեն բնագիր, էջ 514:

փորձեին թողնել իրենց բնակավայրը և գնային ու բնակվեին այլ վայրում, մինչև 30 տարի ենթակա էին վերադարձման: Եթե իհարկե նրանք նոր վայրում արդեն չէին հաջողել գրանցվել հարկային դաֆթարներում: Միաժամանակ բոլոր իկթադարներին կարգադրվում էր թույլ չտալ այլ վայրերից փախչող ուսյաթներին գալ և բնակություն հաստատել. իրենց իկթայի սահմաններում գտնվող գյուղերում⁶:

Հետագա, ինչպես թուրքմենական այնպես նաև սեֆյան շրջանի սկզբնադրյուրներում, թեև ուսյաթների տվյալ հարկատու օբյեկտին ամրացված լինելու մասին իրավական ձևակերպումներ չկան, սակայն ինչպես վերը նշեցինք, ուսումնասիրողների կողմից վկայակոչված են ուսյաթների բռնի վերադարձման առանձին փաստեր, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ նույն օրենքը, ըստ տեղի և ժամանակի, որոշ փոփոխությունների ենթարկվելով, ուժի մեջ է եղել նաև հետագա՝ 15–18-րդ դարերում:

Այս առումով ավելի ուշագրավ փաստեր են վկայակոչված Ի. Պ. Պետրուշևսկու «Ակնարկներ 16–19-րդ դարի սկզբի Ադրբեջանի և Հայաստանի ֆեոդալական հարաբերությունների պատմության» մենագրության մեջ: Թեև այդ փաստերի որոշ մասը, որ վերաբերում է ուղղմական գործողությունների ընթացքում տեղի ունեցած մասսայական տեղահանություններին, կամ համաճարակների ժամանակ ուսյաթների տեղից-տեղ տեղափոխումները արգելելուն⁷, թույլ են և ոչ համողիչ, սակայն բերված այլ, թեև ոչ այնքան անմիջական օրինակները, մեծ մասամբ ցույց են տալիս, որ ուսյաթները սեֆյան տիրապետության շրջանում ևս տեղափոխման ազատություն չեն ունեցել:

Սակայն ինչպես Ի. Պ. Պետրուշևսկին այնպես նաև Պ. Տ. Հարությունյանը չհետում են որ այդ հարցի վերաբերյալ որևէ պաշտոնական փաստաթուղթ, հրամանագիր կամ հրովարտակ իրենց չի հանդիպել և այլ ուսումնասիրողների կողմից ևս չի վկայակոչվել⁸: Ուստի նրանց եզրակացությունները հիմնված են միայն

⁶ Али-Заде А. А. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII-XIV вв. Баку, 1956, стр. 179, հմմտ. И. П. Петрушевский, Очерки по истории феод. отношений в Азербайджане и Армении в XVI–начале XIX вв. Л., 1949, стр. 251.

⁷ И. П. Петрушевский, նշված աշխատությունը, էջ 252, П. Т. Арутюнян, նշված աշխ. էջ 37 և 38:

⁸ И. П. Петрушевский, նշված աշխատությունը, էջ 252, П. Т. Арутюнян, նշված աշխ. էջ 37–38:

պատմողական կամ մատենագրական աղբյուրների, մեծ մասամբ ոչ այնքան որոշակի տվյալների վրա, որոնք չեն կարող հարցին սպառիչ պատասխան տալ:

Ներկա հոգվածով ուսումնասիրողների ուշադրութանն է ներկայացվում 1710 թ. վերջին կամ 1711 թ. սկզբին Սեֆյան Շահ Սուլթանի Հուսեյնի կողմից հրապարակված մի հրովարտակի բնագիրը, որտեղ բավական պարզ շարադրված է ուսյաթների տվյալ հարկատու շրջանին ամրացված լինելու վերաբերյալ օրենքը⁹: Հրովարտակը մեզ է հասել բնագրով և ներկայումս պահվում է ՀՍՍՀ Մինիստրների Սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ—«Մատենագարանի» Կաթողիկոսական դիվանում (թղթապանակ 1բ, վավ. 234):

Հրովարտակն հրապարակված է ի պատասխան Թուման-ե Նախջևանի Դարաշամբ գյուղի համայնքի կողմից ներկայացված խնդրագրի: Նրանք դիմել են Շահ Սուլթան-Հուսեյնին հայտնելով, որ քանի տարի առաջ իրենց գյուղից 15 ընտանիք հեռացել և բնակութուն են հաստատել Աստապատ գյուղում: Չնայած դրան, հեռացողները իրենց պետական հարկերը (մալոջհաթ, ջիզյա և այլ դիվանական պարտավորութուններ) հատուցել են Դարաշամբի համայնքի միջոցով: Սակայն այդ տարին Աստապատի հարկերի կապալառուն (գաբիթը) արգելք է հարուցել և թույլ չի տվել, որ նրանք շարունակեն իրենց հարկերը նախկին ձևով վճարել: Դարաշամբի համայնքը խնդրում է չահին, որ կամ այդ 15 տնտեսությանը հասնող հարկերի բաժինը զեղչվի Դարաշամբից գանձվող հարկերի ընդհանուր գումարից և կամ կարգադրվի Չուխուր-Սա'դի (Երևան) բեկլարբեկին, որպեսզի վերջինս նրանց վերադարձնի իրենց նախկին բնակության վայրը:

Վկայակոչելով չիա օրենսդրության շեյխ-ուլ-խալամների ու իմամների ֆեթվաների ամփոփումը հանդիսացող «Գերագույն խոսքի», ցրված հասարակութուններին (ժամ'իյաթ-ե թաֆրիկե») վերաբերող հոգվածը, ըստ որի, իրենց բնակավայրը լքած ուսյաթները մինչև 12 տարի ենթակա էին վերադարձման, չահը այս հրովարտակով կարգադրում է Չուխուր-Սա'դի բեկլարբեկին

⁹ Այս հրովարտակի մասին առաջին անգամ խոսել ենք 1954 թ. Պաշտպանության ներկայացված «Ազրարային հարաբերութունները Երևանի խանության մեջ 17-րդ դարում» դիսերտացիոն աշխատության մեջ: Այդ մասին նըշված է նաև աշխատության ավտոռեֆերատում (Ա. Դ. Папазян, Аграрные отношения в Ереванском ханстве в XVII веке, Ереван, 1954, стр. 23):

Աստապատ տեղափոխված այդ 15 ընտանիքներին նորից ետ վերադարձնել Դարաշամբ:

Ինչպես տեսնում ենք հրովարտակր տրված է առանձին դեպքի առնչությամբ, սակայն որքանով որ այնտեղ ամբողջությամբ մեջ է բերված ուսյաթների տեղափոխությունը արդելող օրենքը, ապա այն կարելի է դիտել որպես 16–18-րդ դդ. սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության կնճռոտ հարցերից մեկի լուսաբանությունը օժանդակող կարևոր մի փաստաթուղթ:

Հիշյալ օրենքի կիրառությունը և նրանից բխող տնտեսական, տեխնիկական ու այլ բարդություններին ավելի մանրամասն անդրադարձել ենք Արևելյան Հայաստանի 16–17-րդ դդ. հողատիրություն պատմությանը նվիրված և ներկայումս հրատարակության պատրաստող մենագրության մեջ: Այստեղ, սակայն, հարկ ենք համարում նշելու, որ այդ օրենքի առկայությամբ հանգերձ, որոշակի պայմաններում միշտ էլ տեղի էին ունենում հողագործ ուսյաթների գյուղից-գյուղ տեղափոխություններ: «Յրված» կամ «անջատված» ուսյաթների մասին հի-շատակություններ հանդիպում են ինչպես 14–15-րդ դդ., այնպես նաև 16–18-րդ և նույնիսկ 19-րդ դարի աղբյուրներում և դիվանական վավերագրերում: 17-րդ դարից հատկապես պահպանվել են Արարատյան երկրին և Սյունյաց աշխարհին վերաբերող մի քանի արժեքավոր վավերագրեր, որոնցով կալվածատերերը բողոքում են շահին կամ Ազերբայջանի վեզիրին, թիուղարների, պետական պաշտոնյաների ու զաբիթների կողմից բնակչության նկատմամբ կիրառվող ճնշումների ու հարստահարությունների դեմ: Այդ ճնշումների հետևանքով էր, որ «ուսյաթները թողնում էին իրենց տունն ու տեղը և հեռանում, մեծ վնաս պատճառելով ոչ միայն կալվածատիրոջ, այլ նաև պետությանը»¹⁰:

Հրովարտակի բովանդակությունից դժվար չէ եզրակացնել, որ «Գերագույն խոսքի» այդ հոգվածը գործադրվում էր հատկապես այն դեպքերում, երբ ուսյաթների տեղափոխությունները տարածայնություններ էին առաջացնում տարբեր գյուղական համայնքների միջև, և երբ բարդություններ էին առաջանում պետական հարկերի գանձման գործում: Պարզ է նաև, որ թեև առանձին բարենպաստ պայմաններում կամ երկուստեք շահավետ

¹⁰ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավ. 376, թղթ. 2ա, վավ. 54, 69, 70ա, 70բ, 70գ, թղթ. 2բ, վավ. 107ա, 107բ և այլն:

իրադրութեան մեջ կարող էին տեղի ունենալ ռայաթների տեղափոխութիւններ, սակայն գոյութիւն ունեցող օրենքը միշտ էլ հնարավորութիւն էր տալիս կալվածատիրոջը և հատկապես թիուղարներին՝ հետապնդելու այն ռայաթներին, որոնք առանց Ֆետդալի կամ կալվածատիրոջ համաձայնութեան կփորձէին լքել իրենց համայնքը և հեռանալ նրանց տիրապետութեան տակ գտնվող գյուղերից:

Ստորև հրապարակում ենք հիշյալ հրովարտակի հայերեն թարգմանութիւնը, որոջ սոցիալական և հարկային տերմինների համառոտ բացատրութեամբ, տալով նաև պարսկերեն բնագրի լուսանկարը:

Սեֆյան շահ Սուլթան–Հուսէյնի հիշք. 1122 ր. գիկա'դա
ամսին (1710 թ. դեկտ. 22–1711 թ. հունվ. 20) հրապարակված
հրովարտակը

(ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ինստիտուտ–«Մատենադարան», Կաթողիկոսական դիվան, թղթ. 1 ր. վավ. 234,
բնագիր. մեծ, 44x18 սմ. գիր՝ շիֆաթե-նասթա'լիկ)

Նա է:

Իշխանութիւնն աստծունն է:

Շահ Սուլթան–Հուսէյնի կնիքը

Արքայական հրաման եղավ հետեւյալի մասին.

Ներկայումս Թուճան–ե Նախիջևանի¹ մահալներից Գարա–չամ[ը] գյուղի քրիստոնյա ռայաթները խնդրարկու եղան՝ հայտնելով, որ քանի տարի է ինչ վերոհիշյալ գյուղի ռայաթներից հետեւյալ 15 ընտանիքները.

Եսայի	1 ընտանիք	Սարգիս	1 ընտանիք
Մարգար	1 »	Անանիա	1 »

¹ Նախիջևանի գավառն իր շրջակայքով այսպես սկսեց կոչվել իլխանական տիրապետութեան շրջանում: Երբ կայսրութեան ընդարձակ երկրամասերը բոսայնտեղից հավաքագրվող ռամիկների թվի բաժանված էին առանձին թուճանների: «Թուճան» մոնղոլերեն նշանակում է 10 000:

Մանգասա՞ր	1 ընտանիք	Թորոս	1 ընտանիք
Մարտիրո	1 »	Հուսիկի որդիները	2 »
Անդրեաս	1 »	Բաբաջան	1 »
Հարութ	1 »	Պողո՞սի որդին	1 »
Առաքել	1 »	Վարդան	1 »

ցրվել են ու գնացել բնակութուն են հաստատել հիշյալ մահալի Աստապատ գյուղում, որը թիուլ է նշանակված Խասսե-յե Շարիֆի² կառավարչութան ղուլամներ³ յուզբաշի⁴, արքայի մերձավորներից Մուհամմադ-Իբրահիմ բեկին: Այս միջոցում, նրանք իրենց մալըճաթը⁵, ջիզյան⁶ և դիվանական պարտավորությունները⁷ այնտեղում, հատուցում էին ըստ իրենց բաժնի: Իսկ այժմ հիշյալ գյուղի զաբիթը⁸ արգելք է հանդիսանում և չի թողնում, որ նրանք մալըճաթը, ջիզյան և դիվանական պարտավորությունները հատուցեն իրենց (Գարաչամբի համայնքին):

Խնդրեցին որպեսզի Չուխուր-Սա՛ղի⁹ բեկլարբեկիի անունով սրբազան հրովարտակ հրապարակվի և կարգադրվի որ հիշյալ համայնքին, որտեղ էլ որ նրանք բնակվելիս լինեն, գաղթեցնի և ուղարկի իրենց իսկական վայրը, որպեսզի հիշյալ մահալի մյուս հայ

² Արքունի կալվածները, արհեստանոցներն ու գործատները կոչվում էին «խասսե-յե շարիֆե» (սրբազան խասսեր): Այդ հաստատությունը ուներ հատուկ կառավարչություն, որ կոչվում էր «սարքար-ե խասսե-յե շարիֆե»:

³ Շահի արքունի գվարդիայի զինվորներ.

⁴ Աղբբեջաններն հարյուրապետ.

⁵ Պետական հիմնական ունեւտա-հարկը, որ գանձվում էր բոլոր մշակելի հողերից, այգիներից, ջրաղացներից, ձիթհանքերից և այլ եկամտաբեր ստացվածքներից:

⁶ Ոչ մուսուլման ուսյաթներից գանձվող գլխահարկ, որ կանխիկ դրամով գանձվում էր յուրաքանչյուր չափահաս աշխատունակ տղամարդուց:

⁷ «Հոկուկ-ե դիվանի» կամ «թաքալիֆ-ե դիվանի» ընդհանուր տեղմիսով էին կոչվում ուսյաթների բազմազան պարտավորությունները պետության նկատմամբ:

⁸ «Զաբիթ» էին կոչվում պետական հարկերի կապալառուները, որոնք նախապես որոշ գումար մուծելով պետական գանձարանը, իրվաունք էին ստանում տվյալ հարկատու օբյեկտի հարկերը գանձելու:

⁹ Արարատյան երկիրն այսպես սկսեց կոչվել 14-րդ դարի վերջերին և 15-րդ դարի սկզբներին այնտեղ իշխող Ամիր Սա՛ղի անունով «Չուխուր-Սա՛ղ» նշանակում է «Սա՛ղի փոս», հայկական աղբյուրներում «Սահաթա փոս» կամ «Երկիրն Սահաթու»:

Հայ ուսյաթնների կարգով, սրանք ևս կատարեն իրենց մուծավաջ-
ջեհաթն¹⁰ ու գիվանական պարտավորությունները:

Ագերբայջանի ավարեջեի¹¹ կառավարչությունից Հաստատեցին,
որ Թուաման-ե Նախջեանի Դարաշամ [բ] գյուղի մալոջհաթը, որոշակի
գումարով մատյանում ի մի է բերված և հատկացված է զուչիների¹²
և այլոց համեսալեին¹³:

Իսկ անջատված Հաստարակության վերաբերյալ, ըստ «Գերա-
գուլյն խոսքի»¹⁴ որոշված է, որ եթե որեէ վայրի հողագործ
մուսուլման ուսյաթները, որոնք անջատվելով գնում են բնակություն
Հաստատում այլ վայրում և այդ վայրում մալի ու գիվանական պար-
տավորությունների ենթակա որեէ բան չեն ունենում, և այդ
անջատումից գեուս տասներկու տարի անցած չի լինում, պարտավոր
են վերագառնալ իրենց նախկին բնակության և վարուցանքի վայրը,
մյուս ընկերների հետ միասին իրենց պարտավորությունները
կատարելու: Իսկ եթե տասներկու տարին անցած լինի, ոչ ոք իրա-
վունք չունի նրանց այդ վայրից տեղափոխելու իրենց նախկին
[բնակա]վայրը: Իսկ մահալների հողագործ Հայ ուսյաթների, ցեղերի
և արաբների մասին «Գերագուլյն խոսք» նկատի չի առնված: Դրա
համար էլ կարգադրեցինք, որպեսզի Դարաշամ[բ]ում բնակվող և
վարուցանքով զբաղվող այն Հայ ուսյաթները, որոնք այդ վայրից
հեռացել և գնացել բնակություն են Հաստատել այլ վայրում, այդ
տեղից քոչեն և գան նախկին բնակավայրը՝ մյուս ընկերների հետ
միասին, այդ վայրի ներքո կատարելու իրենց, մալի և ջիզյայի
պարտավորությունները:

¹⁰ Ընդհանուր հարկային տերմին է, որի տակ սովորաբար հասկացվում էին մեծ մասամբ կանխիկ դրամով գանձվող հարկերը:

¹¹ Պետական հարկերի գլխավոր հաշվապահություն: Ավարեջեի հաշվա-
պահական մատյանները կոչվում էին «գավթար-ե ավարեջե», որոնց մեջ ման-
րամասն հաշվառման էին ենթարկված յուրաքանչյուր հարկատու օբյեկտից
ստացվող հարկերը:

¹² Թագավորական հեծյալ գվարդիայի զինվոր:


¹³ Նշանակում է «ամենամյա»: Դա ուճիկների հատուցման այն ձևն էր, ըստ
որի զինվորականությունն ու պետական պաշտոնյաները իրավունք էին ստա-
նում, ցնոր տնօրինություն, ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու
իրենց ուճիկները:

¹⁴ «Գերագուլյն կամ բարձրագուլյն խոսք» անվան տակ պետք է հասկանալ
մուսուլման բարձրաստիճան հոգևորականության շեյխ-ուլ-խալաֆների, իմամ-
ների, մուֆթիների և օրենսգետ մուշտեհիդների կողմից տարբեր ժամանակներում
սրված վճիռներով կամ ֆեթվաներով սահմանված և գործադրության հանձնա-
րարված օրենքները:

Այդ գործում պատշաճ օժանդակութիւնն ցույց տալու և որևէ մեկի կողմից ընդգրկմութիւնն թույլ չտալու պարտավորութիւնը գրվում է Չուխուր-Սա'գի բարձրաստիճան բեկլարբեկիի վրա, որ պեսգի [վերջինս] հատուկ մեկին նշանակի, որը գնա և ստուգելուց հետո հիշյալ ցրված համայնքին գաղթեցնի ու բերի իրենց նախկին բնակավայրը:

Եվ թող այս համարեն իրենց պարտականութիւնը:

Գրվեց 1122 թ. գիկա'գա ամսին. (1710 թ. դեկտ. 22–1711 թ. հունվար 20):



ՀԱԿՈՐ ՓԱՓԱԶՅԱՆ

ՎԱՆԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(XV—XVIII ԴԴ.)

Վանական հողատիրությունը Հայաստանում սկիզբ է առնում վաղնչական ժամանակներից: Դեռևս IV դ. սկսած հայոց եկեղեցին ունեցել է հեթանոսական տաճարներից ժառանգած բազմաթիվ կալվածքներ: Այնուհետև և՛ Արշակունյաց թագավորների, և՛ հետագայում՝ Բագրատունիների ու Զաքարյանների տիրապետության շրջանում, վանքերն ու եկեղեցիները ստանում էին ընդարձակ մշակելի տարածություններ, որոք նվիրաբերվում էին թագավորների, նրանց կանանց, մերձավորների և այլ իշխանների կողմից¹: Հայ պետականության վերացումից և հատկապես XIV—XV դդ. հայ ֆեոդալական մանր իշխանությունների վերջնական բարձումից հետո հայոց եկեղեցին զրկվում է այդ կարգի խոշոր կալվածքների և առանձին գյուղերի նվիրատվություններից, իսկ մինչ այդ ձեռք բերված կալվածքների մեծ մասը հափշտակում են մահմեդական իշխանավորները:

Արևելյան Հայաստանում հողային քիչ թե շատ խոշոր նվիրատվության վերջին փաստաթուղթը վերաբերում է XV դ. 30-ական թվականներին, երբ ամիր Ռուստամ Օրբելյանը 1431 թվականին յոթ մեծ գյուղեր (Վաղարշապատ, Աշտարակ, Բաթոնիջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղեհիս-Քիրաջու և Մուղնի) վաճառքի անվան տակ նվիրում է էջմիածնին: Թեև դրանից առաջ, 1429—30 թթ. Վաղարշապատ (Ուշքիլիսա) գյուղի 4 դանդը մի քանի նվագով գնված էր արդեն այդ վանքի վանահայր՝ պարոն Սմբատի որդի Գրիգոր եպիսկոպոսի կողմից:

Իր տեղում բավական մանրամասն խոսել ենք այս նվիրատվության հանգամանքների և նրա դրդապատճառների մասին², այստեղ ավելորդ չենք համարում ընդգծել այն փաստը, որ այդ գյուղերը Ռուստամ Օրբելյանը նախ ձևակերպում է որպես վաճառք, որից հետո միայն Գրիգոր Մակվեցին դրանք վակֆ է անում էջմիածնին: Այդ «վաճառքը» ձևակերպվում էր նրա համար, որպեսզի հիշյալ գյուղերը դառնային «արձաթագին» կամ «գանձագին մուլք» (ملك زرخريد - մուլք-ե դարխարիդ), օրինական սեփականություն՝ գնված

1 Տե՛ս «Վիմական տարիգիր», կազմեց Կ. Կոստանյանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 16—27, 35, 50, 58—59, 116—117 և այլն:

2 Տե՛ս 2. Փավազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից: ՀԱՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 8: Նույնի «Օտար տիրապետությունը Արարատյան երկրում»: Անդ, 1960, № 7—8, նույնի «Բիյթ-ուլ-Մալի» ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները 15-րդ դարում», «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2:

կանխիկ զրամով, ապա նվիրվեին վանքին ու դառնային նրա «հավիտենական» սեփականությունը:

Քավական է մի հայացք նետել X—XIV դդ. հայերեն վիճագիր արձանագրություններին՝ համոզվելու համար, որ վակֆային նվիրատուությունների վերոհիշյալ նախապայմանը գալիս է բավական հնուց: Հաղպատի վանքի 1016 թվականի մի արձանագրության մեջ կարդում ենք՝

«Ի նկե թվիս, ես Մուկն, որդի Հոնովարա շնորհուն Ա[ստուծո]յ նոր նորոգեցի զսուրբ կաթողիկ [էս որ] աւեր[ե]աւ ի սաստիկ շարժմանէ, եւ ետու զԱզարակ իմ գանձով գնած վասն [արև] շ[ատու]թե[ան] եւ մեղացս թողութեան»³: Նույն կարգի հիշատակություններ նկատվում են նախորդ և հետագա դարերի ամբողջ շարք վիճագիր արձանագրություններում, որոնք պահպանվել են մեծ ու փոքր վանքերի որմերի վրա: Դրանց բովանդակությունից միանգամայն պարզ երևում է, որ նվիրաբերված կամ վակֆ արված կալվածք կամ ժառանգական սեփականություն է եղել (հայրենիք) և կամ նախապես զնվել է, ապա նվիրաբերվել այս կամ այն վանքին («որ մեր սեփական հայրենիք էր», «որ իմ հայրենիք էր ի հնուց», «ի հայրենեաց մերոց», «ետու իմ հայրենեաց» կամ «գնեցի» «գանձագին արարի», «գանձագին հայրենիք իմ էր», «իմ հալալ գանձով գնեցի», «ոսկով գնեցի», «հալալ արդեամբ գնած հողս» և այլն)⁴:

XIV—XV դարերից սկսած Հայաստանում հողային տիրույթների, հատկապես ամբողջական գյուղերի մուլքերի առուծախի, նվիրատուության կամ այլ կարգի օտարումներին վերաբերող արձանագրությունները մեծ մասամբ կազմվում էին մահմեդական Շարիատի աստիճաններում, հիմք ունենալով իսլամական իրավունքը: Այդ փաստաթղթերը լիովին արտահայտում են վակֆային կալվածների վերաբերյալ շարիաթական նորմերը և փաստորեն գալիս էին վերահաստատելու նախքան այդ եկեղեցական կալվածների սեփականատիրական իրավունքի Հայաստանում արդեն գործող օրենքները:

Այդ վավերագրերը, ինչպես նաև պարսկալեզու այլ սկզբնաղբյուրներ միաբերան վկայում են, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ոչ մի խոշոր ֆեոդալ, խան, ամիր կամ նույնիսկ շահ չէին կարող պետական գիվանի հողերից նվիրել կամ վակֆ անել որևէ կրոնական հաստատություն, քանի որ դա նրանց «հալալ» ինչքը չէր: Նվիրվող կալվածք իրավական ձևակերպմամբ պետք է անպայման նրանց ժառանգած կամ գանձագին մուլքը լիներ:

Գյուղերն ու այլ կալվածները շարիաթական կալվածագրերով (վակֆնամե) եկեղեցուն նվիրվելուց հետո այլևս ենթակա չէին վերադարձման և դառնում էին հավիտյան անօտարելի սեփականություններ. «Եւ Գրիգոր կաթողիկոս այս որ է որդի Մակուեցի պարոն Զալալ բեկին,—գրում է Սիմեոն կաթողիկոս Երևանցին,—գրեցուցանէ ի չերիս դապալալոցսն ևս թէ Գրիգոր խալիֆայն առնու զգեօզս զայս (Վաղարշապատ), և վախրֆ տա էջմիածնի Աթոռոյն: Քանզի որովհետև յամենայն յազգս օրէն է, զի վախրֆն ոչ վաճառի և ոչ յետս դառնայ, վասն այսօրիկ այսպէս գրեցուցանէ, զի մի ոք ի շխեսցէ յետոյ վա-

³ Կարո Ղաֆաղարյան, Հաղպատ, Ճարտարապետական կառուցվածքները և վիճակն արձանագրությունները, Երևան, 1963, էջ 145, արձ. № 5:

⁴ Տե՛ս «Վիճական տարեգիր», էջ 16—17, 43, 44, 54, 58—59, 68, 74—75, 104—112, 125, 168, 169, 226 և այլն, հմմտ. «Գիվան հայ վիճագրության», պր. 1, էջ 12, 13, 29, 32, 43, 44, 47, 51, 63, պր. 2, էջ 21, 26, 41, 109, 114, պր. 3, էջ 37, 51, 52, 56, 76, 97, 119, 128, 143, 148, 149, 171, 216, 220, 222, 223, 238, 239, և այլն:

ճառել և գնել»⁵։ Վակֆային հնագույն ու ավելի ուշ շրջանների կալվածագրերի համեմատություները ցույց է տալիս, որ վակֆ արվող հողերն ու այլ ստացվածքներ (այգի, ջրաղաց, ջուր, տուն և այլն) հավիտյանս ամրացվում էին տվյալ վանքին կամ մզկիթին և դրվում վանահոր կամ «մուսավալլիի» տնօրինության ներքո։

«Վակֆ» (وقف) արաբերեն տերմինը բառացի նշանակում է «կանգ առնել», «դադարել»։ Խոսքը վերաբերում է տվյալ ստացվածքին, որը նվիրվելով որևէ կրոնական հաստատության, ամրացվում էր նրան և այլևս ենթակա չէր ոչ մի կարգի օտարման։ Վակֆային կալվածագրերում, որոնցից մեծ թվով պահպանվել են Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանում», կալվածների նվիրաբերման ակտը անվանվում էր նաև «ամրացում» կամ «արգելափակում»։ Կար հատուկ բանաձև. «Վերջնականապես վակֆ արեց և հավիտյանս արգելափակեց»⁶։

Վակֆ անողը միաժամանակ պայման էր դնում, որ «տարբեր ժամանակներում այդ վանքի տնօրենները կամ մյուս վանականները վակֆ արված հողերը ոչ ոքի չվաճառեն կամ չնվիրեն»։ Համարյա առանց բացառության բոլոր վակֆնամեների վերջում տրվում էր վակֆ անողի՝ «վակիֆի» (واقف) կտակը, որին հաջորդում էր անհոգը («اعتنا له» («լա՛նաթնամե») այդ կտակը խախտողների հասցեին։ Այս կտակների մեջ հատկապես շեշտված էին վերոհիշյալ պայմանները։

Ավելի մանրամասն գրված վակֆնամեներում նշվում էր նաև, որ վակֆ արվող կալվածք ենթակա չէ գրավ դրման կամ փոխանակման և կամ երկարատև վարձակալման։ Նույն 1432 թ. Գրիգոր Մակվեցու վակֆնամեի վերջում ասված է. «...ավագ վերակացուններն ու վանականները օրերից մի օր հիշյալ վակֆը չվաճառեն, չընծայեն, օտարման չենթարկեն և չնվիրեն։ Եթե մեկը փորձի փոխել այս վակֆը և խախտել նրա պայմանները, թող այդպիսին ենթարկվի աստվածային անեծքների և զայրույթի։ Պայմանն այս է, որ չվաճառեն և վարձով չտան, չնվիրեն և չփոխանակեն, որովհետև դա ճշմարիտ շարիաթական վակֆ է և պարզ ու լսելի հավիտենական արգելափակում, ուստի և արգելվում է նրա վաճառքն ընդմիշտ»⁷։

Վակֆ արվող ստացվածքերի վաճառելն ու գրավ դնելն արգելվում էր սկսած դեռևս վաղ միջնադարից ու թերևս ավելի առաջ։ Խժկոնքի վանքի մի արձանագրության մեջ ոմն Աբրահամ երեց 1233 թ. տներ և խանութներ է նվիրում նույն վանքին և արձանագրության վերջում ավելացնում է. «հայր ոք թէ յանդգնի ծախել կամ գրավանել, մի գտցէ ողորմութիւն ի տեառնէ»⁸։ 1450 թվականին Տաթևի վանահայր Շմավոն վարդապետը ամիր Ռուստամ Օրբելյանից գնում է մի քանի գյուղեր (Սվարի, Տաշու, Աղանց, Տանձատափ), առանձին հողակտորներ ու այգիներ և վակֆ է անում Տաթևի վանքին։ Այս վակֆնամեի վերջում նույնպես շեշտված է, որ նվիրված կալվածները իր հետ-

⁵ Սիմեոն Երևանցի, Զամբո, էջ 101։

⁶ «Մատենադարանի Պարսկ. վավերագրերը», II, կազմեց Զ. Գ. Փափազյան, «Կալվածագրեր», պր. Ա., Երևան, 1968, վավ. 5, այսուհետև՝ «Կալվածագրեր», I։

⁷ «Կալվածագրեր», I, վավ. 5. ولا يوجره ولا يوهب ولا تبدل وقفا صحيحا لا شرعيا وحبسا صريحا سمعنا مخلدا سرمدنا وحرمة البيع له ايدا يابن.

⁸ «Վիմական տարեգիր», էջ 76։

նորոգները «չվաճառեն և մեկ տարուց ավելի ժամանակով վարձու չտան, չնվիրեն և չփոխանակեն ոչ մի դեպքում»⁹։ Երբ Երևանի բեկլարբեկի Սաֆիկուլի խանը (1666—1674) դիմում է Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին, պահանջելով, որ նա իր կառուցած լիճը փոխի մի այգու հետ կամ վաճառի իրեն, կաթողիկոսը պատասխանում է. «մեք զնա վաղմ արաք էջմիածնի, այլ ոչ գոյ հնար ելանել նմա ի դրանէ նորա»¹⁰։ 1621 թվականին Երևանում գրված մի այլ պարսկերեն վակֆնամեում բիստեցի խոջա Գասպարը Օշական գյուղի կես դանգը վակֆ է անում էջմիածնին և պայման դնում, որ այդ կես դանգ մուլքը «չգնեն և չվաճառեն, երեք տարուց ավել ժամանակով վարձու չտան և գրավ չդնեն»¹¹։ Ուրեմն ժամանակավոր օտարումներից թույլատրվում էր միայն կարճ ժամանակով վարձու տալ, իսկ գրավ դնել բոլորովին չէր թույլատրվում, որովհետև պարտքը վճարելու ժամկետը լրանալու դեպքում պարտատերը իրավունք ուներ գրավականը սեփականացնելու։ Էջմիածնի վանքը այս ճանապարհով շատ կալվածներ է սեփականել¹²։

Վերը շարադրվածից պետք է ենթադրել, որ վանական կալվածատիրությունը սեփականատիրական իրավունքի տեսակետից ամենակայուն և ամենամուր իրավական հիմքերն ունեցող կալվածատիրությունն էր։ Բավական էր, որ տվյալ վանքը կամ որևէ այլ կրոնական-եկեղեցական հաստատություն նրավիրաբերման ճանապարհով կամ այդ անվան տակ հաջողոր ձեռք բերել որևէ մուլք կամ այլ ստացվածք, և այնուհետև այն դառնում էր նրա հավիտյանն անօտարելի սեփականությունը։

Ինչպես կարա-կոյունլուների և Աղ-կոյունլուների ժամանակ, այնպես նաև Սեֆյան տիրապետության, շրջանում Իրանի այլ վիլայեթներում գտնվող, հատկապես մուսուլմանական մզկիթապատկան կալվածներում, վակֆի օրենքները անհամեմատ ավելի ամուր էին։ Ընդհանուր առմամբ մզկիթապատկան կալվածները բացի վարձակալությունից այլ կարգի օտարման չէին ենթարկվում, քանի որ դրանք բոլորն էլ շարիաթական հաստուկ վակֆնամեներով ամրացված էին այս կամ այն մզկիթին կամ մուսուլմանական որևէ խոշոր ուսումնական կամ բարեգործական հաստատության։ Ինչ վերաբերում է Հայաստանի խոշորագույն եկեղեցական հաստատությանը՝ էջմիածնին և մյուս մեծ ու փոքր վանքերին, ապա այստեղ վիճակը մի քիչ այլ էր։ Աղբյուրների ուշադիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե եկեղեցական հողերի ուղղակի վաճառման դեպքեր չեն արձանագրվել, ապա գրավ դնելու և այդ ճանապարհով պարտքի դիմաց բռնագրավման դեպքեր եղել են։

Հայտնի է, որ էջմիածնի վանքը XVII դ. խաների կողմից հարստահարության ենթարկվելով, շատ անգամներ է ծանր պարտքերի տակ ընկել, և այդ պարտքերից ազատվելու նպատակով կաթողիկոսները գրավ են դրել ո՛չ միայն անշարժ կալվածներ, այլև վաճառել ու գրավ են դրել եկեղեցական սպասներ ու անոթներ։ 1684 թվականին, Հակոբ կաթողիկոս Զուղայեցու մահվանից չորս տարի հետո, Շահ Սուլեյմանի տված մի ֆերմանից պարզվում է, որ Հակոբ

⁹ «Կալվածագրեր», 1, վավ. 7։

¹⁰ Զաֆարիա Սարկավազ, հ. 11, էջ 77։

¹¹ Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 178, نخرند ونفروشد و باجارتد

طوبله زياده از سه سال ندهند و رهن نگذارند

¹² Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 177, տե՛ս նաև 2. Արքամայան, Կալվածագրեր, Երևան, 1941, էջ 24—25, 65—66, և 79, Զամբու, էջ 115, 160 և այլն։

Ջուղայեցիս վանքապատկան շատ կալվածներ պարտքի դիմաց գրավ դրած է եղել: Նրա մահից հետո, երբ անցել է պարտքերի հատուցման սահմանված ժամկետը, պարտատերերը իրավունք են համարել յուրացնել այդ կալվածները և մերժել են Ղազար կաթողիկոսի կողմից վանքապատկան կալվածները ետ վերագարձնելու վերաբերյալ արված պահանջը: Ղազար կաթողիկոսը, Ստեփաննոս եպիսկոպոսը և ուրիշ վանականներ երկու խնդրագրերով դիմել են Շահ Սուլեյմանին՝ ասելով, որ իրենք երբևէ չեն հրաշխավորել չակոբ կաթողիկոսի պարտքերի համար, ուստի պարտատերերը բուրջովին ապօրինի կերպով են «վակֆի» հողերը իրենց ձեռքում պահում, քանի որ շարիաթի օրենքներով վակֆը չի կարող գրավ դրվել: Շահը նույն խնդրագրի վրա գրում է իր հրամանագիրը (հրքմ), որով կարգադրում է Երևանի բեկլարբեկին ստուգել և պարզել, թե խնդրագրի հեղինակները երբևէ հրաշխավորել են չակոբ կաթողիկոսի պարտքերի համար և գրավ դրված կալվածները վակֆ են, թե ոչ: Հրամանագրի վերջում շահը նշում է, որ «համաձայն իմամների ֆեթվայի նման գրավականը դեմ է շարիաթական օրենքին, ուստի թող այդ գրավականները հանձնեն նրանց վերակացուին (մութավալլիին, կաթողիկոսին) և թույլ չտան, որպեսզի որևէ մեկը հակառակ շարիաթի և ապօրինի կերպով դիպչի հիշյալ վակֆերին»¹³:

Որ շահի այս կարգադրությունը ոչնչով չի կարողացել փրկել դրությունը և վանքապատկան կալվածները այնուհետև էլ շարունակել են մնալ պարտատերերի ձեռքում և ի վերջո յուրացվել են նրանց կողմից, այդ կարելի է եզրակացնել այն փաստից, որ չակոբ Ջուղայեցու ձեռքով գնված մուլքերը XVII դարի վերջում մեծ մասամբ համարյա ամբողջությամբ դուրս էին եկել էջմիածնի ձեռքից¹⁴:

Սակայն կարևոր է պարզել, թե ինչ գյուղեր են եղել գրավ դրված: Վակֆեր՝ էին դրանք, թե՞ դանձագին մուլքեր:

1633 թվականին, երբ Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցին հաջորդեց Մովսես խոտանանցուն, էջմիածնի վանքը ուներ միայն Քիրաջու գյուղի ամբողջ 6 դանգ մուլքը, որը 1431 թ. այլ գյուղերի հետ Գրիգոր Մակվեցին վակֆ էր արել էջմիածնին: Մյուս գյուղերը, այդ թվում նաև Վաղարշապատը յուրացրել էին տեղի իշխողները, ու թեև 1620 թվականի մարտի 6-ի հրամանագրով Ամիր-Գունա խանը նորից Վաղարշապատը վերագարձրել էր էջմիածնին¹⁵, սակայն նրա որդի Թահմազկուլի խանը սեփականել էր այն: 1636 թ., երբ Թահմազկուլի խանը դավաճանելով՝ անցավ Թուրքիա, այլ կալվածների շարքում Վաղարշապատ գյուղը ևս գրավվեց հարքունիս ու մտցվեց դիվանի գյուղերի շարքը, և միայն 1660 թ. մեծ ջանքերի գնով չակոբ Ջուղայեցուն հաջողվեց Շահ

13 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 182. چون موافق علماء امامیه کثر هم

رهن مزبور صورت شرعی ندارد مرهونات را بتصرف متولی گذاشته نگذازند که احدی بخلاف شرع و حساب مدخل در موقوفات مزبور نماید

14 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 293, 299, 306ա, 306բ, 306գ, 316, հմտ. «Ջամբո», էջ 106—107, 241, 243:

15 «Մատենադարանի պարսկ. վավերագրերը», 1, Հրովարտական, կազմեց Շ. Փափազյան, պր. Բ., Երևան, 1969, վավ. 14, (այսուհետև՝ Հրովարտական, 11), Կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 41, 42, «Ջամբո», էջ 103: Փիլիպոս կաթողիկոսի օրոք էջմիածնի ունեցել է նաև Մուղնի գյուղի 6 դանգը, որը կաթողիկոսը վակֆ էր արել Մուղնու Ս. Գևորգ վանքին (Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 166, «Ջամբո», էջ 118):

Արբաս Բ-ի հրովարտակով ետ ստանալ այն¹⁶; 1640 թվականից սկսած Փիլիպոս կաթողիկոսը կես և մեկ դանգերով սկսում է գնել Օշական գյուղը և մինչև 1645 թվականը կարողանում է ձեռք բերել այդ գյուղի 4 դանգը¹⁷; Փիլիպոս կաթողիկոսին հաջորդող Հակոբ Զուղայեցին 1655 և 1674 թվականներին երեք նվազով գնում է նույն գյուղի 1½ դանգը¹⁸, իսկ 1681 թվականին աթոռակալ Մինաս վարդապետի օրոք, Օշականի մնացյալ կես դանգը Ստեփաննոս վարդապետից 10 թումանով գնում և վակֆ է անում էջմիածնին բիստեցի խոջա Գասպարը¹⁹։ Այսպիսով, 1681 թվականին Օշական գյուղը ևս ամբողջությամբ պատկանում էր էջմիածնին։

Այնուհետև Հակոբ Զուղայեցին իր կաթողիկոսության տարիներին կանխիկ գրամով գնում է հետևյալ մուլքերը²⁰։

1. Ղարաղոյուն	6 դանգ	հիշր.	1061 թ.	(1650)
2. Ֆրանկանոց	6 »	»	1066 թ.	(1655)
3. Բաթոինջ	1 »	»	1066 թ.	(1655)
4. Ամիրի գյուղ	4½ »	»	1071 թ.	(1660)
5. Յալջի	6 »	»	1071 թ.	(1660)
6. Մելիքի գյուղ	6 »	»	1075 թ.	(1664)
7. Մանկանոց	6 »	»	1078 թ.	(1667)
8. Քեշիշքյանդ	6 »	»	1082 թ.	(1671)
9. Նորք	6 »	»	1085 թ.	(1674)
10. Դիրաբլու (Սանտ)	6 »	»	—	—
11. Մոպանիս	6 »	»	—	—
12. Կյատուր	6 »	»	—	—
13. Քասախ	—	—	—	—
14. Թեղենիս	—	—	—	—
15. Սևավեր	—	—	—	—
16. Բյուրական	—	—	—	—

1656 թվականին մաստարացի Ոսկանի որդի Թարխանը իրենց գյուղի 2½ դանգը գնում և վակֆ է անում էջմիածնին²¹։ 1658 թվականին երևանցի խոջա Սեթի որդի խոջա Հակոբը երկու այգու և մի ջրաղացի հետ միասին էջմիածնին է նվիրում նորագեղի 6 դանգը և Նղվարդի 4½ դանգը²²։ Վերջապես, 1660 թվականին, հայտնի չէ թե ինչ հանգամանքներում, Հակոբ Զուղայեցուն հաջողվում է ստիպել Բոխենիս գյուղի ռայաթներին, որ իրենց գյուղի 6 դանգ մուլքը վակֆ անեն էջմիածնի վանքին²³։

Այսպես ուրեմն, Հակոբ Զուղայեցու օրոք էջմիածինը որպես մալիք (սե-

16 Տե՛ս «Զամբո», էջ 183—184, հմմտ. Լ. Ս. Խաչիկյան, Հակոբ Զուղայեցու կտակը, «Պատմամանասիրական հանդես» 1966, № 4, էջ 181—182։

17 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 61ա, 61բ, 61գ, 63, 64, 65ա, 66, 74ա, 74բ, 74գ։

18 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1ա, վավ. 100, 101, 123, թղթ. 1բ, վավ. 160։

19 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 178։

20 Տե՛ս «Զամբո», էջ 112—129, Զաֆարխա Սաբկավազ հ. II էջ 62։

21 «Զամբո», էջ 114։

22 Անդ, էջ 121 և 122, Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 103։

23 «Զամբո», էջ 126—127։

փականատեր) իրավունքներ ունեն 23 գյուղերում, որոնցից 15-ի լրիվ 6 դանգն էր պատկանում էջմիածնին, երկուսի $4\frac{1}{2}$ դանգը, մեկի $2\frac{1}{2}$ դանգը և մեկի 1 դանգը, իսկ մնացյալ 4 գյուղերի դանգերի քանակի մասին աղբյուրներում որոշակի տեղեկություններ չկան: Հիշյալ 23 գյուղերից, ինչպես տեսանք, որպես վակֆային ստացվածք շարիաթական վակֆնամեներով ձևակերպված էին միայն հետևյալ գյուղերը.

1. Վաղարշապատ	6	դանգ
2. Քիրաշլի	6	»
3. Նորագեղ	6	»
4. Բոխենիս	6	»
5. Եղվարդ	$4\frac{1}{2}$	»
6. Մաստարա	$2\frac{1}{2}$	»
7. Օշական	$1\frac{1}{2}$	»

Իսկ մնացյալ 17 գյուղերն ու Օշականի $5\frac{1}{2}$ դանգը՝ որպես արժաթագին մուլք, 1640—1674 թթ. մաս առ մաս գնվել էին Փիլիպոս Աղբակեցու և հատկապես Հակոբ կաթողիկոս Զուղայեցու ձեռքով:

Ստույգ տվյալներ չկան, թե վերոհիշյալ մուլքերից որոնք են գրավ դրված եղել պարտատերերի մոտ: Սկսած XVII դ. 80-ական թվականներից մինչև XVIII դ. 20-ական թվականները էջմիածնի կալվածների մասին պահպանված հիշատակությունները շատ սակավ են, ուստի, դժվար է դրանց հիման վրա որոշակի եզրակացություններ անել: Նյութերի այդ պակասը զգացել է նաև Սիմեոն կաթողիկոս Երևանցին, որը թեև ժամանակագրական կարգով տալիս է բոլոր գյուղերի պատմությունը և թվում գոյություն ունեցող վավերագրերը, սակայն նշված ժամանակաշրջանի վերաբերյալ ստույգ տեղեկություններ չի հաղորդում:

Այս շրջանից պահպանվել են Շահ Սուլեյմանին և Շահ Սուլթան Հուսեյնին ուղղված միայն մի քանի խնդրագրեր, որոնցով էջմիածնի կաթողիկոսները գանգատվում են դանազան «խարդախներից» *آخلاق* (մութաղալլեքե), որոնք ապօրինի կերպով զավթել են վանքի մուլքերը: Սակայն մուլքերի անունները չեն հիշատակված²⁴: Հենց այն փաստը, որ շուրջ 40 տարի շարունակ էջմիածնի մուլքային գյուղերի մասին գրավոր հիշատակություններ չեն եղել, ինքնին ապացույց է այն բանի, որ հիշյալ ժամանակաշրջանում այդ գյուղերը, եթե ոչ ամբողջությամբ, ապա իրենց մեծ մասով վերոհիշյալ պարտքերի դիմաց սեփականված են եղել պարտատերերի կողմից:

էջմիածնի վանքի կալվածատիրական կարողությունների և հատկապես մուլքային գյուղերի մասին որոշակի հիշատակություններ սկսում են երևան գալ XVIII դ. 20-ական թվականներից Անդրկովկաս ներխուժած թուրք նվաճողների կազմած հարկացուցակներում:

Վաղարշապատ գյուղի 1725 թ. հարկացուցակից, որտեղ թվարկված են նաև հարկերից ազատվող վանքապատկան կալվածներն ու այլ ստացվածքները, պարզվում է, որ այդ թվականներին էջմիածնին էին պատկանում Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Քիրաշլի և Ֆրանկանոց գյուղերը²⁵: Այս հինգ

²⁴ Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 1բ, վավ. 173, 181, թղթ. 1գ, վավ. 254:

²⁵ Զ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», № 5, 1960, երևան, էջ 453 (Կթղկ. դիվան, թղթ. 1գ, վավ. 316):

գյուղերից Վաղարշապատը, Մաստարան և Քիրաջլուն վակֆային տիրույթներ էին, իսկ Օշականն ու Ֆրանկանոցը գնված էին 1640—1681 թվականներին²⁶։

Մեծ թվով կալվածագրեր և այլ վավերագրեր վկայում են այն մասին, որ թե Փիլիպոս Աղբակեցի և թե՛ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսները մեծ նախանձախնդրություն են ցուցաբերել հատկապես Օշական գյուղի ձեռք բերման հարցում, և բացի այն, որ բավական բարձր գնեցրով՝ 10 նվազով գնել են այդ գյուղի ամբողջ 5¹/₂ դանգը, բաղմաթիվ անգամներ էլ ստիպված են եղել արտակարգ գումարներ վճարել զանազան հայցվորների, որոնք մի քանի տարի շարունակ դիմում էին Շա՛րին՝ պնդելով, որ Օշական գյուղի կես կամ մեկ դանգը նրանց ժառանգությունն է, վաճառողները իրավասու չեն եղել այն վաճառելու և որ էջմիածինը ապօրինի կերպով է տիրում դրանց²⁷։ Այնպես որ Օշական գյուղը բավական թանկ էր նստել էջմիածնի վրա։ Կարելի է չկասկածել, որ երբ Հակոբ Զուղայեցին այլ և այլ պատճառներով ստիպված է եղել գրավ գնել վանքի գանձագին մուլքերը, մինչև վերջը խուսափել է այդ խոշոր, հարուստ, եկամտաբեր և միաժամանակ խիստ թանկ ձեռք բերված մուլքը գրավի տակ դնելուց, մամնավանդ, որ այդ մուլքի դիմաց տրվող գումարը կարող էր լինել միայն նրա իսկական գնի շփով, այնինչ գյուղն էջմիածնի վրա արժեցել էր մի քանի անգամ ավելի։

Ճիշտ հակառակ պատճառով գրավ չէր դրվել նաև Ֆրանկանոց գյուղը։ Այս գյուղը XVII դ. երկրորդ կեսում այնքան էլ մեծ չի եղել։ Դա երևում է թեկուզ այն բանից, որ երբ Հակոբ կաթողիկոս Զուղայեցին այն գնել է 9 թուման 9.500 դինարով, նույն ժամանակներում Օշականը գնվել է 65 թումանով (չհաշված զանազան հայցերի պատճառով վճարված գումարները), Յալջին՝ 30 թումանով, Նորքը՝ 55 թումանով, Ղարաղոյունը՝ 22 թումանով և այլն։ Նշանակում է, որ Ֆրանկանոց գյուղը այդ ժամանակ այնքան էլ մեծ եկամուտ չէր խոստանում։ Այդ ավելի քան պարզ է դառնում, երբ վերոհիշյալ թուրքական հարկացուցակից տեղեկանում ենք, որ այդ գյուղը պարտավոր էր մալիքին վճարել իր մշակելի հողերից ստացվող բերքի միայն 1/25 մասը, այնինչ մյուս գյուղերը վճարում էին 1/10-ը։ Այստեղից պետք է եզրակացնել, որ Ֆրանկանոցը, որպես պարտքի դիմաց տրվող գրավական, այնքան էլ նպատակահարմար չէր, քանի որ նրանից ստացվող ռենտան չէր կարող հավասարվել փոխառությունից տրված գումարի վաշխառուական տոկոսին, մինչդեռ այն պետք է գերազանցեր նրան, որպեսզի շահագրգռեր վաշխառուին իր դրամագլուխը ժամանակավորապես տրամադրելու անշարժ կալվածքի։

Երկու գանձագին մուլքերի՝ Օշականի և Ֆրանկանոցի էջմիածնի ձեռքում պահպանվելու հավանական պատճառները պարզելուց հետո այժմ տեսնենք, թե ինչ ճանապարհով կարող էին էջմիածնի ձեռքից դուրս եկած լինել իրավական ձևակերպմամբ վակֆ համարվող նորագեղ, Բոխենիս և Նղվարդ գյուղերը։

Նախապես երևանցի խոջա Սեթի ժառանգներին պատկանող նորագեղ և Նղվարդ գյուղերը մինչև 1636 թվականը խարդախությունից չուրացվել էին թահմազկուլի խանի վաթիլ Մուրադ բեկի կողմից, իսկ վերջինիս թուրքիա փախչելուց հետո գրավվել էին հօգուտ դիվանի, և միայն 1648 թվականին խոջա Հակոբին հաջողվում է Շար՛ում ապացուցել այդ մուլքերի իր ժառանգական

²⁶ Բացի Օշականի 1/2 դանգից, որը վակֆ էր։

²⁷ «Ջամբո», էջ 110—111.

սեփականությունը լինելը և ետ ստանալ դրանք²⁸: Սակայն հետագայում էլ Երևանի խաները զանազան առիթներով փորձում էին այդ գյուղերը դարձնել դիվանի սեփականություններ: Մանավանդ Եղվարդը, որի 1¹/₂ դանգը որպես, իրոք, Մուրադ բեկի սեփականություն մինչև վերջն էլ մնաց դիվանի ձեռքում²⁹: 1659 թվականին Եղվարդի 4¹/₂ դանգն ու Նորագեղի 6 դանգը խոջա Հակոբը վակֆ է անում էջմիածնին, իսկ դրանից երեք տարի հետո՝ 1661 թվականին դիվանի ձեռքից ազատված մյուս երկու գյուղերը՝ Յալջին և Ամիրի գյուղը էջմիածնին է վաճառում խոջա Սեթի թոռ Սահակ Քալանթարո³⁰:

Ինչպես տեսնում ենք, դիվանի կողմից հափշտակման անընդհատ սպառնալիքների տակ գտնվող գյուղերը, ի վերջո, նվիրաբերության մեջ և վաճառքի միջոցով անցնում էին էջմիածնին: Իհարկե, դժվար է պնդել, որ միայն այդ սպառնալիքն է եղել պատճառը խոջա Հակոբի նվիրատվության, բայց և չի կարելի հաշվի շահնել այն փաստը, որ 1431 թ. Գրիգոր Մակվեցու միջոցով ամիր Ռուստամի 7 գյուղերի մուլքերի նվիրատվությունից հետո էջմիածինը ամբողջական գյուղերի մուլքեր վակֆ չի ստացել: Վարելահողեր, այգիներ, ջրաղացներ, ձիթհանքեր և այլ ստացվածքներ շատ էին վակֆ արվում, սակայն շուրջ երկու հարյուրամյակի ընթացքում մուլքային ամբողջական գյուղերի նվիրատվության փաստեր չեն արձանագրվել: Մենք հակված ենք կարծելու, որ Երևանի հետագա խաների, հատկապես Մուրթուզակուլի խանի (1688—1691) և Ֆազլալի խանի (1694—1700) օրոք նորից դիվանը այդ գյուղերը սեփականացրել է: Այս մասին Եղվարդ գյուղի վերաբերյալ կա բավական որոշակի վկայություն: «Արդ զգեօղս զայս Եղվարդ, յառաջ քան զօսմանցուց տիրելն երկրիս, յաւուրս պարսկական իշխանութեան, պարսիկ խանք հաննալ էին յԱթոռոյս և իւրացուցեալ խալիսա անուանելով»³¹, — գրում է Սիմեոն կաթողիկոս Երևանցին: Հետևաբար կարելի է չկասկածել, որ Նորագեղը նույնպես, որպես նախկինում երբևէ դիվանին պատկանած գյուղ, յուրացվել է Երևանի խաների կողմից:

Հետաքրքիր է, սակայն, մյուս վակֆ գյուղի՝ Բոխենիսի, էջմիածնի ձեռքից դուրս գալու պատմությունը: Այս գյուղը, ինչպես ասվեց, 1660 թվականին Հակոբ Զուղայեցու «Տորդորանքով» գյուղի ռայաթները վերստին վակֆ էին արել էջմիածնին: Սիմեոն կաթողիկոս Երևանցին այս կապակցությամբ գրում է, — «գեօղս այս ի բնէ անտի ի գիւղականաց իւրոց վախմ է տուեցեալ սրբոյ Աթոռոյս կամաւ և յօժարութեամբ իւրեանց, զի զվեց դանկ մուլքս իւրեանց տայցեն սրբոյ Աթոռոյս: Սակայն ի խառնակմանց ժամանակին և յանշըքութենէ Աթոռոյս՝ երբեմն նոյն գեօղականքն թէ և ի պակասութենէ իւրեանց արգելեալ են և ոչ են տուեալ»³²: Ուրեմն, որոշ ժամանակ Բոխենիսի գյուղական համայնքը կարողացել է թոթափել էջմիածնի կալվածատիրական լուծը և ոչինչ չվճարել նրան, սակայն Հակոբ Զուղայեցին նորից հարկադրել է նրանց Շարի առաջ հայտարարել, որ իրենց գյուղի 6 դանգ մուլքը վերստին վակֆ են անում էջմիածնին և ստորագրել տալ այդ մասին կազմված վակֆնամեն: Ուստի կարելի է չկասկածել, որ այնուհետև էլ «ի խառնակմանց ժամանակի»,

28 Հրովարտականք, II, վավ. 35:

29 «Ջամբո», էջ 122—123:

30 Անդ :

31 «Ջամբո», էջ 123

32 Անդ, էջ 126:

ինչպես սիրում է կրկնել Սիմեոն կաթողիկոս Երևանցին, այդ գյուղի ուսյաթները առիթը չեն փախցրել նորից ազատվելու հայտնի չէ թե ինչ հանգամանքներում նրանց վզին փաթաթված այդ պարտավորությունից, և նորից տեր են դարձել իրենց գյուղի ամբողջ մուլքին:

Պարզ է, ուրեմն, որ Հակոբ Զուղայեցին էջմիածնի վակֆային գյուղերը գրավ չի դրել, շարիաթի օրենքներով դրանք նա չէր կարող գրավ դնել, և ոչ էլ պարտատերերը կընդունեին այդպիսի գրավականներ: Գրավ են դրված եղել միայն իր իսկ՝ Հակոբ Զուղայեցու ձեռքով գնված գանձագին մուլքերը, որոնք սեփականացրել են պարտատերերը՝ ժամանակին պարտքերը չվճարելու պատճառով:

Անշուշտ, լինում էին բացառիկ դեպքեր, երբ գրավ էին դրվում կամ նույնիսկ վաճառվում վակֆային հողեր և այլ ստացվածքներ, բայց այդ տեղի էր ունենում ծայրահեղ անհրաժեշտության դեպքում և, փաստորեն, խախտելով օրենքը:

Որ կաթողիկոսներն ու վանքերի վանահայրերը ամեն կերպ խուսափում էին նման գործարքներից, այդ կարելի է եզրակացնել Թիֆլիսում գտնվող, էջմիածնին վակֆ արված, երեք խանութների վաճառքին վերաբերող մի վավերագրից: Այդ խանութների վաճառքը տեղի է ունեցել հետևյալ ձևով. Թիֆլիսեցի խոջա Բարխուդարի որդի խոջա Մարտիրոսը էջմիածնից 43 թուման ստանալիք է ունեցել, ոմն Դավիթ, որ էջմիածնի գործակալն էր, նահապետ կաթողիկոսից կարգադրություն է ստանում հավաքելու նվիրակության գումարները և այդ պարտքը իր տոկոսներով հանդերձ մարել: Ամբողջ պարտքը մայր գումարով և տոկոսներով 60 թուման է լինում, իսկ հավաքված գումարներով հնարավոր չէր այդ պարտքը մարել: Դրա համար էլ կաթողիկոսը թույլատրում է պարտքի մի մասի դիմաց խոջա Մարտիրոսին վաճառել խոջա Բեհբուդից վակֆ ստացած երեք խանութները: Այս տեղի է ունենում նահապետ կաթողիկոսի օրոք: Իսկ երբ 1709 թվականին խոջա Մարտիրոսը գնում է էջմիածին՝ նորընծա Ալեքսանդր կաթողիկոսից իր պարտքի մնացորդը ստանալու, նոր կաթողիկոսը այդ վաճառքը հայտարարում է անօրինական և նորից ետ է գնում երեք խանութները ու վակֆ անում էջմիածնի վանքին: «Երբ ես Մարտիրոս գնացի սուրբ էջմիածին, — ասված է վավերագրում, — Ալեքսանդր կաթողիկոսն, երբ լսեց, թե վախճաթ գուքաններն ինձ վրայ ծախած է, դաբուլ չարաւ, էլ վերստին գուքաններու փողն ու գինը մեզ ետուր, էլ կրկին մեզմէն չետ գնեց, սուրբ էջմիածնայ վախմն արաւ»³³:

Վանքապատկան գյուղերը, ինչ ձևով էլ որ նրանք ձեռք բերված լինեին, «գանձագին» լինեին, թե «վակֆ», համարվում էին տվյալ վանքի մուլքը, և վանքը իրավունք ուներ այդ գյուղերի ուսյաթներից ունեցած գանձելու:

Վանքապատկան գյուղերից գանձվող պետական հարկերը, այլ մուլքային գյուղերից գանձվող հարկերի նման, մեծ մասամբ ոռճիկների դիմաց որպես թիուլ կամ համեսալե տրվում էին պետական պաշտոնյաններին ու զինվորականությանը և կամ զարթով ու իջարեյով տրվում մասնավոր մարդկանց³⁴: Այսպես, օրինակ, 1650 թ. Վաղարշապատ գյուղից գանձվող «մալը» տրված էր Երե-

33 Կալվածագրեր, կազմեց՝ Հար. Արրահամյան, պր. I, Երևան, 1941, էջ 131:

34 Տե՛ս 2. Փափազյան, Պետական և արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում 16—17-րդ դդ., «Բանբեր Երևանի համալսարանի», 1967 թ. № 2, էջ 96—110:

վանի բեկլարբեկի Քեյխոսորով խանին որպես թիուլ³⁵, 1558 թվականին թիուլ են տրված եղել նաև Խուլթա վանքից գանձվող հարկերը³⁶, 1669 թվականին թիուլով և համեսալեով տարբեր մարդկանց տրված են եղել նաև Տաթևի վանքապատկան գյուղերից գանձվող, «մալոջհաթին» ու «գիլջյան»³⁷ և այլն:

Սակայն եթե XVII դ. էջմիածնի ունեցած գյուղերի մեծ մասը գանձագին մուլքեր էին և որպես այդպիսիք ենթակա էին ամեն կարգի օտարման և նրանց վրա շէր տարածվում մուաֆուսյան (հարկերից ազատվելու) օրենքը, ապա, ընդհակառակը, նրա տիրապետած ընդարձակ վարելահողերի, այգիների, ջրաղացների, ձիթհանքերի, դինգերի, տների և տնտեսողների ու այլ ստացվածքների մեծ մասը վակֆ էր և ազատվում էր դիվանական հարկերից (مالوجهاث ووجهات ديوانى) մալոջհաթ վա վջուհաթ-և դիվանի):

XVII դ. պահպանվել են երկու հրովարտակներ՝ տրված Շահ Աբբաս Ա-ի և Շահ Աբբաս Բ-ի կողմից 1612 և 1644 թվականներին, այսինքն նախքան Հակոբ Զուղայեցու կաթողիկոս դառնալը: Այս ֆերմանները արժեքավոր են հատկապես նրանով, որ պարունակում են նաև շարիաթի կողմից տրված ֆեթվաներ, որոնցով հաստատվում են վանքապատկան վակֆային ստացվածքների (վարելահողեր, ջրաղացներ, այգիներ և ձիթհանքեր) ցուցակները: Ըստ այդ ցուցակների էջմիածինը 1644 թվականին ունեցել է հետևյալ վակֆ հողակտորները, որոնք ազատվում էին հարկերից:

1. Որոշակի հողակտորներ, Վաղարշապատի շրջակայքում կամ Շորաքյաթի հողեր (ըստ «Ջամբուի»՝ 250 սոմարի ցանքատարածություն):

2. Վանքի ներքին կողմի հողակտորը, որը 20 խավարի ցանքատարածություն էր:

3. Հերանենքի կամ Քյուլթափայի հողերը (ըստ «Ջամբուի»՝ 350 սոմարի ցանքատարածություն):

4. Գետափի հողակտորը, որը կոչվում էր նաև «Բագիրգան լուի»— (Վաճառականների ճանապարհ), ըստ «Ջամբուի»՝ 90 սոմարի ցանքատարածություն):

5. Սադակլուի հողակտորը, որի միջով երկու առու էր անցնում (ըստ «Ջամբուի»՝ 100 սոմարի ցանքատարածություն):

6. Իլանլուլում գտնվող հողակտորը, որը կոչվում էր ներքին Քյոնդալան:

7. Իլանլուլի վերի մասի հողակտորը, որը հայտնի էր «Շահ արխի» (Շահի առու) անունով (ըստ «Ջամբուի»՝ 50 սոմարի ցանքատարածություն):

8. Հաջիլարի հողակտորը (ըստ «Ջամբուի»՝ 120 սոմարի ցանքատարածություն):

9. Քարաքթի հողակտորը (ըստ «Ջամբուի»՝ 220 սոմարի ցանքատարածություն):

10. Երեք բահ ջրի և այլ հողակտորներ:

Հիշատակված են նաև հետևյալ այգիներն ու պարտեզները.

1. Մարտիրոսի այգին

2. Շահգեղանի պարտեզը

3. Գևորգի պարտեզը

35 Հրովարտակներ, II, վավ. 39, թղթ. 1ա, վավ. 87:

36 Վիմական տարեգիր, էջ 178—179:

37 Մատենադարան, Կթղկ. դիվան, թղթ. 2ա, վավ. 73:

- 4. Գրիգորի պարտեզը
- 5. Ղարիբների գերեզմանոցի պարտեզը

Այնուհետև մեկ ջրաղաց խանաղի այգու մոտ և մեկ ձիթհանք³⁸;

Բացի սրանից, 1649 թվականին Փիլիպոս կաթողիկոսը Քեյխոսրով խանից ստանում է մի նոր հրամանագիր, որով, որպես վակֆային սեփականություններ, հարկերից ազատվում էին Վաղարշապատ գյուղից զուրս գտնվող հետևյալ այգիներն ու ջրաղացները.

1. Չայ-կայթարանի այգին	Երևանում
2. Սարգսի որդի Թունիի այգին	»
3. Անապատի այգին	»
4. Անապատի այգուն կցված այգին	Չորագյուղում
5. Դավիթ վարդապետի այգին	Նորքում
6. Ագիբեկի այգին	Օշականում
7. Շաղվերթի այգին	»
8. Մեկ այգի	Շիրաբագում
9. Մեկ այգի	Աշտարակում
10. Սարգսի անվան ջրաղացը (1 քար)	Երևանում
11. Մարտիրոսի ջրաղացը (2 քար)	Դոխս գյուղում
12. Մեկ ջրաղաց (3 քար)	Չորագյուղում
13. Մեկ ջրաղաց (2 քար)	Էջմիածնում
14. Մեկ ջրաղաց (1 քար)	Նորադեղում ³⁹

Ահա այն կալվածները, որոնք որպես վակֆ ազատվում էին պետական հարկերից: Այս առիթով տրված հրովարտակը գրված է այն բանից հետո, երբ Էջմիածինը ներկայացնում է վերոհիշյալ կալվածների ցուցակը՝ խնդրելով Շարին հայտնել իր կարծիքը այն մասին, թե, երբ որդեն ապացուցված է հիշյալ կալվածների էջմիածնի վանքին վակֆ արված լինելը, «արդյո՞ք շարիաթով հնարավոր է, որ որևէ մեկը հիշյալ վակֆերը դարձնի մուլքային սեփականություն և վաճառի կամ հակառակ վակֆ անողի (վակիֆ) ցանկության տնօրինի նրանցից ստացվող եկամուտը, թե՞ ոչ»: Շարը այս հարցին բացասական պատասխան է տալիս⁴⁰: Այդ նշանակում էր, որ համաձայն շարիաթի՝ վակֆի հետ չէր կարելի վարվել այնպես, ինչպես կարելի էր վարվել գանձագին մուլքի հետ. դրանք պետք է մնային տվյալ կրոնական հաստատությունից ստանալով, և նրանցից ստացվող եկամուտները պետք է ծախսվեին միայն այն նպատակների համար, ինչի համար նվիրել է վակֆ անողը և որպես այդպիսին նրանք հարկման ենթակա չէին:

Բայց Էջմիածինը XVII դ. վերջերին ուներ նաև մոտ մի տասնյակ գանձագին մեծ կամ փոքր այգիներ, որոնց շահատակվելը շահի կողմից տրված մուաֆուլթյան ֆեբմաններում ինքնին ապացույց է այն բանի, որ դրանք ենթակա են եղել հարկման:

Վանքերին և վանական տնտեսություններին, ինչպես նաև հայ հոգևորա-

38 Հրովարտականք, II, վավ. 11, 26 (թղթ. 1ա, վավ. 37, 68)հմտ. «Ջամբո», էջ 154—155:
 39 Հրովարտականք, II, վավ. 36, 38 (թղթ. 1ա, վավ. 81ա, 86):
 40 Անդ, վավ. 11 (թղթ. 1ա, վավ. 37):

կանոսթյանը տրվող հարկային արտոնությունները և շարիաթական օրենքների համակարգում որոշակի ձևակերպում են ունեցել, հաճախակի ենթարկվելով տարասեռ ազդեցությունների ու միջամտության: Սակայն ֆեոդալական իմունիտետի հետ առնչվող շատ հարցերի շարքում այս հարցը ևս կարոտ է առանձին, ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն:

А. Д. ПАПАЗЯН

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПРАВ СОБСТВЕННОСТИ НА МОНАСТЫРСКИЕ ИМЕНΙΑ (XV—XVIII вв.)

Научный анализ действующих законов шариата имеет важное значение для изучения монастырского землевладения в Армении эпохи позднего средневековья. Эти законы нашли свое отражение в шариатских нотариальных актах, относящихся к продаже или пожертвованию имений (габале и вакфнамэ).

На основании хронологическо-сравнительного изучения хранящихся в архивном отделе Матенадарана документов и других современных источников в статье сделана попытка разъяснить обстоятельства и реальные предпосылки пожертвования церковным заведениям недвижимых имений.

Показано также различие между правами собственности и распоряжения имениями вакуфными или пожертвованными (املاك وقفی), с одной стороны, и с другой—на имения, купленные монастырским правлением за деньги (ملك زرخريد).

Отмечено, что первые являлись собственностью, не подлежащей отчуждению на веки вечные, и могли быть лишь отданы в аренду на срок не свыше трех лет. Вторые считались обычной частной собственностью и могли быть подвергнуты отчуждению в любой форме.

Источники свидетельствуют также о том, что привилегии в области налогообложения, предоставлявшиеся церковным заведениям, распространялись лишь на вакуфные имения, а имения, купленные за деньги, подлежали обложению налогами в соответствии с общими нормами.

H. D. PAPAŽIAN

QUELQUES PARTICULARITES DU DROIT DE PROPRIETE SUR LES DOMAINES DES MONASTERES (XV—XVIII SIECLES)

L'analyse scientifique des lois du chariat a une grande importance pour l'étude de la propriété foncière des monastères en Arménie à l'époque avancée du Moyen Age. Les actes notariés du chariat, concernant le don ou la vente des propriétés (vaghnamé et ghabalé) sont souvent l'expression de ces lois.


L'étude chronologique et comparative des documents et autres sources conservés aux archives du Maténadaran a permis à l'auteur

d'éclaircir les circonstances et les conditions réelles des dons à l'Eglise de biens immeubles.

La différence entre les droits de propriété et de disposition sur les domaines „vagi“ ou donnés (املاك وقفی) d'une part et les droits sur les domaines acquis pour de l'argent (ملك زرخريد) par le prieuré d'autre part, est également analysée dans l'article.

L'auteur note que les premiers n'étaient jamais passibles d'expropriation ou de vente et pouvaient être donnés à bail pour un délai de trois ans au plus. Les autres étaient considérés comme biens ordinaires et pouvaient passer en d'autres mains de n'importe quelle manière.

Les sources témoignent également que parmi les domaines des établissements ecclésiastiques seules les propriétés „vaghoufs“ faisaient l'objet d'un privilège de taxation, alors que les domaines acquis pour de l'argent étaient imposés conformément aux normes communes.



ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ԶԻՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ 1726—1736 ԹԹ.
ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
ՆԱԴԻՐ-ՇԱՀԻ ՕՐՈՔ

Հ. ՓԱՓԱԶՅԱՆ

18-րդ դարի 20—30-ական թվականներին Անդրկովկասի ժողովուրդներին վիճակվեց ապրել քաղաքական բուռն վայրիվերումների և ազատագրական պայքարում մերթ հուսադրիչ ակնկալությունների և ավելի հաճախ դառն հուսախաբույթյունների մի ժամանակաշրջան:

Նշված տասնամյակներում արագորեն իրար հաջորդող և ծանր հետևանքներով հղի իրադարձությունների բարդ և հակասական ընթացքը պայմանավորված էր հարևան երկրներում, հատկապես Իրանում զարգացող դեպքերով, որոնք վճռական ներգործություն ունեցան Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում ծավալված շարժումների վրա և բախտորոշ եղան ազատագրական պայքարի ղեկավար շրջանների քաղաքական դիմորոշման համար:

1724 թ. սկսած, ինչպես թուրքերի կողմից նվաճված Արևելյան Հայաստանում, Ադրբեջանում և Իրանական Քուրդիստանում շէին զաղարում զանգվածային ապստամբությունները օտար ռազմակալության հանդեպ, այնպես էլ Իրանի կենտրոնական և արևելյան շրջաններում Քիրմանում, Խորասանում, Մազանդարանում և այլուր, գնալով ավելի ու ավելի էր բորբոքվում ազատագրական պայքարը ընդդեմ աֆղանական բռնակալության:

Աֆղան նվաճողների դրույթունը ավելի ծանրացավ հատկապես Աշրաֆի օրոք (1725—1729), որը կարճ ժամանակամիջոցում պարտավորված էր ճակատել մի կողմից Շահ Քահանազ 2-րդի և Աստարաբադի Ֆաթհ-Ալի խան Կաջարի, իսկ մյուս կողմից Գիլանում հաստատված ռուսական զորքերի ու Իրան ներխուժած թուրքական ուժերի դեմ: Ռուսների դեմ մղած կռիվներում Աշրաֆը ծանր պարտություն կրեց, իսկ մի քանի անհաջող ընդհարումներից հետո, 1727 թ. հոկտեմբեր ամսին կնքված պայմանագրով նա ստիպված եղավ ճանաչելու թուրքերի տիրապետությունը Արևելյան Հայաստանի, Ադրբեջանի, Քուրդիստանի, Խուզիստանի և Կենտրոնական Իրանի մի քանի նահանգների վրա: Այս բանը վճռական նշանակություն ունեցավ և նոր թափ հաղորդեց արևելյան նահանգներում ծավալված ազատագրական շարժմանը:

Հանդես գալով Խորասանում և Ղիսավորելով այնտեղ հաստատված կրզլիբաշ ցեղերի ու քրդական մի քանի ցեղային միավորումների ապստամբական ելույթները, ինչպես նաև կարճ ժամանակում մի քանի վճռական հաղթանակներ տանելուց հետո, մեծ համբավ վաստակեց Աֆշար ցեղի Կրրկու ցեղախրմբի նախկին շարքային ռազմիկ Նադիրկուլի խանը: Շահ Քահանազ 2-ը, որը երկրի արևմտյան նահանգներում, հենվելով Սեֆյանների գահին հավատարիմ մնացած քոչվոր ավատատերերի վրա, պայքար էր ծավալել թուրքա-

կան ուժերի դեմ, սիրով ընդունեց Նադիրկուլու ժառանգությունը՝ վերանվանելով նրան Քահամազկուլի խան:

1729 թվականի սեպտեմբերի վերջերին Մեհմանդուստ գետի հովտում և նույն թվականի նոյեմբերի 13-ին մայրաքաղաք Սպահանից 60 կիլոմետր հեռու գտնվող Մուրշեխորթ գյուղի մոտ գլխավին ջախջախելով Միր Մահմուդի աֆղանական զորքերին, Քահամազկուլի խանը հաղթական մուտք գործեց Սպահան, որից անմիջապես հետո Շահ Քահամազ 2-ը վերադարձավ մայրաքաղաք ու բազմեց հոր գահի վրա:

Մի պահ թվում էր, թե կարճատև ընդհատումից հետո, նորից վերահաստատվեց Սեֆյան հարստության իշխանությունը, մնում էր միայն շարունակել և հաղթական ավարտին հասցնել թուրք-աֆղանական ռազմակալման դեմ երկրում ծավալված համաժողովրդական պայքարը: Սակայն, երբ Նադիրկուլին հաջողությամբ գլխավորում էր աֆղանների և ռաբենկների դեմ մղվող կռիվները՝ մեկը մյուսի ետևից ազատագրելով երկրի արևելյան նահանգներում գտնվող քաղաքներն ու գյուղերը, Շահ-Քահամազը, հակառակ Նադիրկուլու բազմիցս զգուշացումներին (խուսափել երկու ճակատով մարտեր մղելուց), ռազմական անհաջողություններ կրեց արևմուտքում և ստիպված եղավ ստորագրել թուրքերի կողմից առաջարկվող հաշտության պայմանագիրը, ըստ որի ամբողջ Անդրկովկասը անցնում էր թուրքերի տիրապետության տակ:

Օգտագործելով Շահ Քահամազի անհաջողությունները և կնքված ստորագուցիչ պայմանագրի հետևանքով երկրում ծայր առած դժգոհությունները, 1732 թվականին Նադիրկուլին կարողացավ գահընկեց անել Շահ Քահամազին և իր խնամակալության ներքո շահ հայտարարեց նրա նորածին որդուն՝ Աբբաս 3-րդին: Այդ թվականից սկսած փաստորեն Նադիրը դարձավ Իրանի ինքնիշխան տերը:

Քազավորական գահի նկատմամբ ցուցաբերած խորամանկ «անտարբերությունը» մեծ չափով բարձրացնում էր Նադիրի հեղինակությունը և լայն ժողովրդականություն շնորհում նրան որպես ազատագրական շարժման անձնավեր առաջնորդի: Նրա մեջ զուգորդված էին խորամանկ քաղաքագետն ու մարտերում կոփված ռազմագետ զորավարը: Լավ հասկանալով և ճիշտ գնահատելով ազատագրական շարժման բուռն վերելքն ու ընթացիկ ժամանակամիջոցի նշանակությունը, նա ամենայն վճռականությամբ հավաքում և խմբավորում էր բոլոր զինական ուժերը՝ հակահարված տալու Իրաք և Անդրկովկաս ներխուժած թուրքական զորքերին:

Նադիրի ձեռք բերած ռազմական հաջողությունները լուրջ դժգոհությունների պատճառ հանդիսացան թուրքիայում: Ռազմա-ֆեոդալական վերնախավը և պալատական ավագանին խիստ բացասաբար էր տրամադրված սուլթան Ահմադ 3-րդի և մեծ վեզիր Դամատ Իբրահիմի հանդեպ: 1730 թվականի վերջերին թուրքական արքունիքում ծավալված գահակալական պայքարն ի վերջո ավարտվեց սուլթան Ահմադի գահընկեցությունից: Նոր սուլթան Մահմուդ 1-ը ավելի քան անհաշտ և վճռական դիրք զրավեց Նադիրի նկատմամբ:

1732 թվականին ռուսների հետ կնքած պայմանագրից հետո, որով ռուսական զորքերը անմիջապես պետք է հեռանային Իրանի մերձկասպյան նահանգներից, Նադիրն արդեն հնարավորություն էր ստանում ամբողջ ուժերը կենտրոնացնելու Իրաքում և Անդրկովկասում հաստատված թուրքական զորքերի դեմ:

Իրաքի ուղղութիւնով մղվող կռիւներում թեև նադիրը որոշ հաջողութիւնների հասած, սակայն Ֆարսում ծագած ապստամբութեան պատճառով նա չկարողացավ մարտերը շարունակել մինչև հաղթական ավարտն ու գրավել Բաղդատը:

Սուլթան Մահմուդը պաշտոնապես շահանչեց Բաղդատի Ահմադ փաշայի հետ նադիրի կնքած հաշտութեան պայմանագիրը, ըստ որի փաշան իր կառավարութեան անունից խոստանում էր զորքերը ետ քաշել մինչև 1639 թվականի պայմանագրով հաստատված թուրք-իրանական սահմանը: Մարտերում զոհված Թոփալ Օսման փաշայի փոխարեն 1734 թվականին արևելյան զորաբանակների ընդհանուր հրամանատար նշանակվեց Քոփորուլուզադե Աբդուլլա փաշան, որը օժանդակ զորախմբերի գլուխն անցած Կոստանդնուպոլսից շարժվեց դեպի Անդրկովկաս:

Ինչպես գիտենք, 1724—1735 թթ. թուրքական ռազմակալումը Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում հանդարտ ընթացք չէր ունեցել և չէր ավարտվել լիակատար տիրապետութեամբ: Թեև գրավված էին բոլոր կարևոր բերդերն ու ամրութիւնները և հսկողութիւնն էր սահմանված գլխավոր ճանապարհների վրա, սակայն մինչև 1735 թվականը չէին դադարում ռազմակալված վայրերի ապստամբական ելույթները: Ինչպես Սյունիքում, Արցախում և այլ վայրերում, այնպես նաև Հարավային Ադրբեջանում թուրքական զորքերը շարունակ գտնվում էին պատերազմական վիճակում, կռիւլով մի կողմից լեռնաշխարհի զինվորված հայութեան և մյուս կողմից ադրբեջանական ռազմիկ ցեղերի միավորումների դեմ:

Եվ ահա այս պայմաններում, մինչև Աբդուլլա փաշան իր բանակով կհասնեն Կարս, նադիրն արդեն Թավրիզի ու Արդաբիլի վրայով մտել էր Շիրվան, պարտութեան մատնել լեզգի Սուրխային, գրավել ու ավերել Շամախին ու Կազիկումախը և պաշարել Գանձակի բերդը:

Արցախի սղնախներում, Սյունիքում և Արարատյան երկրում զինվորված հայութիւնը, այդ թիւում նաև հայ մելիքներն ու հոգևորականութիւնը դեռևս 1725 թվականից, առավել ևս 1732 թ. Ռեշտում ստորագրված ռուս-իրանական պայմանագրից հետո, թուրքական ռազմակալման դեմ մղվող իրենց հերոսական պայքարով ինքնըստինքյան հանդես էին գալիս որպես նադիրի դաշնակիցներ: Նադիրի մուտքը Անդրկովկաս և ռուսների հեռացումը մերձկասպյան նահանգներից ավելի իրական հիմքեր ստեղծեցին այդ ռազմա-քաղաքական գործակցութեան համար:

Հայ քաղաքական մտքի պատմութեան մեջ 18-րդ դարի 30-ական թվականները այն հազվագեղ շրջաններից է, երբ պատմական ամենարուտն վայրիվերումների պահին, քաղաքական-հասարակական կյանքի դեկի մոտ գտնուվող անձինք, ստեղծված բարդ իրադրութեան պայմաններում կարողանում էին արագ և ճիշտ կողմնորոշվել և որդեգրել ստեղծված նոր իրադրութիւնից թելադրվող քաղաքական դիմորոշման բոլորովին այլ ուղղութիւն:

1724 թ. Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրից հետո, օսմանյան ռազմակալման դեմ մղվող անհավասար գոտեմարտում Սյունյաց և Արցախի հայութիւնը այլևս չէր կարող Ռուսաստանից շոշափելի օգնութիւն սպասել: Այդ պայմանագիրը բացառում էր Կասպից ծովի առափնյա շրջանները նվաճած ռուսական զորքերի որևէ շարժում դեպի Անդրկովկասի

ներքին նահանգները: Հայտնի է թե ինչով վերջացան Գանձակի և Ղարաբաղի Սղնախների զինավառված հայութեան նման ակնկալութիւնները:

1726 թ. Մխիթար-Բեկի և նրան համախոհ յուզբաշինների ստորագրութեամբ բուսաց ցարին ուղղված աղերսագիր-ուղերձը¹ թույլ է տալիս եզրակացնելու, որ Սլունիքում ստեղծված օրհասական վիճակը ևս հետևանք չէր միայն թուրքական գերազանց ուժերի, հատկապես Բեքիր և Արաբ-Ալի փաշաների՝ ծավալած ռազմական գործողութիւնների: Այդ ուժերի կազմալուծմանը առավել նպաստել էին դասակարգային ներհակութիւններն ու դրսից ակնկալվող օգնութեան և դաշնակիցներ որոնելու վերաբերյալ թեր և ղեմ կարծիքները: Գեպքերի հետագա ընթացքն եկավ հաստատելու սակայն, որ ավելի իրատես էին շարժման այն ղեկավարները, որոնց ստորագրութիւնները բացակայում էին այդ գրութեան տակ:

Աղբյուրները վկայում են, որ նույնիսկ 1727 թ. Հալիձորի տակ տարած հաղթանակից հետո, երբ Ղափան մտած թուրքական զորքերը ջախջախված էին արդեն ու դուրս շարտված երկրի սահմաններից, ապստամբութեան ղեկավարներին շարունակում էր մտահոգել դրսից օգնութիւն ստանալու և հուսալի դաշնակիցներ ձեռք բերելու հարցը:

Օսմանյան ռազմակալման ղեմ մղվող իրանական ազատագրական շարժման ղեկավարների հետ համագործակցելու առաջին փորձերը վերաբերում են այն ժամանակներին, երբ արևմուտքում այդ պայքարը գլխավորում էր շահ Սուլթան-Հուսեյնի որդին՝ Թահմազ 2-րդը: 1726—1727 թթ. Թահմազին հավատարիմ խաներից շատերը գլխավորելով ապստամբական կոիվները, Ատրպատականի հյուսիսային շրջանները մաքրել էին օսմանյան նվաճողներից: Այս ժամանակ էր ահա, որ Դավիթ-Բեկը Մխիթարին և Տեր-Ավետիսին 66 զինվորներով ուղարկեց Ազուլիսից ոչ շատ հեռու Արաքսի աջ ափին գտնվող, Թահմազին զինակից, Դուզալի խանի մոտ, առաջարկելով միացյալ ուժերով շարունակել պատերազմը օսմանցիների դեմ²:

Ավելի ուշ, Դավիթ-Բեկի պատվիրակները եղան նաև Թահմազի մոտ, որը ողջունելով Ղափանի հայութեան օսմանցիների դեմ տարած հաղթանակները, հատուկ հրովարտակով իշխանական իրավունքներ շնորհեց Դավիթ-Բեկին³: Թահմազի հանձնարարութեամբ էր, որ նրան հավատարիմ խաներից մի քանիսը շտապեցին օգնութեան հասնել Դավիթ-Բեկին, երբ վերջինս թուրքական զորքերի կողմից պաշարված էր Ազուլիսի Թովմա առաքյալի վանքում⁴:

Զինակցութիւնը Սլունիքի հայ զինվորութեան և Իրանի ազատագրական շարժման ղեկավարների միջև շարունակվել է նաև այն բանից հետո, երբ Նազիրը գահից հեռացրեց Թահմազին և հարձակման անցավ Իրանի արևմտյան շրջանները, Ատրպատականն ու Անդրկովկասը նվաճած թուրքական զորքերի դեմ:

Պատմիչ Աբրահամ Երևանցու վկայութեամբ, 1732 թ. Թովալ Օսման փաշայի դեմ Համադանի և Պարսկական Իրաքի սահմաններում մղվող կոիվներ-

¹ Армяно-русские отношения в первой трети XVIII века, Сборник документов, т. II, часть II, Ереван, 1967, стр. 273—274.

² Ընտիր պատմութիւն Դավիթ բէգին և պատերազմաց հայոցն խափանու... Վաղարշապատ, 1871, էջ 53:

³ Նույն տեղում, էջ 58:

⁴ Նույն տեղում, էջ 63:

րում, նադիրի բանակում մարտնչում էին վեց հայազգի զորախմբեր. «էին ի զօրս պարսից, — գրում է նա, — վեց Քրիստոնեայք յազգէն մերմէ, որք էին հազարապետք Ղուլի (Նադիր) խանին և ունէին զօրս հարիւրաւորս, անուն՝ միոյն՝ Գաւիթ, զոր Գորըցենցի բէկ ասեն, երկրորդն էր Ատովմին որդի Աբիճան, երրորդն էր շաբենցի Այդին բէկի Աղաճանն, չորրորդն՝ շափենցի Մուսխսին որդի Բաղիզն, հինգերորդն՝ Ճադակերեանց Թօփուզի որդի Հախնազարն»⁵:

Նադիրի բանակում գործող հայկական զորախմբերը համալրվեցին և ավելի բազմացան հատկապես 1735 թվականին Գանձակի պաշարման ամիսներին, իսկ երբ նա շարժվեց դեպի Կարա՝ ճակատելու Աբդուլլա փաշայի դեմ, Արցախի և Սյունյաց հայ զինվորությունը մեկիքների գլխավորությամբ ուղեկցում էր նրան ամենուրեք: Գեղարքունիքից անցնելիս, նադիրը մեծ պատվներ տվեց Մելիքյան Մելիք-Շահնազարյանին, որն իր զորքերով եկել էր ծառայելու նրան: Ավելի ուշ, երբ Մելիքյանը խարդավանքի զոհ դարձավ, նադիրը Գեղարքունյաց մելիքությունը շնորհեց նրա որդուն՝ Մելիք-Մանուչարին և ինչպես նշված է Հովհաննես Մելիք-Սելիմյանցի կազմած մի ժամանակագրության մեջ «ետ նմա իշխանութիւն, ունել ընդ ինքեան զդահիճ, զբանտ և զշղթայս և անուանեաց զնա միրիմիրան կամ պէլլէրպէշի ի վերայ Արարատեան երկրի և մասին ինչ աշխարհին Սիւնեաց»⁶: Նույն մելիքական տոհմից նադիրի բանակում կային նաև այլ մելիքներ: Մեզ է հասել նադիրի մի հրովարտակը, որտեղ հավաստված է Մելիք-Միանասար Մելիք-Շահնազարյանցի հավատարմությունն ու մատուցած ծառայությունները նադիրին⁷:

Սակայն 18-րդ դարի 30-ական թվականներին հայ իրականության խոշորագույն քաղաքական դեմքը Դիզակի Մելիք-Եզանն էր: Նադիրի պալատական պատմիչ Մուհամմադ-Քյազիմը իր եռահատոր պատմության առաջին գրքում բազմիցս հիշատակում է նրան, որպես նուրբ քաղաքագետին հատուկ արտակարգ ընդունակություններով օժտված իմաստուն մի գործիչ, որը նադիրի կողմից մեծ սիրտ և վստահություն էր արժանացել: Վերլուծելով 1720-ական թթ. Անդրկովկասի վիճակը, Մուհամմադ-Քյազիմը հայ զինվորության առաջնորդներին մեջ առաջին տեղը հատկացնում է Մելիք-Եզանին և ապա հիշում նաև Մելիք-Թամարզի և Մելիք-Հարությունի անունները: Ըստ նրա, այդ հայ մելիքները, որոնք գործում էին Սյունիք-Արցախում և Արարատեան երկրում թուրքական զորքերի ներխուժումից առաջ, իրենց իշխանությունը տարածել էին մինչև Կուր և Արաքս և սպառնում էին Գանձակի ու Երևանի բերդերին⁸:

Հավատարմություն հայտնելով նադիրին, բացի այն, որ հայ մելիքները զորքերով մասնակցում էին թուրքերի դեմ մղվող կռիվներին, միաժամանակ ապահովում էին ռազմական հարկերի ու տուրքերի զանձումը իրենց իշխանությունն ապահովող շրջաններում: Հայ մելիքների միջոցով էր հայթայթվում նաև բանակի համար անհրաժեշտ պարենն ու հանդերձանքը, քաշող ուժը, գու-

⁵ Աբրահամ երևանցի, Պատմութիւն պատերազմաց, Երևան, 1938, էջ 75—76:

⁶ Մատենադարան, Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, վավ. 124:

⁷ Հովհ. Մելիք-Սելիմյանցի, Զմյուտնիացի, Համառոտութիւն պատմութեան Հայկազանց, Մատենադարան, ձեռ. 2888, էջ 341 ա, հմմտ. լեռ, Հայոց պատմություն, հատ. 3, Երևան, 1946, էջ 715:

⁸ Մուհամմադ-Քյազիմ, Նամե-յե Ալամարա-յե Նադերի (պարսկ. բնագիր), հատ. 1, Մոսկվա, 1960, էջ 99 (այսուհետև՝ Մուհամմադ-Քյազիմ):

մակում և պաշարողական մարտերում օգտագործվող բեռնակիր և ամրություններ կառուցող բանվորությունը:

Ռազմական այս արտակարգ հարկերն ու պարհակները, որ ընդհանուր տերմինով կոչվում էին «սուրսաթ», գանձվում էին ամենայն խստությամբ: 1735 թվականից պահպանվել են Արցախի հայ մելիքների կողմից Նազիրին տրված մի քանի խնդրագրեր և զեկուցագրեր, որոնց մեջ կան խաչներից, վարանդալից, Ջրաբերդից և մյուս մահալներից սուրսաթի գանձման նկարագրություններ: Մի զեկուցագրում խաչների Մելիք Դավիթը խնդրում է Նազիրին, որպեսզի նրա զինվորները ապօրինի պահանջմունքներով չենդեն իր հպատակներին. նրանց վիճակը առանց այն էլ ծանր է, քանի որ «դեռ առաջին սուրսաթը լրիվ չհավաքած, երկրորդ սուրսաթի գանձման հրահանգ է ստացել նորին գերազանցությունից»⁹:

1735 թվականի մայիսին Նազիրը Գանձակը թողեց պաշարված և Լոռի-Փամբակի վրայով գնաց դեպի Կարս: Աբդուլլա-փաշան, որ բանակ էր դրել Ղազանչալում, փակվեց Կարսի բերդում և խուսափեց բաց դաշտում ճակատամարտ տալուց: Կարսի շրջանը ասպատակության և ավարի ենթարկելուց հետո, Նազիրն իր զորքերով նորից անցավ Ախուրյանը և բարձրանալով դեպի Կարբի, բանակ դրեց Եղվարդի շրջակայքում:

Այս շրջանում է հաշա, որ նորից առիթ ունենք արձանագրելու հայ վերնախավի որոշակիորեն նպատակագրված քաղաքական գործունեության դրվագները: Հայ և պարսկալեզու աղբյուրների վկայությամբ, այդ օրերին Նազիրի մոտ էին գտնվում Արևելյան Հայաստանի համարյա բոլոր հայ մեծամեծները. Գիզակի Մելիք-Եզանը, Գեղարքունյաց Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը, Երևանի Մելիք-Մկրտումն ու Մելիք-Հակոբջանը և շատ ուրիշներ:

Ժամանակը, անշուշտ, նպաստավոր էր, երբ Իրանի նոր վեհապետը անձամբ գտնվում էր հայկական հողում, հոծ հայ բնակչություն ունեցող Արարատյան երկրում, որտեղ նա պատրաստվում էր վճռական ճակատամարտ տալ թուրքական ուժերի դեմ: Այս բանը լավ էր գիտակցում նաև ինքը՝ Նազիրը, և օսմանցիների դեմ մղած մեծ գոտեմարտում նա հայերի վրա նայում էր որպես հուսալի դաշնակցի:

Պատեհ էր առիթը հայ աշխարհիկ և հոգևոր ֆեոդալականության համար, վերահաստատելու և ավելի քան ամրապնդելու իրենց իշխանական դիրքն ու իրավունքները և հայ եկեղեցական իշխանությունը օժտելու ավելի լայն իրավունքներով ու արտոնություններով:

«Յուշ արարին ինձ իշխանքն մեր՝ որք կային ի բանակին և Մելիքջան Քալանթարն, թէ հարկ է գալ քեզ ի տեսութիւն խանին ընծայիւք և պատրաստութեամբ», — գրում է կաթողիկոս Աբրահամ Կրետացին¹⁰:

Առաջին իսկ հանդիպումից երևան եկող արտակարգ բարյացակամ վերաբերմունքը Աբրահամ կաթողիկոսի նկատմամբ, թելադրված էր Նազիրի հայ զինակիցների կողմից: Մուհամմադ-Քյազիմ պատմիչը բավական մանրամասն նկարագրում է, թե ինչպես Մելիք-Եզանը բացատրում էր Նազիրին կա-

⁹ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. Ձր, վավ. 181:

¹⁰ Աբրահամ Կրետացի, Պատմագրութիւն անցիցն իւրոյ և նատր-Շահին պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 11—12 (այսուհետև՝ Աբրահամ Կրետացի):

թողիկոսի և հայ եկեղեցու նկատմամբ նրա կողմից ցուցաբերվող հոգատար վերաբերմունքի քաղաքական նշանակությունը:

«Անհամար նվերներ մատուցելով նաղիրին,— գրում է Մուհամմադ-Քյազիմը,— Մելիք-եզանը խնդրում էր վեհապետին, որպեսզի նա բարեհաճի այցելել այդ սուրբ վայրը (էջմիածին)..., դրանով նա կուրախացնի եվրոպական երկրների («Ֆրանսուսանի) թագավորներին և կպատվի կարողություն և ուժ ունեցող բոլոր մելիքներին, և բոլոր հայ համայնքների համար, որոնք ապրում են այս և ուրիշ երկրներում, արևից էլ պարզ կդառնա նրանց նկատմամբ եղած սերն ու գթությունը, և քանի պատվում է երկիրը, աշխարհի բոլոր մասերում կհռչակվի ու կփառաբանվի նրա հոգատարությունը իր ծառաների և այրող ատելությունը թշնամիների նկատմամբ»¹¹:

Այցելելով էջմիածին, նաղիրը նոր հրովարտակներով հաստատում է կաթողիկոսի, հոգևորականության և հայ համայնքի հնուց սահմանված իրավունքները¹²: Ըստ Մուհամմադ-Քյազիմի, նա վանքի վերանորոգումը հանձնարարում է հմուտ վարպետների՝ հատկացնելով հազար թուման, տաճարը զարդարում հինգ ման (15 կգ) կշռող ոսկե ջահով և կարգադրում Քիրմանի նահանգային սարքարարությանը ամենաընտիր գորգերը բարձել պետական գրաստներին և ուղարկել էջմիածին¹³:

Միակ կլիներ այս բոլորը դիտել սոսկ որպես «տաղանդավոր բնակալներին հատուկ անհասկանալի քմահաճույքներ»¹⁴: Ազատագրական կռիվների փորձված դորավարը լավ էր հասկանում ուղղակի գործողությունների ընթացքում տեղական բնակչության ցուցաբերած օգնության նշանակությունը: Պատահական չէր, որ նա Աբդուլլա-փաշայի դեմ ճակատ հարդարեց այնպիսի մի վայրում, որը գերազանցապես հայկական բնակչություն ուներ: Իսկ այցելությունը էջմիածին, անձամբ ներկա լինելը պատարագին, կաթողիկոսի մեծարումն ու կատարած նվիրատվությունները, ավելի քան վստահություն էին ներշնչում ամբողջ տաս տարի թուրքական ստրկության շղթաների մեջ տառապած հայ աշխատավորությանը և բարեկամաբար տրամադրում Իրանի նոր վեհապետի նկատմամբ:

1735 թվականի հուլիսի 8-ին Եղվարդի մոտ մղված մեծ ճակատամարտում, չնայած թվական բացարձակ դերակազմության, թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին: Ճակատամարտի ընթացքն ու վախճանը մանրամասն նկարագրում են Աբրահամ Կրետացին, Մուհամմադ-Քյազիմը և նաղիրի արքունի քարտուղար Միրզա-Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբազին¹⁵: Պարսկական հրետանու կրակային հզորությունը, հեծելազորի շեշտակի ճակատային հարվածն ու թուրքական հրետանու հանկարծակի գրավումը թշնամու բանակի խորքը մխրճված ջեզայիրլիների կողմից, լիովին կազմալուծեց թուրքական զորքերի մարտական կարգը, որին և հաջորդեց անկանոն և խուճապահար նահանջը:

Օսմանյան փառաբանված ենիչերական զորամասերը և հատկապես Թեյմուր փաշայի հրամանատարության տակ գտնվող Վանի քուրդ աշիրաթները

¹¹ Մուհամմադ-Քյազիմ, հատ. 1, էջ 633:
¹² Աբրահամ Կրետացի, էջ 13:
¹³ Մուհամմադ-Քյազիմ, հատ. 1, էջ 632—634:
¹⁴ Լեո, Հայոց պատմություն, հատ. 3, երևան, 1946, էջ 715:
¹⁵ Աբրահամ Կրետացի, էջ 17—10, Մուհամմադ-Քյազիմ, էջ 600—607, Միրզա Մուհամմադ-Մեհդի խան Աստարաբազի, Քարիխ-և նաղերի (պարսկ. բնագիր), Քավրիզ, 1869, էջ 85—89:

զորագնդերը, խույս տալով արյան դաշտից, մի մասը Աշտարակի և Կարբիի, իսկ մյուս մասը էջմիածնի վրայով փորձեցին նահանջել և շտապ անցնել Ախուրյանի արևմտյան ափը: Սակայն, ինչպես գրում է Միրզա Մուհամմադ-Մեհդի խանը, նահանջի ճամփան փակել էին տեղի հայ գյուղացիների աշխարհագրական ջոկատները: Նվ այսպես թուրքերին երկու կողմից սեղմելով Քասախի կիրճում՝ մի կողմից՝ պարսկական հարձակվող հետևակն ու հեծելազորը, մյուս կողմից՝ հայ զինվորված գյուղացիությունը, գլխովին ոչնչացրին նահանջող թշնամուն: Այստեղ Դամադ Մուստաֆա փաշայի և այլ բարձրաստիճան փաշաների հետ սպանվեց նաև սարասկար Աբդուլլա-փաշան, որի գլխատված դիակը նազիրն ուղարկեց Կարսի փաշային ի տես¹⁶:

Այս հաղթական ճակատամարտից հետո նազիրն իր զորքերով բարձրացավ դեպի Կոտայք և Գեղարքունյաց լեռները: Երկու ամիս բանակին հանգիստ տալուց հետո, նորից անցավ Ախուրյանը և գնաց պաշարելու Կարսի բերդը: Նա միաժամանակ ասպատակ սփռեց Կարսից մինչև Կարին և Բայազետ, կողոպտուի և գերեվարության ենթարկելով Արևմտյան Հայաստանի հարյուրավոր գյուղեր ու քաղաքներ:

Սակայն շուտով, Աբդուլլա փաշայի տեղը նոր սարասկար նշանակված Ահմադ փաշայի կողմից, որը Բաղդադից ետ էր կանչվել և արտակարգ լիազորություններով ուղարկվել էր էրզրում, հատուկ պատվիրակություն եկավ Կարս և հաշտության բանակցություններ սկսեց նազիրի հետ: Թուրքերն արդեն համաձայնվում էին հանձնել Երևանի, Գանձակի և Թիֆլիսի բերդերը և ետ քաշել զորքերը Անդրկովկասից¹⁷:

Հաշտությունից հետո նազիրը գնաց Թիֆլիս, իր հետ տանելով Աբրահամ կաթողիկոսին: Այստեղ նա նորից պատիվներ տվեց նրան և նրա խնդրանքով գերությունից ազատեց շատ հայերի: Նոր հրովարտակներով բավարարելով կաթողիկոսի բոլոր պահանջները, նազիրը կրկին ու կրկին շեշտում էր նրա և հայ ժողովրդի մատուցած ծառայությունները, հանձնարարելով Երևանի Մուհամմադ-կուլի խանին՝ ուղադիր լինել նրա նկատմամբ: «Այլ և ազգիս մերոյ գոհ և շնորհակալութիւն եբեր,— գրում է Աբրահամ Կրետացին,— թէ ինձ լաւ ծառայութիւն արարին մտերմաբար, և միամիտ սպասավորեցին յամենայն դիմօք, և շի լինի թէ նեղացնէք զազգս հայոց՝ կամ վնասէք, զի զայնպիսին պատուհասակո՞ծ առնեմ»¹⁸:

Գեպի Գաղստան կատարած անհաջող արշավանքից հետո՝ 1735 թվականի նոյեմբերին, նազիրը բանակ դրեց Մուղանի դաշտում և հրավեր ուղարկեց Իրանի բոլոր նահանգների մեծամեծներին, բեկլարբեկներին, խաներին, մելիքներին և պետական բարձրաստիճան պաշտոնեություններ, ռազմիկ ցեղերի առաջնորդներին, ամիրներին և հոգևորականության ներկայացուցիչներին, շտապ հավաքվելու այնտեղ՝ կարևոր խորհրդակցության: Մուղանի «կուռուլթայում» (ավագանու ժողով) ներկայացված էր Իրանի աշխարհիկ և հոգևոր, մուսուլման և այլադավան ավատատիրության վերնախավը. կանչված էին նաև հայ մելիքներն ու կաթողիկոս Աբրահամ Կրետացին:

Ավագանու ժողովը միաձայն Իրանի գահի միակ արժանի թեկնածու ճա-

¹⁶ Միրզա Մուհամմադ Մեհդի խան Աստարաբադի, Թարիխ-և Նազիրի, էջ 88:

¹⁷ Նույն տեղում, էջ 89—90:

¹⁸ Աբրահամ Կրետացի, էջ 24:

նաչեց բազում ճակատամարտերում հաղթանակներով փառաբանված, երկիրը օտար ռազմակալումից ազատագրող նաղիրին: Գարնանամուտին՝ պարսից ավանդական Ամանորին, Մուղանում տեղի ունեցավ նաղիրի թագադրության հանդեսը: Դրանից հետո Իրանի նոր շահը ընդունեց թուրքական պատվիրակությանը, կնքեց հաշտության պայմանագիր, հռչակելով սուննի և շիա մուսուլմաններին միջև դարավոր թշնամության վերացման կոչը: Այնուհետև անցնելով երկրի ներքին գործերի կարգավորմանը, մարտերում աչքի ընկած և հավատարմությանը վստահության արժանացած ամիրներին ու ավատատերերին նա վարձատրեց բարձր պաշտոններով և նոր ավատներով: Բեկլարբեկիներ, վեզիրներ և այլ պաշտոնյաներ նշանակեց, որոնք հրովարտակներ ստանալով մեկնեցին իրենց պաշտոնատեղիները:

Երևանի բեկլարբեկի նշանակվեց Հերաթի Փիր-Ահմադ-խանը: Այստեղ ևս նաղիրը հանձնարարում է նոր խանին՝ հոգատար լինել կաթողիկոսի և հայերի նկատմամբ: Ավելին, խանի կողմից որևէ օրինազանցություն նկատելու դեպքում, կաթողիկոսը նաղիրի լիազորությամբ կարող էր զգուշացնել նրան, և եթե վերջինս չլսեր, կաթողիկոսը կարող էր դիմել Թավրիզի Իբրահիմ-խանին (նաղիրի եղբորը), իսկ եթե նա էլ ընթացք չտար բողոքին, հայոց խալիֆան իրավունք ուներ անձամբ դիմելու Շահին¹⁹:

Նաղիրն այստեղ հաստատում է նաև Երևանի մելիքներ Մելիք-Մկրտումի և Մելիք-Հակոբջանի իրավունքները²⁰ և, ներկայացնելով Փիր-Ահմադ խանին, հանձնարարում է «նրանց խոսքից չշեղվել, ամեն հարցում կաթողիկոսի և նրանց հետ խորհրդակցել: Կըզըլբաշներին և Երևանի աղաներին չվստահել, միայն նրանց վստահել: Երևանի աղաները պետք է նրանց ենթարկվեն, երկիրն ու ժողովուրդը նրանցն է և նրանք պետք է երկիրը շենացնեն»²¹:

Արարատյան երկրի քաղաքացիները նշանակվեց Մելիքջան Մելիք-Շահնազարյանցը: Դա բեկլարբեկից հետո վիլայեթի ամենակարևոր և ամենաազդեցիկ պաշտոնն էր: Աբրահամ կաթողիկոսը շեշտում է հատկապես, որ Արարատյան երկրի ինը մահալների մելիքները ենթարկվում էին նրան «և դողային առջևն իբրև զնոքար»²²:

Եվ այսպես, թեև երկրի ներքին գործերի տնօրինումը հայ մելիքների և հոգևորականության իրավասությանն ու վերահսկողությանն էր ենթարկված, սակայն, որպես սահմանամերձ կուսակալություն, Երևանի բեկլարբեկիությունը կառավարվում էր զինվորական նահանգապետի՝ շահի հավատարիմ ամիր Փիր-Ահմադ-խանի միջոցով:

Այլ էր, սակայն, վարչա-քաղաքական իրավիճակը Արցախական աշխարհում: Նախկինում Գանձակի բեկլարբեկիությանը ենթակա Գուլիստանի, Խաչենի, Զրաբերդի, Վարանդայի և Դիզակի մահալների հայությունը սղնախների քայքայումից հետո զենքը ցած չէր դրել և, ինչպես տեսանք մելիքների ղեկավարությամբ հերոսական մարտեր մղելով օսմանցիների դեմ, փաստորեն ինք-

¹⁹ Աբրահամ Կրետացի, էջ 56:
²⁰ Պահպանվել է Մելիք-Մկրտումի և Մելիք-Հակոբջանի կալվածներին և հարկային արտոնություններին (մուսֆուխյան) վերաբերող նաղիրի հրովարտակի քնագիրը (տե՛ս Մատենադարան, կաթ. գիվան, թղթ. 1 գ, վավ. 1032):
²¹ Աբրահամ Կրետացի, էջ 56:
²² Նույն տեղում, էջ 61:

նիշխան էր դարձել: Դիզակի Մելիք-Եզանի գլխավորությամբ Արցախի հայ մելիքների զինակցությունը Նադիրի հետ ավելի քան ամրացրեց նրանց իշխանությունը, ծնունդ տալով նոր վարչական միավորի՝ «խամսայի մելիքություններին»²³: Նադիրը, փաստորեն, վավերացրեց այն, ինչ 15 տարիների հերոսական պայքարի շնորհիվ ձեռք էր բերել Արցախի ազատատենչ հայությունը:

Գանձակի բեկլարբեկիությունից անկախ, «Մահալ-ե խամսե» անունով հինգ մելիքությունների միավորված նահանգը, կենտրոն ունենալով Տող ավանը Դիզակի Մելիք-Եզանի գլխավորությամբ ճանաչվեց որպես հայկական ինքնավար մի երկիր, որի սահմանները ձգվում էին Գանձակի հարավային շրջաններից մինչև Արաքս գետը: «Մէկն Թալիշ, մէկն Չմյաթ (Ջրաբերդ), մէկն Խաչէն, մէկն Վարանդայ, մէկն Քոչէզ, մէկն Տուզադ, այսդոնց (սրանց) խանը (Նադիրը) պակարպէկայ տեղ ար[ար] ինձ...»: Այսպես է գրում իր մասին Մելիք-Եզանը իր տան դռան ճակատին թողած արձանագրության մեջ: Մելիք-Եզանը հարևան Շիրվանի, Գանձակի, Երևանի բեկլարբեկիների նման ուղղակի ենթարկվում էր Նադիրի եղբորը, սիփահասալար Իբրահիմ խանին, որը նստում էր Ատրպատականի կենտրոն, փոխարքայանիստ Թավրիզ քաղաքում:

Պատմական բախտորոշ այս ժամանակաշրջանում Մելիք-Եզանի նման տաղանդավոր պետական-քաղաքական գործչի խելամիտ ջանքերը, զինվորական-կազմակերպչական համարձակ գործունեության հետ զուգորդված, նոր շունչ տվին ազատագրական պայքարին ու դոտեպնդեցին լեռնաշխարհի զինավառ հայությունը, ամրացնելով հավատքը միասնության և հաղթանակի նկատմամբ:

Դիզակի Տող ավանում մինչև վերջերս դեռ կանգուն էր մելիքների տոհմական դամբարանը: Համեստ շիրմաքարի չափածո տապանագրի մեջ տրված է Մելիք-Եզանի անձնավորության և իշխանության բնութագրերը.

«Այս է տապան Բաջ իշխանին,
 Եկան անուն մեծ Մէլիքին,
 Որ է որդի բարեպաշտին
 Ղուկաս անուն վարդապետին.
 Եղև սիրեցեալ ամենայնին
 Նստիւր անուն քազատին,
 Տիրապետեաց սայ ի երկրին
 Ի Աղուանից ի նահանգին
 Յոյժ պատուեցաւ Պարսից ազգէն
 Քան զիշխանս Հայոց երկրին...»²⁴

Ճանաչելով, սակայն, ազատության համար մարտնչող հայ ժողովրդի նվաճած իրավունքները և արտոնություններ շնորհելով հայ իշխող դասի ներկայացուցիչներին, Նադիրը նպատակ ուներ վերջ տալ հայերի ուսական դիմորոշմանը և իրեն հավատարիմ հայ մելիքների ու հոգևորականության միջոցով միշտ հնազանդ պահել հայ աշխատավոր բնակչությանը:

Իրար հաջորդող փայլուն հաղթանակները Նադիրին տարան մինչև շահընշահների գահը: Նա կարողացավ ազատել Իրանը օտարազգի նվաճողներից, ժառանգելով սակայն օտար ռազմակալման և անընդմեջ պատերազմների հե-

²³ «Խամսա» արարերեն նշանակում է «հինգ»:

²⁴ Մ. Բարխուդարյանց, Արցախ, Բաքու, 1895, էջ 75:

տեանքով ծայրահեղ աղքատության հասած և տնտեսապես քայքայված մի լայնածավալ երկիր:

Աղբյուրների վկայությամբ 1735—1736 թթ. սովն էր մոլեզնում Անդրկովկասում: Աբրահամ Կրետացին նկարագրում է երկրում տիրող ծանր վիճակը, միերքների սղումն ու զրամի ծայրահեղ պակասը: Աբդուլլա-փաշայի դեմ տարած հաղթանակից հետո Նադիրն արդեն մտահոգված էր երկրի տնտեսության վերականգնման հոգսերով: Նա կաթողիկոսի և Երևանի բեկլարբեկիի հետ խորհրդակցում էր ուղիներ գտնել հողագործների վիճակի բարելավման, գյուղատնտեսությանը զարկ տալու, ինչպես նաև առևտրին ու վաճառականությանը նպաստող պայմաններ ստեղծելու համար: Կաթողիկոսի խնդրանքով Նադիրը հրամայեց բացել Երևանի փողերանոցը (գառաբխանեն), տնօրինությունը հանձնարարելով Մելիք-Հակոբջանին, և ապա խանի ու կաթողիկոսի անունից նամակներ ու կոնդակներ հղվեցին Կարսում, Կարինում, Թոխաթում, Բայազետում, Վանում, Բաղեշում և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում բնակվող հայ և թուրք վաճառականությունը, հայտնելով նրանց, որ արդեն խաղաղություն է հաստատվել և ապահով պայմաններ են ստեղծվել վաճառականական կարավանների երթևեկության համար²⁵:

Հաղթանակներով ոգևորված Իրանի նոր շահնշահը, սակայն, տնտեսական ծանր վիճակից դուրս գալու լավագույն միջոցը համարում էր արտաքին արշավանքների կազմակերպումը, հույս ունենալով նվաճված երկրների կողոպուտով լցնել պետական գանձարանը և հարստացնել իր իշխանության զրլխավոր հենարանը հանդիսացող ռազմա-ավատատիրական դասակարգին: 1737 թվականին Նադիրը ներխուժեց Աֆղանստան և զրավեց Հերաթն ու Հրնդկաստանի սահմանի մոտ գտնվող Ղանդհար քաղաքը: Այստեղից նա մեծ զորքով մուտք գործեց Հնդկաստան, որն այդ ժամանակ տնտեսական ու քաղաքական տագնապ էր ապրում:

1739 թվականի փետրվարի 24-ին Կառնալ քաղաքի մոտ մղված մեծ ճակատամարտում Նադիրը գլխովին ոչնչացրեց Մուհամմադ Շահի բանակը, իսկ ապրիլի 20-ին զրավեց Դեհլին: Կողոպուտից և ավարի մատնվեց Մեծ Մոզոլի շահերի ամբողջ հարստությունը, զրավվեց վիթխարի քանակությամբ ոսկի և թանկագին ակնեղեն:

Պետական գանձարանը անբավ հարստությամբ լցնելուց հետո, առանձին հրովարտակով Նադիրը Իրանի բնակչությանը երեք տարի ազատեց պետական հարկերից²⁶, Հարկային պարտավորությունների այդ կարճատև ընդհատումով նա նպատակ ուներ թեթևացնել ռայաթների վիճակը և հնարավորություն տալ նրանց վերականգնելու ու զարգացնելու պատերազմական ծանր հարկերի ու անընդհատ զորաշարժերի հետևանքով քայքայված տնտեսությունը:

Սակայն արտադրողական ուժերի չափազանց ցածր մակարդակը՝ մի կողմից, ֆեոդալական դաժան շահագործումը՝ մյուս կողմից, բացառում էին տնտեսական կյանքի արմատական բարելավման որևէ հնարավորություն: Պետական հարկերի մասնակի թեթևացումը ոչնչով չէր պարտավորեցնում

²⁵ Աբրահամ Կրետացի, էջ 26—27, 34:

²⁶ Հրովարտակի բնագիրն ու առևերեն թարգմանությունը տե՛ս Арунова М. Р. Фирман Надир-Шаха, „Советское Востоковедение“, 1958, № 2:

կալվածատեր-ֆեոդալներին, որոնք, ընդհակառակը, օգտվելով այդ պատեհույունից, ավելի էին սաստկացնում կիսաճորտային վիճակում գտնվող գյուղացիության շահագործումը:

Աբրահամ կաթողիկոսի ժամանակներին վերաբերող վավերագրերը վկայում են, որ այն ժամանակ, երբ Նազիրը մի կողմից պատերազմում էր օսմանցիների դեմ, մյուս կողմից նրա ուղարկած հարկային-ֆինանսական պաշտոնյաները Արարատյան երկրում անց էին կացնում հարկատու բնակչության և մշակելի տարածությունների հաշվառում²⁷: Այդ նշանակում է, որ մինչև 1739 թվականը խստագույնս գործել է պետական հարկապահանջությունը, ետին թշվառության մատնելով գյուղի և քաղաքի աշխատավորությունը: Նույնիսկ Աբրահամ կաթողիկոսը ստիպված է եղել բազմիցս բողոքելու հարկային պաշտոնյաների էջմիածնի մուսաֆուլյան իրավունքների ոտնահարման դեմ²⁸:

1742 թվականին, երբ Նազիրը նվաճել էր նաև Միջին Ասիան և պատժիչ արշավանքի դուրս եկել դեպի Դաղստան, նոր թափով վերսկսվեց բնակչության ընդհանուր աշխարհագիրն ու հարկազրման ենթակա տնտեսությունների հաշվառումը ամբողջ երկրում: Աղբյուրները վկայում են, որ հարկերի գանձումը կատարվում էր բազմապատկված չափերով: Միմեռն կաթողիկոս Երեվանցիին խոսում է այդ տարիներին վանքերի մուլքային սեփականություններից գանձվող հարկերի բազմապատկված չափերի մասին, նշելով նաև, որ դա միայն էջմիածնին չէր վերաբերում. «Եւ որպէս զԱթոռոյս մլքից խարճսն յաւելացուցին սոքա, նոյնպէս և բոլոր եկրիս մլքիցն յաւելացուցին»,—գրում է նա²⁹:

Նազիրյան տիրապետության շրջանից պահպանված հրովարտականներն ու էջմիածնի կաթողիկոսների, շահական արքունիքի և Քավրիզի փոխարքայության միջև եղած գրագրությունները գալիս են ապացուցելու, որ տնտեսական կյանքի այս ծայրահեղ աննպաստ և անկայուն պայմաններում անգամ, ինչպես Աբրահամ կաթողիկոս Կրետացին (1734—1737), այնպես նաև նրան հաջորդած Ղազար Ջահեկցին (1737—1751) լայն գործունեություն էին ծավալել Արարատյան երկրի ցրված հայության վերախմբավորման, Արևմտյան Հայաստանից մեծ թվով հայ գյուղացիության դեպի Երևանի ու Նախիջևանի շրջակայքում գտնվող գյուղերը գաղթեցնելու ուղղությամբ³⁰:

Այս վերանորոգչական գործունեությանը զուգահեռ, նրանք ջանք չէին խնայում տեղական մահմեդական իշխանավորների հափշտակողական և բռնի կրոնափոխության ձգտումները չեզոքացնելու ուղղությամբ³¹: Միաժամանակ, ազդու հրովարտական ստանալով Նազիրից, անհաշտ պայքար էին մղում կաթոլիկ կղերականության, հատկապես Նախիջևանի շրջանում հայ համայնքի միասնականությունը կազմալուծողների քայքայիչ գործունեության դեմ³²:

²⁷ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 գ, վավ. 354, հմմտ. Միմեռն Երեվանցի, «Ջամո», Վաղարշապատ, 1873, էջ 144:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 147:

³⁰ Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 1 գ, վավ. 376, 379:

³¹ Նույն տեղում, վավ. 369, 370, 377, 391, 396, 399, 400:

³² Նույն տեղում, թղթ. 1 գ, վավ. 375, 380, հմմտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, Բ Շատոր, մասն Գ, Ինչրոթ, 1960, էջ 2929—2935:

1740-ական թվականներին էջմիածնի տնտեսական վիճակը ավելի ու ավելի է սկսում կայունանալ: Վակֆային հողերի մեծ մասի բռնագրավման ու պետականացման օրենքը հայ եկեղեցական կալվածներին չէր վերաբերում, այլ ընդհակառակը, ինչպես տեսանք, նադիրը նույնությամբ վերահաստատում էր էջմիածնի կալվածատիրական իրավունքները բոլոր վանքապատկան գյուղերի նկատմամբ: Արևմտյան Հայաստանից և հայ գաղթավայրերից ուխտավորների անարգել երթևեկությունը նույնպես մեծ եկամուտներ էր ապահովում: Նյութական համեմատաբար ապահով վիճակը, բնականաբար, հնարավորություն էր տալիս վերոհիշյալ կաթողիկոսներին որոշ գրական արդյունքների հասնելու համազգային նշանակություն ունեցող տնտեսական և քաղաքական ձեռնարկումների մեջ:

Սակայն բռնակալական մի երկրում, որտեղ ժողովուրդների ճակատագիրը ենթակա էր թագավորի քմահաճույքներին ու կամայականությունը, չէր կարելի սպասել ազգային կյանքի քիչ թե շատ հարատև բարգավաճում:

Դադատանում կրած անհաջողություններից հետո և արքունիքում ծայր առած խարդավանքների հետևանքով, նադիրը իր կյանքի վերջին տարիներին դարձել էր նենգ ու կասկածամիտ մի բռնակալ: Վակֆային և կալվածատիրական հողերի բռնագրավումները մեծ դժգոհություն էին առաջացրել հոգևոր և աշխարհիկ ֆեոդալականության շարքերում: Պետականացված հողերը սպասված եկամուտը չէին ապահովում: Մանր հարկապահանջությունն ու երկրի ծայրամասերում տիրող անիշխանությունը լիակատար քայքայման էր մատնել ժողովրդական տնտեսությունը:

1744 թվականին, նոր կողոպուտի հույսով և Դադատանում կրած պարտությունների հետևանքով կորցրած հեղինակությունը վերականգնելու համար, նադիրը նորից պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ, նպատակ ունենալով գրավել Բաղդատը: Կռիվները փոփոխակի հաջողություններով տևեցին մինչև 1746 թվականը, առանց շոշափելի արդյունքի:


Ընդարձակ կայսրության բոլոր ծայրամասերում չէին զազարում ժողովրդական ապստամբությունները, որոնք ցնցում էին նադիրի թագավորության առանց այն էլ խարխլված հիմքերը: Բռնակալներին հատուկ հիվանդագին կասկածամտությունը նադիրին մղում էր անլուր գազանությունների իր իսկ հարազատների նկատմամբ: Ծնթարկվելով պալատական բանսարկություններին, նա հրամայեց կուրացնել իր որդուն՝ Ռեզակուլի Միրզային, որից հետո կորցնելով անդորրը, գտնվում էր կիսախելագար վիճակում, մինչև որ 1747 թվականին սպանվեց իր մերձավորների ձեռքով:

Նադիրից հետո մեծ խոստումներով Սպահանում գահ բարձրացավ նրա եղբորորդին, որը վակֆային կալվածները հոգևորականությանը վերադարձնելու համար, վերանվանվեց «Ադիլ» (Արդարադատ): Նա շատ կարճ իշխեց և հռչակվեց միայն նադիրի մերձավորների նկատմամբ իրագործած արյունալի դատաստանով: Շուտով սրա ձեռքից գահը խլեց նրա եղբայր Իբրահիմը, որը երկու ամսից գահընկեց արվեց նադիրի թոռան՝ Շահրուխի ձեռքով: Շահրուխի խիստ կարճատև թագավորությունը ուղեկցվեց նոր դավադրություններով և վերջացավ նրա հեռացումով ու բանտարկությամբ: Եվ այսպես, պատմական կարճ ժամանակահատվածում ստեղծված լայնածավալ կայսրությունը, նույնպիսի արագությունը մատնվեց լիակատար անիշխանության ու մասնատման:

А. Д. ПАПАЗЯН — Армяно-иранское военное сотрудничество в 1726—1736 гг. и политическая обстановка в Восточной Армении при Надир-шахе (резюме).— В статье сделана попытка проанализировать на основе армянских и персоязычных источников дальнейший ход освободительных движений в Сюнике и Арцахе после заключения в 1724 г. русско-турецкого договора и вторжения турецких войск в Восточную Армению и Закавказье.

Исследуются попытки сотрудничества между руководителями освободительного движения армян Сюника против турецких оккупационных войск с руководителями вооруженной борьбы против тех же сил в Иране. За упомянутыми выше попытками, после 1732 года, последовало участие сигнахов Карабаха, армянских меликов и вооруженных сил Араратской области в победоносных сражениях Надира против турок.

Выявляются результаты новой политической ориентации армянских светских и духовных деятелей, что привело к укреплению власти армянских меликов, созданию новой обширной автономной провинции— меликств Хамса — и расширению политической компетенции армянской церкви.



Գ Լ Ո Ւ Խ Վ Ե Յ Ե Ր Ո Ր Դ

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVI—XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸԶԸԼԻՔԱՇՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Ջաբարյանների տիրապետության շրջանում Արևելյան Հայաստանում հաստատված հայ ֆեոդալական տների վերջին բեկորները (Դուփյաններ, Պոռշյաններ, Վաչուտյաններ և ուրիշներ) սկսած դեռևս XIV դարի երկրորդ կեսից հետզհետե կորցնում են իրենց իշխող դիրքերը¹: XV դարում Արևելյան Հայաստանում քիչ թե շատ իշխանական իրավունքներ էին վայելում միայն հաչենի Հասան-Ջալալյանները, Սյունյաց Օրբելյանների վերջին ներկայացուցիչներ՝ Սմբատի սրգի Բեշքենն ու սրա որդին՝ Ռուստամը և մի բանի, ավելի նվազ իշխանություն ունեցող ֆեոդալական գերդաստաններ²: XV, մասամբ նաև XVI դարի ընթացքում բուռն կերպով շարունակվում էր հայ ֆեոդալականության այդ վերջին ներկայացուցիչների հետևողական հետապնդումն ու ունեզրկումը քոչվոր նվաճողների կողմից:

XV դարը իրավացիորեն դիտված է որպես հայկական ֆեոդալիզմի եզրափակիչ դար: Հիմնականում այդ հարյուրամյակի ընթացքում էր, որ հայ աշխարհիկ ֆեոդալականությունը, որպես որոշակի քաղաքական ուժ, դուրս մղվեց պատմության թատերաբեմից:

XVI դարում ևս հայ ֆեոդալականության վերջին մնացորդների ունեզրկման և վերացման գործում շարունակում էր կարևոր դեր խաղալ, դեռևս խալիֆաթի տիրապետության շրջանից հաստատված, «Բեյթ-ուլ-մալի» մուսուլմանական հաստատությունը³: Մահմեդական իշխանավորները պահանջում էին իրենց իշխանության սահմաններում գտնվող ընդարձակ հողային տարածությունների տեր հայ ֆեոդալական տների ներկայացուցիչներից հավատարմի լինել, հակառակ դեպքում սպառնալով նրանց հողերը բռնագրավել և հայտարարել «Բեյթ-ուլ-մալի» սեփականություններ:

Աղբյուրներում բազմաթիվ են վկայությունները հայ ֆեոդալների բռնի

¹ Տե՛ս 2. Մանեղյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. III, էջ 328—329:

² Տե՛ս Քովմա Մեծոփեցի, էջ 117—118, «Ժճ դարի հիշատակարաններ», մասն Ա, Առաջաբան, էջ XLVII—XLVIII, 2. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1955, № 8:

³ «Բեյթ-ուլ-մալ» նշանակում է պետական գանձարան:

մահմեդականացման կամ, հակառակ դեպքում, նրանց հողերի ղանգվածային հափշտակման մասին: Նշված է, սակայն, որ հայ աշխարհիկ ֆեոդալականության վերացման այս պրոցեսը բավական երկար է տևել և ուղեկցվել է զեռևս իրենց իշխանական դիրքերը պահպանած հայ ֆեոդալների կողմից տարբեր ձևերով դրսևորվող դիմադրության և պայքարի փաստերով:

Որքան էլ համառ լինե՞ր դիմադրությունը, հայ ֆեոդալներից շատերը, իրենց կալվածատիրական իրավունքներից չզրկվելու համար, ի վերջո տեղի էին տալիս և մահմեդականություն ընդունում: Անշուշտ կային նաև այնպիսիք, որոնք շարունակում էին դիմադրել և նյութական զոհողությունների գնով փորձում էին պահել իրենց հողային տիրույթները: Սակայն, շարունակ ենթակա լինելով հարստահարման, հետզհետե նվազում էին նրանց հողատիրական կարողությունները և նրանք վերածվելով մանր հողատերերի կամ դուրս մղվելով կալվածատեր-ֆեոդալների շարքից, գնում էին իրենց բախտը փորձելու առևտրի և վաճառականության ասպարեզում:

Պետական հեղաշրջումներից հետո, ինչպես նաև համարյա ամբողջ XVI դարի ընթացքում շարունակվող ռազմական գործողություններին հաջորդող կարճատև դադարների ժամանակ, ետ նվաճված երկրամասերում անց էին կացվում հողերի նոր հաշվառումներ: Բարձրագույն ղիվանից գործուղված լիազորները կատարում էին մանրամասն քննություն, ստուգում էին կալվածագրերն ու սեփականության փաստաթղթերը, ցուցակագրում էին գյուղերն ու ագարակները և կազմում մշակելի տարածությունների նոր ցուցակներ: Այս ընթացքում էր, որ ավելի շատ էին տեղի ունենում հողերի նոր բռնագրավումներ: Հարբունիս էին գրավվում կամ «Բեյթ-ուլ-մալի» սեփականություններ հայտարարվում այլ և այլ պատճառներով նոր իշխանության կողմից հետապնդվող ֆեոդալներին և հատկապես կրոնի «հակառակորդներին» (քրիստոնյաներին) պատկանող հողերը:

Այնպես, որ եթե XV դարում զեռևս հիշվում են մի քանի հայ խոշոր ֆեոդալ-կալվածատերեր, ապա XVI դարում՝ հազվադեպ են հիշատակվում:

Խոշոր հողային սեփականատիրությունը հայ իրականության մեջ հանդուժվում էր միայն վանական հողատիրության բնագավառում: Ուստի XV դարի ընթացքում կիրառվող հալածանքների պայմաններում հայ ֆեոդալական տների վերջին ներկայացուցիչներից շատերը, իրենց հողային կարողությունների մնացորդները հափշտակումից փրկելու նպատակով «նվիրում» էին վանքերին և հոգևոր կարգ ընդունելով, փորձում պահպանել իրենց իրավունքները այդ կալվածքների և իշխող դիրքը՝ հայ աշխատավորության նկատմամբ:

Սակայն, ինչպես աստվածապետական օսմանյան Թուրքիայում, այնպես նաև Շահ Իսմայիլի հիմնադրած կրճրբաշների կիսաաստվածապետական իշխանության ներքո, հայ հոգևորականության վայելած արտոնությունները ոչ այլ ինչ էին, եթե ոչ միայն հարկատու այլազավան համայնքների ղեկավարներին տրված զուտ հարկային առանձնաշնորհումներ: Դրանք իրենց բովանդակությամբ արմատապես տարբերվում էին բարձրաստիճան ամիրներին և կրճրբաշ ցեղերի առաջնորդներին տրված «սոլյուրալներից» և «օլբաններից», որոնք ունեին ֆեոդալական անձեռնմխելիության իրավունքներ և պետության ռազմա-քաղաքական հենարանն էին հանդիսանում: Պարզ է, իհարկե, որ ինչպես յուրաքանչյուր ֆեոդալական հասարակության մեջ, այնպես էլ XVI—XVII

դարերի Սեֆյան տիրապետության շրջանում «պատերազմի մեջ և դատարանում բարձրագույն հրամանատարությունը հանդիսանում էր հողային սեփականության ատրիբուտ»⁴: Ուստի կրգըլբաշների տերության հենց սկզբնական շրջանից քոչվոր ավագանու գերիշխանությունը Արևելյան Հայաստանում XVI—XVII դարերում այս առումով միանգամայն բացարձակ էր և համատարած:

XVI դարի պատերազմական համարյա անընդմեջ գործողությունների շրջանում երկրի ավատատիրական հարաբերությունների հիմքում թեև շարունակում էր գոյատևել նախորդ դարի թուրքմենական տիրակալների օրոք ձևավորված «սոյուրդալական» օրինակարգը, սակայն կրգըլբաշ ցեղերի ռազմաֆեոդալական նոր ցեղախմբերի («ուլուսներ» և «էհչամներ») կազմավորման և խոշոր տեղաշարժերի այս բուռն շրջանում այդ օրինակարգը քայքայման բավական որոշակի ընթացք ապրեց՝ իր տեղը զիջելով պարզական հողատիրության «թիուլային» ձևին:

Արևելյան Հայաստանում կրգըլբաշ ցեղերի նոր տեղաշարժերի և խոշոր ավատների («օլբաներ») վերաբաշխման հետևանքով Այրարատի, Վասպուրականի, Սյունյաց, Արցախի և Գուգարաց նահանգների մեծ մասում ժառանգական տիրույթներ ստացան Ռումլու, Ուսթաշլու, Շամլու, Քաբալու, Կաշար, Քանգարու, Բայաթ, Չուկադար, Սա դլու և այլ ցեղերի առաջնորդները, որոնք իրենց ցեղերով և ցեղախմբերով բնակություն հաստատեցին հատկապես սահմանամերձ շրջաններում, իսկ կրգըլբաշներին հավատարիմ մնացած քրդական Դունբուլի, Մահմուդի, Փազուկի և այլ ցեղեր ավատներ ստացան Ալաշկերտի արևելյան հատվածում, Մակվում և Խոյի ու Սալմաստի շրջաններում:

XVI դարի սկզբում Իրանի և Թուրքիայի միջև ծավալվող ավերիչ պատերազմներից հետո, 1515 թ. կնքված հաշտության պայմանագրով ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Հյուսիսային Միջագետքը ընկավ Թուրքիայի տիրապետության տակ: Դրանից հետո շնայած ավելի քան մեկ հարյուրամյակ՝ մինչև հաջորդ դարի 30-ական թվականները, նորից շարունակվեցին խոշոր մասշտաբի արշավանքներն ու պատմական Հայաստանի տերիտորիայի վրա ծավալվող ռազմական գործողությունները, սակայն, ինչպես 1555, այնպես էլ 1639 թվականներին կնքված պայմանագրերը էական փոփոխություններ մտցրին 1515 թ. գծված սահմանների մեջ:

Ըստ այդ բաժանման, թուրք-իրանական սահմանը Հայաստանում սկիզբ էր առնում Զավախքի լեռներից, Չրեզըր լճից դեպի արևելք անցնում էր փոքրիկ լեռնաշղթայի ուղղությամբ դեպի հարավ, ապա, թեքվելով դեպի արևելք, հասնում էր մինչև Ախուրյանի վերին հոսանքը: Այստեղից գետի հունով սահմանն իջնում էր մինչև Ախուրյան և Արաքս գետերի միացման վայրը, որից հետո Արաքսի հոսանքն ի վեր թեքվում դեպի արևմուտք և, Կաղզվանին չըհասած, իջնում էր դեպի հարավ՝ Հայկական Պարը: Հայկական Պարից սահմանը շարունակվում էր լեռնաշղթայի ջրբաժան գծով դեպի արևելք և Մասիսների գագաթներով գնում միանում էր Վասպուրականի լեռներին, որտեղից ուղիղ գծով՝ Զագրոս լեռնաշղթայի վրայով, անցնում էր թուրք-իրանական ներկա սահմանագծով:

⁴ Կ. Մարխա, Կապիտալ, I, Երևան, 1933, էջ 298:

Այսպիսով, կրճրաբանների տերությունն սահմանների մեջ էին մտնում պատմական Հայաստանի Սյունիք, Արցախ, Ուտիք, Փայտակարան և Պարսկահայք նահանգներն ամբողջությամբ և Այրարատի, Գուգարաց աշխարհի ու Վասպուրականի արևելյան գավառները:

Երկրի ներքին վարչական բաժանումը Սեֆյանների օրոք կատարված էր ըստ վիլայեթների, որոնք սկիզբ էին առնում դեռևս իլխանական շրջանից: Գրանք, փաստորեն, համընկնում էին իլխանության շրջանի թումաններին, որոնց եկամուտները նախապես հաշվված էին և որոշակի ռազմական պարտավորության դիմաց տրվում էին կրճրաբան ցեղերի ամիրներին կամ բեկլարբեկներին:

Սեֆյանների վարչության մանրամասն նկարագիրը պարունակող «Թագաքերթ-ալ-մուլուկում», որտեղ մեկ առ մեկ թվարկված են Սեֆյան Իրանի բոլոր նահանգներն ու նրանցից ստացվող եկամուտները, հիշատակված են չորս վալիություններ՝ Արաբական Իրաքի, Լոռստանի, Վրաստանի, Քուրդիստանի, և 13 բեկլարբեկիություններ: Արևելյան Հայաստանն ու Աղբբեջանը ընդգրկված էին Աղբբեջանի (Ատրպատական), Չուխուր-Սա'դի, Ղարաբաղի և Շիրվանի բեկլարբեկիությունների մեջ⁵:

Բացի Գուգարաց աշխարհից, որը համարյա ամբողջությամբ մտնում էր Արևելյան Վրաստանի կամ Քարթլ-Կախեթի վալիության մեջ, Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող հայկական նահանգները կամ նրանց առանձին գավառները տեղաբաշխված էին այսպես, որ ենթարկվում էին Չուխուր-Սա'դի, Ղարաբաղի և Աղբբեջանի բեկլարբեկիություններին:

Իր սահմանամերձ դիրքով և հայ հոծ բնակչությամբ առանձնահատուկ նշանակություն ունեւ հատկապես Չուխուր-Սա'դի վիլայեթը: Այրարատյան նահանգի կենտրոնական մասը՝ Արարատյան դաշտն իր շրջակայքով, Չուխուր-Սա'դ (հայկական աղբբուրներում՝ «Սահաթա փոս») սկսեց անվանվել XIV դարի վերջերից, այստեղ իշխող թուրքմեն տիրակալ Ամիր Սա'դի անունով, որի որդիներն ու թոռները շարունակեցին իշխել այնտեղ՝ կենտրոն ունենալով Երևան քաղաքը: XV դարում Չուխուր-Սա'դի վիլայեթը ավելի ընդարձակվեց, ընդգրկելով նաև Ախուրյանից Արևմուտք ընկած գավառները և Կարս ու Կաղզվան քաղաքները: Սակայն XVI դարի թուրք-իրանական նոր սահմանի հաստատումից հետո, այդ վիլայեթի մեջ, որպես նահիե կամ մահալ, իրենց նոր անվանումներով, մտնում էին Այրարատի Վարաժնունիք (Դարաշիլագ), Նիզ (Ապարան), Շիրակ (Շորագյալ), Մազազ-Ուրծ-Մասսյացոտն (Գառնի-Վեդի), Ճակատք (Սուրմալու), Արագածոտն (Կարբի), Կոտայք (Գրխբուլաղ) և Սյունյաց աշխարհի Գեղարքունի, Սոթք (Գյոզաղանգիզ) գավառները:

Վիլայեթները թեև հիմնականում կազմված էին ավելի փոքր վարչական միավորներից՝ նահիաներից կամ մահալներից, որոնք կառավարվում էին հաբիմների կամ նայրենների միջոցով, սակայն առանձին մեծ կամ փոքր շրջաններ օլթախի կամ ֆեոդալական տիրույթի իրավունքով տրված էին բուլվոր ցեղերի առաջնորդներին, որի դիմաց նրանք սպառազեն ռազմիկներ կամ յասաղբեշներ էին տրամադրում պետությանը: Այդպիսին էր, օրինակ,

⁵ Sk'at "Tadhkirat al-mulūk, a manual of safauid administration", by V. Minorsky, London, 1943, էջ 100—102; Այսուհետև՝ "Tadhkirat al-mulūk":

նախիջևանի օլթան, որը տրված էր Քյանզարլու ցեղի ավագանուն և մնաց նրանց ձեռքում մինչև XIX դարի սկիզբը:

Նախիջևանը իր շրջակա գավառներով, որ իլխանների ժամանակ առանձին «թուման» դառնալով, Սեֆեհիների օրոք ևս շարունակում էր կոչվել «Թուման-ե Նախիջևան» ընդգրկում էր Սյունյաց աշխարհի Նախիջևան, Ճահուկ (Շահբուլղ), Երնջակ (Ալինջա), Գողթն (Ազադ Զիրան), Վայոց Ձոր (Դարե-յե էլեգիս), Ծղուկ (Սիսաջան) գավառները և, որպես մեծ օլթա, մինչև XVII դարի սկիզբը ենթարկվում էր Ազերբայջանի կամ Թավրիզի բեկլարբեկիին, իսկ XVII դարից հետո ենթակա էր Չուխուր-Սա՛ղի բեկլարբեկիությանը:

Ազերբայջանի բեկլարբեկիին ենթակա էր նաև Կապանի երկիրը կամ Ղափանաթի օլթան, որը իլխանների տիրապետության շրջանում Սյունյաց Օրբելյանների ինչոն էր: Սեֆեհիների օրոք այն ընդգրկում էր Ձանգեզուրի և Ղարաբաղի լեռնաշղթաների միջև ընկած լեռնային երկիրը, որի մեջ մտնում էին Սյունյաց Արևիք (Մեղրի), Կովսական (Մնջավան), Քաշունիք (Քարգուշատ), Ձորք (Քեղի), Հաբանդ (Ձանգեզուր), Աղահեճք (Քաշաթաղ-Քուշթասիֆ) գավառները և Արցախի որոշ մերձակա շրջաններ:

Ազերբայջանի վիլայեթի կազմի մեջ անմիջապես մտնում էին Վասպուրականի արևելյան գավառներից Արտազի (Մակու), Ճուաշ-ոտտի (Չորս), Մարակերտի կամ Մարանդի (Մարանդ), Պարսպատունիքի (Արասբար) գավառներն ու Պարսկահայք նահանգն ամբողջությամբ: Հայ ազգաբնակչությունը մեծ թիվ էր կազմում հատկապես Մակվի, Չորսի, Արասբարի, ինչպես նաև նախկինում Պարսկահայք նահանգի մեջ մտնող Հեր (Խոյ), Զարևանդ (Սալմաստ) և Թրաբի (Ուրմիա) գավառներում կամ նահիաներում:

Ղարաբաղի վիլայեթը, որն իր կենտրոն Գանձակի կամ Գյանջայի անունով կոչվում էր նաև Գյանջայի բեկլարբեկիություն, ընդգրկում էր Կուրից մինչև Արաքս ընկած մի ընդարձակ տարածություն: Նրա լեռնային շրջանները, որոնք համապատասխանում էին պատմական Հայաստանի Արցախ նահանգին և Գարդման-Փառխոսի ու Ծավդեից երկրներին, ունեին հոծ հայկական բնակչություն: Առանձնապես աչքի էին ընկնում Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Զրաբերդի և Գյուլիստանի նահանգները կամ մահալները, որոնք կառավարվում էին հայ մելիքների կողմից և ներքին ինքնավարություն էին վայելում: XVIII դարում, հատկապես Նադիրից հետո, դրանք միավորվեցին «խամսա» (հնգյակ) անվան աակ, որոնց ընդհանուր կառավարիչ նշանակվեց Դիզակի մելիքը: Ավելի ուշ, երբ քայքայվեց այս միությունը և Շուշիում հաստատվեցին Զիվանշիր Փանահ խանն ու նրա հետնորդները՝ հիմնելով Ղարաբաղի կիսանկախ խանությունը, այս վիլայեթի հյուսիսային մասերը Գանձակ կենտրոնով առանձնացան և կազմեցին Գանձակի խանությունը, որը հարևան Չուխուր-Սա՛ղի կամ Երևանի խանության հետ միասին վասալական կախման մեջ էր Քարթլ-Կախեթի վալիից:

Ազերբայջանի, Չուխուր-Սա՛ղի և Ղարաբաղի վիլայեթները լինելով սահմանամերձ նահանգներ, ինչպես ասվեց, կառավարվում էին զինվորական կուսակալների կամ բեկլարբեկիների միջոցով, որոնք որպես ռազմիկ ցեղերի առաջնորդներ կամ ամիրներ, արաբերեն կոչվում էին նաև «ամիր-ուլ-ումարա» (իշխանաց-իշխան): Բեկլարբեկիներն ունեին անսահմանափակ իրավունքներ և իրենց վստահված վիլայեթի տերն ու տնօրենն էին: Նրանք խաղաղ ժամա-

նակ գլխավորում էին վիլայեթի քաղաքացիական իշխանությունը, իսկ պատերազմի ժամանակ զինված ուժերի հրամանատարներն էին և իրավունք ունեին ռազմական արշավանքների ժամանակ սեփական դրոշակ կրելու ու թմբկահարելու: Նրանք սովորաբար կրում էին խան տիտղոսը և մեծարվում այլիջահ (փառապանած) և այլիշա'ն կամ ազիմ-ուլ-շա'ն (գերապատիվ, բարձրապատիվ) բարձր կոչումներով:

Համեմատաբար ավելի փոքր տիրույթների՝ օլբաների տերերը կոչվում էին հաբիմ և կրում էին սուլթան տիտղոսը, իսկ բուլոքների և նահիանների կառավարիչները, որոնք մեծ մասամբ նշանակվում էին քոչվոր ավագանու ավելի ստորին խավերից կամ շահի դուլամներից, կոչվում էին նայիբ կամ միրբոլուբ և մեծարվում էին բեկ տիտղոսով:

Կենտրոնական իշխանության թուլության հետևանքով քոչվոր արիստոկրատիան կարողանում էր ամրապնդել իր իշխանությունը երկրի տարբեր նահանգներում և հաճախ բեկլարբեկիությունը առանձին վիլայեթներում վերածվում էր ժառանգական տիրույթի: Այդպես էր, օրինակ, Գանձակի կամ Ղարաբաղի վիլայեթում, որտեղ XVI դարից սկսած մինչև XVIII դարի վերջերը իշխում էին Զիադօղլու-Կաջար ցեղի պարագլուխները: Նախիջևանի օլբան նույն ժամանակներում շարունակում էր մնալ Քյանգարլունների ձեռքում, Մակվում մինչև XX դարի սկիզբը իշխում էին Բայաթ ցեղի առաջնորդները և այլն:

Դրույթյունը մի քիչ այլ էր Զուխուր-Սա՛ղում կամ Արարատյան երկրում: XVI դարում կուլախնձոր լինելով ռումլունների և ուսթաջլունների միջև, XVII դարի վերանվաճումից հետո շահ Աբբասը Երևանի բեկլարբեկիությունը տվեց Ամիր-Գունա խանին, որը Կաջար ցեղի Աղջակոյունլու ցեղախմբից էր: Նրա որդին՝ Թահմազկուլի խանը, այդ վիլայեթում իշխեց մինչև 1636 թ., որից հետո՝ մինչև Սեֆևիդների բարձումը, շուրջ 80 տարի այս վիլայեթում իշխեցին 14 բեկլարբեկիներ, որոնցից միայն երկուսը հեռավոր ազգակցություն ունեին Կաջարների հետ և իշխեցին միայն 3—6 տարի: Մյուս բեկլարբեկիները տոհմիկ ծագում չունեին և առաջ էին քաշվել շահի անձնական դուլամներից:

XVII դարի երկրորդ կեսում Սեֆյան շահերը խուսափում էին սահմանամերձ վիլայեթները տալ տեղում բնակություն հաստատած կրճղբաշ ցեղերի առաջնորդներին, վախենալով, որ վերջիններս կարող են գործիք դառնալ հարևան երկրի ձեռքում և ձգտել ինքնուրույնություն: Այս քաղաքականությունը շեշտված կերպով երևան էր գալիս հատկապես Արարատյան երկրում, որը իր ազգաբնակչության կազմով ևս խիստ տարբերվում էր մյուս վիլայեթներից: Այստեղ հայերը ճնշող մեծամասնություն էին կազմում:

Բեկլարբեկիներն ունեին որոշակի հարկային և մաքսային եկամուտներ, որի դիմաց նրանք պարտավոր էին տվյալ վիլայեթից ապահովել սպառազեն մարտիկների նախապես որոշված քանակը: «Թազքիրաթ-ալ-մուլուքի» տվյալներով XVII դարի վերջում և XVIII դարի սկզբում հայաբնակ գավառներ ունեցող վերոհիշյալ երեք վիլայեթներից ստացվող եկամուտների և զինված ուժերի հարաբերությունը հետևյալ պատկերն էր ներկայացնում⁶:

⁶ Ցե'ս. „Tadhkirat al-mulūk“, էջ 161:

Վիլայեթ	Եկամուտ (գինարներով)	Զինվորների թիվը
Չուխուր-Սաղ	259106326	4287
Ղարաբաղ	247260978	6084
Ազերբայջան	312344906,5	11439
Գումար	848712210,5	21810

Ի. Պ. Պետրուշևսկու հաշվումներով (գումարելով նաև Շիրվանի վիլայեթի 5856 գինվորները) XVIII դարի սկզբներին Սեֆևիդների պետության զինված ուժերի համարյա կեսը հավաքագրվում էր Ադրբեջանից ու Հայաստանից⁷:

Բեկլարբեկիները և տեղական հաքիմները բնակչության նկատմամբ ունեին նաև դատական իրավունքներ: Քաղաքացիական բոլոր տեսակի վեճերը՝ կապված կենցաղային, տնտեսական, ժառանգական և այլ հարցերի հետ, քննվում էին հոգևորական ատյաններում, որ կոչվում էր «Շար», իսկ քրեական գործերը լսվում էին «Ուրֆի» կամ սովորութային դատարաններում, որը գլխավորում էր խանի կողմից նշանակված «գիվանբեկին»: Ուրֆի ատյաններում լսվում էին նաև, այսպես կոչված, «չորս պատահարներին» վերաբերող գործերը (սպանություն, բռնաբարություն, ատամ ջարդել, կուրացնել), մահվան դատավճռի իրավունք ուներ միայն խանը: Հայ համայնքի ներսում ծագած քաղաքացիական բնույթի դատերը իրավունք ունեին վարելու հայ հոգևորականներից կազմված դատական ատյանները: Շահ Աբբաս II-ի 1650 թ. հրովարտակով հաստատվում էր մայրաքաղաքի գլխավոր հոգևորական ատյանի («Դիվան-ալ-սադարաթի») այն վճիռը, ըստ որի՝ «եթե քրիստոնյաները իրար մեջ վեճ ունենան և գիմեն իրենց եպիսկոպոսներին կամ քահանաներին, ոչ ոք թող արգելք չհանդիսանա և նեղուցյուն չպատճառի, իսկ եթե կողմերից մեկը մոտուլման լինի, այդ դեպքում վեճը պետք է հարթեն տեղի Շար՝ ի անդամների և մոտուլման զազիների (դատավորների) միջոցով»⁸:

2. ՀԱՅԱՔԱՆԱԿ ԵՎ ԱՆՏԻՍԵՄԻՅԱՆ ՍՍԱՅՎՈՂ ԵՎ ԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Սեֆյան Իրանի հայաբնակ նահանգներն իրոք երկրի ամենակամտաբեր նահանգներն էին: Դա պայմանավորված էր ոչ միայն բնակչության խտությունով և համեմատաբար զարգացած գյուղատնտեսությամբ, այլ ներքին ու արտաքին և տարանցիկ առևտրով, որը մաքսային խոշոր եկամուտներ էր խոստանում խաներին և բեկլարբեկիներին: Վերջիններս մեծ նախանձախնդրություն էին ցուցաբերում իրենց վիլայեթի հայ բնակչության բազմապատկման գործում, որը կարևոր նշանակություն ուներ երկրի շենացման, առևտրի ու արհեստների զարգացման համար և ավելացնում էր նրանց եկամուտների աղբյուրները: Հայ ռայաթները բազմաթիվ այլ հարկերից բացի, կանխիկ դրամով վճարում էին նաև հատուկ գլխահարկ՝ «չիզյա», որը չափազանց մեծ գումար էր կազմում: Հայտնի է, որ 1604 թ. բռնագաղթից մի քանի

⁷ Տե՛ս Ի. Պ. Պետրուշևսկի, Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI—начале XIX вв., էջ 142:

⁸ «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտական», պրակ Բ, վավ. 41:

տարի հետո բեկլարբեկիներ Ամիր-Գունա խանն ու նրա որդին՝ Թահմազկուլի խանը, ամեն կերպ նպաստում էին գաղթականների վերադարձին, սիրաշահում և օգնում էին նրանց: Ավելին, չբավարարվելով միայն դրանով, Արևմտյան Հայաստանի մերձակա շրջաններից ևս մեծ թվով հայ ընտանիքներ բռնի կերպով բերում և բնակեցնում էին Արարատյան երկրում:

Բեկլարբեկիների վարչա-քաղաքական գործունեությունը արտահայտվում էր Ֆ. Էնգելսի հայտնի այն բնորոշմամբ, ըստ որի «Արևելքում կառավարությունը միշտ էլ ունեցել է միմիայն կրեթ վարչություն՝ ֆինանսական (կեղեքում երկրի ներսում), ռազմական (ներքին և արտաքին երկրների ավարառություն) և հասարակական աշխատանքների վարչություն (հոգատարություն վերարտադրության մասին)»⁹:

Պարզ է, սակայն, որ այս երեք վարչությունները բոլոր ժամանակներում հավասարազոր չէին: Այս կամ այն վարչության գործունեությունը սերտորեն պայմանավորված էր ընթացիկ քաղաքական գոյավիճակով: Ըստ այդմ էլ մեր աղբյուրները մերթ մերթ ընդմերթ ընդգծում են խաների ու բեկլարբեկիների ծավալած գործունեության այս կամ այն կողմը:

Բնորոշ է այս տեսակետից 1605—1625 թթ. Արարատյան երկրի բեկլարբեկի Ամիր-Գունա խանի գործունեության գնահատականը, տրված Զաքարիա Սարկավազ Քանաքեռցու կողմից. «Այլ քաջ և սրտապինդ և արի ի պատերազմունս, անհո և աներկիւղ շէնարար և սիրող քրիստոնէից», որ «ի տիրելն իւրում Երևանայ, իսկոյն ձեռն էարկ շինութեան և մարզաշատութեան: Նախ սկսաւ շինել զբերդն և ապա ապարանս և զայգիս և զբուրաստանս և զպարտէզս, և հանել զառուս և առաւելուլ զբուրսն: Այլ և ի տեղիս-տեղիս թեթևացոյց զճարկն և եբարց զծանր լուծ ի պարանոցէ ռամկաց: Բայց զի բազմացոյց զսուխրայն, այսինքն կոռն...»: Այնուհետև Քանաքեռցին նկարագրում է նրա կատարած արշավանքները դեպի Կարին, Մուշ, Վան և Արևմտյան Հայաստանի մերձակա շրջանները, որտեղից բերված մեծ թվով հայ գաղթականությունը նա բնակեցրեց Երևանի և էջմիածնի միջև գտնվող Քյալարա, Գյոյգումբեթ, Կավակերտ, Փարաքար, Սապատ և այլ գյուղերում¹⁰:

Հայաբնակ վիլայեթները առանձնապես աչքի էին ընկնում իրենց բարձրորակ և բազմատեսակ հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաներով, որոնք մեծ քանակությամբ վաճառվում էին Իրանի տարբեր կողմերից և հարեվան երկրներից եկող առևտրականներին: XVII դարի երկրորդ կեսում ապրանքային արտագրությունը Արարատյան երկրում, նախիջևնում, Ղափանում և այլ գավառներում բավական լայն շափեր էր ընդունել և կարևոր դեր էր խաղում երկրի տնտեսության մեջ:

Հայտնի է, որ ինչպես Արարատյան երկրում, այնպես նաև նախիջևնի օլթայում, Մակվում, Խոյում, Սալմաստում, Ուրմիայում և այլ վայրերում բնակվող հայերը զբաղվում էին խաղողամշակությամբ ու գինեգործությամբ: Դարերի պատմությունն ունեւր այգեգործությունը Հայաստանում: Զարգացած էր նաև բանջարանոցային տնտեսությունը. մշակվում էր «վարունգ, սեխ, մեղրապուպ և խավարտ (կանաչեղեն)»¹¹ և բանջարանոցային այլ կուլտուրա-

⁹ Ֆ. Էնգելս, 1853 թ. հունիսի 6-ին Մաքսին գրած նամակից, Մաքս, Էնգելս, Հատընտիր նամակներ, Երևան, 1936, էջ 91—92:

¹⁰ Տե՛ս Զաքարիա Սարկավազ, հատ. Ա, էջ 45—47:

¹¹ Նույն տեղում, էջ 59:

ներ: Ֆրանսիացի բուսաբան Տուրնեֆորի վկայությամբ, XVII դարում Արարատյան դաշտում բացի հիմնական հացահատիկներից մշակվում էր նաև բրինձ, բամբակ, կտավատ, ձմերուկ, սեխ, զանազան այլ մրգեր և ծխախոտ¹²:

Սակայն, ինչպես պարզ երևում է XVII—XVIII դարերի մի քանի հարկացուցակներից, ցորենը, գարին, կորեկը և բրինձը հիմնական հացահատիկային կուլտուրաներն էին և զբաղեցնում էին մշակելի տարածությունների մեծ մասը: Դրանով է բացատրվում քաղաքներում և գյուղերում գործող ջրաղացների մեծ թիվը: Միայն Երևանի Ձորագյուղ թաղամասում գործում էին 50-ից ավելի ջրաղացներ, որոնց մեծ մասը 3—4 քար ունեին: Զգալի թիվ էին կազմում նաև շալթուկի դինգերն ու քրքրաները, որոնք պատկանում էին երևանցի խոջաներին կամ էջմիածնի վանքին: Զարգացած էր նաև բուսական յուղերի արտադրությունը: Այդ են վկայում բազմաթիվ ձիթհանքերի կամ սրանոցների առկայությունը Երևանում, էջմիածնում, Տաթևում, ինչպես նաև Շիրակի ու գեղարքունյաց խոշոր բնակավայրերում:

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի վկայությամբ, այգեգործության համար նպաստավոր վայրերում հայ գյուղացիությունը մշակում էր խաղողի ընտիր տեսակներ: Այգիների առուծախին վերաբերող կալվածագրերում համարյա միշտ հիշատակվում են հնձանները: Այդ նշանակում է, որ հենց տեղում էլ մշակվում էր խաղողը¹³:

Ասվեց, որ Արարատյան դաշտում, Շարուրում և այլուր տեխնիկական կուլտուրաներից մշակվում էր նաև բամբակ: Հայաստանում բամբակամշակության մասին վկայում են դեռևս X դարի արաբա-պարսկական աղբյուրները: XVI—XVII դարերի աղբյուրներում որոշակի տվյալներ չկան բամբակի հումքի մշակման և մանածագործական արհեստանոցների առկայության մասին: Կան որոշ տեղեկություններ, որ XVIII դարում, հատկապես բամբակի արտահանման գործով, զբաղվել են երևանցի, կարբեցի, ձորագեղցի ու էջմիածնեցի խոջաները և էջմիածնի վանքը, որն ուներ նաև զտման արհեստանոց:

Քոչվոր, անասնապահությամբ զբաղվող ցեղերը յայլաղներում արտադրում էին յուղ, պանիր, ճրագու և անասնապահական այլ մթերքներ, որոնց մի զգալի մասը հանվում էր շուկա: Անասնապահության մեջ, անշուշտ, ավելի զարգացած էր ոչխարաբուծությունը:

Զարգացած անասնապահության հետ սերտ աղերս ուներ կաշեգործությունը, որով զբաղվել են Արևելյան Հայաստանի մի քանի քաղաքներում և բավարարել շուկայի պահանջները: Կաշին ոչ միայն շատ կարևոր լայն սպառման ապրանք էր, այլև միջնադարում ուներ մեծ նշանակություն բանակի համար, հատկապես հեծելազորային հանդերձանքի պատրաստման գործում:

Հողագործությանը զուգահեռ գյուղացիության օժանդակ տնտեսություններից էին շերամապահությունն ու մեղվաբուծությունը: Շերամապահությամբ զբաղվում էին հատկապես Սյունյաց և Արցախի լեռնային շրջաններում: Արտադրվող մետաքսը երկրից արտահանվող ամենաթանկարժեք ապրանքներից էր, որի մենաշնորհը շահերը վերցնում էին իրենց ձեռքը: Նրանք ունեին իրենց առևտրական գործակալները («թաջեր-ե խասսե-յե շարիֆե»), որոնք մեծ

¹² Տե՛ս Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 233:

¹³ Տե՛ս կալվածագրեր, I, կազմեց Հ. Փափազյան, Երևան, 1968, վավ. 15:

մասամբ Նոր Զուղայի հայ խոջաններից էին: Մետաքսի արտահանման գլխավոր կենտրոններն էին Կապան և Ագուլիս քաղաքները:

Աշխարհագրական և կլիմայական պայմանները նպաստավոր էին նաև մեղվաբուծության համար: Հայ և օտար աղբյուրները բազմիցս հիշատակում են Հայաստանում զարգացած մեղվաբուծության մասին: XVI—XVIII դարերում ևս ավանդական զամբյուղե փեթակներով մեղվաբուծությամբ զբաղվել են հիմնականում ալպյան արոտավայրերով հարուստ ծաղկառատ շրջաններում: Տեղեկություններ կան, հատկապես, Գեղարքունյաց, Կոտայքի, Արագածոտնի, Տաթևի և լեռնային այլ շրջանների մեղվաբուծության մասին:

Գյուղացիության սեզոնային զբաղմունքներից էին որսորդությունն ու ձկնորսությունը: Վայրի կենդանիների, հատկապես ընտիր մորթի և կաշի ունեցող գազանների որսը ձմռան ամիսներին եկամտաբեր զբաղմունք էր: Իսկ ձկնորսությունը Սևանա լճում և լեռնային գետակներում (շուկայական նպատակներով կամ իրենց կարիքների համար) միշտ էլ զբաղեցրել է գյուղական բնակչության որոշ մասին¹⁴:

Պետք է ասել, որ գյուղական աշխատավորությունը ուներ նաև այլ բնույթի, մեծ մասամբ արհեստագործական օժանդակ զբաղմունքներ, որոնցից առավել հայտնի են գորգագործությունը, կտավագործությունն ու կավագործությունը: Գորգագործությամբ զբաղվում էին առավելապես Լոռի-Փամբակի, Ղազախի, Արագածոտնի և Շիրակի, ինչպես նաև Սյունյաց և Արցախի անասնապահական շրջաններում: Գյուղացիները ձմռան ամիսներին տնայնագործական եղանակով արտադրում էին նաև կապերտներ, գործում հասարակ կտավեղեն՝ անձնական գործածության համար: Կավագործությունը, սակայն, պայմանավորված էր տվյալ վայրում անհրաժեշտ հումքի առկայությամբ: Դրա համար էլ այդ արհեստով զբաղվում էին որոշ գյուղերում, օրինակ, Երևանի մոտ գտնվող Նորք գյուղը կոչվում էր նաև «Չոլմագլխ», որ նշանակում է «կավագործ», բրուտ¹⁵:

Երկրի ընդերքի օգտագործման վերաբերյալ տեղեկություններ կան ավելի վաղ ժամանակներից: Սակայն ունենք նաև ռուսական տիրապետությանը նախորդող ժամանակաշրջանին վերաբերող որոշ տեղեկություններ, որոնք վկայում են միայն Կողբի աղահանքերի, Լոռվա և Ղափանի պղնձի օգտագործման մասին: Նշված ժամանակաշրջանում ցածր մակարդակի վրա էր գտնվում նաև քարհանքերի օգտագործումը: Շինարարության մեջ մեծ կիրառություն ուներ թրծված և հատկապես չթրծված աղյուսը:

Հայաբնակ նահանգներից ստացվող եկամուտների մի զգալի մասն էլ գոյանում էր ճանապարհների պահպանության համար գանձվող գումարներից: Արևելյան Հայաստանով էին անցնում մի քանի քարավանային ճանապարհներ: XVII դարի վաճառական Զաքարիա Ագուլեցին իր օրագրության մեջ մանրամասն նկարագրում է այդ ճանապարհներից մի քանիսը, շմոռանալով նշել նաև ճանապարհապաշտպան կետերը (ոսհրարխաններ) և մաքսատները: Նա թվարկում է այդ կետերում ծառայող երեք կարգի պաշտոնյաների՝ ոսհրարների, բաջլիների և գումրուգլիների, որոնցից առաջինները նստում էին մեծ կամ փոքր վարչական կենտրոններում և ճանապարհապաշտպան վայրերում, իսկ մյուսները՝ սահմանամերձ մաքսատներում¹⁶:

¹⁴ Տե՛ս Chardin J., Voyages..., հատ. II, էջ 166:

¹⁵ Տե՛ս «Զաքարիա Ագուլեցու օրագրությունը», էջ 7:

Առաջին մեծ ճանապարհը, որ Թավրիզի վրայով կապվում էր կենտրոնական Իրանի և այնտեղից էլ Հնդկաստանի ու Միջին Ասիայի հետ, Զուղայի մոտ անցնելով Արաքսը, Նախիջևանի, Երևանի, Էջմիածնի և Կաղզվանի վրայով տանում էր դեպի Կարին: Այս ճանապարհը կոչվում էր էրզրումի կամ վաճառականների ճանապարհ: Երևանից դեպի էրզրում տանող մի այլ ճանապարհ եղավարողով, Ապարանով, Արագածի հյուսիսային փեշերով ձգվում էր դեպի արևմուտք, կտրում Ախուրյան գետը, Ղարսի վրայով գնում Հասանդայա և այստեղ միանում էր նույն մայրուղուն: Սրան զուգահեռ եղել է նաև մեկ այլ ճանապարհ, որը Էջմիածնից Քասախ գետի աջ ափով, Կարբի գյուղաքաղաքի վրայով ձգվում էր դեպի հյուսիս և Ապարանում միանում նույն ճանապարհին: Այստեղից մեկ այլ ճյուղ շարունակվում էր դեպի Լոռի և Բորչալուի վրայով գնում Թիֆլիս: Այս ճանապարհը սկզբնաղբյուրներում և վավերագրերում կոչվում է վրաստանի ճանապարհ¹⁶: Կար նաև Երևանից Թիֆլիս գնացող մեկ այլ ճանապարհ, որի նկարագրությունը գտնում ենք ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի մոտ: Այդ ճանապարհը մոտավորապես համապատասխանում էր ներկայիս Երևան-Աղստաֆա խճուղուն: Շարդենը հիշատակում է այս ճանապարհի վրա գտնվող Բջնի, Կարաբեշիշ, Դիլիջան, Շենքար (Սև Քար), Մելիք-Քյանդի և Քյոփրու-Քյանդի ծանոթ տեղանունները¹⁷: Այս նույն ճանապարհով էլ Երևանը կապվում էր Գանձակի հետ, որն իր հերթին Շամախու վրայով կապված էր այն դիսավոր առևտրական ճանապարհին, որն Անդրկովկասը կապում էր Ռուսաստանին:

Ռահդարխանեններն ու մաքսատները շատ էին և ցրված բոլոր ճանապարհների վրա: Միայն Արաքսի ափին գտնվող Զուղա քաղաքից մինչև Կաղզվան ձգվող ճանապարհի վրա հինգ ռահդարխանեններ ու մաքսատներ կային¹⁸: Թե որքան կարևոր եկամտի աղբյուրներ էին ռահդարխանենները, այդ պետք է եզրակացնել նաև այն փաստից, որ շատ հաճախ դրանք կապալով տրվում էին մասնավոր մարդկանց, որոնք միանվագ որոշ գումար մուծում էին պետական գանձարանը և իրավունք ստանում մեկ լրիվ տարի տվյալ ռահդարխանի եկամուտը գանձելու¹⁹: XVIII դարի 80-ական թվականներին Երևանի Ղուլամ-Ալի խանը պատասխանելով Հերակլ I-ի մի գրությանը, որով վերջինս պահանջում էր մեղմացնել վաճառականական ապրանքներից գանձվող մաքսերը, գրում էր. «Ձերդ ողորմածության համար պետք է պարզ լինի, որ Երևանի երկրի հիմնական եկամուտը նույն այս ռահդարխանենների վարձակալության գումարներից է գոյանում և եթե ապրանքներից գանձվող մաքսերի հարցում փոփոխություն մտցվի և զեղչ կատարվի, այն ժամանակ իմ երկրի գործերը պիտի խանդավեն և ես անել զրության մատնվելով շպիտի կարողանամ բարձրագույն դիվանին հատուցվող տարեկան կապալային գումարները վճարել»²⁰:

Ոչ պակաս եկամտաբեր հաստատություններ էին նաև վիլայեթների կենտրոններում և վարչական ու առևտրական համեմատաբար ավելի մեծ քաղաքներում փողերանոցները կամ «զառաքխանեններ», որոնք գտնվում էին

¹⁶ Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 943, 944, 945:

¹⁷ Տե՛ս Chardin J., Voyages..., հատ. 11, էջ 141—156:

¹⁸ Տե՛ս «Ձաքարիա Ազուկեցու օրագրությունը», էջ 7—8:

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 81, 91, 101, 107:

²⁰ Մատենադարան, Արաքատառ ֆոնդ, ձեռագիր № 233, էջ 242—243:

բեկլարբեկիներին անմիջական հսկողության տակ: Փողերանոցներ կային Քավրիզում, Երևանում, Նախիջևանում, Կարբիում, ավելի ուշ նաև Շուշիում և այլուր: Վաճառականներն ու առևտրականները ցանկացած քանակությամբ կարող էին այնտեղ դրամ կտրել, վճարելով որոշ տոկոս դրամահատման վարձ: XVII դարում դրամահատման խոշոր կենտրոն էր Երևանի փողերանոցը, որի մասին մանրամասն տեղեկություններ է հաղորդում Զաքարիա Ազուլեցին. նրա եղբայր Խոջա Շամվոնը երկար ժամանակ եղել է Երևանի փողերանոցի վերակացուն:

Փողերանոցների վարձակալությունից խաները մեծ եկամուտներ էին ստանում: XVII դարի երկրորդ կեսում Երևանի փողերանոցը հերթով վարձակալել են ազուլեցի, երևանցի, ջահկեցի, ձորագեղցի մեծահարուստ հայ խոջաները: Քե ինչպիսի խոշոր եկամտի աղբյուր էին փողերանոցները, դա պարզ երևում է թեկուզ այն բանից, որ 1663 թ. երևանցի խոջա Սարգիսը զանաբխանի մեկ տարվա եկամուտը վարձակալում է 1500 թումանով: Երևանի փողերանոցից ստացվող մեկ տարվա եկամուտը 70 անգամ ավելի էր, քան Արարատյան երկրի խոշորագույն ֆեոդալական տնտեսություններից մեկի՝ էջմիածնի վանքից գանձվող բոլոր հարկերը միասին վերցրած²¹:

Սակայն որքան էլ որ մեծ լինեին այս կարգի առևտրական, վարչական և հատկապես այլ և այլ առիթներով բնակչությանից ձեռք բերվող եկամուտները, ֆեոդալական այնպիսի երկրում, ինչպիսին էր Սեֆյան Իրանը, որի կազմի մեջ էին մտնում Արևելյան Հայաստանի վերոհիշյալ շրջանները, պետական գանձարանը հարստացնող հիմնական եկամտի սղբչուրը մնում էր աշխատավոր գյուղացիության ֆեոդալական շահագործումը և հողային ունեւան, որը գանձվում էր բազմատեսակ հարկերի ու այլ պարտավորությունների անվան տակ:

3. ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

XVI—XVIII դարերում ինչպես Արևելյան Հայաստանում, այնպես էլ ամբողջ Իրանում մշակելի հողային տարածությունները ըստ պատկանելության հինգ խմբի էին բաժանվում. 1) Պետական կամ դիվանի հողեր, 2) Արքունի կամ խասսե-յե շարիֆե, 3) Մուլք կամ հայրենիք, 4) Վանքապատկան-մզկիթապատկան հողեր կամ մոզկուֆաթ, 5) Համայնքապատկան հողեր:

1. Պետական հողերը սկզբնաղբյուրներում և պատմական վավերագրերի մեջ երկու անունով են հիշվում՝ դիվանի և խալիսե: Այն հողերը, որոնց եկամուտները ամբողջապես հատկացվում էին տարբեր վայրերում ծառայության մեջ գտնվող պետական պաշտոնյաներին ու զինվորականությանը և ենթակա էին երկրի կենտրոնական ֆինանսական տեսչության՝ մուսթովֆի ուլ-մամա-լիքի տնօրինությանը, կոչվում էին դիվանի հողեր, իսկ այն հողերը, որոնք անմիջապես հատկացված էին տվյալ վիլայեթին և նրանց եկամուտները ամբողջապես տնօրինվում էին տեղական իշխանությունների կողմից, սովորաբար անվանվում էին խալիսե հողեր:

Արևելյան Հայաստանում մեծ թվով դիվանի և խալիսե գյուղերի առկայությունը հետևանք էր հատկապես այն բանի, որ սահմանամերձ և հաճախակի պատերազմական գործողությունների թատերաբեմ լինելով, միշտ ենթա-

²¹ Տե՛ս նույն տեղում, թղթ. 1գ, վավ. 392:

կա էին ավերածությունների և հետևաբար հաճախ էր պատահում, որ գյուղատեղիները քաղաքական հանգամանքների բերմամբ լքում էին կալվածները և հեռանում, իսկ այդ կալվածները ի վերջո բռնագրավվում էին և մտնում գիվանի հողերի շարքը: Նույն բանը տեղի էր ունենում նաև այն դեպքում, երբ խաներից որևէ մեկը իր բեկլարբեկիության շրջանում ձեռք էր բերում մեծ թվով սեփական մուլքային գյուղեր և երբ անհավատարմության կամ զեղծարարության մեջ ամբաստանվելով հեռացվում էր պաշտոնից, այդ մուլքերը նույնպես հարթունքի էին գրավվում և գրվում էին գիվանի տրամադրության տակ:

XVII դարի սկզբում շահ Աբբաս I-ը կազմակերպելով նոր կադրային բանակ, միաժամանակ ձգտում էր ընդարձակել գիվանի հողերը, որպեսզի կարողանար նոր զինվորականությանն ապահովել անհրաժեշտ քանակությամբ թիուլներով և ուժեղի դիմաց տրվող այլ հողային եկամուտներով:

Գիվանի գյուղերից ստացվող ռենտա-հարկը հիմնականում իրացվում էր առանձին գյուղերից և գյուղախմբերից ստացվող ամբողջ հարկերը կամ դրանց մի մասը ուժեղի դիմաց զինվորականությանն ու պետական պաշտոնեությունը հանձնելով: Հարկային գումարների փոխանցումները կատարվում էին տարբեր ձևերով:

Ամենատարածված ձևը թիուլն էր, որը տրվում էր ոչ անպայման գիվանի գյուղերից ստացվող եկամուտներից, այլ նաև կալվածատիրական գյուղերից գանձվող հարկերից: Գիվանի գյուղերից տրվող թիուլները, եթե դրանք տրվում էին գյուղի ամբողջ ռենտա-հարկը գանձելու իրավունքով, դիտվում էին որպես ժամանակավոր, ոչ ժառանգական հողատիրություն: Թիուլդարը իրավունք ուներ գանձելու միայն այդ գյուղերից որոշակի հարկեր, որոնք բավական մանրամասն նշվում էին թիուլնամեի մեջ: Շատ հաճախ, երբ գյուղն իր բոլոր հարկային պարտավորություններով պատասխանատու էր դառնում թիուլդարին և այդ վիճակը շարունակվում էր տասնյակ տարիներ, իսկ երբեմն էլ թիուլդարի մահվանից հետո՝ փոխանցվում նրա ժառանգներին, այդ դեպքում արդեն թիուլդարի և նրա հարկատու ռայաթների միջև ստեղծվում էին հողատիրոջ և նրա հողը վարձակալող հողագործ ռայաթի փոխհարաբերություններ, որոնք հաճախ ավելի ամուր էին, քան մուլքատեր-կալվածատիրոջ և նրա ռայաթների փոխհարաբերությունները: Այստեղ ևս ստեղծվում էր անմիջական պատասխանատվություն, որն արտահայտվում էր գյուղական համայնքի հավաքական պատասխանատվության ձևով: Ինչպես գիվանի, այնպես նաև ոչ գիվանի գյուղերի թիուլդարները նույն գյուղի ռայաթների նկատմամբ ունեին նաև վարչական ու դատական իրավունքներ:

Գիվանի գյուղերից ստացվող եկամուտների մի այլ ձև կոչվում էր համեսալե (ամենամյա), որ նույնպես նշանակում էր առանձին հարկատու օբյեկտների ամբողջ ռենտա հարկի կամ նրա մեկ մասի գանձման իրավունքի հանձնումը զինվորականությանն ու պետական պաշտոնյաներին: Մի անգամ այդ իրավունքը ստանալուց հետո, համեսալե ստացողները ամեն տարի իրավունք ունեին որոշված գումարը կամ մթերքը ստանալու տվյալ օբյեկտից, ցնոր տնօրինություն: Ըստ էության համեսալեն համարյա նույնն էր, ինչ որ թիուլը, այն տարբերությամբ, սակայն, որ թիուլներ ավելի շատ տրվում էին ամբողջական գիվանի գյուղերն ու գյուղախմբերը իրենց ամբողջ հարկային պարտավորություններով, իսկ համեսալեի գումարները ավելի փոքր էին և մեծ մասամբ տրվում էին ինչպես գիվանի, այնպես նաև ոչ գիվանի գյուղերից

գանձվող հարկերի ընդհանուր գումարի մի մասը կամ որոշ հարկեր ամբողջությամբ: Համեսալե ստացողները կոչվում էին համեսալեդար:

Բացի թիուլից ու համեսալեից, գոյություն ունեին նաև ոռճիկների հատուցման այլ ձևեր, որոնցից կարելի է հիշատակել թանխաճ-ե մավաջիբ-ը (ոռճիկի գումար): Ի տարբերություն թիուլի և համեսալեի, թանխաճների նշանակման հրամանագրերում չէր նշվում այն օբյեկտի անունը, որտեղից պետք է ստացվեր ոռճիկի գումարը, այլ հրամանագիրը ուղղվում էր դիվանատան պաշտոնյաներին՝ մուսթուլֆիներին և գրագիրներին, հանձնարարվելով ամեն տարի ոռճիկի դիմաց որևէ հարկատու օբյեկտի անունով թանխաճ տալ: Այդ նշանակում էր, որ ոռճիկի թանխաճ ստացողները ամեն տարի նոր գրություն պետք է ստանային և գնային իրենց ոռճիկը չուրաքանչյուր տարի տարբեր վայրից ստանալու: Այս ձևը կոչվում էր նաև եքսալե (միամյա):

Դիվանի գյուղերից, ինչպես նաև այլ հարկատու օբյեկտներից գանձվող ունեցող-հարկը հանդիսանում էր եկամտի այն գլխավոր աղբյուրը, որով պայմանավորված էր պետության ֆինանսական հենարանի՝ դիվանական գանձարանի հարստությունը: Հետզհետե ընդարձակվող դիվանի հողերի անմիջական ղեկավարությունը պահանջում էր հսկայական վարչա-տնտեսական աշխատանք, որպիսին վեր էր Սեֆյան Իրանի ուժերից: Այդ իսկ պատճառով միշտ իրեն վերապահելով այդ հողերի սեփականության իրավունքը, պետությունը դրանցից ստացվող եկամուտների մի մասը թիուլի, համեսալեի և այլ ձևերով, ի դիմաց ոռճիկի, տալիս էր պետական պաշտոնյաներին ու զինվորականությանը, իսկ մնացյալ մասը կապալով հատկացնում մասնավոր մարդկանց, որոնք միանվագ որոշ գումար էին մուծում պետական գանձարանը և իրավունք ստանում գանձելու այս կամ այն վայրի մեկ տարվա ամբողջ հարկերը: Դիվանի գյուղերի ամբողջ ունեցող-հարկը, ինչպես նաև այլ հարկատու տնտեսությունների վարձակալման այս ձևը կոչվում էր իջարե կամ դարթթ, իսկ վարձակալները՝ մուսթա՛ջիբներ կամ զաբիթներ, որոնք սովորաբար ունեին նաև վարչական ֆունկցիաներ:

2. Արևուճի կալվածները, որոնք կոչվում էին խասս կամ խասսե-յե շարիֆե, Արևելյան Հայաստանում մեծ թիվ չէին կազմում: Պատճառն այն էր, որ շահը և թագավորական ընտանիքի անդամները նախընտրում էին հողեր ունենալ մայրաքաղաքի մոտ: Երկրի կենտրոնական նահանգներում, սահմանամերձ և հաճախ հարձակումների ենթակա վայրերում կալվածներ ունենալը այնքան էլ նպատակահարմար չէր:

Զաքարիա Ագուլեցին մանրամասն տեղեկություններ է տալիս Ագուլիսի և Նախիջևանի մոտակայքում գտնվող 5 խասս գյուղերի (Ագուլիս, Մեղրի, Շոռոթ, Լեհրամ, Աստապատ) մասին: Խասս գյուղերի համայնքները թեև վարչական հարցերում ենթարկվում էին տեղական մարմիններին, սակայն հարկային պարտավորություններով կապված էին արքունիքին կից վարչատնտեսական կառավարչության՝ «խասսե-յե շարիֆեի սարքարության» հետ և ենթարկվում էին նրա կողմից նշանակված խասսեզարներին, որոնք միաժամանակ վարում էին նույն վայրի ոստիկանապետի (դարուղա) պաշտոնը:

Խասս գյուղերից ստացվող եկամուտները XVII—XVIII դարերում չէին տրվում որպես ոռճիկ: Ընդհակառակը, խասսե-յե շարիֆեի ծառայողները մեծ մասամբ թիուլներ էին ստանում դիվանի գյուղերից և բնակչությանից գանձվող այլ պետական հարկերի հաշվին: Զաքարիա Ագուլեցու վկայությամբ,

սակայն, խասս գյուղերը սովորաբար վարձակալվում էին մասնավոր մարդկանց կողմից: Ըստ որում որպես մուսթա՛ջիրներ կամ զաբիթներ հանդես էին գալիս և՛ բարձրաստիճան պաշտոնյաներ, և՛ մանր ու խոշոր հողատիրության ու քաղաքային արհեստերատիայի ներկայացուցիչներ, և՛ խոշոր առևտրականներ, որոնք վարձակալության շրջանում օգտվում էին խասսեղարներին վերապահվող բոլոր իրավունքներից:

3. Վաճառված հողատիրությունը Հայաստանում բավական հին պատմություն ունի: Դրանք այն հողերն էին, որ տարբեր ժամանակներում առհասկառ նվիրվել էին կրոնական հաստատություններին և տվյալ ժամանակաշրջանում գտնվում էին այս կամ այն վանքի վանահոր կամ մզկիթին պատկանող կալվածների տնօրենի՝ մուսթավալլիի անմիջական տնօրինության տակ: Այս հողերը, սկսած դեռևս արաբական տիրապետության շրջանից, կոչվում էին վակֆ: Վակֆային կալվածներն ու այլ ստացվածքները, որ ընդհանուր տերմինով կոչվում էին մովկուֆաթ, մի անգամ նվիրվելով որևէ կրոնական հաստատության, առհասկառ ամրացվում էին նրան և այլևս որևէ ձևի օտարման ենթակա չէին:

XVI—XVIII դարերում և դրանից էլ շատ առաջ Հայաստանում եղել են նաև մզկիթապատկան հողեր: Պետք է նշել, սակայն, որ այս երկու կրոնական հաստատությունների (վանքեր և մզկիթներ) հողատիրական իրավունքների միջև զգալի տարբերություններ կային: Մզկիթապատկան կալվածները ամբողջապես էին ազատվում պետական հարկերից, իսկ վանքապատկան կալվածները՝ մասամբ միայն:

XV դարի մասնակի կայունացումից հետո, վաճառված հողատիրությունը XVI դարում սկսում է անկում ապրել: XVI—XVII դարերում Արևելյան Հայաստանում բացի էջմիածնի վանքից, իրենց հողային կարողություններով ավելի աչքի էին ընկնում Հավուց Թառի, Գանձասարի, Տաթևի, Ագուլխի, Դարաշամբի և Մակվի Թաղեոս Առաքյալի վանքերը: Պահպանված բազմաթիվ կալվածագրերից և այլ փաստաթղթերից երևում է, որ նրանց կալվածները նախորդ դարերի համեմատ խիստ աղքատացել էին: Այս շրջանում նրանք ջանում էին միայն պահպանել անցյալից ժառանգած կալվածները, քան ընդարձակել դրանք: Մինչև XV դարը ամբողջական գյուղեր և այլ կալվածներ նվիրվում էին վանքերին հայ խոշոր ֆեոդալների և մեծահարուստ կալվածատերերի կողմից, որոնք XVI դարում դուրս էին եկել ասպարեզից, ուստի վանքապատկան կալվածները ոչ միայն չէին հարստանում, այլ զնալով նվազում էր դրանց թիվը: XVII դարի սկզբում էջմիածնի վանքի պատկանելիությունից դուրս էին եկել XV դարի 30-ական թվականներին Սյունյաց Օրբելյանների վերջին ներկայացուցիչ Ամիր Ռուստամի նվիրած բոլոր յոթ խոշոր գյուղերը:

Չունենալով հողային համեմատաբար խոշոր նվիրատվությունների որևէ հեռանկար, էջմիածնի կաթողիկոսները 1640 թ. հետո սկսում են վանքի միջոցներով գնել բազմաթիվ գյուղեր: Դարավերջում արդեն վանքն ուներ 23 մեծ ու փոքր գյուղ, մեծ քանակությամբ ընդարձակ վարելահողեր, այգիներ, ինչպես նաև ջրաղացներ, դինգեր և այլ ստացվածքներ:

Վանքապատկան կալվածները սեփականության տեսակետից երկու խմբի էին բաժանվում. ա) կանխիկ դրամով գնված կալվածներ, որոնք անվանվում էին մուլք-ե զարխարիզ (գանձագին մուլքեր), բ) մովկուֆաթ (վակ-

ֆային կալվածներ), որոնք նվիրվել կամ վակֆ էին տրվել հավատացյալների կողմից:

XVII—XVIII դարերում հայոց եկեղեցու հոգևոր կենտրոնի՝ էջմիածնի, ինչպես նաև այլ վանքերի կալվածների և հատկապես մուլքային գյուղերի մի զգալի մասը «գանձագին» էր և որպես այդպիսին ենթակա էր հարկման: Գանձագին կալվածներն անհրաժեշտության դեպքում կարող էին վաճառվել, վարձու տրվել կամ գրավ դրվել, իսկ վակֆերը բացի կարճատև (մինչև 3 տարի) վարձակալությունից այլ կարգի օտարումների ենթակա չէին:

Թեև XVI—XVII դարերում ամբողջական գյուղերի նվիրատվությունները համարյա վերացել էին, սակայն առանձին հողակտորներ, այգիներ և այլ ստացվածքներ դեռ շարունակվում էին նվիրաբերվել գյուղական և քաղաքային բնակչության տարբեր խավերի կողմից: Այդ հողերի օգտագործման իրավունքն էր միայն տրվում վանքերին: Դրանք շարունակում էին մնալ գյուղական համայնքի մշակելի տարածությունների ընդհանուր տարածության մեջ: Վանքը սովորաբար դրանք մշակում էր նույն գյուղի ռայաթների կոռային կամ վարձու աշխատանքով և կամ վարձով էր տալիս նույն գյուղի գյուղացիներին: Այդ հողերի համար վանքը հողային հարկեր չէր վճարում և չէր մասնակցում գյուղական համայնքից գանձվող հարկերին: Դրանց վերաբերող հարկերն էլ նախկին կարգով շարունակում էին վճարել նույն գյուղի ռայաթները:

Լինելով վակֆային սեփականություններ և վաճառքի ու այլ կարգի օտարումների շենթարկվելով, այս կարգի հողերը գնալով ավելի էին ընդարձակվում, որի հետևանքով կրճատվում էին վանքերին ավելի մոտ գտնվող գյուղական համայնքների հողերը, և ռայաթները ստիպված էին լինում որոշ գործարքի մեջ մտնել վանքի հետ և կիսարբույթյան կամ այլ պայմաններով վարձակալել դրանք:

4. Մուլքը կամ հայրենիքը հողի մասնավոր սեփականության հնագույն հաստատություններից էր: Հողատիրության այս ձևը XVI—XVIII դարերում պայմանավորված չէր պետական կամ զինվորական ծառայությամբ: Հայկական թե մատենագրական և թե մանավանդ վիմագիր աղբյուրները վկայում են, որ դեռևս IX—X դարերում Հայաստանում կային մեծ քանակությամբ գյուղեր, որոնք որպես հայրենիք կամ մուլք պատկանել են առանձին սեփականատերերի և որոնց սեփականատիրական իրավունքը ժառանգաբար անցնում էր սերնդից սերունդ և ենթարկվում զանազան կարգի օտարման:

XVI—XVIII դարերում, ինչպես այդ երևում է պահպանված բազմաթիվ կալվածագրերից և այլ դիվանական փաստաթղթերից, գյուղատիրոջ կամ մալիքի սեփականատիրական իրավունքը տվյալ գյուղի նկատմամբ արտահայտվում էր նույն գյուղի համայնքի անդամ հողագործ գյուղացիներից հողային ռենտա գանձելու իրավունքով: Գյուղի ընդհանուր հողային տարածությունների և ջրի տնօրինման կամ այլ հարցերում նրան այլ իրավունքներ չէր վերապահվում. այդ իրավունքները վերապահված էին գյուղական համայնքին: Սակայն կալվածատիրոջ քաղաքական հեղինակությունը, նրա գրաված դիրքը պետական-վարչական ապարատում կամ արքունիքում մեծապես կարող էր ազդել կալվածատիրոջ և գյուղական համայնքի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների վրա: Այլ խոսքով ասած, արտատնտեսական ճնշումը կարևոր դեր էր խաղում:

Կալվածատիրական հողային ռենտան հիմնականում բնամթերքով էր

գանձվում: Ըստ տեղի և ժամանակի, ունեցողի նորմերը փոփոխական էին: Առանձին վիլայեթներում և մահալներում, երբեմն նույնիսկ նույն մահալի տարբեր գյուղերում ունեցողի նորմերը տարբեր էին: Աղքատներում հանդիպում են բերքի $\frac{1}{25}$ — $\frac{3}{10}$ -ի չափով հատուցման մասին վկայություններ: Այս հարցում վճռական նշանակություն ունեն ռոտզման սիստեմի կալվածատիրական կամ համայնական սեփականություն լինելու հանգամանքը: Ամեն պարագայում ունեցողի վճարման չափը և կարգը նշվում էր մուլքատիրոջ և գյուղական համայնքի միջև կնքվող պայմանագրի մեջ: Գոյություն ունեն ունեցողի հատուցման երկու հիմնական ձև.

ա) Ըստ տվյալ տարվա բերքի, նրա որոշ մասը կալվածատիրոջը հատուցելու պայմանով, որ կոչվում էր հասթ-օ-բուդ (ըստ եղածի): Այս դեպքում չափվում էր ամբողջ բերքը և վերցվում նրա որոշ տոկոսը:

բ) Առանց բերքը չափելու, յուրաքանչյուր տարի միանվագ որոշ քանակությամբ հացահատիկ և այլ մթերքներ կամ կանխիկ դրամ վճարելու պայմանով, որը կոչվում էր մակթա՝ (կտրված, որոշված):

Աշխատավոր գյուղացիության արտադրած հավելյալ արդյունքի միայն մի մասն էր, որ յուրացվում էր կալվածատիրոջ կողմից: Մյուս, ավելի խոշոր մասը, պետական հարկերի և այլ պարտավորությունների ձևով հատուցվում էր պետությանը, մասամբ նաև եկեղեցուն: Իսկ քանի որ պետական հարկերը հաստատուն էին, գանձվում էին պետական պաշտոնյաների միջոցով և հաճախ գերազանցում էին սահմանված չափերը, ուստի ինքնըստիներքան սահմանափակվում էին կալվածատիրական ունեցողի աճման հնարավորությունները: Այդ էր պատճառը, որ գյուղերի մուլքատերերը ամեն կերպ աշխատում էին հարստահարման և պարտքի դիմաց բռնագրավումների միջոցով իրենց իսկ ուսյաթներից խլել նրանց կողմից մշակվող հողերի օգտագործման իրավունքը և զբաղվել կալվածքային տնտեսությամբ. իսկ հողից և արտադրության մյուս միջոցներից զրկված հողագործ ուսյաթներին աշխատեցնել որպես հողի վարձու մշակներ:

5. Համայնքապատական գյուղեր էին կոչվում այն սակավաթիվ գյուղերը, որոնք մուլքային տիրություն իրավունքով պատկանում էին նույն գյուղի համայնքի անդամ հողագործ ուսյաթներին: Այս դեպքում ամբողջ գյուղական համայնքը հանդես էր գալիս որպես տվյալ գյուղի բոլոր մշակելի տարածությունների սեփականատեր, որով և պայմանավորվում էր համայնքի յուրաքանչյուր անդամի սեփականության իրավունքը այն հողակտորների վրա, որոնք գտնվում էին համայնքի տվյալ անդամի անմիջական տնօրինության տակ և մշակվում էին նրա կողմից:

Գարաշամբում գտնվող մի քանի համայնքապատական գյուղերի կալվածագրերից պարզ երևում է, որ թեև այս կարգի գյուղական համայնքները ազատ էին կալվածատիրական լծից, սակայն մասն ու խոշոր կալվածատերերի և կրոնական հաստատությունների կողմից շարունակ փորձեր էին կատարվում նրանց հողերը զավթելու և բռնի կերպով կալվածատիրական լուծը նրանց վզին փաթաթելու ուղղությամբ:

Շարիաթական կալվածագրերում և հարկային մատյաններում այս գյուղերը դասվում էին մուլքերի շարքը և իրավական ձևակերպմամբ համարվում էին մուլքային սեփականություններ: Կալվածագրերում շեշտվում էր, որ «գյուղը որպես մուլք, պատկանում է գյուղի ուսյաթների համայնքին»: Իսկ քանի

որ մուլքատիրոջ սեփականատիրական իրավունքը արտահայտվում էր գյուղի ընդհանուր բերքի որոշ տոկոսի գանձումով, ուստի վավերագրերում հատկապես շեշտվում էր, որ «ուայաթները ստացած բերքից պետք է վճարեն միայն պետական հարկերը (բահրաչե-յե դիվանի)» և քանի որ գյուղի մուլքատերերը իրենք էին, ուստի ունեատայի կալվածատիրոջը վճարվող մասը մնում էր իրենց:

4. ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՀՈՂԱԳՈՐԾ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Հողագործ աշխատավորության հողի սեփականատիրոջ նկատմամբ ունեցած կախումն ու տնտեսական ենթակայության ձևերը տարբերվում էին ըստ տեղի և ժամանակի: Սակայն դա սերտ աղերս ուներ նաև այն հարցի հետ, թե ինչպիսին էին հողատիրոջ սեփականատիրական իրավունքները այդ հողերի նկատմամբ:

XVI—XVIII դարերի կալվածագրերում և պաշտոնական այլ վավերագրերում թվարկվում են երկու կարգի հողային սեփականություններ. ա) գյուղեր, որոնք շարիաթական տերմինով արաբերեն կոչվում են կարիյե և բ) ագարակներ, որոնք արաբերեն կոչվում են մազրա՛ե:

Մուլքային սեփականություններ հանդիսացող գյուղերում կամ կարիյեներում հողի օգտագործման իրավունքը վերապահված էր նույն գյուղի ույաթներին, որ արտահայտվում էր գյուղական համայնքի համայնական տիրության իրավունքով: Գյուղացին պարտավոր էր միայն իր օգտագործած հողի համար ունեւտ վճարել կալվածատիրոջն ու պետությանը, որից հետո նա ճանաչվում էր իր մշակած հողի տերը և իրավունք ուներ ուղած ձևով մշակել և օգտագործել այն կամ փոխանցել մեկ ուրիշի: Այլ էր մազրաներում սահմանազօված հողերի վրա աշխատող գյուղացիության իրավական վիճակը: Եթե գյուղերը վաղնչական ժամանակներից ազատ համայնքներ էին՝ հետագայում միայն ֆեոդալական կախման ենթարկված, ապա մազրաները վաղ շրջանի դաստակերտների նման առանձին ունեւորների կամ ազդեցիկ ֆեոդալների ջանքերով (մեծ մասամբ աշխատավոր ղանգվածների բռնի, անվճար աշխատանքով) ոռոգված ու մշակելի դարձված ընդարձակ տիրույթներ էին, որտեղ հողի և՛ սեփականության, և՛ օգտագործման իրավունքները ամբողջապես վերապահված էին կալվածատիրոջը: Հողն այստեղ մշակվում էր վարձկան հողագործների միջոցով կամ բերքի որոշ տոկոսը հողագործին թողնելու պայմանով տրվում էր օգտագործման՝ մենատնտես գյուղացիներին:

Եթե ստրկատիրական շրջանում ագարակներում և դաստակերտներում բնակեցվում էին ռազմական արշավանքների ընթացքում ձեռք բերված գերիներ կամ տնտեսական ճնշումների հետևանքով ստրկական կախման մեջ ընկած ունեւորիկ գյուղացիներ, ապա XVI—XVIII դարերի մազրաներում կենտրոնացվում էին ծանր հարկապահանջության հետևանքով ունեւորված, արտադրության միջոցներից զուրկ գյուղացիներ կամ բռնի կերպով այլ կողմերից քշված ռայաթներ:

XVII դարի երկրորդ կեսից սկսած գյուղատերերից շատերին հաջողվում էր օգտվել հետզհետե սաստկացող հարկապահանջության հետևանքով նյութական ծանր պայմանների մեջ ընկած ռայաթների վիճակից և պարտքի դիմաց առինքնել իրենց իսկ սեփական գյուղի սահմաններում գտնվող ընդար-

ծակ հողեր: Այսպիսով, մեծ կամ փոքր հողակտորները դուրս էին գալիս համայնքի իրավասությունից և փաստորեն դառնում կալվածատիրոջ մազրանները, իսկ ուսյաթները ստիպված էին նույն հողերը վերստին վարձակալել կալվածատիրոջից, պարտավորվելով բացի գյուղից գանձվող ընդհանուր ունեւայից, այդ հողերի համար հավելյալ ունեւա վճարել:

Սոցիալական բուռն հակամարտությունների, կալվածատիրոջ և գյուղական համայնքի միջև տեղական պայքարի ու դիմադրության բազմաթիվ փաստերի առկայությամբ հանդերձ, գյուղերի մեծ մասում XVII դարի երկրորդ կեսից սկսած ավելի էր խորանում կալվածատերերի կողմից համայնքապատկան հողերի հափշտակման և աշխատավոր գյուղացիության բռնի հողազրկման պրոցեսը:

Կալվածատերերից շատերին հաջողվում էր սեփական հողերը մշակել նույն գյուղի ուսյաթների պարտագիր կոռույին աշխատանքով: Դա հատկապես շատ տարածված էր վանական հողատիրության մեջ, որտեղ տարբեր գյուղերում գտնվող եկեղեցական հողերը պարտավոր էին մշակել նույն գյուղի ուսյաթները: Այդ գյուղերում փաստորեն կալվածատիրական ունեւայի մի մասը վճարվում էր աշխատանքով, մյուս մասը՝ մթերքով: Տաթևի վանահայր Հովհաննես վարդապետի դավթարից արտագրված ցուցակում մանրամասն նշված է, թե վանքապատկան գյուղերի ուսյաթները, որոնք մեծ մասամբ ունեւան վճարում էին մակթայով, անկախ տվյալ տարվա բերքից, վանքի հողերի վրա տարվա մեջ քանի օր և ինչ կարգի աշխատանքներ պիտի կատարեին²²:

Մուլքային սեփականություններ հանդիսացող մազրանների և գյուղական ուսյաթներից ունեւզրկման ճանապարհով սեփականացված հողերի մշակման տարածված ձևերից էր վարձու աշխատանքը, որը սկսեց ավելի մեծ չափեր ընդունել հատկապես XVII դարի վերջերին և ավելի տարածված ձև դարձավ XVIII դարում: 1770—1780-ական թվականներին Երևանի խաների տված մի շարք հրամանագրերում հատկապես նշվում էր, որ քաղաքի մեծ մզկիթին, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականությանը նվիրված մազրաններին ամրացված են եղել որոշակի թվով ունեւարներ, որոնք պարտավոր էին մշակել այդ հողերը հօգուտ մզկիթի կամ հոգևոր ֆեոդալի²³:

Ռանջբարները մեծ մասամբ հողից և արտադրության միջոցներից զրկված հողագործներ էին, որոնք մշակում էին կալվածատիրական մազրանները և ստանում էին բերքի որոշ մասը որպես աշխատավարձ: Դրանք հողազորժ բանվորներ էին, որոնք մեջ կային մասնագետ այգեգործներ, վարուցանք, հունձ և այլ կարգի դաշտային աշխատանքներ կատարողներ:

Ռայաթները, թեև իրենց կալվածատերերի ճորտերը չէին և առուծախի չէին ենթարկվում, սակայն նրանք ազատ չէին կարող փոխել իրենց բնակության վայրը: Շահ Սուլթան Հուսեյնի հիշրեթի 1122 (1710—1711) թ. մի հրովարտակում բավական մանրամասն շարադրված է ուսյաթների իրենց հարկային պարտավորություններով տվյալ հարկատու բնակավայրին ամրացված լինելու օրենքը: Ըստ այդ օրենքի, որը կոչվում էր «Գերագույն խոսք», եթե ուսյաթները լքում էին իրենց բնակավայրը և բնակություն էին հաստա-

²² Տե՛ս «Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելյանի», հավելված, էջ 44:

²³ Տե՛ս Մատենադարան, Արարատառ ֆոնդ, ձեռագիր 233, էջ 211—212, 352—353:

տում մի այլ վայրում, մինչև 12 տարի ենթակա էին վերադարձման, իսկ 12 տարին անցնելուց հետո այլևս ոչ ոք իրավունք չունեիր նրանց ետ վերադարձնելու: Նույն հրովարտակից միաժամանակ պարզվում է, որ եթե տեղափոխված ուսյաթները 12 տարվա ընթացքում շարունակում էին իրենց պետական հարկերը վճարել նախկին վայրում, ապա կարող էին մնալ այնտեղ և 12 տարուց հետո վերջնականապես գրանցվել նոր վայրի հարկային մատյաններում²⁴: Այսպիսով, հարկերի հատուցման կարգը չխախտելու դեպքում, ուսյաթների տեղափոխությունները մի տեղից մի ուրիշը հնարավոր էր դառնում:

Սակայն մուլքային գյուղերում նման տեղափոխությունները հազվադեպ էին: Կալվածատերերը միշտ էլ կարողանում էին օգտվել վերոհիշյալ օրենքից և ետ վերադարձնել ուսյաթներին: Սրանով հանդերձ պատմական վավերագրերում և այլ սկզբնաղբյուրներում հաճախ է հանդիպում «ցրված ուսյաթներ» (ուուսյա-յե մութաֆարիկե) արտահայտությունը: Դա նշանակում է, որ շնայած անվերջ հետապնդումներին, ուսյաթները, ինչպես առանձին տնտեսություններով, այնպես էլ ամբողջ համայնքով հեռանում էին իրենց գյուղից և բնակություն հաստատում մի այլ վայրում:

Տարբեր էր, սակայն, գյուղացիների սոցիալ-իրավական վիճակը կոոֆամբակում և Արևելյան Հայաստանի այն շրջաններում, որոնք ենթակա էին Արևելյան Վրաստանի վախիթյանը: Այստեղ գյուղացիները ճորտական կախման մեջ էին և հողի հետ միասին վաճառքի էին ենթարկվում: Կալվածագրերում առաջին հերթին նշվում էր ճորտ «շինականները», այնուհետև միայն՝ նրանց տները, հողերը, ջրերը, արոտավայրերի և մյուս ստացվածքների վաճառքը, 1660—1670-ական թվականներին Սանահնի վանքին կատարված մի նվիրատվության արձանագրության մեջ կարգում ենք. «Կաման ամենազարին աստուածոյ ես՝ պարոն Զալբէկի որդի Գասպարս, իմ որդի Գօզիս, Բէրաւս, Բէժիս, Խաւսիս մեր կամաւ և յօժարութեամբ մեր ըողովս մեր Ունակա Միլ շինական Շիխու Միսիթարն, Ակոբն, Խէշիկն ծախեցինք վերայ Սարգիս պարոն-տէրին ի դրան մերս լուսոյ սուրբ Աստուածածինս, իրանց տանովն, իրանց տեղովն, իրանց հողովն, իրանց ջրովն. թէ պահէզատեղ, թէ այգու տեղ, թէ հորսագահ, իր արօտգահովն, թէ սար, թէ ձոր ամէն ծախեցինք ի վերա Սարգիս պարոն-տէրին: Պարոն-տէրն գնեց՝ վախմ արաւ Սանահնս սուրբ Աստուածածնին»²⁵:

Սոցիալ-իրավական վիճակի որոշակի դանազանությամբ հանդերձ, հայ աշխատավոր գյուղացիությունը Արևելյան Հայաստանում, ինչպես նաև Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Արևելյան Վրաստանի, Ադրբեջանի և բուն Իրանի հայաբնակ շրջաններում ենթակա էր ֆեոդալական դաժան շահագործման ու հարստահարման ոչ միայն կալվածատեր-ֆեոդալների և մանր ու խոշոր հողատիրության, այլև առավելապես շահական արքունիքի, պետական ստորին և վերին պաշտոնեության կողմից, որը բազմաթիվ և բազմազան հարկերով ու տուրքերով նստած էր աշխատավորության ուսերին:

²⁴ Տե՛ս է. Գ. Փափագյան, Ռուսաստանի իրավական ազատության հարցը Արևելյան Հայաստանում 16—18-րդ դդ. և շահ Սուլթան-Հուսեյնի հրովարտակը, «էջեր հայ ժող. պատմության և բանասիրության» (հոդվածների ժողովածու նվիրված ակադ. Ա. Գ. Հովհաննիսյանի ծննդյան 80-ամյակին), Երևան, 1971, էջ, 127—136:

²⁵ Մատենադարան, ձեռագիր № 3031, էջ 208ա—208բ:

5. ՀԱՐԿԱՅԻՆ ՍԻՍՏԵՄԸ ԵՎ ԲՆԱԿԶՈՒԹՅՈՒՆԻՑ ԳԱՆՁՎՈՂ ՀԱՐԿԵՐՆ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԸ XVI—XVIII ԳԻ.

Հողի օգտագործման համար գանձվող հարկը կամ որ նույնն է՝ հողային ռենտան, որ գանձվում էր բնամթերքով և կոչվում էր բահրե կամ բահրաչե, Սեֆյան տիրապետության շրջանում բաժանվում էր երկու մասի. ա) պետական կամ բահրաչե-յե դիվանի և բ) կալվածատիրական կամ բահրաչե-յե մալիքանե: Վերջինս Արևելյան Հայաստանում, հատկապես Արարատյան երկրում կոչվում էր նաև մուլք, որովհետև համարվում էր մուլքային սեփականության եկամուտ:

Այն գյուղերում, որոնք որպես մուլք պատկանում էին առանձին կալվածատերերի՝ բահրաչե-յե մալիքանե գանձում էին կալվածատերերը կամ մալիքները, իսկ այն գյուղերում, որոնց մուլքը պատկանում էր նույն գյուղի ռայաթներին, գյուղացիները բահրաչե-յե մալիքանե շէին վճարում: Վանքապատկան այն գյուղերում, որոնք անմիջապես վակֆ լինելով ազատված էին հարկերից և այն մուլքային գյուղերում, որոնց տերերը զանազան ծառայությունների դիմաց մուաֆուլթյան իրավունք էին վայելում, գյուղացիները պետական և կալվածատիրական բահրաչեյն պարտավոր էին վճարել վանքին կամ կալվածատիրոջը: Խասս գյուղերում երկու բահրաչեներն էլ գանձվում էին հօգուտ արքունիքի, իսկ դիվանի գյուղերում՝ հօգուտ պետական գանձարանի: Այնպես որ գյուղացիների վճարած հողային ռենտայի քանակը, անկախ այն բանից, թե այն ինչ համամասնություններ էր բաժանվում պետության և կալվածատիրոջ միջև, մնում էր անփոփոխ:

Բնակչությունից գանձվող հողային և այլ հարկերի հաշվառումն ու գրանցումը նահանգային և կենտրոնական հարկային մատչաններում կատարվում էր ըստ նախապես գոյություն ունեցող հին դավթարների՝ հաշվի առնելով ժամանակի ընթացքում տվյալ վայրերում կատարված շինարարական և հատկապես ոռոգման աշխատանքներն ու բնակչության աճը:

Սկզբնաղբյուրներից պարզվում է, որ նոր, ամբողջական հարկային օրենսգրքեր կամ «կանուննամեներ» չկային: Մինչև XVIII դարի սկզբները անհրաժեշտության դեպքում դիմում էին XV դարում Ուզուն-Հասանի ժամանակ կազմված «Կանուննամենին»:

Հարկերի հաշվառման և ընդհանուր աշխարհագրի հետաքրքիր նկարագրություններ են պահպանված XVII դարի պատմիչ Զաքարիա Սարկավագի պատմության մեջ և XVIII դարի սկզբի եկեղեցական ու քաղաքական գործիչ Եսայի կաթողիկոս Հասան Զալալյանի «Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի» արժեքավոր գրքում: Ռայաթների ֆիզիկական խոշտանգումների, սարսափի ու ահաբեկման միջոցով հարկահանները կամ մուամայիզները կարողանում էին հաշվառման ենթարկել բոլոր հարկման ենթակա ստացվածքները, ընտանի կենդանիներն ու շափահաս մարդկանց:

Զաքարիա Սարկավագը պատմում է Երևանի Թահմազկուլի խանի (1625—1635) գլխավոր հարկահան Ասլան աղայի միջոցով Քանաքեռում ռայաթների ու նրանց ինչքի հաշվառման մասին և կենդանի նկարագրությունները պատկերում XVII դարի ծանր հարկապահանջության մոայլ իրականությունը Արևելյան Հայաստանում:

«Եւ եկն նախ ի Քանաքեռ, — գրում է Զաքարիա Սարկավագը, — յաւուրս

ձմերայնոյ և կոշեալ առաջի իւր զգեղականս՝ ցուցանել զգլուխն իւրեանց: Եկն նախ Մելիքն Դաւիթ և եբեր Լ(8) որդին իւր և զորդի զստերն, և եցոյց: Գային ամենեքեանս որդուվք իւրեանց՝ և մտանէին ի գիրն: Իսկ հայրն իմ Մկրտիչ շալակեաց զիս զՋաքարիայս և զեղբայրն իմ զԽաչատուր առաջի արկեալ գնաց, և իբրև ետես զմեզ փոքր և կաղ՝ և թիւր ոտամբ, բարկացաւ՝ և ասէ, զառողջ որդիսն քո պահեալ ես, և զանդամալոյժքդ բերեալ ես, և հրամայեաց արկանել յերկիր ի վերայ երեսացն, և բերեալ ջուր թափեցին ի վերայ անձինն, յոտաց մինչև ցգլուխն՝ ջրողող արարին, և նստոյց այր մի ի վերայ զլիսոյն և այր մի ի վերայ ոտիցն և հրամայեաց շորից զինուորաց Բ (2) կողմամբ հարկանել և այնքան հարին, մինչ զի մորթն ի մարմնոյ ի բաց ոստեալ, և ինքն անշնչացաւ, և համարեցին զնա մեռեալ և ապա քարշեալ զնա թաղեցին ի մէջ փայինի: Եւ այր մի Բարսեղ անուն, և այր մի Ղազար անուն հանին զի (20) եղնգունսն, և այլ ոմն Մարուգէ անուն երևանցի կախեցին զմիոյ ձեռանէն և այնքան հարին, մինչև յօղուածքն ամենայն խախտեցան: Եւ այսպէս ահ նորա տիրեաց ի վերայ ամենեցուն՝ մեծաւ սաստիւ: Վասն որոյ ոչ մնաց ստնդեայ մանուկ զոր ոչ ցուցին: Եւ եթէ ծերք գային, հրամայէր երթեկես առնել առաջի իւր և տեսանէր, զի թէ գլուխն ի կոր ունէր և Բ (2) ձեռքն զկնի իւր տանիւր, ոչ գրէր, իսկ թէ գլուխն ուղիղ ունէր և ձեռքն առաջի տանիւր՝ զնա գրէր: Եւ ոչ ոք իմացաւ զայս: Իսկ եթէ մանկունք գային, բերէր առասան և շուրջ պատէր զպարանոցաւ պատանոյն և երկոքին ծայրք պարանի գնէր ի բերան մանկանն և ասէր ըմբռնել ատամամբ և օղ արարեալ տանէր ի վերայ զլիսոյն, եթէ անցանէր զգլխովն թողոյր զնոսա գնալ և եթէ ոչ անցանէր զգլխովն՝ գրէր զնա: Եւ այսպէս գրեաց զամէնն յոյժ ճշտիւ՝ զմարդ, զկով, զծի, զջորի, զէշ, զոշխար, զջրաղաց, զծիթաղաց, զարուեստս, զբրնձաղաց, զայգիս և զպարտէզս և այլ որ ինչ գտաւ՝ գրեաց և ի ներքոյ հարկի արար: Եւ էարկ ի դիւան արքունի զամենայն գրեալսն»²⁶:

Շուրջ մեկ հարյուրամյակ հետո, Սեֆյան պետութեան մայրամուտին, երբ շահ Սուլթան-Ղուսեյնը արքունիքի ուռձացած ծախսերը հոգալու համար փորձում էր, աշխատավորութեան հարստահարումը բազմապատկելով, լցնել արքունի գանձարանը և կրկնապատիկ ու եռապատիկ շափերով ավելացնում էր ռայսթներից, արհեստավորներից, առևտրականներից և առհասարակ ամբողջ բնակչութունից գանձվող հարկերը, նորից ամբողջ երկրով մեկ տեղի էր ունենում հարկատու օբյեկտների ու բնակչութեան նոր հաշվառում, որի ընթացքում կիրառվում էին նույնքան և ավելի քստմնելի միջոցներ:

«Ի տասներորդ ամի թագաւորութեան իւրում,—գրում է Եսայի Հասան-Ջալալյանը,—Հիւսէին կոչեցեալ Շահ-սուլդանն արար հրաման մարդաթիւ և աշխարհագիր առնել ազգիս Հայոց և ամենայն ազգաց ընդ իշխանութեամբ իւրով եղելոց: Եւ ելեալ հրամանատարք նորին արք իբրու հաւատարիմք տան նորա գրիչք և քարտուղարք, զի անսխալ և առանց թագուցանելոյ գրեսցեն զամենայն հասակ ի հնգետասնամենից և ի վեր, սպառնացեալ ի հրովարտակին այսպէս. «Եթէ ոք գտցէ զթագուցեալ և զղօղեալ ոք և յայտնեսցէ զայն արքայի, գլուխ զօղելոյն՝ արքայի, և ինչք նորա աւար այնմ լիցի, որ գուշակեացն»: Զոր և արարին իսկ, զի յոյժ յուզմամբ և որոնմամբ զննեալ տեղեկանային պէս-պէս հնարիւք և սպառնալեօք: Ի գիւղի ուրումն գտանուտէր գիւղին և

²⁶ Զաւաբիա Սարկավագ, հատ. 1, էջ 66—67:

զբաճանայան և զհիրընկալն, զոր գզիր ասեն, արգելուին ի տունս ուրոյն և զատ ի միմեանց, և ապա ասել տային զանուանս արանց եղելոց ի գիւղին և գրէին և բերեալ ի մի վայր հաւասար տեսանէին, և թէ աւելի կամ պակաս գտանէին ասացեալքն միմեանց (և զի թուղթ ևս առնուին և բերանոյ նոցա, այսինքն մուշակա, զի թէ սուտք գտցեն, այնքան տուգանս վճարեսցեն), կախելով ի փայտէ բրածեծ առնէին զարան ասացեալ ի սակս տուգանին, ընդ նմին կաշառս յուղվս և տասանորդս և զկարգեալ վարձս զինուորացն առաւել քան զչափն առնուին, և ապա զգրեալն կրկնէին...»²⁷:

Այնուհետև նույն հեղինակը պատմում է, թե ինչպես բոլոր հարկերը և հատկապես գլխահարկը եռապատկել են և սկսել անմիջապես բռնի իրացնել. «Եւ ցրուեցան զօրքն ընդ երկիրս և ընդ գիւղօրայս ի թիւ արկեալ գրովն և քանզի յոժ ծանր էր լուծն և ոչ կարէին տանել, վասն որոյ շարչարէին և կեղեքէին և ջարդելով առնուին ըստ չափու իւրեանց ի յուղիցն՝ յուղվ և ի փոքունցն՝ փոքր, զի մեծ գեղն հարիր յիսուն, հարիր, կամ յիսուն թուման և յոժ փոքրն յերեսուն և կամ ի քսան թումանէ շէր պակաս»²⁸:

Երբ վերը նկարագրված ահ ու սարսափի պայմաններում հաշվառման էին ենթարկվում ռայաթների առանձին տնտեսութունները, չափվում մշակելի տարածութունները և ցուցակագրվում բոլոր չափահաս աշխատունակ տղամարդիկ, դրանցից գանձվող բոլոր հարկերը հանրագումարի էին բերվում և ընդհանուր գումարներով արձանագրվում հարկային մատչաններում: Յուրաքանչյուր գյուղի անվան տակ նախ միանվագ գրվում էր այդ գյուղից գանձվող բոլոր հարկերի ընդհանուր գումարը՝ դրամով հաշված: Ապա այդ ընդհանուր գումարի տակ նշվում էր, թե դրանից որքանն է կանխիկ դրամով հատուցվելու և որքանը՝ բնամթերքով: Իսկ ավելի ներքևում առանձին-առանձին ցույց էր տրվում, թե այդ գումարից որքանը որ հարկի հաշվից է հատուցվելու: Հարկերի այդ ընդհանուր գումարի բաշխումը համայնքի առանձին տնտեսութունների վրա, որ կոչվում էր թովչիհ, կատարվում էր համայնքի ներսում և պետութայնը շէր վերաբերում: Գյուղական համայնքը պատասխանատու էր հարկերի այդ ընդհանուր գումարի հատուցման համար:

Գատեղով թիւունամեներից, համեսալեի և պետական պաշտոնյաների ռոճիկների այլ կարգի հատուցումներին վերաբերող շահական հրովարտակներից և դիվանական այլ վավերագրերից, կարելի է ասել, որ պետական ռենտա-հարկի գանձման հիմնական ձևը ռոճիկի դիմաց, ընդհանուր գումարներով գրանց հանձնումն էր զինվորականութայնն ու պետական պաշտոնյաներին: Հանձնարարական գրութուններ (հավալե և բարաթ) ստացող պաշտոնյաները այդ հարկերը ստանում էին և՛ բնամթերքով, և՛ կանխիկ դրամով: Բերքից ստացվող բահրաչեն գանձվում էր հասթ-օ-բուղի կամ մակթաի ձևով, սակայն ավելի տարածված էր ձեռքից ստանալու (բեդասթ գերեֆթան) ձևը, որ նշանակում էր թիւունամեի մեջ նշված գումարը ստանալ համայնքից կանխիկ և ռայաթների կալերին շմոտենալ: Այս դեպքում թիւուլային գումարը քառապատկվում էր, որպիսի հաշվարկը իր ժամանակի հաշվապահական տերմինով կոչվում էր բարավորդ: Ռայաթները շատ հաճախ համաձայնվում էին վճարել նախատեսված գումարի չորս անգամ ավելին, միայն թե թիւուղարի գործակատարները նրանց գյուղը շմոտենին ու բերքը չչափեին:

²⁷ Եսայի Հասան-Ջալալյան, Պատմութիւն Համաթոս Աղուանից երկրի, էջ 13—14:

²⁸ Նույն տեղում, էջ 15:

Նույն գյուղից ստացվող պետական հարկերը կարող էին գանձվել տարբեր մարդկանց կողմից: Նույնիսկ նույն հարկի մի մասը կարող էր տրվել մի մարդու, իսկ մյուս մասը՝ մեկ ուրիշի: Թեև հարկերի հաշվառման ձևը բոլոր վայրերում համարյա թե նույնն էր, սակայն դրանց գանձման ձևերը առանձին գյուղերում տարբերվում էին իրարից: Անկախ այն բանից, թե պետական ռենտա-հարկը իր որ մասով ում կողմից էր գանձվում, բոլոր դեպքերում այն նախօրոք հաշվվում էր, ըստ առանձին հարկերի ի մի էր բերվում և ընդհանուր գումարներով գրանցվում էր դիվանական մատյաններում: Բոլոր դեպքերում այդ գումարները գանձվում էին առավելագույն չափերով և մի քանի տարին մեկ անգամ դրանց վրա ավելանում էին դրամի արժույթի անկման ու հարկերի հատուցումը ուշացնելու կամ ժամկետանցության հետևանքով առաջացող հավելումներ և վերադիր տոկոսներ:

Թեև թիուլնամներում նշվում էին թիուլային գումարների այն առավելագույն չափերը, որոնք թիուլդարները իրավունք չունեին գերազանցելու, սակայն պահպանվել ու մեզ են հասել բազմաթիվ խնդրագրեր և բողոքագրեր, որոնց մեջ ռայաթները բողոքարկում են թիուլդարների ոտնձգությունների դեմ, պահանջելով, որպեսզի վերջիններս դուրս չգան թիուլնամեում նշված սահմաններից: Մուլքային գյուղերում թերևս այդ բողոքները կարող էին որոշ արդյունք տալ, քանի որ այստեղ կալվածատերը ևս որոշ չափով շահագրգռված էր փրկելու իր ռայաթներին տնտեսական քայքայումից: Սակայն դիվանի գյուղերում, որոնց թիվը, ինչպես ասվեց, Արևելյան Հայաստանում բավական մեծ էր, և որոնք հաճախ ամբողջությամբ տրվում էին մեկ անձնավորության, ռայաթները ենթարկվում էին ամենասանձարձակ կողոպուտի և հարստահարության:

Բացի պետությանը տրվող բահրաչեից, մալուջաթից ու ջիզյայից, որոնք մանրամասն հաշվառման ենթարկվելով գանձվում էին բնակչությանից, կային նաև այլ հարկեր ու տուրքեր, որոնք թեև ոչ մի տեղ չէին գրանցվում, սակայն դարերից ի վեր հաստատված լինելով, սկսած դեռևս իլխանական և հատկապես թուրքմենական տիրապետության շրջանից, ամենայն խստությամբ գանձվում էին հօգուտ մեծ ու փոքր ֆեոդալ-իլխանավորների և բարձրաստիճան կամ ստորին պետական պաշտոնեությունների:

Ահա XVI—XVIII դարերի սկզբնաղբյուրներում հանդիպող հարկային տերմինների ու զանազան առիթներով բնակչության տարբեր խավերից գանձվող հարկերի ու տուրքերի ոչ լրիվ ցանկը:

1. Մալ կամ մալիյե էր կոչվում այն հիմնական հարկը, որ գանձվում էր բոլոր տեսակի եկամտաբեր սեփականություններից, սկսած սերմանելի տարածություններից, այգիներից, բանջարանոցներից և այլ հողային ստացվածքներից մինչև ջրաղացները, ձիթհանքերը, ջրանցքներն ու աղբյուրները, քաղաքներում՝ բաղնիքներից ու ներկատներից, խանութներից ու այլ եկամտաբեր վայրերից և հաստատություններից: Գյուղերում այն գանձվում էր ջրհաք կոչվող հողային հարկի հետ միասին և կոչվում էր մալուջհաք:

2. Չորսանքելի-ն այն հարկն էր, որ կանխիկ դրամով գանձվում էր մանր եղջերավոր անասունների դիմաց: Որոշ աղբյուրներում այս հարկը անվանվում էր նաև ֆոդալ:

3. Զիզյա էր կոչվում այլակրոնության հարկը կամ գլխահարկը, որ գանձվում էր յուրաքանչյուր չափահաս քրիստոնյա տղամարդուց, տարին մեկ

անգամ, երեք տարբեր՝ ստորին, միջին և վերին սակերով, ըստ հարկատու ռայաթի (զիմմի) կարողության: XV դարից սկսած ջիզյա տերմինին զուգահեռ աղբյուրներում գործ է ածվում նաև քաֆավուք-ե ջիզյա (ջիզյայի տարբերություն) տերմինը: Յուրաքանչյուր հարկատու համայնքի գլխահարկը միշտ հաշվվում էր միատեղ և միանվագ պահանջվում էր տվյալ համայնքից: Տարիներ հետո, հաշվի առնելով բնակչության աճն ու դրամի կուրսի աստիճանական անկումը, որոշ տոկոսներ էին բարդվում հարկերի մայր գումարների վրա, որոնք կոչվում էին քաֆավուք (տարբերություն) և գանձվում էին առանձին:

4. Բիգար—ռայաթների պարտադիր, անվճար աշխատանքը ամրությունների, բերդերի, ջրանցքների, ճանապարհների վրա և ռազմական արշավանքների ժամանակ: Որոշ աղբյուրներում այս պարտավորությունը արաբական տերմինով կոչվում էր սուխրա:

5. Շիգար—հիշվում է միշտ բիգարի հետ միասին: Դա ռայաթների պարտադիր աշխատանքն էր հօգուտ արբունիքի, որոշ ուսումնասիրողների կարծիքով նաև ֆեոդալների՝ որսի ժամանակ (շքար—որս):

6. Ուլաղ և ուլամ—այս երկու համանիշ տերմիններով էր կոչվում ռայաթների այն պարտավորությունը, որ նրանք կատարում էին իրենց փոխադրական միջոցները տրամադրելով զինվորականությանն ու պետական պաշտոնեությունը: Ձիերի, էշերի, ջորիների, ուղտերի և այլ փոխադրամիջոցների հավաքագրումներ կատարվում էին նաև խոշոր զորաշարժերի ժամանակ: Այս դեպքում գյուղացիներն իրենք ևս պարտավոր էին հետիոտն ուղեկցել և տեղափոխել բանակի պաշարն ու հանդերձանքը:

7. Ավարիզ հոգնակի՝ ավարիգաթ տերմինով էր կոչվում ռայաթների արտակարգ պարտադիր աշխատանքը զանազան պատահարների (հեղեղ, մորեխ և այլն) ժամանակ, որը հաճախ փոխարինվում էր դրամական տուրքով:

8. Սուրսաթ-ները ռազմական արշավանքների ժամանակ հարկատու բնակչության վրա դրվող այն պարտավորություններն էին, որոնք հատուցվում էին հատկապես մեծ քանակությամբ հացահատիկով և այլ մթերքներով: Ռայաթները ոչ միայն պարտավոր էին ամենակարճ ժամկետում տալ պահանջված քանակությամբ մթերքները, այլև սեփական զրաստներով տանել այն և օրգույում (բանակատեղի) հանձնել զորամասի հրամանատարությանը:

9. Ձերիֆ էր կոչվում բնակչության և հատկապես քոչվորության զինվորական կամ աշխարհազորային պարտավորությունը: Աղբյուրներում հանդիպում է նաև զար-ե շերիֆ (չերիքի ոսկի) տերմինը, որից պարզվում է, որ այս պարտավորությունը հողագործ բնակչության համար փոխարինվում էր դրամական տուրքով:

10. Իխրաշաթ-ե կալ'ե (ամրոցի հարկ)—տուրքեր, որ ռայաթները պարտավոր էին հատուցել մոտակա ամրոցների ու բերդերի բերդապահ կայազորի կարիքները հոգալու համար (շինարար բանվորներ, մթերքներ, վառելիք և այլն):

11. Սավարի-ն հատուկ տուրք էր, որ գանձվում էր ռայաթներից, երբ տվյալ վայրից անցնում կամ այնտեղ իջևանում էր շահը կամ թագավորական ընտանիքից որևէ մեկը իր շքախմբով:

12. Նգուլ անվան տակ հասկացվում էին այն պարտավորությունները,

որոնք, մեծ մասամբ բնամթերքով, հատուցվում էին այն դեպքերում, երբ գյուղում իջևանում էին բարձրաստիճան զինվորականներ ու պետական պաշտոնյաներ կամ օտարերկրյա դեսպանություններ:

13. Կոնալդա—այսպես էր կոչվում թագավորական սուրհանդակներին, նամակատարներին (շափար) և ընդհանրապես պաշտոնական, հաճախ նաև ոչ պաշտոնական գործերով երթևեկող բարձրաստիճան և կրտսեր պաշտոնեությանը հյուրընկալելու պարտավորությունը, որ հայկական աղբյուրներում անվանվում է բոնահյուր:

14. Ալաֆե և ուլուֆե—գյուղերում իջևանող պետական պաշտոնյաների գրասաններին տրվող կերքը: Այս տուրքը մեծ մասամբ հատուցվում էր մթերքով (խոտ, դարման, գարի և այլն): Շատ դեպքերում, սակայն, այն փոխարինվում էր դրամական տուրքով:

15. Խիդմաթաւն—թուրքերեն անվանվում էր նաև ղուլուղ և գանձվում էր իբր վարձատրություն այն ծառայության, երբ հարկահանները զանազան առիթներով գալիս էին գյուղ և զբաղվում հարկերի ճշտման և գանձման գործերով:

16. Էնդաս—երբ դարուղաները, թիուղարները կամ տվյալ վայրի պետական հարկերի կապալառուները զբաղվում էին ռայաթների միջև ծագած վեճերի քննությանը, դրա համար կողմերից գանձում էին հատուկ տուրք, որը կոչվում էր ռասմ-ե էնդաս (պատահարի տուրք): XVI—XVII դարերում գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի մեջ նախատեսվում էր նաև որոշ տոկոս (տասը դինարից կես դինար), որ համայնքը պարտավոր էր վճարել թիուղարին, անկախ այն բանից, թե այդ տարի գյուղում վեճեր քննվել են, թե ոչ:

17. Ռասմ-ալ-սուղուր—սադրի կամ գլխավոր կրոնական դատավորի օգտին գանձվող տուրք:

18. Ռասմ-ալ-վիզարաթ—վեզիրի, Արևելյան Հայաստանում հատկապես Ազերբայջանի վեզիրի օգտին գանձվող տուրք:

19. Ռուսում-ե դարուղեգի—տուրք, որ գանձվում էր հօգուտ տվյալ մահալի կամ նահիայի դարուղայի (գլխավոր ոստիկանապետ ու հարկահան): Ավելի տարածված էր միայն դարուղեգի տերմինը:

20. Սալամի նաև սալամանե կամ հոգնակի սալամաթ էր կոչվում այն տուրքը, որ պարտադիր նվերների ձևով հատուցվում էր նոր նշանակված խանին, հաքիմին, թիուղարին և մյուս իշխանավորներին, երբ համայնքի ներկայացուցիչները գնում էին ներկայանալու նրանց և բարի գալուստ մաղթելու:

21. Էյլի—ֆեոդալ-իշխանավորներին կամ տեղական բարձրաստիճան նահանգապետներին ու այլ պետական պաշտոնյաներին մուսուլմանական մեծ տոների ժամանակ (էյդ-ե ֆեթր, էյդ-ե դադիր, էյդ-ե դուրբան) նվերների անվան տակ տրվող պարտադիր տուրք:

22. Նովրուզի—պարսկական նոր տարվա առաջին օրը՝ զարնանամուտին, ֆեոդալին կամ պետական պաշտոնյաներին մատուցվող պարտադիր նվեր-տուրք:

23. Փիշաֆա—զանազան առիթներով բնակչության կողմից ֆեոդալին և պետական պաշտոնյաներին մատուցվող նվերներ:

24. Թարհ—այսպես էր կոչվում պետական պաշտոնյաների կողմից բնակչության նկատմամբ կիրառվող այն հարկադրանքը, երբ ռայաթներին ստի-

պում էին որևէ ապրանք չնշին գնով զիջել իրենց կամ, ընդհակառակը, որևէ ապրանք բարձր գնով գնել իրենցից:

25. Գաօթաճուղի տեղումնի տակ հասկացվում էր պետական պաշտոնյաների այլազան ոտնձգությունները ռայաթների ինչքի և ունեցվածքի նկատմամբ:

28. Շանակիսաթ—ապօրինի պահանջմունքներ, շահատակություններ, հարստահարություններ:

27. Շիլթաղաթ—պետական պաշտոնյաների կողմից զանազան զրպարտություններով, կեղծ ու հնարովի պատրվակներով ռայաթներից որևէ բան շորթելը:

28. Խիւրաչաթ կամ խարիջիչաթ ընդհանուր անունով էին անվանվում այն բոլոր արտակարգ ծախքերը, որ վերը նշած տարբեր առիթներով պարտադրվում էին առանձին հարկատու համայնքների:

29. Վջումաթ, քավաջումաթ, մութավաջեհաթ—ե ղիվանի անվանվում էին բոլոր տեսակի պետական հարկերը, որոնք մեծ մասամբ գանձվում էին կանխիկ դրամով:

30. Հոկուկ—ե ղիվանի կամ քաֆալիֆ—ե ղիվանի տերմիններով արտահայտվում էր հարկատու բնակչության պետության նկատմամբ ունեցած բոլոր տեսակի հարկային պարտավորությունները:

Սակայն սա ղեռ բոլորը շէր: Աշխատավոր գյուղացիությունը շահագործման էր ենթարկվում նաև իր իսկ համայնքի ներսում բուն դրած գյուղական ավագների, քյաղխուղաների, մելիքների ու գյուղացիության դասի այլ ներկայացուցիչների կողմից: Գյուղական ավագները, տանուտերերն ու քյաղխուղաները բացի այն, որ զանազան խարդախությունների ու շարաշահումների միջոցով հափշտակում ու յուրացնում էին համայնքի միջոցները, համայնքի անդամ հողագործ գյուղացիներից գանձում էին նաև հատուկ տուրքեր, որոնք կոչվում էին ռուսում—ե քյաղխուղայի (քյաղխուղայական տուրքեր):

Գյուղի և քաղաքի հայ աշխատավորությունը ուներ նաև պարտավորություններ եկեղեցու նկատմամբ, որը նույնքան պարտադիր էր, որքան մյուս հարկերը: Հայոց եկեղեցու իշխանավորներն իրենց այդ իրավունքները հաստատել և ամրապնդել էին շահական հրովարտակներով ու ռաղամներով, որոնց մեջ խստորեն կարգադրվում էր հայ ռայաթներին՝ հնուց ընդունված բոլոր հոգևոր տուրքերը անթերի վճարել եկեղեցու սպասավորներին²⁹:

Եկեղեցական տուրքերը բաժանվում էին երեք խմբի, որոնց մասին բավական մանրամասն հիշված է Հակոբ Շամախեցի (1759—1763) և Սիմեոն Երևանցի (1763—1780) կաթողիկոսների կոնդակներում:

ա) Հայրապետական հասք և տուրք, որոնք տրվում էին կաթողիկոսներին:

բ) Եպիսկոպոսական կամ առաջնորդական հասք և տուրք, որոնք տրվում էին առանձին թեմերի առաջնորդներին կամ այն վանքերին, որոնց վիճակի մեջ էին մտնում տվյալ գաղութի ռայաթները:

գ) Քահանայական հասք և տուրք, որոնք վճարվում էին քահանաներին՝ ծնունդի, մկրտության, ամուսնության, թաղման, տնօրհնների, գերեզմանօրհնների, մատաղի և այլ ծիսակատարությունների համար:

Ինչպես մեռոնի բաժանման կամ նվիրակության համար կաթողիկոսի անունով գանձվող տուրքը, այնպես նաև պտղին, գանձանակը, հոգեբաժինը,

²⁹ Մատենադարան, Կաթողիկոսական ղիվան, թղթ. 1ա, վավ. 13, 20, 26, 32, 57, թղթ. 2ա, վավ. 11, 13բ. 134, թղթ. 2բ, վավ. 111:

քառասնիկը, կտակը, աթոռամասը, կնքադրամը, կողոպուտը (եպիսկոպոսների հանգերձի համար տրվող տուրք), տեառնականը, խաչօրհնեքը և այլ եկեղեցական տուրքեր, ամբողջապես գանձվում էին կանխիկ դրամով: Իսկ եպիսկոպոսական և մանավանդ քահանայական տուրքերը մեծ մասամբ բնամթերքով էին հատուցվում:

Բավական է մի հայացք նետել վերը թվարկված բազմաթիվ հարկերի ու տուրքերի, պետության և նրա պաշտոնյաների նկատմամբ աշխատավորության ունեցած այլ և այլ պարտավորությունների վրա, համոզվելու համար, որ պարտավորությունների այն մասը, որ չէր մտնում նախապես հաշվառման ենթարկված պետական ռենտա-հարկի և գլխահարկի ընդհանուր գումարի մեջ շատ ավելի ծանր էր, և դա էր, որ անողոք կերպով կողոպտում ու հարստահարում էր ժողովրդին՝ մատնելով կատարյալ թշվառության:

Ջաբարիա Ագուլեցու օրագրության մեջ հաճախ ենք հանդիպում այսպիսի տողերի. «ԹՎին ՌՃԺԹ (1670) ապրիլ ԺԲ (12)-ումն Թավրիզու Միրզայ Իբրահիմէն Ալիզուլի բէկ անուն դարուղայ եկաւ Ագուլիս Ժ (10) ձիւտրաւ. Ի (20) օր կացաւ Ե (5) թուման դուլուղ տվին, ապայ գնաց: Օրն ԵՌ (5000) դիան խարջ ունէր»³⁰: Կամ «ԹՎին ՌՃԺԹ (1670) յունիսի Ե (5)-ումն այսօր Թավրիզու Միրզայ Իբրահիմէն դարուղայ եկաւ Ագուլիս՝ համ մալիքճաթն տանի, անունն Բահրամ բէկ, Ի (20) ձիւտրաւ եկաւ Թ (9) օրի կացաւ: Օրն մին թուման խարջ ունէր: Ապայ ԺԸ (17) թուման դուլուղ առաւ ապայ գնաց միուս խասէրն»³¹: Այսպես էր ահա, որ պետական պաշտոնյաներն ու հարկահանները որևէ պատրվակով, 10—20 և ավելի ձիւտրներով գալիս էին և օրերով ու շաբաթներով մնալով, զանազան տուրքերի ու պարտավորությունների անվան տակ, գանձումներ էին կատարում և կողոպտում ու հարստահարում ուսյաթներին:

Գյուղական համայնքները համաձայնվում էին նախօրոք որոշ գումար տալ թիուղարին կամ զաբիթին, որպեսզի վերջիններս որևէ հարցով իրենց գյուղը դարուղայ շուղարկեն: «Այսմ ամի խաս գեղորէիցն մէլիքներն գնացին Երևան, Միրզա Իբրահիմն տեսան, մին քանի թուման փէշքաշ արարին, որ այս տարի դարուղայ շուղարկի: Ղաբուլ ելաւ»,— գրում է Ջաբարիա Ագուլեցին³²:

Միջին հաշվով միայն դարուղաների երթևեկության համար համայնքի կատարած ծախսերը հավասար էին լինում ամբողջ տարվա համար պետությանը վճարվող հարկերի 1/5-ին: Սա դեռ միայն դարուղաների համար ծախսվող գումարն էր: Իսկ ինչքան էր ծախսվում նույն տարվա մեջ տվյալ վայրում իջևանող բարձրաստիճան պաշտոնյաների, խասսե-յե Շարիֆեի դուլամների, թագավորական ընտանիքի անդամների և այլ անկոչ հյուրերի վրա:

Պետական ռենտա-հարկի ընդհանուր գումարին մի քանի անգամ գերազանցող այս ահռելի ծախսերն ու սանձարձակ կողոպուտը հարյուրամյակներ շարունակ բզկտում էին ժողովրդական տնտեսությունը, այն մատնելով լճացման և քայքայման, որպիսի պայմաններում բացառվում էր տնտեսական կյանքի վերընթաց զարգացման որևէ հնարավորություն:

³⁰ Ջաբարիա Ագուլեցի, էջ 90:

³¹ Նույն տեղում, էջ 94:

³² Նույն տեղում, էջ 126:

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
Մատենագիտություն	22
ՀՈԴՎԱԾՆԵՐ	
<i>Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրություն և տնտեսական հարաբերությունների մասին (10-րդ դար)</i>	29
<i>Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից</i>	45
<i>Ֆրիկի դիվանի պարսկերեն քառյակը</i>	63
<i>Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականություն հարցի շուրջը</i>	69
<i>Об одной рукописи “Книги спасения” Абу-Али Ибн-Сина.</i>	85
<i>«Բեյթ-ուլ-մալ»-ի ինստիտուտը և հայ ֆեոդալների հողերի բռնագրավումները XV դարում</i>	91
<i>Մատենադարանի պարսկերեն ձեռագրերի պատմագրական արժեքը</i>	103
<i>Историографическая ценность персидских рукописей Государственного Матенадарана</i>	119
<i>Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԵ դար) ..</i>	127
<i>Վաղարշապատ գյուղի 1725 և 1728 թթ. թուրքական հարկացուցակները</i>	147
<i>Арабская надпись на гробнице туркменских эмиров в селе Аргаванд</i>	182
<i>К вопросу о техническом значении налогового термина “малоджахат”</i>	193
<i>Երկու նորահայտ իլլսանական յառլիղներ</i>	217
<i>Մեսրոպատառ ալլալեզու գրականություն մասին</i>	245

Շարիաթական իրավական նորմերը և հողի ֆեոդալական սեփականությունից հարցը Արևելքում.....	262
Գյուղերն ու ագարակները Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում.....	275
Պետական ու արքունական հողերն ու նրանց եկամուտների տնօրինման կարգը Արևելյան Հայաստանում XVI-XVII դարերում.....	284
Քուրդ ժողովրդի պատմության մի նոր սկզբնաղբյուր.....	299
Հայերի դերը Թուրքիայի մետաքսագործության մեջ և 1729 թ. Թավրիզում կնքված համաձայնագիրը.....	319
Ռայաթների իրավական ազատության հարցը Արևելյան Հայաստանում 16-18-րդ դդ. և շահ Սուլթան Հուսեյնի հրովարտակը.....	335
Վանական կալվածների սեփականատիրական իրավունքի մի քանի առանձնահատկություններ (XV-XVIII դդ.).....	347
Հայ-իրանական զինակցությունը 1726-1736 թթ. և Արևելյան Հայաստանի քաղաքական իրավիճակը Նազիր շահի օրոք.....	362
Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Արևելյան Հայաստանում XVI-XVIII դարերում.....	377

ՀԱԿՈՒՔ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀՈՒՎԱԾՆԵՐ

Հատոր Ա

ՌԱԿՈՅ ՔԱՓԱԶՅԱՆ

ARTICLES

Volume I

ՌԱԿՈՓ ՔԱՓԱԶՅԱՆ

СТАТЬИ

Том I

Պատկերների մշակումը՝ Մարտիրոս Տղմաձեանի
Համիկ Մխիթարյանի
Մարիամ Բրուսյանի
Անահիտ Խանգաղյանի
Սրբագրումը՝ Արմինե Գրիգորյանի
Էջարումը և ձևավորումը՝ Համիկ Մխիթարյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տղմաձեանի
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Մատենագարան

Մերոպ Մաշտոցի անվան Հին ձեռագրերի ինստիտուտի Հրատարակչական բաժին

Երևան, Մաշտոցի պող. 53, Հեռ. (+374)10 513033

publishing.matenadaran@gmail.com

Չափսը՝ 70X100, 1/16: Ծավալը՝ 25 1/2 տպ. մամուլ:

ISBN 978-9939-9237-6-5



9 789939 923765



Անտարես

Գիրքը տպագրված է
«Անտարես» հրատարակչատան տպարանում
ՅՅ, Երևան-0009, Մաշտոցի պ. 50ա/1
Ֆեռ.՝ (+374 10) 58 10 59
antares@antares.am | www.antares.am